1047/398

10477398



, or. 1974 r. (2

Alishan

10477396

10477396

10477396

ՅՈՒՇԻԿՔ

ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

10477396

10477398

Z 10.30

ՅՈՒԵԻԿՔ

ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

Ի Հ. ՂԵՒՈՆԴԵՔ Մ. ԱԼԻՇԱՆ

Վ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ.

Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԵՆԵՏԿՈՅ

1869

10477396

ՅՈՒՇԻԿՔ

ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

Ի Հ. ՊԵՏՈՆԴԷ Մ. ԱԼԻՇԱՆ

Վ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ.



Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԵՆԵՏԿՈՅ

—

1870

10477396

ՅՈՒՇԻԿՔ

ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

ԺԸ

ԽՕՍՆԱԿՆ ԵԿԵՂԵՑՒՈՑ

ՅԱՆԱՊԱՏՍ ՀԱՅՈՑ

27 Յունուարի

Ա

Պայծառ հոգի, զօրաւոր միտք, եռանդուն սիրտ, անվեհեր կամք, քաջաբան լեզու.—այսպիսի էր Խօսնական Եկեղեցւոյ, Խօսնակն գերապոյն: Իր ամենէն արտանց ըսածն, իր առաջին և վերջին մրմունջն, իր երգոց երգն էր, « Փառք քեզ, » Աստուածածնայաղագս ամենայնի փառք քեզ»: — Աստըւոց դաշտաց մէջ բացուեցաւ. Յունաց կայսերական մայրաքաղաքին մէջ, 'ի վերայ երկնաերթի ջրերանց Վոսփորոնի՝ ընդարձակեցաւ.'ի հովիտս և յանապատս Հայոց ամփոփեցաւ, քնարաբար բառն այն ՈՍԿԻ-ԲԵՐԱՆ: Եւ յետ այնքան անթիւ անգամ կրկնելու զնոյն ձայն, զնոյն երգ, անգամ մ'այլ հնչեց սրտաուռէ, և լռեց:...

Լուեալ այն «հաչակաւոր քարքառն՝ որ եւ ընդ
» ամենայն աշխարհս:... Քաջաձայն նուագն ե-
» կեղեցւոյ՝ որ յորդորեաց զմանկուձնս նոր Սիո-
» նի յօրհնութիւն աստուածծութեան. գործա-
» րան քնարն Հոգւոյն սրբոյ, որ ՚ի սաղմոսէն
» իւրում հալածեաց զլեզուն դիւաց: Տանա-
» զի միաւորեալք զգայարանք ընդդէմ և մարմնոյ,
» որ միացեալ միաւորեցաւ սիրով՚ի յերգս երկ-
» նաւոր Թագաւորին: Անթուլանալի լարսալըն-
» գեանն միաձայնութեամբ՝ որ հարանացոյց զե-
» կեղեցի ՚ի միաւորութիւն սուրբ փեսային:...
» Գործաւէր և քաղցրագործ մեղուն, որ ՚ի
ֆ խորըսխէ աշխատութեան իւրոյ՝ քաղցրացոյց
» զեկեղեցի սուրբ:... Գերագոյնն և գերահրաշ
» միտքն, որ զանհասանելի իմաստութիւնս հին
» և նոր կտակարանաց՝ յինքն ամբարեաց:...
» Ճմանակիցն և անուանակիցն պատուականու-
» թեանն ասէր, որ զամենեսեան հարստացոյց
» ՚ի փարթամութիւնս անապական գանձուցն:...
» Մեծն այն և ոսկեզարդ լեզուս... (որ) ձգեաց
» տարածեաց զբան վարդապետութեան իւրոյ
» ընդ ամենայն երկիր՝ իբրև զմանանեխ՝ զառա-
» կեաւն ՚ի Տեառնէ, և եղև հանգիստ և հովանի
» ամենայն իմաստնոց, վերացելոց Թուսցելոցն
» յերկրէ: Մի քարքառ շնորհաց Հոգւոյն սրբոյ՝
» վարդապետութեան լեզուի նորա.» և այլն:

Այսպէս ՚ի գովեստ ամեներջանիկ Խոսնակին նուագէր իր Թևոց տակ մեծցած և յետոյ իր բեմին վրայ Թառած՝ առնականն Պրակլոս: Իբրև ձայն Աստուծոյ՝ ձայնն Ժողովրդեան՝ մեծի և վըրդով, հեռաւորի և մերձաւորի՝ նաև անոր կեն-դանութեան տակն անփախանակ իրեն գիտցուին Ոսկիբերան. արժանաւոր պատիւ. որ և 18 դա-րերէ կրկնուելով, ոչ Թուլցաւ, ոչ սկարցաւ. այլ և ինչպէս քան զնախորդս իւր գերազանց ե-

պուէր նա՝ այսպէս և՛ ի յետոց անհաւասարել ինալով՝ այլ աւելի հաստատեցաւ, նուիրեցաւ, արբանեցաւ։

Ո՛հ. երբ ձշմարտութեան դիմաց զուր ձարտասանք կանգնին դէմադէմ, ի՞նչ են սուր քով Կիկերոնն Ճոռոմաբան և Թոթով Թուլթային Դիմոսթենէս, գոնէ իրենց մեղի համար անտարբեր խնդիրներովը։ — Ճշմարիտ իմաստասէր մը, (որ միայն քրիստոնեայն կրնայ ըլլալ) չի կրնար առանց քով գտնել այն սոյգ մտաց և սրտի ձարակը, զոր աւատ և անպատ գտնէ Բերրան ասկի. ոչ միայն ձարտասանից վեհապոյն ձանչցուած, այլ և աշխարհաքարոզ գերապոյն քերդողին հետ նմանակցելով մը համարուած Հոմէր էջմիածին[1]. զոր և ես, Հայկակ, սիրեցի կոչել քեզ՝ Յովհաննէս Եկեղեցւոյ, ըստ ամենայն նշանակութեան բառիս։ Բայց ոչ ես, և ոչ քալ և արդար քննութեանք այսպէս ըսելով ընդ հատարակաց, կ'ուզեմք նուաստացընել զարժէս և զառաքելութիւնս Եկեղեցւոյ ուրիշ արբազան և գերապոյն պերճախօսից և հանճարեղ բեմականաց, Գրիգորեանց և Բարսեղեանց, Ամբրոսեանց և Հերոնիմեանց. այլ նրբութեամբ և խորութեամբ իմաստից, ծայրեալ պերճախօսութեամբ, գրեթէ և բանաստեղծական նկարագրութեամբք, յաղթական տրամաբանութեամբ և բարձր աստուածաբանութեամբ, ոչ ինչ նուազ հիանալի և ախորժելի են, և բազում մտամբք առաքեալ իսկ քան զմեր Յովհաննս, նա և շատ տեղ

1 Միթէ պակաս բնական, փափուկ և ազդու է քան զՀոմերական խօսակցութիւն Հեկաբեայ ընդ Հեկտորի, Ոակիլլեսեանին գրածն իր մօրը բերնէն, որ յորդորէր զինքը՝ չմոռնալ չերթալ յանապատս ճգնաւորաց՝ քանի որ ինքն ողջ էր և կարօտ որդւոյն խնամոց և սիրոյն։

անունակը: Ի վերայ այսր ամենայնի՝ գարձեալ հատարակաց առջև՝ մերս միայն կօշ ճնայ Ոսկէբերան. քան զամենն աւելի պատուեալ և սիրելի, վկայեալ՝ի հայրենակցացն, յօտարաց և՝ի մերոց նախնեաց՝ «Աստուածաշունչ հայր, և ուսուցիչ » հանուրց [1]»: — «Աստուածակազմ լեզուս, ալ » բիւր եկեղեցւոյ և արեգական բանին տիեզերաց » վարդապետ Յովհաննէս»: «Անապական բանին » քարոզ Բերան-ոսկի. յորմէ աղբիւր կենաց » հոսեալ արբուցանելով քաւավոտակ բղխմամբ » զընդհանուր տիեզերս [2]»: Հազիւ քանի մը տարի յետ անոր մահուանն, յաջորդն և նախանձորդ Աստիկոս հայրապետ՝ գրէր առ մերս Սահակ Պարթև. «Աղբիւրն եկեղեցւոյ հայր մեր Ս. » Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրա- » քաղաքիս (Կ.Պօլսի), այլ սովաւ և ամենայն » քրիստոնեայք և ընդ հանուր աշխարհ՝ի նմա- » նէ վարդապետեալ ուսանի. ուսաւ և Ոսկիբե- » րան կոչեցին զնա [3]»: — Անհատնում կ'ըլլար եթէ ուզէի ամէն այսպիսի մեծագովեստութիւնները յիշել:

Բ

Արդ. ինչ է կամ ուսկից մեր Յօհաննէսին գերա- զանցութիւնն. ուսկից անոր ոսկի լեզուին թա- փուածն. ինչ է անոր կախարդիչ կամ աչխար- հակալ ձարտարիւսութիւնն. ինչէն այն իրեն ընծայեալ և արժանացեալ եզականութիւնն: — Ինձ կ'երևի, թէ նախ՝ իր բնական, հզօր, վար-

1 Կիրակոս, Թարգմանիչ մեկնութեան Յովհաննու ա- ւետարանին Յովհիբերանէ:
2 Շարական:
3 Խորին. Գ. Ժէ:

10477396

պետ՝ միանգամայն և անարուեստ Հարստանու-
թիւնն, ինչպէս կու պահանջեն քնութիւն և հռե-
տորութիւն. զարմանալի զօրութիւն և անլուծա-
նելի պարզութիւն միաձոյլ, որով գերազանցէ սա
քան զամեն վերոյիշեալ պերճախօս
Հարս և վարդապետս եկեղեցւոյ: Ես եթէ ներեն
ինծի քայլ քննաբանք՝ որք ըսեն թէ Կիկերոնի
զուարճալին վրայ բառ մը կարելի չէ առեղծնել,
և ոչ Դիմոսթենէնէն բառ մը վերցնել, առանց ա-
րեղծ անոնց զարմանալի բանահիւսութիւնը.
կարծեմ թէ իմ Յօհնակս այս երկուքին միջոց
Ճամբայ մը գտեր է, անանկ բանահիւսութիւն
մը մաներ, որ արժանի է թէ Հերմիսի և թէ
Քրիսոստոմի: Վասն որոյ և իրաւամբք ասոր վրայ
քան ուրիշի՝ կու զմայլեր և կու հառաչեր Կիբա-
նիոս՝ իր ժամանակին մեծագոյն հռետորն, բա-
րեկամն և վարժապետ Բարսեղեանց և Գրիգո-
րեանց, և յետոյ՝ սոյն մեր Յօհնակին վարժա-
պետ, և կ'ըսէր թէ իր աթոռին միայն արժանա-
ւոր յաջորդ վարդապետ կու Ճանչնար և փափա-
գէր զԱնտիոքացին Յովհան, (որ դեռ 18 տարուան
էր երբ Թողուց այդ հռետոր վարպետը), եթէ
քրիստոնեայք յափշտակած չըլլային զնա: — Ի
զուր նախանձիս և ողբաս, հեթանոս ոսփեատէս.
Յովհան աշակերտած՝ կը ծաղրէ զքեզ քու Յու-
լիանու Ուրացողի կամ Անտիոքայ Դափնոյն վրայ
գրած ու քերած Հատուտանացդ վրայ, (իր Ս.
Բաբեղայ և Անտիոքայ շարժման վրայ գրած Հա-
ռից մէջ.) նա առանց հակառակութեան՝ քու
աթոռէդ այլ քեզմէ այլ վեր բարձրացաւ և նըս-
տաւ: Ահա կու լսես (և երանի՛ թէ լաւ լսէիր),
որ ոչ միայն Անտիոք և Աթէնս և՛ ի Բիւզան-
դիոն կու հռչակուի, այլ և յանկիւնս աշխարհի,
առաւել քան զայլ արժանաւոր Հարստանա,
իսկ քան զքեզ՝ անհուն առաւել: Ախտա, որ

10477396

քնութեան քեզի տուած մեծ տուրք մ՚ալ – երկարակեցութեամբդ – ամենէն կարևոր պէտքն էր եղեր, և չկարցար խոնարհիլ և ըլլալ աշակերտ քու աշակերտիդ, երբ նա Անոխաբայ եկեղեցին կու քարոզէր և ձայնն գինւզանդիոն զուարճացնէր, զարմացնէր: « Ամենայն տուրք » հանգստականք, բնականութեան, փափկութեան » և մեծութեան, միաբանեալք Ոսկիբերան՝ ընդին գնա մեծագոյն ճարտասանից նախկին եկեղեցւոյ, և պայծառագոյն Թարգման այն նշաւոր ժամանակին: Ամէնն կ՚ափշին միտք ՚ի » տեսնել այս մարդուս անբաւ երկայնութեամբ » քը, և անոր հանճարոյն եռանդը և յաջողակութիւնը » (կամ գարձուածքը). կ՚ըսէ ժամանակիս ամենէն երևելի քննադատն գեղեցիկ գարուԹեանց՝ Վիլմէն:

Ոսկիբերանի երկրորդ առաւելութիւն՝ որ և առաջնոյն կցորդ՝ կու սեպեմ, ոչ միայն լեզուով տիրանալն ՚ի վերայ ունկնդրաց, այլ ինքն իր լեզուին կատարեալ տիրանալ և տանձելը. որ նշան է իր հարուստ և զօրաւոր մտաց, որով չնկարօթանալ շատոց պէս՝ պերճախօսութիւն կարծուած բանից գարդեր և ձևեր փոխ առնուլ: Նակ եթէ իր լեզուն ալ գարդեր և ձևեր ունի՝ այնքան բնական և աներևոյթ են գարդքն, որ տարբեր լեզուն մը կ՚երևի ուրիշ շատ Հայոց լեզուին քով. սանոց Ճառից մէջ շատ և շուտ կրնանք գանել բառեր և բաներ՝ առանց որոց ալ կրնար ըլլալ կ՚ըսենք, նակ Ոսկիբերանին մէջ՝ կարծեմ նման դժար է գնառելն անպամ: Ուրեմն հզօր լեզուն, հզօր և հարուստ միտքն միաբանեալ՝ իրեն անհամեմատ առաւելութիւն կու ման. եթէ անոնց մէկուն համար ըսուեցաւ Ոսկիբերան, մէկայլին համար կ՚ախորժէի ըսել Ադամանդ միտք, նա և սիրտ. — հաստատութիւն և պայծառութիւն՝ սեփական

10477396

ընտիք են Ոսկիբերանի թէ խօսից թէ վարուց։ Իսկ մուտց հարստութիւն կ'իմանամ թէ ըստ ու- ժոյ ուրամախոհութեան և թէ ըստ գիտութեան և հանճարոյ, որով երկրորդ առաւելութիւն մը կու տանայ։ Ասոր այլ վկայեն անբաւ գրած կամ խօսած ձառեր և գրքերն, որոց մնացեալ տպագիրքն անգամ բազմահատորք են քան զյա- ւէց՝ի Հարց, և որոց համար մեր եկեղեցական գրոց մէկն (Յայտաւուրքն) կ'ըսէ, թէ « Մինչ » տանէին զտուրքն՝ յաքսորս, եդ ձեռն՝ի վերայ » եկեղեցւոյն և ասաց. Ո՛ղջ մնա, տուրբ եկեղե- » ցի... զի՝ի պարգևացն զոր առի՝ի Տեառնէ՝ » յաւելի՝ի գանձս քո գիրս 800, ձառս 12,000. » արդ մի՛ մոռանար զաշխատութիւնս իմ[1] *»։ Ոչ հատորոց թիւն, այլ գրուածոց իմաստն, ազ- նուութիւնն, պէսպէս օգուտն են ցանկալի և զարմանալի, որոց համար առաւ այն մեծամեծ կոչմունքը զոր վերը յիշեցինք, և զոր բովանդակե- լով շատք միաբան կ'ըսեն, Աղբիւր ելեղէց-ոյ. վասն զի Ս. գրոց մեծագոյն և գործածագոյն մասին վրայ մեկնութիւն և իրաւ գրած է Թափանցիկ մօք, տաք սրտով և վարպետ գրչով, որք անգին գանձ սեպուին Եկեղեցւոյ. և որոց մէկը միայն՝ չէր ուզեր վոխել Բարիզի պէս քաղքի մը հետ՝ յիշին գարուց գերազոյն հանճարն և աստուա- ծաբանն՝ Ս. Թովմաս Ագուինացի*[2] *։ Մինչ անհա-*

1 Խաչատուր Գանձասաց այլ կ'ըսէ.

« Պատմաբանող ճառից հազարաց
Երկոտասանից եւ բիւրաւորաց »։

2 Գուցէ ոչ պակաս զգացմամբ և եռանդեամբ կու գրէ մեր եկեղեցւոյ դիտապետաց ամենէն ճոխախառն և Թա- գաւորակերպն, Պետրոս Գետադարձ, Ոսկիբերանի առ Անեմանան կամ Անտիանս ճառից յիշատակարանին մէջ, զոր իրեն համար օրինակել տուեր էր. « Ուսուցանէ զմեզ

Սեմաա այիսի ձեայ մեր Խօսնակն այն լեզուաւն՝ որ աւելի հասկանալի է ժողովրդեան՝ գործնական և բարոյական խօսքերով, քան տեսական և այլաբանական. ինչպէս են շատ ուրիշ հարց, որով և ոչ դիւրինաց և ոչ շատ օգտակար բազմութեան մարդկան: « Պարզ և յայտնի բանիւ զխորս աս-
» *տուածային գրոց առ հասարակ ամենեցուն ձա-*
» *ւէր, – կ'ըսէ Պրոկլ. – իբր ոչ եթէ ապիտանայր*
» *իմաստասիրել դժուարութեաց բառիւք, այլ ցան-*
» *կայր զամենայն հոգիս լսողացն օգտեցուցա-*
» *նել:... Քարոզեաց զծածուկ միտս գրոց 'ի լոյս*

» *Ես ձախորհուրդս այս և մետոփեան Բերանս ոսկի՝ առա-*
» *ւել քան թէ աման Հոգւոյն:... Ո՞ յայնքան 'ի վերջին*
» *իմաստասիրութիւնն եհաս. ո՞ այնպիսի ընտրհի արժա-*
» *նաւոր եղև երբէք. ո՞ այնպէս զբերան մտացն եբաց և*
» *ձգեաց զՀոգին. զի որ զամենայն գիտէ և քննէ զխորս*
» *Աստուծոյ՝ Հոգւով Աստուծոյ հասու լինիցի: Յայտնիկ*
» *ես զքարոզն ճշմարտութեան, վարդապետն տիեզերաց,*
» *որ զբազում շրջանակս հին և նոր կտակարանաց՝ մանր-*
» *րամասնաբար ծանակեալ ջամբեցոյց իբրև զկաթին տղա-*
» *յացելոց 'ի Քրիստոս:... Զայսոսիկ ընծայեմ Աստուծոյ՝*
» *գոհութեան պատարագ, ընտանեգոյն ընծայ քան զոս-*
» *կի մաքուր և քան զքարինս պատուով պայծառագոյն,*
» *քան զզոհս օրինացն ընտրագոյն, քան զանդրանկացն*
» *պատուոյ ընդունելի:.. Զայս նուիրեմ՝ զոր ինձ տայ ինձ, ըն-*
» *քեան Թոզի որով միանգամ ճոխանամ: Քանզի զայ-*
» *լովք զամենեքումբք զանց արարի պատուիրանով և հո-*
» *գւով, և զբազմապատիկ զմարգարիտն փոխանակ ամե-*
» *նեցուն՝ որոց ունէին երբեմն՝ փոխանակեցի, և եղէ մե-*
» *ծաշահ վաճառականն. և զուարճանամ այսոքիւք առա-*
» *ւել՝ քան որովք բազմօք բերկրին: Եւ առնեմ զաս ամե-*
» *նայն կենաց իմոց հաղորդ և խորհրդակից բարի և խո-*
» *տակից և առաջնորդ վերին ճանապարհին. զի զամենայն*
» *զվայելչականս անպատուեմ՝ 'ի ստորինս կալ ձեռք: Յոյս*
» *ինձ ամենայն ըստ ճշմարտութեան զինէ Աստուածոյ. ար-*
» *ձան կանգնեացի յիշատակ հոգւոյ»:*

» և՝ ի հրապարակս, զոր ելեալ յոռնկանէ և՝ ի խա-
» սակ՝՝ ի մաքուր միտան ընկալաւ »[1]:

Զորմէդ պատճառ մ՚այլ Ոսկիբերանի մեծ համբաւոյն՝ որմէ վերջը իրեն նմանող մը չունեցաւ, և գրեթէ վերջին ըլլալն մեծամեծ Հայոց հակեղեցւոյ. յորոց միայն Կիւրեղ մ՚եղաւ առ Յոյնս (յԱղեքսանդրիա), և մեծն Օգոստինոս առ Լատինս, որք հմտութեամբ և աստուածաբանութեամբ գերազոյս են, այլ ոչ և լեզուի կամ գրչի գաստական ճարտարութեամբ: — Իսկ հինգերորդ և մեծագոյն պատճառ (թողլով քննել զայլս) մեծութեան Ոսկիբերանի՝ իր մաքուր բարքն և զանազան հանճարն, որովք նշանագոյն է և՝ ի գերութեան Սրբոց և՝ ի քաղաքականութեան: Զի կրնար իր վարքն ընթերցողն և գիտողն՝ զմայլիլ մեծապէս, նկատելով անոր հոգւոյն անմարելի կրակը՝ սէրն առ Աստուած, իր կուսական մաքրութիւնն, խոր խոնարհութիւնն և բարձր յարկն աստուածային իրաց. որով էր համարձակեր եւ հակեղեցւոյ պաշտօնեայ իսկ ըլլալ, այլ անաստաոի մէջ ստորակաց հետ ճնշել և իր ծիծեռնաձայն լեզուն ծածկել, և գրեթէ քառի յանձն առաւ[2] 37 տարուան (ըստ ումանց 27 տարուան) սարկաւագ ըլլալ և իբր 40 ամեայ քահանայ, ուր յետոյ նոյնպէս ակամայ և խաբուելով բերուիլ ուր պատրիարք ըլլալ Կ. Պօլսի:

1 Այս բանս ասոնք ոճով բացատրէ մեր մէկ վկայողքն. «Ամենևին բառակապիւ և քերականաւ ոչ գրեաց,
» ոչ ատէտ և խառնիճաղանճ ժողովրդեանն. այլ զա-
» մենայն պարզ և յատակ խօսեցաւ վասն հասկանելոյ ա-
» մենայն մարդկան»:

2 Կ՚ատանք են իր վարուց գրողք ումանք, Թէ այս բանիս հաստանեցաւ սեպիլք մը տանելով, յորում՝ Քրիստոս ձեռնադրէր զնա քահանայ, Տիրամայրն եմիփորոնը կուտար,

10477396

Գ

*Հան իր պրեթէ հնգամեայ կարճ հայրապետու-
թեան միջոց (398–404) ըրած եկեղեցւոյ և ժո-
ղովրդեան օգտակար բարեկարգութիւնքն, եթէ
և խիստ շատ են ըստ ժամանակին քիչութեան՝
սակայն այլ մեծ են ազնուութեամբ: Կ'ապշին
միտք, թէ ի՞րը 'ի վերայ այնքան գրուածոց և
քարոզութեանց՝ ժամանակ կու գտնէր կարգա-
ւորելու կանոնաւորելու իր կղերը, իր հեռաւոր
թեմերն այլ այցելութեամբ քննելու, պայծա-
ռացընելու զեկեղեցի և զաստուածային պաշտա-
մունս՝ ջերմեռանդն աղօթիւք, երգովք և ժամա-
ացոյցութեամբք. որոց շատն՝ ոչ միայն մինչև ցարդ
դասարակ են առ Յոյնս, այլ և մեր եկեղեցւոյ
մէջ.—Ինչպէս այն սիրելական մայրաքաղաքին
զեղծուածեղծ բարբուցը հետ կրցաւ կռուիլ.—Ինչ-
պէս անմատչելի Թագաւորաց և Թագուհեաց
հետ անվախ համարձակ վարուեցաւ երբև իր հօ-
ոին հասարակ ոչխարաց հետ.—և Ինչպէս յետ-
նագոյն ամիկը, գռեհիկը, այրի կնիկը, և ըրածը
ձանչցող խառնակեցիկն ու մեղաւորն անդամ կու
կանգնէր, սիրէր, մեծարէր, իբրև զինչան և զար-
քոյ:—Համառօտ ըսեմ, Ինչպէս, նման իր շատ
սիրած, իր զմայլած, իր բացատրած վարդապե-*

*Պետրոս առաքեալ՝ բանալիքը, Յովհաննէս՝ զաւետարա-
նը. այս է Կիւրիկեցի շարական երգչին բառն.*

*« Երեւեցաւ սուրբ հրեշտակաց ի Պրիտոսէ ձեռնա-
դրեցար,
Զպատմուճանն փոխանակեալ առ ի վերուստ՝ հոգւով
պճեցար:
Ի վիմէն եկեղեցւոյ՝ զփականա երկնից հաւատացար.
Սիրեցեալ յաշակերտէն՝ զաւետարանն առընկա-
լեալ »:*

10477396

ին՝ Պօղոսի առաքելոյ, ընդ ամենայնի ամենայն լինելով, կրնար անոր պէս այլ ըսել՝ « Նմանողք » ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի » :— Ոչ ոք, մանաւանդ անանկ դժուար առթիւց մէջ, ուր հարկ էր փառասէր, պչրող, նրբամիտ, ամենահնար Յոյն կայսրուհւոյ մը հետ (Եւդոքսեայ) մրցիլ վան երանից Աստուծոյ և զսկեբերաց նորա, թոյլ Թագաւորի մը (Արկադիոսի) քով իսկ քալլընել, Աղեքսանդրիոյ մեծ և վինքն իսկ ձեռնադրող հայրապետին (Թէոփիլոսի) հակառակիլ՝ արդարութեան և մարդասիրութեան վրայօք,— գիտնոց և տգիտաց միջնորդ ըլլալ, դէմ դէմ խառնվեանները րը խաղաղցընել, բարեկամները • ջնհատեցընել, Թշնամիները չվատահացընել, ամենուն չարը զանազանել, զամենքն անզանազան սիրել• ըստ ատաշտճին տեղը կենալ կամ տեղն տալ, ոչ փառասիրութեամբ գահին փակչիլ, և ոչ նուաստութեամբ աթոռէն իջնել.— ոչ այն ամենևին անարժան և անհին զբաղարտութիւններէն նեղուիլ, և ոչ այն աշխարհահռչակ գովեաններէն և Ոսկիբերան կանչուելէն՝ ցնծալ. (ինչպէս ինքնին կ'ըսէր անգամ մը յամպխոնէն, « Երեկ զիս երեքտասան » ներորդ առաքեալ, և այսօր Յուդաս յառաջ ընթացաւ ».)— ոչ ոք կ'ըսեմ, սանկ և այլ աւելի բազմակնճիռն առթից և հակառակութեանց մէջ գտուեցաւ• և ոչ այլ այնքան իմաստութեամբ և արիութեամբ, միանգամայն սիրով և համբերութեամբ՝ վարուեցաւ անայլայլակ, անշփոթ, անտխուր և անտարակոյս: Գեղեցիկ ուրեմն գովութեամբ մեր գանձասացն կ'երգէ՝ և ասաւել նորա•

« Անկոտն է բազմաց շաւիղ քոց վարուց•
Նուրբ և բարձրագոյն քան զէս ասպետաց » :

Այսպիսի բարեկարգութիւններն յիշելով երբեմն հոգեկիր վերապէտ մ'այլ, Ս. Ներսէս

Լամբրոնացի, կու կանչէ. « Ո՛վ երանելի և
» քաղցր աստուածպզեացն հոգւոյ. այսպիսի
» վայելչը մեզ քահանայապետ՝ չարչարակից,
» պատճեալ ակարութեամբ ժողովրդեան: — » Ոչ
» ոք լաւագոյն քան զնա կրցաւ, կ'ըսէ վերոյի-
» շեալ փոխանակ քննաբանի[1], կատարել զպաշտօն
» բանին՝ զոր աւետարանն մատոյց: Ձին աշխարհ-
» քին վայ պատուաստած նոր ընկերութեան՝
» գեղեցկագոյն հանճարն է Սա. Սա է գերա-
» գոյն քրիստոնէացեալ Յոյնն »:

Դ

Բայց ով գիտցողութեան և զրկուածն հաստատ-
կաց. ով ամօթ զրկոտաց. այսպիսի անձն այլ ա-
նեցաւ թշնամի և հակառակորդ: Անաչառապէս
յանդիմանուած դշխոյն Եւդոքսիա, իր ձեռնա-
դրելոյն մեծութեան չքաշող հայրապետն Ալե-
քանդրիոյ (Թէոփիլոս), քանի մը կաշառակուռծ
կամ նախանձաբեկ եկեղեցականք, քանի մը կըշ-
տամբեալ իշխանք, և ոկաթամիտ կամ անմիտ
բարեսաեաց՝ միաբանելով, շուքի պէս ընկան
Յովհաննու փայլուն կերպարանաց ներքև, այն-
չափ աւելի անոր պայծառութիւնը՝ որչափ երե-
սութիւնը նշաւակելով. և որ աւելի ցաւալին է,
ոչ միայն մարդու հետ կռուելով այլ և աստուա-
ծամարտ ըլլալով: Շատերու ծանր եկած էրլաեն՝
ոչ միայն զԱսկիբեերան անունն և զհամբաւ իմաս-
տութեան նորա, այլ և անոր անխարդախ, մա-
քուր և պատնէշի վարքը, արդարութիւնը, հրաշա-
գործութիւնը. և մերկա այս եոքինհանկատամամբ
իր կատակիւքն և սրբելիք չափազանց գաւեցան.
այլ գոնէ այնպիսի անձի մը վայ կըմնար չափա-

[1] Վիճեն:

զանցուածքիւնն արգարանալ: Գուցէ գուցէ կա-
պուտակ նախանձն այլ, եթէ կարելի էր յայտնի
երևեալոյ, չէր կրնար աւելի նախանձելի մէկ մը
գտնել քան զՈսկիբերան. զոր բարեսէրքն՝ ի կեն-
դանութեան գերագոյն հռչակեցին իր ժամանա-
կակցաց, յետ մահուն՝ բարձրացեալ ՚ի դասս
սրբոց և անմիջապէս Աստուածպետականին ա-
թոռոյ քով, ըստ յայտնութեան կամ տեսլեան
մը, զոր տեսան, կ՚ըսեն, արժանաւոր անձինք.
և այս աւանդութիւնս է՝ զոր մեր եկեղեցւոյ քաջ
երգիչն այլ ՚ի պատիւ նորա սրբացընէ, ըսելով.
« Որ յանձառելին մերձեալ ՚ի լոյս՝ հուպ Երրոր-
» գութեանն, ով երանելի տէր վարդապետ »:

Սէր և մեծարանք իրենց աննման հովուին և
վարդապետին վրայ՝ եթէ քիչ շատ մեծաբանել
տուաւ յունական դիւրաշարժ սրտերու, աւելի
շատ ապաշնորհ և անգութ գտուեցաւ հեղլենա-
կան յաչտլանքն և տեսլութիւնն, ՚ի նախատինս
այնպիսի պանծացեալ ազգի և ժողովրդեան, որ
զՈսկիբերան և զԱստուածաբան իր մայրաքա-
ղաքի բարձր աթոռէն հեռացուց յօտարութիւն,
յաքսոր և մինչև ՚ի մահ:... Զատնք յիշելու ա-
նեն՝ կրնամք մոռնալ, Հայկակ, մեր նախատինքն
այլ, մեր հարց ըրածնեըն առ Սահակ և Ներսէս
և նմանեան:... Սակայն, քա՛ւ լիցի, ես ոչ զՀայս
մեղադրեմ և ոչ զՅոյնս, ոչ զընդհանուր ազգն և
ոչ զժողովուրդն. այլ թէ շատ՝ իրենց պնդապլուխ
դևնաւորները, արքունեաց և աթոռոց հնարքնե-
րը և կուսակցութիւնները, և մեծամեծաց քով
աւելի մեծցած նախանձը և գիրցած կրքերը. ո-
րոց ըրած չարիքն շատ հեղ ոսկին վրայ կ՚ընկնի,
և բոլոր ազգին անուսամբ յիշուի. « Հարք կերան
» զաղուին և որդւոց ատամունքն առան »: Բայց
արդարութիւնն պիտէ և կրնայ ընարել զաջ ու
ձախ. պատմութիւնն անդամ շատ հեղ վկայ է
սուտքութեան:...

Աւջև անգամ Ոսկիբերանի դէմ վիրաւանելոց հնարքն, վճիռն, հրամանն, պատուհասն և աքսորն, հայրապետը և հաւատարիմ ժողովրդեան սիրոյն դէմ, և կարիտասիան երկնից արհաւրաց դէմ՝ խիստ քիչ դիմացաւ. արեգական պէս հաղիւ թէ ծածկուելով յաթոռէն, և ահա առաջինէն պայծառ ծագեցաւ բարձրացաւ իր տեղը. մեծ ու պզտիկ թշնամիք՝ շուքի և միգի նման հալածեցան կորան. դժնդակ դշխոյն անգամ սարսափելով ներուն և անմեղադրութիւն խնդրեց, թէ և այլ աւելի նախանձելով, երբ իր պալատեան ծովահայեաց պատշգամէն կու դիտէր և չէր տեսներ ծովն երեսը. ոչ այնքան մեծագոր երևցեր էր Քաերքսէս՝ նաւերով ևամրջելով և յատակելով այն խորանդունդ նեղուցը, և ոչ մեր Արտաշէս որ «յԵլեսպոնտոս և'ի Թրակէ՝ զաստերացն փոխ» խեաց զբնութիւն... ընդ ծով հետևակելով[1]», որչափ մեծագործ և մեծասիրտ կ'երևէր այն յաշնական ամպիկ ժողովուրդն, ակար նաւակներով ծածկելով բովանդակ նաւահանգրատեղն ծփած աւազանը՝ յընդառաջելն և'ի դարձընել յաթոռն՝ իր Ոսկիբերանը[2]: Ելլանիկ ժողովուրդ, այլ երանի թէ միշտ կամ աւելի երկար տեսներ:—

Եւ ոչ կէս տարի քշեց մեր Խօսնակին հաստատութիւն և բեմն իւր. ամօթապարտ թշնամիք կամ յաչառակութ՝ աւելի թանձրացած կրքերով մատա ծխատ ամպերու պէս խտացան մօտեցան իրարու կպան. դարձեալ ժողովեցան'ի Թրակիա՝ այլ աւելի ընդդիմակաց բազմութեամբ և զօրութեամբ,

1 Խորեն. Բ. ԺԲ:

2 Այս եղաւ յամին 403 յ'13 Նոյեմբերի, անոր համար Յոյնք այսօր այլ կու տօնեն զՈսկիբերան, և ոչ վախճանած օրն՝ սեպտեմբերի 14, որ Ս. Խաչի տօն է:

10477396

մինչև Եպիփանու սէս պարզամիտ սուրբերն անգամ խաբխըբելով և իրենց կոպմը ձգելով. որոնց մէջ՝ սիրտ առած, յօնքերը կամարած, ոտքով ու գլխով Թեթևն Եւդոքսիա՝ իբր նոր «Հերովգիա» դա՝ դարձեալ կաքաւէր, դարձեալ խնդրէր «զգլուխն Յովհաննու Մկրտչի», արդարև խակ մկրտչի և կնքահօր իր Թագաժառանգ որդւոյն Թէոդոսի Փոքու:... Կրնար Յովհաննէս իր անիրաւ բռնաւորաց դէմ իրաւացի բունութիւն քաշնեցընել, գոնէ իր սիրելի որդւոց՝ Ժողովրդեան գութն և աղաչանքը զէն ու վահան առնուլ. սակայն իր մեծ սրտին, և մանաւանդ աստուածաշունչ հոգւոյն և հեզութեանն Յիսուսի՝ անարժան սեպեց զայն[1]:..

Ե

Իր վարուց (և ընդհանրական պատմութեան մէջ) մեծապէս սրտաշարժ դիպուածներէն մէկն է Ալեքսեանի յետին հրաժարական ողջոյնն առ ուխտ եկեղեցւոյ նորոյ. որ և ակամայ ինն հոտ կու չէջերնէ ինձի մեր գարուն մեծագոյն գալին մեծ ծահուչակ հրաժեշտը[2]. այլ քանի այլաբերպ, նուաստ և խիթալի:—Նա՝ բոլոր եւրոպական աղանց ձեռապէօք ձեռներեալ և դեռ արիւնակաթ գլօշը և գլօշակիրը կու հաւքուրէր՝ ցաւե-

1 Ն. Լամբրոնացի՝ ի Պատարագամեկնիչն. «Յովհան » Անոխոքայ ժառանգէ զկ. Պօլիս. ուստի՝ և ոչ տեսեալ » զնոյն իւր հայրենիս՝ էջ վան օրինացն Աստուծոյ՝ ի » յաքսորս: Թէ իւր էր համարեալ զբազմապատիկ իշխա- » նութիւնն՝ ներքոյ արդեօք թագուհւոյն, որ անտի զնա » վրիպեցուցանէր: Բայց զայն անգոանեալ՝ կհետ վերին » պատկացն ընթանայր: Եւ ոչ յունեղն՝ որպէս իւր հրա- » ժարէր, և ոչ՝ ի չունեղն՝ տարակուսեր»:

2 ի Ֆոնդենըպլըզ:

*լավ, որ այլ չպիտի կարենայ Թագընել զայն կայ-
սերական արծուոյն Թևօք՝ նորանոր մարդածախ
պաշտերուս մէջ, և իրեն անձնանուէր գնդերով՝
սեբէլի բազմաԹիւ մարդկուԹեան գնդերը՝ որք
այրի, նաև դիակին դարձընելու.—իսկ մեր Խօս-
նակն Եկեղեցւոյ՝ որ սեռասրանին փոլով կու
դլուդը զոհեզերս և՛ ի հոգևոր զինուորուԹիւն
Ջրիստոսի գումարէը զծեր և զտղայ, զերիտա-
սարդ և զկուսան, հիմայ իր ջորս դին տեսնելով
մեծամեծ գաւառաց և քաղաքաց այցելու գնդա-
պետներ, 40իւ չափ եպիսկոպոսներ, որք տղու
պէս կու լային իր քով, և կ՚ապշէին չհեռանալ
իրենցմէ, ինքն վսեմագոյն և աստուածային կա-
մաւ տարապիր՝ մէկ մէկ գըրկելով այն սրբազան
ժողովրդապետները, (որոց ձեռօք Աստուծոյ
ԹագաւորուԹեան սահմանները կ՚ընդարձակէր
յերկրի,) հայրապետական սուրբ համբուրով
և ոչ առանց արտասուաց՝ կ՚օծէր Ճակտանին,
կնքէր և զօրացընէր՛ ի վշտակցուԹիւն և՛ ի նա-
հատակուԹիւն՝ ևան երկնաւոր յաղԹանակին:
Ամեն եպիսկոպոս՝ որ գրկէն կ՚ելնէր, բան մը կու
փրցընէր՛ ի սըրտէն:.. Չկրցաւ այն ազամանդ
սիրտն այլ մինչև ցվերջ դիմանալ, և ոչ զամենքն
ողջագուրել. հայր էր սիրուն, զօրացաւ զայրա-
ցաւ գԹալլիր սիրտն... Թողուց սուրբ գունդը,
հեռացաւ պահ մը՛ ի սարկաւագանոցը ծածկուե-
լու...*

*Եւ ահա հոս՝ այլ աւելի արտաՃմլիկ տեսա-
րան մը և կակուղ խուճմ մը պաշարեց զնա. երա-
նելի սարկաւագուհին Ողիմպիադա՝ ընկերակցօք
նմանեօք՝ հեծեծանօք վազեցին յոտքը պլլուե-
ցան. ՄարԹայի պէս կ՚ապերսէին, Մարիամու
պէս կու լային, կուսանաց պէս մարմըրէին. ող-
կուզալարդ ուռաց պէս փակած իրենց երկնադի-
տակ որԹոյն վրայ՝ չէին ուզեր բաժնուիլ... կու-*

սից և եպիսկոպոսաց արտասուքն յերար խառնեցան. եկեղեցւոյն մէջ բոլոր ժողովուրդն կուհառաչէր, սուրբ սեղանեւրն անգամ կուսային. աստուածային առաջնոյն ինքնին կ՚ողբայր իր այրիանալն՝ի զգաստ փեսայէն. ըսե՞մ, թէ « և » արտասուեաց Յիսուս »:...

Յովհաննէս՝ լսելով տեսանելով զասունք, եթէ կրնար գերազանցել քան զմարդ, այլ ոչ և զաստուածամարդն. հասուց ինքն ալ բնութեան անմեղ գթոյ պարտքը. բայց և շուտով տիրանալով ինքն իր վրան՝ քաշեց ազամանդիկ սիրտն յոսկի բերանը. լուեցուց (թէ և լացուց) զինքն յորդորող, պաշտող ու պաշտպանող եպիսկոպոսները, կղերը, սարկաւագուհիները ու բանին տեղեակ եղողքը: Իր լեզուին Ճարտարութիւնն և այժը՝ շատ անգամ փորձեր էին, բայց սրտին այսքան անդուլթեան և մեծութեան դեռ անփորձ էին. ափշեցան, ապիկբերան եղան, յաղթուեցան. անգամ մ՚այլ դաս առին իրենց աննման վարպետէն, որ մատուին կուցրներ զերկրիս բոլորը, թէ « Տեառն է երկիր լիս իւրով ». արդարն ուր ալ որ ըլլայ, միշտ նոյն է, կամ միշտ պատրաստ կամ ոչ երբէք. և բերնուն կրկնէր իր պանծալի պարոյրը, « փառք քեզ Աստուած, յաղթող ամենայնի »: Եւ ըստ սրտին՝ անայլայլակ և զուարթ դիմօք իջնելով յաթոռն, յայն աթոռն՝ որ ոչ յառաջ և ոչ ետքը իրեն հասար բազմական ունեցաւ, զաստուեցաւ՝ի սիրելեացն: — Իսկ՝ի Թշնամեաց. — իր աստուածային օրինակին նման՝ նկատելով զանոնք՝ որք գահավէժ ընել կ՚ուզէին զինքը, « և նա անցեալ ընդ մէջ » նոցա՝ գնայր [1] »:

1 Ղուկ. Դ. 30:

10477396

Գ

Ամառնամըտին նախընթաց օրն էր, յամին 404. երբև յանկարծական վտանգէ մը դրդած Կ. Պօլսի ժողովուրդք շտապելով քաղքին հարուստային ծովեզերքը կու դիզուէին երարու վրայ, և գրեթէ 'ի ծով կ'ընկնէին. մանաւանդ թէ ոտքով ալքնները կարել թուչիլ կ'ուզէին, նաւակ չգտնելով: Ոմանք լուսնթեամբ կենային, ոմանք ձեռուընին դէպ 'ի ծով դէպ յերկինս՝ դէպ 'ի կուրծքերնին կու տարբերէին. ոմանք գթութեան ձայներ՝ և բանայիններ կանչելով, ոմանք անէծքներ թափէին. ամենքն աչուընին անկած դէպ 'ի հարաւ՝ Պրոպոնտոսի (Մարմառայի) ալեաց և Դեմոնիսեան կամ Պռինկիպեան կղզեաց մէջ, գրեթէ մինչև ցկուրսութիւն՝ բիբեռնին տանջէին: Ամենքն այլ ուզելով բանել, արգելուլ, յետ դարձնել նաւ մը. նաւ մը՝ որ դիմացնէն երագ երագ կու սահէր կ'անցնէր, կու հեռանար. և եթէ բանել չէ՝ գոնէ պահ մ'այլ կ'ուզէին տեսնել: Իակ նաւն վախատական՝ երկայնաձև բազմաթիակ՝ ցուրկը ցրցած՝ ծովային նոր ցուցանքի մը պէս՝ ձօճալով ձապկըտելով ծփած ծեծուած ալեացվրայ՝ շուտ շուտ կու սուլար, փախչէր թաքչէր, երբև թէ այն դիզուած ժողովուրդն՝ երեն համար մթագին ու սպառնացայտ մրրիկ մ'ըլլար. մինչև կղզինեըն մինչէն անցնելով հեռացաւ, փոքրացաւ, կէտ մը դարձաւ, հազիւ տեսանելի սրտգոյն աչաց. ոըք քանի մը վայրկեննէ եաև՝ ծովուն հաւասարած երեսէն զատ՝ այլ բան չտեսնելով, յոսահատեալ դարձան, ողբերնին և անէծքնին երկարելով, և բարկութեամբ արքունական ապարանից վայ նայելով:

Այն խուճապեալ նաւուն բարձրաւանդակին

10477396

վրայ հանդարտօրէն նըստած անձ մը՝ կու նայէր անխուռով, գոնէ ըստ արտաքին տեսլեանն, ընդ ծով և ընդ ցամաք. կու նայէր այն ծովեզերքը ապրատաձև պատած ժողովրդեան վրայ, և ձանչնալով անոնց հայրատաէր գուբէն ու գոլուվը՝ էր կրնար անոնց եռևէն բարձրացած Պօլսոյ խրոխտ աշտարակներն ու ապարանքը՝ սուրբ բարկութիւն անգամ չդողացընել: Էր թշնամաներ, էր անխծաներ ապերախտ մայրաքաղաքը, և ոչ աւելըք ու երեր կարդար անոր. այլ զարդարութիւն և զդաստասան Թողլով միայն ամենագէտ գաստաւորին, ինքն ողջունելով, օրհնելով և աղօթելով՝ կու հեռանար կու ծածկուէր՝ անհետ ի՛ըլլար իր հինգ տարի դայեկաբար դաստիարակած ժողովրդէն, զոր մէկ մ՚այլ ակտի չտեսաներ կենդանի աչօք. այլ սրտով դեռ կու տեսներ, կու լսէր, կ՚իմանար որբոց և այրեաց ընորհակալութեան մրմունջը, զոլջացեալ մեղաւորաց ողբաձայն ապաշաւանքը՝ որոց համար ինքն Պապոդ կամ Բարդ ապաշխարող ընէան և ողորմութեան անուանեցաւ. կու զդար մեծի և փոքուխանդաղատանքը: Ինչուան որ անդադար ու անդարձ նաւն անգուր՝ խոտորելով ՚ի խորչն Կիանեան (Մուտանիա կամ Կէմլէյիկ) Պրուսան տոսի ձևն անգամ կորուս. և քիչ առեն ասիանան եզերքը հասնելով Բիւթանիոյ ցամաքին վրայ ձգեց զՈսկէբերան:

Եւ ոչ կէս ազատ պանդխտի ցուցն տրուեցաւ անոր, որ ըստ կամացն իրեն օտարութեան բնակարանն ընտրէ. այլ պահապանաց մատնուեցաւ ըստ ասքուն հրամանաց, որ տանին յաքսոր՝ յաշխարհ հեռի, յերկիր ցուրտ և քարուտ, ՚ի քաղաք ամայի և անապատ, ՚ի ծայր սահմանաց Ցունաց և Հայոց: Հոն մնայ որչափ որ մնայ, մինչև ցմահ:..

10477396

Է

Իսկ ինչ էր այսօր յանցանքն, որ այդպէս դառապարտեալ՝ ի ժողովոց Կաղնոյն [1] և՝ ի կայսերական դատակնքոյն՝ արտասահման կ'ըլլայ՝ ի հեռաւոր և՝ ի դժուարաբնակ տեղ մը։ — Խաղական յանցանքն՝ իր Ովիդիոսն և ազամանդիկ անճն ըլլալն էր, ըստ որում առաջ տեսանք. խակ ըստ չարախօսաց՝ ծաղրելի կամ ոչեաչի բաներ. — ծաղրն այլ ոչեն այլ իրենց գլխուն. — ոչեաչինն այլ իրենց քով կերակուր կ'ուտէր, և ոչ ըրուիչը կու հրաւիրէր։ Գեղեցիկ խրատ ամանց պետաց, որ Թերևս միայն սուր հակառակ կերպով կրնան ցուցընել իրենց առաչնորդութիւնը և ընդունակութիւնը։ — Ովիդիոսին որ՝ ի մանկութենէ յանդիման Աստուոց վարժեր էր Անտոնի և Պիմէնի կերակրոց (ճգնաւորական ջրակերութեան), այն առիճան փափուկ և տկար առաջքա ուենէր՝ որ այլ ոչ և իսկ կերակուր չէր կրնար ընդունել, այլ հազիւ Թեթև բաներ. և յիրաւի Թէոկրիտեան կամ Եղիշեան անարիւն ճպուանց նմանեալ՝ առուածային բանին քարոզութիւնն ըրեր էր իրեն մուտք, և կ'ուզէր ընել իր հօտին այլ։ Թշնամիք՝ փառասիրութիւն կու տեսին զայս։ — Նոյնպէս բամբասէին, Թէ խիստ յանդիմանութեամբ կ'անարգէ զիշխանս և զԹագաւորս, կ'արհամարհէ զմեծաւորս, և աղքատաց ու ռամկաց տէր կու կենայ։ Թէոփիլոս կ'ըսէր, Թէ իմ վերնատածներս ընդունէր է, բանադրեալներս՝ արձակէր է, իմ իրաւանցս խառնուեր է. —

1 Քաղկեդոնի (Գաղատիոյ) մէկ Թաղն, ուր առջի անգամ Թէոփիլեանք ժողովեցան՝ կոչնէ կ'անուանէր։

տաքցլուի Ղփտիք կ'ըսէին թէ Որիգենէսի պաշտպան և հետեւող է.— Սևերիանոսք և Սիմոնիտք կ'ըսէին՝ թէ նոր Հաւատք կու բանայ, մեզի չինանելու.— Նովատիանոսք, թէ մեղաւորներուն անխտիր սիրով կ'ընդունի, և այլն, և այլն: Որոց թէ տուեալ թիւնն, թէ ծանրութիւնն և թէ պատասխաններն գիրքին և յայտնի են:

Բայց ես ոչ Յովհաննու վարքը կ'ուզեմ պատմել քեզ, Հայկակ, ոչ զարդարն արդարացընել, և ոչ այն Ոսկիբերան Խօսնակը՝ գովել ջանալ, որոյ գովութեան համար արդարև միայն երեսն նման լեզու կամ գրիչ արժանի է: Սակայն զի՝ ազգային սրբազան իրաւունք է այս գիշեր մեր հայրենեաց հանդիսից մէջ խառնել Կ.Պօլսի հայրապետին յիշատակը. զոր այսօր (27 յունուարի) ամէն ամենայն ազգք (ըստ Յոյսմաւուրց կարգի), որ է օր փոխադրութեան մարմնոյ նորա յաթոռն: — Ազգային իրաւունք մը. վասն զի եթէ Ոսկիբերանի հայրենեօքն պարծին՝ Ատրնք, լեզուաւն և աթոռովն՝ Յոյնք, արդեամբք և օգտիւն՝ ամենայն ազգք, Հայք՝ անոր աքսորանաց վանաւորութք և հիւրընկալք, անոր վերջին տարին ներսէն կենակիցք, անոր յետին հանգստեան մարմնոյն սպասաւորք և պահապանք, աւելի զգայուն և սիրալի պարծանք ունին Հայք: Ասոնցմով և դեռ ուրիշ մասամբք այլ՝ մեր է Յովհան Ոսկիբերան առաւել քան թէ ուրիշ ազգաց. և յետ Յունաց՝ հայոցիս օրացուցակին մէջ աւելի արժանաւոր և իրաւացի տեղի ունի: Անոր համար Թոզլով իր առաջին կենաց կէրպ կէրպ յիշատակները, կ'ուզեմ մէկ երկու գիշեր քեզի հետ, Հայկակ, նուիրել՝ Եկեղեցւոյ Խօսնակիս վերջին և Թաքուն կենացը՝ չանապարհ Հայոց, ինչպէս ինքն իսկ շատ հեղ կ'անուանէր իր Թղթոց մէջ, (ուս-

նեըը) զայն տեսն՝ ուր երեք վերջին և անգին տարինեըը ընչեց անմահահոտ Ոսկիբերանն: — Դեռ Ոսկիբերանի հակառակորդքն իրենց անիրաւ ժողովոյ աթոռներէն չէին իջած, դեռ ա- նոր գահուն վրայ նստելու՝ պնդերես անձ մը կուգ փնտրուէին, դեռ իր արդար պաշտպանքն և չա- րաչար զրկեալ հօտն և հովիւք, որբք և այրիք, աղքատք և ապաշխարողք՝ իրենց հովուապետեն և հայրապետը կուլային. կէսք՝ իրեն հաւատա- րիմ մնացեալ եպիսկոպոսաց դիմելով, կէսք՝ մե- ծասիրտ և մեծահաւատ Ս. Ողոմպիա տիկնոջ քով ողբալով, մինչդեռ Սարկաւագ երկու մոլի և խղճի մէջ կուտուայէր. խակ դժնիկ դշխոյն Եւդոքսիա՝ դեռ տպարանից պատշգամէն կուդի- տէր զոլորտս Պրոպոնտոսի, որ չըլլայ թէ առջի անգամուն պէս յետ դառնայ աքսորատարնաւն, չըլլայ թէ նորէն ժողովուրդն ովասիայով ընդ առաջ դիմէ՝ զծով՝ի ցամաք փոխելով, չըլլայ թէ անգամ մ'այլ իր գոռոզ գլխուն վրայ կայծակնա- թափ բացուի Բեբրանն-Ոսկի. — և ահա ատոր աւելը աթոռէն, արքունի պալատեն քովն եկե- ղեցւոյն մինչէն, և աւետակալաց ապարանքէն դուրս պոռթկացին թանձր ծուխ ու կարմիր լոյ- մը, և իբր իրարու հետ կռուելով ուժգին և ահաւոր յերկինք՝ի վեր դիզուէին [1]: Ոչ ոք երկ- բայեցաւ թէ այդ կրակը՝ արդարոյն անիրաւ դատապարտութեան վրէժն էր. սակայն մէկ էր գայն բռնկցնողն. — խնդիրն և վէճն այս եղաւ: Վրէժապարակը՝ շարունակելով իրենց լռութիւ- նը՝ ըսին, թէ այդ այլ թէ ոչ ձեռօք Յովհաննու, գոնէ իր թելադրութեամբն է. իր սարկաւագու-

1 Խորհն. Գ. Յբ. «Յայնմ ժամանակի... չարժմանց
» ահագնից և հրընկէցութիւն եղեալ՝ի Բիւզանդիոն, ոք
» յաղագս մեծին Յովհաննու»:

հի Ոլոմպիոդայ և ուրիշ կուսակցայց գործոնքն է. անոր շուռնէն է այս գժուարութիւնքը հրդեհը բուրնկ-ցընողն. հալածուիլ խռովարարն, հեռացուիլ հրձիգն. հեռու, հեռու այս կոլմէն: Ահա պըր-պատութեան վրայ այլ վրդովեցաւ վշտացաւ բոլոքեց արդէն զարնուած սիրտն, ինչպէս նաև յետոյ իր նամակաց մէջ այլ կու յայտնէ [1]:

Ը

Հազիւ թէ հասած 'ի Նիկիա, իր բանաքար տարագրութենէն, ծուլուն վրայ ապատակօրէն սահելէն, և կրքերէն քիչ մը դադրած, հան-գիստ կու փնտռէր՝ մարմնէն աւելի իր սրտին: Միանգամայն կ'ուրթար քննելու իր սուր մտօք և վառ հոգւովն՝ այն յաւերժայիշատակ մեծ հան-գիստրանը, ուր ուրթատն տարի առաջ՝ առաջին անգամ միաբան ժողովեր էին յամենայն կոլմանց քրիստոնէութեան՝ անոր գլխաւոր առաջնորդք, 318 հայրապետք. որոց շատն ալէս ալէս հալա ծանքներ, աքսոր, տանջանք և կատանք քաշեր էին, և դեռ՝ քաշելին անկէ եռև այլ, յանուն և 'ի պաշտպանութիւն աստուածթութեան Քրիստո-սի և Ճշմարտութեան աւետարանի նորա: Ոսկի-բերան գինքն և աթոռն մոռցած՝ հիացմամբ կու պտըտէր այն վէհ, և (թէ կըրնայն ըսել՝) հսկա-հասակ հայրապետաց հանդիսին մէջ, փոխ առ փոխ խօսելով ընդ Ոսիոսի, Աղէքսանդրոսի, Մա-կարայ, Ղևոնդիոսի, Արիստակիսի, Յակոբոյ Մծբնացւոյ, Աթանասի և այլոց հետ, տեսնէին ընդհանրութիւն և քաջալերութիւն ըսելով. և թէ՝ իր մեծամեծ վաստակոց և սիրոյն պատճառ

[1] Թուղթք Ի:

10477396

այս խուռն և խառնակ աշխարհիս մէջ պիտի ըլլար իրենցմէ շատին հանդիպածը.— զրպարտութիւն, հալածանք, աքսորանք, և... խոտովանողական մահ:..

Ո՞րչափ քաղցր էր Ոսկիբերանի՝ այսպիսի տեսլեանց մէջ յերկարել. և յետ այն նախադասհայրապետաց՝ տեսնել նաև երկրորդ գուշակն այլ 150ից, որք դեռ քիչ տարի առաջ (յամին 381) իր գահանիստ մայրաքաղաքին մէջ ('ի Կ. Պօլիս) ժողովեցան, և որոց շատն աչօք իսկ տեսեր, և դեռ ոմանք ողջ այլ էին: Անշուշտ անոնց մէջ կու փնտուէր և կու փարէր իր սիրելի և դրուատեալ Անտիոքայ հայրերը, զԲաբեղաս և զՄելիտոս, և իր գահուն նախորդները Մեղետիանէս, Աղեքսանդրոս, Գրիգոր Աստուածաբան. անշուշտ կ'ըսէր զմայլեալ միտքն, բարւոք է ինձ աստ լինել ընդ սոսա... Երբ յանկարծ մեծ շշնկոց, դղրդիւն մը փրթաւ. տեսլարանին դրուններն գրեթէ խորտակեցան. պահապանք, գերեպանք, ջուրեպանքներս թափեցան...«Շուտ շուտ, » փութա՛, ելլո՛ր, հեծի՛ր, արքունի հրաման է. » պէտք է հետացընենք քըշենք տանինք զքեզ » յաքսոր, յօտար, մինչև 'ի Կոկիսոս, մինչ 'ի » Տաւրոս, մինչ յԱմանոս, մինչև 'ի ծայրս սահ- » մանաց ինքնակալին»:— «Փառք քեզ Աստուած, » յաղագս ամենայնի», ըսաւ. և զնոյն ձայն կրկնէր, յեղ յեղէր քաղցրաձայն Խօսնակն եկեղեցւոյ. և տալով զինքն 'ի ձեռս և 'ի կամս վարողացն և հնազանդ Աստուծոյ, կու քշուէր կ'երթար յաշխարհս հեռի, յանծանօթ Հանապարհ: Եօթանասուն օր չէն և անշէն տեղիք, լերինք և անտառք, գետք և քարաժայռք՝ զնոյն ձայն, զնոյն երգ՝ բիւր անգամ լսեցին, բիւր անգամ կրկնեցին. «Փառք քեզ Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի փառք քեզ»:

10477396

Երկու չաբաթ կեցեր էր Ոսկիբերան ՚ի Նիկիա, ուսկից եւաւ յուլիսի չորսին: Բիւթանիոյ մայրաքաղաքէն մինչեւ ՚ի կեսարիա՝ ՚ի մայրաքաղաքն Ա Հայոց և կապպադովկիոյ, յարեւմտից յարեւելս հարաւոյ՝ գրեթէ 300 մղոն կ՚ըլլայ. եւ րև 25 օր մը քշեց այս ճամբան, որ ՚ի սկզբան առհեա ըլլալով քիչ մը ամառնային տաքուն դէմ այլ կրնար հանգիստ տալ[1]. մանաւանդ որ պահպանքն այլ հոս մարդասէր գտուեցան և շատ չէին չարչըրկեր. գուցէ չէին այլ կըրնար, ծանօթ քաղաքաց և գեղից միջէն և սահմաններէն անցնելով, ուր անդադար երթեւեկ կար՝ արեւելքէն դէպ ՚ի Կ. Պօլիս կամ ասկէ հոն. և ուր որ հանդիպէին՝ համբաւն աւելի առաջ հասած գտնէին: Շատ լաւ կու ճանաչէին այն կողմերն այլ զՈսկիբերան, որ րոյ և գերագոյն հովուապետութեան վիճակ էին, և իրեն արժանաւորապէս կարեւկցէին. ոչ աեղացիք միայն այլ և հեռաւոր եկք. ինչպէս ինքնին Ս. հայրապետն վկայէ մէկ թուղթին մէջ[2], առ Ոլոմպիադա, և յանուանէ միայն զՀայս յիշէ, թէ

« յարեւելքէ և ՚ի Հայոց և ուրիշ կողմերէ՝ ճամ
» բու վրայ հանդիպողքն՝ զմեզ աեսնելով ազբե
» րաբար արցունք կու թափեն, լալով ու հեծ
» կըլլանօք եաւնաւա կու գան, մեզմէ չեն բաժ
» նուիր: Ախ քանս անոր համար կ՚լսեմ՝ որ
» գիտնաս թէ հոս այլ շատեր կան, որ նոյն ցա
» ւով վշտակից կ՚ըլլան ինծի՝ ինչպէս դուք հոն »:
» Ուրիշ թղթով մ՚այլ. « Երբոր կու աեսնեմ որ
» զանազան քաղաքներէ և բնակութիւններէ
» դուրս թափելով բազմութիւն արանց և կա
» նանց՝ կու գան կ՚ողբան մեր վրայ, ձեր ցաւը կու
» յիշեմ, թէ ո՛րքան սաստիկ պիտի ըլլայ, երբ
» հոս զմեզ առաչին անգամ աեսողքն իսկ այսչափ

1 Թուղթ ժ:

2 Թուղթ Ը:

10477396

» կու տրամին, և որչափ ալաչեանք ու պաղատանիք
» որ չհոգան զմեզ՝ անոնք այլ ուրիշ խելք կ'ը-
» նեն կու լան » . և այլն : Ոսկիբերան այս խօսքե-
րով կ'ուզէր իր ազնիւ սարկաւագութեան և հաւա-
տարիմ աշկերտները մխիթարել. բայց թերևս ա-
ռանց ուշադրելուն՝ կ'իմացընէ մեզի, թէ ի՞նչ աստի-
ճանի մեծ էր իր համբաւն, արժանիքն, և հրա-
շալի ու գնահատուած կեցուածքն, որ այսպէս անցած
առիւրը յոտք և՛ ի գուբ կու հանէր :

Հոս պէտք է յիշել, որ իր երկայն և կրկին
ճանապարհորդութեանց մէջ՝ թէ և շատ հեղ այս-
պէս՝ ի տեսակաց կարեկցութենէն գուսա, բայց ոչ
միշտ և՛ ի պահապանացն. ոչ այլ գիւրութենէն
ճանապարհի. այլ ամեն կերպ նեղութենէն և զըրկ-
մունք և վախ, ցաւ և հիւանդութենէն, տաքէն և
ցրտէն տապնած : Մանաւանդ որ բնութեամբ այլ
փափուկ և սակաւ կազմուածով էր : Իր մեծ և
վառ հոգւոյն արտաքին պատեանն՝ շատ անհաւա-
սար և փոքր էր. տարիքն այլ արդէն (ըստ ո-
մանց) վեցասունը լըցած, մազերն թափթըփած,
տատմքան աւեր. շատ դարմանոյ և ինամոց կա-
րօտ : Որոց փոխան՝ այնպիսի չարաչարութենէն մը
պատրաստեցաւ իրեն, որոյ հազիւ թէ զօրաւոր
մարդիկ կարենային համբերել : Եւ սակայն ինքն
ուրախ զուարթ՝ իր երդն՝ ի թերան կ'երթար. և
քաւական այլ դեռ ուժով և առողջ էր՝ ի սկըզ-
բան : Իսկ իրեն միխիթար և օգնական ընկեր ունէր
քանի մը եկեղեցական պաշտօնեայ, որք Կ.Պօլ-
սէն հետն եկեր էին, չկարենալով զատուիլ իրմէ.
և աւելի կու միխիթարուէին անոր ընկեր և վշտա-
կից ըլլալնուն, քան թերևս կու միխիթարէին
զնա : Իր մէկ մեծ միխիթարութենէն այլ էր (որ-
պէս և ամենայն աքսորելոց և վտարելոց, եթէ
այս բաղդս ունենան) բարեկամաց հետ թղթա-
կցելն. պանդխտութեան երեք տարուան մէջ

10477396

պրաժնեէրէն՝ մօտիկ 250ի չափ նամակ և հատ ձե-
ռագրութիւն հասած են, առ զանազան անձինս, հե-
ռաւորս և մերձաւորս, սկսեալ Յովհաննիսեան
մինչև առ Ս. Գահանայապետեան Ինոմվկենտիոս.
այս նամականեէրէն շատն, մանաւանդ առաջինքն,
Ոսկիբերանի ընտիր գործոց կարգը կու դրուին:
Ոչ միայն աքսորանաց տեղէն, այլ և Հաճընէն
լչլեանները կու գրէր, և երբեմն կ՚ընդունէր այլ:
Իբրև հատարակ մահկանացու և ընկերակեաց
անձ մը՝ այն մեծ սիրտն այլ կու կարօտէր մտե-
մաց զրուցին, բարեկամական խօսքի և միխի-
թարութեան. անոր համար առէպ կ՚ուզէր Թղթոցը
մէջ՝ որ անպակաս գրեն էրեն, և մեծ պարգև կու
տեսէ անոնց նամակը. կու միխիթարէ և քաջա-
լերէ բարեկամները, և գեղեցիկ ու հատատա-
ուն և երբեմն երկայն խրատներով զմեզ անգամ
կու լուսաւորէ:

Ո՛հ. չկրնամ սիրտս, երբ այն ցաւագարն
մարմնով անանկ դժնդակ տեղութիւք և տաժանք
կրածները նկատածդրէ, թէ և չանացած է յայտ
մատչն շատ չըսել, որ իր սիրելիները չտխրեցընէ.
սակայն բաւականէն այլ աւելի են մեզի թէ ցա-
ւերը ճանչնալու, և թէ անոնցմէ աւելի՝ սէրն,
որով իր ցաւերը մոռցած՝ կու չանայ սիրտ տալ
անոնց՝ առ որս կու գրէ: — Ամոցմէ մէկն է Սրա-
քիոս մը, որ յանձնարարութեան Թղթեր տուեր
և գրեր էր՝ որ եթէ՝ ի Սեբաստիա երթայ՝ իր տու-
նը հանդիպի և հանգչի տիրոջ պէս: Սուրբն շնոր-
հակալ կ՚ըլլայ, այլ և կ՚իմացընէ՝ որ թշնամիքն
չթողին որ երթայ հոն՝ ՚ի մայրաքաղաքն Բ Հայոց.
վասն զի Եւդոքսիա ուզեց որ աւելի հեռու քշուի,
՚ի Կուկիւսոն. և կ՚ուզէ տուրբն որ եթէ հոս այլ
ծանօթ ունի՝ գրէ անոնց այլ յանձնարարու-
թեան Թղթեր:

՚ի Քաղաք ձկէ:

10477396

Թ

Թղթակցաց մէջ առաջին և սիրելագոյն անձն, և արժանաւոր Ոսկիբերանի սուրբ սիրելուհին է՝ շատ հեղ յիշածս Ոլոմպիադա. զոր և հարկ է քիչ մ՚աւելն ծանօթացընել քեզ, Հայկակ: Մեր պատմութեան մէջ միտքդ կու գայ Ե Արշակ Թագաւորին ունեցած սաստ համանուն զրչին, (և երանի՛ թէ բոլոր պատմութիւնն չգար՝ ի միտս, այլ և ելնէր ամեն յիշատակէ). կայսերական ցեղէ կին, և երբեմն ամուսնացած ընդ Կոստանդեայ կայսերազին, յետոյ մեր չուաո Թագաւորին. ա՛ր աղգական, և ոմանք ինչուան գուսար այլ կարծեցին այս կրաբր Ոլոմպիադային, (ծնած էր յամի 368), ՚ի հօրէ Անխիոսէ, և 16 տարուան հարանացած Նեբրիտիոսի իշխանի. ուսկից յետ 20 ամաւ այրի մնալով, չուզեց անկէ եաւս աշխարհի երես տեսանել. Թէպէտ և կայսրն, մեծամեծ իշխանք, մանաւանդ Եւսիդեոս Պատրիարգն Կ. Պոլսի իշխանն և իւնամին կայսեր՝ շատ ջանային որ տար կին ըլլայ. և այս բանիս համար՝ առաքինակրօն և մանկամարդ այրուոյն ինչքը գրաւեցին (որ անբաւ շատ էին): Սակայն նա հաստատ մնաց իր առաքինի կամաց մէջ, բարեպաշտութեան գործերով մխիթարուելով աւերնայն զրկմանց վրայ. մինչև յուսահատեցան բռնադատողքն՝ իր գեղեցկութենէն և սէրտը յափշտակելու, զոր բոլորվին նուիրեր էր Աստուծոյ: Պարիսպքն Կ. Պոլսոյ տառնս օրհնեց զինա Սարկաւագուհի. որով՝ երբ իր ատցուածոցն այլ ազատ մատակարարութենէն զարձուցին իրեն, եղաւ կրկնակի մայր ողբատաց և տառապելոց. տակով այլ արտով այլ իւնամբով զանոնք, և զամեն կարօտ անձեր, և մանաւանդ եկեղեցական և եկեղեցի, ինչուան

10477396

ՀԱՐԴԱՆ ՓԻԼԻԿ ԿԱՅՍՐ

հեռաւոր կողմեր: Իրաւ քիչ ուխտին այնչափ հա-
րըատուԹիւն ունեցած է, բայց աւելի քիչք զա-
նունք այնպէս օգտակար ըրած են. վասն զի քի-
չեր այլ՝ իր բնականէն աւելի մեծաւոր ձիրքն ու-
նեցեր են. մեծ և տաք հաւատք, զգաստուԹիւն
և խոհեմուԹիւն. ոտով չէ Թէ լոկ հասարակ ժո-
ղովըրդեան, կամ իշխանաց և այրուձեաց միայն,
այլ և իմաստուն և սուրբ եպիսկոպոսաց քոմ
մեծ յարգ մեծ պատիւ ունեցաւ:

Ս. Գրիգոր Նազիանզացի, Ս. Գրիգոր Նիւսա-
ցի, Ամփիլոքիոս, և այլք, իրեն ընծայած են ի-
րենց գեղեցիկ գրուածներէն ոմանք. Ս. Եպի-
փան, ՄարուԹա, Թէոփիլոս, Ակակ, Սեբերիա-
նոս, և այլն, իրմէ ողջմուԹիւն կամ օգնուԹիւն
գտած են: Բայց իր ամենէն մեծ պարծանքը կըր-
նանք սեպել ուր Ս. Ոսկիբերանին մեծարմու-
Թիւնն, յարգն, խնամքն և ԹղԹակցուԹիւնն. և
Թէրևս առնցմէ աւելի այլ՝ իր վշտակցուԹիւնն
անոր համար և անոր հետ: Վասն զի յետ սքան-
չանաց Թօփնակին՝ հալածեցին այս իրեն զմայլած
ունկընդիրն այլ, և շատ նեղուԹիւն հատուցին,
որոց կու չանար հեռուէն իր անապատէն այլ
քաջալեր տալ Ոսկիբերան. նաև յետ իր մահուան՝
շատ երկար էդիմանալով այս ողջախոհ տատրակ
այլ, կնքեց իր մաքուր կեանքը (յամի 410), և
դասեցաւ ընդ սուրբս, յիշեալ 'ի Յունաց և 'ի
Լատինաց:

Ահա այս արբուհւոյն՝ և իր եկեղեցւոյ տարկա-
ւապուհւոյն է՝ որ Ոսկիբերան այս աւուրքին Հա-
նապարհորդուԹեան մէջ այլ զանազան ԹղԹեր
գրած է. և որոց մէկուն մէջ, (կ'երևի Թէ աւ-
գուն դիւր Հանգիչն գառնալով դէպ 'ի հարաւ,
'ի կեսարիա երԹալու առեն) կրած դժարու-
Թիւններն կու յիշէ [1]. «Տեսած լսած բանս էր.

1 ԹուղԹ ԺԱ:

» ժայռերը և ջրի տակ ծածկուած քարեր. մրրիկը
» և փոթորիկը Թնդալով կ'որոտան. գիշեր ան-
» լուսնկայ, Թանձր մէգ, գահավէժք և քարա-
» ժեռք. և սակայն առանկ ծովու մէջ նաւելով
» նաւահանգիստը կեցողներէն ապահաս հանգիստ
» չեմք»: Կ'աւելցնէ այլ Թէ մարմնով առողջ
եմ, արեւս զուարթ, պահապան գինուորք այլ
ձեռքերնէն եկած խնամքը կ'ընեն. «ուստի զա-
» ոնք գիտնալով, դու այլ սիկին իմ բարեպաշտ-
» ուհի, յուզէ այս մրրկաց և ալեաց. և քու
» առողջութեանդ վրայ ապահովէ գիս, կ'աղա-
» չեմ»: Ուրիշ Թղթոց մէջ[1] առ սա ինքն և առ
ուրիշ բարեպաշտ սիկին մը (Թէոդորա)՝ մնաս-
ցեալ Ճամբուն մէջ քաշած հիւանդութիւնը և
յաւելեալ տանջանքը կու յիշէ. «Հալեցանք, մաշեցանք,
» հազար կերպ մահուամբ մեռնելու մօտեցանք...
» մէկ կողմէն անդադար աւերով կու տանջուէի.
» մէկ այլ կողմէ գիշեր ցորեկ հարկ էր Ճամբայ
» ընել. ցորեկը՝ արեւուն տօթէն, գիշերը՝ ոչնու-
» Թենէն տանջանք. հարկաւոր եղած բաներ
» չկան, գիս հոգացողներն՝ աղքատ. բանտարգե-
» լոցմէ պակաս չէր քաշածներս... ոչ հաց գը-
» տուէր և ոչ ալէկ ջուր Ճամբուն վրայ... վեր-
» ջապէս հիւանդագին հասայ 'ի Կեսարիա՝ իբրև
» ալէկոծեալ նաւ մը, և հոն այլ մէկէն չհան-
» գըստացայ. ինչուան որ Ճարտար բժշկաց խնա-
» մօք, բայց աւելի անոնց կարեկցութեամբը՝ քան
» Թէ դեղերով ըղընացայ:... Փառ Աստուծոյ յա-
» ղագս ամենայնի: Ահա խօսքս ինծի ամեն հանդի-
» պած դիպուածոց մէջ չեմ կրնար զանց ընել.
» և ոչ ոք զայս կինէն կրնայ յարիշտակել:... Շատ
» բան կար ըսելու (առ Թէոդորա գրելով), բայց
» չեմ ուզեր սիրտդ խռովել. Թող լուենք. բայց

[1] Թուղթ ԺԲ. ՃԻ։

10477396

» Միայն այս մեկս այլ լսեմ... որ այնքան Հոխ և
» հզօր բարեկամներ ունենալով այլ՝ էկըրցանք
» արժանի ըլլալ այն ընդհաց՝ որ չարագործաց
» անգամ կու ընդհուպ. այսինքն, քիչ մը մօտիկ
» և բարեխառն օդով տեղ մը բնակելու. այլ և
» այսչափ չարչըրկած ու ցաւագար մարմին ունե-
» նալով, և Իսաբրացւոց (աւազակաց) վախով
» ջորս դին պատած ըլլալով, այս պզտիկ ու ընչին
» ընդհքէն այլ զրկուեցանք: Ասոր համար այլ
» փառք Աստուծոյ. և ոչ երբեք դադրինք յամե-
» նայնի փառս տալ Աստուծոյ. Եղիցի անուն
» Տեառն օրհնեալ յաւիտեան »: — Անցողաբար
կ'ըսեմ, որ այս Թղթիս մէջ կ'ըսէ Ոսկիբերան աւ.
Թէոդորա, Թէ այս ջորտրդ կամ հինգերորդ
Թուղթն է որ կու գրէ առնա. անկէց աւելին այլ
գրած է աւ Ղևմպիադա, և աւ այլս. որով յայտ-
նի կ'երևի իր վառվռուն միտքն, տաք սիրտն և
անդադար մտածմունքն, որք այնքան հազարաւոր
Հառեր արտադրեցին: Ոչ քարաժայռք Հանդ-
արհին և ոչ անհարթուԹիւնք օդոց, ոչ իսկ
հիւանդուԹիւնք կրնային յոգնեցընել, լռեցընել,
դադրեցընել այն անխոնջ Խօսնակը:

Ժ

Ձամբէն աւելի եռօրեայ ջերմին ասքէն տկա-
րացած՝ հազիւ կրցաւ Ոսկիբերան զինքը Ձգել 'ի
Կեսարիա մայրաքաղաք[1]. և անոր մէկ անծանօԹ
Թաղին մէջ յանկողին ընկած՝ բժիշկ և դարման
փնտռել, զոր դիւրաւ չգտաւ 'ի սկզբան. քայց
յետոյ ոչ միայն բժիշկք, այլ ծոլոր քաղքին
կղերն, միանձունք և միանձնուհիք, ամենայն բա-
րեպաշտ անձինք՝ իբրև ոսխան դիմեցին իրեն, և

1 ԹուղԹի մին:

մեկմեկ յափշտակել կ'ուզէին լրեն ծառայելու պատիւը: Մ'ասին, կ'ամաչեմ ըսել, միայն անոնց առաջնորդն և հովիւն՝ Փարեպոլոս արքեպիսկոպոսն՝ ոչ երևեցաւ ցուվհաննու և ոչ այլ կ'ուզէր տեսնել. կամ թէ չէր այլ կրնար, նախանձով և հակառակութեամբ կուրացեալ. ինչպէս իրմէ առաջ կարծուի որ Անկիւրիոյ արքեպիսկոպոսն այլ նոյն կրքով բռնուած, ինչուան մահուան ըսպասնալէօք կու վռնտէր զՍուրբն՝ իր թեմէն. բայց ինքն շուտով մեռաւ: Ոսկիբերան առաջուց կու գուշակէր հոս այլ ըլլալիքը, թէ և ճամբան միամիտ անձինք իրեն աւետիս կու տային թէ կենդանի արքեպիսկոպոսն կու սպասէ քեզի. իսկ ինքն մինչ քիչ մը հիւանդութենէն ըսլնանալով կու մտածէր շուտով հեռանալու անկէ, յանկարծ քաղքին դռներն ու ճամբաներն գոցուեցան: Ի սուրացիք անակնկալ յարձակմունք մ'ըրին Մաժակայ (Կեսարիոյ) սահմաններէրը. քաղքին պօրպետան զօրքերովը դուրս ելաւ անոնց դէմ, բնակչաց թողլով քաղաքը պաշտպանել: Երկրորդ առաւօտ Ոսկիբերան իր բնակած տունը պարպուած տեսաւ. բայց զարմանք, ոչ իսաւրացոյց՝ այլ արքեպիսկոպոսին գրգռեալ միանձանց գնդով, որք կու սպառնային տունը այրել՝ թէ ոչ շուտով ելնէ երթայ. և այնպէս գլուխնին տաքցեր էր՝ որ քաղաքապետին զինուորաց անգամ վախ կու ձգէին և կու ծեծէին, և ոչ իսկ քաղաքապետէն պատկառէին: Սա չկարենալով անոնց իօսք հասկըցընել, մարդ ղրկեց առ Փարեպոլոս որ թող տայ խեղճ հիւանդին հանդչիլ՝ ինչուան որ քիչ մը վրայ գնէ և ճամբաները բացուին: Ձայն չեղաւ համոզել. երրորդ օրը այլ աւելի սպառնալով թեամբ կու սպրդէին, կու վռնտէին տուրբ պատրիարքը. որ ջերմին և կէսօրուան տաքութեան առեն՝ հազիւ կրնալով զինքը պատպարակի մէջ

ձգել, հանել տուաս քալքէն. մինչդեռ բազմութիւն քաղաքացեաց շուարած կու լային, և քանի մը քահանայք աւլընալով և հառաչելով եառնէն կ'երթային. և այրած սրտով՝ « Աւելի լաւ է, կ'ը» սէին, որ Իսաւրացոց ձեռք ընկնինք, քան մերոնց » պէս մարդասեցից մէջ մնաս »: Ուստի նաշ» տանէն բարեպաշտ այրն Սեվկիա՝ ազատեց, և տանել տուաւ զՈսրբն իր գեղն տունը, որ ջրա հինգ մղոն հեռի էր քալքէն: Անարժան հօտապետին նախանձն՝ ատով այլ գոհ չեղաւ. այլ այն քան սպառնացաւ վախցուց բարի տիկինը, որ ա կամայ և լալով սիրեցաւ իր հիւրը հեռացընել. սակայն գեղեցիկ և ազնիւ իորագիտուԹը ձևացընել տուաւ՝ Թէ բարբարոսներուն վախէն է:

Կէս գիշեր էր. հանդարտ և կարօտած քուն մը կու քաշէր Ոսկիբերան, երբ յանկարծ իր ընկեր քահանայն (ԵւեԹիոս) խլեակով արԹընցուց, Բարբարոսք կու գան, փախչինք, ըսելով: « Անլսե» սնական, մառաւսլապատ, տխուր կէս գիշեր էր, » ի՛նչ ընէ Ոսկիբերան, որ զմեզ մեծ տարա» կուսի մէջ կու ձգէր. ոչ խորհուրդ տուող կար » և ոչ ձեռք տուող. ամենքն զմեզ Թողեր էին. » զարհուրած, և գրեԹէ մահուան սպասելով » հիւանդապին անձամբ եկայ և ջահերը վառել » տուի. բայց երեցս մարել տուաւ, որ չըլլայ » Թէ լոյսը տեսնելով բարբարոսք վրանիս յար» ձակին: Ուրեմն ջահերը մարած ընկանիք ձամ» բայ, որ սաստիկ քարոտ և խորտուբորտ էր. » անանկ որ պատգարակս կրող ջորին զարնուե» լով ընկաւ, դեսպանն այլ վիս այլ անանկ գլո» րեց, որ կարծէի Թէ այլ պիտի չելնեմ. հապա» ոտք եկայ, և սկսայ կամաց քայլել՝ օգնուԹեամբ » ԵւեԹիոսի, որ ինքն այլ ձիէն ընկած՝ Թևս կու » բռնէր. և այսպէս ուրիշի ձեռքով առաջնորդած » կամ քաշքշած՝ այն դժուարին տեղէն վտան-

10477396

» գաւառը լերանց մէջ կէս գիշերուան տաւէն կու
» խարխափէի: Մտածէ թէ ի՞նչ կու կրէի ցաւե-
» րէս, ջերմին տագնապէն, և եղածը չգիտնալով
» կարծելով թէ հիմայ հիմայ այն ահաւոր քար-
» բարոսաց ձեռքը պիտի ընկնինք: Կարծեմ թէ
» միայն այս տաեն քաշած տառապանքս՝ բաւա-
» կան էին շատմը մեղքերս քաւելու և ինծի վարձք
» պատրաստելու»: Ցետոյ իմացաւ և կ'իմացընէ
Ոսկիբերան, որ այս ամեն բանի պատճառ նա-
խանձն է եղեր, այն՝ որ զինքն հալածեց ի Կ. Պօլ-
սոյ, և հիմայ այլ ի Կեսարիոյ. անոր համար ցա-
ւագին և այրած սրտիւ կ'աւելցընէ խօսք մը, զոր
ես այլ գողալով կ'արտաբերեմ. Թէ ոչ Յեսուբրա-
ցւոց «և ոչ յայլմէ ումեքէ այնպէս երկնչիմ ես՝
» որպէս յեպիսկոպոսաց, բաց ի սակաւուց ո-
» մանց»: Այսքան ծանրակշիռ են գործք անոնց՝
զորս երկինք և երկիր կու ճանչնան այցելու, հո-
վիւ և հայր ժողովրդեան:...

Այս տառապագին և դժնդակ ուղևորութիւնս՝
պատճառաւ իր հիւանդութեանն, անդադար ջեր-
մին, արշաւանաց բարբարոսաց (որ սովորական
ճամբանէրը բռնած էին), շատ ծանր և երկար ե-
ղաւ. գրեթէ ամիս մը և աւելի. իսկ Պօլսէ եկնե-
լէն ի վեր 70 օր, մինչև հասաւ Ոսկիբերան իր
աքսորանաց տահմանեալ տեղը, ի Կոկիսան. ո-
րոյ անուանէն անգամ կու տատկար և կու փոփո-
փէր ուրիշ տեղ մը քշուիլ. բայց տատր համար այլ
գոհացաւ ըսաւ՝ Փառք քեզ Աստուած յամենայնի:

10477396

ԺԱ.

Կոկիւսոն՝ ուր իրեք տարուոյ մօտ պանդխտեաց Ոսկիբերան, և ուսկից գրեց Հարիւրաւոր նամակներ, իրեն համար էր ամայագոյն, անապատագոյն վայր համօրէն աշխարհի [1]: Ոտան որոյ պատշաճ է մեզի այլ ծանօթանալ այս տեղւոյս. թէ և՝ ի սկզբան՝ անոյն մինչև հիմայ այլ խնամ քիչ ծանօթ մնալուէն աշխարհագրաց և ուղևորաց, անգամ մ՝այլ կ՝արդարացընէ իր ամենէն մեծ տարբերակ պանդխտին վկայութիւնը:

Հին Գամրաց կամ Կապադովկիոյ, Կիւլիկիոյ, Կոմագենիոյ (կամ Եփրատեսիոյ) և Գ և Բ Հայոց միջատեմնան՝ փոքր աշխարհ մը կար հին տաեն, Կոփայոնիք ըսուած, զոր ոմանք Կապադովկիոյ մաս անուանէին, այլք (ինչպէս Պտղոմէոս) Փոքր Հայոց. միչին դարու մէջ՝ մերքս Ջահան աշխարհ կամ երկիր կ՝անուանեն այս տեղս, յանուն Ջահան կամ Ձիհան (որ և Պիւռամիս) գետոյ, որ կու գայ՝ ի զանազան կողմանց լերանց: Լերինքն են՝ յարևմտից և հիւսիսոյ՝ Անտիտաւրոս, ՝ի հարաւոյ՝ Ամանոս, իսկ յարևելից՝ այն լեռներն՝ որ Եփրատայ ջրերը կու գաեն՝ ի Ջահանայ, զոր՝ ի Միջերկրական ծով իջեցընելով, գնա՝ յարևելս ղրկելով մինչև՝ ի Ծոցն Պարսից: Այս զանազան լեռներէն շրջապատեալ երկիրն՝ ի հարկէ կու ձևացընէ լեռնադաշտ կամ մեծ լեռնահովիտ մը, ինչպէս կ՝անուանէ այլ զոր հին աշխարհագիրն Սարաքան. և է շատ ընդարձակ հիմայ Ալեպպանի կամ Էլեօվլեանի (որ և Ալլասան) գաւառն, և Փալանկա-օվա գաշտն. որոց

1 Թուղթ ՁԽ. ՃԹ. և այլն: Εν Κουκουσῶ καθήμενοι τῶ πασης τῆς καθ'ήμας οἰκουμενης ἐρημότατω χωρίω.

10477396

հարաւակողմը Ալպօսան՝ կամ մեր Զահան քաղ-
քէն վար՝ կու միանան երեք գլխաւոր գետակք,
Ժոլովեալ լեռնահովտին ջուրը, և միանալով կու
ձևացընեն զգետն մեծ Զահան, որ անկից կ'իջնէ
'ի Մարաշ, և կու մտնէ 'ի Կիւրիկիա, երթալով
յԱնարզաբա և Մսիս, թափիլ 'ի ծոցն Հայոց
(հիմայ՝ Իսքէնտէրունի ծոց): Այս երեք գետա-
կաց արևմտեան և հարաւագոյնն է Կոկիսանի
գետն (Կէօքսուն-սու). որոյ եզերքն է շինած մեր
հետաքննելի տեղին, ընդ մէջ Հաճնայ և Խօզանօղ-
լուի լերանց՝ յարևմտից, Զահանայ՝ յարևելից,
և Ուընեայ կամ Զէյթունի՝ որ կայ 'ի հարաւոյ:
Յանուանէ գետակին և ուրիշ նշանաց կու հաւաս-
տի՝ որ ատոր բնիկ հովիտն կամ վիճակն է կոյս
գաւառն յիշեալ 'ի մերոց պատմչաց միջին գարու,
որոյ գլխաւոր շէնքն կամ քաղաքն՝ անշուշտ հա
մանուանակէս կոկաց քաղաք կամ Կոյս կոչէր ըստ
ստեղութեան Հայոց (որպէս կարս՝ Կարուց քա-
ղաք), զոր Յոյնք և Լատինք փոխեցին 'ի Գոգաո-
սոս, յեսոյ և Հայք 'ի Կոկիսոն, յորմէ ցարդ և
այլազգիք Կէօքսուն կամ Կէօքսուն կոչեն: — Կոկիս-
ան՝ զոր Յոյնք միշտ քաղաք Հայոց կոչեն, և 'ի
գիրս մեր կոչուած է նաև փաղատ Հայոց ՌԹայ, հի-
մայ երեսէ ընկած աւան մը կ'երևի 2–300 տաճ-
կաբնակ տնով, որոց հետ չեն յիշուիր մերազգիք,
այլ անոր մօտերը երեք գիւղից մէջ: Տեղւոյն
գիրքն ինքնին կու կրկնէ Ոսկիբերանի ըսածները.
ամառը բաւական տաք պիտի ըլլայ, լայնութեան
38 աստիճանին տակ ըլլալով, խակ ձմեռը՝ անհնա-
րին ցուրտ, թէ բնական յատակին բարձրու-
թեամբ և թէ բարձր ու ձիւնապատ լերանց մեր-
ձաւորութեամբ. որք չէ թէ միայն երկայն շարք
մը կու ձևացընեն արևմտից կողմէն, այլ և ոմանք

10477396

ցրուած կանգնին դաշտին մէջ. և անով այլ աւե-
լի վայրենի և դժնդակ կերպարանք մը կու տան,
և ձամբայ ընելու դժուարութիւն: Ասոնք ոչ
այնքան բնակութեան և առևտրի յարմար՝ որքան
ամրութեան և պահպանութեան տեղ մը կրնար
ըլլալ: Անոնք այլ ըրեր էին սրատես շահադէտ
Հռովմայեցիք՝ բերդով ամրացընելով և պահապան
գունդ մը դնելով հոն: Անոնք ամրութեամբ,
դժարութեամբ, և հեռաւորութեամբ, (՚ի սահ-
մանածայր Յունաց, Հայոց և Ասորւոց), աքսո-
րանաց այլ յարմար տեղ սեպուեցաւ. ինչպէս և
70 տարի յետ Ովկիբեդեանի՝ Զենոն Իսաւրացի
կայսրն իր հակառակորդ Բասիլիսկոսը տընով տե-
ղով հոս աշտարակի մը մէջ փակեց, տովամահ ը-
րաւ:

Քիչ շատ լսեր և գիտէր Ովկիբեդեան իր արգե-
լանաց անվախճար դիրքը. սակայն երբ յետ ամ-
օրեայ տառապանացն որ՚ի Կեսարիոյ սկսեալ՝
հասաւ հոս, և գոնէ հալածողներէն ազատած՝
ընկաւ իր առանձնութեան անապը և յանկոլին,
և սկսաւ շունչ առնուլ ողջանալ, ու Իսաւրացւոց
այլ ևս քաշուելովն՝ վախն այլ փարատեցաւ,
աղչի կարծածին չափ տխուր և ահարկու չերե-
ցաւ Կոկիւսոն. «Ինչո՞ւ համար կու սրտիս, կ՚ը-
սէ առ Ղոմպիտա, այս տեղւոյս ամայութեան
վրայ... Թէպէտ և ոչ հրապարակ ունի այս քա-
ղաքս, ոչ վաճառանոց, բայց ինձի ինչ փոյթ
են սոքա. ինձի հարկաւոր եղածն առատապէս
կու գտնեմ, (հիւրընկալաց ճարտարելովը):
Նոյնպէս ուրիշ գրի մէջ այլ կ՚ըսէ, Թէ երբ՚ի
Կոկիսոն հասայ՝ սկսայ անամոթ երկինք տեսանել,
մաքուր օդ ծծել. հիւանդութիւնս փարատեցաւ.
և ամեն կողմէ սկսան հարկաւոր եղածքն տեղալ՝
բարեբարոյց յօժար կամքով:

Այս բարեբարոյց մեկ գլխաւորն էր Հայա-

10477396

ատանի այս մասին նախատրան կամ կոլմնակալն՝ Սոպատրոս անուամբ [1], որ հայրաբար կու խնամէր իւր եպիսկոպոսութեան տակ եղածներըն. Ոսկիբերան գովութեամբ և շնորհակալութեամբ կու յիշէ զնա. և անոր մէկ որդին՝ որ հոն էր՝ ուսանող եաւէ եղած, կու յանձնէ իր քարեկամ Կիւրակոս եպիսկոպոսին խնամոց: — Մէկ քարեբարո և խնամածուն այլ էր աւելոյն եպիսկոպոսն, որ յայլոց կոչուի Սդեկիոս (Եղբայր), որ նախ Արաբացոց եպիսկոպոս էր, կ'ըսեն. և պատկառելով յարժանապատիւ պատրիարքէն՝ ուզեց անոր թողուլ իւր աթոռը, զոր 'ի հարկէ յանձն չառաւ Սուրբն, Որոշեալ սահմանէն անդին չանցնինք [2], ըսելով. այլըսա պատշաճին՝ վարդապետութեան պաշտօնը կամ արուեստը կատարէր:

ԺԲ

Սանոյմէ և ամենէն աւելի մտերիմ և ձեռնտու եղաւ Դիոդորոս [3], զոր Տէրն իմ կոչէ Ոսկիբերան, որ շատ հեղ եպիսկոպոսաց կու տայ այս տիտղոսն. և մենք ուրիշ վարդապետի աւանդութենէ այլ պիտենք որ նա մեր ազգէն էր՝ եպիսկոպոս և վարդապետ Հայոց այն կողմերուն, և ինչպէս Ոսկիբերանի և Շնորհալւոյ յիշատակքն ատեն գուշակէ՝ ազնուազգի, այլև Պահլաւունեաց տոհմէն: Ձեղէն աւելի մեծահոգի և տաքսիրտ ըլլալով երբ լսեց Թէ Իօանան եկեղեցւոյ իր տհմանց մէջ պիտի պանդխտի, ուրախութեամբ և մեծարանօք մարդ խաբեց մինչև 'ի Կեսարիա, (մինչդեռ հոն էր Սուրբն) և հրաւիրեց իր տունը. Սուրբն այլ մեծարեց զնա և յանձն առաւ

1 Թուղթ կդ:
2 Թուղթ ճիե:
3 Թուղթ ժդ. ժդ:

ԽՆԴԻՐՔԸ, Թուղով ուրիշներուն հրաւէրքը. և երբ եկաւ ՚ի Կոկիւսան՝ [1] պատրաստ գտաւ Վիտակրեայ տունը՝ ամենայն կարևորութ, ըստ կարելւոյն. զոր բաւական չեսպեղով տանուտէրն՝ բոլոր իսկ տունը Թոլուց Ոսկիբերանի պիտոյից և հանգըստեան, ինքն իր գեղի տունը քաշուելով. և տանը վերակացուին պատուիրելով՝ որ ամեն կարելի պիւրուԹեան հնարք ընէ, հանդիսեցընէ իր արժանապատիւ հիւրը: Աւսր նախանձելով ուրիշ շատեր այլ՝ մէկմէկէ աւելի կու ջանային ծառայութիւն մ՚ընել Ոսկիբերանի:

Անոնց մէջ գովութեամբ կու յիշէ սարկաւագուհի մ՚այլ՝ Սաբինիանա (Չաւենա?)[2] անուամբ, որ տարիքն առած և շատ այլ տկար ու հիւանդոտ էր. սակայն նոյն իսկ Ոսկիբերանի հոն հասած օրը՝ եկաւ իրեն այցելութիւն, Թէ և հազիւ կրնար քայլել. բայց երիտասարդի պէս աշխոյժ և զուարթ կու խօսէր, և ի՚ըսէր Ս. հայրապետին. Եթէ զքեզ Սկիւթացւոց աշխարհն այլ քշելու ըլլային, ինչպէս որ ի՚ըսէին, ինչուան հոն այլ կու գայի քեզի: — Ախնիւ պառաւ, ոլքան տարբեր յԵւդոքսիայ սրտէն: — Գուցէ մերազգի էր և այն Բարբարա և ապնէ- Հրահատն, ինչպէս կ՚ըսէ Ոսկիբերան (Աֆրատդ կոչելով) որ Դիոգենէս ա. նուամբ մեծի մը կողմանէ ընծաներ բերեր էր առ Սուրբն, և երբ սա չէր ուզեր զամենն այլ ընդունել, Հրահատ յանձն չէր առնուր հեռանալ անկէ, և ոչ իսկ արբոյն նամակը տանիլ, ինչուան որ բոլոր բերածները չընդունի. «այնպէս լինի հետ » կապուեցաւ», ի՚ըսէ Ոսկիբերան. և ի՚պղաչէ զԴիոգենէս որ այն պարգևները զկուրին ՚ի Փիլնիկէ ՚ի պէտս նոր հաստատուելոյ: Անկէ ետև նամակացը մէջ և բերնով այլ կու պատուիրեր

[1] Թուղթ ՃԳ:

[2] Թուղթ ՃԳ:

Սուրբն, որ այլ երեն ընծայ չխաւրեն. վասն զի ինչուան կանայք երեից զաւրդերն անգամ կուխային: Առածնեն այլ աղքատաց կու տար, կամ պերնեերը ազատելու յիսաւրացւոց: Իակ ինքն իր պերուճեան տաեն աւելի շատ բարեկամ ունեցաւ քան յազատութեանն:

Այդ ատոնց և նմանեաց ինամօք և սիրով և օդոց լաւութեամբ շուտով վրայ դնելով պանդուխտ Խօանակն մեր, կըրցաւ դուրս այլ ելնել, և քնութեան ատուածատուր և աննախանձ պելեցկութիւնը և կենսատու շունչը վայելել: Դեռ սեպ աեմբեր ամիս էր, տաքերն մեղմացած զուարճալի աշնան եղանակն կու տիրեր բարձրադաշտակաց վրայ, հովաց և լերանց, ծմակաց և ծործորոց մէջ. ուսկից դեռ քաղցրաշարժ կրկըլջանօք կ'իջնէին արծաթափայլ առուակք, կու հնչէին առատ պարտաէր թռչունք, և ծաղկէին զանազան գունով վայրենի ծաղկիկքն, իբրև անխառով և անմեղ խաղաղութեան մը մէջ. « Մխայնութիւն, խաղաղութիւն, անդորրութիւն բազում և մարմնոյ » կազդուրումն », զգաց, կանչեց, գրեց Ոսկիբերան[1]: Տեսաւ և յիշեց անշուշտ ի երկնաւոր վարպետին ցուցած և լսածը, զոր և ինքն իակ երբեմն մեկնաբանած էր[2], « զառաւելութիւնն... » պելեցկութեանն, զոր տուեալ է շուշանացն » վայրենեաց... Եթէ Սողոմն պարտեցաւ 'ի գե- » ղեցկութենէ նոցա, յամենայն... 'ի փառս իւր, » յայտ առնէ Թէ յամենայն իակ 'ի Թագաւորու- » Թեան իւրում այնպիսի ինչ ոչ զգեցաւ. և ոչ » եթէ 'ի միոյ ծաղկէն պարտեցաւ և միւսումն » նմանել կարաց, այլ յամենեցունց միանգամայն

1 Թուղթ ԺԴ. ἡσυχία, γαλήνη, ἀπταγμοσύνη πολλὴ, σωματος ευρωστία.

2 Մեկնութիւն Մատթէի. ճառ իԲ:

» յայլեթևցաւ. վասն որոյ և ասէ խակ, եթէ Ոչ
» իբրև զմի ի նոցանէն:... Չինչնուազագոյն քան
» զայն կայցէ, զի որ այսօրն լոյէ և վաղիւ չիցէ,
» և յայնմ ևս զայնպիսի պայծառութենն ցուցա-
» նիցէ: Չի որ խոտոյն՝ որ չէ ինչ ի պէտս և ձա-
» րակ հրոյ, զայնպիսի գեղեցկութենն ընդհեաց,
» զիարդ ոչ քեզ՝ որ ի պէտս հաստատեցար, այլ-
» ևս զաւետեան պէտս...ծրչալի ևս առաւել քեզ՝
» որ քան զամենայն ինչ պատուականագոյն ես,
» ամենայն պիտոյիւք պատուիցէ»: Ահա որ այս-
պիսի խորհրդածութեամբք կու իրատէր երթևի-
եր ժողովուրդը, ծրչալի աւելի խորհրդածէր հի-
մայ տեսանելով այս վայրենի ծաղկուները՝ երեից
պարզ և գերսաղմոսեան գեղեցկութեամբն՝ այն
բացակայը առանձնութեանց մէջ, որոց ինքն խակ
էր ամենէն աւելի միայնացեալ անձն, միանգա-
մայն և ամենէն աւելի զանոնք լեցընողն՝ իր աս-
տուածափառ ներկայութեամբը:

ԺԳ

Ահասիկ զգործս և զխորհուրդս Աստուծոյ տեսանելով և նկատելով հիացմամբ յանպատրաստակ դէմս բնութեան, Ոսկիբերան գրեթէ չէր իմանար եղանակին յառաջ շարժիլն և աշնայնոյն լռիկ հեռանալն. — մինչև գրել առ ոմն[1], թէ ոչ միայն «ազատեցաւ Հայաստան ի ներաբացւոց», (այլ » և) տեսլեան ձմեռն մինչև հիմայ ամենազուարճ » գարնան նմանի»: Եւ ուրիշն մ'այլ գրելով կու նմանեցնէր Անտիոքայ՝ իր քնիկ հայրենեաց կլիմային, որոյ արդարև Թէպէտնոյն միջօրէին տաքն է Կոկիսոն, այլ գրեթէ 120 մղոն անկէ աւելի հիւսիսագոյն, աւելի բարձրադիր և շատ աւելի

1 Թուղթ ԺԳ:

հեռու՝ ի ծովէ. որով Անտիոքայ ցանկալի ձմեռուան շատ կարօտ կրնար քաշել, ինչպէս որ քիչ առեւնէն ինքն այլ զգաց: Մէկ երկու պատիրերի հովերը Անտիոքացոցն փչելով այլափոխեցին բնութեան կերպարանքը. հասաւ, նրատաւ Թափաւորեց դժնդակ ձմեռն՝ լերանց և դաշտաց վրայ. ջրոյ դին ընդարձակ լայնատարած բառած գրեթէ մը նմանեցաւ. միայն երկինք իր գոյնովը կ'երևէր վերէն, այն այլ երբ ձեան տարափէ և բըքէ ազատ ըլլար: Ոչ այնքան տեսքն և ցուրտն, որքան անոնց երկարութիւնն և տևականութիւնն, ատէպ ատէպ կրկնուիլ և բարդուիլ տեղատատրախոյն, տառանց Թանձրանալն, ամեն երեւևութի դի դադրիլն, դիւրութեան և առողջութեան կարևորաց պահպանիչն, շատ, և խիստ շատ իմացուց Ոսկիբերանի՝ իր աքսորանաց և աքսորոլաց դառնութիւնը: Ամենայն իմաստք և զգուշութիւն բաւական չեղան զինքը ծանր հիւանդութենէ և նեղութենէ ազատելու. գրեթէ երկու ամիս միօրինակ յանկողնին ընկած մնաց. « Ձմեռն, կ'ըսէ մէկ » Թղթին մէջ, սովորականէն ծանր ծագեցաւ, և » ինծի աւելի ծանրագոյն տատմքացաւի ձմեռ » մը բերաւ. գրեթէ ոչ դիւրագոյն և լաւագոյն » քան զմեռեալս, այլ Թերևս աւելի գէշ անցու » ցի այս երկու ամիսներըս: Լոյն անգամ կարօ » տութեամբ կու գանէի... ցորեկ, արշալոյս, » միջօրէ, ամեն այլ ինծի դիշերուան հաւասար » էր. բոլոր օրն այլ անկողնի մէջ գամուած կու » կենայի: Թէպէտ և շատ տեսակ հնարքը գանէի՝ » բայց այն դժնդակ ցըրտէն եղած գլխասին ձար » չէր ըլլար. Թէպէտ և կրակ կու վառէի և մեծ » ծուխ կ'ըլլար, և խցկանս մէջ փակուած կե » նայի, հարիւր գգեստ այլ հագնէի, և դռնէս » դուրս չելնէի, դարձեալ չարաչար կու տան » ջուէի: Անկէց սրտիս վերատերութենն կ'ըլլար,

» գլխա ցաւ, կերակրոյ անախորժութենէն և քնոյ
» կարուք. բոլոր գիշերուան երկար անդունդը՝
» տքնութեամբ կ'անցընէի ». և այլն:

Այս ձմեռուան փուքն առած՝ իմացաւ Ոսկէբերան որ իր ձանչցածը չէ եղեր, և մէկ խօսքով անոր սատկութենէն իմացընելու համար՝ գրեթէ բառական կու սեպէ Հայկական ՅՌեան ըսելը [1]. այն ձմեռը՝ զոր՝ի Մեծ Հայս՝ Քրիստոսէ 400 տարի առաջ փորձեց Մեղուն առասիկեան, Քրիստոսէ 400 տարի վերջն այլ հոս փորձեց Յօհանան եկեղեցեայ. և Թերևս իր իրճիթին մէջ աւելի գաւն գտաւ Հայրապետեան, քան զօրապետեան իր լեռնային ձամբուն մէջ: Անոր համար կու խոստովանի նա՝ մէկու մը գրելով [2], Թէ « Մարմինս և ոչ մէկ բանէ » այնպէս կու չարչարուի ինչպէս՝ի ցրտոյ. և » չկայ բան մը որ այնպէս օգտակար ըլլայ ինծի՝ » ինչպէս ամառն և տաքութեան զուարճու» Թիւնն »: Ուստի և երբ առաջին անգամ քիչ մը տաք հով փըչեց և գարնան նշան մը տեսաւ՝ ամեն բան փոխուած և նորէն կենդանացեալ կարծեց [3]. Թէ և յայտ մասին՝ մեր հայրենեաց և Տաւրոս-Կիլիկիոյ կլիմային՝ շատ մարդասէր և քաղաքավար չէ, մանաւանդ ամիսրձից, ինչպէս էր և Ոսկիբերան. որ և դարձեալ անուշիկ գանգատի [4], Թէ « Նորէն օդոց փոփոխութենն իսռովեց զմեզ. » և դեռ հոս ձմեռն կու տիրէ. (ըսել է որ ուրիշ » տեղ գարունն բաւական առաջ գացած էր). » սակայն յուսանք Թէ երբ ամառն լաւ մը հաս» տատուի՝ հիւանդութենան ճնապարհն այլ անցնի »: Եւ այս բանիս համար, ինչպէս կ'ըսէ, շատ պզուշութիւն կ'ընէր:

Այսպէս ցրտով ցաւով անցուց երանելի հայ-

1 Թուղթ Ջ:
2 Թուղթ Ջ:
3 Թուղթ ՃԽ:
4 Թուղթ ՃԽ:

բանեան, և Կ.Պօլսոյ պատապարեալ պալատուց մէջ վարժող վարդուկ և ակար անձնն՝ այս առաջին ձմեռը. որուն՝ ժամանակաւ կամ հարկաւ՝ վարժեցաւ. անանկ որ երկրորդ տարին կաւ գրեր [1]. «Գրեթէ տվարտուխեամբ վարժեցայ Հայկական » ձմրան այլ. Թէպէտև ցրտէն շատ կու նեղիմ, » ինչպէս որ բնական է տանկ տկար մարմին ու» նողին. սակայն կրնամ դէմ դնել, տատիկ ցըր» տուխեան տաեն անկէն դուրս չելնելով. և հա» զիւ Թէ դանէս դուրս ոտք կու դնեմ»:

Խեղճ Խօսանակ. այսպէս ինամեցին զքեզ կայսերք և իշխանք, որք երբ գովնալով և բանի բերել էին զքեզ 'ի ջերասուանչ Անտիոքայ՝ բարձրացընելու 'ի բեմ տիեզերական մայրաքաղաքին. և ուր քշեցին ու մոռցան զքեզ: — Բայց արդ ուրախ լեր, հանդարտէ, բայց դուռդ և ել 'ի դուրս. ել յատուածանորոգ զբօսարան բնուխեան. «Զը» մեռն էանց և ծաղիկք երևեցան». եթէ խիստ է ձմեռն Կոկխատնի, և քիչ մ'երկար, բայց մէկ եղանակ մ'է, և յետադայքն աւելի քաղցր կ'ըլլան: — Ինքնին փորձեց և վկայեց զայս [2]. «Մնա» ցեալ տարւոյ մասերն այնպէս զուարճալի և » անոյշ կու գան ինծի, կ'ըսէ, որ դիւրաւ կրնամ » բոլորովին առողջանալ այն ձմեռուան բերած » հիւանդութենէն»: — Ուրեմն ահա քեզի ջերմահոտ և անուշահոտ օրեր. ըղձալիր, ուժովգիր. անբան բնուխիւնն՝ ծլեցաւ ծաղկեցաւ զարդարեցաւ ջրոյ կողմէ: Հապա, ով անխոնջ մշակ Քրիստոսի այգւոյն, զոր հերկէիր և ցանէիր և քրտամաքդ ոտոգէիր, ով աղբիւրդ եկեղեցւոյ, ել, ել, մշակէ, ոտոգէ, ծաղկեցու փայլեցու այս անոյշ անապատ անծանօթ կողմանցս բա» նաւոր բնուխիւնն այլ. որ արդէն աւետարեր

[1] Թուղթ ձխբ:

[2] Թուղթ ձխբ:

ոտք կոխելուդ՝ դրդեցաւ, առաւ չրթանցդ ցօղը և սրտիդ բոցը: Քու և քու նախորդացդ, մեր Սահակայ Պարթևի և իր նախորդացը, երկուքիդ այլ էչխանուԹեանց այս միջատահման կոլմս, այս կորուսեալ Կոկաց գաւառս՝ նորէն կանգնէ՛ի կեանս: Ոչ հեռու յայս կողմերէս՝ անցաւ երբեմն առաջին պերճախօսն հին աշխարհի, Կիկերոն, և հազիւ հպարտուԹեան համբաւն հնչեցաւ. իսկ քու հեզիկ ընչդուդ՝ Քրիստոս պիտի Թագաւորէ հոս: — Խօսէ՛ մնչէ մեզի, ո՛վ Ոսկիբերան, այս լռանիստ հայկական անապատոյս մէջ...: Ահա «Ձայն տատրակի լսեցի եղև յերկրի մերում»:

ԺԴ

Ոսկիբերան երբեք չմոռցաւ իր բարբառը, նաև ինչուան՛ի յետին շունչ կենացն. միշտ և ամեն տեղ անիտիր՝ ամենուն՝ իբրև անլռելի և անդադար պատգամախօս Աստուծոյ՝ քարոզեց սովետցուց զբանն կենաց: ՀիւանդուԹեան և ցրտի աւեններ այլ՝ կամ ուրիշներու մխիԹարական ԹըղԹեր կու գրէր, որով ինքն այլ մխիԹարուէր, կամ ուրիշ հոգևոր խրատական և մեկնողական գրուածներ. ոչ միայն առանձնականաց համար կամ ապագայից յիշատակ, այլ և այն կողմերուն ժողովրդոց և քահանայից համար, և նաև հեռաւորաց, Աստրոց և մանաւանդ փիւնիկեցւոց կողմանց, ուր քիչ աւեներ վէր շատ ծաղկեցընել տուաւ զքրիստոնէուԹիւն, և շատ եկեղեցիներ կանգնել: Իր ցած ու անծանօԹ խրճիԹէն և աԹոռակէն այլ՝ առանց պատրիարքական հեղինակուԹիւն բանեցընելու, աւելի կու գործէր և կու շահէր, քան զայլ եպիսկոպոսս հայրապետս ժամանակին: Արդէն երբ՛ի կեսարիոյ սահմաններէն անցեր մտեր էր այս լեռնային կողմերս,

տեղացի հարք, կրօնաւորք և կուսանք ընդ առաջ ելան խնդութեամբ, միանգամայն և լալով ու տրտմութեամբ՝ իրենցմէ հեռանալուն և յաքսոր դատապարտուելուն համար. և «Աւելի կ'ընէ» ասեմք, կ'ըսէին, արևուն ձառագայթներէն զըրկ» ուիլ՝ քան թէ Յովհաննու բերնէն»: Ինքնին Ոսկիբերան բանագատուած է զայս խոստովանե լու իր մեկ մտերմին[1]: — Արդ այնքան հեռաւորներն անգամ հոգացողն՝ կրնա՞ր իր մօտիկները զանց ընել:

Այս մօտաւորքս անշուշտ նախ կոկք էին և կատարունք. այս եպիսկոպոսներուս համար մեծ աշխարհապիրն Սարաբոն կ'ըսէ թէ Հին կ'անուանէին 'ի մէջ կապադովկացւոց, թէ և լեզուին տարբեր էր. ես այլ չեմ գիտեր թէ արդեօք հին Սարուց՝ թէ Գամերեան Գամրաց սերունդք էին. և ոչ իսկ գիտեմ՝ թէ արդեօք ասո՞նց ազգակից էին՝ թէ մանաւանդ մեր Արամ նահապետին աւեներն այս կողմերուս հայացեալ ցեղերուն: Ըստ ոմանց Հայ էին, ըստ այլոց՝ առանց անուան ազգի՝ կէս բարբարոս և հեթանոս ժողովուրդ մը, բայց 'ի հաւատացեալ Հայոց և Յունաց: Այս եպիսկոպոսներս կերպով մը վարուց ծանօթ պիտի ըլլային Ոսկիբերան. վասն զի գրեթէ իր միաբանութեան տարին էր՝ երբ նահատակեցաւ հոս Ս. Սեբաստոս Ովը նեցի և իր մայրն, կանչի բերդին քով, մօտ 'ի Կուկիան, ուսկից էր հայրենեօք այս վկայուհին՝ Մարիամ Հայկազն: Յայտնաւորք մը Ովընեցւոյն երկու ծնողացն համար այլ կ'ըսէ թէ «էին ազգաւ Հայ»: Արդ տարբ այրն Վազար՝ էր հայրենակից Ոսկիբերանի՝ Անտիոքայ. ուսկից արհանոսաց հալածանաց առեն փախաւ հոս, ուր ապահով էին քրիստոնեայք, և ամուսնացաւ ընդ Մարե-

[1] Թուղթ ՃԽԵ:

մայ: Սոեփանոսի նահատակեալ ընկերքն՝ թէ ոչ ամենն այլ Հայ, գոնէ շատն մերազգի էին, որոց մէջ յիշուի Բագրատունի մ՝այլ, և ուրիշ մը Սմբատ անուամբ: Անկարելի կ՝երևի որ այս իր օրերուն, (40 տարի առաջ) և գրեթէ հայրենակցացը վկայարանաց՝ յայց եւած ջըլլայ Ոսկիբերան: Մեզի հիմայ քիչ զարմանք չէ մնածելն՝ թէ տակէ 1460 տարի առաջ Ոսկիբերան յուխտ գացած ըլլայ՝ի Զէյթուն[1]:

Թողլով այս հաւատացեալները՝ դառնանք առանհաւատան. Ոսկիբերանի վարուց ընդարձակողն գրողն[2] այսպէս կ՝ըսէ. «Քանզի հեթանոսք էին
» բնակիչք աեղւոյն այնորիկ. ուսաի ոմանք պաշտէին զկուռս անմտութեան, և այլք զփայտս վար-
» սաւորս անտառախիտ ծառոցն, և կէսք արեգականն երկիր պագանէին: Իսկ երանելին Յովհաննէս իբրև եհաս անդ՝ առնէր նշանս և սքանչելս շնորհօք Աստուծոյ. և ամենեքեան իբրև լսէին թէ ծառայ Աստուծոյ բարձրելոյ է՝ գային առ նա»: Եւ յետ պատմելոյ զբժշկութիւն մէկ արևապաշտ ուղեւորի անդամալուծի մը, «Ի-
» բրև տեսին զայն զքանկարծահաս եղեալ
» սքանչելիսն՝ հաւատային ամենեքեան միաբան
» յԱստուած յարարիչն երկնի և երկրի. և մկըր-
» տեցան՝ի նմանէ անթիւ բազմութիւնք՝ի Հայր
» և յՈրդի և՝ի Հոգին սուրբ. և ձեռնադրեաց նո-
» ցա եօթն եպիսկոպոս, և բազում երիցսն և
» սարկաւագսն, առ՝ի բաւական լինել հո-
» վուել զանթիւ բազմութիւն ժողովրդեանն, և
» սպասաւորել եկեղեցեացն՝ որ չինեցանն:. Եւ
» ապա մնեալ անդ այր մի՝ի նոցանէ ըստ շնոր-
» հացն Աստուծոյ՝ որ գիտէր զհելլենացի ճարտա-

1 Որ է հինն Ուէնի կամ մօտիկ անոր:
2 Գէորգ Երուսաղէմացի:

10477396

» սանուելին իմաստուելեան գպրուելեան, և
» ապատրաստեաց զնա թարգմանել ՚ի լեզուս նո-
» ցա զինչ կպակասեան, զի ՚ի միա առցեն զպատուե-
» րանս հրամանացն աստուածաշունչ տառիցն.
» և զԱաղմոսարանն ևս ետ թարգմանել, զի առցեն
» ՚ի բերան զհոգելից երգան Դաւթի՝ երգել միշտ
» յեկեղեցիսն. և ապա փոքր ՚ի շատէ և զայլսն
» Հին կպակասեան: Որ և ՚ի սակաւ աւուրս առա-
» ել ևս ծաղկեաց և պայլաբերեցաւ հաւատք
» փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի պատուե-
» րանաց անտի. և միշտ գնային և յառաջադէմք
» լինէին ՚ի բարին. և փառաւորէր Աստուած ՚ի
» բարի գործս նոցա:... Թէպէտ և վճռացաւ Թա-
» գաւորական քաղաքն ընդ արտասահմանութեի
» Ճշմարիտ հովուին իւրեանց, սակայն ոչ պակա-
» ցաւ ծողովուդ ն ՚ի ձեռ ընդ գիւտ Ճշմարիտ լու-
» սոյն »:

ԺԵ

Ահա պատմիչս իսկերէն և Թէոդորեանայ մէկ իսկէն, կու հաւանին և կու հեռացընեն շատ եւ քոպացի Սուրբ գրոց հմուտ քանասէրք ԺԶ և ԺԷ գարուց, որ Յովհաննէս Ոսկիբերան առաջին հե-ղինակ ըլլայ հայերէն թարգմանութեան աստուա-ծաշունչ գրոց, մանաւանդ նոր կտակարանաց և սաղմոսաց. և գրեթէ հատարակաց էր այս կար-ծիքս՝ քանի որ մեր ազգային Ս. Թարգմանչաց պատմութիւնն անծանօթ էր Եւրոպացւոց. ա-նանկ որ ոչ միայն Ս. գրոց թարգմանութեան, այլ և հայերէն լեզուաբանի գոհչ՝ Ոսկիբերան կու սեպուէր յոմանց: Մինչև այսօր այլ Հռովմայ Վատիկանու գերահռչակ գրատան դահլճին մէջ, ուր ամէնայն ազգաց գիր հնարոցաց պատկերքն կան, իբրև հայերէնի գրագիւտ կանգնած է Ոսկի-

10477396

բերան, հայ այբուբենն գոթացի ձևով մը վրան գրած: Ուրիշ կողմանէ մեր պատմչաց մէջ այլ կայ յիշատակ հին Թարգմանութեան մը Սալմոսաց, «զոր հանապազ՝ ի բերան ունին», կ՚ըսէ Թովմա Արծրունի, ուրիշ կոգացի կամ խուեթեցի լեռնաբնակաց համար: — Եթէ կոկացիք Հայք էին՝ ըստ շատ հաւանութեաբ, գրեթէ տարակոյս չէ ունար Ոսկիբերանի ջանքով հայերէն Թարգմանութեան մը Ս. գրոց՝ ըստ մասին. վասն զի և նոյն քրիստոսասէր Սուրբն էր՝ որ Գոթաց և Սկիւթաց մէջ այլ կու ջանար տարածել զաւետարանն, և ինքնին Թարգմանաւ կու քարոզէր անոնց՝ ի Կ. Պոլիս:

Գրասիրաց Թողլով հետաքննել այս բանասիրական խնդիրը, չեմ կրնար հոս չյիշեցընել քեզի, Հայկակ, այս Ս. Ոսկիբերանի և մեր Ս. Մեսրոպայ ըրած կամ ընծայուած գործոց զարմանալի կամ նախանձաւոր զուգակցութիւնը: Ծանօթ է քեզի թէ ինչ ջանք ըրած է մեր դպրութեանց վարդապետան՝ հայերէն գիր հնարելու և սուրբ գրքերը Թարգմանելու. գիտես այլ որ այդ հայերէն գրերը՝ առաուածային իմն շնորհօք գտաւ կամ հնարեց յամին 406, մինչ նոյն և նախընթաց տարին՝ Ոսկիբերան զկոկիւսան լուսաւորէր: Երկու մեծաքոյ լուսաւորք, Թերևս անծանօթք ի բարու, որոց մէկն Հայաստանեայց աշխարհին ամենէն արևմտեան հարաւային ծայրերը (Տաւրոկիւլիկիա) լուսաւորէր, միւսդեալ հեթանոսութեան հեաքը ընկելով. միւսն (Մեսրովպ) այն աշխարհին ամենէն արևելեան հիւսիսային ծայրերը՝ նոյն քանը կ՚ընէր (՝ի Սիւնիս, յԱղուանս և՝ ի կովկասեան Մազքութս). և երկուքն այլ գրեթէ մէկ ժամանակի մէջ, մինչդեռ սուրբն Սահակ կայր և ծագէր՝ ի միջնաշխարհին: — Այն ինչ զարմանալի գերբնական լուսատոյրք էին երկու քաղ-

10477396

արձակ սահմանաց Հայոց, ի գրանց կիւլիկիոյ մինչև ի գուռն Հռնաց, (իբր 600 մղոն երկարմէ հեռու) որ մեր Տայրենեաց վրայ ցոլացընէին երկնից մեծապոյն շնորհքը: Ո՛րքան առատաձեռն և մեծապարծ եղած է Նախախնամութիւնն ի վերայ մեր Հայ ազգիս և աշխարհիս: Ո՛րքան օգտակար եղած է ընդհանուր Եկեղեցւոյ՝ իր քաջաձայն Խօսնակն՝ իր արուեստահմանութեան առեն այլ, քան մանաւոր յունական եկեղեցւոյ մեծ վիճակի մը: Եւ ո՛րքան երախտապարտք ենք մեք Հայք՝ Աստուծոյ և իր հռչակաւոր քարոզին՝ այս այցելութեա համար: Ո՛րքան այլ երախտապէտ պէտք է ըլլան Յոյնք և համօրէն հաւատացեալք՝ մեզի, և մեր հարց հիւրընկալութեանն, սիրոյն, պատուոյ և մեծարանաց առ Ոսկիբերանն:

Եւ նոյն ինքն մեծահոգին այն՝ արդեօք չէր և չէ իսկ ճանաչուլ և յարգուլ այսպիսի ազնիւ զգացմանց՝ զոր գտաւ ի Հայս: Վկայեն իր ժամանակակից պատմիչքն (Պալլատիոս և Սոզոմեն)[1], հապա այլ զմերայինս միայն յանուանէ յիշելով, թէ «Յոյժ սիրելի էր Նա Հայոց՝ յորոց միչչ քնաւ » կէրն, և այլոց ևս մերձաւորաց »: Այլ արդեօք սիրուէր առաւել թէ սիրէր:... Իր նամակաց մէջ շատ հեղ գովութեամբ և գորովանօք կու յիշէ ի տեղացեաց գտած մարդասիրութիւնը. որոց ինքն այլ փոխարինեց հոգւով և սրտով և ոսկի բերնովն. այլ և մարմնաւոր հօր պէս պաշտպանելով. – գերեզմակ ընելով ի գերջոց. առատ ողորմութեամբ առ տնանկս, և տուեալ աւետեն (որ նոյն տարիները պատահեցաւ այն կողմերը) շատերը կերակրելով իր ընդունած պարգևներով և տահկներովը: Ճշմարիտ հայր և լուսատու եղաւ այս տեղացի մերազգեաց, որպէս և

1 Գիրք Ը. Ի.

օտարաց, լրացուցանելով զարդիւնս և զփառս իւրմէ դար մ'առաջ մեր Հայոց Մեծաց անմահ Կուսաւորչին Գրիգորի:

Գիտէր Ոսկիբերան որ Հայոց ազգն արևելքի մէջ առանձին եկեղեցի և գըլուխ մ'ունէր, առանձին լեզուաւ և սովորութեամբ և քաղաքական վարչութեամբ. այլ մերձաւոր և յարակից Յունաց՝ դրակցութեամբն ու դաշնակցութեամբք, անոնց նախապահական աթոռին ելբեւին հպատակութեամբ՝ ձեռնադրութեանն, և նոյն իսկ դեռ անոնց (յոյն) լեզուով եկեղեցական սուրբ պաշտամունքը կատարելով.—գիտէր որ այն աւեն արևելեան ազգաց ամենէն մեծ և կարգաւորեալ եկեղեցեաց մէկն էր Հայոցն. գիտէր որ հարիւրաւոր եպիսկոպոսներ ունէին, և եպիսկոպոսապետ՝ զմեծն Սահակ Պարթև՝ զԹոռնորդի Թուան Ս. Կուսաւորչին, զոր Թերևս անձամբ այլ ձանչցեր էր.—գիտէր որ լեզուի և ծիսի իրաւամբք՝ ամենայն Հայք անոր վիճակ և հօտ էին. բայց այն աւեն քաղաքական օրէնք զՓոքր Հայաստան և Կ.Պօլսի կայսերաց իշխանութեան տակ ձգեր էին, Թողլով զՄեծ Հայս իրենց բնիկ Թագաւորին, որ էր բարեպատարան Վռամշապուհ:— Գիտէր որ Պարսից արքայից արքային նախանձու և վախին համար՝ մեծ զգուշութիւն պէտք էր Հայոց, (նաև Թագաւորին և հայրապետին) ի հալորդելոյ կամ մտերմութիւն ցուցընելու Յունաց հետ. անով առ ժամանակ մը Փոքր Հայք՝ նաև ըստ եկեղեցական վարչութեան (յիրաւի կամ յանիրաւի) Յունաց պատրիարքութեան տակ ընկած էին, (կեսարիոյ նախապահին վճակեալ.)—գիտէր և Ս. Սահակ քալ քաղաքավարութեան, միանգամայն և ձանաչէր զանձինս և զժամանակն. և իրեն մեծ ուրախութեան և պատիւ սեպէր Ոսկիբերանի պէս հովուապետի

մը հեռաւոր կամ մերձաւոր ինամոց տակ մնալն իր սեպհական հօտին մէկ մասին. զոր յետ մահուան նորա՝ (անոր յաջորդաց ոգին ձանձնալով) պահանջեց ՚ի Թէոդոս կայսերէ՝ և յԱտտիկոս պատրիարքէ, և ստացաւ. սկսաւ հովուել անձամբ այցելութեամբ և քարոզութեամբ իր հոգեկիր աչակցին՝ Ս. Մեսրովպայ: Իսկ այս առեն վանն վերոյիշեալ քաղաքական զգուշութեանց, և կամ իրարու վրայ ունեցած վստահութեան, Ոսկիբերանի և Սահակայ մէջ մանաւոր թղթակցութենն մը չիպտուէր, և ոչ այլ ուրիշ Հայ եպիսկոպոսաց՝ յայտնապէս. թէ և շատ հանական է որ Ոսկիբերանի քանի մը թղթերն գրուած ըլլան առ մերազգի եպիսկոպոսունս և երիցունս Փոքր Հայոց, որոց անուանքն կամ յունական են, կամ յունարէն թարգմանեալ. (ինչպէս Ելպիդիոս՝ Յուսիկ, Ադելփոս՝ Եղբայր, Իրդիոս՝ Տօնիկ, և այլն), և կամ աւելի Հայոց քան Յունաց մէջ գործածականք են, ինչպէս Մալքոս, Մովսէս, և այլն. յորոց ոմանք այլ անշուշտ Ասորիք են: Ապա թէ ոչ՝ անհաւատալի կ՚ըլլայ թէ աքսորանաց տեղէն ինչուան Փիւնիկիոյ և Արաբիոյ, Պարսից և Թիաց եկեղեցեաց համար հոգացողն՝ իր ամենէն մերձաւոր և ընդարձակ եկեղեցւոյն տեսչաց հետ վերաբերութենէ չունենայ. մինչդեռ անոնց բնական վիճակին մէկ մասին մէջ՝ գրեթէ անձամբ հովուութենէն, հայրութենէն և վարդապետութենէն ընելով, կու բովանդակէր Կուսաւորչի գաւազանին ջրչաբոլորը:

ԺԶ

Աւելի անակնկալ կերպով մ՚այլ մեծարեց և հռչակեց Ոսկիբերան զԿուսաւորչէն Հայոց, այն լեզուով որով երբեմն իր առաջին եկեղեցւոյն

10477396

Ս. հովհաննեսը նեղբօղէը էր, զԻգնատիոս, զԲաբելաս և զՄեղիտոս. միանգամայն մեծարու և ետ բախատագէտ ըլլալով թէ մեծին Գրիգորի և թէ անոր պայազատ և իր ասպնջական Դէոսկորին. վասն զի ասոր ինդրանօք գրեց և խօսեցաւ « Ներ- » քոլեան, աստցեաւ յալագս վարուց և նահա- » տակութեան Գրիգորի՝ Հայոց Մեծաց Հայրա- » պետի՝ Կոկիսան Հայոց, մինչ յաքսորանս էր » (Ոակիբեեան), ի ինդրոյ Հայազին որուն և- » պիսկոպոսի և վարդապետի համազգեաց նորին՝ » Դիոսկորոս անուն կոչեցեալոյ, և այլ ևս յոգնա- » խուռմբ բազմութեան, որք ժողովեալ էին յա- » ւուր յիշատակի մեծահռչակ ոսկի նորին տուրբ » Լուսաւորչին արևելեան աշխարհին »: Ասյսպի- սի է վերնագիր Ճառին, որոյ յիշատակարանն այլ արժան է գիտանալ. « Ի Թուականիս ՇՂ (1141) » Թարգմանեցաւ Ճառս ի յունականէն ի մեր, » ի ձեռն Աբրահամու Ղրամատիկոսի, ի հին և » յեղծ օրինակաց. իսկ յարմարեցաւ ըստ քա- » նից դպրութեան և բառից՝ յիմոյ նուաստու- » թենէ Ներսիսի (Կլայեցւոյ), հրամանաւ տեա- » ռըն իմոյ և հարազատի՝ Գրիգորիսի Հայոց կա- » թուղիկոսի »: Արդ այս Ճառս որոյ սկիզբն է, « Հրաշալի է մեզ ծնունդս այսօր, և պայծառապէն » քան զսովորականն՝ շարադրութիւնս » , զոր Շնորհալին և այն յոյն վարպետ գրագէտն գտան Ոակիբեերանէն 740 տարի ետև՝ հին և էղծ օրինա- կաց մէջ, և անտարակոյս Ճանչցան, հիմայ չի- գտուիր հեղինակին ինքզեաւ յունարէն գործոց մէջ: Ասոնց հրատարակող մեծարդիւն և քննա- դատ աբբայն Մոնֆոքոն՝ անցեալ դարու մէջ՝ տարակուսած կարծուի ատոր վաւերականութիւնը վրայ, թերևս և այլք անոր պէս: Բայց անշուշտ այնպէս չէին ըներ՝ եթէ նախ Ճառին վերնագիրն և յիշատակագիրը քննէին, և յիշէին Ոակիբեերա-

նի ըրածննելը ՚ի Կոկիւսան, և իր հոն հիւրընկալուն՝ Դիոսկորոսը. որոց համար Մոնֆոքոն այլ անհաւան չիսեպեր Ոսկիբեերանին Հատաքոսնը, այլ զՀառը՝ երկբայելի և անարժան անորգրչին. և իրաւունք ունի: Վասն զի իր կարդացած և հրատարակած Հառը (զոր ՚ի լատին Թարգմաներ է հայագէտ երէցն Վիլըֆռուա), ոչ է այս մեր ըսած Հրաշալի Հառս, այլ ուրիշ մը՝ Սոփոծպոլոէն արանց սկզբնաւորութեամբ, որ թէ և Հեռագրաց ոմանց մէջ Նուրին Յովհաննու Ոսկեբերան անուամբ գրուած է, բայց ոչ ոճն և ոչ ուրիշ վկայութիւն մը կու Հչմարտէ զայն: Ըստ դիպաց՝ գալլիացի քանասէր աբբայք անհարազատ Հառին գլուխը դրած գտեր են Հարազատին վերնագիրը, և չփոթեր են. որոյ տեղ եթէ այս Հառս գրուած ըլլային՝ անշուշտ բնաւ չէին տարակուսիր Ոսկիբեերանի ըլլալուն. որոյ լեզուին և արտին և դիպուածոց յարմար՝ շատ խօսք կան մէջը: Յառաջաբանութեանը մէջ կու յուսայ Հուսաւորչին մեծախոհութենէն՝ որ ընդունի «զըզ» դուզնաքեայ ընծայաբերութիւնս ՚ի փոխ մարմ» նոյ և բովմատին վզոփ պալարեալ անգնէ». յետոյ թուելով անոր անթիւ արդիւնքն և արժանաւորութիւնը՝ կերպ կերպ գովէ. Աբրահամ նահապետին և նոր օրինաց արբոց հետ համեմատելով, կ՚անցնի ՚ի վերապին համբերութիւնը. և անկից կու սկսի պատմել Հռիփսիմեանց և Տրդատայ դէպքը, Գրիգորի հանուիլն ՚ի վերապէն և բժըշկելն զպատուհասեալն Տրդատոյ, և քարոզել զՀչմարտութիւն Քրիստոսի. ըստ սխորժելոյ հայկական լսելեաց յերկարելով այս բաներս:

Բայց երբ կու հանի Հայոց խնդիրքին առ Գրիգոր՝ իրենց քահանայապետ ըլլալու համար, և ասոր նախ խոնարհութեամբ հրաժարելուն, ապա հարկաւ յանձնառութեանը, Ոսկիբեերան

իր անձին և ժամանակին դէպքերէն դրդած չի-
կրնար չկանչել. « Զայնպիսին գովեմ ես հո-
» վիւ, զայնպիսին վերակացու, զնորայն ուղղու-
» նեմ զակարուձիւն, զնորայն ընդունիմ զնե-
» գուձիւն. զի ոչ նա զհետ պատուոյն, այլ զհետ
» նորա պատիւն ընթանայր. ոչ խնդրէր զփառ-
» սըն, այլ խնդրեալլինէր 'ի փառացն. այնպիսին
» վայելէ քահանայապետ՝ ըստ Պօղոսի, սուրբ,
» անմեղ, անարատ, զատեալ 'ի մեղաւորաց և
» բարձրացեալ քան զերկինս: Զի որ այնպիսի ոչ
» լինիցի՝ ոչ հովիւ ուրեմն կոչի, այլ գող և աւա-
» զակ և գայլ ապականիչ օձառելով զհօտն Քրիս-
» տոսի. ըստ որում և աստ ՚ի կէս ինչ էրևեցան հակառա-
» կողք ճշմարտութեանն... Վասն որոյ՝ եթէ հա-
» ճոյ Թուեցի, պարտ և արժան է նախ և ա-
» ռաջին անցանել առ այնպիսիսն բանիւ, և ապա
» զերանելի հօրս մերոյ աւարտել զներբողական
» ճառս: Հովուապետի է առեանս, քահանայա-
» պետի՝ ոսնախմբութիւնս. պարտ է զատանել
» զգայլսն 'ի հովուաց. և առնորա փառացն պա-
» տիւ՝ սակաւ ինչ և զնոցս չերեսփոխել զվնաս...
» Ջանզի տեղւոյն տաճն երանելի հօրս մերոյ՝ 'ի նորա
» բանից արկանէ զմեզ». և այլն: Ահա ըսելով
կու սկսի 'ի բանից Քրիսաոսի, և առաքելոցն Պօ-
ղոսի, Պետրոսի և Յովհաննու՝ ցուցընել, թէ ինչ-
պէս պէտք է ըլլալ ճշմարիտ հովիւ, եպիսկոպոս.
և ինչ կ'ընեն անարժան հովիւք, աշխարհասէրք
և արծաթասէրք. և դարձեալ թէ ինչպէս պէտք
է որ առաքինիք համբերեն նրեանց դէմ հալածանաց
և վշտաց, օրինակաւ նրեանցմէ առաջ հալածելոց,
և այլն: Ահա պիտի սրտառուչ և խրատական իսօս-
քեր պրեթէ ճառին քառորդէն աւելին կու բըռ-
նեն. և աւելի հովուաց քան հօտին վերաբերելով՝
կրնանք կարծել՝ թէ այս մասս իսօսած չէ հանդի-
սին մէջ, այլ գրած համ յետոյ յաւելած: Անկէ

և առ գարձեալ կու յիշէ Լուսաւորչին աշխատան-
քը և 'ի լերինս առանձնանալը. « Թագուցանել
» զանձն 'ի մարդկայինս տեսութենէ. զի մաքրա-
» պէս անդանօր և աննիւթաբար՝ աննիւթակա-
» նին հանդիպեսցի տեսութեան Աստուծոյ ».
Եւ հոս կ'աւարտէ Լուսաւորչի պատմութիւնը,
ամենևին չյիշելով անոր երջանիկ փոխման աւան-
դութիւնը և մարմնոյն գիւտը. — վասն զի դեռ եր-
կուքն այլ չէին յայտնուած, որպէս յետոյ. և
այս այլ կրնայ վկայ ըլլալ ճառիս հնութեանը:
Յետոյ գարձեալ ներբողելով զՍուրբն, չիմանալը
անոր քնիկ հօտն այլ գովելու. « Մինչև ցայժմ
» իսկ՝ օր ըստ օրէ 'ի լաւագոյնն յառաջանան
» ընտրեալ նորայն ժողովուրդ և վիճակ »: Պան-
» ծալի գովութիւն. արդիւնք գործակցութեան
ջանից որդւոց Ս. Լուսաւորչի, և դեռ գործող
Ս. Սահակայ:

Յետ ամենայնի Ոսկեբերան իր վիճակին յար-
մար և արտառուչ կերպով կինքէ իօսքը, գարձը-
նելով առ Ս. Լուսաւորիչն մեր. « Աղաչեմ, կ'ը-
» սէ, ուչ և ես մեկուսանալ հոգևորական այցելու-
» թեամբ առ 'ի մէնջ, այլ յիշել զմեզ անմո-
» ռաց... զի և մեք զպատահումն սակաւագոյն
» վշտացս՝ համբերութեամբ կատարեցուք...
» և քոյին վշտամբեր նեղութեանցս յիշատակաւ՝
» 'ի մերում մըխիթարել սիրտս:... Զի
» և ես նուաղեալ 'ի զօրութենէ անդամոց, փայր
» գոլով ծերիով և վշտագին անձկութեամբ, մա-
» նաւանդ բռնադատեալ սիրով 'ի ձո հայոցդ, 'ի
» ձո՞ վիճակիս, նշանակ սիրոյ հաստուցի քեզ ըն-
» ծայ ջերմագոյն սրտիւ: Զի ահաւադիկ նուի-
» րեալ եմ և ես յայտմհետէ լքանել զկեանս
» զայս տատկական, և լինել ընդ Քրիստոսի. թե-
» բև անդանօր հանդիպեսցուք միմեանց զուար-
» ճալի և դեղեցկագոյն հանդիպմամբ, բնակեց-



ԴԱՓՆԻՆ ՅԱՆՑԻՈՒՔ, ՀԱՅՐԵՆԻՔ ՅՈՎՀ. ՈՍԿԻՐԵՐԱՆԻ.

10477396



» լավ 'ի միտին մշանջենաւորապէս. և արժանա-
» ւոր լինել երանաւէտ խոստմանցն. որոց լիցի
» ամենեցուն մեզ հասանել 'ի Քրիստոս Յիսուս
» 'ի տէր մեր », և այլն: — Ոսկիբերանի ամենէն
արտաչարժ խօսքերէն մէկն է այս վերջաբանս, և
Թեոդա ամենէն աւելին. խոստովանութիւն մը՝
զոր կու ջանար լսելու իր Թղթոց մէջ, և զոր հոս
համարձակի՝ առաջի Աստուծոյ և իր բազմաչար-
չար նահատակին, ու անոր արեան քրտանց գին
աննախանձ և անկասկած ժողովրդեան մը: Կ'երևի
այլ որ իր կէս հնւանդութեան առեն խօսած է,
և Թեոդա վերջին տարին: Անշուշտ իր յեսին ա-
կելինիկ և զգայուն գրուածոց մէկն է սա. մի 'ի
վերջին ձայնից կամ երգոց Խօսնակին եկեղեցւոյ՝
հնչեցեալ յանապատս Հայոց, 'ի սէր նոցին եւս
Հայոց և 'ի պատիւ Լուսաւորչին նոցին:.. Քարան-
ձաւք Կոկաց, արդեօք կու կրկնէք դեռ այդ հրա-
շալի ձայնը, որ զերկուքն այլ յանմահութիւն
կու խառնէ, զձայնեաւն՝ Գրիգոր, և զձայնողն՝
Յովհաննէս, զԼուսաւորիչ և զՈսկիբերան:...

ԺԷ

Եթէ աւելորդ պարծանք չէ, կու համարձա-
կիմ ըսել, թէ Ոսկիբերան կանուխ և շատ հին
պարտք մ'ունէր Լուսաւորչայ ժողովրդեան և
վիճակին. իր բնատուր հանճարով և Անտրակաթ
ու Լիբանիոս սոփեստներէն ջանքով ոսկեզօծեալ
շնորհունքը՝ եկեղեցւոյ Խօսնակ ըլլալու վարժեցը-
նոյն՝ Պօլնքատոսի հայրենակից և բնիկ ազգաւ Հայ
մ'էր, նուիրեալ և մեծահաւատ անձ մը, — Ա.
Մելիքսէթ հայրապետեան. որ ունենալով զՅովհաննէս
(18 ամեայ պատանի) լսեալ հնւտորական շնոր-
հօք և փիլոսոփութեամբք զարդարեալ, բայց տարա-
կուսեալ երկնից և երկրի որուչէ ձամբուն վրայ,

10477396

Ձարտար սիրով իրեն քաշէց. երեք տարի քո-
վը պահելով բացաւ, ցըցուց, տվեցուց իրեն
Քրիստոսի բարձր և վեմ իմաստասիրութիւնը,
անոր Հօր յաւիտենական գաղտնիքը, և Հոգւոյն՝
հրեղէն լեզուն. և երբ անոնց լիուլի ընդունակ
տեսաւ՝ մկրտեց զՅովհաննէս (21 տարուան), և
իր Անտիոքայ մեծ և նախաքրիստոնեայ եկեղե-
ցւոյն՝ Գրաւարդաց ձեռնադրեց: Այսպէս, մինչ
Աստրին հայր՝ Յոյն մայր՝ և արտաքին դաստիա-
րակ եղան, Հայ մը եւս վերածնող և դայ-
եակ հոգւոյն և սրտին Ոսկիբերանի, զորս ինք-
նին յետոյ կրթեց և զարդարեց աստուածային
շնորհօք, Անտիոքայ լերանց ձգնաւորաց խորճե-
րուն և իր քարայրին առանձնութեանը մէջ:

Հոս անցողաբար յիշենք, որ այն առեն երբ յետ
վեց կամ եօթն ամաց դարձաւ Յովհաննէս 'ի լե-
րանց՝ այլափոխեալ կերպով մը, մարմնոյն՝ նուա-
ղեալ, ցամաքեալ, ձգնեալ և ճնշեալ, իսկ հոգւո-
վըն և մտօք լուսափայլեալ և հմտացեալ գիտու-
թեամբ աստուածայնոց, զորս և արդէն գրուա-
ծովք այլ յայտնել սկսեր էր, Ս. Մելիտոս գըր-
կաբաց ընդունեցաւ իր հոգեստուն սանը, և նորէն
եկեղեցւոյն պաշտօնեայ ընելով լսեցուց անոր ըն-
թերցուածները. իսկ երբ ինքն հանգեաւ 'ի տէր
յամի 381, իր յաջորդն Փլաբիանոս՝ սարկաւագ
և քահանայ ձեռնադրեց[1], և իրեն օգնական ը-
րաւ, նաև տեղակալ և քարոզիչ, թէ իր բացա-
կայութեան առեն և թէ մօտ ըլլալուն. ինչուան

1 Ըստ ոմանց Ս. Մելիտոս ձեռնադրած է զՅովհան-
նէս՝ սարկաւագ. իսկ քահանայութիւնն եղած է ըստ ո-
մանց յամի 383, ըստ այլոց 386 կամ 387, և ըստ ոմանց ա-
ւելի այլ առաջ: Եւ ըստ այսմ սովորաբար 63 տարի ապ-
րած կը հաշուեն զՍուրբն. իսկ այլք 50 տարի, կամ 52
տարի և 8 ամիս. և այս այլ հաւանական է:

10477396

որ յետ 12 (կամ աւելի տարւոյ) տրտմութեամբ և ինդութեամբ ստիպուեցաւ բաժնուելոյ անկէ, Թողլով որ երթայ իրեն պատուակից և աթոռակից և աւելի այլ բարձրագահ ըլլայ('ի Կ.Պօլիս): Եւ երբ անկից քշեցին զՕուրբն՝ դէտ ոչչէր Փլաբիանոս և ցաւօք լսեց զայն. և ինչպէս կու վայլէր իր առաքինութեանն և մեծութեն՝ մերժեց Թէոփիլեանց հրապոյրքը, և գրեց այլ Կ.Պօլսի Ժոլովրդեան՝ որ հաւատարիմ մնան իրենց արժանաւոր հովուին. անոր համար Ոսկիբերան այլ կ'ազաչէր և կու պնդէր՝ որ առանց Հռովմայ քահանայապետին և Անտիոքայ ու Երուսաղէմի պատրիարքաց՝ իրեն վրայ դատաստան չընեն: Զայնը լսեցին, կամ չանային լսել. աքսորեալ հայրապետն մօտեցաւ տեղեաւ իր հայրենեաց և զինքը քահանայ ձեռնադրող ծերունի հօրը աԹոռն. ի՛նչ ցաւ և ի՛նչ մխիթարութիւն երկուքին այլ: Բայց աւելի եղաւ ցաւն Յովհաննու. վան զի հազիւ տեղաւորուած իր պանդխտութեան մէջ, և դեռ չսկսած ԹղԹակցիլ իր նախապետականման հօրը հետ, լսեց անոր վախճանը: Ա՛յլ աւելի դառնակսկիծ եղաւ ցաւն՝ երբ այն առԹիւ Անտիոքայ եկեղեցւոյն մէջ այլ շփոԹ ընկաւ. և անարժան քահանայ մը (Պորփիւր) հայրապետական աԹոռը գրաւեց. ոչ միայն տխրած՝ յետ քաշուեցան. շատերն բոլորովին հեռացան յԱնտիոքայ. շատեր՝ քահանայք և ժոլովուրդք՝ իբրև ոչխարի և մխիթարութեան՝ սկսան դիմել առ Յովհաննէս 'ի Կոկիւսոն, ցանկալով անոր քարոզութեան հին օրերը յետ դարձընելու. և եԹէ կարելի եղաւ՝ նորէն զինքն իր հայրենիքը բերելու՝ իրենք զիրենք նոր յաշխարհ եկած պիտի սեպէին: Զարհուրեցան Թշնամիքն, կ'ըսէ Ոսկիբերանի հաւատարիմ և կենակից կենսագիրն,[1] «Տեսանելով

1 Պալլադիոս:

» զի Անտիոքայ եկեղեցին ՚ի Հայս փոխաբերեալ
» լինի. և անտուատ գարձեալ որպէս թէ յԱն-
» տիոք ընթանայ՝ հուշակ զուարթարար իմասցաս-
» սիրուեթեանն Յովհաննու » : Կամ ինչպէս ուրիշ
մը կ՚ըսէ[1]. « Գրեթէ ամենայն կողմանքն այնո-
» քիկ Հայաստանեայց, և անտի մինչև ցԱնտիոք
» և ՚ի Կ.Պօլիս հուշակ հարկանէին զնմաստու-
» թիւն նորա. և ՚ի բերան առեալ զնորա վար-
» դապետութիւնն՝ գովելի և փառաւոր յամե-
» նեցունց բերանոյ լինէր նա » : Շատ թղթեր ու-
նի գրած յաքսորէն առ Անտիոքացիս, մանա-
ւանդ առ քահանայս, յորդորելով միշտ ՚ի հաս-
բերութիւն և ՚ի խաղաղութիւն, զգուշաւոր խը-
րատներով. զնոյն կ՚ընէ և ուրիշ թղթոց մէջ առ
զանազանս. միշտ ջանալով հակառակողաց առիթ
չտալ, նախանձնին չգրգռել. ատեպ այլ կու պա-
տուիրէ մտերմացն՝ որ չհուշակեն իր քաշած նե-
ղութիւնները, թէ և օտարք խօսելու այլ ըլլան:

Սակայն այս բանս անկարելի եղաւ, և եր. ոչ
իր վիշտերն և փառքն պակսեցան և ոչ այլ թշնա-
մեաց նախանձն, իր եռամեայ պանդխտութեան
մէջ. զոր մեծաւ մասամբ անցուց հեռաւոր աշ-
խարհաց մէջ այլ քրիստոնէութեան ծաւալմուն-
քը հնարելով, թղթեր գրելով, ինչպէս շատ հեղ
ըսի, և առանձին հոգևոր և իրատական գլուխք և
ձառեր, որոց համար բաւական թուղթ կամ տախ-
տակ չէր գտներ. և այս էր իրեն ամենէն մեծ
կարօտութիւնը: Սրտին և բերնին համեմատ ձեռքն
այլ ժիր և անխոնջ էր, և չէր կրնար անոնց բա-
ւական չարտակ և գաշտ գտնել:

1 Գէորգ Երուսաղեմացի:

10477396

ԺԸ

Իր հոն և վերջի գրուածոց մէջ՝ յայտնի և նշանաւորներէն, իր աննման ձայնին և գրչին վերջին ճոխինչներէն, ու քրիստոնէական իմաստասիրութեան գերագոյն արտադրութիւններէն մէկն է ձառ մը, թէ Ով ոք ընտի՝ էրէք ոչ յանչնէն. այսինքն թէ ոչ ոք կրնայ ուրիշի սոյգ ընաւ մը հասկընել, թէ որ անիկայ առաքինութիւնէն համբերէ. սոյգ ընան՝ միայն մեղք և անհամբերութիւն է: Երկրորդ մ՝այլ է գիրք մը առ Ժողովուրդն Կ.Պոլսի, անոնց՝ որ գայթակղիչ էին արդարոց հալածանաց և անիրաւաց յաջողութեան վրայ.—երկայն և ընդարձակ խօսքերով և օրինակներով կու բացատրէ առջի ճառին մէջ ըսածներէն զատ՝ Աստուծոյ նախախնամութեան զարմանալի և անքննելի ճամբաները, վերաց և հալածանաց օգուտներըը, և նոյն իսկ գայթակղութեանց՝ որոց թոյլ տայ Աստուած. և թէ ոչիչ մեծ պիտի ըլլան վարձք հալածելոց և վերացելոց, և ինչ վերջ կ՝ունենան հալածիչք և անիրաւք: Այս երկու, ինչպէս ուրիշ գրուածոց մէջ այլ, կու փայլէ հասար ճարտարութիւն խօսից և մեծութիւն հոգւոյ Ոսկիբերանի, և իր անհամեմատ արուեստին վրայ:

Գրեթէ կէսաց յետին տարին, լի տառապանօք և զրկմամբք, տեսնելով իր աթոռը ապօրէն բռնաբարողաց ոտս եղած, գրեթէ իր վախճանը քիչ հեռի տեսնելով, և դեռ անխռով կու գրէ, կու ջանայ ուրիշներուն սիրտը հանդարտեցնել, սիրելի ընել, շինել, առանց ամենևին իր քաշածներըը յիշելու տրամութեամբ կամ դառնութեամբ. այլ անդ վերաժխնդրութեան, առանց գանգատի և անհամբերութեան կամ շփոթութեան մը. վասն

10477396

զի յամենայնի կու ձանչնայ զկամս Աստուծոյ և կ'ըսէ «Փառք քեզ Աստուած, յաղագս ամենայն» նի»: Թէրևս այս կոկաց անապատաց մէջ բուսած Ոսկիբերանեան ծաղկունքն՝ իր հոգևոր և բանաւոր երկանց և կենաց գերագոյն պատկերն են. և իր անժանգ ոսկւոյն մէջ՝ ամենափայլ պատմանդներն:

Ախտիկի գրուածք՝ մխիթարականք թէ գրողին, թէ առ որս գրէր, թէ մեզի նակ, անշուշտ աւելի շատ այլ կ'ըլլային, եթէ Ոսկիբերանի երկու արտաքին սպառնացող վտանգքն քիչ մը պակաս ըլլային.—ձմեռնն և Խաւարացիք: Առջի տարին մեկն միայն կար, նակ երկրորդ տարին ձմրան հետ հասան իրենց լեռներէն մեկնակազէն աւազակք այլ. որոց բնիկ տեղն էր Կիւլիկիոյ և Լիկայոնիոյ (Ղոնիոյ կամ Գարամանի) միջոց լեռնոտ երկիրն, ուր կովկասեան Էկզեաց (կամ Զէյթէզացց) պէս ամրացած Խաւարացիք՝ իրենց երկրին եզերքը եղած դաշտագաւառներուն վրայ կու վազէին և կ'աւարէին: Հնուց 'ի վեր անուանի ըլլալով այս գործով Հռովմայեցւոց անգամ ահարկու և զգուշալի եղան. և Թէպէտ տասնք անգամ մը (Քրիստոսէ 78 տարի առաջ) նուաճեցին զանոնք ('ի ձեռն Սերվիլիոսի), բայց նոքրէն սկսան տապատակել՝ Հռովմայ և Կ.Պօլսի կայսերաց առեն, մինչև գրեթէ ցկէս ջ դարու. նակ գ և դ դարուց և այս նիս սկիզբը՝ շատ աւելի զօրացեր կամ կատղեր էին, լեռնային կիւլիկեցւոց հետ այլ միաբանած և իբր մէկ ժողովուրդ ըլլալով: Այս լեռնոտ և վայրենի երկիրներն էր որ ձի դարուն մէջ նուաճեցին Թորոսք և Լևոնք մեր Ռուբինեանք, և քրիստոնեայ Թագաւորութեան մը կազմած ըլլին. նակ իրենցմէ 800 տարի առաջ՝ մեր պատմութեան առեններըլ՝ կայսերք անգամ գոպային Խաւարացւոց անու-

նէին, և շատ ջրաց բանակները կորուսին անոնց դէմ։

Մեր սքսորելոյն պանդխտութեան առեն՝ յետ արշաւանացն 'ի սահմանս Կեսարիոյ, տարիէն ա֊ւելի հանդարտած կ'երևին, երբ յանկարծ 'ի սկիզբն 406 տարւոյ՝ Ձմեռուան ցրտէն զրգռած գայլերու պէս յարձակեցան նաև Կոկիսոնի սահ֊մաններն այլ։ Այս տեղս այն բերդաշէններէն մէկն էր՝ զոր Հռովմայեցիք կանգնած էին 'ի պաշտպանութիւն, բայց շատ ամուրներէն մէկն չէր։ անոր համար պէտք եղաւ որ մեր հայրապետն այլ Թոլոս իր տաքուկ սենեակը, Թափառական պարտի սառամանեաց առեն, երբեմն չէնքերու և երբեմն անշէն տեղեաց, անտառաց և քարայ֊րից մէջ, Թէ բնութեան դժուարութեամբք և Թէ հիւանդութեամբ այլ նեղուելով։ ինչուան որ կրցաւ իր ընկերաց և պահապանաց հետ գինքը ձգել յԱրաբիսոն կամ Արափսոս։ Անկայ Կո֊կիսոնէն 40 մղոնի չափ դէպ յարևելք՝ հիմա֊կուան Եարփուզ քաղաքին մօտ՝ ուրեք ամուր բերդաւան մ'էր։ որուն դրսի չէնքն այլ բաւա֊կան ապահով չտեսնելով՝ բուն միջնաբերդին մէջ քաշուելոյն փախատականք, խառն 'ի խուռն բազ֊մութեամբ, որ շատ անտանելի ըրաւ բնակու֊թիւնը, և բանտէն այլ դէշ, կ'ըսէ մեր տառապեալ Յօանակն։ մէկ կողմէն Իսաւրացւոց վախն, որ կրակով և սրով ինչուան դռներուն կու հաս֊նէին, մէկ այլ կողմէն տեղւոյն նեղուածքն և տա֊վու վախն։ ասոնց վրայ այլ՝ ձմեռնային ցուրտն և հիւանդութիւնն։ Ի վերայ այսր ամենայնի դեռ անհատնում Ոսկիբերանն՝ ժամնակ և հնարք կու գտնէր Թղթակցելու մտերմաց հետ և հոգա֊լու փիւնիկիոյ մէջ ծագած խռովութեանց և հա֊լածանաց վրայ։ Ասկէ գրած մէկ Թղթին մէջ, «Ամեն բան, կ'ըսէ, հիմայ գէշ է 'ի Հայաստան,

» և ամենէն աւելի օգոյ խառնակութիւնն և փո-
» թորիկք. ուր որ գառնայ մարդ՝ կու տեսնէ
» հեղեղները, մեռելոց դիակոյտ, գետնայատակ
» եղած տները, կործանած քաղաքները. իսկ մենք
» թէպէտ և վտանգէն ազատած կ'երևինք, բայց
» գրեթէ 'ի բանտի եմք այս բերդիս մէջ. և պատ-
» ճառաւ ամենօրեայ վախուս, սպանմանց լուրե-
» րով, խաւարացուց յանկարծ մեր վրայ հասնե-
» լուն կասկածանօք, և մարմնոյ տկարութեամբ՝
» որոյ հետ դեռ կու կռուիմ, ամենևին չեմք կըր-
» նար ապահով և հանգիստ ըլլալ: Բայց այս ա-
» մենայն ալիսից մէջ ինձի մեծ մխիթարութիւն
» է կու տառապեանդ լուրն ընդունելս »: —
Ոսկիբերանն վասն ատոյգ է. և յիրաւի կ'ըսէր,
Թէ այս բերդիս մէջ իբրև ծուղակի մէջ բռնուած
եմք. և ահա մէկ դիշեր մը բոլորովին անակնկալ
և անկարծ առեն՝ 300 մեհենակազէն խաւարացիք
մտան յԱրաբիսոն, բերդը պաշարեցին, մեծ սար-
սափ ձգեցին. բայց դեռ երկրորդ օրն չլուսցած՝
նոյնպէս անկարծելի կերպով՝ գրուեցան անհե-
տացան աւազակք. և անկէ եռև քաղաքացեաց
և Յովհաննու վասն այլ փարատեցաւ: Մնաց հի-
ւանդութիւնն և գուրան, զոր միայն նոր գարուն
համաց համաց փարատեց:

ԺԹ

Կ'երևի Թէ բաւական ժամանակ միայց Ոսկի-
բերան յԱրաբիսոն, որ Կուկիսոնէն աւելի ամայի
և անշէն էր: Իր ձախ բարեկամներն կամաւ հոս
ուշացուցին զինքը՝ որ աւելի նեղուի. մինչդեռ
ատոյգ բարեկամներն կու մորմոքէին վրան: Իսկ
ինքն իրեն սովորութիւը գրելէ չէր դադրեր. և յո-
մանց կարծուի որ հոս գրած ըլլայ այն երկու նա-
խայհեաւ գիրքերն 'ի Մխիթարութիւն վշտացելոց

և գայթակղեալոց: Նոյն իսկ առն այլ իրեն ուրիշ սիրտանաց առիթ կ'ընծայէր.—բարեաբեր հիւրընկալները, որոց առաջին սեպհական է այն ամայութեանց մէջ կորած քաղքին եպիսկոպոսական՝ Ոարխոս, (եթէ ուրիշ կերպ կարդալու չէ այս անուանս), անշուշտ առաջուց իսկ ծանօթացած էր. ասոր հետ և Թղթի մը մէջ[1] առ Ռուֆինոս երէց փիլնիկիոյ՝ որ իրմէ արբոց նշխարք կու ինդրէր, խոստանայ ղրկել, բերել տալով այս Աբրահամի Ոարխոս եպիսկոպոսէն, որ ունէր շատ մասունք արբոց: Հաւանօրէն այս քանս հանդիպեցաւ Աբրահամ նորէն՝ ի Կոկիւսոն դարձած առնելը. ուր մէկ տասակ և վերջին ձմեռ մ'այլ անցուց, որ երթալով կու նուաղեցնէր իր ուժը և կեանքը:

Հատաւ վերջին գարնան այլ. նորէն կենդանանալ կարծեց և զուարթացաւ Ոսկիբերան. բայց, «եթէ ամեն մարդ, կ'ըսէ[2], կու զուարճանայ » գալատեամբ գարնան, որ զերկիր ծաղկօք և » մարգօք կու զարդարէ, ես անոր համար կ'ու» րախանամ՝ որ ինծի ոյժ կու տայ՝ նորէն իմ » մեղմացս հետ խօսակցելու Թղթով... Ո'չ այն» չափ նաւավարք և Թիավարք, ինդալով այս ե» ղանակիս գալուն՝ կ'ելնեն ծովեր պտտելու, » որչափ ես խնամոմով կ'առնում 'ի ձեռք՝ ե» ղէգս, Թուղթս և Թանաքը, ձեզի գրելու հա» մար »: Երանի՛ երբ այս գրուածեան նիւթերն ունենար. վասն զի «ձմեռուան առեն երբ չորս » դին սառած էր, կ'ըսէ, և չտեսնուած Թան» ձրուածին ձեան առեն Ճամբայ ելլեր գոցեր էր, » և ոչ երթալ ոչ գալ կ'ըլլար. իբրև բանտի մէջ » յայս անակս փակուած, Թուղթ չունենալով » իբրև ջրթայակապ լեզուաւ միջանձնաւորդա» տապարտուած էի »: Իսկ այն վերջին ձմեռուան

1 Թուղթ ՃԽԶ: 2 Թուղթ ՃԽՀ:

10477396

*համար՝ զոր ՚ի Կոկիւսան կրեց, ՚ի սկիզբն 407 տարւոյն, այսպէս կու գրէ առ Հաւատարիմն Ո֊ լոմպիադա: « Զմեռնս արդարւ Հայաստանի ձմեռն » էր. այլազի ըսելը բաւական է. բայց ինծի շատ » էդպաւ. վասն զի գիտնալով ըլլալիքն՝ առաջը » կ՚առնուամ. միշտ կրակ վառելով, շատ զգեստ » հագնելով, աղէկ գոցուելով, և խցիկէս դուրս » չելնելով. որ Թէպէտ շատ ձանձրալի բան է ին֊ » ծի, բայց տպագայ օգտին համար կու համբե֊ » րեմ: Գիտի որ տան մէջ եմ՝ շատ չեմ նեղիր » ցըրտէն. բայց եթէ քիչ մը դուրս ելնենք կամ » բաց օդի կեցանք՝ շատ կու նեղինք: Ուսոի քե֊ » նէ այլ կ՚ապրիմ և կու խնդրեմ Աբրև մեծ » շնորհք մը՝ որ քու առողջութեանդ այլ հոգ » տանիս... և Ձարտար բժշկաց խորհրդով վա֊ » րուիս:.. Ինչպէս ես այլ անցեալները քիչ մը » օդին ցրտութենէն առամքի նեղութիւն քաշե֊ » լով, բայց ուրիշ դեղերէ՝ մեր ապնիւ և պատուա֊ » կան Սիւննկղիտիա սիկնոջ խաւրած դեղն այլ » առնելով գրեթէ իրեք օրուան մէջ նորէն առող֊ » ջացայ.. ուսոի և կու խնդրեմ որ այն դեղէն » նորէն ինծի Ձարեալ տաս, որ թէ առամքաց » գրգռութեան դէմ կ՚օգտէ, թէ կրծոց բորբո֊ » քումը հանդարտեցնելու, և թէ հարբուխը » կ՚իջեցընէ. և չափաւորապէս տաքցնելով թէ » այժ կու տայ թէ ախորժակ կու բանայ. ինչպէս » քանի մ՚օր առաջ ես փորձեցի այս ամէնն այլ: » Ձար ըրէ որ Թէոփիլոս կոմսն նորէն խաւրէ ին֊ » ծի այս դեղէն: — Բայց չըլլայ թէ խռովիս հոս » տեղ քաշած ձմեռուանս համար. վասն զի ան֊ » ցեալ տարուընէ շատ աւելի աղէկ եմ»:

Այս իրաւ կամ յուսադիր աւետիսը տալէն ե֊ տև, երկայն խրատներով կու յորդորէ զՈլիմպիա՝ որ ինքզինքը չթողու տրտմութեան հոգոյ մէջ, հապա դեղով, համբերութեամբ և սուրբ մտա֊

ծուխեամբք քաջալերուի. և առնոց դիւրութեան համար կու խաւարէ իրեն՝ նախ յիշած մխիթարական գրուածքը, Ոչ ոք ինոյն յայլմէ՝ էնէ ոչ յանչնէն. զոր և պատուիրէ շատ անգամ կարդալ և ինչուան'ի բերան այլ սովրիլ: Եւ դարձեալ իր վրայ գալոմ աւելի մխիթարութեամբ հաստատ այն սրտահոգ աղաչանին՝ ցանկալի յոյսեր կու տայ, (որով թեև նախախնամութեամբն զինքն իսկ խաբէր և ի'նոյնպէս զուշկըներ պանդխտութիւնը). «Իսկ եթէ ինձմէ
» զատուած ըլլալուդ համար է տխրութիւնդ,
» ատոր այլ ուրախալի վերջը կրնաս յուսալ. և
» զայս ոչ եթէ զքեզ սփոփելու համար ի'ըսեմ,
» այլ ինծի յայտնի ի'երևի այս բանս. վասն զի
» եթէ այսպէս ըլլալու չըլլար, եթէ չեմ սխալիր,
» ինչուան հիմայ քաշած նեղութիւններէս՝ շատոնց մեռած ի'ըլլայի. Թողլով'ի Կ.Պօլիս կրածները, զոր քաղքէն եղնելէս եւս այն երկայն և ձանձրալի ճամբորդութեան մէջ կրեցի,
» որոց շատն բաւական էին զիս մեռցընելու, ինչ
» որ հոս գալէս վերջը քաշեցի, ինչ որ Կոկիսանէն
» եղնելէս եւս և Արաբիոն եղած աւերնա, յայտնի են քեզի: Արդ այս ամեն վտանգէն ազատեցայ. և հիմայ թէ աւտրի եմ և թէ շատ հանգիստ. անանկ որ Հայերն անդամ ի'ափշին թէ ինչպէս ասանկ տկար և զաղփատրեան մարմնով կրնամ այսպիսի ցրտու դիմանալ և ոտի առնուլ, երբ իրենք իսկ՝ որ ձմեռուան վարժած են, այս տարուանս ձմեռը կարգէ դուրս է ի'ըսեն. իսկ ես ինչուան այսօր անվնաս և անարատ
» մնացի. աւազակաց ձեռքէն ազատեցայ, որ շատ
» անգամ վտանգս յարձակեցան. շատ կարևոր
» բաներէ զուրկ ըլլալով, ինչուան քսանվեց այլ.
» որոնց առջի բերան շատ պէտք կու զգայի. իսկ
» հիմայ անանկ եղայ՝ որ ոչ պէտք ի'իմանամ, և
» ոչ այլ պակաս առջի եմ՝ քան եթէ անոնք ու-

10477396

» նեցած ըլլայի: Ոչ օգոց սատակութիւնն, ոչ տե-
» ղւոց ամայութիւնն, ոչ գնեալի բաներու քիչու-
» թիւնն, ոչ կարևոր գալմանոց պակասութիւնն,
» ոչ բժշկաց տգիտութիւնն, ոչ բալանեաց չգը-
» տուելն, ոչ իսկ անակնա մէջ իջրև 'ի բանակ
» արգելեալ մնալս, չկարենալով քիչ մը քալել՝ որ
» ինծի միշտ հարկաւոր էր. ոչ անդադար կրակի
» և ծխոյ մէջ նստիլս, ոչ աւազակաց վախն, ոչ
» պահապանաց զգուշանալն վրաս, և ոչ մէկ այլ
» պիսի նեղութիւն՝ չկրցան զիս ձնշել և ընկճել.
» այլ և աւելի առաջ և հանգիստ եմ քան թէ
» առաջ, թէպէտ և խնամք և հոգ տանելով: Արդ
» այս բաներս գիտնալով դու այլ մեկդի թող հո-
» գերդ և սրտմտութիւնդ »:

Ի

Աստուծոյ ողորմութեան, արդարութեան ի-
րաւանց, հաւատարմաց սիրոյն և ջանից, և Հռով-
մայ քահանայապետին և կայսեր (Ոնորիոսի) յոյ-
սադրութեան վրայ վստահացեալ՝ կրնար Ոսկի-
բերան այսպէս գրել, մանաւանդ առ Ոլիմպիա-
դա: Նոյն իսկ երկինք և վերինք Ոսկիբերանի վըշ-
տակից և կոլմնակից յայտնուեցան շատ և շատ
կերպով. ուղղոց պաշտպանութիւն և երկայն-
մտութիւն և վկայական պատկներ տալով, իսկ
Թիւրեղոց շատին՝ շուտ և չարաչար վախճան. ո-
րոց ժամանակակից և անկոչնատէր պատմիչք
այլ վկայեն: Արդարոյն դէմ միաբանեալ եպիս-
կոպոսաց շատերն այսպիսի վերջ ունեցան. ԵՒնախ
քան զայլս՝ Կիւրինոս, Քալկեդոնի եպիսկոպոսն,
որ իր Թեմին մէջ ժողովեր էր իր օրինաւոր առաջ-
նորդին հակառակորդները. նոյն ժողովին մէջ մա-
տուցեալ գաւազանը և Ս. Մարութա մատեա-
նատէր Հայրապետին՝ դիպուածով այս Կիւրի-

10477396

նոսի ոտքը կոխեց. անկէ ցաւ և վէրք պատճառե-
ցաւ, որ մարմնոյն վրայ այլ ձարակելով քիչ ա-
առնէ մեռուց զնաս:

Բայց ամենէն գլխաւոր չարեաց գրգռիչն՝ ե-
գոքսիա, գրեթէ ամենէն այլ առաջ, իր հատակին
և փառաց ամենէն փայլման առեն՝ մեռաւ (տլա-
բերքի ցաւովը), հազիւ երեք և կէս ամիս Ոսկի-
բերանի արտասահմանութենէն ետև, (6 Հոկտ.
404), մինչ դեռ սա նոր հասած էր ի Կոկիւսոն:
Թշուառ դշխոյ, տգեղացեալ մայր սրբասէր Գե-
ղանոյն (Բուլքերիայ). Թէ կամաւ չնուաստա-
ցընէր քու սիրտդ՝ միթէ չէր կրնար բարձրանալ
քու օրիորդիդ նման: Եթէ Ոսկիբերան գքեզ՝
լրբութեանդ և ագահութեանդ համար՝ Յեզա-
բէլի և Հերովդիադայ նմանցուց, միթէ երբեմն
այլ մեծապէս չգովէց, երբոր գլուխ իրեն հետ
Թափորակից՝ փոխադրէիր զինչևարս սրբոցն: Դու
Թշնամի եղար այն մեծ անձին, նա ոչ երբէք քեզի-
որ և հիմայ լսելով աստրաժամ մահդ՝ ոչ միայն ոչ
խնդաց, այլ և ողբաց անշուշտ, որպէս Դաւիթ
զԱբեսաղոմ: Աւաղ, ափսոս քեզ. շատ՝ և քան
զչափդ ի վեր բարձրացուցիր շարժեցիր Թագա-
փայլ գլուխդ: Հասաւ, ահ, և ինչ շուտով, հա-
սաւ քու սև օրդ այլ, ծածկեալ ամեն փառքդ,
ամեն վայելչդ, ամեն յոյսդ. զքեզ ինքն բոլորո-
վին ծածկեալ յաշխարհէս:.. Թո՛ղ, դիր հիմայ
այդ մարմնարեայ գլուխդ ցուրտ բարձին վրայ, և
լըլիր, մտիր, Թագիր, Թաղուէ, գադրէ մուԹ
գերեզմանին մէջ:... Խնայէ, ով ահեղ արդարու-
Թիւն.—բայց սա Թող չիտար անոր հանդչելու
գերեզմանին մէջ այլ:— Ոչ Ոսկիբերան է հոս,
այլ Բարձրեալն Աստուած՝ բարկութեամբ կու
նայի իր սրբութենէն դիմաց գրուած դշխոյին մե-
ռեալ մարմնոյն վրայ:.. Երեսուն և չորս տարի
Եւդոքսիայ գերեզմանն չարժելով կու դողայ կու

10477396

դլուխ, ինչուան որ յետ այնքան երկար տարինե-
րու՝ իր հալածեալ Սրբոյն փառաւորեալ մար-
մինն գայ՝ իր դիմաց կանգնի ու գադրեցնէ զան-
հանգստուան զայն՝ 'ի կեանս և 'ի մահուն: Ահն ա-
տեն պիտի գադրի եկեղեցւոյն հերձուածն այլ,
որով մեկ մասն Յովհաննէսեան կոչուէր՝ Ոսկիբերա-
նի հաւատարիմ մնալուն համար: Եւտ կու ցա-
ւէր Սուրբն այլ այս երկպառակութեան և ան-
պարտ մարդկան հալածանաց և չարչարանաց
վրայ. զոր կու վախէր թէ աւելի զայրացընէ՝ ե-
թէ կամօք հրաժարի իր աթոռէն, իբր հաստա-
տեալով Թէոփիլեանց անկանոն ժողովը: Ասոր հա-
մար դեռ Կ.Պօլսէն չելած՝ բոլոքոյ գիր գրեր էր
առ Պապն Իննովկենտիոս, որպէս և վերչն այլ,
բայց օգուտ մը չեղաւ:

Իսկ հիմայ յետ եռամեայ աքսորանաց և տա-
ռապանացն սրտաուռչ գիր մ'այլ գրելով կ'ըսէ
առ նոյն գլուխն եկեղեցւոյ. « Թէպէտ և մարմնով
» *որոշեալ տեղ մը միայն կու բնակինք, բայց սի-*
» *րոյ Թևն բոլոր աշխարհս կու պատէ. Թէ և ան-*
» *բաւ Ճամբով հեռու եմք իրարմէ, բայց ես քու*
» *Սրբութենդ զատուած չեմ, այլ միշտ ներկայ*
» *կու գտուիմ. սիրոյ աչօք տեսանելով քու արիու-*
» *թիւնդ, անկեղծ գութդ, անփոփոխ հաստատ-*
» *տութիւնդ, և այն մեծ, անպակաս և չարունակ*
» *ժխիթարուութիւնդ՝ որով կու սփոփես զիս:..*
» *Ասոր համար մեծապէս շնորհակալ եմ, և փա-*
» *փագէն ատէպ գրել ձեզի, որ ինձի այլ մեծ*
» *ժխիթարուութիւն էր. սակայն տեղւոյս ամայու-*
» *թիւնն չինթողուր ինծի զայս. ոչ միայն հեռա-*
» *ւոր՝ այլ և մօտաւոր կոմպերէ անպատճառ հոս գա-*
» *լը դժուար է, Թէ տեղւոյս սահմանները պա-*
» *տանձնուելոնը համար, և Թէ Ճամբաները*
» *աւազակներէ բռնուած ըլլալուն. անոր համար*
» *կարեւորութեան արժանի տեսակ զիս և մի կար-*

» ձեր անհոգուԹիւն »: Ապա կու խոստովանի որ Ս. Պապին հայրենի ինամքն բաւական էր ամեն բան կարգի դնելու, եԹէ հակառակորդք նորանոր չարիք չհնարէին, որոց ըրածները պատմելու չէ Թէ նամակ՝ այլ և ոչ գիրք մը կու բաւէր:

Եւ դարձեալ կրկին և կրկին կ'ապշէ՝ որ զանց չընէ հակառուԹիւնը. վասն զի եղած չարիքն ըսելու եկեղեցւոյ վնաս կու սպառնան: « Իսկ ես՝ »
» հա երեք տարի կ'ըլլայ աքսորանացս, որ տակաւ, »
» արածուԹեան, պատերազմի, անդադար պա- »
» շարանց, խելքէ դուրս մխայնուԹեան, ամենօ- »
» րեայ մահուան և խաւարտցի արեւուս մէջ ըլլա- »
» լով, շատ ու շատ կու մխիԹարուիմ ձեր հաս- »
» տատուն և յարատև գԹովը, և անկեղծ սիրովդ »
» կու զուարճանամ: Ատոնք են իմ պարիսպքս, »
» իմ պաշտպանուԹիւնս. այդ է իմ անալէկոծ »
» նաւահանգիստս, և անբաւ քարեաց գանձս, և »
» մեծ ուրախուԹեանց և զուարճուԹեանց ա- »
» ւետիս: Ահա՛կս այս անտարտապոյն առելոյս »
» մէջ այլ՝ իմ վշտաց մեծ մխիԹարուԹիւն կու »
» գտնեմ »: —

Ահա՛կի ԹղԹոյ և գրոցի՝ իննսունվեցամեայ էր կրնար Ճարտասանական պատահան մը տալ, այլ կրնար և կրցաւ իրեն վայելուչ հայրաբար լեզուաւ խօսիլ. « ԹէպԷտ և այդպէս է որ անմեղն »
» ամենայն բարիք և ողորմուԹիւն Աստուծոյ կու- »
» ա՛ս, սակայն մենք այլ այս ԹուղԹս կու գրեմք »
» (Կիւրակոս սարկաւագի ձեռօք), յորդորելով »
» ի համբերել. որ ըլլայ Թէ անիրաւուԹիւնն »
» աւելի զօրանայ՝ ընկճելով, քան Թէ բարի խիղ- »
» ճին՝ կու ա՛ղով: Փութամ որ ինձմէ տակաւին կա- »
» րօտ չես դուն՝ այլփսան ծողովրդոյ վարդապետ և հայր, »
» Թէ առաքինութիւնք անպատմ միշտ կու փորձուին, որ »
» յայտնի ըլլայ երեսաց հաստատուուԹիւնն և չոկա- »

10477396

» բանալն վտանգաց մէջ, և երևեալ խոշտն մեռաց
» զօրութեամբն ընդդէմ ամենայն անիրաւ չարեաց.
» որոց կատարեալապէս չյաղթողն՝ կրնայ երկեր-
» յել ըլլալ: Ամեն բանի պէտք է համբերէ՝ ով
» որ նախ Աստուծոյ և ապա իր խիղճմտանաց վրայ
» վստահ է: Արդարն կրնայ ամենայն վշտաց տակ
» ընկնիլ, բայց յաղթուիլ՝ ոչ. վասն զի միտքն ամ-
» բացած է վարդապետութեամբ Ս. գրոց, զոր
» ժողովրդեան կու քարոզեմք. ոչք և վկայեն՝ թէ
» գրեթէ ամենայն տուրբք զանազան կերպով և
» միշտ չարչարուեցան, և իբրև կրակով փորձուե-
» լոմ այնպէս իրենց համբերութեան պատկն ընդ-
» ունեցան: Արդ հոգւոյդ գիտակցութիւնն ինչ
» թարէ քու սիրտդ, եղբայր իմ ամենասիրելի,
» որ միայն ներկութիւն է առաքինութեան՝
» տառապանաց մէջ: Քրիստոսի Տեառն մերոյ ա-
» ջաց առջև՝ զտեալ խիղճմտանքն՝ պիտի ձգէ իա-
» րիսը 'ի նաւահանգիստն խաղաղութեան »:

Ի՛նչ պարզ ու վսեմ, ի՛նչ ստուարաբուռ և երկ-նային խոստաւածք երկուց քահանայապետաց. ով չիտեներ աստուածային ձեռքն՝ իր եկեղե-ցւոյն գլխոյն ձեռաց մէջ, և իր երկնային վճռին՝ գուշակեալ անոր գլխովը, քան զոր բարձրագոյն անձ մը չէր կրնար ըլլալ երկրիս վրայ՝ Յովհաննու առջև: Միշտ մայրաբար գիտակցութիւնն Յովհան-նու՝ այլ աւելի զտեալ այսքան ստուգապանօք, ուրեմն ուրիշ բանի չէր մնար՝ բայց եթէ ձգելու իր մեծ խարիսխը 'ի խորս յաւիտենական խաղա-ղութեան:....

Արդ ինչքա՜ն չես փութար յետին փոթորիկ կրկին նախանձու և ատելութեան, քշելու այս ալէկոծ և միշտ ծովայատիճ նաւը՝ իր յետին ծոցը. մինչև ցերբ կու տարուբերես գնա 'ի Կոկիւտոնէ յԱքե-րոնտ, յամայութենէ յամայութիւն... փչէ, մեկ մ'այլ փչէ քու յետին գաղնութեան շունչդ, և

10477396

անիրաւութիւնն իր գործը կատարէ երկրիս վրայ, արդարութիւնն այլևս երկինից հանդիսանայ։

ԻԱ

*Եկաւ հասաւ, լեռները և անապատները անցնելով այն գժուխաշունչ փոթորկին. ներքինեաց և խաբեբայից խաղալիկ եղած՝ Թոյլ և դառնացեալ Արկադեայ հրամանին, խլանալով իր եղբօր (Ոնորիոսի) և Պատկին իրաւատաց։ Որովհետև այնչափ եպիսկոպոսք և իշխանք չեա ամենայն Լանից էին կրնար մեր Խօսանային ոսկի բերանը լռեցնել, չէին կրնար արգելուլ մեծաւ մասամբ զՅունաստան, զՀայաստան, զԱտրիա, զՓիւնիկէ, զՊարսս և զԳոթս, և զիտալիա՝ երեն դառնալէն զԹով և խնամով, և զբոլոր աշխարհն զնա պատուելէն, վճռեցին անգութքն որ անոր անապատագոյն կարծած տեղէն՝ այլ և շատ աւելի հեռու և խոր ամայի անապատ տեղ մը տարուի. որովհետև Կոկացիք շատ կակուղ գտուէան և Հայք մարդասիրագոյն քան զՅոյնս, Թոյլ քշուի Յովհաննէս մինչև յանկիւնս Պոնտոսի, Կասկասոս նու բարբարոս բնակչաց մէջ, յանծանօթ տեղին Պիտիոնտ, (կամ Պիթիհան ըստ նախնեաց) որ է հիմիս Բիւզուանտա՝'ի ստորոտս Կովկաս լերանց Ախիսազաց ծովեզերքը, ուր հազիւ նաև կու մնաեներ, և ցամաքէն այլ հազիւ Թէ մարդ կ'երթար. այնքան անառվոր և վախնալու տեղ էր։։։ Ո՛հ, ինչուան մեր այլ կու հասնի եղեր նախանձն կոյր և կամակոր. և ինչպէս գժուխանման խիստ է եղեր այդ կիրքդ՝նաև այսպիսի անչար և արժանաւոր անձի դէմ։։ Ի՛նչ ողորմելի արարած և ինչ ատելի գազան է մարդս մարդու հետ։— Աստուած իմ, ազատէ զմեզ այսպիսի կիրքերէ։։։

10477396

Արքեպիսկոպոսին վերջին ձմեռն այլ անցեր էր. ցանկալի և ուշացած գարունն այլ եկեր էր. ծովիւնք հետ իրարու բացուէին գոցուէին. և այլ պիտի չբացուէին Ոսկիբերանի աչաց առջև: Ո՛հ, այլ պիտի չկոխէր նա հեզաքայլ գարշապարօքը Քահանայ հովուաց նկարազարդ մարգագետինները. այլ պիտի չդարձներ դէմքը առաւօտանց Եփրատայ վազած կողմը, կենսաբեր զուարթարար արեգակ մ'ողջունելու. և ոչ անմրսուր ուրանալեաց մը՝ անոր յեղին ճառագայթից ճնշիք բարով ըսելու դառնար՝ դէպ 'ի զարհուրելի Խաւրացւոց քարայրը լեռները: — Այլ պիտի չտարածուէր 40 տարի շարժվարժենի ձեռքն մագաղաթաց վրայ, երկնից սղոսլագոյն պատառէրքները՝ երկրիս ազնուագոյն լեզուաւ գծագրելու. — այլ պիտի չերթային Թուխէլովէր խմաստուն և միխթարելոյ նամակներն ընդ ծով և ընդ ցամաք, այնքան կարօտ և ուրամեալ սրտեր սփոփելու, և եկեղեցիներ հաստատելու: — Ոսկիբերանն այլ պիտի դադրէր. աշխարհ խլանար, եկեղեցի ամայի ձնար, չլսելով ղքաղցր ձայն՝ իւր առնման Խօսնակին:..

Իր աթոռը Թողլէն և աքսորանաց սկզբէն 'ի վեր՝ երեք տարին լրացեր էր. յոնիս ամայ կէսն էր. արեգական ճառագայթք չիտակ տեղային Փ. Ախոյ լեռնապուշտաց և տափարակաց վրայ, որ ամառնային եղանակին այնքան տաք կ'ըլլան երեկոյ աշխարհագրական լայնութեան դրից հասմեամատ, ոյքան ձմեռը ցուրտ են՝ երկրակազմական դրից բարձրութեանն համար: Ցովհաննու նոր աքսորանաց տեղն Կոկիւսանէն վեց տաճման գէպ 'ի վեր հիւսիս էր, և չորս տաճման մ'այլ գէպ յարեւելք. որով կ'իմացուի թէ հոն այլ տաճիկ ձմեռն պիտի ըլլայ, և անտանելի մեր փոփոխակ և տկար տանդիսոին համար: Հիմայ այլ ինչ դժբն-

10477396

դակ տխուր ըլլայ այս 600 մղոնի չափ եւրկայն ճամբան, առանկ տաք եղանակին, և անանկ անկոխ անվար քարուտ լեռնուտ տեղուտանք, և միշտ դէպ յայն կողմն երթալով ուսկից կ'իջնեն այն երկերը՝ Ներու գետերն, Ջահան, Սվնա (Գզըլ-ըրմաք) և Իռիս (Եշիլ-ըրմաք). ըսել է որ միշտ դէպ 'ի գար վեր պիտի ելներ ուքսորեանն: Եթէ այսքան դժարութիւնք կասկածել կու տան անոր ողջ հասնելուն այն գժար և հեռաւոր տրգելանին, ինչ ըսելու է, Հայկակ, եթէ քշուելուն կերպն այլ կիշեինք: —

Հալածողքն գալտուկ պատուիրած էին տուրբը տանողներուն, որ ամենէն անշէն և անկոխ տեղերն անցնեն, ամենևին չմտնեն, հանգիստ չտան իրենց ձեռքը մատնուածին. և մեկ խօսքով (զոր լաւ իմացուցին անոնց) նային որ 'ի Պախեուտ չհասած՝ ճամբուն վրայ անոր բանը լմընցնեն. և եթէ այսպէս ընելու ըլլան՝ մեծ վարձք կ'ընդունին և գինուորութեան մէջ առաջ կ'երթան: Վան զի այս գահիճ՝ քան վարիչ ըսուածքն՝ առնէ արիւնէ անցած երկու ամսուս վայրագ գինուոր էին. ով գիտէ թէ ինչ բարբարոս ազգէ կամ կրօնքէ, (եթէ կրօնք այլ ունէին այնքան անգութ անկրօն հալածչաց պաշտօնեայ եղողքն): Բաւական ըլլայ ըսել՝ որ իրենց պաշտօնը յանձնուածին համեմատ կատարեցին, մնաւանդ մէկն. անանկ որ այն երկայն ճամբուն հազիւ քառորդ կամ երրորդ մնան ըրած՝ քշողք և քշուելք տուողք իրենց վախճանին հասան:... Կոկիւանէ 'ի Կոմանա, ուր որ միայն կրցաւ հասնիլ Մուրբն, չհասակ գծով այլ 150 մղոն մը կ'ըլլայ, խակ իրեն քշուած ծուռ մուռ ճամբաներով որ մեզ անծանօթ է, թերևս կրկին երկնցած ըլլայ. այս յայտնի է որ երեք ամսոյ չափ քշեց:...

Ելիք ամիս անգադար մարտիրոսութիւն մը,

10477396

երկու աւազակ դահճաց ձեռք՝ այն Յասբեռն վայ... Ո՞վ կրնար դիմանալ.—միայն Ոսկեբերան: — Իր վերջին ըսած խօսքէն յայտնի է՝ որ առաջին ըսածն այլ էր, այն՝ զոր առեպ կ'ըսէր և ըսելէն դադրիլ չեմ կրնար կ'ըսէր. Փառք քեզ Աստուած, յաղագս ամենայնի: — Քանի սրտապատառ էր լսելն զայն վերջին անգամ՝ կոկաց քարերուն և ջուերուն մէջ, որք երբեմն աշխարհիս ամայութեան տեղն՝ հիմայ գրասխտ մը դարձեր էին մեր Խօսնակին.—ով լսեց այն Ոսկեբերանին վերջին մնաս բարովը՝ առ երեքամեայ նժդեհութեան տեղը. առ այն ծխտա միտա խցիկը առն Դէտակորի, որ Անտիոքայ և Բիւզանդիոնի պատրիարքական բեմից փոխանակ եղեր էր:—Թէև երանելի Պապին ըսածին պէս՝ քաց ՅԱստուածոյ և ըսուլին պիտակցութէն՝ ոչ ոք լսեց: — Վասն զի կ'երևի թէ անկարծ և անակնկալ (գուցէ և գիշեր) առեն՝ խաւարասէր բուհճակաց նման՝ վրայ հասան չարամտիկ վայրենի ոստոյք, և խլեցին մեր անդէն անմեղ եկեղեցւոյ Խօսնակ վարուժանը, չթողլով բան մը հեռն առնուլ, քաց անկէ զոր էին կրնար արգելուլ.—իր ադամանդ սիրտը[1]:

Ո՛վ Տէր, ինչքո՞ր կրեց քու հրաշակերտդ, այն մեծ սիրան՝ իր երկրաւոր կենաց այս յեռին երեք ամսուն մէջ. ինչքո՞ր ապտեցին անոր իր մարմնոյն կրած չարչարանքն, անձնական չարչարուլց կերպարանքն, խօսքերն, գործերն. — անծանօթ և անմարդի տեղեաց գժտութիւնն, լռութիւնն, տակուժն, և ծայր ձոթ չերևիլն.—զուրկ, հեռի և մենիկ միտքն ամէն սրտակցէ, ամեն բարեկամէ, ամեն մխիթարչէ.—ոչ խօսիլ և ոչ գրել կրնալն

1 Թէպէտ Գէորգ պատմիչն համարի թէ հետը կայրին երկու քահանայք և սարկաւագ մը, որք քանի մը հարկաւոր բաները այլ հետերնին առած էին:

առ Ոլոմպիադա և առ այլ Թղթակիցն.—այնքան հաւատարմաց ջանքէն՝ և խոստմունքէն միայն ամենէն մեծին՝ արքազան Պապին վերջին խօսքին ատուգուխէն, թէ «Փորձուած զտուած» խնդամտանքն՝ պիտի ձգէ իր խարխիսը 'ի նուա-» հանգիստն խաղաղութեան». խօսք մը՝ որ միայն լուն արձագանգ մը կ'ընծայէ երեն անդադար և յաղագս ամենայնի՝ Աստուծոյ փառք տալուն:— Ո՛վ երջանիկ հայկական ձանուցարհ,—թէպէտ և դժնդակ, այո, և մահաւելթ մեր Սրբոյն.—այլ դու քեզի երջանիկ՝ որ անոր յետին քայլից կնիքն առիր. ո՛չ էր թէ յայտնուէիր. գանէի տեսնէի այն ուխտագնացին հետքը, և թէ տոլալով այլ հարկ ընծայ՝ անցնէի Ոսկեբերան Յօանակիս յետին անցքէն:— Հարուածէն 'ի հիւանս քոյրդ Փոքր Հայոց երկայնքն էր այս եռամեայ ձամբուն, գրեթէ ձիշդ երկու Հայոց քացաձիգ սահմանաց միջոցն, 'ի կոկիւսանէ ցԿոմանա:—

Մարդկութեան մեծագոյն ամօթոյ գործոց մէկը ծածկելու համար, կամ Աստուծոյ ընտրեալին՝ միայն երեն համար քաշածը մեռնէ գաղտուկ պահելու համար, այս յետին ժամանակին լուրերն չհասան յերկիր, միայն երկինք գիտեն. իսկ մեզի այսչափ յայտնեցաւ, որ շատ անհնայաբար և նեղութեամբ քշեցին վտարբն այն ձամբէն, ամենեւին չնայելով օդոց և գետնին անհարթութեան, և աքսորելոյն տկարութեանը: Որ հասարակի տապխաան ասքի առեն քաշկըռտելով կու տանէին Սուրբը՝ հետևակ և յաւազին ոտքով. գլխէն այլ ծածկոցը խլած՝ անմազ գագաթը, որ եղելն էին նման կուռնա էր, կ'ըսէ հաւատարիմ պատմիչն[1] կու Թոլուին չարաչար տոչորելու. արդէն ինքն ենթակայ էր գլխի տաքութեան և յաւոց.

1 Պալլադիոս:

իակ հոս հիմայ ինչ կ'ըլլար: Երբեմն այլ սահա-
նաբաց երկնքէն անձրևի առեն՝ ձամբայ ընել կու-
տային. չուրն կառնըլէին և դոգէն վար կ'իջնէր կ'ո-
ղողէր բոլոր մարմինը:... Եւ ատոնք կրսողն ոմ-
էր.— Ոսկեբերանն. այն մեկնիկ Խօսնաիկն եկեղե-
ցւոյ. և ինչ առեն կրէր. այն քրիստոնէութեան
պայծառ և խաղաղ առենը, կայսերութեան փա-
ռաց և ճոխութեան մէջ:... Այսքան կիրք և այս-
քան քաղցր համբերութիւն՝ գուցէ քարերն ան-
գամ ձանձեցընէին. քարատիրտ գահճաց մէկն այլ
նման Քրիստոսի քովի աւազակաց մեկուն՝ յիշէց
որ ինքն այլ իր քշածն այլ մարդ են, շարժեցաւ
վերջապէս՝ ի գութ. մինչդեռ ընկերն ձախակող-
մեան այլ աւելի խստանալով խոժոռէր ապառաժ-
նար, սպառնար, հայհոյէր, թէ որ մէկն իրեն
աղաչէր որ քիչ մը գթով վարուի, հարկ կ'ըլլար
որ միւսն շատ հեղ չհեռանի սրտին ազգմանցը,
վախնալով հալածողաց չարութենէն և ընկերին
մտանութենէն. բայց երբ նա քիչ մը հեռացած
ըլլար, ձեռքէն եկած օգնութիւնը կ'ընէր Սրբոյն:

ԻԲ

Այսպէս չափեցին այն ծանր և երկայն երեք
ամիսները. կտրեցին անցան բոլոր Ջանիայ և
Սիհոնի և Աքլուայ բարձրատափերը, հասան
Իսխայ հարաւային օժանդակին (Թօզանըը-սու
կամ Թօգատ-սու). անցան զայն այլ, և եկան՝ ի կո-
նիա կամ Կոմանէ, քաղաքաւանը, որ գրեթէ միջա-
տեղն է Փռըգիոյ և Պոլեմոնական Պոնտոսի,
Դասեմոնեան դաշտին մէջ (Գազ-օվասը), Եւդոկիա
(Թօգատ) քաղաքէն 7-8 մղոն հեռու գէպ յարևե-
լեան հիւսիս, և գեռ ծանօթ կը-ռնէր անուամբն.
որ հին առեն անուանի ուխտատեղի էր Աստղայ

կամ Լուսնի դէց՝ (Մա կամ Մահէ անուանեալ)[1], և մեծ ուրախալուր Հայոց, ուր քրիստոնեան գրեթէ Թագաւորական իշխանութեան ունէր, և հազարաւոր քուրմեր ու քրմուհիներ։ Բրիստոնէութեան չնչեց զանոնք և զեզին նուիրեց Աստուծոյ Հիմարին։ Մեր Լուսաւորչի առեն Կոմանա առանձին եպիսկոպոս մ'ունէր Բասիլիսկոս անուամբ՝ որ բնիկ Անատոլացի էր. այն առեն Հռովմայեցւոց իշխանութեան տակ էր Կոմանա. և մինչ Հայաստան Տրդատայ ձեռքին տակ կու վայլէր՝ ի նորընկալ քրիստոնէութեան, հոս Մաքսիմիանոսի հալածանք կու նեղուէր. որ և պատճառ եղաւ եպիսկոպոսին նահատակութեանն ի Նիկոմիդիա (312), ուսկից բերին մարմինն և առաքաւանէն քանի մը մղոն հեռու Թաղեցին, վրան այլ եկեղեցի մը կանգնեցին, ու եղաւ առաջնուն վկայարան մը[2]։

Արդ հոս իր հայրենակցին հանդստեան քով հանդիպեցաւ Ոսկիբերան սեպտեմբերի 13ին գիշերը. և երբ Յակոբ նահապետին պէս՝ իր յոգնած և ցաւած գլուխը դրաւ այն սուրբ քարին, առաւ փափագելի առիւծքն այլ. հանդերձեալ երանութեան լուսեղէն սանդուղն, ուսկից աւետարեր գալով Ս. Բասիլիսկոս՝ ըսաւ. «Զօրացիր եղիր» քայր իմ Յովհաննէս, վասնու ի միասին լինիցիմք» առաջի Քրիստոսի»։ Նոյն Սուրբ վկայն, կ'ազանդեն, թէ երևցաւ իր նշխարաց պահապան քահանային այլ, և պատուիրեց իր հանգստարանին քով տեղ պատրաստել Յովհաննու։

1 Որիշ կոմանա մ'այլ կար ի Կապպադովկիա, նոյնպէս անուանի այս կռոց պաշտամանց համար։

2 Ըստ ոմանց այս Ս. Բասիլիսկոս էր զինաւորն, ազգական Ս. Թէոդորոսի, Ամասիացի, և հոս ի Կոմանա նահատակեցաւ յամին 307։

Ծագեցաւ վաղուեան օրն, օրն մեծ և յաւուրս Ոսկիբերանի: Մարմնոյն ակարութենէն և յայտնուած տեսիլքէն գիտնալով՝ որ այլ ամեն բանի լրուն համար լմննալու վրայ է, փափագեցաւ գոնէ կենաց վերջին օրը հանգստեամբ պատրաստուիլ՝ նոր կենաց առաջին և անվերջանալի օրուան. խնդրեց պահապաններէն՝ որ ուշանան հոն ինչուան ժամը հինգ: — Ո՛վ խեղճ խնդիրք, և անխելք փոխարէն: — Զի. չըրնի երեն այս շնորհքս այլ, զոր գթութենն չիզլանար յանցաւոր մահապարտաց անգամ. և բռնաւորք շատ հեղ սանկ բանի դէմ չեն կենար: Բայց Ոսկիբերան մը՝ սորա այլ արժանի չեղաւ: Ցիշեց իր գերապոյն տէրն ու վարդապետը՝ երկու տարազակաց մէջ չոր փայտի վրայ գամուած, ծարաւած, մեռած: Դարձեալ փառք տուաւ Աստուծոյ, և ելաւ. Թող տուաւ որ քաշքըշեն վատուժ և երեժալկոտ մարմինը, զոր իրենցմէ աւելի իրեն կու քաշէր հոգն յետին հանգստեան: Կիսափեա կխասխեղդ հաւկի մը պէս առին հրեցին քշեցին, ինչուան 30 սապարէզ (3-4 միլոն) առատապար երկրի վրայ. վերջապէս հասկըցան որ եթէ քիչ մ՚այլ առաջ քշեն՝ ձեռուընին մաշած կմախք մը պիտի մնայ, որոյ մէջ արդէն միայն սիրտն ու միտքն և քիչ մ՚այլ շնթռունքն՝ ոլոր կ՚երևէին: Իրենց անարժան վարձու վախճանն հասած էր. ուրեմն գոհութեամբ փութացան նորէն յետ դառնալու[1]. նորէն այն երկայն սապարէզներէն քաշելով քշելով բերին հոգեվար Ոսկանակը. անկէ եաև անօգուտ բեռան մը պէս՝ ձգեցին իր փափագած հանգստարանին քով:

Հասաւ առաւօտանց ժամադրեալ առեն. այն վերջին ժամուն մէջ այլ այնպէս մեծ և վսեմ ե-

1 Ըստ ոմանց ճամբան մոլորելով նորէն յետ դարձան:

բնցաւ Ոսկիբերան, ինչպէս էր երբէք երևած իր Կ.Պօլսի բարձր բեմէն կայծակնաբար բարբառելեան աաեն: Ոչ մահացու և ոչ անմահ, այլ թէ կրնամ ըսել՝ աստուածակերպ ինն երևցաւ. երկրաւոր աստուած մը՝ որ երկնաւոր Աստուծոյ կ'աւանդէ իր հոգին: Մանելով՝ ի վկայարան սրբոյն Բասիլիոսի՝ պահ մը բոլոր ցրուեալ ոյժը ժողովեց, իբրև արեգակն իր երեկոյեան ճառագայթները. որոց վրայ բարձրապոյն ճառագայթ մ'այլ աւելի կու փայլէր. — մերձեցեալ անմահութենէն: — Ո՛չ որպէս մեռաւ յաշխարհս, այնպէս եկաւ յաշխարհէ. այլ գիտութեամբ, յօժարութեամբ և վեհ հանդարտութեամբ, միանգամայն և մեծ պատրաստութեամբ: Մահուան օրն է բանակած նը անբանները զատողն և ոչ ծննդեան օրն: — Մէկ կողմէն կորուսած՝ մէկ այլ կողմէն առած ուժը՝ կանգնեցաւ, և հոն վերջին ապաստարանը Թիւն մ'ընելու եկողներէն՝ ուզեց նոր և մաքուր լաթեր. իր եռամեայ և եռամեայ պանդխտութեան քՀքՀեալ և ալեզդեալ զգեստները հանեց, տուաւ փափագողայ. և ինքն գլխէն ինչուան ոտից աման՝ մաքուր ձերմակ հագաւ. իբրև հարսնութեան գայող կոյս մը՝ իր պարկեշտ և խաչզգեաց մարմինը զարդարել ուզելով. անոնց վրայ առաւ քահանայութեան տուրբ զգեստները և նշանները այլ. և չհագաւեալ աշտանակի մը պէս կանգնեցաւ առաջի Աստուծոյ. մատոյց տուրբ խորհուրդը, հաղորդեցաւ ընդ կենարարին, ընդ որուն բոլորովին խառնուելու վրայ էր: Վերուց մէկ մ'այլ իր աներկրաքարշ բազուկները, դարձուց՝ ի վեր արբահայեաց աչքերը, կեցաւ յաղօթս, ՝ի գնայլուծին, ՝ի փոխուծին...:

Արդեօք Ահարոն ՝ի գլուխ Հովը լերին, կամ Մովսէս ՝ի գլուխ Աբարիմայ՝ աակէ վաճառ էին երեց վերջին վայրկեանին: — Ոսկիբերան ըսաւ իր

երկրաւոր կենաց վերջին խօսքն առ Աստուած. ապա կռթընեցաւ, հանգչեցաւ, ոչընչեաց զորս կոչին եղունգները, և ամենուն լսելի ու զուարթ ձայնով՝ յեսին անգամ և յեսին քան ըսաւ, Փառք քեզ Աստուած, յաղագս ամենայնի, վասն սէրն ցընելով Աւգն. որոյ յեսին վանգը հազիւ լմընցուց, կամ գեռ ևս կու հնչէ յաւիտենական երանութեանց մէջ:...

ԻԳ

Աստուածային հնանալի տեսչութեան և երկայնամտութեան քաջանշան մեկ հանդէսն այլ այսպէս հոս կատարեցաւ, այսպիսի մեծ և արդարեւ Մեծ անձի մը կենօք և վախճանաւ. զոր Տէրն իր ամենէն սիրելեաց պէս՝ Թոլեր էր յաւերժութեան վարձց կամ քառասնորդաց երկրի: Եւ երբ սանոյ կարծած փափագն՝ի գլուխ ելաւ, և նահանձն հասաւ մինչև՝ի վերջ մահուն, երկինք՝ որ և յերկրի պատուեն զուարթութենց, անծանօթ կերպով մը դրդուեմ ձգեցին նոյն օր նոյն ժամուն՝ հեռաւոր և զանազան ժողովրդոց քարեսէր անձանց, որք գրեթէ առանց իմանալու իրարու շարժելուն պատճառը՝ եկան գտուեցան՝ի Կոմանա. քաղմութիւն քարեպաշտից, մանաւանդ միանձանց և կուսանաց՝՝ի Հայոց, ՝ի Պոնտոսէ, Աստուց և՝ի Կիւղիկիոյ. և միաբան պաշտամամբք, աղօթիւք, երգօք և արտասուօք, և ամենայն կարգօք եկեղեցւոյ, մեծաւ ազով և սիրով իջուցին հանգուցին չարչարակիր և արքազնեալ մարմինն՝ի տապան[1], Ս. Բասիլիսկոսի նշխարաց

1 « Որ եւ մատուցմամբ սրբոյ խորհրդոյն՝
Աւանդեցեր ի Տէր զհոգիդ համառկան:
Իակ վկայարանըն Բասիլիսկեայ
Ինքնին բանայր զտապանն իւրական
Եւ ընդունէր զգանձն աստուածական »:
— Գանձ՝ի խաչատրոյ:

քով. քաշելով վրան ծանր և մեզի սրտակուռը կափարիչը, որ ծածկեց յաչաց եւրկրի՝ իր 33 (կամ 30) տարի տարփալի տեսարանաց մէ. կը:...

Ո՛հ, ինչպէս կրնամ ես հեռանալ այս կափար. չէս, Հայկակ, առանց հրաւէրդ մը տալու՝ նախ այն նախանձոտաց՝ որ յայդքան վիշտ, մահ և յօ. տար գերեզման դատապարտեցին այս վեհագոյն մարդը:—Եկէք ուրեմն, ով ժողովք ժանտից... (բայց չէ. իմ հեզ և անչեշտալր վարդապետիս գերեզմանին քով ինչպէս վաճառանեմ)։—Եկէք լսեմ, ով մելրեալք, թէոփիլեանք և Եւդոք. սեանք, տեսէք լրացնիդ: Աստեղութիւն և նա. խանձ ինչուան այս տեղն այդքան մեծ որա մ'լր. րած էին արդեօք.—արդեօք տեղ մը այդքան մեծ արժանիք և արդիւնք՝ այնքան չնչին պատճառօք՝ այսպիսի ցաւալի և անարժան փոխարէն մ'ընդու. նէր էր: Ո՞վ այսպիսի Ոսկիբերան մը չարու. թեամբ լսեցուց. ո՞վ տասնկ ոգեմանդ սիրտ մը, տասնկ անգիւտ գանձ մը՝ չտնաց կորսնցնել:... Ցիրաւի այնքան մեծ է ձեր յանցանքն, տմօթն և խայտառակութիւնն՝ տռաջի ամենայն ազգաց և դարուց, որչափ փուճ եղաւ չանքերնիդ: Ոսկին այն՝ մշտափայլ կայ մնայ մինչեղնելով ձեր ժան. գը. ադամանդն այն՝ որուն հետ զարնուելնուք՝ մանրելով ցրուելով զձեզ՝ կու մնայ անմաշ:...

Բայց դուք, կինք չարածնուածք, որ լոյն դնե. լով'ի սիրտ մարդկան՝ կու ծնանիք ամեն ժամա. նակ, դու գեղնած նախանձ, և դու ժանեւոր զրպարտութիւն, դուք մինչև ցերեկ կու հալածէք զանոնք, որոց սրտին մէջ չկայ ձեր տեղն: — Եթէ քիչ անգամ այդպիսի մեծ անձ կու գայ յաշխարհ, կամ մէկ մին այն Ոսկիբերան, տակայն քանի քա. նի բարեսիրտք և բարեմիտք՝ ձեր զինուց և ժա. նեաց զոհ կ'ըլլան. — քանի տերանք՝ գոնէ ար.

10477396

ծաթիք և անուշիկք՝ ձեր ըրչելուին՝ հաւրցան.— քանի՞ մարգարտանման մաքուր սիրտք՝ ձեր ցաւէն փշրեցան.— քանի գրկիչք՝ ոլք երկրիս վրայ կրնային անկնիլ գիծ մը Թողուս, ձեր բռնութենէն դադրեցան կամ կտրեցան.— ոլքան ձչմարտուԹիւնք ձեր սուտԹենէն փախստական եղան և լռեցին հապառ.— ոլքան պայծառ նշոյլք՝ ձեր խաւարին մէջ Թաղուած մնացին.— և ոլքան անմահ մնալու մարդկանց՝ դուք շուտով գերեզման փորեցիք, կամ Թէ և ոլչ ոլչ կորսուեան կափարիչը վրանին կռԹնցուցիք:...

Իսկ դուք, ով ազնիւք, որոց երկինք չնորհեցին չափով մը՝ Յովհաննու նմանուԹիւնը,— ձչմարտուԹիւն, հանճար, գորով և հալածանք.— դուք՝ կշռեցէք ձեր չափը ձեր կիրքը, և ձեզմէ առջինը րուն կրածը. և եԹէ իմ ազգակիցս և արեւնակիցս այլ էք, յիշեցէք ձեր նախնի Նեռսէսները, Մովսէսները, Սահակները, Ելիշէն, Խորովբիկն ու Ղազարը. և եԹէ բաւական չեն ձեր այրած սրբանին՝ սանոց կիսատաքանդ անապցելու գերեզմաններն, եկէք հոս 'ի տարտիղը տապան մեծի Խօռնակին Եկեղեցւոյ: Հոս, կամ չդիմանալով այս կափարչին վրայ դուք այլ փշրեցէք, և կամ համբերուԹեամբ դիմանալով, «Փառք քեզ Աստուած յաղագս ամենայնի» կանչեցէք, ու լռեցէք:...

ԻԴ

«Իսկ քեզի, ով երանելի Յովհաննէս, ինչ » խօսքերով կրնամ անՀատամ պատկ մը հիւսել, » կամ հիւսածս դնել, յանդգնելով գովել զքեզ՝ » յեռ եղնելուդ յատկացրիզ այս կենացս. վասն » զի անցար սգաւեցար գու մերկաց վճանդնե» րէն: Արդեօք այն մովսիսական ծաղկանց պըսակն հիւսեմ՝ որով պսակեց նա օրհնելուն ա-

» ասեն զԺրագործն Յովսէփ և զաստուածծարեալ
» քաֆանային Վևէ. վասն զի երկուքն այլ կոա
» սեանեա՛ի քեզ: Յօրհնութեան Տեառն երկիր
» քո. ՚ի ժամանակաց երկնից և ՚ի ցօղոյ, և յան-
» ընդոց աղբերաց ՚ի ներքուստ. ՚ի ժամանակի
» արդեանց արեգական փոփոխմանց, և ՚ի գա-
» մարելոյ աւուրս միաբանս ամսոց. ՚ի գագաթանց
» լերանց խակզբան և ՚ի գլխոց բլրոց մշանջենա-
» ւորաց... եկեսցեն ՚ի վերայ գլխոյ (Յովհան-
» նու) և ՚ի վերայ գագաթան փառաւորելոյն ՚ի
» մէջ եղբարց: Անդրանիկ ցլոյ գեղ նորա, և եղ-
» ջիւրք միեղջերոյ եղջիւրք նորա. խեթիկեսցէ նո-
» քօք զազգս միանգամայն՝ մինչև ՚ի ծագս երկ-
» րի: — Տուք (Յովհաննու) գլայանութիւն նո-
» րա, և գձիմարութիւն նորա՝ առնն անարա-
» ւիւ, զոր փորձեցին փորձանօք և բամբասեցին
» զնա ՚ի վերայ ջրոյն հակառակութեան. որ ա-
» կեր ցհայր իւր և ցմայր իւր՝ թէ ոչ տեսի զք-
» քեզ. և զեղբարս իւր ոչ ծանեաւ, և զոր-
» դիս իւր ոչ գիտաց: Զգուշացաւ բանից քոց
» և զուխտ քո պահեաց: Պատմեսցեն զիրաւունս
» քո Յակովբայ, և զօրէնս քո Իսրայելի. դիցեն
» խունկս ՚ի բարկութեան քումմ հանապազ ՚ի վե-
» րայ սեղանոյ քո: Օրհնեա՛, Տէր, զզօրութիւն
» նորա, և ընկալ զգործ ձեռաց նորա. խորտա-
» կեա զմէջս ՚ի վերայ յարուցելոց Թշնամեաց նո-
» ր. և սատեկցեն նորա մի կանգնեսցին»: Իսկ ես
» սաւետանեմ զայս այլ, թէ «Ողջ սիրեն զնա, Տէր
» Ցեսուա, մի ամաչեսցեն. զի քո է կարողութիւն
» յաւիտեանս. ամէն[1]»:

Հապա մենք, Հայկակ, լաւ՞նք հոս, թէ գառ-
նա՞նք արտասուագին աչք մը տանք քեզի այլ, ով

1 Այս խօսքերս են Պալլադիոսի ՚ի վերջ պատմութեան վարուցն Ոսկիբերանի:

10477396

ապէրան քան ապէրախտ քաղաք Կոստանդիա-
նոս. որ քարկոծէիր և հալածէիր զառաքեալն
առ քեզ ՚ի Տեառնէ, զԱստուածաբանս և զՈսկէ-
բերան. որ ոչ կամեցար, կամ թէ ոչ կամեցան՝
ժողովել զմանկունս քո՝ որպէս ձագս հաւուց ընդ
թեւովք այսպիսի հարց. ահա թողեալ լիցի եկե-
ղեցի քո աւերակ տխրտրակ, մինչև ասիցես վասն
հովուին քո Յովհաննու՝ օրհնեա՛լ եկեալն յանուն
Տեառն:...

Անհնար է նկարագրել Ոսկիբերանի մահուան ազդեցութիւնն այն մեծ քաղքին և բոլոր թե-
մին, բոլոր եկեղեցւոյ մէջ. — հաւատարմաց սըր-
տաբեկութիւնը, Ոչնմարհատեանց ուրախու-
թիւնը, բաժանեալ կողմանց այլ ափշութիւնը. բարե-
րաց արտասուախառն յերկինս նայիլը, ձախա-
կողմեանց սէրեւս ակնկորութիւնը. ոմանց հան-
դարտ և այլոց ալէկոծեալ խիղճը. և մանաւանդ
ասոնց մէջ ամենէն աւելի պատասխանատու կամ
պարտական եղող՝ Արկադիոս կայսեր տագնապը.
որ և արտահար ըլլածին և սեպածին վրայ, թէ-
պէտ չանաց քիչ մը դարման ընել, բայց յետ
քանի մ՚ամաց դեռ միչտ հասակին մէջ եչաւ ՚ի
գերեզման. կենդանութեան ատեն սեանեալով՝ հա-
լածելոց արքոյն հակառակորդաց չատին տարաժամ
և դժնդակ մահերը, ինչպէս ոմանցն առաջ յիչե-
ցինք. և ոմանք այլ անոնցմէ աւելի չարաչար ցա-
ւերով, խելայեղութեամբ, բերաննին խեղա-
թիւրելով, շրթունքնին օրդնուածելով, ջղգոլոր-
թեամբ, համրութեամբ, և այլ պէսպէս ցաւալի
կերպով մեռան: Մնացեալներէն չատն ամքեցան,
ձայներնին քաշեցին, ոմանք ՚ի կեանս և ոմանք
մեռնելու ատեն զղջացին. ինչպէս ամենուն պա-
տգլուին Թէոփիլոս պատրիարքին, որ չկրցաւ,
կ՚ըսեն, վերջին շունչը առնլ՝ մինչ ան որ յերկինց
քաւիչ և օգնական չկանչեց իր վրէժխնդրութե-

10477396

սուրբ գոհը: Զատունք տեանելով խորապէտն Աստուածիկոս՝ Ալշակայ պէս ապօրէն յաջորդ աթոռոյն Կ.Պօլսի, (որ և ամաչելով խոտաւանիմ՝ որ ազգաս Հայ կ'լսուի՝ ի Սեբաստիոյ քաղաքէ)[1], աւելի Հարսիկ քան գիտուն, վերջապէս լեզուն նաև սիրան այլ փոխեց. հրամմեց որ իր վարդապետին անուն այլ խառնեն յեկեղեցիս՝ Ս. Հայրապետից հետ, և ինքն այլ իբրև սուրբ և Ոսկիբերան հաչակէր զնա, և գրէր խակ առ մեզ Ս. Սահակ, օրպէս տեսանք՝ ի սկզբան: Աւավ ակսան Յովհաննիսեանք և հակառակողք՝ իրարու մօտենալ. բայց դեռ կատարեալ միութիւն չեզաւ, որովհետև յետ Աստիկոսի ուրիշ բռնաբարողք և ոչ արժանավայելք՝ յաջորդեցին. մինչև յետ եբեսուն տմայ նստաւ երանելին Պրոկլ (434), աշակերտ և ունկնդիր մեծի Հայրապետին. բայց դեռ դեռ չվերցաւ Կ.Պօլսի եկեղեցւոյ սև քօղն, և ոչ արհաւիրք քաղաքին յերեսաց Աստուծոյ. և դեռ կու դուլար կու դլրդէր գերեզմանն եւ դաքսեայ:...

« Երեսուն և մէկ տարի յետ վախճանի Սրբոյն՝
» յանարդ աքտրանս Պոնտոսի, կ'ըսէ խտալացի
» վարդապետ մը[2], եպիսկոպոսն Պրոկլոս Կ.Պօլ-
» սի մէջ ներքոտ մը խօսելով՝ ի պատիւ սրբոյն,
» անանկ կենդանի կերպով նկարագրեց անոր ար-
» դիւնքը, անանկ արժանաւորապէս բարձրա-
» ցուց անոր առաքինութիւնները, որ բոլոր ժո-
» ղովուրդն չդիմանալով՝ սկսաւ կանչել որ բեր-
» րեն Հայրապետը: Ան տեն Պրոկլ՝ գրպը-
» ռեալ ժողովրդեան երեսփոխան ըլլալով, դար-
» ձաւ առ կայսրն Թէոդոս (Փոքր) որ հոն ներ-
» կայ էր, և յորդորեց որ կատարէ այս օրինա-

1 Ըստ Գէորգայ Երուսաղեմացւոյ:
2 Չ. Պ. Սկնիերի:

10477396

» Ւոր փախաքը, և ձեռք ձգէ այն անգին գանձըս
» կայսրն՝ որ արդէն մեծապէս փափաքէր այս
» բանիս, այս ձայներէս աւելի բորբոքեալ, մէկէն
» հրաման տուաւ որ նաւերակք պատրաստուին՝
» և երթան քեզնեն՝ ի Կոմանայէ՝ ի Կ.Պօլիս՝ փա-
» փագելի մարմինը: Ծերակուտէն պատուաւոր
» անձինք ընտրուեցան՝ ի նաւերակութիւն, զի-
» նուորք՝ ի պահպանութիւն, պալատականք յըն-
» կերակցութիւն, ճարտարապետք՝ ի գործավա-
» րութիւն, և կառք՝ ի յուղարկաւորութիւն:
» Բայց երբ ծանան՝ ի Կոմանիա, և ուզէին
» այն պատուական աւանդը վերցընել իր տեղէն,
» անշարժ և անկամ գտան զանիկայ: Ի զուր հա-
» զար ձեռք զարկին, հազար նիպ գրին քարը շար-
» ժելու, անկարելի եղաւ. ամբէնալով սրտա-
» կուռ պրեցին առ ինքնակալն՝ թէ Յովհաննէս
» չուզեր դառնալ գալ: Թէոդոս այս լսելով առա-
» կաց, ափշեցաւ, խռովեցաւ. վերջը ուշաբերե-
« լով և գերապոյն մատծութեամբ մը Թուղթ գրէչ
» ուզեց, և՝ ի ծունկ ընկած՝ իր ձեռօք երկայն
» աղերսագիր մը գրեց առ տուրքն՝ որպէս թէ
» կենդանի ըլլար, յորդորելով և ապաչելով որ
» հաւանի դառնալու իր աթոռը: Ստորագրեց ա-
» նունը, ծալեց, կնքեց Թուղթը և յանձնեց
» քաջընթաց տուրհանդակի մը:
» Կրնայ գուշակուիլ թէ ի՞նչ զարմանք եկաւ
» ծերակուտին՝ երբ արքունի հրովարտակն առ-
» նըլով՝ տեսան վրան այս անկարծելի հասցէն,
» Ա՛ս հոգնոր հայրն հոգւոյ և փիլիսոփայ վարդապետն
» Յովհաննէս Ոսկեբերան: Շուտ մը գացին՝ ի գերեզ-
» մանն. և մինչդեռ ոմանք ջերմեռանդութեամբ
» չորս գին կենային, ոմանք անուշահոտ բուր-
» վառնելով, ուրիշներն այլ պայծառափայլ ջա-
» հերով, ծերունեաց գլխաւորն առաջ անցաւ, և
» պատկառանօք պարզնելով նամակը, Ա՛յս գիրս,

10477396

» ըսաւ, կու խաւրէ հայրուԹեանդ՝ քու ծա-
» ոայդ և իմ տէրս Թէոդոս: Եւ իբրև Թէ հրա-
» ման առնըլով՝ կարդաց անոր. յետոյ այնպէս
» բաց ԹուղԹը՝ կուրծքին վրայ դնելով՝ ընկաւ՛ի
» ծունկ, և սկսաւ ուրիշներու հետ աղաչել, որ
» իր մեծահոգի բարեսիրուԹեամբն յանձն առ-
» նու աղաչողաց խոնարհուԹիւնը: Կարծես Թէ
» սրբոյն դէմքն այլ պարզելով՝ սիրտ տուին ա-
» նոնց, որք երբ նորէն ձեռք զարկին հանելու՝
» անանկ դիւրաշարժ գտան, որ մէկէն ուրախու-
» Թեամբ պատրաստուեցան Ճամբայ ելնելու:
» Երկայն կ'ըլլար պատմելն Թէ ինչ չքեղ զար-
» դուք, ինչ չերմեռանդուԹեամբ և ինչ խուռն
» բազմուԹեամբ ժողովրդեան՝ մեծայարգի քա-
» հանայից ուսոց վրայ դրած՝ բերին մինչև՛ի
» Փաղկեդոն: Հոն հասեր կու տպատեր ինքնա-
» կալն ամբողջ տոլմլաւ մեծ ու պզտիկ և պայ-
» ծառ զարդարած նաւերու. և իր պարտգլուխ
» փառազարդ նաւուն առաջ անցնելով, Է՛ծունր
» իջած ընդունեցաւ հոն սրբազան աւանդը. և
» Է՛ն հնչել ուրախաձայն փողոց և քնարաց, Թըմբ-
» կաց և տաւղաց՝ նշան տուաւ որ մէկէն դէպ՛ի
» Կ.Պօլիս դարձընեն նաւերը: Թողունք հիմայ
» որ ինքնին ծունկ պատմէ, Թէ տեսաւ եր երբէք
» ատոր նման գեղեցիկ յաղԹանակ: Ամեն կողմի
» ծովեզերքն մինչև հեռաւոր սահմանները՝ փայլ
» փայլ ցոլոյին ջահերով և լապտերներով. եր-
» կինք հանդարտ ծիծաղէր, աշխ խաղաղ ծածա-
» նէին. և հազիւ հեզիկ զեփիւռներ անուշիկ մը
» ջուերուն զարնելով Թևերնին՝ կարծես Թէ կ'ու-
» զէին նուագաց հնչման հետ ներդաշնակել ա-
» նոց մրմունջը: Ամեն նաւ ոսկիով կու շողշո-
» ղար, ամեն տեղագաստ ծաղկով պսակած էր, և
» ամեն ցուռկք նաւուց՝ բոցով նշանաւորեալ:
» Առջևէն հսատրակ նաւերն կ'երԹային, յետոյ


» ամենաւականացն, և ամենուն եաւէն՝ ծովատե-
» տականն, որ և ամենէն աւելի աչքի կու զար-
» նէր թէ ահեղ մեծութեամբն, թէ պայծառու-
» թեամբ լուսաւորութեանն, և թէ պճնապա-
» ճոյճ զարդարանօքն:

» Գրեթէ նաւահանգստին մօտերը էին, երբ
» յանկարծ մէկ վայրկեանի մէջ երկինք մրրկելով
» և ծով խառնվելով անանկ ահաւոր փոթորիկ մը
» վրնաւ, որ առագաստները պատռտեցուց,
» կայմերը կոտրտելով՝ ցնորքին ըրաւ նաւա-
» տրմիլը: Ո՛հ, ինչպէս յանկարծակի գոհաբա-
» նական աղմոնքերն՝ փոխուեցան ի հառաչանս
» զարհուրանաց: Մէկն կու վախեր թէ հիմայ
» պիտի խղդուի, մէկայլն ընկերին կեանց վայ
» կու դոլար, և աւելի շատերն կու վախէին կոր-
» ընչնելու այն սրբազան աւանդը. որպէս Ջէ
» ծովէն՝ որ և զայրացած զգուած դուրս կու
» ժայթքէ ուրիշ դիակները, այս մարմնոյս ա-
» վեալ և կարօտ ըլլայ: Բայց ամեն վախ և կաս-
» կած փարատեցաւ՝ երբոր տեսան որ ինքնին
» տուրքն այս մրրիկը հաներ էր. որպէս զի այս
» փոխադրութեան առեներ գայ բարեւելու այն
» նշանաւոր Ա յրեոյ այգին[1], որոյ համար այնչափ
» առասպանք քաշեց: Հազիւ Ջէ ծովատեաս-
» կան նաւն հասաւ այն կողմն ծովեզերքին, մէ-
» կէն օդն հանդարտեցաւ, հովերն լռեցին, ալիքն
» խաղաղացան, և բոլոր նաւախուռնքն մեկտեղ-
» լով՝ ուրախութեամբ հասան ի կայսերական
» քաղաքն:

» Հոս այլ նոր հանդէսք, նոր զարմանք սկսան.

1 Եւդոքսիա անիրաւութեամբ յափշտակեր էր այս այգին այրի կնկէ մը. անոր համար Ոսկիբերան յանդիմանեց զԹադուհին. և նա ոխացաւ ու հալածել տուաւ զառաքեալն:

10477396



ԼԵՒՈՆ (Զ) ՎԵՐՋԻՆ

» ձիաւորք, զինաւորք, քահանայք, ամենքն Թա-
» վեցան ամանց վրայ, և մեծ Թափօր մը կազմե-
» ցին մինչև յեկեղեցին Առաքելոց. որոց եաւէն
» իբրև յալԹանակաւ՝ կայսերական կառաց վրայ
» կու գար տուրքս մարմինն: Իսկ ինչպիսի հեռաւորք
» կարծէք այսպիսի շքեղ յուղարկաւորուԹե. —
» Համեմք, որոց լեզուն կու բացուի. խումք՝ որ
» ձայն կու լսեն. կապք, որ'ի վազ կ'ելնեն. կոյք՝
» որ լոյս առնեն. հիւանդք՝ որ կ'առողջանան. և
» ասոնց հետ մեկտեղ անանկ հեղեղ մը ժողովըր-
» դեան՝ որ հազիւ կու տղմի Կ.Պօլսի մէջ: Ոչ ոք
» այն օր հետաքրքրուԹիւն ունեցաւ նայելու՝ ոչ
» յալԹանակի կամարաց վրայ, որ ամեն փողոցի
» մէջ կանգնած էին, ոչ պանծալի արձանագրու-
» Թեանց վրայ՝ որ ամեն պատի վրայ կախուած
» էին, և ոչ ամեն պատուհանէ անձրևի նման Թա-
» փուած ծաղկանց վրայ: Ամենքն իրար հրելով՝
» կու ջանային մտնել 'ի տուրքս տաճարը. ուր
» հանգչեցնելով պատուելի աւանդը, պատրիար-
» քըն բացաւ անտուկը՝ որ ցուցընէ ժողովրդեան
» զՏուրքն:

» Անկարելի եղաւ հոս գտրովալից ժողովրդեան
» բերանը գոնել՝ զայն տեսանելնուն. ամենքն միա-
» միտ միաբերան աղաղակեցին, «ՑաՀոդ հրամ-
» մէ, տուրք Հայրապետա, նաեւ քու աՀոդ»:
» Պաշտօնեայքն պատկառանօք առին տարին հոն
» տեղաւորելու. և ահա տուրքն 'ի տես ամենե-
» ցուն մեռած շրԹունքը բանալով, և յստակ,
» պայծառ ու վսեմական ձայնով մը՝ արտասա-
» նեց, խաղաղութիւն ունենդուն: Որոտմունք աղա-
» ղակի հնչեցին այս ձայնին, կրկնապատկեցան
» լացք և արտասունք. կայսրն Թէոդոս 'ի ծունկ
» ընկած՝ յոտս իր սրբազան (կնքա)հօրը՝ էր
» դադրեր արցունքով Թրջելէն, և ատկ ատկ
» պագնելէն, մինչև գրեԹէ հարկ եղաւ քանի վեր-

10477396

» ցընեալ զայն առջևէն, և գնեալ հոյակապ չէրմի
» մը մէջ ՚ի նեղքոյ խուրանին »:

Ա յս երկայն ծնրադրութեան առեն ալաչէց և խնդրեց Թէոդոս իւր մօր՝ Եւդոքսիայ՝ անգիտութեան և անխրատուութեան Թողութիւն. և « յորժամ խոնարհեցոյց որդին նորա զգլուխն ՚ի վե-
» րայ լանջից սրբոյն ՚ի պաղատանս, ընդ կատա-
» րուածն ալօթիցն և գադարեաց շարժուածն (գե-
» րեզմանին Եւդոքսիայ), և ամենեքեան փառա-
» ւորեցին զԱստուած [1] »: Անկէց առեալ մեծ պա-
պարուածն և խաղաղութիւն եղաւ ընդհանակերը արտից. վասն զի « միաբանեցան ամենայն եպիս-
» կոպոսունք և ժողովուրդք՝ որք հերձան ՚ի մի-
» ւանց վասն անիրաւ ընկճման և աքսորանաց
» Ոսկիբերանին [2] »:

Ա յս մեծահանդէս և մեծայիշատակ գործն ե-ղաւ յամին 438 ՚ի 27 աւուր յունուարի. անոր համար փոխանակ մահուն օրուան (14 սեպտ.) այս օրս հաստատեցաւ ոն յիշատակի Խաչին եկեղեցւոյ, յորում իւր աւուրք մարմինն պար-ձաւ և հանգեաւ իւր հայրապետական եկեղեցւոյն մէջ. և ամենայն ազգք քրիստոնէից այս օրս նչա-նեցին իրենց Յայսմաւուրցց մէջ՝ հաստատուն և մեծապոյն օր յիշատակի և փառաց Ոսկիբերանի:

ԻԵ

Ա յն երջանիկ և բուն օրն պարձման մարմնոյն յաթոռն, Կ.Պօլսի համաշխարհական հանդիսին և մեծ եկեղեցւոյն մէջ՝ ընդ բազմաթիւ մերձա-ւոր գեաց, որք անտարակոյս կային հոն, հաւանօրէն պատուած են և ոմանք ՚ի Թարգմանչաց մերոց, որք ուսմունքին կամ գործերուին աւարտած՝ պատ-

1 Գերեզ: 2 Յայսմաւուրք:

10477396

նալու վրայ էին առ Ս. Սահակ և Մեսրովպ. Թե՛ եւս լրենցմէ ոմանք ասով աւելի վառեցան այն սիեվերական և լրենց գրացի և հիւր վարդապետին պրուաձնելը՝ որչափ որ գանէին կամ կարենային՝ Թարգմանելու հայերէն, ինչպէս ուրիշ Ս. Հայց այլ: Ախնչափ հաւանելի կ՚երևի ինծի այս բանս, որչափ որ Ոսկիբերանի գործոց հայերէն Թարգմանութիւնքն գերագոյն են քան զայլ շատ Թարգմանութիւնս. և գրեթէ անկարելի էր սանկ ըլլալն՝ առանց մանաւանդ կամ կարգի դասս ներշնչութիւն մ՚ունենալու. և այս եղած է՝ կամ վերոյդրեալ հանգէսը տեսնելով, կամ լսելով յականատեսից սրբոյն ըրածնները և կրածները՝ ի նոյն իսկ լրենց աշխարհին մէջ (՚ի Փոքր Հայս), և կամ անոնցմէ ոմանց (գոնէ երկցագունից և լրենց վարդապետաց՝ Սահակայ և Մեսրովպայ), անձամբ այլ տեսած ըլլալուն՝ զնա կամ իսօսած կամ Թղթակից եղած:

Կ՚արժէր շատ բան զրուցել, այս ոսկիբերանեան գրոց ոսկիական Հայ Թարգմանութեան վերայ, բայց այս չափս բաւական ըլլայ ըսելն՝ Թէ գրոցն արժանի է Թարգմանութիւնն. եկեղեցւոյ Իօսնակին արժանաւոր լեզու մը տուեր է Հայկազնն՝ իր սեփականին մէջ. Թերևս եթէ Հայ ըլլար՝ քան զայս լաւ չկարենար հայկաբանել Յովհաննէս. Թերևս և ոչ իսկ իր բնիկ յունաբանութեամբն՝ առաւելու քան զՀայ Թարգմանութին. և Թերևս Թերևս տեղ տեղ Հայ Թարգմանն գերապանցէ քան զյոյն բնագիրն. և յանդգնիմ ըսելու՝ Թէ Իօսնակն եկեղեցւոյ երբեմն աւելի վեհագոյն և պերճախօս Ոսկիբերան է այս Հայկաբանութեամբ՝ քան ուրիշ որ և է լեզուով, նաև իր բնիկ հելլենականաւն: — Անշուշտ մեծ պարծանք է այս այն ազգին՝ որ օտար ըլլալով կրցեր է Ոսկիբերանին հնորհքն աւելի մեծցնել, և փայ-

10477396

լուն ոսկին կրցեր է բարակ բանուածքներով ա-
ւելի ազնուացընել:

Ասով այս այլ յայտ է՝ թէ որչափ մեր հայերէն գրականութիւնն փառք և վայելք ստացեր է. զոր և առատապէս կրնան վայելել բանասէրք և հո-գեսէրք՝ Ոսկեբերանի հայերէն տպագրութեամբ հրատարակեալ գրովք [1]. որոցմէ դուրս գտուին ուրիշ գրուածքն այլ. և որոց մէջ մեզի համար ամենէն նշանաւոր և յիշատակաց արժանին է Մէինուրէան Եսայեայ մարգարէի, ընտիր Թարգմանութեամբ: Այնչափ պատուական է այս գործս, որչափ որ հիմայ յոյն բնագիրն ամբողջ չկգտուիր, այլ մինչև յոթերորդ գլուխն. և կ'երևի թէ մինչև հոս նախ գրեր էր Սուրբն և գադրեցուցեր, յետոյ (գուցէ յաքսորեանն) միացեալն այլասեր-սեր է: Մեր Թարգմանիչն՝ առաջին մասը գտեր է նոյն ինքն Ս. Հեղինակին համբուրելի մատամբքն գրեալ, ինչպէս և ծանուցուած է մեկ հնագիր օ-րինակի մէջ՝ որ իմ ձեռքս այլ հասեր է. «Մինչև » ցայս վայր գտաւ իւրով ձեռովք գրեալ երանե-» լոյն Յովհաննու յուներկն»: Այնուհետև անգամ մ՝ այլ պարտական պիտի ըլլայ հայկական դպրոց Թեանց՝ որոնք որ քաղդ ուներեան կամ այս հայե-րէն Թարգմանութիւնը կամ ասկից այլ ուրիշ լեզու Թարգմանածը կարդալ:

Ատոր հետ կրնամք յիշել նորէն զնեըբուղ Լու-սաւորչին, որ և նոյնպէս միայն հայերէն կայ և դեռ Թարգմանած չէ յայլլեզու: Եւ Թէպէտ շատ

1 Որք են 6 հատոր մեկնութեան նորա Մատթ. աւե-տարանին և Թղթոց Պօղոսի, և շատ ձառք: Դարձեալ 2 հատ. ձառք և ցաղագս քահանայութեան Գիրք նորա, նոր Թարգմանութիւն. ամենքն այլ տպագրեալք՝ ի Ս. Պազար 1818, 1826, 1861: — Մեկնութիւն Յովհ. աւետ. տպագրեալ՝ ի կ.Պօլիս:

ուրիշ գործեր այլ ումն Ոսկիբերան, որ կամ Թարգմանած չեն՝ ի մեր լեզու, կամ մեր ձեռքը չեն հասած, այլ եղածին և հասածին վայ այլ մեծապէս երախտապարտ եմք՝ Թէ Թարգմանչացն, (յորոց՝ անուամբ միայն Թէոդորոս ումն կի՛չի), և Թէ հրաշալի հեղինակին՝ որ այնքան պէս-պէս կերպով պատուեր է զՀայուԹիւն, սիրեր է մեր ազգը, զարդարեր մեր գպրուԹիւնը, և լուսաւորեր Հայաստանեայց եկեղեցին՝ յետ իւր յոչնականին. և երկուքին այլ հաւասար պարգևեր է անմահ և անմոռաց յիշատակ՝ զառաջին գիրք քրիստոնէուԹեան՝ յետ առաջին (Սուրբ) գրոց, զՊատարագամատոյցն, որով աստուածային գերագոյն հրաշ խորհուրդն կատարի՛ ի մեզ: Այո՛, մեր Ս. Հարց նախնեաց վաստակն այլ կայ այն սրբազան մատենին մէջ, քայց աղօԹից մեծագոյն մասն Ոսկիբերանի աստուածեւանդն սրտին բղխած է: Կրնամք ըսել Թէ հզօրագոյն շաղկապ Հայ և Յոյն եկեղեցւոյ և գպրուԹեանց՝ եղած է Ոսկիբերան:

Ոսկիբերանի սիրոյն, պատուոյն և բարեաց երախտապարտ Հայկազնն՝ գուցէ կրնայ և ինքն մեծանձնն այն երախտապարտ ըսուիլ՝ այս (մեր) ազգէն գտած ընդունելուԹեամբը, սիրոյն, պատուով և իր երկասիրուԹեանց հաւատարիմ և արԹուն պահպանուԹեամբ: Եւ ոչ միայն իր գրոց, այլ և իրեն վայ խօսուած գլուքերով, զորս Թարգմաներ են Հայք [1], և որոց վայ իրենք այլ աւելցուցեր են քանի մը գովասանական երգեր և յիշա-

1 Ինչպէս ընդարձակ վարք նորա գրեալ՝ ի Գէորգայ Երուսաղեմացւոյ և Թարգմանեալ՝ ի Գր. Վկայասիրէ, յամի 1102. լաւ քանադատուԹիւն չունի այս պատմիչս, և ոչ տակաւ սխալ: — Սոկրատայ պատմուԹենէն քաղուած վարք: — Պրոկլէ Ներբողեանն յՈսկիբերան. և այլն:

տակներ [1]։ — Իսկ իր արքունեան և երկնաւոր անմահութեան յիշատակին այլ ևս երամեռանդն մեծ ծարտղք ըլլային՝ յայտներ են և յայտնեն, ոչ միայն անուր աթոռական քաղքին (կ. Պօլսի) մէջ իւրեն նուիրած եկեղեցեօք, այլ և օտար կողմեր, և մանաւանդ այն տեղութիւնք՝ ուր իր վերջին կեանքն անցուց, 'ի սահմանս աշխարհին Մերոյ. Թէպէտ, ափսո՛ս, որ ինչպէս առաջ յիշեցի, այս կողմերս հիմայ քիչ ծանօթ ըլլալով՝ իրեն յիշատակարանն այլ կու ծածկուին [2]։

ԻԶ

Բայց չիկրնար և պէտք չէ բոլորովին անծանօթ և ծածուկ մնալ մեզմէ՝ գոնէ Ոսկիբերանի կենաց յետին յիշատակարանն, միանգամայն և յետին ա. ւանդն, զոր Թողուց 'ի ձեռս Հայոց.— իր մահուան և անմահութեան միջնորդ գերեզմանն։ — Երբոր Թէոդոս կայսեր իննդրանօք մարմինն փոխադրե. ցաւ 'ի մայրաքաղաք, բնակիչք Կոմանայ գժուա. րէին և հակառակէին Թողուլ իրենց հիւրը և ե. րազահաս օգնականը. և միայն Թագաւորական զօրաց վախէն՝ ետ կեցան, շտապելով արքոյն պատանքը իրենց մէջ բաժնելու, և անուր գերեզ. մանը իբրև աւանդապահք՝ պատուելու։ Հաւանա.

1 Ծանօթ երէք տուն ընտիր շարականն, «Որ յան. ակիզբն 'ի Հօրէ»։ — Գր. Անաւարզեցոյ այբբենական շա. րականն՝ որ իր շինածներուն մէջ ընտիրներէն մէկն է։ — Գանձ մի 'ի Գէորգայ. և ուրիշ գանձք և տաղք։ — Վարք Համառօտք։

2 Այս կողմերս՝ Հաճնայ արևմտակողմը՝ Սիհունէ և. զերքը, Ֆառաշ աւանին մէջ, ուխտատեղի մը կայ Ոսկի. բերանի, հիմայ 'ի ձեռս Յունաց։

10477396

կան է որ այն առեն այլ այս քաղքին քնակչաց մէկ մասն Հայ էր, և ձն գարուս մէջ աւելն այլ հայացաւ՝ եղբ գագիկ կարուց թագաւորն՝ փոխանակ իր երկրին՝ այս կոլմերս առաւ իրեն ժառանգութիւն: Հին և նոր գաղթականք մեր ազգինք՝ պատուեցին այս տեղոյս ամենէն սրբազան յիշատակարանը՝ հազար տարի. և երբ սահմուեցան հեռանալ՝ի կոմանայէ՝ քաղքին կոծանման պատճառաւ, (զորոյ որպէսը չեմ յիշեր), Ոակիբեերանի մարմնոյն տաճարացեալ տապանին այլ՝ առաքինի հաւատարմութեամբ[1] հեռերնին տարին: Ոակիբեերանի առաջին հանգրստարանն, որ և Ս. Բասիլեակոսի, կէս ժամու չափ հեռու է յաւերակաց կոմանայ քաղաքի, և մինչև հիմայ ցուցուի տեղն քարակոյտ: Իսկ նոր հանգստարանն՝ի գեօղն Պէձէռ, երկու ժամաւ հեռու՝ի կոմանայէ. հոս է վանքն Ս. Նշան, որ հիմայ կոչուի Ս. Ոակիբեեան. և գրեթէ նորէն չինեցաւ մեր առեն (1842), ու աւանդատանը մէջ ամփոփեցաւ սրբոյն անուամբ մատուռն. յորում կայ և իր գորշագոյն կաճեայ գերեզմանն քանդակազարդ կափարչաւն, ընդ հովանեաւ Ս. Նշան խորանին. ուր գան և ցոյնք յուխտ՝ բարի նախանձով, տեսանել իրենց հայրա-

1 Այս դիպուածս անշուշտ ծէ գարու առաջին կիսուն հանդիպած է, վասն զի դեռ՝ի կոմանա յիշուի յամի 1596, ՚ի Ստեփանոսէ Եւդոկիացւոյ, որ կ՚ըսէ.

« Մայրաքաղաքս այս Թօխաթի՝
Որ կոմանու խիստ է մօտի,
Ցորում տապանն է Յովհաննու
Ոակիբեերան վարդապետի »:

Իսկ յամին 1658 արդէն յիշատակուի տապանն՝ի Ս. Նշան վանս:

10477396

պետն իջուն իր վերջին օթևանին մէջ հիւրընկալեալ ՚ի Հայոց [1]:

Երանի՛ մերոնց՝ թէ կարենան միշտ այն սաւառնաձայն հովտին մէջ՝ (զոր երկուստեք պատեալով Իռխա և Գայլ գետք՝ մեծ կարկաջանօք վազեն գնան յարևմուտս՝ ընդ լերինս և առապարս՝ միանալ մեկմեկու, դառնալ ՚ի հիւսիս և թափիլ ՚ի Պոնտոս), պահել և պատուել այն նախանձելի հանգստարանը, ուր միայն Հանգչեցաւ լեզուաւ և մարմնով սատուածաշարժ Խօսնէն Եկեղեցւոյ: Երանի՛ մերոնց, թէ մեր նախնեաց պէս կարենան սիրոյք և սիրելիք ըլլալ Ոսկիբերանի: Եւ գարձեալ երանի՛, եթէ կարենան միշտ զգալ և ըսել իրենց մէկ հին տաղաւառացին հետ,

« Մենք Ոսկիբերան, ոչ սիրեցինք՝ ոչ յարգեցինք պիղծոյ ոսկին » [2]:

1 Փափագելի է որ վանապահք տեղւոյն մեզի աւելի ծանօթութիւն տան, և թէ կարելի է՝ զպատկերն իսկ գերեզմանի Ոսկիբերանին. զոր թէ և ոչ սակաւ Եւրոպացի ճամբորդք յիշեն՝ այլ ոչ ըսած մեր բաւականին:

2 Տես ՚ի Բազմավէպ 1864, երես 344:

10477396

ԺԹ

ԱՋԳԱՅԻՆ ՎԻՊԱՍՍԱՆՈՒԹԻՒՆ

Ա

Երբոր մարդիկ սփռեցան երկրիս վրայ՝ ամեն դի անտառներ, մացառներ, լճեր, առուներ, պետեր, ելուբներ, և անոնցմէ ալ դժուարին՝ գազաններ և սողուններ, գրեթէ իրենցմէ առաջ երկրիս տիրած՝ արգելք կ'ըլլային իրենց քաղաքակրթութեանը. պէտք էր որ մարդ յայլեթէ անոնց, խլէ, հալածէ, ջնջէ անհարկաւորը և վտանգաւորը երևցածները: Բայց այս բանս ընելու համար մեծ չափ աշխատութիւն, ուրչափ ջանք, ուրչափ կորովութիւն պէտք էր: Ոմանք առ դժուարութիւնները տեսնելով՝ թուլութեամբ և վատութեամբ ետ քաշուեցան, անասնոց պէս բնութեան բացած խորշերու մէջ բնակելով, իսկ քիչ բան քովերնէն յարմարցընելով. և անանկ անքաղաքակրթ ապրեցան շատ դարեր: Ոմանք ալ ասոնց ներհակ՝ ամենայն դժուարութիւն յանձն առած՝ բնութիւնը քաղաքական կեանց հնազանդեցուցին, երկիրս՝ մարդկան դիւրին և վայելուչ բնակարան ընել ջանացին: Բայց այս աշխատանքէն վեր՝ դժուարին և ցաւալի աշխատանք մ'ալ բա-

ցուեցաւ իրենց. չէ թէ միայն անշուշտ բնութեան
կամ անասնոց հետ կռուելու սոխպուեցան, հա-
պա նաև իրենց նմանեացը հետ, որ անասնի նման
կամ անհոգութեամբ կամ կատաղութեամբ՝ ըն-
տանի մարդկան կը վնասէին. երբեմն իրենք վի-
րենք պաշտպանելու հոգն, երբեմն փառասիրու-
թիւն կամ ախրասիրութիւնն հնարեց զէնքեր և
պատերազմներ. անոնք որ քաջութեամբ յաղթե-
ցին բնութեան, գազանաց, և իրենց նշնամի ը-
ստած նմանեացը, ըստեցան քաջ, արի, այր, հրա-
կայ, զև, դիւցազն և աստուածք. որոնցմէ առո-
րական եղածն է մեր մէջ Դիւցազն ըսելը: Այս
դիւցազունքանախ իրենք սկսան՝ ինչպէս որ հպար-
տութիւն կամ անձնասիրութիւնն կ'ազդէր՝ ի-
րենք զիրենք գովել, և ըրած մեծագործութիւն-
նին մեծաբանութեամբ զրուցել. վերջը իրենց
զարմացողները սկսան զիրենք գովել. այս գովեստ-
ներէն ալէկ զրուցածները եղան ապագային էրգեր,
որ վերջը մէկմէկու կպցընելով թէ որնոյն քաջին
և նմանեացը վրայ երգած էին, կամ բանաստեղ-
ծութեան արուեստը զարգանալով երկայն երգեր
շինելով ձևացան Վէպասանութիւնք, ինչպէս է Հո-
մերոսինը, Վիրգիլիոսին, և այլն: Այս երգերուն
արևմտեայք յունական բառով կ'ըսեն Էբոէք, և
մեր մէջ Դիւցազներգութիւն ըստեր է, դիւցա-
զանց վրայ երգելուն համար, անոր համար Դիւց-
ազնական երգ կամ Տալ ալ կ'ըսուի. կ'ըսուի
նաև Վիպասանութիւն՝ աւելի հարազատ Թարգ-
մանութիւն յունական Էպոյին, և գրեթէ հոմա-
նուն, որով մեր հին հայքն ալ իրենց երգչաց՝
Վիպասան կ'ըսեն եղեր:

Ամեն ազգ ալ որ հին քաջ մը կամ Դիւցազն
ունեցեր է, իր Վիպասանն ալ պիտի ունեցած
ըլլայ. եաւէի եկող քաջերուն ալ և անոնց ազգա-
կիցացն ալ սիրատուրը Վիպասաններ երգեր էին,

և ճն միշտ: Պատմութիւնն ամեն ազգաց վրայ տեղեկութիւն չի տար մեզի. բայց կը յիշէ որ Յոյնք վիպասաններ ունէին Տաճոպ ըսուած, որոնք իրենց անմահ Հոմերոսին ալ հայրն են. — արևելքի հին Թագաւորներն իրենց արքունեաց մէջ ունէին իրենց Գուսանները, կամ Հանդիսից առեն բերել կու տային, որ նախ քաջութեան երգիչք էին, վերջը մեղկացան, և արանց տեղ կանայք ալ մնան: — Եւրոպայի հիւսիսական ազգերն ունէին իրենց Սկալդ ըսուած վիպասանները, որ իրենց քաջերուն երգովը ցուրտ և մառախլապատ Սկանդինաւեան[1] աշխարհքները կը վխթարէին. — արևմտակողմանք ալ, հին Բրիտանիացիք և Գալղիացիք, ունէին իրենց մեծահամբաւ Բարդ կամ Պարդ վիպասանները, որ պատերազմի բանակներուն մէջ ալ կը մտնէին, և քաջերուն երգերովը նոր քաջեր կը պատրաստէին. ատոնք այնչափ անուանի եղան, որ շատ հեղ Եւրոպացիք բանաստեղծ ըսելու տեղ Բարդ կ'ըսեն, մինչ պէս որ մենք ալ իրենց պէս յունական բառէն առած Պոեետ կ'ըսեմք: — Ինչուան Ամերիկայի բերուն ծաղկած աշխարհքն ալ ուներ իր Վիպասանները:

Հապա հինն Հայաստան ունէր իր Վիպասանները, իր Բարդերը: — Թէ որ աս աշխարհքն է ամենայն աշխարհի մայր և դայեակ, Թէպէտ չեմք կրնար ըսել Թէ ամեն բանի ալ ինքն է օրինակ տուողը, բայց չեմք սխալիր ըսելու՝ որ առաջին երգերը Հայոց լեռներուն արձագանդներովը ձևացան: Թէպէտ և վիպասանութիւն մը մեզի հասած չէ ի նախնեաց, ոչ ամբողջ և ոչ մասամբ, սակայն Խորենացւոյն պատմութենէն և քանի մը ուրիշներէ կ'իմացուի որ Հայոց մէջ ալ շատ հնուց

[1] Շուետ, Նորվեկիա, Տանիմարկա, Իսլանտա:

մտած էին և շատ վիպասանութիւնները կայրին, և թէ Հայք շատ սիրող էին այս վիպասանութիւնները լսելու և երգելու. Թէպէտ և նոյն Խորենացին առել մը կը մեղադրէ մեր հին Թագաւորները՝ թէ բանաւոր երգարանաց անոտ էին, Թերևս գրով չթողլուն համար կ'ըսէ. վասն զի նաև իր պատմութիւններէն կ'երևի որ վիպասանական բանից սկիզբն Հայաստանի մէջ Հայկայ օրերուն պէս և աւելի հին է. վասն զի ինչպէս կը յիշէ [1], Աթէնքի իմաստնոց ժողովքին մէջ Ովմպիոդոր փիլիսոփայն կը պատմէր ընկերացը, թէ հին գիրք մը կայ եղեր առջի աստեներէն նոյի և իր որդոցը պատմութեան, և այս պատմութիւններուն գիպուածները, կ'ըսէ, հին Ասորեստայք ալ, այսինքն Հայերն, իրենց բամբիռն ըսուած նուագարանով և պարով կ'երգէին: Յայտնի է որ այն բաներն երգի վրայ առնուած էին հնուց, որ ռամիկ ժողովուրդն ալ աւանդութեամբ սովրած կ'երգէր առանց գիր ճանչնալու. և յիշատակեալ երգոց մէջ ամենէն հին սա է ըստ եղելոյն եառ:

Թէ որ այնպէս կանուխ լսեր էին Հայաստանի բլուրներն վիպասանութեանց ձայն, անկարելի էր որ Հայկայ արիական գործքերը առանելով լուռ կենային. առաջին ազգային վիպասանութիւն մը իրեն վրայ երգուած է այն առենուան անպաճոյճ պարզութեամբ. և այս բանիս ալ կը վկայէ Խորենացին [2], Թէ Մարիքասայ պատմութեան նման՝ Հայաստանի անգիր զբոսանքներուն մէջ ալ կ'ըսուէր Հայկայ Բաբելոնէն գառնալը, առաջին շինութիւնները, և այլն:

[1] Գիրք Ա. ջ:

[2] Գիրք Ա. ժ. Բ. Ը:

որով կ'իմացուի ալ թէ ամեն դիպուածներն ալ կը յիշատակուէին վիպասանութեանց մէջ, և առաւել գլխաւորը դիպուածն՝ որ է Բելայ սպանումը:

Այս օրինակէս չեմք խաբուիր թէ որ ըսենք թէ ամեն քաջ կամ դիւցազն՝նոր վիպասանութեան մը պատճառ կ'ըլլար, կարճ կամ երկայն: Այսպէս Հայկէն ետև Արամն է Հայոց մեծ դիւցազն. ասոր մեծամեծ գործքերը կ'աժէր որ դին գրքերու մէջ գտնուեր, կ'ըսէ Խորենացին. բայց թէպէտ և այն հին առեններըը գրող չեղաւ, ասկայն վիպասաններ գտնուեցան, որոնց երգածէն՝ կ'ըսէ Մարութաս՝ [1] .վերջը ամենայն ազգաց պատմութիւն գրողներն ժողովեցին. անկէց առին ֆաղդէացիք կամ Բաբելոնացիք ալ, և գրեցին Թագաւորական դիւաններուն մէջ, Ալէքսանդր յունարէն Թարգմանել տուաւ, Մարութաս ալ ասորերէն. անկէ ալ Խորենացին իր պատմութիւնը հիւսեց: Այսպէս Հայ վիպասանից երգածը հինգ վեց տեսակ գաղափարէ և լեզուէ անցնելով, գարձաւ իր քնիկ լեզուին և աշխարհին մէջ, և միայն հոն մնաց: Ո՞րչափ երախտագէտ պէտք է ըլլանք այն վիպասանից, որ աւանդեցին աշխարհիս՝ անանկ երևելի մարդու մը յիշատակ:

Արամէն ետև իր գեղեցիկ որդին կու գայ Արայ, որուն դիպուածը Թէ որ իր հօրը պէս փառաւոր ալ չէ, սակայն աւելի սրտաշարժ է և ողբական. Հայոց վիպասաններն անանկ սիրելի, առաքինի և ողբալի նահապետի մը յիշատակը լուծ Թեամբ չէին կրնար Թողուլ. և յիրաւի կը յիշէ Խորենացին [2] որ Արամայ դիպուածներուն պէս՝ նման Մարութասյ պատմութեան՝ ասոր հանդիպած բաներն ալ Հայոց զրոյցներուն մէջ կար.

1 Խոր. Գիրք Ա. ԺԴ: 2 Գիրք Ա. ԺՀ:

10477396

Թէպէտ Շամիրամայ գործոցը համար է զրուցածըն, բայց յայտնի է որ և առաջել Արային համար երգեր ալ կային. այն գեղեցիկ Արային՝ որուն սիրոյն համար՝ մեռնելէն վերջը բոլոր աշխարհքն ողբ եղաւ, և Շամիրամ հազիւ կրցաւ հանդարտեցընել հաւատացընելով թէ աստուածները ողջացուցին և երենց քովը առին զԱրա: Թովմա Արծրունին ալ Խորենացիէն գուցա ուրիշ առասպելներ ալ կը յիշէ Շամիրամայ և Արայի վրայ. Թերևս հին երգոց աւանդութիւնն ըլլայ:

Հայկայ և Արամայ ընկեր է հայկազնեանն Տիգրան. ասոր ըրած մեծ գիւցազնական գործքն էր. Մարաց տէրութիւնը վերցընելն, որ այն ատեն Ասիոյ ամենէն մեծ և ամենիշխան տէրութիւնն էր. ասոր վրայ շատ բաներ գրուեցան և երգուեցան. ինչպէս իւրեն քնաւորութեան համար ալ այն հին բամբասահար վիպասաններէն վկայուԹիւն կը բերէ Խորենացին [1], որոնց երգածը ամբողջ հազար տարիէն վերջը, այնչափ գժուարին դարերէ ալ անցնելով դեռ Խորենացւոյն առեն ալ Գողթնեաց աշխարհին կողմերը կը լսուէր: Ան հին վիպասանութեանց մնացորդներէն ասած կ'երևայ Խորենացին Տիգրանայ ընծայած գողարիկ անուններէն: Նոյն մնացորդները նոր վիպասանութեան մը պատճառ եղան շատ դարեր ետև, որ վերջը պիտի յիշենք:

Տիգրանայ յաջորդաց մէջ շատ անուանի եղաւ Վահագն, որ Յունաց Հերակլէսին նման գործքեր ըրած է կ'ըսէին, անոր համար ալ աստուածներու կարգ անցուցին մեռնելէ, և Հերակլի տեղ Վահագն կ'ըսէին, ինչպէս մեր տուրք Թարգմանիչք ալ այս սովորութիւնս պահեցին: Անոր վերայ երգածներէն ոմանք ինչուան Խորենացւոյն

1 Գիրք Ա. կա:

ականջին ալ հասան Գողթնեաց երկիրը, ինչպէս կը պատմէ ինքն [1], որ հին երգոց հետ հին բամբռանց ձայները ալ լսեց, և պատահիկ մ'ալ մեզի հասուց այն երգերէն. որ որչափ ալ փոխուած կարծուի երկայն ժամանակին միջոցով այնչափ չէ, վասն զի երգով ինչած է, որ շարունակու-Թեամբ կը պահուի և շատ չի փոխուիր. աւելի փոփոխութիւն ձեռագրաց պատճառաւը պիտի ըլլայ. բայց անոնց մէջ ալ քիչ տարբերութիւն գանելով, կրնանք հաւատալ թէ ասկէ իբրև 2300 տարի առաջ Հայոց վիպասան մը երգեր է այս կամ աւոր շատ նման.

« Երկնէր երկին և երկիր. երկնէր և ծիրանի ծով.
» Երկն 'ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն.
» Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
» Ընդ եղեգան փող բոց ելանէր.
» Եւ 'ի բոցոյն վազէր խարեաշ պատանեկիկ.
» Նա հուր հեր ունէր.
» Նա բոց ունէր մուրուս,
» Եւ աչկունքն էին արեգակունք »:

Ասիկա մեր գրականութեան ամենէն հին յիշատակարանն կրնայ սեպուիլ:

Վահագնէն եաև մինչև Արշակունեաց առեն չեմք կարծեր որ վիպասանութիւն մը շինուած ըլլայ. վասն զի Հայաստան Պարսից իշխանութեան տակ ընկաւ, վերջն ալ Մակեդոնացւոց և Սելևկիացւոց, Թէպէտ երբեմն ազատութիւն ալ գտաւ և առանձին Թագաւորներ ալ ունէր. բայց առջի փառքն ու շնորհքն չգտաւ ինչուան Վաղարշակայ օրը: Աւոր հետ նորէն զօրացան Հայոց բամբիռներն. ինչուան Ե Արտաշեսի օրը,

1 Գլուխ Ա. ԻԴ:

Խորենացին զանազան պատմական դիպուածներու վկայութիւն կը բերէ Հայոց երգերէ և զրոյցներէ. բայց կ'երևի թէ շատ առանձին կարճ երգեր և առասպել զրոյցներ էին. սակայն ինչ որ մակերես քաղաքին մէջ պատմուած առասպել բան մը Արծրունեաց վրայ [1]. Տրդքայ սոսկալի ուժին վրայ [2]. Սանատրկոյ անդեանը վրայ [3]. Երուանդայ ծննդեանը և աչքին ահել նայուածքին վրայ [4], և այլն:

Իսկ Արտաշիսի օրերը, որ երկայն խաղաղութեամբ ամենայն բարեկարգութիւն ծաղկեցուց, դիտութիւններն ու բանասիրական դպրութիւնն ալ ծաղկեցան, և առաւել բանաստեղծութիւնն. իրեն առեն չինուեցաւ մեծ և արուեստաւոր երկայն վիպասանութիւն մը, զոր Խորենացին ալ յատուկ վիպասանութիւն կ'անուանէ, և չինողներն ալ Վիպասան. որոնց մէկն էր անշուշտ նոյն իսկ Թագաւորին որդին Վրոյր, «իմաստուն և բանաստեղծ», որ հօրը արքունեացը վերակացու էր. Թերևս Համար Արծրունեաց իշխանն ալ ձեռք ունէր, վասն զի բանասէր մարդ էր և արքունեաց դիւանապետն էր: Այս վիպասանութեան մէջ կ'երգէին բոլոր Արտաշիսի գործքերը, Երուանդայ հետ ըրած պատերազմը, հօրը աթոռը նստիլը, Անոյշ հետ ըրած խնամութիւնը և Սաթեն օրիորդը կին առնուլը. ասոր հարանախօսութեանը համար կ'ըսէ Խորենացին [5]. «Զայս տեղի առասպելաբանելով վիպասանքն՝ յերգեն իւրեանց սահն.

«Հեծաւ արի արքայն Արտաշէս 'ի Սեաւըն գետզիկ,

1 Գիրք Բ. Է:
2 Գիրք Բ. Ը:
3 Գիրք Բ. ԼԶ.
4 Գիրք Բ. ԼԷ, ԽԲ. և այլն:
5 Գիրք Բ. Ծ:

10477396

» Եւ հանեալ զոսկիօզ շիկափոկ պարանն,
» Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,
» Եւ ձգեալ զոսկիօզ շիկափոկ պարանն՝
» Ընկէց ՚ի մէջք օրիորդին Ալանաց,
» Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
» Սրագ հատուցանելով ՚ի բանակն իւր »:

Ասյսպէս ասոնց հարսանեկան երգերէն ալ այս տողս կը բերէ.

« Տէղ ոսկի տէլայը ՚ի փեսայութեան Արտաշէսի,
» Տէղայը մարգարիտ ՚ի հարսնութեան Սաթինական »:

Նոյն վիպասանութիւնն կը պատմէր Արտաշէսի որդւոյն գործքերն ալ. Արտաւազդայ նախանձը՝ Արգամայ Մարաց նախարարին վրայ, ուր Մարաց ցեղին սկիզբն ալ կը պատմուէր. և Առաջին Տիգրանայ յաղթութիւնն Աժդահակայ վրայ, և ուրիշ դիպուածներ՝ այլաբանութեամբ. Արգամայ երած կոչունքը Արտաշէսի և բոլոր թագաւորական տանը. ուր կ՚ըսէր վիպասանութիւնն.

« Տեղայ Սաթինիկ տիկին տեղչան՝ զարտախոյր [1] խաւարտ և զոսկ հաւարծի՚ի բարձէյն Արգաւանայ ».

Հոն Արգամայ սպանութիւնն, և տանը այրիլն [2], և այլն, և այլն: Բայց աւելի կու պատմէր Սմբատայ Բիւրատեան քաջութիւնները, Ախրատքաջ անուանելով զնա [3]. Դամեսիանոս կայսեր հետ

1 Ուրիշ օր. զարտախոյր հաւասար խաւարտ... խաւարծէ:
2 Խոր. Գիրք Ա. Լ: Բ. Խթ, ԾԱ:
3 Գիրք Բ. ԾԲ:

Հայոց պատերազմը [1] և Սմբատայ ձեռքով յայլելքեն: Արտաշէսի հիւանդութեան և մահուան դիպուածներն ալ կ'երթէր վիպասանութիւնն. և կ'երևի թէ այն վիպասանութենէն առնուած է Մագիատրոսի յիշածն, թէ Արտաշէս Պարթև մեռած առեն՝ յիշելով կենաց և տարօրոյն գարուանը, երբ առաւօտուն լոյսը ցօղին հետ խառնած բարակ մուխի պէս գեղերու և քաղքներու վրայ կը տարածէր, ըսած ըլլայ.

« Ո՞տայր ինձ զծուխ ծխանի և զառաւօտն նաեւտրդի,
» Զվազելն եզանց և զվազելն հղջերուաց.
» Մեք փող հարուաք և Թմբկի հարկանէաք [2] »:

Մահուան առեն ալ զԱրտաւազդ անիծանելն ալ նոյն վիպասանութենէն կ'երևի. իբր թէ երբ Արտաւազդ առանելով որ շատերն Արտաշէսի սիրոյն իրենք զիրենք կը սպաննեն գերեզմանին վրայ, բողոքած ըլլայ.

« Մինչ դու գնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար.
» Ես աւերակացս ո՞րպէս Թագաւորեմ »:

Արտաշէս ալ պատասխանած ըլլայ.

« Դու յորս հեծցիս յազատ 'ի վեր 'ի Մասիս,
» Զ.քեզ կալցին քաջք, տարցին յազատ 'ի վեր 'ի Մասիս.
» Անդ կացցես և զլոյս մի տեսցես [3] »:

Արտաշեսին վերջը՝ Արտաւազդայ վրայ պատմած առասպելներն ալ այս վիպասանութեան մասն

1 Գիրք Բ. ԾԴ:
2 կարելի է թէ Ա Արտաշէսի զրուցածն ալ ըլլայ այս:
3 Խոր. Գիրք Բ. կԱ:

եղան. որուն համար կ'լսուէր հոն, թէ ծննդեան նը առեն

« Վիշապազունք գողցան զմանուկն Արտաւազդ,
և դև վոխանակ եդին »:

Այս վկայութենէս կարծուի Վարդգէսի վրայ հրգուածն ալ, որ Ա Տիգրանայ քեռայրն էր, Արտիմէդ քալտքին չինուածքին համար [1].

« Հատուած գնացեալ Վարդգէս մանուկ 'ի Տուհայց գաւառէն
« Ըզքաստալ գետով,
» եկեալ նստեալ զՇրէշ բլրով [2], զԱրտիմէդ քաղաքաւ,
» Ըզքաստալ գետով,
» կռեալ կոփեալ զդուռն երանդայ արքայի »:

Արդ ինչպէս կ'երևնայ այս հատուածներէն, Արտաշիսի առեն չինուած վիպասանութիւնն՝ իրեն որդւոց առեն ալ շարունակելով՝ Ֆիրտուսի Պարսից բանաստեղծին չինածին պէս Թագաւորական գործոց վիպասանութիւն մ'եղաւ. բայց յունական արուեստով՝ մէջը հիւսուած էին հին դիպուածները ալ: Այս բանիս ապացոյց մ'ալ կուտան մեզի հին և կորուսեալ ընդարձակ Հայոց պատմութեան մը մնացորդ կցկտուրքն, զոր Մաւիանոս Ռօշքեան իր բառագրոց մէջ ցրուած է. ուր ամենէն աւելի Մմբատայ վրայ վկայութիւններ կան, պատմութեան դիպուածոց մանր պարագայիւք, և յայտնի կ'ընեն, ինչպէս Խորենացւոյն պատմածներէն ալ կ'երևի, որ Մմբատան էր դիւցազնագոյն Հայոց վիպասանութեանը մէջ. և այն վիպասանութենէն հաներ էր պատմութեան հաւաքողն, և մեր պատմութեան ամեն մասերէն եր-

1 Խոր. Գիրք Բ. կե: 2 կամ Բերդս:

10477396

կայն Ե Արտաշէսի և իրեն որդւոյն Տիրանայ ժամանակները սաորագրեր էր. վասն զի այս Տիրանայ վրայ ալ շատ յիշատակութիւն կայ, և վեպերուէ ալ էր. վասն զի Արտաշէսէ վերջը՝ Արտաւազդ և ոչ երկու տարի Թագաւորեց, վերջը Տիրան նստաւ. որուն առեն քաջն Սմբատ Բիւրառեան՝ Թէպէտ և ծեր, բայց Հայ սպարապետի մը պէս ծեր՝ դեռ կարող էր պատերազմ մտնել և եղնել: Ուրիշ կորուսեալ պատմիչ մ'ալ կը յիշէ Սմբատայ պատերազմները Հռոմայեցւոց և ուրիշ ազգաց հետ. կը յիշուին իր մեծահանդէս հարտանիքն, մեծավայել ճոխութիւնն, երեքաինեայ մատանին, մականակիր երիտասարդ, սակաւիկ կառք քշելն, գեսպանութիւնն, նախարարաց պարգևները տալն, և այլն: Վրաց պատմութեան մէջ ալ կը յիշուին Սմբատայ գործքերն՝ այն աշխարհին մէջ: Աւել շատ անհատանելի էէ՝ Թէ Բուզանդայ յիշած Հայոց «Երգն առաւաքելաց վիպասանութեանն» ալ՝ այս վիպասանութիւնս ըլլայ:

Գ

Թողլով յիշելու մանր մունր և սամկական վէր և առինչ ըսուած երգերը, միայն քանի մ'ուրիշ վիպասանական քիչ ճանչցուած երգերն յիշենք. որոնցմէ մէկը Արտաշէսի, մէկն ալ Դարեհի մահուան վրայ եղերերգական երգեր են եղեր, ինչպէս կը յիշեն հին քերականի մեկնիչք, առանց իմացընելու Թէ ո՞ր Արտաշէսի և ո՞ր Դարեհին վրայ ըրուած էին. միայն այս յայտնի կ'երևի որ Ա և Ա Դարեհու մէջ ալ դեռ Հայաստան կը գտնուէին այս երգերս, և Թերևս դեռ գտուին, գուցէ վերյիշեալ Մագիստրոսէն բերած ալ Արտաշէսի գամբանականէն ըլլայ:

Ասոնցմէ դուրս կը յիշեն նոյն քերականք մէկ վիպասանուԹիւն մ'ալ, « Պատերազմն Հայոց և Մարաց » ըսուած, զոր Դաւիթ անուանով մէկը շինած է, ոմանք Դաւիթ ԱնյաղԹը կ'ըսեն, Ա Տիգրանայ վրայ. կ'երևի Թէ անոր վրայ շինած հին Հայկազանց վիպասանուԹեան կտորները գտեր, և անկէ շարժեալ՝ նոր տաղաչափուԹեամբ գրեր է իր վիպասանուԹիւնը. ինքը գտեր է, ինչպէս յայտնի կ'իմացընէն, Տիգրանուհւոյ մահուանը վրայ հին ատեն երգուած դամբանական երգը, և այն երգն ալ իրեն ոճովը խառներ է վիպասանուԹեանը մէջ. ուր կը յիշէ Թէ Փողարն, այս ինքն հին դամբանական երգիչն անանկ վարպետուԹեամբ կ'երգէր ողբը, որ Տիգրանայ արտէն անցածը՝ դուրս կը բացատրէր. յիշուած հատուածն այս է.

« Եւ արդ ներգործող 'ի միտս երևիւր առ խորհուրդս Փողարին,
» Մեծոգւոյ Տիգրանայ գեղանին Տիգրանուհի,
» Իւր ներգործեալ զկողաբաղն, նա և ողջամիտ աշխարհածուհի [1] »:

ԴաւԹի վիպասանուԹենէն կարծուի հետևեալ տողս ալ.

« Փոխատուելեցին 'ի Պարս՝ զՄարային ԹագաւորուԹիւնն »:

Թէ որ ոչ յատուկ վիպասանուԹիւն, գոնէ բարոյական վիպասանական քերԹուած պիտի ըլլայ Համամ վարդապետին յիշածներն ալ. « Որպէս » Կայէնին և ՍեԹայն կամ Ղամեքային, և Երիտասարդին հարեալ ընդ արդարն և ընդ առան »:

[1] Ուրիշ օր. Իւր ներգործեալ... Կողաբաղ... ողջամիտ աշխարհածուհի:

10477396

Հին Յունական Վիպասանութեան յիշատակութիւն մ'ալ կը գտնենք յետին գարուս գրուածոց մէջ, «Առաստելք Աբրամազդայ և Հերմեայ» ըսուած. որ կ'երևի թէ յունարէնէ թարգմանած հին քերդուած է, գուցէ թէ և Հոմերոսին մէկ մանը ըլլայ. բայց յայտնի է որ եղկային գրուածք էր. զի յիշողն՝ պղնձէ փողփին հաւասար կը յիշէ:— Իակ այս պղնձէ քաղաքս բարոյական վիպասանութիւն մ'է պարակերենէ թարգմանած:— Ոմանք պղնձէ քաղքին հետ կը յիշէ և Ընդնշահ վիպասանութիւնը. որ նոյնպէս կ'երևի պարակերենէ թարգմանած. զոր չեմ տեսած, բայց պղնձէ քաղաքին օրինակը շատ տեղ կը գտուի. սակայն երկուքն ալ դիցազնական վիպասանութիւններ գրուրս և վերջին տաեղի բաներ են:

Ասոնցմէ աւելի ռամկական վիպասանութեան մը պէս բան մը ալ Մխիթար Ապարանցւոյն ըսածն ալ Հայոց համար, թէ «Հեռևին » զանազան շարականաց և բարբանջաց, այսինքն » որ կոչի Կուզ և Կատու »:

Դ

Վերը յիշած Հայկական վիպասանութեանց պէս պէտք է որ ուրիշ շատ վիպասանութիւններ ալ երգուած ըլլան հին Հայաստանի մէջ. բայց մեր են հիմայ այնչափ երգերն. ինչ պատճառով բոլորն ալ կորան:— Մէկ պատճառն աս է որ գրով չէին գրուած տան, կամ քիչ օրինակ կար. հապա երգով ազգէ ազգ կ'անցընէին. անոր համար երգն խափանուած տեղն՝ բոլորն ալ խափանեցաւ: Իակ երկրորդ պատճառ թուի աս երգերուն ալ, ճնացած հեթանոսական գրուածներուն ալ խափանելն՝ Աուսաւորչի և Տրդատայ հրամանաւ, ազգին 'ի քրիստոնէութիւն դարձած տեղն.

որ ջըլլայ թէ նորէն հին կրօնքի և հին թոյլ սովո-
րութեանց դառնան. գիտնալով որ կրօնքի և սո-
վորութեանց մէջ Հայք շատ կամապաշտ են, եւթէ
ալ շատ կուշտ սիրեն: Իրաւ այս արգելքս մեր գրա-
կանութեան մեծ վնաս բերաւ, քայց առանց ա-
նոր՝ յամառ և անկիրթ ժողովրդեան կանոն դնել
չէր ըլլար. ինչպէս յայտնի կ'երևի անկէ ալ, որ
երբ Թուրքնայն հաւատքէ՝ մեկէն իրենց հին ա-
ւանդութիւնները կուշտ փնտռէին. ինչպէս որ ըրին
մեծին Ներսեսէ առաջ Տիրանայ աոեն. « Դեգե-
» րեալ մաշէին...'ի հնութիւն հեթանոսութեան
» սովորութեանց.. և զիւրեանց երգս առաստե-
» լոց զվիպասանութեան սիրեցեալք՝ 'ի փոյթ
» կրթութեանցն, և նմին հաւատացեալք և 'ինոյն
» հանապազորդեալք » [1]:

Սաանկ ալ յայլորդ դարուն մէջ երբոր Վաստակ կը ջանար քրիստոնէութիւնը վերցընել Հայաստանէն՝ դարձեալ մնացած հին երգերը դուրս հանել սկսաւ. « Ջաղցրացուցանէր ոմանց ըզ-
» կարգս երաժշտութեան և զերգս հեթանոսա-
» կանս [2] »: Թերևս այսպիսի հակառակաւեր հոգւոյ ջանքն աւելի պատճառ եղաւ որ այն մնացորդներէն ալ գտածնին ջնջեն Վարդանանք և Վահանդեանք: Իսկ Հայաստան՝ Պարսից վտանգէն անցնելէն ետև, ալ կրօնքին մէջ հաստատուեցաւ, վախ չկար վիպասանութիւններէն. քայց կուշտ կարծեմ որ ամբողջ գրած վիպասանութիւն մ'ալ չկար. վասն զի Պարսիկներն ալ չանացին Հայաստանի մէջ գտած գրքերնին ջնջել. սակայն որով հետև դեռ տեղ տեղ կը լսուէին անոնցմէ երգեր, մանաւանդ Գողթնեաց կողմը, ինչպէս Խորենացին կ'ըսէ քերած վկայութիւններս կուշտ վկայեն, կրնար Թարգմանչաց մէկն ժողովել հնուցմէ մնացածը

1 Բուզ. ԺԳ:

2 Եղիշ. Գ:

10477396

արքազան և թէ ազգային պատմութիւն աս կերպով գրեցին, թէպետև քիչ բանաստեղծական ազատութիւններով. այսպէս է նախ Մագիստրոսի Մէջ են գործ+ Աթոռոյ սկսած հազար տուն տանուտէր վիպասանութիւնն տոբբ Գրոց պատմութեան. Շնորհալւոյն վիպասանութիւնն Հայոց պատմութեան և Յիսուս Որդի անուանեալ հոգևոր եղերերգութիւնն, Ողբ+ Եդեսիոյ առման վրայ, ինչպէս և Գրիգորի Տղայոյ Ողբ+ Երուսաղէմի առման վրայ: Վահրամ վարդապետին Կիւրիկեցւոց պատմութիւն, Առաքել վարդապետին Ադամգիրքն, և մեր հայրապետաց պատմութիւններն, Յովաննէս վարդ վարքն, Սիմէոն Ապարանեցւոյն վիպասանութիւն Մամիկոնէից և Պահլաւունեաց ցեղերուն վրայ՝ Շնորհալւոյն ոճով: Այս եւթն հեղինակս կ'իմացընէ որ իր վիպասանութիւնն առած է Ղազարայ Փարպեցւոյն չինածէն նոյն բանին վրայ, և անոր չինածն ալ վիպասանութիւն կ'անուանէ. բայց գուցէ արձակ գրուածք ըլլայ իր մեկալ-ծանօթ պատմութեանը պէս:

Երրորդ կերպն է կարճ ազգային երգեր երեւելի մարդկանց և դիպուածոց վրայ, շատ տեսակ և եղանակի վրայ առած: Հին Հայք այս կերպս ալ շատ կուսակէին, և Թերևս Խորենացւոյն յիշածներէն ոմանք այս ցեղէս են: Այսպէս ալ Տըրդատայ վրայ կարճ ըսուածն.[1],

« Իբրև զհէգն Տրդատ, որ սկսալոյն աւերեաց զԹուխմէս գեաղց,
» Եւ ցամաքեցոյց իսկ՝ի սկզբ իւրում զյորձանս ծովուց »:

Այսպիսի երգեր զոր հին Հայք եղանակով և նուագարանով կ'երգէին, մեր հիմակուան ասմունք

1 Ագաթանգեղոս:

խաղ ըսուածներուն կը նմանէին, զոր երեկք ցոյց կամ շէր կ'անուանէին. և թէ քաղաքական, թէ ողբական, թէ արհամարհելու դիպուած հանդիպէր, վրան երգ մը յարմարցուցած կ'երգէին. ինչպէս ամեն ազգաց մէջ ալ կը գտուի ինչուան հիմայ: Մագիտոս իր առեներին համար ալ կ'ըսէ թէ հիմայ Հայոց մէջ սովրելի կայ քան ուրիշ մօտիկ ազգերու, որ ատանաւորի վրայ ալ առած կ'երգեն « արուեստաւորեալ 'ի գովս և 'ի պար- » սաւս ». Թէպէտև այս երգերէն շատը ռամկական կերպով զրուցուած էր, և երեսալով ալ սովելի ռամկացաւ: Յետին դարերու քերականի մեկնիչ մը այս քանս յիշելով և բացատրելով թէ ինչ է հին հագներգուհին՝ զոր Մագիտոս յիշէց, բացատրելու առեն ինքն ալ ռամկական բառնատեղծուհեամբ վառուած՝ կարծես ըսածին օրինակն ալ մեկտեղ կու տայ. զոր զուարճուհեան համար յիշենք. « Զոր և այժմ զահուսխանի [1] » մանչերն առնուն 'ի ձեռս իւրեանց երկու փայտ, » զոր չարփալայ առեն, և բախելով ընդ միմեանս » իբր

» Ծափս հարկանելով
» Եւ կոպաւեն յոլով,
» Եւ մանս առնեն պար գալով,
» Եւ ձօձեն ձեմելով,
» Եւ տաֆս [2] հարկանեն ծընծայքով,
» Եւ իսաղս իսաղան Թաւերով,
» Զանդաման չարժեն ինձերով,
» Աւաչս յօրինեն ձոխ երգով »:

Այս երկրորդ կերպով բայց ծանր ոճով նոր առեներ ալ գրուածքներ շատ կան, նաև երկրորդ կերպին մօտ կարճ վիպասանուհիւններ. բայց

1 Գահկէ-խաներ:
2 Թմբուկ. Թէֆ:

10477396

անոր երկայն և ծանր կերպովն ալ մեր օրերը ա-
ռաջին անգամ վիպասանութիւնները ընծայեց Վա-
հեցի կամ Վանանդեցի Տէր Յովհաննէսեան Մեր-
զայեան, Ոսկի գալ և Արծիւաւոյ կոչած վիպասա-
նութեամբք. որոնց եռաքինը կրնար առաջին կարգն
ալ անցնիլ, թէ որ հեղինակն ինչպէս ինքն ալ կը
խոստովանի՝ Ագաթանգեղոսին պատմական ոճը
բռնած և գրեթէ զնոյնը ոտանաւորի դարձու-
ցած չըլլար, տեղ տեղ համառօտելով և տեղ տեղ
բանաստեղծութեամբք զարդարելով: Առաջինն՝
որ հին քերդողաց մէջ առած եղած՝ ոսկեղէն գա-
րուն Հայաստանին մէջ ըլլալը կը ցուցընէ Հայ-
կէն ինչուան Արամ, նոյնպէս երկրորդ կերպի վի-
պասանութիւն է[1]:

Չ

Այս ցեղ գրուածոց և քերդուածոց մէջ կըր-
նամք սեպել կերպով մը մեր մատենագրաց քնար-
երգականքն ազգային յիշատակաց կամ անձանց
վրայ, որոց մեծ մասն եկեղեցւոյ նահատակաց
վրայ են, և կ'ըսուին Շարականք, և Գանձք և
Տաղք. ամենն այլ գրոց ծանր լեզուով և ոճով
իսկ բուն քաղաքական տեսութեամբ և ոգւով
գրուած երգք ազգայինք խիստ ցանցառ են մեր

1 Հեղինակն որ ինձիճեանին կը հետևի այս կարծեաց
և հնութեան նկարագրութեան մէջ, անոր գուշակու-
թիւնն ալ կատարել ուզած է գործքով. Հայաստանի
Հնախօսութեան Ա հատորին մէջ, երես 282 կ'ըսէ ինձի-
ճեան. « Ցայսմ հարիւրեամեան ժամանակի է Ո-ւն դարն,
» այնչափ հռչակեալ և գովեալ առնախնի բանաստեղծս.
» որ և յաւուրք միում նաև 'ի մերոց բանաստեղծից նկա-
» րագրեցի երգովք, իբրև զբնիկ բնակչաց մերոյ աշխար-
» հին »:

10477396

մատենագրութեան մէջ. այլ անոր սեղ ռամկա-
կան լեզուով գրուածք սակայ եւ բառական շատ
կու գտուին, սկսեալ գրեթէ յ'ԺԹ դարէ մինչեւ
հիմայ: Սոնց լեզուին շարադրուին ըստ գարուց
եւ տեղեաց մեծապէս կու զանազանի իրարմէ, ո-
րով եւ այլեայլ գաւառական լեզուօք գրուած
կըրնան ըսուիլ. բայց այս զանազանութիւնս սա-
կայն ՅԺ դարէն վերջը կ'երեւի. ինչուան այն սակն
գրուածքն գեռ Հայ լեզուին միութեան կերպ
մ'ունէին, միայն սպարսիկ կամ Թուրք բառերով
խառնուած են. իսկ անկէ ետեւ՝ ոչ միայն այլ ա-
սելի խառնուրդ կ'առնուն բառէց, այլ եւ դար-
ձուածոց կամ ոճոյ բանէց, եւ քերականական
կազմուածքնին շատ կու տարբերի: Կըրնամք ընդ-
հանուր երկուքի վերածել այս ռամկական կամ
գաւառական բարբառները, արեւելեան եւ արեւմը-
տեան Հայերէնին. առաջինը կու բանեցընեն Վրա-
հայք եւ Պարսկահայք, այսինքն Վրաց սահման-
ները, Երեւան, Ղարաբաղ՝ եւ անկէց ի Պարսս եւ
ի Հնդիկս անցնող Հայք. իսկ երկրորդը՝ բուն
Մեծ Հայաստանէն դուրս եղող Հայք, որ ի Փոքր
Հայս, ի Կիւպրիկիայ եւ ի գաղթականս Փոքր Ասիոյ
եւ Ռումելիի. կըրնամք այլ միջին ըսել Վանայ եւ
Մշոյ կողմերուն լեզուին, որ ըստ քերականին ա-
րեւմտեայց մօտ են, բայց սելի այլ մա-
քուր եւ յստակ. սոնց եւ արեւմտեայց այլ մի-
ջադաս կըրնան ըսուիլ բուն Մեծ Հայոց արեւմը-
տեան աշխարհաց բնիկքն, ինչպէս են Կարնեցիք,
Երզնկացիք եւ Խարբերդցիք:

Արեւելեան ըսած Հայ ռամկական երգիչք կամ
վիպասանք՝ նոր սեներս սելի յայտնուեցան
կամ հռչակուեցան, և ոմանց երգերն այլ հասա-
քուելով սպագրեցան ի բանասիրաց Ռուսաց
Հայոց. այս վիպասանք անցեալ կամ ներկայ դա-
րուս մէջ ծաղկած են, և սելի համբաւաւորքն են

10477396

Սայոպ (կամ Սայաթինով) և Աղբար Ադամ († 1844). գովութեամբ կու յիշուին և Աւետիքեցիք, ինչպէս ուշ՝ որք կոյր էին աչօք. բուն Զուլայեցոց մէջ կու յիշուին Էգաշ, Աբգուն, Բաղէշ-ուշէ, Գու Սարգիս Շուիկեանց, Ախթօշէ, Վանէն, Խու Յով հաննէս, Պէդրոս Զուլէցի, և այլն:

Իսկ Արևմտեան կոչածներս աւելի բազմաթիւ են, և ասոնց գրուածքն ձեռագիր երգարանաց մէջ կու գտուին. որոց մէջ կան շատ երգեր այլ առանց անուան հեղինակի: Հոս՝ առանց աւելոյ շատ խորութեան՝ յիշեմ ժամանակի կարգաւ այս ազգական լեզուով երգ գրողներէն ինծի ծանօթներըս, ոչ միայն երգը և երգոյն նիւթը դէ- տելով՝ այլ և ազգի կամ գաւառական լեզուն. և այս տեսութեամբ ամենէն հին և առաջին կըր- նամք սեպել ծ. գարուն մէջ մեր անմահ Շնորհալի կաթուղիկոսը, որ զանազան ոճով գրուածոց մէջ Թողուց նաև ազգական կամ այն առեղծ աչխար- հաբար ոճով Հանելուներ. ասոնցմէ հին այնպիսի բարբառով գրուած ոտանաւոր չեմ ճանչնար: Այս լեզուին և գրուածքին հետևած Հանելուները գրած է և Տէրտերոս վարդապետ մը ծ. գարու մէջ. որուն գարակից ազգօրէն երգագիրք են ա- նուանի Կէլատեցին Խալփուր, Կոսպանդին Երզնկա- ցին, և անանց մօտ Մինաս Դէրջանցի. իսկ քիչ մ'այլ հին ծ. գարուն վերջերը և ծ. դին սկիզբը մեր վեր- ջին ընտիր մատենագիրն, Յովհաննէս Երզնկացի, որ ոչնի գրեթէ աշխարհիկ բարբառով գրած իրա- տական երգեր ալ: Բայց մեր ազգախօս կամ ազգախառն վիպասանից և գուսանաց ամենէն ծանիկած ասեն ծէ և ծզ գարուց միջոց կ'երևի. առջինին մէջ և սկիզբներըս ծանիկեցան երկու Ա- ռաքել, Սիւնեաց արքեպիսկոպոսն՝ քուերորդին Գրիգորի Տաթևացոյ, և Բաղիշեցին կամ Պոետին, որոց գրուածքն երբեմն իրարու հետ կու շփո-

Թէն. սանց գլուածքն աւելի հոգևոր և իրատես կան են. Մինչեւ նաղաշ՝ Ամգայ արքեպիսկոպոսն՝ ու աւելի հանճարեղ և զգայուն է. այլ ամենէն աւելի բանաստեղծ և տաքսիրտ Յովհաննէս Թլկուրանցի, որ տաճեն մը սիրոյ և գովասանաց երգեր երգած է, տաեն մ'այլ Սոյ Կաթուղիկոս է եղած. – բարակ զգացման և ուղիղ մտաց տէր, նաև Ճարտար տաղաչափ պէսպէս վանկերով՝ նոյնանուն քերդող մը կայ՝ Ցէի, որդի Թադևոշի եպիսկոպոսի Դուռնոյի, որուն ժամանակին ոտշակի կայսր չէ, բայց այս (ժե) գարէս եռք այլ չէ. գլուածքն բարոյական խրատք են, սակայն սըրտով սփռած: Անոնց ժամանակակից կ'երևին Անդր Տոսէ Նաղաշ, Աբլուան (Գրիգոր) և Յովաաֆ Սէբաստացի: Ինչ մ'եաև ժԶ գարուն սկիզբները Գրիգոր Սրլուամարցի, որ Թլկուրանեցւոյն զոյգը կըլնայ ըսուիլ թէ անոր պէս կաթուղիկոս ըլլալուն, և թէ նման վաւելուն երևակայութեամբն: Այս ժԶ գարուս մէջ ծաղկած են և երգիչք կամ աղաստացք՝ Մկրտիչ Տարօնեցի, Թոքեոս Սէբաստացի, Մինաս Եւդոկիացի, Մարտիրոս Ղարաճաուարցի (Գարահիսարցի), Եսնուպ, Յակոբ Վարդապետ, Ներսէս Բելլու [1], Քոլաք Հաուհաննէս, Հաւանօրէն և Սպանդիար, Աստպուվ, Սրբիա, Սարհաւագ Բերդահնեցի, Զաքարիա Սիսուենցի, Խալիկ Կաճունցի, Ղալար կոյր, Մելգան, Մուրատ Խիւար՝ որուն կ'ընծայուի «Մարտըն կու գայր ծաղկըներով» երգն [2], Յոհաննան Նաղաշ, Ներսէս, Շահա, Քերովբէ, Քօհան կամ Քօհնայ Խլաթեցի: Յետագայ (ժԸ) գարուն մէջ՝ Աստուածատուր Սէբաստացի, Աբէսաքէս (Խարբերդցի?), Խաչատուր Բասիլիեցի կամ Զուլայեցի, Սուքիաս, Սքե-

1 Անոնք Պէյբէրը, մեծ ընչացք ունենալուն համար. իր հայրենեաց անուամբ այլ Մոկացի կոչուի:

2 Որ յոմանց կարծուած է Մկրտիչ Նաղաշին:

ֆանոս Թօխաթեցի, Եղեռն Զէյթունի Ֆէօտիւրճեան, Սպէֆանոս Շապախեցի, Սարգիս Երէց, և այլն: Ահա գարուս մէջ ծաղկած կ'երևին երկու էրզրումցիք ալ, Տոփուր գինեվրդուն, և Դաւիթ Սալաֆովեցի ծաղկեվրդու: Ժ՚Ը դարուն մէջ գրոց լեզուն աւելի մշակուելով՝ ամենուրեք էրզրիք ալ նուագելեցան. կըրնան դեռ յիշուիլ Գալուստ կայծակն կաթուղիկոս, որ թէ գուռ թէ խառն գրած է, նաև Թուխքարէնով, Օհան օղլու, Ա-էպիփ՝ անուանի պատրիարքն Կ.Պօլսի, և այլն. որոց հետ թերևս քանի մ՚այլ կըրնայի շարել, բայց անշուշտ ա-ւելի շատ են անունք՝ զոր չեմ յիշած և չեմ ճանչցած. և անշուշտ առանց անուններն գիտնալու ա-նոնց երգերը կարդացեր եմ տպարանաց մէջ. գուցէ շատունք ալ կամաւ ծածկած են անուններն սիրոյ և գովասանութեան երգերու մէջ, որ շատ հեղ ըստ տաքուԹեան և սառակուԹեանն ուսած է անոնց Հարտարապետն բացատրուԹիւն և բանահիւսուԹիւն ալ: — Սէր և սուգ. սրտից ամենէն զօրաւոր ազդեցուԹիւնք, ամենէն շար-ժուն մագնիսն և ելեկտրուԹիւնն են, միանգա-մայն և ամենէն Հարտար ձեռ և ձայն տուողք ա-նոր. ահաւասիկ սրտաԹափ ձայնիկ մը մեր գու-սանաց մէկուն, որով լուենք այս երեկոյեան զբ-օսյցս ազգային վիպասանից վրայօք.

Ժամ ժամ զիս զարիպուԹիւնս
Ես յիշեմ ու նաւիմ ու լամ.
Ձապղել եմ ջըրիս նըման,
Ես օտար երկիր կու գընամ.
Ասուած պիտէ ան Համբան
Ուր երԹամ կամ ուր տէ մընամ:
Ո՛վ կապէ խաչն եմ սրտիս,

Կամ հոդվարք՝ [1] որ ես դուրանամ։
Յորեկն եմ նեաիա նըման,
Ուր նեաեն՝ ես ի հոն կենամ։
Գիշեր՝ սղեղան նըման,
Ես լարիս [2] ի վար կուռ գընամ։...

1 Հոդով ծածկած գերեզման։
2 Թոյլցած կախուած լարով սղեղն։

10477396

10477396

10477396



Gi^me Bernasconi inc.

Ի՞նչ փարեզի ԹեւակցուԹեամբ ... քայլէին քննէին իրենց հայրենի երկրին ուղորտքը, որոշելով գչէնն և զանշէնն, և իրենց տիրական նշանները ուսահմանախաչերը կանգնելով:

10477396

Վ Ա Հ Ա Ն Գ Ո Ղ Թ Ն Ա Ց Ի

18 *Մարտ*, 738

Ա.

Վահան, գեղեցիկ և քնիկ հայկական անուն՝ որ ազգային պատմագիտաց կու յիշեցընէ իրենց ոչ սակաւ ընտիր դիւցանման և արքայանեալ նախնիները, հոս իրեն կցորդ դայրենական կոչմամբն Գողթնացի՝ կու յատկապէս զնիրա առ այն Վահան, որ եթէ ոչ քաղաքական և պատերազմական հանդիսիւք՝ հռչակուեցաւ իբրև վեծ Մամիկոնեանն (՝ի ե դարու), սակայն քան զնա և քան զայլ համանուն վերադաս յազգային հոգիա, այնպիսի զգացմամբք՝ ոյք աւելի զօրաւոր և արքայան են քան զարիւրթիւն և զիտութիւն: — Սէր, սէր և արքութիւն: — Իսկ եթէ ատոնց հետ հայրենասիրութիւն ալ պահանջուի, ոչ պակաս քան՝ի Մամիկոնեանն էրևի և՝ի Գողթնացին. թէպէտ և՝ի սա նոր օրինակ կերպով մը. գուցէ աւելի սաստիկ, ատուգիւ աւելի արտաքոյ:

Հայկազին հրեղէն հանճարն՝ (որ Թոլած է բաւական պայծառ նշաններ՝ իր հնութեան համարատաւ հանդիսանելու և ցուցընելու իր

10477396

սէրան այլ), մուսացուհեանց մօխրոց տակ եր-
կու վառվռուն կայծակներ պահեր է՝ ի յիշա-
տակ Գողթնացւոյս Վահանայ. որովք թէ սա՝
թէ մեր ապգին գրականուհիւնն և թէ ազնուա-
կան զգացմունք՝ անգամ մ՝այլ անմահուհեան
հաւատիք կ՝առնուն. քանի որ՝ի մատեանս
պատմչաց մերոց ծնայ Վահանայ Վիպաբանու-ին,
և՝ի գաս եկեղեցւոյ մերոյ՝ Գողթնացւոյն Շարա-
կանն: Ըստ ինքեան գեղեցիկ՝ մանաւանդ թէ սքան-
չալի և արտառուչ պատմուհիւնն կամ դիպուա-
ծըն, այն երկու կայծակնաձաձանչ գրուածովք
նոր ընորհք և նոր վայելչուհիւն մ՝այլ առեր
և զարդարուեր են: Անոնցմով՝ եկեղեցի, հայ-
բենիք և արտային գործովանիք՝ աքանչելապէս
խառնուած, իբրև ոսկւոյ, արծաթի և ծիրանւոյ
սեփական հիւսուածք մ՝այլ կու ցոլացընեն մեր
հայրենի յիշատակաց մէջ: Ան գեղեցկուհեն ան-
կարելի եր քան մը պակաս գանել, եթէ, — փա՛ռք
ազնիւ հայրենեաց կամ հայրենակցաց մերոց, —
ով Հայկակ, հայկական սերան՝ հանճարէն այլ
վեր Թաչէլով ճարտարած ջըլլար այնպիսի գեղե-
ցիկ հիւսուածի մէջ այլ՝ նրբագոյն մանուշակ մը
մանել, և անով Գողթնացւոյն յիշատակը փակ-
կագոյն իմն բարձրացընել քան զՄամիկոնեանն,
քան զԿամսարական, քան զԳնունին, քան զա-
մեն այլ Վահան:

Ահա մանրակերտ մանուշագոյն մանուածա՝ է
հին ասանդոյնէն մը. ասանդուհիւն մը՝ որ իրեն
երաշխաւոր ունի վերոյիշեալ ջուրհանը, այն հայ-
կական հանճարոյ մեկնիկ չքնաղ կայծակը. հազար
հարիւր տարի քշած անգիր յիշատակ մը, բերնէ
բերան, սրտէ՝ի սիրտ անցած. սիրատարփի, նըր-
բազգած և նրբատեսակ անձի մը, Հայուհւոյ մը յի-
շատակ. զոր պատմուհիւնն պըղտէ, ասանդու-
հիւնն կոչէ տոյժ Վահանայ, և շարականն այն վը-

կայէ՝ Թէ իր հեղինակին արդարև կամ փոյր կամ քոյրանման սէրային զարմանուհի մ'էր Վահանայ. — միով բանիւ, աներկբայ հայկածդի մուզայ մ'էր. որուն սրտին, մտաց և մատանց Թափուած երգը՝ յափշտակեր է մեր սուրբ եկեղեցին, և իր պատուականագոյն քանաւոր գանձուց մէջ շարեալով՝ անմահափայլ պահէ Թէ զփառս իր և մեր Վահանայ, և Թէ անոր հայրենեաց Գողթան:

Բ

Գո՛ղթն... Թէ և քիչ մը խորթացեալ անուն, և ոչ պայծառաստիւռ երբև ուրիշ հին հայկազեան անուններ, և հաւանօրէն (մեր հին ազգին մատաւոր) Մարաց գաղթականէն մնած կամ այլայլած, սակայն յիշատակօքն և բնութեամբն իսկ հաճոյ՝ ամեն սիրուն և ուրախ սրտի, նաև տխուր: Գոնէ 2500 տարիէ վեր լսուած և յիշուած անուն 'ի պատմութեան, և մինչև հիմայ նոյնպէս կոչուած 'ի մերազգի բնակաց, և յօտարաց՝ Քէլէր. — հիմայ՝ ծանօթ երբև գեղատան մը. մեր մատենագրաց մէջ՝ երբև գաւառ մը, և մերիններէն հնագոյն օտար աշխարհագրաց՝ երբև առանձին նահանգ կամ աշխարհ մը. այսինքն՝ անկախ նախարար կամ նահապետ ունող, ինչպէս Սիւնիք, և ուրիշ տասնևհինգ աշխարհք. քն Հայոց Մեծաց: — Գո՛ղթն. զոր բնահայ գետոյն Երասխայ արմունկն՝ իր ընթացից հարաւագոյն մասամբը պատելով՝ կու գգուէ, գիրացընէ և գինովցընէ. — Գողթն. կերպով մը հակառակորդ Շիրակայ. որ ունի լիութեամբ զհայ հատատուիչ սրտի. և առաւել զգինի՝ որ «ուրախ առնէ զսիրտ մարդոյ»: Աւոր այգեաց անոյշ ազդեցութեամբն՝ երբ նակիչքն այլ եղան երգահանք, բանաստեղծք, աւանդապահք քաղքենեան դիւցազանց, հայ-

կական ցանկալի հին յիշատակաց, և Ճարտար գործածուք ազգային գլխաւոր երաժշտական գործ ծւոյն, որ է բամբիռն վիառւսպանծ: Մինչև հիմայ, թէ և Գողլթնացւոց կամ Ախուլեցոց (Գողլթն գաւառին մէկ աւանն է Ախուլիս, որ թուի ըսել Ախ գուլիք, այգիներով լիք) լեզուին թէ և թանձր ու խորթ, անշուշտ հին Մարաց լեզուէն խառնուած, սակայն բառերն և բացատրութիւնք նշանաւոր են բանասաեղծուԹեամբ: — Գողլթն. իրեն գինաւէտ ափունքը կ'ողողէ յեզը Երասխայ, ճօտ անոր կարկաջահոս քարավազից. բնուԹեան զարմանակերպ, ահեղագեղ, վիանդամային և գալարազուարճ ու բարեբեր ձորահովտաց մէջ: Ախկէ լաւ տեղ կրնար ընծայուիլ մեր ազգային Նահրէոնից, և անոր հետևուլաց աշխոյժը և խորժակը վառելու: — Երասխայ հանապազահոս վիժանաց ձիւնափայլ փրփուրքն՝ այգեաց ընծայած ծիրանեփայլ պըպղջակին հետ խառնած, կ'արծարծէր մեր հայրենի բամբիռը, և հազարամեայ յիշատակները երեկուան դիպուածի մը պէս կու հնչէին 'ի Գողլթն. և Քրիստոսէ հինգ դար վերջը՝ իր Տարօնոյ Մեղրայ-գետը Թողած՝ կու լսէր մեր Խորենացի պատմահայրն՝ հեռաւոր ԳողԹան և անոր սահմանակից Մեղրայ աւանին գետակաց եզերք՝ Քրիստոսէ հինգ վեց դար առաջ փայլած և փառաւորած ազգային մեծապոյն դիցազին ծագումը, Վահագնի այլաբանեալ ծնունդը, զոր

« Երկինէր երկին, երկինէր երկիր,
Երկինէր եւ ծիրանի ծոմն »:..

Ընդհակ մեր պատմահօրն, որ այնքան ոգեբաւլի լռութեանց մէջ՝ գոնէ այսպիսի երգոյ մը համար կըցաւ ըսել, Թէ « զայս երգեաւ ոմանց բամբռաւք՝ » լուաք մերովք իսկ ականջօք ». և գալուձեալ ա-

սոր նամանեւն այլ կու յիշէ, Թէ անկէ հին և Թէ այլ շատ մօտ (Քրիստոսի ե գարուն հանդիպած) գիպուածոց վրայօք. որոց վրայ աւելցան ժամանակաւ նորանոր քաջաց գովասանք, իբրև ազգային պանծալի վիպասանուԹիւն մը հիւսելով: Սատր պատմուԹիւնն երբեմն միաշար և երբեմն ընդհատ, հատանօրէն երկարեցաւ ինչուան մեր մեծ պատմըչին օրերը և այլ վար, (Թէ և անկէ ետև շատ ցաւեր և ձիւներ անցան մեր ծեր հայրենեաց գլխէն). գեռ երբեմն բարբառեր բամբիռն ԳողԹան, կու հնչեցներ հատակատուր հպատակներ, և ընդ գովասանուԹեան քաջազանց՝ գուցէ խառնէր քանի մ'այլ խոր հառաչանք: Գեռ Հայկազուն և Ամդահակեան ինամեցեալ պայազատաց սեռունդքն իշխանաբար ձոխային ձեմէին Երասխայ գարափանց և ձորոց մէջ. և գեռ ունէր ԳողԹն՝ մինչև՝ ի սկիզբն ը գարուս՝ իր առաքինի հնազարմն իշխեցոլը՝ Խոսրով, զոր ոսոխք կ'անուանէ ժամանակին պատմիչն. և որոյ արքապոյն և ծանօԹագոյն շառաւիղ մը ծագեցաւ՝ ի սկիզբն ը գարուս (յամի 702) մեր գրուատեւլին Վահան:...

Գ

Ո՛վ պանծաձայն բամբիռն ԳողԹան. արդեօք նաւատարդի սաղարԹներով պսակուած, և գինաւէտ այգեստղդ լայնատերև բարուձևներով պլլըւած՝ երեցա՞ր այս անգամ այլ, երգեցի՞ր մեր հին Վահագնին նամանցընելով՝ այս քու նոր (և Թերևս յետին) Վահանիդ ծնունդը.—ո՞ր գոյն երկինք, ո՞ր գոյնէրկիր, կամ ո՞ր ծով ծիրանի երկնեց զսա. ի՞նչ կարմրիկ ելեզն էր որ բարձրացուց զսա՝ ի ծովէն. կամ ի՞նչ ծուխ, ի՞նչ ըոց էր՝ որ կ'ելնէր անկէց:.. Ո՛հ, մանաւանդ Թէ այն ի՞նչ ծծլմբա-

*խաւն մուխ էր՝ ուսկից « վաղը խորհեալ պատանէ-
նին » մեր : . . .*

*Հայկակ , ես այս ծխէն մղձկած՝ կու կորսընցը-
նեմ գողթան բանբիւրը . կու լսեմ ուրիշ բոմբիւն ,
ուրիշ վիպասանութիւն մը՝ որ յանկարծ մահուան
թմբկի պէս կ'որոտայ, նոր և այլակերպ ծիրանի ծո-
վու մը ծխոյ ու բոցոյ մէջ. « Ահա մերկացա՛ւ սուրն
» վաղակաւոր'ի պատէնէն. զոր տեսանողականքն
» յառաչագոյն սպառնացեալ ողբայր մարգարէն :
» Սո՛ւր ծարաւի արեամբ՝ զարթեա՛լ'ի մեզ ազգն
» Իսմայելի. ընդ չորեսեան կողմանս երկրի գոչեալ
» առիւծաբար , կամ իբրև չորեքին հողմովք բա-
» խելով զծով, զաշխարհիս մեծութիւնս : Որ ար-
» դեւք Թէ և առ Իսրայէլ լինէր մարգարէու-
» թիւն , զոյն և առ մերս առնու ձայնն. մանա-
» ւանդ՝ երեսաղէմ մինչև'ի հիմն քակեալ լինէր.
» և մեր՝ բոլոր աշխարհս քակեալ աւերեցաւ :
» Զվայելչութիւն երկրիս օտարազգիք կալան. ա-
» զատութիւն և տէրութիւն և իշխանութիւն
» նախարարացն՝ անարգութեամբ յերկիր կործա-
» նեցաւ : Անդ մանկունք տղայք զքարի հարեալք.
» և մերքս առ հասարակ ծնողք և մանկունք՝ 'ի
» գերութիւն. որ և զմարդն առեալ ողբայր ե-
» լեմիա , այն և մեզ իսկ դիպեցան 'ի դէպ ելա-
» նել . . . : Վասն զի մերում տապախանդի տիրա-
» բեր շնչեալ օդոմն հարուաւոյ , բարձ զառապաստան
» փախչութեան. բարձեալ զպատուականութիւն
» և զարբութիւն լուսազարդափայլ ծածկու-
» թեանն , որ փոխանակ դրախտին շնորհեցաւ
» մեզ՝'ի կենաց փայտէ խաչին Քրիստոսի. և յայտ-
» նեցաւ թխութիւն թանձրութեան կատարյն.
» խաւարամած թանձրութիւն անհնարին սեռու-
» թեան. գոյն , որ ունէր ըստ էր զամենայն աշ-
» խարհս Հայաստան երկրիս » :

Այսպէս կու սկսի Սիմէկէացին , երաշխաւորի

վանահայրն Արտաւազդ, իր «Ողբին վան չարչեցին » որ անոնք 'ի վերայ ալխարհիս Հայոց... և վիճաբանո- » ըին Ս. Վահանայ »: Նախերգանք կանխաժամ պիտուածոյ պատմութեան, պանծալի՝ ըստ մա- տենագրութեան. ոք մեկէն 'ի մեկ ընթերցողին առջև կու ծառայէ՝ Դամասկացի Թրեբոն Թո- թափած կայծերովը ձևացած ծիրանի ծովը: Ծիվ արեան, ծիվ մեր հարազատ արեան, ուսկից կ'արձակի կորացեալ կարմրիկ եղէգն այլ, և անոր մարմրած բոցոյն միջէն վազէ մեր խարտեաշ պատանեկին Վահան: — Նաւթով ու ձիւթով օծեալ են այն եղեգնեղէն, բռնկած ու բորբոքած, որ Գողթան մօտ Նախճաւան և Խրամ (կամ Հրամ) աւանաց մեծ եկեղեցեաց քակուած տանիքներուն մէջ կ'ելան ծծմբաձոյլ օձերու պէս, և վար կու Թափին հրածորան անձրևի նման: Եկեղեցեաց դռներն դրսէն չէ Թէ միայն գոցուած, այլ և ալիւսով հիւսուած, պատերուն հաւասար պնդած փակուած են, որ չկարենայ մարդ դուրս ելնել. և Եթէ անակնկալ կերպով մէկն ծակէ մը կարենայ տղայ սահիլ, պատերուն տակը սպառազէն արաբացի գունդեր սուսերամերկ կու պտըտին կու վազվզեն քաղցած գայլոց նման. հրոյն մեկ ժամուան մէջ ընելիքը՝ արոյն վայրկեանովը լմնցընելու. մեկ հարուածով մը սպաննելու: Անկարելի է Թէ դուրս ելնեն, Թէ դուրսը վայրկեան մը տպրին: — Իսկ նէրսը...: Սակայն մեզի այլ հարկ է, ծանր հարկ մը, գոնէ մօտենալ այդ հնոցին, և յիշել անոր պատճառը և նիւթը:

10477396

Գ

Վաթաւն տարի էր որ Հագարացիք մտեր և տիրեր էին 'ի Հայաստան. երբ, երբեմն բարեբարոյ և արդարախոհ ամիրապետաց և ոստիկանաց և մերազգի իշխանաց խոհեմութեամբն՝ հանգիստ և խաղաղութիւն կու գտանէր աշխարհն, բայց շատ անգամ այլ՝ կամ մերայոց անզգուշութեամբ և կամ հարկահանաց բռնաբարութեամբ՝ նեղութիւն և վտանգ պակաս չէր. մանաւանդ եռքը՝ երբ Աւրպատականն աշխարհին կուսակալն ապստամբելով ամիրապետէն՝ Հայք այլ սկսան գլուխ քաշել, և օգնութեամբ Յունաց՝ Դըւնայ մէջ պաշարելով զԽրաբացին՝ բիւրաւոր մարդ ջարդեցին, մինչդեռ ընդդէմ Հռոմայ կամ Խազրաց պացեր էր իրենց ոստիկանն՝ Մահմէտ Բ, հզօր և ահաւոր. որ և շուտով Աբդլլա, Ալի Ահմէտ, Օքբա, Գասըմ, և ուրիշ զօրավարօք և կոլմնակալօք Թափեցաւ 'ի Հայս (յամի 698–702), և շատ վնէժ ու չարիք հասուց Հայոց. որոց մէջ ցաւով նշանաւորք են Սևանայ բերդին երեքամեայ պաշտրուման 'ի ծովուն Գեղամայ, և բոլոր մէջը գտուածց կոտորուման. մէկ մ'այլ Բագրեւանդայ Ս. Գրիգորի մեծ և հարուստ վանաց անիրաւ կողոպտուման և միաբանից կոտորածն. ըստ ամենց և ծերուն ընդհազարդ Սահակ կաթուղիկոսին և շատ իշխանաց կապանօք քշուիլն մինչև 'ի Դամասկոս, և մնացելոցն 'ի հայրենիս՝ անտանելի տառապանքն և տարակոյս: Մանաւանդ երբ ոստիկանն Մահմէտ՝ իր հարուածքն ընեէլէն եաև դարձաւ յԱտրիս, և իր տեղը Թողուց մէկայլ կոլմնակալներըը, որ աւելի ցած և անօրէն մարդիկ էին. և հնարք կու մտածէին բոլոր Հայոց մեծամեծներըը ջնջելու աշխարհէքէն, որպէս զի

10477396

համարձակ ծծեն անոր պարարտութիւնը և աղքատաց արտասունքը:

Ամբաստ բագրատունի՝ նախարարաց զօրագլուխն, իր ցեղակից իշխաններըը և ուրիշ ցեղերէ այլ գլխաւորներ գաղտուկ ժողվեց 'ի խորհուրդ, Թէ ինչ ընեն այսպիսի վտանգաւոր առեն:—Ուրիշ ձար չգտան, բայց եթէ իրենք զիրենք ապրեցընել, փախչելով յարևմուտս, ցունաց կայսեր երկիրը: Գնացին խորհուրդ հարցուցին նաև անուանի արքեպիսկոպոսի մը, որ Վանայ ծովուն արևելեան կողմերը կու քնակէր. նա այլ ևս լալով ողբալով ուրիշ խրատ չկրցաւ տալ, բայց միայն որ զգոյշ կենան, յանդգնութեամբ բանի ձեռք չզարնեն. և վրանին աղօթելով արձակեց: Դարձան ատոնք իրենց հաւատարիմները ժողովելու՝ որ հետևան հայրենի սահմաններուն. և զգուշութեամբ երթալով՝ եկան դէպ 'ի Մասիս լեռը և բանակեցան յանուանի աւանն Ակոռի. և ահա լսեցին որ այլազգիք խմացեր են իրենց միտքը, ու Նախճաւանի կողմնակալն 8000 և աւելի հոգւով եռևնուն ընկած՝ «ոչ մեկնեցան 'ի հետց նոցա.» քանզի... կամէին կենդանւոյն կլանել զնոսա»: Մերոնք փութացան փրթան լեռնէն վար, անցան Երասխ գետը, և Վարդանակերտ ըսուած աւանի մը մէջ բանակեցան, որ կարծեմ Խորվիրապի մօտերն էր. այլազգիք այլ նորէն եռևնուն ընկան: Հայք մէկ կողմանէ բանակնին ամրացընելով և պիշերապահներ գնելով, միւս կողմանէ պատգամ ղրկեցին առ Արաբացիս և խմացուցին որ իրենց միտքը, ոչ մեծութեան ուրիշ բան չէր, բայց միայն գլուխնին ապրեցընել փախստեամբ և օտարութեամբ, իրենց տեղն ու ստացուածքը՝ Թողլով անոնց ձեռքը. ուրեմն Թող տան՝ որ մնաս բարով ըսեն, հետևան իրենց հայրենիքէն: — Եւ ոչ այս ցաւալի հրաժարական ողջոյնը տալու ներեցին բըռ-

նաւուրքն, այլ յարձակեցան Հայոց վրայ, որք և ոչ 2000 հոգի էին. սակայն աղօթքով և վերջին ջանքով ու քաջութեամբ միաբանեալ՝ դէմ ելան իրենցմէ չորս և հինգ հեղ բազմաթիւ բանակին այլազգեաց: Սանք կէս մը գիշերուան ցրտէն փաթցած, (վան զի ձմեռն էր և ձեան վրայ անցցուցեր էին գիշերը), կէս մը ցուրտ հովէն ծեծուած, և այլ աւելի՝ յուսահատեալ քաջաց հարուածներէն, բոլորովին շփոթեցան, քշուեցան, ջարդուեցան. փախչողներն այլ թափեցան երասխայ վրայ՝ անդին անցնելու. գեան որ սառեր էր՝ անոնց փախստական ոտից դոփմանէն պատռտելով՝ նեղքեն առաւ, կլլեց, ծածկեց: Եւ այն ահարկու սպառազէն բիւրաչափ բանակէն՝ հազիւ 300 հոգի կրցան փախչիլ. զորոնք դարձեալ պիտի ջարդէին Հայք, եթէ չասլրեցլներ մեր նախարարաց մէկուն տիկինն՝ Շուշան. որ և քրիստոնէաբար գլխով անոնց վէրքերն այլ պատռելով, զգեստ և գրաստ տալով՝ դարձուց խաւրեց առ ամիրապետն Արաբացւոց՝ Աբդլմէլիք. և ընդունեցաւ անկէց շատ ընծայ և պատիւ՝ ի փոխարէն մարդասիրութեանն: Յաղթական գունդն Հայոց՝ թշնամեաց աւարներն առին, համարձակ իրենց ձամբան գնացին, մանաւանդ յամուր տեղիս մեր Տայոց աշխարհին, որ այն առեն Յունաց իշխանութեան տակ էր, և կայսրէն այլ պատիւ գտան: — Ահա է վարդանայնքան խոխո, անուանի մեր պատմութեան մէջ այս ժամանակիս, և ամօթալի Արաբացւոց պատմութեան, որոյ անունն և տարին անգամ չէին ուզեր յիշել. անանկ որ 200 տարի վերջ այլ մեր հաւատարիմ պատմչաց մէկն [1] վկայէ, թէ՝ «Յարդ և» բան առ Հպատրացիան, ըստ իւրեանց ազնա» տրոյզ բառին պատմի, թէ վարդանայնքա տո» ղի չիշէսցի ղպ»:

1 Յովհաննէս կաթուղիկոս:

10477396

Ահա կառուէն սիրտ առած ուրիշ Հայ իշխանք այլ՝ի վանանդ և՝ի Վասպուրական՝ զիրենք նե-
ղայլնող այլազգեաց գունդերը ջարդեցին: Բայց
եթէ ատով՝ իրենց վտանգը քիչ մը հեռացուցին,
աւելի այլ Ծանրացուցին: Վասն զի ամիրապետն
Աբգլմելիք իր կուսակալաց փախստական զօրքե-
րը տեսնելով և լսելով եղածը, պատուէր ըրաւ
Մահմետ ոստիկանին, որ երթայ խստիւ պատժէ
զՀայս: Մահմետ առաջինէն աւելի պատրաստու-
թեամբ և սրտմտութեամբ եկաւ գալու, զՀայա-
տան սրով և հրով մաշելու: Հիմայ մերոնց՝ ոչ
միայն անոր դէմ կենալու ձար չկար, այլ գրեթէ
և ոչ փախչելու: Մէկ հատիկ և յեսին հնարք
գտաւ Հայաստան՝ իր սրբակաց և ալէզարդ հայ-
րապետը (Սահակ) փութացընել ընդ առաջ ա-
ղաւորելու զօրավարին. որ եթէ հնար է, իր
վարուց, հանակին և աշխճանին շնորհօք՝ անոր
զինքերը և ձեռքը կապէ: Սրբակենցաղ հայրա-
պետն՝ որ արդէն վհատահար տառապեալ կեանքը
կնքելու մօտ էր, յանձն առաւ այս դժար պատ-
գամաւորութիւնը, իբրև յեսին և ծանր հայրա-
կան պարտք: Եկաւ (ըստ ոմանց՝ի Դամասկոսէ՝
ուր գերեալ էր, և ըստ այլոց որ հաւանագոյն է)
իր քնիկ երկրէն և աթոռէն, վերջին ողջոյնները և
օրհնութիւնները տալով, թէ հաստարակաց որ-
դւոցը, և թէ ամենուն մօր Ս. Եկեղեցւոյ, որոյ
փեսայացեր, և զոր վսեմ, փափուկ և հոգեւոյնդն
երգերով գովեր գգուեր էր. զոր և մինչև հիմայ
հնչելով Հայաստանեայց եկեղեցին, կրնայ նա-
խանձելի ըլլալ ուրիշ ազգաց: Կու հաւանիմ, թէ
քաց յայլոց նոյն իր մէկ չինած և երգածն՝ իրեն
համար երգեցին իր կլերիկոսքն՝ զինքը յուզար-
կելու առեն. «Ա,յսօր քահանայապետ Ձեմարիս՝
» աստուածային օրինօքն պատուեալ, կանգնէ
» զքառանկիւն սեղան խաչին. արժանապէս պա-

10477396

» տարագեալ բաշխէ զմարմին և զարիւնն Տեառն.
» մաքրապէս մերձեցարուք փրկեալք նոր ժողո-
» վուրդք. և հայցեցէք 'ի Քրիստոսէ, զի շնոր-
» հեացէ զաս մեզ ընդ երկայն աւուրս»: — Ահա
յեսին հայցուածքս ոչ շնորհեց Քրիստոս. մա-
նաւանդ թէ արդէն շնորհեր էր՝ քանևեօթն տա-
րի երկարելով անոր կաթողիկոսութիւնը: Իսկ
հիմայ երբ սկզբան թևերով ծերութիւնը աւելի
թեթևցնելով՝ քան զարաբացի հեծելազօրուն ըն-
թացքը, դեռ Մահմէտ մեր սահմանաց չհասած՝
ինքն մտաւ յԱտորիս, և հասաւ մինչև 'ի Խառան
քաղաք. այլ էկզցաւ յառաջ շարժիլ. յօգնու-
թիւն, ծերութիւն և արտցաւութիւն՝ վերջին հի-
անդութիւնը բերին. թևերը թուլացուց, ոտ-
քերը կապեց մահն. մահ՝ որ միայն էկզցաւ սկը-
սը պակեցընել, ինչուան անոր յեսին շարժը:
Մեր քահանայապետան այլ նման իր երգած քա-
հանայապետին յաւիտենից, իր կեանքը տալով
պիտի ապրեցընէր իր ժողովուրդը: Մահն հոս
շուտ երևցաւ, բայց ուշ հասաւ. վասն զի մեռ-
նողն ցրուեց անոր անյաղթելի կարծեցեալ հնար-
քը. Ճարտասան լեզուին և եռանդուն սրտին
թարգման թողուց ձեռագրը մէջ կնքած թուղթ
մը՝ առ ոտիկանն Մահմէտ, պատուիրելով որ
իմացընեն անոր իր փափագը:

Գնացին պատգաւորքն առ ոտիկանն, որ և շու-
տով հասաւ 'ի Խառան. բերին տուին իրեն թուղ-
թը՝ յորում գրեր էր հայրապետան պզտնչելի ի-
մաստութեամբ և ծանրութեամբ մը, խնդրելով
որ ինայէ Հայոց, ներէ անոնց ըրածին, չդպչի
անոնց հաւատքին. այլ ինչպէս առաջին ամիրա-
պետք թողեր էին՝ ինքն այլ թողու. միայն հար-
կը առնու և պահէ գաշխարհքը: Եւ եթէ այս-
պէս ընէս, գրեր, Աստուած քու կամքդ կատա-
րէ և կու յաջողի. ապա թէ չես ըներ ինծի՝ ոչ

իմ օրհնութիւնս և ոչ Աստուծոյ կու գայ վրադ. այլ միտքդ գրածիդ հակառակն կու պատահի, և ամեն կոլմէն վրադ չարիք կու թափին։ — Զարմացաւ, զարհուրեցաւ ահել զօրավարն. և լսելով որ դեռ Թալած չէն սրբոյն մարմինը [1], եկաւ անձամբ. և տեսնելով այն հանդարտեալ հանգուցեալ կերպարանաց վրայ աստուածախօս պատգամ մը, խոնարհեցաւ պատկառանօք, երկու երեք անգամ աչքերն ետ-ետէ բաւ. որուն՝ կ'ըսեն ոմանք, Թէ մեռեալ մարմինն այլ (ինչպէս խօսանակն եկեղեցւոյ իր գահուն վրայ հանգչած աւետը), պատասխան տուաւ խաղաղութեան ողջոյնի։ Մահմէտ հայրապետին այլը բանելով և վկայ կոչելով զԱստուած, իբրև կենդանի մարգարէի հետ խօսեցաւ և բաւ. Քու Թղթիդ ճանչցայ քու իմաստութիւնդ, ով մարդ Աստուծոյ. դու իմ տուրս կապեցիր, և քու ժողովուրդդ ապրեցուցիր. եթէ ուզածդէդ բան մը չկատարեմ՝ ըսած անէծքներդ գան վրաս. ապա Թէ կատարեմ՝ ինչպէս որ խօսք կու տամ, օրհնութիւնդ վրաս ըլլայ։

Պատմութեանց մէջ քանի մը անգամ աւոր նման դիպուածք կու յիշուին. հոպևոր հօր մը իր հօտը կամ քաղաքը բանաւորի մը հարուածնելէ ազատել, միայն իրատով և Աստուծոյ հաւատացմանց յիշատակաւ. մէկն այլ այս է. և աւելի այլ զարմանալին, որ այս նոր «Սահակ տուրը հօտապետս» մէր՝ մանուկն եաև այլ իր հովուութիւնը և փրկութիւնը ըրաւ։ Գազանապետալ գետոյ պէս վազող զօրավարն՝ դադրեցուց զօրքերը. Հայոց դալկահար պատգամաւորները՝ անկարծելի կենաց յուսով նորոգեց. ոչ միայն բանիւ այլ

1 Ոմանք կ'ըսեն Թէ ինքն իսկ Մահմէտ պատուիրեր էր որ չթաղեն ինչուան որ գայ։

և զրով ազատութեան հրովարտակ ինքեալով և տալով, որ առաջին Ալի ամիրապետին տուածէն եաև գլխաւոր ազատագիրն եղաւ Հայոց, և կոչեցաւ Եփրէմ կամ Թոթ տանտէր: Այս հրովարտակը՝ տուրք խաչվառից և դրօշոց հետ պարգած՝ տարին հայրապետին մարմնոյն հետ՝ իրեն հաւատարիմքն. և Հայաստան նոր հոգի առած՝ իր մահու չափ սիրող և սիրելի հայրապետը հանգչեցուց յանմահութիւն:...

Մաւ ինքնին Մահմէտ ասելիանն այլ՝ ի Հայաստան՝ բազմութեամբ արաբիկ զօրաց հեծելոց և հետևակաց. սակայն հանգուցեալ հայրապետին հեզութենէն՝ իբրև անձուած ծով մը՝ լուեց հանդարտեցաւ, ամենևին վնաս մը չհասուց Հայոց. և իբրև թէ իր առաջին զօրմանց և ապանութեանցը փոխարէն հատուցմունք մ՚այլ ըրաւ. ամիրապետին իսկ հասկըցուց, ինչուան որ մեռաւ նա (Աբդէլմէլիք՝ յամի 705) և յաջորդեց որդին Վալիթ կամ Վալիտ ա: Սա նոր փարաւոնի պէս չուզեցաւ զանչնալ իր հօրը և ասելիանին Հայոց հետ ըրած դաշինքը, մանաւանդ թէ դեռ Վարդանակերտի և Վանանդայ կոտորուածքն աչքին առջև ունենալով, ուզեց անոնց վրէժը պահանջել՝ ի բագրատունեաց Սմբատայ և իրեն հետ միաբանած ու չմիաբանած նախարարներէն այլ: Հազիւ թէ ապառնալեաց համբաւն հասաւ՝ ի Հայաստան,— որուն ուրիշ բան չէր մնար՝ բայց հաւատարմութեամբ պահել Մահմէտի մինչուրը, և անոր մեծ ծառայութեանը ապաւինիլ,— երբ Սմբատ, ակն ան Սմբատ, իր հաւատարմաց և Յունաց վրայ վստահացած, և քինախնդրութեամբ վառուած, մեծ և բազմավոանդ անխոհեմութեամբ՝ ուզեց իբրև յանպատրաստից Մահմէտի վրայ հասնիլ. և աղաչանօք կայսերէն ընդունելով մեծ գունդ մը յունական զօրաց, շուտով մտաւ՝ ի բաժինն Հա-

յոց Աբրաքացւոց, եկաւ ՚ի վանանդ գաւառ, բա-
նակեցաւ ՚ի Դրաշպետ գիւղ: Զուշացաւ Մահ-
մէտ այլ անոր դէմ ելնել, և անոր լրացումն՝ ինք-
զինքն ազատած սեպել իր երդմունքէն: Անոր
կարծածէն աւելի այլ շուտ պատրաստութեամբ
և շատ զօրքով՝ դրգռեալ պատերազմը յանձն ա-
ռաւ, մղեց լճացուց, մեծ և ոլբալի կորստեամբ
Յունաց և Հայոց. որոցմէ ինչուան 50,000 մարդ,
կ՚ըսուի, թէ ընկան պատերազմին մէջ. մնացեալ
քիչերն այլ կորակոր դարձան. որոց հետ նաև
Սմբատ, որ և ինչուան Եգերաց (Ախալցայ) փո-
թի քաղաքը գնաց ամրացաւ: — Վալիտ լսելով
որ Հայք եղեր են առաջնորդ Յունաց՝ ՚ի պատե-
րազմին, նորէն խաւխ պատուէր ղրկեց Մահմե-
տի՝ չխնայելու անոնց: Մահմետ՝ թէ իր ամիրա-
պետին հրամանը և թէ մեր հայրապետին խնդիրը
կերպով մը միաբանել մտածեց. ինքն կենալով
տեղը, (՚ի Դուին), և հրամայելով Նախճաւանի
կողմնակալին՝ որ ամիրապետին պատուէրը կա-
տարէ:

Ե

Նախճաւանի հրամանատարն՝ Գասիմ, զոր մեր
պատմիչք Կասմ կամ Կազմ կոչեն, կ՚երևի թէ այն
զօրավարաց մէկն էր՝ որ երեք տարի առաջ զար-
նուեցան ՚ի Հայոց, որոց վրայ մեծ առելութիւն
ունէր. և հիմայ յարմար առիթ գտաւ ոտնկա-
նին հրամանը: Անոնք են ըստ վիպասանին մերոյ՝
աշխարհաւեր կրակը ձգողքն ՚ի Հայս. « Հուր ՚ի
» մեզ վառեցին, սատանայի ՚ի նոսա վչելով զզ-
» զարկութիւնն. և ատ բան տալով, անօրէն
» խորհուրդ առեալ ՚ի մեզ... զի զզօրս և զզօրա-
» գլուխս, զպետս և զիշխանս, զազատատոհմս և
» զնախարարազունս, բնաջինջ կորստեամբ բառ-

» նալով .... սպառապուռ մահուամբ վճարեա-
» ցէ. և յաղթեացէ քաջաց և յաղթող նահատա-
» կացն Հայոց, և ջնջել ՚ի միջոյ ՚ի բաց բառնալ,
» և ունել զաշխարհս առանց կառավածանաց » :
Միով բանիւ Տեառն մեզոյ, « Հարից զհովիւն, և
» ցրուեացին ոչխարքն հօտին » . զարնեանք, ջնջենք,
ըսին Հպատրացիք, Հայոց ամեն իշխաններն և ազ-
նուականները, և անկասկած տիրենք աշխարհին :
Սուտ և խարդախ խօսքերով հրաւէր խաբե-
բեցին ամենայն ազատազատաց և զօրագլխաց Հայոց,
ինչպէս թէ Սմբատայ ըրածը՝ Յունաց գործ սե-
պէին, և կ՚ուզէին նորէն Հայոց հպատակութիւն
Թեան երդումնք առնուլ, դաշինք դնել և վարձք
տալ. նոյնպէս անոնց հեծելոց Թոշակն այլ՝ որ
տարեկ տարի ամիրապետին կտրմանէ կու տը-
րուէր անոնց (100,000 դահեկան կամ դրամ) :
Հայոց մեծամեծաց շատերն հպատակով կամ
հնազանդելով հրաւիրին՝ իրենց գլխաւոր զօրա-
կանօք, Թիկնապահօք և ընկերօք եկան ժողովե-
ցան Կասմայ իշխանութեան կոչմերը. ուր և ա-
մենուն՝ իրենց ատենին համեմատ ոչ միայն
ընծայ և Թոշակ տրուեցաւ, հապա նաև անոնց
տարեկան հարկի պարտքն այլ ընտրեցաւ : Միայն
Թէ ինչպէս սովորութիւն էր մեծի քով գացողին՝
զէնքերը վերցընել, ատոնց այլ զէնքերը Թողուլ
տուին, ինչուան որ գործը լմընայ. միանգամայն
և վախնալ մը կու կեղծէին Արաբացիք ՚ի Հայոց.
և իբրև աւելի զգուշութեան համար՝ ուզեցին որ
Հայք հպատակութեան երդումն այլ ընեն, և
հանդիսապէս այլ ընեն, որ երկու կողմին այլ ա-
պահովութիւն և երաշխաւորութիւն ըլլայ : Ա-
ստր համար էր որ մտուցին զանունք, 800 հոգի
Նախճուանի և 400 հոգի Հրամի մեծ եկեղեցինե-
րը, և դռները գոցեցին, ըսելով, Թէ « Մի ոք ելցէ
» յայս մեծ խորհրդոյ՝ արտաքս » :

10477396

Եւ մինչ Հայք ներսը արթըննալով՝ գոները
կոտ փնտռէին, սանք գուրսը զէնքերնին հագնե-
լով՝ խուհուրդ ըրին, որ անոնց իշխանաց և զօրա-
վարաց գլխաւորները գուրս հանեն. և ուզածնին
տեղեկանալէն ետև՝ սրով և կախաղանով սպան-
նեն, իսկ ներսը Թոլածները՝ կրակով այրեն. և
այնպէս ըրին: Մինչդեռ ոմանց պատուական գըլ-
խոց համար՝ գուրսը մահուան փայտեր կանգ-
նէին, և ծարաւի սուրն արեամբ կոտ լափէր հա-
զարամեայ պայազատուԹեամբ ազնուացեալ ա-
րիւնները, մեկայլոց համար վերէն կրակ Թափե-
լով՝ « զտուն աղօԹից գերեզման յօրինէին. և
» գեհեան հրոյն՝ ուներ զբաբելոնական բոցոյն
» նմանուԹիւն, վերամբարձեալ հրոյն և ծխոյն.
» և զնոյն երդեցին զօրհնուԹիւն (երից մանկանցն,
» և ապա զհրեշտակացն երգս ընդ հովիւան) մին-
» չև՛ ինուալել ոգւոցն յանլուծանելի բանդին:...
» Աւաղ զնոցա այրուձին՛ ի միասին հրով. ո՛ր լսելիք
» բերէին զլուր հառաչանացն. հայր առ որդի և որ-
» դի առ հայր. եղբայր առ եղբայր, և մերձաւոր
» առ մերձաւոր. բայց ոչ կակղացուցանէր զսիրտ
» անօրէնն քառնաւորացն:— Անդ ապա հօր՝ որդեծը-
» նաց գուԹ աղիան այրէր. և՛ ի վերուստ՛ ի ձեղուա-
» նէն անկանէր կրակն, և մանկանցն՛ ի հանգերձան
» վառէր հուրն. հարքն՛ ի բաց կարկէին, զի առ
» նոցա ոլորմամահուԹիւնն՝ զիւրեանցն ոչ յի-
» շէին. և՛ ի զոյգ այրէին առ հասարակ ամենե-
» քեան ». վասն զի « բազմավտանգաւոր հրոյն
» այնորիկ՛ ի նիւԹական մարդկան ձեռաց բար-
» ձրացեալ, հրդեհակէզ եղեալ առաստաղակեալ
» փայտակերան՝ այրեցեալ լինէր. հրկիզի մուրն՝
» ՛ի վերուստ հոսեալ հանդերձ մխախառն հրոյն՝
» հեղձամղձուկ դառն պատուհասիւ զվախճան
» մահու ածելով՛ ի վերայ նոցա ամենեցուն, ծած-
» կեաց զբոլմունն զայն անօգնական՛ ի վերուստ:

» Եւ նոցա անդադար գոհաբանութիւն՝ ընդ ապա-
» ռեալ ոգւոցն դադարեաց: — Այսպէս առ Հա-
» արակ սպառեցան քաղմութիւն նախատրտացն
» Հայոց 'ի դաւաճանութենէն անողորմից: Բայց ոչ
» է Երեմիա մեռաւ, որ զաղէտս անցելոյն՝ ողբօք
» պատմեցէ լսողացն: — Ապրաստուօք բազմաց՝
» մի հոգւոյ, Երեմիա, որ զաչս ալբիւրս իջեցէր.
» 'ի մեր աշխարհս իսկ ծովացաւ արտասուաց ալ-
» բիւրք »:...

Այսպիսի գառնագառն արտասուաց ծով մը հազիւ կարող էր մարելու այն զարհուրելի հրկիզութիւնը, յորում շատ հին Հայկազանց պայազատութիւնք մոխիր դարձան. շատ նախարարութիւնք և սեպհականութիւնք ձլակոտոր եղան, և շատ ծուխք մարեցան: — Սպանելոց և այրելոց մնացեալ ընտանիքն գերեցան. ժամանակ մը նախճաձանի մէջ պահեցին, յետոյ տարին 'ի Դաւին առ Մահմետ. և ամառը բանտի մէջ պահելով՝ աշնան առեն և յաչորդ տարին՝ քշեցին 'ի Դամասկոս առ ամիրապետն, հանդերձ Ալուանից իշխանօք, և շատ աւարով և կողոպտով, որոց մէկ մեծ մասն այլ ևրեւնք յափշտակեր պահեր էին. ինչպէս նաև գերիներէն մէկ քանին այլ. իսկ քըշուածներէն «ղմեռելոցն 'ի ձանապարհի՝ ոչ գի-
» տեմ եթէ ընկալաւ զնոսա գերեզման, և եթէ
» ոչպէս ընկեցեալ եղեն 'ի տեղիս: « Այսպէս
» անժառանգ առնէին զաշխարհս 'ինախարարաց.
» յայնմ ժամանակի Թափուր եղեալ աշխարհս
» Հայոց, մատնէին իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց.
» և Թշնամեացն ամենօրինակ չարեաց յարձա-
» կեալ 'ի վերայ՝ յանհուն ոչեաս վտանգի պա-
» հէին զբնակիչս աշխարհիս. որոց տաղտկացեալ
» յանհանգիստ նեղութենէն՝ զհատուչանս և զա-
» ղաչակ հեծութեանն քարձրացուցանէին յեր-
» կինս »[1]: — Ահա գառնալիշատակ դիպուածն

[1] Ղևոնդ:

եղաւ յամին 705 և 706, զաւակի օրերէն սկսեալ. և այնքան սաստիկ էր սրոյ և հրոյ վրէժն՝ որ Հագարացին անգամ կշտացաւ, և Վարդանակերտի ու Վանանդայ հարուածներըը աւելի մոռնալու համար՝ այս տարին անուանեց Ամհրդէհի կամ կրակի տարի:

Ահաւասիկ, Հայկակ, այսպիսի հրածաւալ ծիրանի ծովու մը խռովացեալ եղեգէն դուրս վազէց՝ յետին պայազատն Գողթան, պատանեկիկն Վահան. որոյ հայրն Խոսրով՝ իր պատուակցաց հետ սրոյ և հրոյ մէջ վկայելով, վերջին և վեհագոյն ժառանգութիւն Թորգոմայ այս երեխայ որդեկին՝ իր նահատակութեան և արբուութեան անունը. զոր և սա աքանչելապէս ժառանգեց, աճեցուց և փայլեցուց: Վահան հազիւ չորս տարուան էր Կրակին տարին. երբ գուցէ ուրիշ աւելի տարւոր աղոց հետ՝ իր քիչ մը մեծ եղբայրքն այլ՝ միամաքառ խայտացուլ գառանց նման խոտովեցան Խրամի տաճարին մէջ, երկու իրեք հեղ օղիկ օղիկ գալով իրենց անձրևած դաստիարակաց և ազգականաց առջև, և միայն ափ մը ճերմակ աճիւն Թորգոմին այնքան խարտեաշ և մատղաշ կերպարաններէն. – և այն զուարթածաւալիկ հասակներն՝ փոխանակ ծերունափայլ ծնողաց ծոցը պսակելու՝ ուրախութեան ժամերու և սենեակներու մէջ, որպէս զշուշանն և զխոտան վայրի՝ վայրենագոյն ձեռքով խլուած՝ յետ առօրեական փայլման մը՝ արևան 'ի հնոց, և ոչ էն, և ոչ ևս երևին. – և բիւրահոս բամբիռն Գողթան համրացեալ լռէ, և չինզուցեր ջողբար այն Թառամեալ դալարութեանց և կայտառութեանց վրայ. վան զի նոյն հարուածն՝ որ զանունք խամրեց ու խարկեց, զինքն այլ չարդեց ու չախչախեց. – և Գողթն գինաւէտ՝ քացխած Թթուեցաւ իր մանրիկ պայազատաց գեռաբողբոջ քաղցրաբարբառ չար-

Թանց հաճար, որոց կաթկըթած կաթին, գի-
նուոյն և արեան միջէն անցան գնացին նորեկ հո-
գիներն. «Եւ հոգիք սուրբ մանկանցն, որպէս
» զերան ազատնեաց Թռուցեալ՝ի յերկինս և
» գասեալ ընդ զուարթունս երկնից[1]»:...

Զ

Վահանայ ուրիշ քաղդ, ուրիշ հանգէս պա-
հուած էր. հասակին մատղաշութիւնն, ծննդեան
ազնուութիւնն և իր ոսկեհատիկ կերպարանաց
շնորհքն՝ ապրեցուցին զինքը՝ի հրոյ և՝ի սրոյ. և
ուրիշ գերեաց հետ հասուցին մինչև՝ի դուռն
Վլթայ ամիրապետի. որ իբրև պատուական որ-
սիկ մ՚ըրած՝ պատուիրեց որ իր արքունեաց մէջ
մեծցընեն զնա մահմետական օրինօք. և անուանը
վերջի գիրը միայն փոխեց տաճկացուց, կոչեց
Վահաղ: Թէև հազիւ ՊՀ մը վաստկելու արժա-
նի էր Վլթի:...

Դամասկոսի սիեզերատառատ արքունեաց մէջ
և խալաժի կենդրոնը մեծցաւ զարգացաւ Վահան.
հոն առաւ իր վայելուչ հասակին չափը, հոն ծաղ-
կեցաւ պատանեկութեամբ իբրև 14 տարի. և թէ
կերպարանաց վայելչութեամբն, թէ մտաց յա-
ջողակութեամբն ամենուն զարմանալի և սիրելի
եղաւ: Թէ և օտար և թանձր դէմ մը իր ծննդեան
և մանկութեան սուրբ կրօնքը պատեր ծածկեր
էր ամէն պէս, սակայն քրիստոսածին աւազա-
նին շնորհքն, իր հօր ծննդեան արիւնէն աւելի՝
նահատակութեան սուրբ արիւնն, և ընտրեալ
հոգւոյ մը յաղթական եռանդն, այն թանձր ամ-
պերը պատռելով դուրս ցոլացընէին ազնուա-
կայլ նշոյլ մը, որ ոչ միայն օտարաց՝ այլ և նոյն

1 Շարական:

իակ ինքեան վահանայ անբացատրելի զմայլմունք և զարմանք մ'էր: Դեռ ծնօտքն չծալկած՝ մօրեղբօրէն կուռայից և կարդացուլաց կրօնքը և գիտութիւնը կրնար վարդապետել. իակ իրեն գրեթէ վարդապետ չէր գտուեր, և ոչ հանճարել խելքին հաւասարող. անանկ որ իր հասակէն վեր պաշտօններու բարձրացաւ. եղաւ արքունի դիւանադպիր. որ մեծ հմտութիւն պահանջէ արաբերէն լեզուն և գրելու. և այլ աւելի պատուոյ և նշանաւորութեանց պիտի հասներ յերկրի, եթէ գերագոյն ևս փառք չպատրաստէին նմա երկինք, որուն անպէտ և անկարծելի՝ հաւատարմութեամբ կու ծառայէր նա, և օրէ օր սիրելի կ'ըլլար ամիրապետացն՝ Վալիտայ (705-715) և անոր եղբօր Սուլէմանայ (715-717), և հօրեղբօրորդւոյն՝ Օմարայ (717-720):

*Այս եղբինա՝ որ զվահան գտաւ ծաղկած պատանութեան մէջ, մեծ յոյս և ինամք ցուցընէր վրան. մանաւանդ որ ինքն այլ բնութեամբ բարեբարոյ և բանասէր էր, և կու չանար՝ ի խաղտութեան և՝ ի հանգամանան պահել իր հպատակները. մինչև իր քով գտուած օտարազգի գերեաց և պատանդից այլ արձակում տուաւ՝ դառնալու իրենց հայրենի երկիրը: Սոնց մէջ գլխաւորք էին Կրակէն տարին գերուած Հայոց ազատորդիքն. որք և խնդութիւն դարձան իրենց տանց և ընտանեաց մնացորդաց մէջ: — Արդէն նոյն ինքն չարեացասարան Վալիտ իր վերջը՝ ի Հայոց առնելէն և պատանդները քովը պահելէն եաև, լսելով մեր աշխարհին մէջ մնացեալ տառապելոց լացն ու բողոքն՝ ի բռնութեանց ոստիկանին Մահմէտ, յետ կանչեր էր զսա Յատրիս, ուր չարաչար մահուամբ կորաւ. «Դժնդակ ախտ մահու զնա ըմբռնեալ՝ վերծին առա-
» կէր. և երկցա Թագեալ վերընկէց լինէր. զի*

» Երկիր ոչ ընդունէր զնորա գարշելի մարմինն.
» ապա կալեալ շուն մի շամփրեցին... և այն-
» պէս ծածկեաց երկիր զչարն զայն »[1]: Անոր
տեղ գնկեց զԱբգլապիզ, որ թէ և խուլ էր ա-
կանջօք, բայց բարեսէր, զուարթաբարոյ և ա-
ռատաձեռնաւոր ծերուկ մը: Սա մեկէն հրաման հա-
նեց որ ամեն փախուցեալ և հեռացեալ Հայք
անվախ դառնան, իրենց տունը տեղը ժառան-
գեն. և ձեռք այլ զարկաւ անոնց մայրաքաղաք
Դուինը նորոգել. վասն զի, կ'ըսէր, երբ այս քա-
ղաքս մենք Արաբացիք տւինք (յամին 640 կամ
647), ես այլ բանակին մէջ էի՝ 12 տարուան
տղայ մը, մեջքս կարմիր շորերով պատած. եր-
բոր մեր զինուորքն քաղքին պարսպին տակ կ'աշ-
խատէին և չէին կրնար ձամբայ գտնել, ես իւ-
ղովակ մը տեսայ, մէջը մոմ և տղայով գացի,
ինքզինքս պարսպին վրայ գտայ. սկսայ պոռալ
կանչել մեր զինուորներուն. տակէ չփոթութիւն
և վախ մ'ընկաւ պահապանաց վրայ Արաբա-
ցիք շուտ մը վրայ հասան, տիրեցին քաղքին ու
սերըշարկեցին. և որովհետև ես եղայ անոր ա-
ւերման պատճառ, պէտք է որ հիմայ այլ ես
ըլլամ նորոգողն »: — Այս խելօք խիկարին ոս-
տիկանութեան առեն, գարձան 'ի Հայս՝ անկէ
կամաւ գաղթող փախչողքն. ինչուան այն Սմբատ
Բագրատունին այլ, որ անխոհեմութեամբ իր
հայրենեաց և ցեղակից հարուածոց պատճառ էր
եղեր, և հիմայ այլևս որ անխոհեմութեամբ և ապ-
երախտութեամբ՝ կոլոպտելով Փոթի քաղաքը
(ուր ամրացեր էր շնորհօք կայսեր), գարձաւ 'ի
Հայս, հետը ձգելով ցեղակից պապանեորուն և
եպիսկոպոսաց զօրքը, անոնց եկեղեցիներն այլ
կողոպտելուն համար:...

[1] Մ. կաղանկատուացի, գ. ժգ:

10477396

Է

Սկսաւ նորէն աշխարհն չինուիլ առնուլ, և այն մեծ հրդեհին մոխիրները քիչ մը մաքրիլ, թէպէտ և կային շատ խանձած գետինք, ուսկից նոր տունկ մը չէր բուսաներ, նոր շինք մը չէր կանգներ. խանկրած աւերակներ՝ դեռ կ'ողբային և ողբալ տային իրենց հին տէրերը, և տարակուսանօք փնտռել նոր պայազատները:... Ախսախի էր և գաւառն Գողթան. ուր քակտած քարուկիրն և արմատախիլ այգիք իրարու խառնուած դիզուած մնացեր էին. տան, տանեւհինգ տարի էր, ոչ թէ հայրապանծ քամբիսն, այլ և ոչ բարբառ մ'ուրախութեան հնչէր այն կողմերը՝ ուր գրեթէ խնդութեան և երգոց բնավայրք էին. այլ միայն ողբապէրը և ահարկու բուիճակաց վայեր ըն ու կային՝ կիսաւեր բուրգէ բուրգ պատէ պատ զարնուելով երթային և դառնային... լռութենէն աւելի տխուր էր այն ձայնն. գիշերուան մթութենէն ցաւագին էր հանդարտաքայլ լուսնին ծաղեքը գետեզերեայ փլատակաց վրայ:...

Սակայն հոն ամենէն տխրաշարժ միանգամայն և սիրաշարժ երևոյթն էր՝ աւանդութեան ցուցանծն: Իբրև դիցակերպ ոգի մը, ուրհի մը այն մեռելատիպ միայնութենէն, կէս աև կէս ձերմակ, թէ ոչ յաւերժահարան՝ գոնէ գիշերահարսն հեզաձեմ. որ լուսնին ծառէ ծառ անցուցած շուքերուն հետ սահելով կու գայ լուիկ մնջիկ իր ցորեկուան հովանոց՝ գիշերուան մենանոցը, սաղարթապատ սարբինայից տակ, անշուշտ յետոյ ալ վազող առուակի մը քով. որուն հոմանձայն հոմավանկ կարկաչանքն՝ իր համանման մտածմանց և անդաձմանց սիրելի արձագանգք են. — ինչքն արտմութեան և լուսնին գոյներն առած՝ փափուկ

ծնօտը կու հանդչեցընէ արծաթափայլ ծղեացը վրայ. և գրեթէ անշարժ անշուշտ կու նայի կիսաբաց աչօք, որոց ոչ սևուԹիւնը, ոչ արտասուքը և ոչ դիտած կէտը կրնայ նշմարուիլ.—աւելի մեծ լամպէնիկ Մելտոմենի մարմարեայ անդրի մը կարծուէր՝ յանկարծ հանդիպողի մը, քան կենդանի կոյս մը, եռանդուն օրիորդ մը, ազնուազարուն պայազատ մը,... դաստիկ մը Խոսրովու, փոքր Վահանայ ԳողԹնացւոյ:...

Ահն ազնիւ, դերազնիւ աննման քերոց մէկն է սա, որոյ վրայ դեռ պատմուԹիւնն գրով չէ խօսած, այլբերանացի աւանդուԹեամբ հասուցած. այն մեծասիրտ հայկազն օրիորդաց մէկն, որոց համար եԹէ հայրենիքս կանգուն ըլլար՝ կրնար առանձին տաճար մ'այլ կանգնել. այն որբացեալ քոյրերէն մէկն, որ ամեն օր տարաժամ վախճանեալ ծնողաց գերեզմաններըը արցունքովլուսալէն եաև, աչուընին սրբելու կու կանչեն հեռացեալ վարեցեալ եղբայր մը. եղբայր մը, որ քան իրենց սիրնականու տան փեսայ՝ աւելի քաղցր և ցանկալի կ'երևի: Բաղդ և դիպուածք, գրեթէ անունով այլ նման ըլլեր էին զա՝ մեր Հայոց օրիորդաց նախ անձեմ և ապա սրբաձեմ պարագլխին, Ս. Խոսրովիդխտոյ, որ մեծին Խոսրովու դուստր էր, ինչպէս սա ԳողԹան իշխանին Խոսրովու: Ուրեմն իրաւապէս, (մանաւանդ քանի որ պատմուԹիւնն լռէ) սա այլ Խոսրովիդուխտ կրնայ կոչուիլ (որ է ըսել դուստր Խոսրովի):— Երբ Անակ ՊարԹև և Արտաշէր Սասանեան սպաննեցին անոր հայրը և ընտանիքը Թրքէ անցուցին, զինքն ապատեց իր պայեակն Օտա նախարար. անոր մէկ փոքրիկ եղբայրն այլ (որ յետոյ եղաւ Մեծն Տրդատ) ուրիշ իշխան մ'առաւ փախուց մինչև յարքունիս Հռոմ-

մայ ինքնակալաց.—իսկ սուր եղբայրիկը՝նոյն իսկ պերտոզք աշխարհին և հօրը սպանողքն սարսին՝ այս

10477396

աւետման ինքնակալաց արքունիքը, ՚ի Դամասկոս.— քոյրն Տրդատայ՝ Խոսրովիդուխտ՝ մեծաց եաւ նահէր ՚ի բարձր աշտարակի ամրոցին Կամախայ, կու նայէր եփրատագնաց Գայլ գետոյն աչեաց վրայ, և 15–20 տարի կու հառաչէր, թէ երբ պիտի գայ իմ Տրդատ եղբայրս, կանգնելու իմ սիրտս, մեր հօրը Թագը և Հայոց աշխարհը.— քոյրն Վահանայ նորա Խոսրովիդուխտ, իր կիսաւեր հայրենեաց մեծանոցին մէջ նստած, իբրև 15 տարի հալէր և հառաչէր, թէ երբ պիտի գայ իմ Վահան եղբայրս՝ կանգնելու իմ սիրտս, մեր հօր յիշատակը և Գողթան աւերակները: — Իր սիրտը, և ցաւալից ցնորմանց մէջ անշուշտ շատ հեղ ուզեր էր ինչուան Երասխայ արևելեայ ընթացքն այլ փոխել՝ Եփրատայ և Տիգրիսի նման գէպ՚ի հարաւ, և իր հօր պալատին խանձած տախտակաց մէկը լաստելով՝ նստիլ վրան, սահիլ ինչնել մինչև ՚ի դուռն Դամասկոսի, և գարձընել բերել զՎահան մինչև յայգիս Գողթան: — Զկարցաւ Խոսրովիդուխտ գետոյն ընթացքը փոխել, այլ իր արտասուաց անփոփոխ գետը հասուց մինչև առ եղբայրը:...

Վահան հասակով և արտով զարդացեալ՝ արդէն լեր իմացեր էր իր ծագումը, և շատոնց սկսեր էր սրտին մէջ երկու կրօնից, երկու հայրենեաց, երկու սիրոյ կռիւներն. և արդէն յաղթող կ՚երևէր նորէն կռվին քնիկ հայրենեաց, Հայաստանի, Խոսրովիդխատոյ և քրիստոնէութեան, ՚ի վերայ մահմետական կրօնից և ամիրապետաց տուած և տալու բարեաց, իշխանութեանց և արևելեայ փառաւոր հարսանց և հարճից: Իմացեր էր իր ինչ կորիւն ըլլալն, և անկէ ետև խալիֆայից սակեպատ պալատն՝ իրեն գառապիսի մը կ՚երևէր. ընդարձակ կրօնքի մը հայթայթած ամեն փափկութիւնքն՝ կ՚ոչնչանային իր հայրենի գառատեսն, սուրբ եկե-

ղեցւոյ և քրոջ մը ցանկալի յիշատակաց և վայե-
լից տալէ: Փափաք, կարօտ, և անկէ վեր՝ կրօնա-
կան մտածութիւն մը, խիղճ մը՝ ակատն տանջել
այն սիրտը, որ եռանդնագոյն ատենին մէջ
միայն հեշտութիւն գիտեր ընտանեաց էր: Ա յա-
սէն ակատ օտարն Վահագ՝ ինքնիրեն փոխուիլ
՚ի բնիկն Վահան:...

Տեսնելով որ մէկիկ մէկիկ իր գերութեան ըն-
կերակիցքն կու գառնան ՚ի հայրենիս և ինքն գրե-
թէ մինակ կու մնայ, այլ չդիմանալով գնաց առ
Օմար, և շատ ջերմեռանդութեամբ յայտնեց
փափագը, որ զինքն այլ գարձնէ իր ծննդեան եր-
կիրը՝ վան զի կ՚ըսէ վիպասանն, էր նա «խօսիք
» քաջ կորովի, և ծանուցանէր զիւր գժուարա-
մտութիւնն», այսինքն արտին նեղութիւնը: Բայց
ամիրապետին աւելի ծանր երևցաւ Թողուլ ար-
ձակել զնա, քան թէ բոլոր մեկայլ գերիները.
վան զի իր ազգակցաց մէջն անպատմ Վահանայ
պէս ճարտար, խելացի և վայելուչ պաշտօնեայ
մը չունէր. սկսաւ տարակոյս հանել և չհաւա-
տալ ձևացընել, վկայ փնտռել Վահանայ ըսած-
ներուն.—որուն փութացան հոն գտնուղ Հայք
երաշխաւոր ըլլալ. Օմար՝ Հայոց վկայութիւնը
չուզեց ընդունիլ: Վահան գտաւ մահմետական
բարեկամ իշխաններ ու պաշտօնեաներ այլ՝ որ
զնոյն վկայութիւնը տուին. Օմար անոնց այլևս
զեց հաւատալ: Պէտք եղաւ մարդ ղրկել մինչև
՚ի Մէկքաթեաք, «առ քննող գրոցն», Վահանայ
որպիսութիւնը տեսչելու համար. հոն 15 Տա-
ճիկ գտնուեցան որ լաւ գիտէին Կրակին դիպուա-
ծը՛և Վահանայ ո՛վ և ինչ ըլլալը, միանգամայն և
ատոր բարեկամ էին. ուստի իր ուզածին նման
վկայութիւն տուին:

Օմար այլ չկարենալով ոչ յայտնի տեսչութի-
ւնը մերժել, և ոչ իր գերեզարձի հրամանը,

10477396

ակաա անուշրութեամբ ողոքել իր Վահապը և յիշեցընել անոր տրուած պատիւը և պաշտօնը, որոց վրայ այլ աւելին այլ պիտի տար: Վահան շնորհակալ ըլլալով յիշեցուց ամիրապետին թէ ինքն այլ իր հայրենեաց մէջ ունեցեր է մեծ ժառանգութիւն, հին և մեծազգի ցեղ մը, որ թէ հայրենական շատ ստացուածք ունէին և թէ Պարսից տէրութեան ծառայելով՝ աւելի շատցուցեր էին. և « յոլով գանձիւք մեծացան քան զբա- » զում ազատս՝ որ յերկրին իմում էին ». և զգալով իր առաքինի նախնեաց քաջութիւնը՝ պարծենալով քաջապէս և գեղեցկապէս կ'ըսէր, թէ քիչ չեն իր նախնեաց և հարց նիշերն ի ապչեան վտոփոփ: Եւ երբ Օմար կէս հաւան կէս հակառակ՝ կու իտա- տովանէր թէ անոր այդ ամեն հայրենի աւերուածքն հիմայ անապատ աւերակ դարձեր են, Վահան կանչեց սքանչելի և խոր զգացմամբ, ոսկի գրով դրոշմելու բան մը. Ուրեմն « ապրիլէդ, որ » քեռանէմ զորութիւն աւերածոյ երկրին իմոյ հայոց » նէտց »: Այս այրած տրուի գոչման ինչպէս կրնար հակառակիլ Օմար. բայց միայն պահանջեց որ եթէ Թէ երթայ և աեանէ այն աւերակները՝ չմնայ ա- նոնց մէջ, այլ դառնայ իրեն: Վահան իսկոյն տուաւ որ կ'երթայ, և « ձեր հրամանաւ գործակալ ա- » րարեալ (իմ երկիրնեւրուս՝ դարձեալ) առ քեզ » հասանեմ »: — Ստիպուեցաւ Օմար հրովարտակ տալ Վահանայ ձեռքը, որ երթայ իր հրամանաւը հայրենի ստացուածքը ժառանգէ, և Գողթան աէր ձանաչուի:

10477396

Ը

Ոչ տաճիկ ուզա և ոչ արաբիկ նժոյգ սրբեն թաց, այլ կարծեմ թէ փայլակն էր որ զվահան տանէր Թուցինէր Նաորւոց և Մխչագեատց անապատներուն և դաշտերուն ընդարձակութենէն, և մեր վաստուրական աշխարհէն կու հասցընէր Երասխ գետոյն եզերքը. որոյ պայծառ և կարկաչուն ջուրն ջրերուն մէջ ճխալով անցաւ Հին Ջուղայի կամ Որդուպատայ մօտի հունէրէն, և փայլակն ընթաց անդրուվարը ուղղեց անխոտոր յարևելք՝ ի գաւառն Գողթան. փոխանակ անոր գինաւէտ այգեաց՝ տեսնելու նախ պընդոյժակութիւն աւերածոյ էութեն հայրենեաց: Սակայն ուրիշ կրակով վառուած միտքն՝ կու բաներ զաչքը. աւերակներն չէն կ'երևէին իրեն, չէն քնութիւնն՝ աւերակ կ'երևէր իրեն. լաւ ևս ըսել, ապատ և անապատ իրարմէ չէին որոշուեր: Երբ իմացաւ որ իր հայրենի տահմաններուն մէջ մտեր՝ անոր ամայացեալ ապարանից կու մօտենայ, հեռուէն՝ ամեն շարժուն և կենդանի արարած, ամեն մարդկային կերպարանքը՝ կամ իր ծնած տնէն ընդ առաջ եկող մը կարծէր, կամ զնոյն ինքն իր քոյրը: —

Ո՞վ գիտէ ուր հանդիպեցաւ աստր, ուր գտան և տեսան զնոյնր 15 տարիէ վեր զատուած քոյրն և եղբայրն, որք և հազիւ տեսեր էին զնոյնր ի տղայութեան հասակին, և հիմայ յանկարծ մէկմէկու գիրկ գտուեցան դիւցազնացեալ կերպարանօք և հասակաւ: — Արդեօք իր մեծատաւ մեծնանոցին մէջն էր Խոսրովիդուխտ՝ աստրակա-

10477396

եղեան ափունքը, ինքն այլ անհամբեր՝ ձիւնապատ կարապի մը պէս նետուեցաւ փրփրոց մէջ, ուր գեռոյն զովութենէն աւելի հաճութեամբ ճաշակեցին անոնման քեռ և եղբօր սիրոյ քաղցրութիւնը։.. Ի՛նչ զմայլմունք էր Խուրովխատոյ՝ տեսնել իր 18 ամեայ կտրիճ եղբայրը, իր մեհատիկ ցանկալին, հոս՝ արդարև վահապնակերպ ծիրանի ծովէն խարտեաշ մազերով պատենեակի մը պէս ելնել և հակայակերպ ցատքել հայրենի հողուն վրայ։— Ի՛նչ զմայլմունք էր Վահանայ այլ՝ տեսնել իր մեհատիկը, մեծասիրտ քոյրը, հայկագեղ օրիորդը, յորում կու նշմարէր իր մայրն այլ, իր ամեն հարազատներն այլ։։ Ի՞նչ տաք տաք արտով աչքով ու բերնով առին և տուին իրարու. և ի՞նչ փարելի թևակցութեամբ երբեմն նստեալ՝ ի պատեռուն, երբեմն ձիով և ոտքով քայլէին քննէին իրենց հայրենի երկրին ոլորտքը, մեհ մեհ տեսնելով և որոշելով զէնն ու զանէն. և իրենց սիրական նշաններն ու սահմանախաչերը կանգնելով և նորոգելով։

Գաւառէ գաւառ հռչակեցաւ լուրն, Թէ դարձեր եկեր է Խուրովու պայազատն, Գողթնեաց իշխան կարգուեր է ցանկալին Վահան։ — Ամեն կողմէ եկան շնորհաւորք, խնդակիցք, մեծարողք. ժողովեցան բոլոր Սիւնեաց իշխանք և մեծամեծք, իրենց մեհ գլխաւոր իշխանակցին պայազատը պատուելու և բազմեցընելու գնա՝ի գահն հայրենի. ուրախութեան և կենդանութեան ձայներ հնչեցին ամեն գեղ ամեն տեղ. սգոյ նշաններն վերցուեցան. եկեղեցի և տաճար երգով և օրհնութեամբ լցուան. մինչև՝ի գարնատաս կուսանաց և օրիորդաց հնչեց համբաւն. և ոչ սակաւք սրտերնին յոյս մը դրին Խուրովու պայազատին վրայ. բոլոր երկիր կու Թնդար կու պարէր վասն Վահանայ։։։ Իսկ ինքն Վահա՞ն։։։

10477396

Թ

Ո՛րչափ զարմանալի և անճառական է մարդս՝ երբեմն երկրիս ամենայն հանդիսից և հրաշալեացս մէջ այլ՝ երկնից հանդէսն և հրաշէրը դիտէ: Ամենքն երկրաւոր բարեկենդանութիւն կու մատածէին կ՛առաջարկէին, կու խնդային. միայն Վահան՝ որոյ համար էր այդ ամեն եղած և ըլլալիք, Վահան միայն լուրջ և հանդարտ կու մտածէր. երկու ծանր բան միտքն ու սիրտը կու ճնշէր. մէկ մ՛որ ամբապետին խօսք առեր էր իր գործերը հոս կարգաւորելու և դառնալու առ նա. մէկ մ՛այլ որ ինքն՝ թէ և ակամայ և առանց գիտութեան՝ ուրացող սեպուեր էր սուրբ հաւատոց, և թոյլ ու թանձր կրօնից մէջ մեծցեր էր: Կ՛ուզէր երկուքին այլ հաւատարիմ ըլլալ, թէ երկրաւոր իշխանին, և թէ ևս առաւել երկնաւորին. անոր՝ քոմէն երթալով, իսկ Աստր՝ քովէն երբէք չզատուելով, քրիստոնէութեան կրօնից պարտուք և սիրով: Իսկ իր քոյրն և մերձաւորք և բարեկամք, բոլոր Գողթն, և գաւառք և իշխանք Սիւնեաց՝ կու յորդորէին զնա թողուլ կամ այլափոխել իր ծանր մատծութիւնները, և հաստարակաց խնդութեան մասնակից ըլլալ, մանաւանդ թէ պարապ գլուխ և առաջնորդ: Ջանացին ցուցին որ կենաց օրինաւոր պարտուց յանձնառութիւնն՝ արգելք մը չէր իր քրիստոնէաբար ապրելուն, և սիրապետան այլ հաճելու հնարք կրնային ճարել. մեծամեծքն միաբան յորդորէին որ իր հին և պանծալի տանը ձրագը չմարէ, որուն յետին կայծ ինքն էր մնացեր, և սուրբ ամուսնութեամբ իր հօր նման՝ Աստուծով պարգևէ իր երկրին պայծառ պայազատներ: — Գրեթէ պարտաւորեցին, ամաչեցուցին պարկեշտ պատանին. ձայն տուաւ

Սիւնեաց նահապետն (Բաբգէն?), որ այն աշխարհին երկոտասան գաւառապետաց (որոց մէկն էր Վահան) նախագլուխ էր և Թագաւորաբերդ պատիւ ունէր։ Գնացին իր մեծափառ ապարանքէն ընտրեցին վերուցին զանձինն յաշնուաց. և ինչպէս արծըլթէ սկաւառակի վայր դրուած շառափայլ նուռ մը, ըերին մատուցին Վահանայ՝ զնազեալն Սիսակուհին [1], որուն միայն՝ հաճոյ Թեամբ տեղ կու տար և Խոսրովիդուխտ՝ իր եղբօր սրտին մէջ. և սա պատկառանօք հաւանեցաւ։ Զուգեցին ոսկին արծաթոյն հետ. զպերճափայլ պայազատն Գողթան ընդ բիւրեղափայլ օրիորդին Սիւնեաց. հնչեցին երգք հարսանեաց, գովեցին Թմբուկք ծնծաղիանք, բոլորեցան պարք ուրախութեան. պարսպեցան շատ կարասք գինւոյ Գողթան այգեաց. և սխրութեամբ ջախջախեալ բամբիռն՝ անգամ մ'այլ արծարծեցաւ 'ի նորոգութեան հայրենեաց։

Ո՛վ, որքան վսեմ և գեղեցիկ էր Վահան «յաւուր փեսայութեան իւրում», յայնմ իւր քրոջ և 'ի ձախմէ հարսին իւրոյ, որոց մէկն ծիրանեաւ մլուան բեհեզով էին զարդարուած. երկուքն այլ աննմանք, երկուքն այլ սրտին զանազան կերպով մէկմէկէ սիրելիք։ Ո՛րքան տարբեր՝ հեզանազ, արբիկ, կենդանի և երկնախառն էր այս հայկուհեաց շնորհքն և սէրն՝ քան զտաճկուհի գաւեթացն Դամասկոսի յապարանս ամիրապետաց։ — Քրիստոսի սուրբ և անապական կրօնից ազատ պաշտաման հետ, հինայ տրուեցաւ Վահանայ վայելել սրտից հզօրագոյն կիրքը՝ 'ի սրբութիւն փոխարկեալ եկեղեցւոյ խորհրդոյն։ — Կարիճ և առաքինի պայազատ իշխանորդւոյ մը՝ չկար Թեր-

1 Օրիորդին անունն յայտնի չէ. այսպէս անուանեցինք մենք, որ Սիւնեաց օրիորդ մը կու նշանակէ։

և քան զայս վայելուչ փափագելի և յաջող վայելք մը. զոր և անփորձ և երկար և բազմապտուղ մաղթելով իր ամեն բարեկամքն, զոլզոթան և Սիւնիք, իրենց տեղը քաշուեցան, թողլով զնորապատակ իշխանն Գողթան իր վայելից փառաց և նոր կենաց ընդարձակ աստիճան մը մէջ:

Ո՛րչափ փայլուն և վառվռուն կրնար ըլլալ այս աստիճանս՝ երբ մանկութեան, կտրճութեան, հասըլտուութեան, պատիւ, սէր՝ մէկմէկ կենաց վտակներու պէս յորդէին յորդորէին առատ սրտի մը մէջ. — փոխանակ իր ծննդեան ցաւալի դէպքերուն, այն աշխարհաւեր կրակին և ծնողապանսրոյն, ինչ մխիթարութիւններ և զբօսանքներ չէր կրնար ձարել Վահան. աշխարհակալ ամիրապետի մը սէր և օգնութիւն՝ զինքն իր հայրենեաց և իշխանաց մէջ՝ օրչափ գերազանց և նախանձելի կրնար ընել: Այսպիսի բարեբաղդ պատանի պայազատ մ'առջև՝ աշխարհք, այն խաւսուտիկ խաբուսիկ աշխարհս՝ ինչ նոր և պայծառ գոյներ չէր առնուր. և իբրև հանդարտ լճի մը վրայ նետուած քարէ մը (այնպիսի սրտի մը մղմամբ՝ ի ծով փափկութեան), ինչ հեռզհեռէ մէկմէկէ ընդարձակ բոլորակ ծիրեր կու ձգէին ցանծանօթ ոլորտս կենաց հորիզոնին: — Այո՛, այո՛. կարելի էին այս և այսպիսիք. և ոչ անկարելի վիպասանի մը կամ մտածողի մը՝ այն իրարմէ մըլուսած ջրոց հեշտալի ծիրերուն եաւէն երթալով՝ ցանկալի կենաց պարագաներ ստեղծել, և Գողթան իշխանին կենաց բոլոր ընթացքը գարնանային ծաղկանց պսակով հիւսել:...

Սակայն Վահան, նրբամիտ և վեհասիրտ Վահան՝ ընտրեց գերագոյն և ծաղկուներ, հիւսեց անթառամ պսակ. փորձեց ընդարձակագոյն աստիճան մը, բացաւ Հանդարտ մը՝ անծանօթ իր

10477396

Հասակակցաց և մտերիմ սրտակցացն: Ոչ Թըռ-
չունք և անգեղք Յովքայ տեսան այս չաւխոլը, և
ոչ այս Ճամբան Ճանչցաւ սրտհեշտ աչքն Սոլո-
մոնի. որ երբեմն կու խոստովանէր Թէ իրեն մե-
ծագոյն այլ անհմանալի կու ճնար երիտասարդին
սիրտը. երբեմն վատահանալով՝ իրատ կու տար
անոր, Թէ «Ուրախ լեր, երիտասարդ, ՚ի մանկու-
» Թեան քումմ, և զուարճացուսցէ զքեզ սիրտ
» քո՝ յաւուրս մանկութեան քո»: Մ՚իայն աս-
տուածային արծուին կու հասնի այն չաւիղին. և
Մէջն փան ԱՍողոմոն (Քրիստոս) կրնար բանալ այն
Ճամբան, յոր նետուեցաւ մտաւ և Վահան. և
ահա բարձր էր քան զերկիրս իր ատպարէզն և
ընթացքն: Աչխարհիս յոյն և հեւասածն՝ հոս կու
կարձատի կու կարատի. պատմութիւնն և կեան-
քըն՝ հասարակաց կարծած կերպարանքը կու
փոխէ. երկնային արիւնթեան, իմաստութեան և
սիրոյ հանդէսք կու բացուին: Նոր և հզօրագոյն
կրակով մը՝ դարձեալ կու խաւրի կու լուէ բամ-
բիռն Գողթան, որ պիտ Վահանայ ըրածին նման
գործ մը չէր երգած:.. Թո՛ղ երթայ նա Որդուա-
ծայ և Աղուենց հինաւուրց լայնատարած աս-
տեաց մէջ ծածկուած կախուի կենայ, լուռ մուռ
դնատ ու տովին. ապա Թէ փորձէ երգ մը, երգ
նոր ՚ի տէր Վահան՝ Գողթնեացն իչխեցոյ. զոր
և մենք յետոյ լսենք:...

Ժ

Հազիւ Թէ Գողթան իչխանութիւնն առեր և
դեռ չէր տեղաւորուած Վահան, երբ հասաւ լուր
տարաժամ մահուան ամիրապետին Օմարայ (720),
որ մեր պատմի պայազատին մտերմաց տնաքն-
կալ առիթ մը ստպուեցաւ աղատելու զնա իր
խոստմունքէն, այսինքն յետս դառնալուն ՚ի Դա-

մասկոս: Սակայն նա աւելի քանիքուն ըլլալով՝ այլ մեծագոյն պժարութիւն կու տեանէր. գիտէր որ իր խոստմունքն անծանօթ չէր խալիֆային պաշտօնէից, և օր մը խնդիր պիտի ըլլար, վինքը վնասէին. միշտ կասկածանաց մէջ՝ կու լսեր հաւատարմաց ձեռօք՝ Թէ իր վրայ ինչ զրոյց կ'ընէ այ'ի գուռն Դամասկոսի, և Եզիտայ քով՝ որ յաջորդեց Օմարայ՝ հինգ տարի: — Կասկածանք իր վրայ, հոգ՝ սրտին հետ կապուած անձին և ընտանեաց վրայ, աւելի մեծ հոգ՝ իր հաւատոյ հաստատութեան վրայ. — կամ հալածական և փախստական կեանք մը, կամ ապգնապ և տանջանք, և կամ ինքնակամ անձնատուր ըլլալ անոնց՝ որոց քովէն ելաւ եկաւ, բայց ոչ ինչպէս եկաւ՝ անանկ դառնալով, այլ իբրև նահատակ Քրիստոսի: Պատրաստութիւն այսպիսի նուիրման և վկայութեան վասն Քրիստոսի՝ արեամբ և կենօք. — վնջլ և ոչնչութիւն իր առաջին ազգային կենաց վարուց վրայ. և վերջապէս բոլորանուէր ջոհուիլ մարտիրոսութեամբ: Ա յս եղաւ Վահանայ երկրորդ ման կենաց. որ առաջնոյն չափ 18 տարի տևեց:

Իր օրինաւոր կասկածն շուտով ստուգեցաւ. լեց որ իմացուեր է'ի գուռն ամիրապետաց իր դարձն'ի քրիստոնէութիւն, և լուսաւոր հաւատով վարուիլն ու իննամեանն Սիւնեաց նախարարին: Եթէ անկէ ետև մնար իր տեղը, կամ չլսելով կանչուելուն, կամ իբրև ապստամբ՝ աշխարհին ամուր տեղուանքը ապաստանելով, ոչ միայն իրեն՝ այլ և իր ընտանեաց և Գողթան, և Սիւնեաց, Թեղուս և բոլոր Հայոց նոր վտանգներ և նոր կրակներ կրնար պատճառել. — իսկ եթէ ինքն իր կամօք երթար ամիրապետին, կ'երևար Թէ ոչ միայն մեկ մ'այլ իր երկիրը չափահ տեսանէր, այլ և ոչ իր ամուսինը, իր ձիմարիտ սիրելիքը, իր վե-

10477396

լսածնոյ սուրբ եկեղեցին, և գուցէ նոյն իսկ իր գալար սրևը: Թերևս այս եաքինա կ'ընարէր Վահան, եթէ կենաց ծակցուածեան, ընտանեկան և ինամեկան պարտքեր չունենար, եթէ իր հարսն և հայրանանան քրոջ սէրն՝ իր սրտին կարմիր օղեր անցուցած չըլլային: Ապա մէկ հատիկ խոհեմութեան Ճամբայ, ընդ մէջ երկնից և երկրի, և երկուքին իրատանց այլ հաւանելի, կու մնայր՝ անանկ տեղ մը քաշուիլ, ուր թէ զինքն և իր կենաց կցորդքն ապրեցընէ, և թէ իր աշխարհին վըտանգ և բռնութիւն չհասցընէ՝ զինքը փնտռողներուն ձեռօք: — Ահա ապահով տեղն էր Ցունաց կայսերութիւնը. մէկ հատիկ հզօր տէրութիւն՝ որ կրնար դիմամարտիլ ընդ Հագարացւոց, և ուր միշտ կ'ապաւինէին նեղեալ իշխանքն Հայոց, իբրև ինքնակամ և գաղտուկ երթալով, որպէս զի մնացեալ ազգականաց և իշխանակցաց չըսաս չհանի՝ անոնց վըայ սիրապետողներէն: — Ահա զայս մտածեց Վահան, և ձեռք զարկաւ:

Դեռ նոր ժառանգած տէրութեանը և աշխարհին՝ ծածուկ բարով մնաս ըսելով, և յաւիտենական բարով մնաս մը, առաւ կինն ու ընտանիքը, և բաւական առակ. իր դրան մարդիկներէն այլ միայն քան հեծեալ, առանց անոնց իմացը. նելու ընելիքը. ու գնաց նախ՝ ի գաւառն Վայոց ձոր իր աներոջ քով, իբրև տեսութեան համար. և մինչ իր հայրագիրն իբրև երկրորդ անգամ հարսանեկան հանդէսներ կ'ընէր՝ ի պատիւ փեսային և տիկին գաւառը, նա միշտ իր կեսին մնաք բարովը կ'ըսէր՝ ի սրտէն, իրմէն աւելի ցաւելով իրենեերուն վրայ՝ երբոր լսէին իր տարագնացութիւնը. և չէր գիտեր թէ ինչպէս յայտնէ կամ ինչպէս ծածկէ: — Վերջապէս բաւական ժամանակ կենալէն ետև աներոջը քով, որուն միայն գաղտուկ իմացուցեր էր միտքը, պատրաստեցաւ

նորէն ձամբու, և լսելութեամբ կու դիտէր իր միա-
միտ ընակցին սիրալիր ապտպատանքն առ ծնող
իւր, գուցէ վատահութեամբ մայրական յոտա-
մը, և քիչ առենէն նորէն առանուելու: Բայց ինչ
ըսրմանք և ապշութիւն եկաւ ատոր՝ երբ փոխա-
նակ դէպ ի հարաւ ի Գողթն դառնալու, Վա-
հան նշան տուաւ ուղղելու դէպ յարևմուտս և
ի հիւսիս, յանծանօթ կողմն և ձանապարհ: —
Նախ շուարելով, վերջը շտկմելով շտկքելով Դա-
լիէայ պէս՝ ապշեց թախանձեց կինն, սոխպեց
Վահան՝ որ յայտնէ ուր երթալը. և իմանալուն
պէս այլ՝ անհամբերութեամբ իմացուց իր իշխա-
նապետն եղբարցը, որոնք մէկմէկ վիճակի տէր էին.
և ժարելով իրենց քրոջ անդարձ պանդխտու-
թեանը վրայ, ձայն վերուցին, ողբեցին բողբե-
ցին, լացին լացուցին, հազարումէկ արդելք հա-
նեցին Վահանայ. անկարելի է ի՛ըսէին երթալդ,
և թէ քեզի թէ մեզի վտանգ. եթէ մնաս հոս՝ մենք
քեզի, դու մեզի պաշտպան ի՛ըլլաս. իսկ այսպէս
երթալովդ՝ «Դու մեզ՝ ոչ կենդանի լինիս և ոչ
մեռեալ». և շատ, բայց փուճ կերպեր կու ցու-
ցընէին չերթալու և մնալու: Եւ երբ Վահան ա-
նոնց ամեն տկար պատճառները մէկ խօսքով կըտ-
րեց, անոնք աւելի պարտաւորելու կամ պատ-
կառեցընելու համար ի՛ըսէին. եթէ ասանկ է՝
մենք այլ հետդ ի՛երթանք մեր անով առղով. «Ընդ
» քեզ գամք ի կեալ և ի մեռանել յօտար եր-
» կիրն. քեզ ողբակցեալ՝ անկցուք անցամաքելի
» արտասուօք»: — Ախուր զրուցուածք, այլ
առենէ դուրս:

Տեսաւ Վահան որ ամենէն մեծ վտանգը՝ անոնք
կու պատրաստեն իրեն. ուրէք իմացաւ որ սիրե-
լիքն են իրեն գլխաւոր արգելքն. յայտնի երևցաւ
որ առուտուածային շնորհքն և իմաստութիւնն էր
զինքը շարժողն, իսկ զանոնք՝ անխոհեմ և կանա-

յի մտածութիւն և սէր: — Ջանի՛ կարիմ, իմաստուն և առաքինի մարդիկ այսպիսի աւերից վէջ զոհ եղած են՝ իրենց և իրենց սիրելւոյն օգուտը չճանչցող Թոյլ սրտով, քան Թէ ամուր գլխով մտացող մերձաւոր և մուերիմ մարդկանց. — Մեկն այլ Վահան եղաւ, գրեթէ աչօք բացօք տեսնելով հեռաւոր ըլլալիքը, և ակամայ լռելով ու Թողլով զինքն անոնց կարճ տեսութեանը: Ասիկայ մեծ և շատ մեծ ողբերգական կնճիռ և պատահար մ'էր իր կենացը, Թատերաբանից ձարտարութեան շատ յարմար առիթ և տեսարան. զոր և իր հին վիպասանն կ'ակնարկէ իւր տեսութէ համառօտիւ. « Փորձութիւն հպէր յայրն 'ի վար. » ձողէն. և քննութիւն կամացն՝ երևեալ պէս » յայտնելով զառն փառաւորութիւնն, որպէս » զի որոշեցի սէրն զոր ունէր յինքեան, առ Ա՝ » տուած՝ եթէ աչխարհի սէր, և որ 'ի նմա յար. » մարին ցանկութիւնք »:

ԺԱ

Շուտով հասաւ այս տեսարանը այլակերպող տեսարանն այլ. մինչդեռ իր աներձապքն իրենց քոյրը և փեսանին ապրեցընել կամ վայելել կարծելով՝ աւեն կորսընցընէին, ամիրապետին կոչմէն Վահանը փնտռտոլք կուգային. հիմայ ոչ կըրնային զնա պահել, և ոչ այլ անոր առաջուան ուզածին պէս փախցընել. հարկ եղաւ որ Թողուն զնա իր գլխուն: Իսկ նա միշտ զոհ Աստուծոյ կամաց, շնորհակալ այլ եղաւ որ անոնց կարճ մտածութիւնն կերպով մ'իրեն աւելի ազատութիւն տուաւ՝ ինքզինքը միայն հոգալու: Հանդերձեալ և յաւիտենական յուսոյ մը համբոյրը կնքեց 'ի ծոց կարճատես կենակցին. յանձնեց զնա իր եղբարցը, Թողլով անոր՝ հետն առած սոսկին և

10477396

գանձուց մեծ մեան և ծառայեցը. և ինքն քիչ մը թոշակով և քանի մը հեծելօք ցասքելով Սիւնեաց ձորերէն և լեռներէն, շուտ շուտ հեռացաւ անցաւ գնաց 'ի Վրաստան. որ ամրութեամբ և հեռաւորութեամբն՝ աւելի անփորձ և անվտանգ ճնացեր էր յԱկրաբացւոց. Վահանայ ծանօթ իշխաններ այլ կային հոն, որոց օգնութեամբ կրնար գարձեալ իր առջի գիտաւորութիւնը կատարել, այսինքն երթալ յաշխարհ Յունաց. թէ և հիմայ ոչ այնպէս օգտակար էր իրեն և ոչ իրենները. և անշուշտ ատոր համար այլ՝ Վրաց իշխանքն չօգնեցին իրեն, որ տարուայ մը չափ կեցաւ անոնց քով, մանաւանդ թէ ինքն իր քով և Աստուծոյ քով: Վասն զի երբ մինակ գտաւ զինքն՝ իր նախ առաջին մտածութեանը և յօժարութեանը թողուց բոլորովին. այսինքն զաշխարհ ոտից տակ դնել և միայն հանդերձեալ կեանքը մտածել, ապաշխարողի և ճգնաւորի պէս անցընելով իր օրերը: Ա յս բանիս մանաւոր կերպով մ'այլ պարտական սեպէր զինքը Վահան, նախնի քրիստոնէից երկիւղած բարեպաշտութեամբը. ոյք գրեթէ հարկ համարէին ուրացութենէ դարձողաց՝ կամ մարտիրոսութեամբ կամ միանչեանաւոր ապաշխարութեամբ կինքել կեանքերնին. թէ և Վահան կամաւ և գիտութեամբ ուրացեալ չէր, սակայն գործով այս երկու պայմանն այլ կատարեց. 'ի վերայ հին մկրտութեան աւազանին՝ աւելցնելով զերկրորդ և զերրորդ մկրտութիւնս՝ ջրոփառաց և արեան:

Դառնալով 'ի Վրաց և մեր Գուգարաց աշխարհէն՝ Ջաւախեան կու բերէր յԱրագածոտն գաւառս Արարատայ. ուր շատոնց 'ի վեր կու պայծառանային մեծամեծ վանորայք՝ լեռնաձորոց և անապատաձև տեղեաց մէջ, ինչպէս Յովհաննավանք կամ Սիւղի վանք, Սաղմոսավանք, Լազրեվանք,

10477396

ՈՒշոյ վանք, և այլն: Ծաղկածուծ մեղուի կամ կըտաքաղ Թուչնոյ պէս Վահան այս իւրաքանչիւր սրբազան օթևանաց մէջ կու Թառէր դադրէր երկայն օրեր և ամիսներ, հոգևոր մխիթարութիւն և՝ քաջալերութիւն քաղելով. կու փափագէր եղած տեղը մնալ, եԹէ մէկ կողմեն տեղացեաց վտանգի պատՃառ ըլլալու վախ չըլլար, մէկայլ կողմեն այլ իր ուղեկից հեծեալքն և սպասաւորքն չՃանձրանային. ոչք չկարնալով անանկ զարմանալի երիտասարդ սիրոյ մը երկար Թափառանաց համբերել, քիչ քիչ ԹօԹափեցան հեռացան, իրենց տեղը գնացին. մնաց Վահան միայն մէկ ընկերով:

Ան կողմերուն իշխանքն և ազնուականք խորհուրդ ըրին՝ որ ծածուկ և սպահով Ճամբաներով փախցընեն զնա Յունաց երկիրը. քայց Վրաց իշխանաց պէս վախցան՝ որ անոր պատՃառաւ իրենց գլխուն փորձանք չգայ: Վերջապէս ինչ ընելքը հարցուցին այն առենի Հայոց գլխաւոր իշխանին և կաթուղիկոսին. սա կ'երևի Թէ Դաւիթ էր, Յովհաննու Իմաստասիրին յաջորդ նստած (յամի 729), որ ոչ անոր և ոչ Սահակայ համարը ՃակուԹիւնն ունէր առ ամիրայս և ամիրատեառս. և վախնալով խորհուրդ տուաւ անոնց՝ որ մէկը պաշտպանելով՝ չառերը չՀնանեն. այլ Թողուն զՎահան նախախնամուԹեան կամ իր բաղդին:

— Մեր վնասանին համարձակապէս սատանայի հնարքով և վախով դրդած իրաւս մը կու սեպէ զայս, որ կու չանար ամեն օգնական և ձեռնտու հեռացընել անկէ. ոչպէս Թէ անոնց հեռանալուն՝ ինքն պիտի սիրանար Վահանայ: Ինչուան անոր վերջին և մէկ հատիկ հաւատարիմ մնացողը կամ Թիկնապահն այլ որսաց զատեց անկէ. և անոր ձեռքով՝ նաև Վահանայ կենաց և պատուոյն կապարտ գործիքն այլ, ինչ և ատրը, զոր ոչ ոք կարՀէ

իրմէ կու հեռացընէ. իսկ այդ ապերախտ մարդը՝ ուզէց զանոնք ՚ի Վահանայ՝ իբրև գրաւական և վարձք՝ որ չմատնէ զնա իր մեռուողներուն ձեռքը: Ո՛հ, ագահ, անարգ, այլ և անմիտ անախրատ մարդ. մինչէ այդ ըրածդ և ըսածդ այլ յայտնի և ակնհարև մատնութիւն չէ՞ անոր՝ զոր չմատնել խոստանաս. կամ թէ արժան չէր որ այն տուրն՝ քու կէս դատարկ գլուխդ թռցընելով՝ ազատէր զքեզ թէ մատնութեան և թէ վատութեան վտանգէն: — Մեծասիրտն Վահան չպատժեց էվերժեց զնա. բայց խորամանկութեանը վրայ ծիծաղելով՝ ինքն իր կամօք Թողուց անոր երիվարն այլ տուրն այլ. իսկ ատակ և Թոշակ, արդէն սպառած էր. ուրիշ բան չէր մնար վրան, բայց միայն իր ազնուութեան նշան հնացեալ զգեստքն, և իր խակութեանը վկայն՝ տոհմին և անձին սեփական հինքը, վաւերական Տապանին. զայս միայն պահեց վրան, որ Ճանչցուի թէ ինքն է Վահան. իսկ ըզգեստները փոխելով և Թողլով հագաւ աղքատական կերպ. ԹևԹևեցաւ, միայնացաւ ամեն աշխարհային փառքէ և մեծութենէ, զարդէ և մարդէ:

« Գնացեալ երթայր, զրահն արկեալ ընդվի՝ զհաւատս», ի՛րսկ վիպասանն վայելչապէս. — հաւատոց հաստատութիւնը հագնելով սպառազինութեան պէս՝ իբրև երկնաւոր նահատակ կ՚երթար անվախ բոլոր դժոխքէ, ծանօթ և անծանօթ Ճամբով, վանքէ վանք, անապատէ անապատ. և անոնց նախաշինող հօրնման (Ս. Գնտունի), « մե» նամարտեալ ընդդէմ չարին բազմահնար վիշա» պին, ժուժկալեալ համբերեաց ազգի ազգի » վշտաց քարաւէժ կոշկոճման.... Յանապատի » բնակելով՝ սրօթանուէր Թևօքն հալածեաց զբ» բազմութիւն լեգէոնէն զօրացն. և զինուորեցաւ » քեզ. Քրիստոս »: Այս անյաղթելի զինուորութեն և դիւահալած Թևոց վրայ՝ զարմացաւ Հայոց

10477396

կաթուղիկոսն այլ, երբ Վահան վանքերը պարսեբտ առնէն՝ եկաւ նաև ի վաղարշապատ՝ ի մայր եկեղեցեացն՝ Էջմիածին, անկէց օրհնութիւն առնելու և նորէն խարհուրդ հարցընելու: Նոր խորհուրդ չունէր Հայրապետն, բայց յորդորել որ երթայ յանապատս, անծանօթ վանաց մէջ քաշուելով, ուզածին չափ ձգնի և աղօթէ:

Էջմիածնայ դէպ յարևմուտք, ի Շիրակ գաւառ, Արագած լերին ստորոտից և Ախուրեան գետոյն միջոց, այն առեն այլ ինչպէս և եղքը՝ կային անապատ միայնութեան տեղիք, որոց ձամբանէրն այլ վարուն չէր. այս անծանօթ տեղուանքը մեռաւ Վահան անոք անօգնական, առանց պաշարի և պաշտպանութեան. ոտքին կոխած երկրէն աւելի՝ գլխուն վրայ ոլորացեալ երկնից ձամբան մտածելով, Թափառական գնաց դարձաւ, մոլորեցաւ երկայն ժամեր, Թերևս օրեր այլ, մինչև ափսոյս և գժուարակոխ տեղիքն և չարաչար յօգնութիւնն՝ զինքը վերէն վար իջուցին. չանաց չիտակ կամ դիւրին ճամբայ մը գանել, բայց աչուընէրն հազիւ կրնային տեսանել, և ոտքերն չարժիլ: Նայեցաւ չորս դին, և յիրաւի անապատ մը կենդրոն, կամ ընդարձակ ծովու մը մէջ միայնացեալ երևցաւ ինքն իրեն. կանգ առաւ. չորս դին կու չարժէր շուրջ կու գար. վայրկենիկ վայրկեան ոյժն և շունչը կտրելով կու մտածէր իրաւ Թէ երազ է եղածն. ինքն է արդարև Վահան՝ աէրն Գողթնեաց, Թէ Վահագ՝ դպրապետ խալխփայից... կամ Թէ արդեօք այն անծանօթ անմարդաձայն տեղը պիտի լմնայ իր պանդխտութիւնը, իր բոլոր ընթացքը... չըլլայ Թէ մահան մշուշն ըլայ որ աչքերը կու պատէ, անդամներըը կու կապէ, միտքը կու չփոթէ:.. Ո՞ւր եմ, ինչ կ'ըլամ... Աստուած իմ..:

Մէկ մ'այլ բացաւ աչքը, յիշեց տեղը, բայց

բնութիւնն կերպարանափոխ երևեցաւ. անշուշտ արեգակն իր կամարէն բաւական չափով իտնարհեր էր. ետին դարձաւ, և ահա շարժուն շքեղ պէսբան մը կ'երևար. դոփիւն մը կու լսուէր. հեծեալ մը տեսաւ... հասաւ հեծեալն, հասարակ գրաստու վրայ նստած. իրարու նայեցան. Վահան իմացաւ որ հանդիպողն անվնաս մարդուկ մ'է. իսկ սա տեսաւ յօգնած քալցած մարմնեղած ճամբորդ մը, և գթալով անոր կերպարանքին և տլայեանացը՝ վերուց դրաւ անասնոյն վրայ, և անոր խնդրածին համեմատ դարձուց գրաստը դէպ 'ի հոգևոր պանդոկ մը, վանք մը, ուր և հասուց: Բայց սա ոչ Սամարացւոյն պէս ինքն իր կամօք տանելով և երկու դրամիկ այլ վրայ տալով, այլ վարձք ուզելով յանկածէն Վահանայ՝ անոր մեկ հատիկ և յետին մնացեալ ստացուածը. զոր նա իւր ձեռօք հանեց տուաւ անոր, իր վաւերական տոպանին, որ քան զձին և զսուրն և քան զամեն ինչ՝ սեփական է իր տիրոջը: Սով Վահան իր տէրութեան յետին կապն այլ կարեց. Գողթնեաց հին և մեծ պայազատութիւնն այլ՝ երկրիս ամենէն փոքր շինուի մը պէս Թողուց, գոհացաւ:

Ներսակայ անուանի վանորէից մեկուն մէջ խաղաղեցաւ Վահան, ինչպէս ակնկածեալ նաեն 'ի հանգստարանի. աոեն այլ զսակական օրեր ընելով էր սիրած պարապմունքը լինելին գոսա. և այնքան քաղցրացաւ, որ հոս այլ ինչպէս ուրիշ վանաց մէջ՝ գոհութեամբ կ'ըսէր. «Ահա է հանգիստ իմ. յաւիտեան բնակեցայց 'ի սմա»: Զարմանային կրօնաւորք և ճգնաւորք՝ տեսանելով ազնուական երիտասարդ մը, որ իրեն բազմամեայ կրթութիւնը քիչ տարիներու մէջ առեր և գերազանցեր է. ոչ ոք կու հասատարէր անոր ճգնութեանցը և ոչնութեանցը, և մանաւանդ առատահոս զղջական արտասուացը, որուն շատոնք ոչ

ալբիւրը գիտէին և ոչ հնարքը. հին սրբոց Հրեշ-
նաւորաց մէջ այլ շատ մեծ և երկնապարգև Ձա-
նաչուէը ընորհքն ապաոաւաց, զոր և իրաւամբք Տպա-
բաուինեան կ'անուանէին, որ այրած սրտի մը ծո-
վէն եընելով կու զովացընէ զմիտս և զհոգի, փո-
խուելով 'ի սաստկագոյն զմայլմունք սիրոյ. սէր՝
որ առանց ցաւի չնկրնար երկրիս վրայ իր մեծա-
գոյն զուարճութիւնը կամ հանգիստը գտնել: —
Վահան վեց ամիս կեցաւ այն վանքը, միշտ այս
վիճակիս մէջ. «աւազան զարտասուս արարեալ,
» և միտքն սաոուածախօս լինէին անշարժելի շըր-
» թամբք, վերին իմաստութեամբն արբեալ կո-
» նելով». «և զարմացուցանէր զամենեսեան»:
Այս պարզ երկնքէ մը թափուած մշտահոս աղի
անձրևաց հետ հազիւ երբեմն կու լսուէին կարճ
որոտման պէս խորին ողբոց ձայնք. կամ փայլակ-
նանման կտրուկ հառաչանք մը. Թերևս անփորձ
տեսողք և լսողք կարծէին զնա մեծ անզգամու-
Թեան մը վրայ զղջացող. բայց աւելի հոգետեսք
և հմուտք՝ կ'իմանային որ աւելի անչար սրտի և
աստուածային սիրով վառեալ հոգւոյ մը հան-
դէս է այս. անմեղի և անպարտի ապաշխարանք
մը: Ասոր վրայ էր որ խոր և բարակ զգացմամբ
զարմացեալ և պքանչացեալ իր սիրահար սուրբ
մուզային՝ յետոյ պիտի երգէր. » Զարմանալի է
» ինձ քան զերգս երաժշտականաց ձայնս՝ ողբոց
» քոց հնչմունք՝ ով երանելի տէր Վահան, ընտ-
» րեալ Աստուծոյ »:

Բայց նոյն սրտաուուչ ձայնն որ այսպէս մեր
մէկ զարմանուհւոյ մը սիրտը պնդեց կանգնեց, հոս
անոր համաձեռի մը սիրտը՝ սոսկմամբ և վախով
լցուց. այն Շէրակայ կոպերտուն էշխանոպետնին,
վախնալով ուրիշ իշխանաց նման, պատուէրխոս-
րեց 'ի վանքը՝ Վահանայ համար, Թէ « Երթիցէ
» 'ի բաց, գուցէ մեզ և ձեզ պատուհաս հասցէ

» յարքունուստ՝ վասն նորա »: — Առանց խոո-
վելոյ եւս Վահան այս անապատէս այլ, ըսելով
առ Աստուած. « Ես ՚ի քեզ եմ յուսացեալ. և
» յ՚աստուածային սեղնս մահու՝ աներկիւղ արա-
» րեր զնա. և զյուսպ և զգաւազան խաչի քո առեալ
» մի՛ ՚ետեւ առներ լինէին »: Եւ այս խաչանիշ յու-
սալն առնելով իր սրտին և ասից նեցուկ՝ կ՚երթար
իբրև զնահատեան Իսահակ նոր ջրհոր մ՚այլ փո-
րելու անապատին մէջ. ոչ ջրհոր երդման կամ
զրկման, այլ աստուածշնորհ արտասուաց:

Ասպիսի ալքեր մը համար ուզեց Վահան
աւելի խոր և անծանօթ անապատ մը, որպէս զի
ամենքն այլ անկասկած մնան. մէկու մը վախ
չհանի իր պատճառաւ. և ընտրեց « անապատ
» անյայտաւոր և սակաւամարդ տեղիս » . ուր
հազիւ քուն անապատակեաց ճգնաւորք գտուէին
առանձին խորշեր քաշուած, որոց երբեմն այցե-
լութեան կ՚երթար, մխիթարուելու հոգւոյ խօս-
քերով և գրքերով: Աստուածաշունչն, և գտած
սուրբ Նարց պրուածներն՝ իրեն զբօսանքն էին
ալօթքէ դուրս մնացեալ ժամերուն, որ շատ քիչ
և կարճ էին. վասն զի հազիւ թէ աչք գոցէր ՚և
քուն, շատ այլ չկարօտելով սուր՝ անուշզրե-
թեամբը կամ գրեթէ քան չուտելուն: Ասպիսի
սակաւապիտութեան համեմատ էր հագուստն
այլ. մէկ զգեստ մը կամ պարեգօտ մը միայն. ոչ
շապիկ, ոչ կօշիկ. մէկ այլ վերարկու՝ ձմեռուան
ծածկոց. վասն զի տարի մը կեցաւ այս անապա-
տիս մէջ աշուհէ աշուն, « անթուլանալի սրտիւ
» աշխատութեամբ. իբրև յոյժ ծարաւկոտ եղ-
» ջերուաց ալբերաց՝ փափագեալ նա Աստուծոյ
» սիրոյն:. Եւ այնուհետեւ զյոյսն իւր ՚ի մարդ-
» կանէ ՚ի բաց մերժեալ, սրտաքոյ մտմտմոյ իբրև
» ընդ իմանալիսն լինելով՝ զհակառակորդսն ՚ի
բաց Թռուցեալ՝ սատանայիւ »: Ամբողջ չորեան

10477396

*Ա՛արևու այս յետին միայնութեան մէջ թաղուե-
լով, ընկղմելով յաւտուածային մտածութիւնն՝
բոլորովին թեթևացաւ սիրտն. գրեթէ նուաղեալ
մարմինն՝ հազիւ կրնար վարագուրել եւանգուն
հոգի մը, որ անկէ դուրս վազել, թռչիլ վերա-
նալ կ՛ուզէր, և շուտ կ՛ուզէր: Զորս տարի էր որ
այսպէս մարմնով անհանգիստ և վշտակիր՝ հոգ-
ւոյն հանգիստը կու փնտրէր. պէտք էր որ փոր-
թայ հոն՝ ուր կու յուսար կատարեալ հանգչիլ:*

ԺԲ

*Կսեր էր որ իր ծանօթ Օմար ամիրապետին՝
յաջորդելով Եզիտ Ե չորս հինգ տարի միայն, թէ-
պէտ և առեցող քրիստոնէից, բայց նախ խոզից
դէմ կռուելով շատ տաեն չէր ունեցած զմայր-
գիկ չարդելու. իսկ անոր յաջորդն Հէշամ զոր
Հէշամ և Շամ կոչեն մեր պատմիչք (725-743), ար-
դէն հրաման տուեր էր խաւանալ քրիստոնէից
վրայ, և փնտրռել զվահան. և եթէ ինչուան այն
տաեն (15 տարի մը՝ Դամասկոսէն գալէն՝ի վեր)
էգտան զինքը, սակայն օր մը կրնային գտնել, և
թերևս իրեն մօտ եղած անպարտ անձանց այլ
վնաս հասցընել. և եթէ դեռ անոնց աչքն կա-
պուելու այլ ըլլար, սակայն իր աչքն շատոնց բա-
ցուեր սրտեր էին երկնից տեսութեամբ. անկէ
եաև տպրիլն՝ ձանձրալի էր իրեն. փափաքելի՝
մարտիրոսական մահն: Հատատեց՝ի մխաքն՝ որ
ինքնին երթայ յայտնէ զինքը Հագարացւոց. և
թէպէտ ոմանք իմանալով՝ կու ջանային յետ կե-
ցընել, բայց ոմանք այլ դէմ չէին կենար, այլ և
քաջալերէին հատատ կենալու իր մտացը վրայ:*

*Կ՛երևի թէ ամիրապետին տեղ նախ ուզեց ա-
նոր Հայաստանի մէջ տեղակալը փորձել, որ հոն
կու նայէր՝ի Դուին մայրաքաղաքի. գնաց անոր,*

10477396

անվախ համարձակութեամբ ըսաւ. Ես եմ Վահան: Այն սաեղի Հայոց սատիկանն էր Մրուսան, (որ յետոյ եղև վերջին ամիրապետ Իւմիատեան տոհմին), Աբդլազիզն պէս խոհական և քարեխառն մարդ մը, որ նորէն Հայոց խաղաղութիւն տուեր և իրենց միջէն վերակացու դրեր էր զՎահան պատրիկ Բագրատունի. չուզեց արդար մարդու մը անպարտ արեան մնալ, այլ անշուշտ լռելեայն հեռացուց իրմէ զՎահան: Իսկ սա այն սաեղն սահմանեց որ երթայ ինչուան 'ի Դամասկոս, և ուր որ տարագիր կենաց դժբաղդ դիպուածն սկսեր էր՝ հոն լմընցնէ վտառք: Անկէ ետև միայն Ճամբու յարմար սաեղի կու սպասէր, և անոր վախճանին յաջողութեան օգնական կ'ուզէր արժանաւոր անձանց տղօքքը և օրհնութիւնը. և այս պատճառաւ եկաւ վերջին անգամ մ'այցելութեան իր սիրելի վանքերուն և ուխտերուն:

Իր գտուած Աբրտարատ գաւառին սահմանակից է Գեղաքունի գաւառն Սիւնեաց, Աբեանոյ ծովուն հարաւակողմը, ուր այն սաեղն ուրիշներէն սկսեր էր Հռչակուիլ Մաքենոյ վանքն՝ իր արտաքին Ճոխութիւններովն, և ևս սաեաբել երկու Սողոմոններով. որոց մէկն սաջնորդն էր, երկրորդն սրբակաց վարդապետ մը, զոր Հայրանց կոչէին՝ սաեղի պատուոյ համար. և որ մեր դպրութեան և եկեղեցւոյ յիշատակ Թողուց շատ պատուական գիրք մը, Տնոհանը, շարագրելով զվարս սրբոց վկայից, որոց քիչ սաեղն գտաներկոց պիտի ըլլար և Վահան: Հայրական գթով և գորովով ընդունեց սա զպանդուխտն. և 'ի մեծ ոմնի Խաչէն՝ սաեղի տէր Հոգևոր միխիթարութեամբ լցուց և լիացուց. և երբ անկէ երթալու եղաւ՝ 1

1 Սրբոյս վկայաբանութեանց մէջ ոմանք սաեղ 'ի Ցովհաննավանս, յետոյ 'ի Մաքենիս գնաց, կ'ըսեն, ոմանք այլ ընդ հակառակն:

10477396

էրեն Ճամբու զգեսաէ և Թոշակէ զատ՝ Մխիթարական բան մ'այլ գրեց տուաւ, որ երբեմն երբեմն կարդալով աւելի քաջալերուի:

Ահա Մաքենեաց վանքին քովէն գետակ մը կ'անցնի և կոչ Թափի'ն Ծոմէ Սևանայ. աղբիւրն այլ քանի մը ժամ հեռու է'ն հարաւակոյմն՝ այն լերանց մէջը, որ անջրպետ են Գեղամայ երկրին և Վայոց ձորոյ.— ուրեմն կէս օր մը դար վեր ելնելով և կէս օր մ'այլ դար վար իջնելով՝ Վահան կրնար հասնիլ այն Սիւնեաց գլխաւոր գաւառին կենդրոնը, ուր քանի մը տարի առաջ Թողեր էր իր սրտին վրայ սիրացող անձ մը, իր կինը:— Յանդգնեցաւ արդեօք փորձիչն՝ այն մաշած և մաշկակապած՝ բայց դեռ 30 ամեայ սիրտը գրգել, որ վազելով Վայոց լեռներէն, մէկ անգամ մ'այլ՝ յաւիտենականութեան համար՝ կրկնէ յեսին մը նաս բարովը՝ անոր, որու հետ եկեղեցին անգամ լծեր էր իր երկրաւոր կեանքը:— Գուցէ նայեցաւ Վահան մէկ մը այն լերանց վրայ, գուցէ և լուռ հառաչանք մը իր մէջ հնչեց. սակայն աչքը և Ճամբան դարձուց յարևմուտք. և աւելի փախչելով՝ քան քալելով՝ դարձեալ վանքէ վանք անցաւ: Բայց յայլոց՝ կենալով քիչ մ'այլ'ի վանքն Թէղէնիս, որ Երևանու մօտերն է, և Մաքենեաց պէս նշանաւոր էր իր վանականաց վարքով և կարգով: Անկէ այլ անցաւ գնաց իր առաջին և սիրելի օթևանը, 'ի Յովհաննավանս Արագածոտան, որոյ հայրն Յովհան՝ մեծ սիրով և կարօտով նորէն ընդունեցաւ իր աշակերտացեալ և զարմանալի մաերիմը. և լսելով անոր առաջադրութիւնը՝ յորդորեց հաստատուութեամբ կատարելու. ինչուան կոչ փափագէր ինքնին անձամբ անոր ընկերակցել այլ, եթէ իր առաջնորդութեան պաշտօնն արգելք ըլլար. բայց իր տեղ անոր ընկեր դրաւ երիտասարդ և զգաստ եղբայրներէն մէկը, որ

10477396

ԷՈՐս տալի Վահանայ ուղեկից ըլլալով՝ անոր ա-
մեն պատահարաց տեղեակ և տեսուղ եղաւ, և
կու պատմէր բաց յայլոց, որ երեք անգամ եր-
նաւոր այցելութիւն կամ տեսիլք եղաւ տրդոյն.
ինքն և ուրիշներն՝ միայն լսած տեսան, բայց Պօ-
ղոս առաքելոյ ուղեկցաց պէս՝ ձայները լսեցին
կամ չհասկցան. սակայն կարծէին որ Քրիստոս
կ'երևէր և կ'լսէր իր ընտրեալին, «Մի դանդա-
» ղիր, զի ես ընդ քեզ եմ, և անյաղթելի առնեմ
» զքո բանդ»: Նոյն իսկ Յոհաննավանուց մէջ
այսպիսի այցելութիւն մ'ունեցաւ Վահան. և ել-
նելուն առեն՝ հայրն Յոհան այլ Սողոմոնի պէս
տուաւ իրեն պէտք եղած զգեստ, թոշակ և ձի:
Նոյն ընդունելութիւնը գտաւ Վահան նաև ու-
րիշ վանորէից մէջ, մանաւանդ յիշատակելոց ա-
մենէն եռքինին մէջ, որ է Եղուշեատոր (հիմա
Սթանէլոփոլ) ըսուած վանքն յԱրծկէ, Վանայ
ծովուն արևմտեան հիւսիսային ծայրը, Սիփան
(Մասեաց) լեռան տարրատը. որոյ հայրն կամ
առաջնորդն էր Արտաւազդ, բարեսէր հիւրասէր
անձ մը, որոյ համար և Աբրահամ կոչուէր: Ա-
մանալով թէ Վահան է եկողն, բոլոր եղբայրնե-
րով դիմացն ելաւ ընդունեցաւ, և իրեք օր պա-
հեց պատուեց սիրեց զնա. լսեց մանրամասնա-
բար անոր դիպուածները և դիտաւորութիւնը.
ինքն այլ քաջալերեց, և Թոշակը նորոգելով, ա-
ռաջնորդ եղբայր մ'այլ տուաւ, որ ինչուան ուր
որ ուզէ՝ հետը տանի. արձակեց զնա մեծ սիրով,
և մեծ այլ յուսով՝ քիչ առեն Քրիստոսի եկե-
ղեցւոյն փառաւոր յաղթող վկայ մը ձանչնալու
և ձանչցնելու զնա. ինչպէս որ ըրաւ այլ:

10477396

ԺԳ

Անկէ եաւ Վահան դարձուց ձին դէպ՚ի հա-
րաւ, ապաշխարութեան առեն գերութեան գացած
ճամբէն՝ երթալու իր վախճանին: Նոյն օրերը [1]
Մրուան ասպիկանն՝ Աշոտոյ պատրկի օգնութիւ-
նագրաց յաղթելով՚ի Դարբանտ՝ շատ աւարով
դարձեր էր յԱղուանս, և անկէ աւարին և հե-
ծելազօրաց մէկ մասը կու դարձընէր առ ամիրա-
պետն: Ասոնց հետ խառնուեցաւ Վահան. ճամ-
բան քիչ քիչ իմացուց անոնց իր ինչ մտքի վրայ
ըլլալը. համարձակ կու խօսէր իր կրօնից վրայ և
կու վիճէր անոնց հետ. ոչ միայն իր քրիս-
տոնէական գիտութեանը վրայ կու զարմանային,
որչափ իրենց մահմետական դէնն և զրոյցները
աւելի՚ի աւելը գիտնալուն վրայ, և չէին կրնար
դէմ դնել: Ախտպէս կարեցին այն երկայն և ան-
ապատ ճամբան: — Ի՞նչ տարբեր մտածութիւնք
եղեր էր Վահան այն ճամբէն՝ տեսնելու իր երկ-
րին ընդարձակ աւերակները, և անոնց մէջ մէկ
հատիկ բուսած կենդանի ծաղիկը, — իր քոյրը.
— զոր հիմայ ուրիշ ծայրի մը հետ թողլով խա-
ղաղ՝ կու գտնար ամենազարմանալի և գեղա-
հրաշ սիրելոյ մը հետ արեամբ միաւորելու:...

Հասան յՈւռհայ, Հայոց և բովանդակ քրիս-
տոնեայ Մկրտչաց նշանաւոր քաղաքը, նա-
խահաւատ Թագաւորին Աբգարու մայրաքաղա-
քը. որ յայտնի է քեզ, Հայկակ, Թէ ինչպէս ա-
նոր օրերէն մինչև այս պատմութեան ժամանակ
և դեռ անկէ եաւ այլ՝ քրիստոնէից անուանի ուխ-
տատեղաց մէկն էր, ՚ի պատճառս հռչակեալ
Դատաստանին, փրկչական պատկերին: Անդ դար-

1 Ղևոնդ Պատմիչ:

ձեալ Վահանայ սիրելի իջեվան և հոգևոր զբօսանքն մը. ուր ոչ միայն կեցաւ յերկրպագութեանն հրաշանկար պատկերին, այլ կ'երևի թէ և երկայն աաեն կեցաւ. և ոչ պարզապէս աղօթելք, այլ և նոր տեսլեամբ կամ յայտնութեամբ մը [1] քաջալերեցաւ իր առաջադրութեանը վրայ, միանգամայն անոր յաջողելուն: Նոր եռանդեամբ ձամբու ընկաւ, ուղղակի 'ի հարաւ խչնելով:

Ուռհայէն քանի մ'օրեան վար ձամբան կու բերէ 'ի Խառան քաղաք անուանի. ուր, ինչպէս 'ի սկզբան յիշեցի՝ վախճանեցաւ երանելի կաթուղիկոսն Սահակ. որոյ յիշատակն անշուշտ դեռ կենդանի գտաւ Վահան: Բայց անկէ աւելի փնտռուեց ուրիշ երեն մերձագոյն խոստովանողի և վկայի մը հանգստարանը. երմէ փափուկ մէկի մը, որոյ յիշատակն այլ արժան էր գանել և հռչակել աեղեկօրէն. և էր նա Շուշան, գուստր մեծ և խոհեմ իշխանին Վահանայ Կամսարականի, քոյր Ներսեհի պատրկի, որ Սմբատայ հետ միաբանելոն համար՝ կրակին տարին ուրիշ քանի մը իշխանաց հետ գերի բերուեցաւ, քոյրն այլ հեաը. որ և հոս բանտին և բանտողաց բռնութենէն նեղուելով և հաւատքին վրայ հաստատուն կենալով՝ վկայօրէն վախճանեցաւ (706-7). և իր միա եղբայրն Գագիկ՝ որ նորաշէն եկեղեցւոյ մը նաւակատիք կ'ընէր ('ի Վարդանակերտ), երանելի քրոջը յիշատակն այլ մեկտեղ կատարեց: Հոս Վահան իր գերեկից Շուշանկան հերմին վրայ այլ լալով՝ եւաւ հասաւ 'ի Ռակկա կամ 'ի Կալինիկան քաղաք, ուսկից կ'անցնի Եփրատ գետը. և անով դուրս եւաւ 'ի Միջագետաց և մտաւ 'ի քուն սահմանս Արաբացւոց և հին Ասորւոց. և լսելով որ ամիրապետն Հէշամ էր 'ի Դա-

1 Յայտնութիւն:

10477396

մասկոս, այլ հոն մօտ Եփրատայ՝ի ուռւծափ քա-
ղաք, իր ձամբորդութեան վախճանին հասաւ, թէ
և ոչ շուտով նաև իր փափագանացը:

Աներկիւղ և եռանդուն քրիստոնեայ, միան-
գամայն և փափագող մարտիրոսութեան, զոր և
յայտնութեամբ այլ ստուգեր էր, ի վերայ այսր
ամենայնի մեծահաւատ և յոհեմ. չուզեց կերպով
մը զԱստուած փորձել, կերպով մ՝այլ անհաւա-
տարիմ երևիլ անոնց՝ որ յետ Աստուծոյ երա-
ւունք ունէին իր սրտին վրայ. այնպիսի առաքի-
նութեան և սրտապընդութեան մը ցերցուց՝ որոյ
նման թերևս շատ դժար է գտնել: Տասը տարի
պատրաստուած և աչք առած էր վկայական մա-
հը, անոր համար զաշխարհ ոտքի տակ դրած, և
այնքան հարևւրաւոր մղոններով երկայն ճամբա-
ներ կտրելով հասեր էր հանդիսին տեղը. ոչ կու
վախեր, ոչ այլ կու յանդգներ. ոչ եռք կենար
յատպարիզին՝ որ՝ի պատկէն այլ եռք չմնայ, և ոչ
այլ ինքնայարձակ կու նեռուէր: Թէ և գլխաւոր
փափագն էր մարտիրոսութեամբ ելնել այս յաշ-
խարհէս, զոր արդէն ուրացեր էր ճգնոլական կե-
նօք. բայց եթէ ամիրապետն հաւանելու ըլլար
(որ չէր յուսալի) Թողուլ զինքն ազատ իր քրիս-
տոնէութեան մէջ, ինչպէս Օմար Թողուց ուրիշ
գերեալները, պիտի առնուր յանձն տպրելու ա-
զատօրէն սուրբ հաւատոնէն՝ ինչպէս ուրիշ եղիա-
նազունք հայրենեացը, և ոչ որ և է կերպով գըր-
գռել զայլադեանս, և բռնի յափշտակել զպատկը:
Ահա է զարմանալի առաքինութիւն և հաւատար-
մութիւն Գողթնեաց եղեանին և Սիւնեաց փե-
սային. այս է Վահանայ կատարեալ իմաստու-
թիւնն՝ երկնաւոր և երկրաւոր. զոր և ոչ ամեն
լաւ անձինք կրցան և կրնան միացընել, այլ որոյ
պարգևեն աստուածային գերագոյն շնորհքն: Ար-
ժան և հարկաւոր է ճանաչել զայս՝ի Վահան,
իր մեծ արժէքն լաւ այլ ճանաչելու համար:

Աբելի քիչ ժամանակի մէջ Այրարատայ լեռները մինչև Ասորեստանի անապատը և՛ Ծոված հասաւ Վահան, քան այս քաղքիս դռնէն մինչև անոր ալքսունեաց դուռը: Քաղքէն դուրս ել մը կլևանեցաւ, իբրև Թէ իր վերջին հանդիսին պատրաստութեամբ՝ զգաստութեամբ և հանդարտութեամբ. չուզեց անկէ եաև քովը պահել իր ձամբու հաւատարիմ ընկերները, այն երիտասարդ եղբայրները՝ զոր հարքն Յովհաննավանեց և Երաշխաւորին՝ իրեն ուղեկից և օգնական տըւել էին. «Ահաւադիկ հոս իմ ձամբաս վերջացաւ, ըսաւ. ակէ եաև ուրիշ անկոխ և անթռչնակ ձամբայ մ՚ունիմ ընելու, զոր և մինակ պիտի կատարեմ. դուք դարձէք ձեր առաջնորդաց քով, և յանձնեցէք սուրբ միաբանից՝ որ աղօթեն երբեմն իրենց եղբայրացեալ Վահանայ համար. շուտով գնացէք, որ աղօթքնին հասնի ինձի յօգնութիւն»: Զանոնք արտասուքով և համբուրով ձամբայ դրաւ, վերջին անգամ եաևնուն նայելով դէպ՚ի հիւսիս, դէպ՚ի հարաւ, դէպ՚ի Հայս. ուսկից չարժուն ձամբու և ձամբորդի պէս կու տեաներ միայն եկրատակի կողմը. և երբ աստ ափանց մօտ անհետացան արտմեալ վանականքն, Վահան այլ դարձաւ իր առանձնարանը, և սկսաւ իր մեծ գործը:

Գտնեց նմանպես Թէ ոմն կայ յարքունիս՚ի Ծոված իր հին Ճանչուար մեծերէն, և ծածուկ ի մաց տալով կանչեց: Երբ անկարծ լուրը լսելով եկան, սեղի անկարծելի բան մը տեսան. իրենց Վահապը վեհակերպ վահանացեալ, Թէ և իրենց սեղի օտար երևցաւ նա, քան բարեկամացն՝ ցոր: Կարծեցին Թէ կամ խելագարեր է, կամ բանութեամբ այս խելք կերպարանքն առեր է. և եԹէ իր խօսքը իր կերտերը չհիշէին՝ չէին կըրնար հաւատալ Թէ այն ալքայակերտ ազնապայ-

ծառ պատանին՝ այս գծծակերպ նիհարացեալ մարդն է. և գեռ զարմանալով կու հարցընէին. «Ձի՞ այդպէս ես»: — Վահան շակէ շիտակ իմաց-ցուց անոնց Թէ Քրիստոսի հաւատոց և սիրոյն համար յանձն առեր է այս ալքատութիւնը և չարաչրուժիւնը: — Անոնք կամ չկրնալով կամ ջուզելով հասկընալ, առաւել փաստ ու պատճառ մը կու սեպէին զայն նորէն մահմետական կրօնքին դառնալու, որ Թէ այս աշխարհիս Թէ այն աշխարհին մէջ կու խոստանար ընդունողացը՝ հեշտութիւն և փափկութիւն: Ան առեն սուրբն քիչ մ'առելն սաստիկ լսեցուց Ճշմարտութեան քարոզութիւնը, և անոնց զալփատլիուն փաստերը վրաց: Անոնք կէս ապշած կէս ամբցած, և ոմանք իրենց կրօնքին վրայ գայթակղած, ինչպէս կ'ըսէ պատմիչն, մեկդի գացին, ոչ պաշտպանելով և ոչ այլ դատապարտելով զնա:

Վահան սպասեց, և երբ տեսաւ որ անոնք կէս բարեկամութեամբ կէս անհոգութեամբ Թողուցին զինքը և չմացուցին ամիրասպետին, գնաց իր ծերունի տաճկութեան վարպետին, որ և մեծ դարպասեա էր տէրութեան. և իմացուց Թէ ինչպէս անոր սովրեցուցած կրօնքը Թողուլ՝ իր ծնողներեան կրօնքը նորէն ընդուներ է, և կ'ուզէ որ ամիրապետն այլ գիտնայ զայս: Դարպասեան որջափ այլ զարմացաւ և ցաւեցաւ, գեռ սիրելով իր աննման աշկերտը՝ սկսաւ յանդիմանել և վախցընել ամիրապետին կողմանէ, որ փոխանակ առնչին շնորհացը՝ կրնար չարաչար մահուամբ սպաննել զնա: Բայց տեսնելով որ Վահանայ հաստելի և փափագելի են այս սպասնալիքս, սկսաւ անուշութեամբ սլաքել որ իր սլայութեան առնին պէս նորէն իրեն ընկեր և օգնական ըլլայ, և իր վայելուչ հպատասանութիւնը զարդարուի: Եւ այնքան ծանրութեամբ ուռնալով սլաքեց և երբ

դուբնցուց զՎահան իր մեերմուԹեանը վրայ, որ բանագատեց զտուրքը առնելու իրմէ 30 դահեկան: Առաւ նա ատակը՝ խոստմանը համար, բայց նոյն տուտոլին առչև բաժնեց ալքատաց. և ինքն իր առանձնուԹեան տեղը քաշուելով՝ բոլոր ձմեռը մէկ Ճգնաւորական ԹեԹև զգեստով և գրեԹէ անկերակուր անցուց:

Նոր գարուն մ'այլ հասաւ. Վահան աւելի քան զբնուԹեան կեանքը՝ գերագոյն կենաց բաղձալով՝ երրորդ փորձ մ'այլ փորձեց՝ իմաց տալու ամիրապետին. և այս անգամ գնաց առ մեծ պաշտօնեայն ելևմտի գանձուց և հարկաց տէրութեան, և նոյն ալաչանքն ըրաւ: Պրաբացւոց արքունիքն այն աստեն բաւական կրԹուԹեան հասեր և արժանաւոր անձինք ունէր, որք առանց կրօնական մոլուԹեան կրնային լսել և տեսնել ուրիշ կրօնի հետևողները, և գԹոյ ու բարեկամուԹեան օրէնքները հաւատարմուԹեամբ պահէին: Այսպիսի էր այս պաշտօնեայս այլ. խոժոռեցաւ Վահանայ լսածին վրայ, և աւելի կ'ուզէր չլսած ըլլալ. մատնել զնա՝ վատուԹիւն կու սեպէր, լսել՝ իրեն խիղճ մը կարծէր. և իբր ԹէԹ Վահանէն աւելի ինքն իր գլխուն վրայ վախնալով՝ սկսաւ որ երԹայ հեռանայ իրմէ, լուէ այդպիսի խօսքը, զոր գրեԹէ ոչ ոք կու համարձակի ամիրապետին լսեցնել. «զի մահաբեր է քանդ այդ. ինձ խռովու» Թիւն, և քեզ՝ մահ.. սուր՝ 'ի քո մարմինդ, մի» գուցէ և յայլոց զարԹուցանիցես». այսինքն, այդ խօսքդ մահաբեր սուր մ'է, որ ոչ միայն քու գլուխդ կու տանի, այլ կարելի է քու պատճառաւդ՝ ուրիշներուն այլ:

Վիսպատանն՝ այս զարմանալի ընդդիմուԹիւնը կամ չմտանելն զՎահան՝ ուրիշ կերպով չկրնալ բացատրել, բայց սատանայի խորամանկուԹեան տալով, որ 'ի խորհուրդ կու կանչէ իր գևերը, և

իրենց շահաւոր կու գտնեն հեռացընելու զմահ՝ ի վահանայ, և ջանալու մոլորութեամբք և հեշտութեամբ սկարացընել զնա: Բայց ինչպէս որ ճշմարտութեան առեցոյն և հայրն սուտութեանց միշտ կոյր և կաղ է, այս փորձերով այլ աւելի խայտառակեցաւ. վասն զի Վահան թէ և փախչոդ՝ այլ ոչ այնքան մահուան փախչոդ էր, որքան առեցոյ հեշտութեան և անքթնատոնեայ կրօնից. ուրեմն հակառակորդն հոգւոց ինքն իրեն դէմ կու ջանար և կու զրկուէր: Իսկ Վահան՝ օրինակաւ իմն իր Տիրոջ պէս իրեք անգամ յաղթեալով փորձութեան չարին, որ՝ի ձեռն գայրապետաին և արքունի խորհրդականաց՝ ի՛առաջարկէր անոր զփափկութիւն կենաց, զհարստութիւն և զաշխարհական փառք ու պատիւ, յորորդ փորձով մ՛այլ խայտառակեց զնա՝ վերջապէս իր փափագած մահը յափշտակելով, թէ և զայս այլ ոչ անաշխատ:

Պաշտօնէից սիրտը շատ կիրթ և կակուղ գտնելով Վահան, պէտք ունեցաւ խիստ և անգութ սրտի մը. բոլորովին հակառակն ընելով բնական բերմանց. և իրեն մէկ հատիկ յարմար պաշտօնեայ սեպեց զայն՝ յորմէ ամենայն զգայուն սիրտ տակաւ և զգուի, երկաթէ և քարէ զանգեալ սրտի տէր կարծելով զնա. — պաշտօնեայ մը՝ որ լայտաեն չերևիր, այլ գիշերահաւուս պէս կու պահուրտի, և այն վայրկենին կ՛երևի՝ երբ ուրիշի մը վերջին վայրկեան պիտի բերէ. կարծես թէ ամեն իր գուրս գալուն՝ ցրտագին սարսուռ մը կու զարնէ զինքը Ճանչցողներուն, և գոնէ մէկ մը սառուցեալ գոնատեալ անշնչացեալ կու մնայ, կամ կապուտակ մահուն մանեակը վիզը պլլուած, կամ մարմնոյն և գլխոյն կարևոր կամուրջը կտրած... Դա է ժամիկ Դահիճն:

10477396

ԺԴ

Իսկ Վահանայ փնտռած և ընարածն ոչ թէ պարզ դահիճ, այլ և Դահճապետ էր, իրեն յարմար Քաջ անուանմբ, որ՝ի վարձ պնդասրտութեն և շատ անգամ սիժգալի պաշտօնը վարելուն՝ հին մայ Հիմացւոց (Հէմի) իշխան գրուեր էր: Յետ երկար ալօթքով լինք զինքը Աստուծոյ յանձնելու, Վահան իր հաւատքը, կամքը և փափագը, միով բանիւ իր ինդիրը՝ աղերսագրի պէս գրելով վայելչապէս արաբացի ձարտարգրութեամբ, զոր՝ի ոզայուց լաւ վարժեր գիտէր, գնաց այս փշոտ պաշտօնէին. և առջիններուն պէս խմացուց միտքը, ու տուաւ ինդրագիրն այլ՝ որ ցուցընէ ամիրապետին: — Քաջ՝ դժնդակ չարժուածքով մը աչքերը խոլոռեց, պերևեշքն ոլորեց. կարծես թէ քաղցած գայլու կամ բզբքաող յովազի պէս՝ արեան հոտ մ'առաւ, լեզուն հին սպանութեան համերը զգաց, և լափլփելով շրթանց մէջ, լաւ լաւ՝ ըսաւ. ինդրագիրը ծոցը դրաւ, փութիացը պնդեց, ակնարկեց Վահանայ որ հետը ձամբայ ընկնի: Եւ ահա հեզ ու անմեռունչ գառին պէս քշելով կու տանէր առ մեծ խալիֆային. իր ձախ ու ժանտ դէմքը սեսողք և ձանչցողք՝ սոսկալով ետ քաշուէին, բայց Վահանայ ազնիւ և ոլորմ կերպարանքն՝ ոտուընին կու կապէր:...

Տեսնուեցան Քաջ և Հէշամ. դահճապետն և ամիրապետն. սա առաւ՝ կարդաց Վահանայ խընդիրը, և նախ գրոյն վայելչութեանը և գրուածքին ու խօսից ձարտարութեանը վրայ զմայլեցաւ, և աւելի գառին քան գայլուն կողմը դարձաւ սիրան. հրամեց որ առջևը բերեն զՎահան, որ այնքան երկայն ատեն և տարիով կու սպասէր այս կոչման: Անատոր բանտաւորին սիրան էգիմա-

10477396

ցաւ այն անշուք զգեաստուց և մաշեալ կերպարա-
նաց մէջ տեսանել իր ալքոնեաց հին գիւանադը-
պիրը: Ինչո՞ւ, ըսաւ, այդպէս խեղճացեր ես, Վա-
հագ. «ուրեմն երկիրն Հայոց իջմնց գքեզ յայդ»:
— Ոչ իմ հայրենիքս, պատասխանեց Վահան,
այլ իմ հարցս հաւատաքն Ջանչյուց ինձի իմ գե-
րադոյն Տէրս, որ իր անբաւ մեծութենէն իջաւ
այս խեղճութեան. որուն ես այլ իմ չափովս նը-
մանել ուզեցի: — Տեսա՛ր, կանչեց ամիրապետն,
Հայաստանի սառնապատ սարերուն սառանա-
ներն գքեզ խեղդեցուցերեն: — Մանաւանդ թէ,
ըսաւ Վահան՝ անվախ զուարթութեամբ մը, ալ-
ղայութեան սառն վրաս եկածներն այլ՝ հան թօ-
թռեցի, մաքրուեցայ պայծառացայ:...

Անշուշտ Բաբելի փուշերն անկուեցան այս խօս-
քերուս, և ի՛ուզեր մեկէն լափել Վահանայ ա-
րիւնը, եթէ քան զինքն երկայնամիտ և կակղա-
սիրտ չըլլար Հէշամ, որ և նեղանալով և հայհոյե-
լով, բայց դեռ ոլորմելով, Լաւ ըսաւ, ոմ մըտ-
րեալ և բարեաւեաց, այդ խենդ խօսքերէդ, որ
Հեր սառանաներն միտքդ մտուցեր են, և դար-
Հիր քու աղջի փառացդ և կրօնից: Հրաման ար-
ւաւ, և մեկէն բերին Վահանայ՝ գունագոյն մե-
տաքեայ բանուած հագուստներ, և գիմայը թա-
փեցին ոսկւոյ և արծաթի զարդուց գանձեր. «Ա-
ռանց վրայ, աւելցուց ամիրապետն, պատրաստ
են քեզի համար ընակիր ձիան և ուղտեր, ամեն
տեսակ ըուզակ, ծառայք ու սպասնայք, և քեզի
արժանաւոր իշխանութիւն մ'այլ, եթէ ի՛ուզես
հոս իմ քովս, և թէ ուզես հոն՝ քու հայրենի
գաւառիդ մէջ. « Եւ իշխանութիւն քեզ՝ թէպէտ
« ասա, թէպէտ 'ի Գողթան, զքո անկաւոր իշ-
» խանութիւնն ». միայն թէ մեր պատգամաւորին
պատուէրքը կատարել, և վայելէ իր խոստացեալ
բարիքը՝ թէ հոս թէ 'ի գրախտին: — Ախտիկ

իսպքով և գործով մը ամիրապետեն գրեթէ մէկէն
լմընցուց իր ըսելիք և ընելիքը: Հարկ էր որ Վա-
հան այլ իր վերջին իսպքն ըսէ. և ըսաւ համար-
ձակ՝ իբրև հասարակ մարդու մը. ըսաւ, թէ
«Այդ գանձերդ և խոստմունքդ լաւ իսկ վկայ
կ'ըլլան քու խորագիտութեանդ, որով չաւերը
խաբեր ես. բայց Աստուծով՝ ես ոչ պարգևնե-
րէդ և ոչ պատիժներէդ պիտի խաբուիմ. եթէ
իրաւ ինծի բարիք ընել կ'ուզես, Թող զիս ա-
զատ՝ գիտցածս և ուզածս ընելու, և ընծայներդ
ուրիշի պահէ. կ'ուզես այո և իմ հայրենի Գող-
թան իշխանութիւնս այլ, զոր թէ ոչ դուն՝ աստ-
գիս մահն քիչ առենէն ինծմէ պիտի առնուս,
ինչպէս քեզմէ այլ քու իշխանութիւնդ... ա-
պա թէ ատոր չես դադրիր, կատարէ վրաս
սպառնալիքդ. ես պատրաստ եմ»:

Այլ խօսել չէր ըլլար. հրամեց ամիրապետն որ
տանին զՎահան՝ ի բանտ և ոտքը շղթայի անցը-
նեն: Երբոր տարին՝ նա ուրախութեամբ փոխա-
նակ մէկին՝ տասէց որ երկու ոտքն այլ դնեն՝ ի
կոճեղս. տասնկ այլ ուրիշ առիթներու մէջ՝ որ-
չափ որ գիւրութիւն կրնար ըլլար՝ ի բանտին,
կամ բանտապետն կ'ուզէր շնորհել, նա կու մեր-
ժէր, և աւելի չարչարուիլը կ'ընտրէր. որոյ վրայ
զարմանալով կ'ամչէին պահապանքն: Եւ երբ
վերջին օրը Վահան շնորհակալ ըլլալով՝ կ'ըսէր
բանտապետին, թէ տակէ եաև պիտի ազատիս իմ
վրաս աշխատութենէդ, նա գրեթէ ամբընալով և
արտմելով պատասխանէց, թէ ինչ բանի վրայ
կրնաս շնորհակալ ըլլալ՝ որ և ոչ մէկ շնորհք կամ
դիւրութիւն մը յանձն առիր ինծմէ: Իսկ առա-
քինի վկայն՝ անոր գթասիրութիւնն այլ մեծ բա-
րերարութիւն սեպելով՝ գարձեալ կ'ըսէր թէ ա-
տոր համար վարձքդ կ'առնուս յԱստուծոյ, ո-
րովհետև անկարելի է որ ես հատուցանեմ:

Ութ օր ինաց ՚ի բանալը. այն միջոցին Հէշամ արտգընթաց ձիերով մարդ ղրկեց ՚ի Մէյջագեաս՝ առ Մրուան ոստիկանն Հայոց, Վահանայ վրայ առեղեկութիւն առնլու թէ ինչ ըրած է՚ի Հայաստան. մեկայլ կողմանէ այլ ամեն օր գիտուն կուռաներ և դեսպաններ կու խաւրէր ՚ի բանտն, որ վիճեն և համոզեն և նորէն զՎահան ընեն վախհապ. իսկ անոնք չլթունքնին խածնելով յեա կու գառնային, և կու խոստովանէին՝ որ նա մեր գիտցածը մեզմէ աւելի գիտէ. իսկ իր քովէն ըսածը՝ խօսք չէ, սուր է, գեմ կենալ չըլլար. »Չէ » ուժեք լսել բան, բայց սուր՝ որ զբանից մեր. » կանայ զնօսա »: Ամիրապետն չէր գիտեր նեղա նաչ թէ զարմանայ. և կ՚ապսպրէր որ չըլլայ թէ ուրիշն այլ խմացընեն իրենց խաղքութիւնը: — Դարձան շուտով դեսպաններն և Մրուանայ պատասխանը բերին, որ ստուգեր էր հաւատարիմ անձերէ, թէ Վահան իրաւ մեծատոհմ իշխան մ՚էր ՚ի Հայս, միանգամայն խելացի և զգաստ մարդ մը. ոչ հիւանդ և ոչ խելագար, այլ իր հայրենիքէն եղեր եկեր էր, որ ամիրապետէն հաւանութիւն առնու կամ համարձակ իր հաւատքը պաշտելու և կամ անոր վրայ մեռնելու:

Ահա բանս այլ աւելի հատուտեց Հէշամայ փորձը, և աւելի փափագեցաւ ապրեցընելու այնպիսի անձ մը՝ զոր Օմար հազիւ կրցեր էր քովէն հեռացընել. և նորէն կանչելով զՎահան և աւելի կակղացած սեպելով, հարցուց թէ միտքը փոխեց: Իսկ նա պատասխանեց, թէ Ճշմարտութիւն մէկ է, եր խօսքն այլ մէկ է: Եւ յետ երկար և կրկին կրկին փորձելու և ջանալու համոզել զնա ամեն կերպ զինչոլութեամբ, տեսնելով որ Վահանայ ամեն մէկ պատասխանն իրեն յանդիմանութիւն և իրեններուն ամօթ կու բերէ, (որք և կու դժուարեին լսելու, և նշաններով կ՚իմացընէին որ այլ

10477396

պէտք չէ ներել իրենց կրօնից նախասանաց) Հէ-
շամ այլ երեսին գոյնը և խօսքերը փոխեց, մատ-
նեց վկան արիւնկզակ դահճապետին ձեռքը:
— Բայց ինչուան եօքն այլ էկարցաւ բոլորովին
մարել գուրթը այնպիսի ընտիր և անպարտ դա-
տապարտելոյ մը վրայէն... Ծածուկ բան մ'այլ
ըսաւ սպանչին ականջէն:..

ԺԵ

Ոչ այնչափ մեծ ուրախութեամբ եղեր էր Վա-
հան Օմարայ առջևէն դիմելու՝ ի Գողթն և՝ ի Հայ-
բենիան, որչափ Հէշմայ առեւնէն եւաւ դիմելու՝ ի
քուն Հայրենիս Հոգւոյն և յանկորուստ իշխանու-
թիւն: Որչափ այլ ամիրապետին բռնած կերպն
կրնար դեռ մահուընէ ազատելու յոյս մը տալ,
ինքն իբր ապահով մարտիրոսութեանը վրայ՝ ու-
օրեայ բանտարգելութեանը մէջ վերջին պատ-
րաստութիւններն այլ տեսեր էր. որուն չերմ
եռանդութիւնը լսելով Ռուծափայ Յակոբիկ ե-
րէցն՝ եկեր էր՝ ի բանտը՝ բարեկրութեամբ մխի-
թարելու զնա, և յորդորելու եկեղեցւոյ սուրբ
խորհուրդներն ընդունելու, որոց չատ փափագէր
սուրբն այլ. սակայն տարակուսելով երկիւղն հա-
տատց դաւանութեանը վրայ ամենազգաստ վը-
կայն՝ ըսեր էր. «Իմ արեամբս մկրտեցայց, վեր-
» ջին քաժակաւս եղից յաշխարհէս»: Բանտին
վերջի օրն այլ մեծախորհուրդ օրհնեալ օրն էր,
այսինքն Յաղկազարդի օրն. յորում ինքն այլ սի-
րով և փառաբանութեամբ յուղարկէր զաերն յԵ-
րուսաղէմ, «ընդ տղայն օրհնաբանելով» և ընդ
ձերան «բարեբանելով զանմահ Թագաւորն»,
լուսածալիկ ձիթենեօք սիրոյ և պատկափայլ ար-
մաւենեօք հաւատոյ. և փափաքէր որ Տէրն այլ
զինքը մոցընէ իր երկնաւոր արքունիքը: Եւ ահա

*Էբրև չուտ մը ինդրանայը Տանելով՝ կ'երթար զուարթութեամբ իր ցաւոց Ջամբան. կ'ելնէր իր Փրկչին նման՝ (Ռուծափ) քալքէն դուրս, փոխանակ իր գինաւէտ Գողթան՝ գանելու զարխնակաւ Գողգոթային. և երթալուն առեն՝ Աստ քեզ, Տէր, համբարձի զաչս իմ, սալմոսը և անոր նմաններըը՝ բարձրաձայն կ'ըսէր, մինչդեռ դահիճքն զովչն կ'երթային խաչահանուածց և աւազակաց պէս, և Ռուծափայ մէջ գտուած քրիստոնէից բազմութիւնն՝ եաւէն և հեռուէն. միայն լալեր. նուն և վայելնուն ձայնն կու Տանէր խառնուէր արբոյն աղօթից հետ: Նա աւելի ուրախութեամբ և համարձակ սկսաւ գոհանալ և օրհնել զԱստուած՝ երբոր Տասաւ վկայութեան տեղը, երբոր վերջին երկրաւոր քայլն այլ առաւ. և արդէն մարմինն իբր իր յետին Տանգիստը գանելով դադրեցաւ առաջ երթալէն:

Իսկ դահճապետն որ անդադար մրմռալով մէկ մը կու սպառնար, մէկ մը կու յորդորէր զնա յուզութիւն, ըստ պատուիրանին Հէշմայ, Տոս այլ աւելի Տարկու կերպով, միանգամայն և յուսակտուր սուրը երևցընելով՝ ըսաւ. Որովհետև մեկ ջըրիր յորդորանացս, ես այլ ամիրապետին Տրամանը պիտի կատարեմ: — Ուրեմն ինչուան Տիմայ անոր Տրամանին դէմ կ'ընէիր, պատասխանեց սուրբն. իսկ ես իմ երկնաւոր Թագաւորիս պատուիրանաց վրայ անփոփոխ և Տաստատ եմ: — Սակայն Տոս դահճապետն այլ իր խալիֆային Տրամանը կու կատարէր, գուցէ չուզելով այլ, բայց վախնալով անկէ. որուն ծածուկ պատուիրանն այլ Տոս կատարեց... ծայրէ՛ն ծայր սուրը փայլեցընելով և դարձընելով ինչուց քանց սահեցուց ծոծրակին վրայ, և նորէն փայլատակի պէս վահանայ աչաց առջև բերաւ... և ահա ծառուած երկաթոյն շլթունքն կարմրցեր էին իբր

քանի մը կաթիլ արեամբն, և ուրիշ կաթիլներ այլ վզին վրայ մանեակ մը կու ձևացընէին... Գողթան գինին այնքան չէր անուշ եկած իր ըմբռնողաց՝ ինչպէս այս ինքնաբուխ օշարակին, զոր իբրև նախընծայ նուէր մարտիրոսութեան կըրցաւ ինքնին մատուցանել Աստուծոյ, և իր օրով առաջ բաածը կատարել. « վերջին բաժակաւս է » լից յաշխարհէս »:... Ո՛վ սխրալի, այլ և ստակալի բաժակ: —

Դահճապետն գարձեալ մէկ մը ամիրապետին պատուէրն վախնալով, մէկ մ՝այլ արեան ցայտմունքէն գլգռուելով, Տեառը, կանչեց. ուրեմն ինչ կ՝ուզես: — Վահան այլ կարուկ կերպով ըսաւ. Կատարէ՛ կամքդ. և լռեց: Եւ թէպէտ քանի մը բան այլ զրուցեց դահիճն, ինքը պատասխան չտուաւ. ինչուան որ նա մէկ անգամ մ՝այլ կրկնեց, թէ ահա վերջին վայրկեան մ՝այլ քեզի, ով տառապեալ, ընարէ զկեանք կամ զմահ: — « Ընարեցի, կանչեց Վահան, զմահ՝ վասն Քրիստոսի, քան զկեանս անցաւոր»: — Ուրեմն երկնցուր վիզդ, պոռաց յուսահատեալ դահճապետն. և գարձեալ փայլատակող երագութեամբ իր և սրոյն պաշտօնը կատարեց, մեկէն դիւահարի պէս ցատքեց ելաւ գնաց:...

Ասաք երկուշաբաթի օրը՝ միջօրէին քանի մը ժամ ետև (ժամն ինն էին, յորում և Յիսուս զհոգին աւանդեց) մարտի 18ին յամին 738, և իր ծաղկեալ առյգ կենաց 36 տարուան մէջ՝ կատարուեր էր մեր Հայաստանեայց և ընդհանուր տուրք եկեղեցւոյ մեծայաղթ և մեծափառ վկայից մեկն Տանդէան. աքանչելի և պանծալի մարտիրոսութիւն Վահանայ Գողթնեաց իշխանի:...

Սոսկում և սարսուռ զեռ պատէր զմօտաւորս, ոլք էին ամիրապետին արքունիքէն եկած պատուաւոր մարդիկ. տեսան և վկայեցին որ Վահա-

10477396

նայ արիւնն չէր տարածուեր ջրոս դի, այլ ամփո փուելով մեկտեղ կու ժայռվէր. և բոլոր մարմինն լուսոյ մէջ ընկղմած կ'երևէր. Ատուածծ, Ատուածծ՝ կանչելով իրենց լեզուով, և զարմացքով յեա դարձան պատմելու ամիրապետին, որ չկըրցաւ չխորել. և ոչ ոք ուրիշ կիրք մ'ունեցաւ, բայց 'ի մեծահաւատ քրիստոնէից՝ 'ի պարծանս եկեղեցւոյ: Բոլոր գիշերը մարմինն հոն մնաց. շունք և գազանք հեռուէն պահապանի պէս կենային և զնրաւ վտնտէին. քրիստոնեայք փափաքանօք և վախով արթուն սպասէին. երկրորդ օրն բոլոր քաղաքն և ալքոմնիք իբրև իրենց սիրելի անդրանիկը կորուսած սպասնային. կամ կլմային փոխուած անսովոր ցրտութիւն մը հասած կարծուէր, կամ ամենքն այլ իրարու յանցաւոր և խղճահար կ'երևէին: Ինչուան որ ելաւ արքունի ներքինապետն և մուտեխիկ կանչել տուաւ քալքին մէջ՝ որ քրիստոնեայք առնուն Թալէն նահատակը. և երբ անոնք տարակուսէին թէ խաբեութիւն չըլլայ՝ նորէն վստահացուց, թէ վերուցէք անվախ և ինչ կ'ուզէք՝ ըրէք:... Մէկէն հոն Թափեցան բոլոր քրիստոնեայք, և իրարմէ խլելով յափշտակեցին ամն բաժնեցին արբոյն բոլոր արիւնը և տակի հողը, զգեստները, և ինչ որ անոր դպեր էր: Իսկ մարմնոյն ոչ ոք կու համարձակէր դպչելու. գիտէին որ անոր տէր ելլող պիտի չըլլայ. իսկ հիմայ հոն Հայ չկար, այլ միայն Ատրի նեստորական կամ Յակոբիկ, և Յոյն. ապա խորհուրդ ըրին, հաւանեցան, վերուցին տարին Թալեցին Օտարաց գերեզմանատեղը, և շուտմը քարեր տաշելով կանգնեցին վրան քառակուսի մի կափարիչ մը. և իրարմէ զատուելով, բայց միշտ կասկածելով, գնացին տեղերնին:

Այլ չերկընցընեմ խօսքս. Թէոփիլէ անուամբ Յոյն մը կար ամիրապետաց ծառայութեան մէջ,

10477396

և անոնցմէ էպտա Մաեֆան կոչուէր. ջրա մար-
գավ եկաւ հանեց մարմինը՝ տապանի մէջ դրաւ.
տարաւ իր տունը. բայց նոյն գիշերը եպիսկոպոսի
մը յայտնուեցաւ եղածն. և Թէպէտ առջի բե-
րան ձայն հանեցին Թէ վաճառականք գողցեր և
Պաալպէքի ձամբով՝ի սուրբ երկիրը տարեր են,
բայց սրբոյն մարմնոյն եղած տեղը, ինչպէս նաև
նահատակութեան տեղն այլ՝ օրէ օր հրաշքներ և
բժշկութիւններ ըլլալով՝ իմացուեցաւ եղածն. և
սեխպուեցան յայտնապէս մասուռ մը շինել վե-
կայութեան տեղը. և դեռ չլմընցած՝ ձեռք զար-
կին մեծ և փառաւոր եկեղեցի մ'այլ շինելու.
բայց մարմինը մատրան մէջ դանգուցին, և կու
պատուէին համարձակ և հաւատար Ս. Սարգսի
(ընկերին Բաքոսի), որոյ արդէն հին վկայարան
և ուխտատեղի մը կար հոն, և անոր պատճառաւ
Սէրգիոպոլիս այլ կ'ըսուէր Ռուծափ:

ԺԶ

Ս. Վահանայ նահատակութենէն ետքն տարի
եաև՝ եկաւ իր վերջին հիւրընկալ մաերիմ և վա-
նահայրն, Արտաւազդ, քանի մը միաբանով. ըն-
կաւ, լացաւ համբուրեց իր յուսադրեալ սրբոյն
գերեզմանը. բոլոր լսող և տեսող վկայները փնա-
ռեց, հարցուց անոր նահատակութեանը վրայ.
և ա առաւել տեղեկացաւ Թէոփիլէէն, որ և յա-
նարէն գրեց տուաւ իր գիտցածը. զոր՝ի գար-
ձին՝ հայրն Արտաւազդ Ուռհայի եպիսկոպոսին
ձեռքով հայերէն Թարգմանել տուաւ: Ձեռոյ
դառնալով իր տեղը՝ յաջորդ տարին (746) ձեռք
զարկաւ և գեղեցիկ և երկար ոճով գրեց Վահա-
նայ վկայաբանութիւնը, այրած սրտով մը ողբի
պէս սկսանելով, և կրակի տարրոյն դէպքը կրա-
կէ տառերով շարելով. դեռ անկէ առջի դիպուած-

նեբն այլ կարգաւ ՚ի մէջ բերելով, որ եաւիթ եղա-
ծին պատճառն և սկիզբն աղէկ իմացուի. և Թո-
ղուց մեր պատմութեան և դպրութեան սրտա-
ռուչ և վայելուչ աւանդ մը, զոր ՚ի յիշատակ
Վահանայ Թորոսաձ կոյծակներէն մէկն անուա-
նեցի քեզ, Հայկակ, ՚ի սկզբան իօսելոյս. և որ՝ ինչ-
պէս հաւանական է, գեռ շատ համառօտած հա-
սած է մեր ձեռքը. և Թէպէտ հին ձառընտրաց
մէջ այլ երկու տեսակ [1] գտած եմք, մէկն քան
զմէկայլն կիսով չափ մ՚երկայն, մանրամասն և
տոուգապոյն. բայց ինձ Թուի Թէ սկզբնագիրն ա-
ւելի երկարատաւոտւմ էր: Ձառընտիրք միայն
Վահանայ վկայաբանութիւնը կ՚ուզեն աւանդել
մեզի, իրենց համար աւելորդ են առջի պատմած-
ներն, այն՝ որոյ համար կ՚ըսէ վիպասանն իր վեր-
ջաբանին մէջ. « Սկսայ պատմագրել՝ սկիզբն առ-
» նելով ուսաի արժանն էր. ՚ի նոյն յարելով ըզ-
» վկայութիւն սրբոյն Վահանայ վկային ». և Թէ
մեզի հասած վկայաբանութեան սկիզբն այլ
կան կրակին պատմութիւնն և ողբքն, բայց հա-
մառօտեալ. և երկու օբինակաց իօսքերն երբեմն
իրարմէ տարբեր և մէկմէկու լրացուցիչ կ՚երևին,
միանգամայն աւելի մեծ լրութիւն մը գուշակել
տան: Ի վերայ այսը ամենայնի՝ անգամ մ՚այլ
կրկնեմ քեզ, Հայկակ, որ այս Ողբս և Վիճաբա-
նութի՝ որոյ ընտիր ընտիր զրուցուածքը ջանա-
ցի խառնել իմ իօսկցս մէջ, մեր մատենագրու-
թեան և հայրենի յիշատակաց ցանկալի և պան-
ծալի հատ մ՚է. և Թերևս Խորենացւոյ և Եղիշէի
պատմութեանց վերջաբաններէն եաև ինչուան
ցԱրտաւազդ՝ ոչ ոք այնպիսի արտառուչ գրուած
մը Թողեր և հատուցեր էր մեզի. գուցէ և ոչ ոք

1 Երկուքն այլ հրատարակուած է ՚ի ԺԳ հատոր Մո-
խերաց, տպագրեալ յամի 1854 ՚ի Մ. Ղազար:

անկէ եաև այլ: — Աւելորդ է ինծի հոս քննել համ յերկարել այս գրուածոյս յարգը, որ թե՛ բևս ոչ մէկ ուրիշէ մը կրնայ նուազիլ կամ հակառակիլ կամ բաղդատիլ, քաց՝ի մէկ կարճիկ փոքրիկ գրուածէ մը՝ի նոյն ինքն՝ի Ս. Վահան, որ և խօսքիս սկզբան ակնարկած անոր երկու կայծանկարչական յիշատակաց մէկայլն է. հինգ տուն ջուխանն Վահանայ Գողընացւոյն. ցանկալի ծնացուածնախնեաց, ծնունդ էքնալ մտաց և սրտի. էքնաղագոյն և ևս եղած աւանդութեամբն, որով պէտք է ես այլ այս երկարեալ հայրենաբանութիւնս աւարտեմ:

ԺԷ

Անկարելի է ինչպէս քեզի և ինծի՝ այսպէս աշխարհին ազգայնոյ և զգայնոյ, Վահանայ վերջին տասն տարուան պանդխտութիւնը և արտակարգ մահը դիտելէն եաև, չգտանալ մէկ մ՚այլ՝ի Գողթնի և՝ի Սիւնիս, տեսնելու թէ ի՞նչ կ՚ընեն ի՞նչ կ՚ըլլան խոտրովիդուխտ և Սիսակուհի քամբիչն Գողթան, քոյրն և աներսինն Վահանայ: — Պատմութիւնն՝ համ անկարող անոնց խոր և խաւսուզը բացատրելու, համ անփոյթ՝ գլխաւոր հանդիսին վերջը մասնաւոր տեսարան մը բանալու՝ հոս լռէ բոլորովին, կարդացողին թողլով գուշակել՝ իր սրտին թելադրութեամբ: Եւ ահա մեր նախածանօթ աւանդութիւնն չի թողուր այսքան ալքերգելի և աննման վկայն մը (Վահանայ Գողթնացւոյն) յիշատակը՝ սովորական լռութեան մէջ թաղել. և դիմացնիս կու ցոլացընէ այդ վերջին յիշած կայծակս (շարականը). որ ոչ Աբրահամեանն Արտաւազդայ, ոչ Յովհաննու և ոչ հալանց հօր Սողոմոնի գրչէն ճայթած է, այլ ինքնայատ է որ տարբեր սրտի և տարբեր սեռի ար-

10477396

ատպրուեթիեն մ'է, որուն ոչ նմանն ունիմք և ոչ նմանցընուլը. Հայ Պինդար մը չէ ատոր եղիչն, այլ հայկուհի Սապփոյ մը, որ և կրնայ այս հե՛լ լեռնուհոյս հետ մրցիլ, և արբասան զգացմանքն յաղթել անոր հատարակ զգացմանցը. արդէն իսկ յաղթանակած է անոր և նմանեացը՝ երբ ըսեր է. « Արտաքնոյն զպատաքն՝ առելծիչ բանք անո- » տեացն 'ի պատրուեթիեն. իսկ փոյթ սիրոյնոյ՝ ատ- » տուածարեալ և ոգեշահ. ոմ երանելն Տէր վա- » հան »: Ահա ոճով հինգ կարճ տուն բանի մէջ՝ արբասեր սրտի և հոգւոյ ատատկագոյն կիրքը հա- ւատար կու բացատրէ, առանց մէկը մեկայլին ար- գելք ընելու:

Հոս արդարև Գողթան գաղանի և նուագելու բամբիռն՝ իբրև իր զմայլեցուցիչ գինւոյն երկար Թմբրուեթիեանը Թօնթափելով՝ կու մրցի և կու խառնուի Սիոնի ատուածերգակ քնարին հետ, և ատով՝ իր հնացեալ և մահալըլուկ ձայնը ան- մահ կու Թողու յառագաստի հայ եկեղեցւոյ: Եւ ինչպէս 'ի հնումն Կարմիր ծովուն հրաշալի անց- քը հրաշափառապէս նկարագրող երգը, Թէ և 'ի Մովսէս արտագրեալ, բայց իր քոյրն՝ Թըմբ- կուհին Մարիամ էր՝ որ կուսանաց և կանանց պարագլուխ եղած՝ կրկնելով և կրկներգելով ան- լըռելի ըրաւ, և հատուց ինչուան մեր սուրբ ատ- Ձարաց, « Օրհնեացուք զՏէր, զի փառաւք է փա- » ռաւորեալ. զերիվարս և զհեծեալս ընկէց 'ի » ծով ». այսպէս և հոս Հայկուհի մը և քոյր մը, աւելի արտահայտ քան Թմբկահար և բամբռա- հար, Գողթնացւոյն մեծ և արժանալուր գի- պուածը յաւերժայիշատակ ըրաւ. առաւելեալ քան զՄարիամն այն, վասն զի մերս ինքնին էր երգոյն հեղինակ: — Ահա պարտաւոր մերազ- նեայ կուսանաց և կանանց, անհամեմատ երգիչս Հայկուհի, որոյ 1100 և աւելի տարւոց հնութիեանն՝

10477396

և՛ աւելցընէ իր վրայ յաւերժահարանեայ ընտրո՛ւ.ք
մ՛այլ, եթէ չտեսաւ կարմիր և կծու ծովու մը
պատառուածք, և անոր միջատաց ճամբէն՝ ցա-
մաք և հեռւակ անցք 600,000 մարդկան և այլ
աւելի բազմութեան կանանց և մանկանց, և ոչ
անոնց եռւէն սպառազէն գնդից և գերանդաւէն
կառաց խառն՛ի խուռն հրոսակ մը, որ յանկարծ՝
նորէն իր բնաբեղէն պարիսպները փլցընելով փըլ-
փրացեալ ծովուն ալեաց մէջ ծփեցան և ծածկե-
ցան, և պատառ պատառ նորէն կարկըտած հա-
ւասարած ջրոց երեսը ցրուեցան.—եթէ այսպիսի
ծովու անցք մը չտեսաւ և՛ լսեմ՝ մեր Հայկուհի
գերագոյն գուսանն, սակայն տեսաւ՛ի տլայու-
Թեանն՝ Նախճաւանի և Հրամի հրեղէն և օդային
աչքն և համաշխարհական ոգոյ արտասուաց ծո-
վը, և անոնց միջէն մէկ մը ճոտպրած, երեն Ա՛է-
բայինը, Վահան Գողթնեաց նշխեցողը. մէկ մը
զնոյն իր հայրենի սիրական գահուն վրայ բարձ-
րացեալ փառօք, մէկ մ՛այլ՛ի խորս անապատից
և մենաստանաց ճգնաւորեալ ապաշխարուԹեան
ոլքովք, և յետոյ ինքնակամ նահատակուԹեամբ
ԹաԹաւեալ արեանը մէջ.— արիւն մը, որոյ հա-
մատորը վտակն էր զինքն իսկ (զերգիչն այլ) կեն-
դանացնողն.—հարազատ արիւն մը՝ մէկ այլերէ
յերկուս բաժանեալ, յեղբայրն՝ ՛ի վկայն Վահան,
և ՛ի փոյն՝ ՛ի վկայերգական ՌոտովՓոփոփ: Սա ինքն
է աւանդուԹեամբ վկայեալ և արբանզանեալ եր-
գուհիս մեր. զոր Թէ և նա (աւանդուԹիւնն)
լռէր՝ հարկ էր մեզի կարծել՝ կամ Վահանայ ան-
տարակոյս սիրողը, այսինքն, երեն հարանացեալ
Սիւնեաց օրիորդը, և կամ անոնց երկուքին ժա-
մանակակից և վկայուած մեծանուն Հայ երգուհի
մ՛այլ, որ քեզ այլ, Հայկակ, անծանօԹ չէ, Սա-
հակադուխտն այն՝ զոր Սահեփանոսի Սիւնեցւոյ,
(որոյ եղերական վախճանն, ինչպէս որ քեզ պատ-

մեր եմ[1], եղաւ Վահանայ ճգնութեանց տարի. նեերուն մէջ։)

Արդ այս Վահանայ «էջոյին նրբազգած մեղմիկ մեղրամաղձիկ երգուհիս էր՝ որ անոր աչքին դիպուածներէն և գործերէն աւելի՝ կու զմայլէր կու զգար անոր բռնած զարմանալի ճգնող և ապաշխարող վարուցը վրայ։ Ինչն որ Թուի թէ՝ ի բնուստ և յարուեստէ վարժած՝ սիրէր զերգս և զերաժիշտս, անոնց ամեն նուագներէն աւելի զարմանալի և խորագոյն կու գտնէր Վահանայ ոտքերն ու հասուչանքը. «Զարմանալի է ինձ քան » զերգս երաժշտականաց ձայնս՝ ոտքդ քոց հընչեմուն » ք »։ Եւ անոր համար աւելի զարմանալի էր՝ որ երբ ուրիշ ոտքական երգ կամ նուագ լսէր՝ իրեն այլ ոտքերգութեան յորդոր կու գար. իսկ երբ Վահանայ ոտքերը լսէր՝ արտէն անդին մինչև՝ ի հոգին կ՝անցնէին. անակնկալ կիրք մը կ՝ազդէին, նորօրինակ ուրախութիւն մը, որ զինքը կու շարժէր երգախառն հրճուանօք երգելու. « Սուսաբել » յորդորէ այս զհոգւոյս մասունս, յօրինել քեզ » երգս ոչ զղջական, այլ հոգևորս և ուրախա- » րարս, յորդորական և նեբղծողեանս »։ — Շատ գովելի և գեղեցիկ յատկութիւններ աւետր էր Վահանայ վրայ, շատ ձիրք, շատ վայելչութիւն, մեծոգիութիւն և արիութիւն, բայց անոր ըրած ճգնութիւնքն իր ծանկեալ հասակին մէջ, և ամենևին ազատ, կրնամ ըսել թէ և անպարտ ճըգնութիւնք՝ որ զճգնաւորս կ՝ապշեցընէին, բոլոր մարդուս բնութեան անգամ զարմանք և զարհուրանք բերէին. իսկ անանկ ապշատար և բաղդաչջոյ մարդուս մը՝ նա և բնութենէ վեր կ՝երևէին. « Զարհուրելոյ ես քո ճգնութեանդ զմարմնոյս » բնութեանն. իսկ դուն՝ աւաւել գոտար »։ — Զա-

[1] Տես և Հատոր, 270։

առնք (Վահանայ ձիւքերը և գործերը) աեանելով, եթէ աուչի բերան կու զարհուրէր երգուհին, ապա հիանայր, զմայլէր, և «Էհէ· բայց սիրէր տալ տրակեան սէրոյ վեր սիրով մը· կրնար ինքն այլ եւ հին հայրենի գուսանաց նման փորձ մը փորձել, քիչ մը ձնշելով իր գինաւէտ Գողթան ըմբերացնեալ բամբիռը՝ վառվռուն երևակայութեամբ և այլաբանութեամբ վիպասանել իր վեհագն սիրեցեալին: Սակայն հոս բոլոր արտաքին բանաստեղծից արուեստք և հնարք՝ անոտի և սուտ, անօգուտ և անպիտան կ'երևէին նկատմամբ Վահանայ առաքինի գործոց և իր (երգչին) զգացմանցը· «Ար» տաքնոցն զգաստքն՝ ստեղծիչ բանք անոտեացն՝ » 'ի պատրուեթիւն », և այլն: — Անոնց գովասանած մեծագոյն գործերն շատ հեղ իրենչ են, բայց եթէ դիւցազն ըսուած յանդուգն և ուժով (և երբեմն մոլի) մարդու մը ըմբշամարտութեան· կամ յափշտակութեան կնոջ մը կամ քաղաքի մը· կամ մեծաբանակ պատերազմի մը յաղթութեան, որ գաշտին մէջ անբաւ արիւն թափել կու տայ, ընտանեաց մէջ՝ աւելի շատ արտասուք այրիացելոց և որբացելոց· իսկ դու մեր արբշռեալն դիցացն, դու ոչ այնպէս· այլ «Որպէս զքաջ նա» » հատակ պատրաստեալ 'ի պատերազմ, կատա» » րեցեր զընթացս քո արիաբար, յաղթացն Հարա» » ւայոյ· դատաւորեալ ընդ անմարմնականան, ամէն » » երանելի աէր Վահան, Գողթնեացն իշխեցող »:

Երգոյն այս եաքի տունն, որ զհոգի վեհագինն դատաւորէ ընդ անմարմնականս, լռելու տաեինը՝ կու յայտնէ անոր դան այլ 'ի մէջ մարմնեղինացս: Առաջին տանոյ վերջը՝ միշտ կրկնելով ամէն էրանելի փէր Վահանը, մէկ մէկ մակդիր կ'ընծայէ, կարգաւ բարձրացընելով կամ զաուելով անոր աատիճանը. նախ՝ Ընտրեալ յԱստուծոյ, իբրև կո» ւծ 'ի նշանաւոր կեանս և 'ի գործ· ապա՝ Ծա»

10477396

— ով Քրիստոսի, եւանդուն հաւատարմութեանն համար ի հաւատան Քրիստոսի. յետոյ՝ Սէրոլ Քրիստոսի, մանաւանդ ջանքով եւ բոլորովիմբ նըւիրման համար ի խաչակցութիւն Քրկչին. եաքը՝ Ընդբեալ յապաւոյ, խմացընելով անոր բարձր ցեղը՝ նաեւ ի մէջ ազնուաց երկրի, որոյ փառքն եւ փակ կութիւնն արհամարհեց վասն սիրոյն Քրիստոսի. իսկ հռուսկ յետոյ անոր սեփական պայազատութիւնն այլ նշանակելով, Գողընէացն էվխեցոլ: Իսկ այդ հայրենի գաւառին եւ տոհմին անուան ծայրը անսովոր ոճով եւ գրեթէ նեղչմամբ մ՝աւելցընելով ն տառ մը, կարծես թէ մէկ կողմէն իր գեղեցիկ հայկական (Վահան) անունէն կտրատածին եւ տաճկացեալ Վահապին վրէժը կու խնդրէ, մէկ այլ կողմէն այլ գրեթէ անբացատրելի վտեմութիւն մը՝ որ մը աւելցընելով՝ արթընցընել կու տայ ի հայրենասէր սիրտ՝ զբոլոր հինաւուրց յիշատակս գինաւէտ, երգաւէտ եւ քաջաւէտ Գողթան: —

Եւ այսպէս, եթէ Հօր Արտաւազդայ մը գրած վիպաբանութենէն բաւական էր մեզի սիրելի եւ պաշտելի ընելու զՎահան Գողթնացի, իր Շուրհանն անհամեմատ առաւելութեամբ մ՝այլ սիրալի եւ պարծելի կ՝ընէ թէ զերդեան եւ թէ զերգիչն: . . .

Այսպէս մէկ մը եւ ատոր նման մ՝ուենալով՝ կրնաս եւ դու, ով ժիթացեալ Հայաստան, հայրենիք իմ, կրնաս եւ դու ջամաչել եւ ջնախանձիլ ո՛ւ եւ է ազգի դիմաց. կրնաս յայտ մատին եւ գերափառ Յունաստանի մը հետ մրցիլ. եւ կրնաս Թողբ որ անոր համբաւեալ տաճերորդ մուզայն[1] իր ծղեբոյն ծլլիքը խածնելով երթայ գահավիժի վրայ կապեան գարերէն վար, երբ յերեւան ելնեն ի ապրակս Սիւնեաց՝ մեր յիսուսոգի մուզայքն՝ Սահա-

1 Այսպէս կ՝անուանէր Պղատոն զՄատփոյ:

կոպոսիք և Խոսրովիդոսիք: — Սաղ հրաշահիւս շարականովը՝ կրնաս դուռ մը լրիվ քահանայապէս քու հնազանդ եկեղեցուդ վրայ դադրիլ և լռել, ով պանծալի բամբիռն Գողթան: Սակայն բաւական էր՝ քեզի անլռելի արձագանգ մ'ըլլալու, մեզի՝ մշտնջենաւոր մխիթարանք մը, և երկրաւոր անմահութեան մը՝ անմահից գաւակեալ ՎԱՀԱՆ ՆԱԻ ԳՈՂԹՆԱՑԻՈՑՆ:

10477396

ԻԱ

ԱՏՏԻԿԵԱՆ ՄԵՂՈՒ
Ի ՁԻՒՆԵՂԷՆ ԼԵՐԻՆՍ ՀԱՅՈՑ

Նոյեմբ. Թիկտ. 401 ամ. Ն. Ք.

Ա.

*Ա*ԷՆ իբրև Թաց վարագուրաւ մը կու ծածկէ աչքերնէս աշնան վերջին տեսարաններն այլ. եղեամն՝ Թափթըփած տերևոց վրայ՝ ձմեռուան սառամանեաց կանխիկ մանրանկար մը կու ցուցընէ. գիւղերն գարձեալ յանապատ կու փոխուին. ըզբօսաէրք կու գան 'ի քալաք՝ 'ի պատսպարեալ բնակարանս: Արդէն անասուն կենդանիք այլ իրենց Ճարը տեսած են. որն չուեելով ընդ օդ և ընդ ջուր 'ի հեռաւոր և տաքուկ բոյներ, ւորն ամուր ապահով ծակ մը, փոս մը, խուռչ մը փնտռտելով և ներս քաշուելով: Ծաղկատարփ մեղուն այլ իր փեթակը փակեր մեղրով մոմով, նեղանձնացեր իր վեցանկիւն սենեկաց մէջ, կու ըզմայլի և կու Թմրի իր հնարած անուշակ փիլիսոփայութեամբը, որ աւելի իրական է (գոնէ իրեն և ոմանց համար) քան Սոկրատայ քանի մ' աշակերտացը, որք առաջին իմաստասէրք կամ բանաւոր մեղուք անուանուեցան, Թէ զանազան փիտե-

*Լեօք շալապրած գրոցն համար, և Թէ քաղցրա-
խօս ու հեշտալուր ոճով ու բառով գրեցնուն: Ի-
րենց գեղեցկաբան կամ գեղեցկագիւտ աշակերտ-
ներն այլ ձարտարեցին ըսել իրենց ամենէն վայե-
լեալ և սիրելի փիլիսոփային համար (Պլատո-
նի), Թէ 'ի տղայութեան կռնակին վրայ բերա-
նաբաց պահված առեն՝ մեղուաց պար մը մտաբ
ընթանցը մէջ ու խորխոչ չինեց, 'ի նշան իր ճար-
տարան քաղցրախօսիկ լեզուին: Անոր մէկ մեծ
աշակերտակից և հայրենակից այլ՝ իր կակուղ
գրչին և պաճուճազարդ բանից համար՝ Ափթէ-
նէան մեղու- անուանեցին. որ և ոչ միայն մեղուի
փոփոխուկ սրփերուն մեղրն ունէր, այլ և ըստ ա-
ղբոյն անոր տաբ խայթոցն այլ,— զէնք.— և գրե-
Թէ հարիւրամեան կենաց մէկ մասն 'ի բանակս և
'ի մրցանս անցուց, մէկայլն 'ի գրուածս և 'ի խօ-
սուածս բանասիրականս. այն զարմանալի մարե-
խածին Մեղուն, (Կրիւլլոսի որդի) Ֆէնելոն. զոր
այս օրերուս հայագուցական հրաւիրէ առնել մեր
հայրենեաց սառնամած լերանց վրայ: Արդարև
պիտի զարմանայիր, Հայկակ, եթէ լսէիր Թէ Ա-
Թենքի հիւմեգեան մեղուն՝ այս անյարմար և տա-
րաժամ եղանակիս՝ եկեր Կորդուաց խորթ ու
խրթին ժայռից և սառից վրայ կու բզզայ. այլ
Թերևս ոչ պակաս զարմանալի ըլլայ՝ անոր մեղրը
ճաշակով փոփիաբարոյ փիլիսոփայ մ'այլ առե-
նել այն անկոխ քարակոհակաց մէջ՝ այսպիսի ա-
առեն մը:*

*Շատ անկարծ և կամ անբնական առեղափոխու-
Թեանց և հեռապնացուԹեանց՝ գլխաւոր (Թէ և
գժնդակ) պատճառաց մէկն՝ եղած է մարդկան
իրարու հակառակուԹիւնն, պատերազմք. որք
ինչպէս շատ հեղ անբաւ չարեաց՝ երբեմն այլ բա-
րեաց ինչ առիթք եղած են. այսպիսի պատճա-
ռաւ մը Ֆաենոփոն այլ ընկաւ Հայոց ժայռուա-*

10477396

ու սահնուստ լերանց վրայ, յառաջ քան զայլ բազմաթիւ մեծամեծ զօրավարս, որք գրեթէ ամեն դար՝ ամեն տան–ամ անցան ու գարձան մեր աշխարհին լեռներէն ու հովիտներէն. Ձիւներն անգամ հալեցընելովերբենց նմանեաց արեամբը: Սակայն Քսենոփոն՝ ոչ իբրև Անդիոքոսն յԱլեպեայ՝ կ'ելնէր կ'իջնէր ընդ բազմաժայռ Կորձայս, ոսեղիմ Թշնամւոյ հետ կռուելու և երկիրը աւրելու, և ոչ Լուկուլլեայ և Պոմպէի նման՝ Տիգրանայ և Միհրդատայ դէմ կ'երթար վրէժխնդրութեամբ, այլ ակամայ՝ կարիճ բայց դժբաղդ բանակի մը մէջ գտուած, բազմազօր և նենգաւոր Թշնամիէն հալածուելով՝ անփորձ և անկոխ ճամբէ կու գար նար՝ ի հայրենիս գառնալ և գարձընել տան հազարի չափ ցոյներ. և ատոր համար այս գործս ըսուեցաւ Նահանջ Բէ–ղուն ցոնաց, և անմահ յիշատակ բռնեց՝ պատմութեան մէջ. նոյն իսկ Քսենոփոնի ճարտար գրչութեամբն և ճարտարապետական գրչութեամբ գիպուածոց, որ և իր գրուածոց գլխաւորներէն մէկն է: Ինչափ աւելի պատուական եղած է այս պատմութիւնս՝ որչափ որ կորսուած են ուրիշներուն գրուածքը նոյն գործոյ վայրօք. որոցմէ էր իր ընկերակից և զօրաց վարիչներէն մէկն՝ Սոփենետ Ստիւմփալացի. յորմէ կ'երևի թէ Դիոդոր Սիկիլեացի առած է այս պատմութեանս մէջ այն դիպուածները կամ մանր տարբերութիւնները՝ որք չեն յիշուիր 'ի Քսենոփոնէ:

Իսկ մեզի գալով, Հայկակ, մեր ազգին և աշխարհին, Քսենոփոնի այս գրուածը ինչպէս նաև Կիւրոպադիա ըսուածն, յետ Ցունաց՝ ամենէն աւելի մեզի Հայոց պիտուական և սիրելի է. ոչ միայն զի մեր աշխարհին վրայ այլ ու իսկ պատմութեանցը մէջ, այլ զի յետ Ցունաց՝ Քսենոփոնի յիշած այնքան ազգաց և ժողովրդոց մէջ՝ գրեթէ

10477396

միայն Հայք են՝ որք կարենան աւելի խորհրդա-
ծել և քննել անոր ըսածները: Ա՛յս դիտմամբ ես
այլ այսօր քեզի հետ ոչ Քաեռոփոնի վարքը գործ-
քերը և գրքերը կ՚ուզեմ քննել, և ոչ այն Բիւ-
րոճն նահանջը չափել ծայրէ ծայր, այլ միայն
մեր աշխարհէն անցնելուն դիպուածը և ձամբան:
Բայց որովհետև առանց երկու ծայրի՝ մէջ չըլլար,
հարկ կ՚ըլլայ գոնէ համառօտիւ յիշել և երկոց
պատճառը, սկիզբն և վերջն այլ:

Բ

Պատերազմն՝ ի բնէ պժգալի՝ այլ աւելի է երբ
ընտանեկան կամ քաղաքական ըլլայ. այսպիսի էր
նախապատճառ մեր այս դիպուածին այլ. երկու
Պարսիկ արքայորդի հղբարց մէջ ծագած հակա-
ռակութեամբ: Ցայտ է քեզի, որ արքայազն եղ-
բարց հակառակութիւնն այլ շատ հեղ ժառան-
գութեան իրաւանց կամ ինդրոց համար կ՚ըլլայ:
Արտաշէս Բ, պայազատ Պարսից Աքեմենեայց,
իբրև անդրանիկ որդի Դարեհի Նոթոսի՝ յաջոր-
դեց անոր յամի 404 նախ քան զԹուական Փըրկ-
չին, իր հօր թագաւորութենէն առաջ ծնած ըլ-
լալով. իսկ անոր թագաւորութեան առեն ծնաւ
Կիւրոս Կրտէր ուրիշ դշխոյէ մը: Ցայտնի է կանանց
նախանձն այլ՝ ուր բազմակնութիւն կայ, և ջանքն՝
իրենց զաւակները վեր քշելու. մանաւանդ երբ
Պարիսատիսի պէս գոռոզ դշխոյէ մը ծիրանածին
ընծայուէր Կիւրոսի պէս կարիճ կուրծն մը, գրե-
թէ անտարակոյս էր ծագելն կուրծն: Սակայն
Արտաշէս՝ Ո-ղջ էր և ի՛ անուանէր (Մնէմոն՝ ի Յու-
նաց), միանգամայն և նախատես և մեծոգի. ոչ
զեղջային ուզեց զսկել և ոչ ինք վինքը. այլ ի-
րեն երկնատիպան գրաւ զանիկայ և վերատե-
սուչ ամենայն նախարարաց իր ինքնակալութեա-

նը արևմտահռոմեան, և աթոռն այլ դնել տուաւ
'ի Սարդիկէ մայրաքաղաք Լիւդիոյ, քիչ հեռու
և յարևելից Զմիւռնիոյ. այսպէս մինչև 'ի ծայր
արևմտից հեռացընելով զնա՝ ամօրեայ ճամբա-
ներով իր արևելեան գահէն (իբրև 20 աստիճան
աշխարհագրական երկարութեան իրարմէ հե-
ռու):

Կիւրոս իր եռանդուն բնաւորութեամբն և
Յունաց մերձաւորութեամբ և ընտանութեամբ՝
անանկ լաւ կարգաւորեց իր իշխանութիւնն և
արքունիքը, որ նոյն իսկ Յունաց նախանձելի և
պատուելի կ'ըլլար, եթէ չափազանցութեամբ և
կոլճնասիրութեամբ չէ սոնց պատմածն. բայց
իր ամեն ցուցած և յուսացուցած գործերը սև-
ցուց, փճացուց իր կենաց հետ՝ անսանձ փառա-
սիրութիւնն, որով կ'ուզէր միահեծան ինքնակալ
ըլլալ, նաև զեղբայրը զրկելով: Գաղտուկ պատ-
րաստութիւն տեսաւ, զօրք ժողվեց ցամաքի և
ծովու. օգնութիւն ուզեց 'ի Յունաց այլ, որոց
վրայ մեծ համարմունք և վստահութիւն ունէր:
Յոյնք, և մանաւանդ Սպարտացիք՝ իրեն երախ-
տապարտ էին, իրենց անկէ առած օգնութեանն
համար. և առանց տնտղելու խաբեբային անոր
Կէարքոս լակեդեմոնացին, պզտիկ բայց ընտիր
գնդով մը. որուն հետ միացան ուրիշ Յունաց
մանր սէրուներէն այլ շատ զօրք՝ իւրաքան-
չիւր զօրավարօք, բոլորն իբրև 16000 հոգի: Ընդ-
հանուր զօրապետութիւն եղաւ նոյն Սպարտացին.
իսկ առանձին ազգայ մէջ՝ Բէովատացւոց զօրավարն
էր Պրոքսեն Թեբացին, որուն մտերիմ բարեկամն
էր մեր ատենի իմաստասէր մեծն՝ Քսենո-
փոն, որ այս առեն 30 կամ 35 ամեայ մ'էր: Ար-
դէն երիտասարդութեան առեն պատերազմի մէջ
մտած ելած, հիմայ հասակին և ուսմանց ազդե-
ցութեամբ՝ աւելի խաղաղութիւն և մեղը սիրէր

10477396

քան կռիւ և արիւն. անոր համար՝ ոչ իբրև մար-
սիկ և նիզակակից, այլ իբրև սրտակից ընկերա-
ցաւ Պրոքսենի. միանգամայն և իբրև բանասէր՝
նոր երկիր, նոր ազգ և դէպք տեսնելու քննելու.
մանաւանդ որ՝ ի սկզբան ոչ լինքն և ոչ այլ զօրա-
վարք գիտէին ուր և ինչ քան համար երթալնին.
վասն զի Կիւրոս խաբելով կ'ըսէր, թէ իրմէ ապըս-
տամբած Ասորւոց դէմ կ'երթայ: Ասանկով ժող-
վեց զամենքն ի Տարսոն մայրաքաղաք Կիւլիկիոյ,
ի սկիզբն յունիսի (401 տարւոյն), մտաւ յԱսո-
րիս, տարաւ բանակը մինչև յԵփրատ, անցուց
անդին (ի սկիզբն օգոստոսի), և պաշարաբեր նա-
ւերը յետ դարձուց: Ապա քիչ քիչ իր մեծերէն
սկսաւ՝ ինչուան վարիններէրուն իմացուց միտքը.
զոր ոմանք յօժարութեամբ ոմանք դժարութիւ
յանձն առին, յուսալով իր խոստմանց և բաղդին
այլ:

Ուշանալ չէր ըլլար. սակայն Միջագետաց չէն
և անշէն ընդարձակութիւնը կտրելու համար այլ
մինչ ի սահման Բաբելոնի՝ ամիս մը պէտք եղաւ:
Ան միջոցին Արտաշէս այլ իմանալով եղածը՝
պատրաստեցաւ արևելեան զօրօք մեծ բազմու-
թեամբ՝ եղբօրը դէմ ելնելու: Սա աւելի շուտով
հասաւ Եփրատայ և Տիգրիսի ամենէն իրարու
մօտ եղած տեղերը, որ հին Բաբելոնի մօտերն է.
և հոն Կաստոլոս անուանեալ ասանի մը մօտ, որոյ
դիրքն շատ յայտնի չէ, (յետոյն տեպտեմբերի)
եղաւ հին պատմութեան մէջ անուանի և բաղդա-
սահման պատերազմաց մէկն, որ մեր այս երեկո-
յեան զրոյցներէն դուրս կու մնայ: Այլ այսչափ
ըսելի է, որ երկու կողմէն այլ կրքով և կորըճու-
թեամբ կռուեցան. իրաւունքն յաղթող եղաւ.
Կիւրոս ոչ միայն անձամբ հասարակ զինուորի
պէս կու կռուէր, այլ և եղբօրը հետ զարնուե-
ա վիրաւորից զնաս. բայց մեռնողն ինքն է.

10477396

ղաւ, ըստ ոմանց՝ ի նոյն ինքն յԱրտաշէսէ զար-
նուած: Կէնաց հետ վերջացաւ պատերազմին, և
ցրուեցաւ արևմտեան բանակն:

Գ

Կիւրոսի ասիական գունդերն նուաճուեցան օ-
րինաւոր իշխանութեան. իսկ Ցոյնք՝ որոցմէ քիչ
մարդ ինկեր էր պատերազմին մէջ, անկէ շատ ա-
ւելի գժար փորձանքի բռնուեցան: Արտաշէս ի-
րենց պատգամ խաւրեց որ զէնքերնին Թոզուն,
ու իրմէ ուրիշ փոխարէն առնելով ազատ մնան
կամ երթան. Ցոյնք պատասխանեցին, Թէ քանի
որ զէնք ունինք՝ անոնք մեզի բանի կու գան, ա-
ռանց զէնքի մենք այլ կրնանք բանի չգալ. չեմք
ուզեր մեր սոյգ օգուտը՝ Արտաշէսի անսոյգ
վարձուց հետ փոխել. և եթէ կ'ուզէ Արտաշէս
փորձել զէնքերնուս արուեստը՝ պատրաստ եմք:
Հարկ եղաւ որ առանց կռուի զինքն Թագա-
ւորն՝ Թոզուց զանոնք երթալ իրենց երկիրը,
միայն Թէ անցած տեղերնուն վրնաս չընեն: —
Այս այլէսէր անվայել Արտաշեսի ուշեղութեանը.
բայց գժբաղդաբար շատ հեղ շատ ուշիմ Թագա-
ւորք և անԹափ իշխանական գլուխք՝ ուշաԹափ
կ'ըլլան իրենց պաշտօնէից անարժան Թելադրու-
Թեամբք. այսպէս այլ եղաւ Արտաշեսի: Հաւա-
նեցաւ իր սիրելի Տիտափեռն մեծ նախարարին
խրատուն, դաւելու զՑոյնս. զոր և գործով կա-
տարեց անխիղճ խրատուն, հրաւիրելով զգլխա-
ւոր զօրապետս Ցունաց իրեն վրանը, իբրև՝ ի
խորհրդակցութիւն և դաշնակցութիւն. և զա-
մենքն այլ (տասնումեկ հոգի) սպաննել տուաւ,
Կէֆալքոսէն սկսեալ մինչև՝ ի Պրոքսեն քարեկամն
Քսենոփոնի: Երկրորդական զօրավարքն գոյժը
լսելով փութացան հեռանալու, և իրենց առաջ-

10477396

նորզ ընտրեցին Քլերխոսի Սպարտացին. իսկ վեր-
ջապահ բանակին՝ զմերս Քսենոփոն, որ հայրենա-
կցաց սիրուն և մեծերին մահուան ցաւովն զբր-
դուած՝ յանձն առաւ այս ծանր և վտանգաւոր
պաշտօնը, և մեծ հնարագիտութեամբ և քաջա-
սրտութեամբ կատարելով յաջողութեամբ այլ
պահեց, և Թոլոմ յետոց զարմանալի պատե-
րազմական արուեստի օրինակ մը, որ կրնայ նախ-
օրինակ ըսուիլ յաղթուած բանակի մը ետ քա-
շուելուն, որով այս գարուս սկիզբն այլ այնքան
անուանի եղաւ Մօրոյ զօրավարն Փռանկաց, մե-
ծին Նաբոլէոնի հետ բաղդատուածն:

Նորընտիր զօրավարքն խորհուրդ ըրին բոլոր
գլխաւորներով ինչ ձամբով յետ դառնալնուն
վրայ. որովհետեւ երկու մեծ և դիւրին ճամբայ
կար, որով արդէն եկած այլ էին. բայց Թէ ան-
շէն կողմեր ուներ այն ճամբան՝ (ուր դժարը էր
պաշար գտնելն) և Թէ Պարսից արքունի գուն-
դերէն բռնուած պիտի ըլլար. ինչպէս որ արդէն
այլ Տիսափեռնէս մեծ գնդով մը, և Միհրդատ
անուամբ զօրապետ մ'այլ 5000 ընտիր զօրօք ե-
տևնուն ընկած կու հալածէին: Նոր, անփորձ և
դժուարին ճամբայ մը հարկ սեպեցին բանալ
Յոյնք, բայց իրենց նպատակին հասցնելու աւե-
լի յարմար. և այս էր Տիգրիսի եզերքներէն մին-
չև՛ի Ճորոխի եզերքը, կամ Կորդուաց լեռներէն
մինչև՛ի Խաղտիս՝ ձեղքել մեր Հայաստան աշխար-
հին լեռնակոհակ բարձրաւանդակը, յարևելեան
հարաւոյ յարևմուտս հիւսիսոյ, ձեան և սառա-
մանեաց եղանակի ատեն, և ելնել Տրապիզոնի և
ուրիշ յունական գաղթականաց կողմերը:

Ահա յանդուգն և բռնագաւեալ խորհրդով
շտապեցին Յոյնք Բաբելոնի և Ասորեստանի կող-
մերէն գէպ՛ի Միջագետաց վերնակողմը. Տիգրիս
գետոյն եզերքը բռնելով անցան անոր օժանդակ-

նեըը (Կապրոս և Մեծ Ձաւ գետ՝ որ Հայոց Սղբակ գաւառին լեռներէն կ'իջնէ), և երկու մեծ ամէծ քաղաքներն՝ Լաըիսա և Մէսոփիլա. զոր հնագէտք Ճանչնան՝ Ռեսէն [1] Ս. Գրոց և Նիմրուտ հիմակուան, մեկայըն Նինուէ կամ Մոսուլ, որ և հին աւեն այս անունը կրեր, Մուծղ կամ Մօսլ կոչմամբ: Ասոնցմէ վեր Ձախուէ և Գէլերայի (Ձէզիրէ-իպն-Էօմէր) գաւառները մնան, որք այն աւաններ և քիչ մ'աւաչ Հայոց և Ասորեաստանեայց միչտահմանք սեպուէին. և հիմայ հոս հասնելնուն, մինչ Տիապեեան եաւնէն կու հալածէր՝ գիմացնէն կամ քովերնէն երեցաւ արևելեան Հայաստանի կուսակալ ըսուած Ոբնդ մը, որ ըստ մեզ Հրանդ կամ Եըուանդ պիտի ըլլայ, թէ ոչ Աւտոդ [2], որ ըստ կարգի Հայկազանց Խորենացւոյն՝ այն ժամանակուան Հայ Թագաւորն կու հանդիպի: Յոյնք երբեմն զարնուելով երբեմն փախչելով միչտ գետն 'ի վեր ելնելով հասան Ձէզիրէի այն կողմերը, ուր գրեթէ գետն խորունկ դարափներով կու մօտենար լերանց և Ճամբան կորէր. հարկ էր կամ գետը անցնիլ և Միջագետաց դաշտերը մտնել, կամ լեռն 'ի վեր դիմել. և ահա այս և հոս էր Յունաց ըրած ընտրութիւնը, որոց հրաւէր կամ հրապոյր մ'այլ էին բարեբեր Հայաստանի համբաւքն. ինչպէս ինքն Քսենոփոն այլ վկայէ:

Նոյեմբեր ամսոյն կէսն էր երբ սկսան Յոյնք ելնել Կորդուաց լեռները, որ հոն 'ի սկզբան՝ գետոյն երեսէն հազիւ իբրև 1500 ոտք բարձր են, այլ երթալով կու բարձրանան՝ ինչուան 10000 և աւելի այլ: Ոչ անմիջապէս ելած տեղերնին յայտնի է, ոչ Ճիշդ բանած Ճամբու գծերնին, և

1 Դասան, ըստ այլ թարգմանութեան:
2 Եթէ արդարև Արմոդ է անունն և ոչ Արմոգ:

ոչ ինձյած կողմերինին, և ոչ այլ ուրիչ քաղաք և
իջեվանած տեղիքն. այլ շատ կամ քիչ հաւանու-
թեամբ, ըստ քննութեան գիտանոց՝ որք աշխատեր
են այս ճամբորդութիւնը հետաքննելու, և գեռ
իբր անտարակոյս ցուցած չեն, որովհետև հին և
նոր անուննները միաբանել շատ գժար է. գար-
ձեալ բաւական անուն նշանակած չեն հին ու-
ղևորքն, և ոչ այլ ամեն անգամ՝ գացած կամ
դարձած օրերնուն թիւը. թող ուրիչ պատճառ-
նեըն այլ, զոր աւելորդ սեպեմ հոս մէջ բերել,
կամ մանր հետաքննել. առ այժմ հաւանագոյնը
յիշելով թողում անոնց՝ որ մանաւոր փոյթ մ՚ու-
նենան այս խնդրոյս:– Իսկ այս առջի լեռնակատար
եօթնօրեայ ճամբանին՝ հաւանօրէն Ճէզիրէի և
Սղերտայ (կամ Սիւերտայ) միջոց Ցընըգ և Ցըն-
տըգ ըսուած բերդաւանաց կողմերէն ակսելով՝
դէպ ՚ի Մոկաց երկիրը ձգուած է, յետոյ անկէց
այլ դէպ ՚ի Խաղիշու ճամբան. և բոլոր երկամ-
սեայ Հայաստանի մէջ ըրած ճամբաներնուն դը-
ժուարագոյն մասերէն մէկն է. թէ լեռնոտ երկ-
րին քնութեան պատճառաւ, թէ լեռնաբնակաց
բարուցը:

Դ

Ի սկզբնէ կամ հազարամեայ դարերէ վեր՝ քիչ
փոփոխութիւն ունեցող ազգերէն մէկն այլ Քուրդն
է. որոյ և անուանն գրեթէ անփոփոխ ասկէ 2300
տարի առաջ այլ յիշուի ՚ի Յունաց՝ Քուրտոս կամ
Կուրտոէանք, ինչպէս մեր նախնիք այլ անուանեն
Կորդուս կամ Կորդուայիք, ևս և Կուճայք. որք և
ինչուան հիմայ բանասիրաց մեծ քննութիւն նիւթ
են, մանաւանդ այս եօթի տարիներս. այսինքն
թէ երենց և թէ լեզուներնուն ինչ ազգէ ծագած
կամ որու նման ըլլալն: Հիմակուան լեզուներ-

նուն նայելով աւելի՝ Պարսից մօտ են. քնակած աւելորնուն նայելով հին Քաղդէացւոց և Մարաց սեփական են: Իսկ այս Յունաց և Հայոց և ուրիշ հիներու յիշած Կորդուքն՝ Հայոց և Քաղդէացւոց կամ Ասորեստանեայց միչտ հսման ազգ և ժողովուրդ մ'են, երբեմն մեկուն երբեմն մեկայլին նուաճուած, շատ չեղ այլ ինքնագլուխ և ազատ կու մերձաւորաց: Այսպէս էին նաև Քսենոփոնի առեն. որ և յիշէ, Թէ քիչ առաջ Պարսից Թագաւորն ուզելով նուաճել զանոնք՝ 120000 զօրաց բանակ մը խաւրեց, որք գրեթէ բոլոր ջարդուեցան, կէս մը 'ի լերանց կէս մ'այլ 'ի քնակըջացն Կորդուաց. մինչև ստիպուեցան Պարսք դաշնագրութեամբ վնջանիլ:

Այսպիսեաց միչտ ձամբայ ընելու համար՝ կրնաս երևակայել Թէ ինչ զգուշութիւն և քաջասրտութիւն պէտք էր Յունաց. որք գիշերանց մօտեցան լերանց, և առաւօտ կանուխ կամաց և լուիկ սկսան ելնել, որ չիմանան լեռնցիք. և այնպէս այլ եղաւ: Վան զի արդէն ձմեռն կու սիրեր լերանց. արածականք 'ի գոմ փակուած էին, դուրսը Թափառող չկար. ամենքն քաշուած էին իրենց գեղերը, որ շինուած են լերանց գոգոց ու խոռոչից մէջ, և կէս մը ծածկուած քարերու մէջ և գետնի տակ. բնականապէս այլ իրարմէ հեռու և ոչ բազմաչէն: Ի՛նչ զարմանք ընկաւ սեղացւոց վրայ՝ երբ յանկարծ լրիկուան դէմ՝ ամերնուն գլուխը սեսան հազարաւոր զինեալ երիտասարդներ, որ ոչ Պարսից նմանէին և ոչ Հայոց: Սասալին գրդուեին՝ մեկէն սեղերնին Թողուլ և փախչիլ տուաւ. Յունաց ուզածն այլ այս էր. անհաշտ ներս մտան, ինչ ուտելիք որ գտան առին. բայց ուրիշ բանի չդպան՝ որ չգրգուեն թարթարոսքն. մանաւանդ Թէ ընտանութեամբ այլ կու կանչէին զանոնք, և կ'իմացընէին որ միայն կերակուր և ձամբայ կ'ուզեն:

*լեօք շալտադրած գրոցն համար, և թէ քաղքրա-
խօս ու հեշտալուր ոճով ու բառով գրեչնուն: Ի-
րենց գեղեցկաբան կամ գեղեցկագիւտ աշակեր-
ներն այլ ձարտարեցին ըսել իրենց ամենէն վայե-
լեալն և սիրելի փիլիսոփային համար (Պլատո-
նի), թէ 'ի տղայութեան կռնակին վրայ բերա-
նաբաց պառկած առեն՝ մեղուաց պար մը մտաւ
շրթանցը մէջ ու խորխախ չինեց, 'ի նշան իր ձար-
տարան քաղցրախօսիկ լեզուին: Անոր մէկ մեծ
աշակերտակից և հայրենակից այլ՝ իր կակուղ
գրչին և պաճուճազարդ բանից համար՝ Արիս-
տէան ձեղ- անուանեցին. որ և ոչ միայն մեղուի
փոփոխուկ սրփերուն մեղն ուներ, այլ և ըստ ա-
լոյն անոր տուր խայթոցն այլ,—զինք.—և գրե-
թէ հարիւրամեան կենաց մէկ մասն 'ի քանակս և
'ի մրցանս անցուց, մէկայլն 'ի գրուածս և 'ի խո-
սուածս բանաստրականս. այն զարմանալի մտրե-
խածին Մեղուն, (Կրիւլլոսի որդի) Քաէնոֆոն. զոր
այս օրերուս հայացուցածին հրաւիրէ առնել մեր
հայրենեաց սահմանած լերանց վրայ: Արդարև
պիտի զարմանայիր, Հայկակ, եթէ լսէիր թէ Ա-
թենքի հիւմեդեան մեղուն՝ այս անյարմար և տա-
րաժամ եղանակիս՝ եկեր Կորդուաց խորթ ու
խրթին ժայռից և սառից վրայ կու բզզայ. այլ
թերևս ոչ պակաս զարմանալի ըլլայ՝ անոր մեղրը
ձաշակով փափկաբարոյ փիլիսոփայ մ'այլ առա-
նել այն անկոխ քարակոհակաց մէջ՝ այսպիսի ա-
առեն մը:*

*Շատ անկարծ և կամ անբնական առելափոխու-
թեանց և հեռապնացութեանց՝ գլխաւոր (թէ և
գժնդակ) պատճառաց մէկն՝ եղած է մարդկան
էրարուս հակառակութիւնն, պատերազմք. որք
ինչպէս շատ հեղ անբաւ չարեաց՝ երբեմն այլ բա-
րեաց ինչ առիթք եղած են. այսպիսի պատճա-
ռաւ մը Քաէնոֆոն այլ ընկաւ Հայոց ժայռուս*

10477396

ու սահնուտ լերանց վրայ, յառաջ քան զայլ բազմաթիւ մեծամեծ զօրավարս, որք գրեթէ ամեն գար՝ ամեն տան–ամ անցան ու գարձան մեր աշխարհին լեռներէն ու հովիտներէն. Ձիւներն անգամ հալեցընելով երեսից նմանեաց արեամբը: Սակայն Քսենոփոն՝ ոչ իբրև Աննիբաղն յԱլպեայ՝ կ'ելնէր կ'իջնէր ընդ բազմաժայռ Կորձայս, ոտեըրիմ Թշնամւոյ հետ կռուելու և երկիրը աւրելու, և ոչ Լուկուլլեայ և Պոմպէի նման՝ Տիգրանայ և Միհրդատայ դէմ կ'երթար վնասմունդրուելեամբ, այլ ակամայ՝ կարիճ բայց դժբաղդ բանակի մը մէջ գտուած, բազմազօր և նենգաւոր Թշնամիէն հալածուելով՝ անփորձ և անկոխ ճամբէ կու չգնար՝ ի հայրենիս գառնալ և գարձընել տան հազարի չափ ցոյներ. և սորը համար այս գործս ըստեցաւ Նահանջ Բէ–րուն ցոնաց, և անմահ յիշատակ բռնեց՝ պատմուելեան մէջ. նոյն իսկ Քսենոփոնի ճարտար առաջնորդուելեամբն և ճարտարապետին գրչուելեամբ դիպուածոց, որ և իր գըրուածոց գլխաւորներէն մէկն է: Ինչափ աւելի պատուական եղած է այս պատմուելիւնս՝ որչափ որ կորսուած են ուրիշներուն գրուածքը նոյն գործոյ վրայօք. որոցմէ էր իր ընկերակից և զօրաց վարիչներէն մէկն՝ Սոփենետ Սթիմփալացի. յորմէ կ'երևի թէ Դիոդոր Սիկիլիացի առած է այս պատմուելեանս մէջ այն դիպուածներըը կամ մանր ատրբերուելիւններըը՝ որք չեն յիշուիր՝ ի Քսենոփոնէ:

Իսկ մեզի գալով, Հայկակ, մեր ազգին և աշխարհին, Քսենոփոնի այս գրուածը ինչպէս նաև կէօտաղըչ ըստացն, յետ ցոհնաց՝ ամենէն աւելի մեզի Հայոց պիտուական և սիրելի է. ոչ միայն զի մեր աշխարհին վրայ այլ ևս իսկ պատմուելեանցը մէջ, այլ զի յետ ցոհնաց՝ Քսենոփոնի յիշած այնքան ազգաց և ժողովրդոց մէջ՝ գրեթէ

10477396

*Միայն Հայք են՝ որք կարենան սահել խորհրդա-
ծել և քննել անոր ըսածները: Ա. յս դիտմամբ եա
յլ այսօր քեզի հետ ոչ Քաեռոփոնի վարքը գործ-
քերը և գրքերը կ'ուզեմ քննել, և ոչ այն Բիւ-
րոեն նահանջը չափել ծայրէ ծայր, այլ միայն
մեր աշխարհէն անցնելուն դիպուածը և ճամբան:
Բայց որովհետև առանց երկու ծայրի՝ մէջ չըլլար,
հարկ կ'ըլլայ գոնէ համառօտիւ յիշել և երաց
պատճառը, սկիզբն և վերջն այլ:*

Բ

*Պատերազմն ի՛ր ընէ պժգալի՝ այլ սահելի է երբ
ընտանեկան կամ քաղաքական ըլլայ. այսպիսի էր
նախապատճառ մեր այս դիպուածին այլ. երկու
Պարսիկ արքայորդի Հղբարց մէջ ծագած հակա-
ռակութեամբ: Ցայտ է քեզի, որ արքայազն եղ-
բարց հակառակութիւնն այլ շատ հեղ ժառան-
գութեան իրաւանց կամ ինդրոց համար կ'ըլլայ:
Ա. րտաշէս Բ, պայազատ Պարսից Ա. քեմենեայց,
իբրև անդրանիկ որդի Դարեհի Նոթոսի՝ յաջոր-
դեց անոր յամի 404 նախ քան զԹռւսական փըրկ-
չին, իր հօր թագաւորութենէն առաջ ծնած ըլ-
լալով. իսկ անոր թագաւորութեան առեն ծնաւ
Կիւրոս Կրտէր ուրիշ դշխոյէ մը: Ցայտնի է կանանց
նախանձն այլ՝ ուր բազմակնութիւն կայ, և ջանքն՝
իրենց զաւակները վեր քշելու. մանաւանդ երբ
Պարիսատիսի պէս գոռոզ դշխոյէ մը ծիրանածին
ընծայուէր Կիւրոսի պէս կարիճ կոյսին մը, գրե-
թէ անտարակոյս էր ծագելն կռիւն: Սակայն
Ա. րտաշէս՝ Ո-ւղէղ էր և ի՛ անուանէր (Մնէմոն'ի Յու-
նաց), միանգամայն և նախատես և մեծոգի. ոչ
զեղբայրն ուզեց զրկել և ոչ ինք վինքը. այլ ի-
րեն իրեն Երեսփոխան զրաւ զանիկայ և վերատե-
սուչ ամենայն նախարարաց իր ինքնակալութեա-*

նը արևմտակողման, և աթոռն այլ դնել տուաւ
'ի Սարդիկէ մայրաքաղաք Լիւդիոյ, քիչ հեռու
և յարևելից Զմիւռնիոյ. այսպէս մինչև 'ի ծայր
արևմտից հեռացընելով զնա՝ ամսօրեայ ճամբա-
ներով իր արևելեան գահէն (իբրև 20 աստիճան
աշխարհագրական երկարութեան իրարմէ հե-
ռու):

Կիւրոս իր եռանդուն բնաւորութեամբն և
Յունաց մերձաւորութեամբ և ընտանութեամբ՝
անանկ լաւ կարգաւորեց իր իշխանութիւնն և
ազքունիքը, որ նոյն իսկ Յունաց նախանձելի և
պատուելի կ'ըլլար, եթէ չափազանցութեամբ և
կոլմնահրութեամբ չէ ատոնց պատմածն. բայց
իր ամեն ցուցած և յուսացուցած գործերը սև-
ցուց, փճացուց իր կենաց հետ՝ անանձ փառա-
սիրութիւնն, որով կ'ուզէր միահեծան ինքնակալ
ըլլալ, նաև զեղբայրը զրկելով: Գաղտուկ պատ-
րաստութիւն տեսաւ, զօրք ժողվեց ցամաքի և
ծովու. օգնութիւն ուզեց 'ի Յունաց այլ, որոց
վրայ մեծ համարմունք և վստահութիւն ունէր:
Յոյնք, և մանաւանդ Սպարտացիք՝ իրեն երախ-
տապարտ էին, իրենց անկէ առած օգնութեանն
համար. և ատանց տնտրնալու խաբեցին անոր
Կէարքսես լակեդեմոնացին, պզտիկ բայց ընտիր
գնդով մը. որուն հետ միացան ուրիշ Յունաց
մանր սէրուներէն այլ շատ զօրք՝ իւրաքան-
չիւր զօրավարօք, բոլորն իրենց 16000 հոգի: Ընդ-
հանուր զօրապետին եղաւ նոյն Սպարտացին.
իսկ առանձին ազգայ մէջ՝ Բէռվատացւոց զօրավարն
էր Պրոքսեն Թեբացին, որուն մեծերիմ բարեկամն
էր մեր ատենկեցի իմաստասէր մեծն՝ Քսենո-
փոն, որ այս առեն 50 կամ 55 տեսյ մ'էր: Ար-
դէն երիտասարդութեան առեն պատերազմի մէջ
մտած եւլած, հիմայ հասակին և ուսմանց ազդե-
ցութեամբ՝ աւելի խաղաղութիւն և մեղը սիրէր

քան կռիւ և արիւն. անոր համար՝ ոչ իբրև մար-
սիկ և նիզակակից, այլ իբրև սրտակից ընկերա-
ցաւ Պրոքսենի. միանգամայն և իբրև բանասէր՝
նոր երկիր, նոր ազգ և դէպք տեսնելու քննելու.
մանաւանդ որ՝ ի սկզբան ոչ լինքն և ոչ այլ զօրա-
վարք գիտէին ուր և ինչ քանի համար երթալին.
վասն զի Կիւրոս խաբելով կ'ըսէր, թէ իրմէ ապըս-
տամբած Ասորւոց դէմ կ'երթայ: Ասանկով ժող-
վեց զամենքն ի Տարսոն մայրաքաղաք Կիւլիկիոյ,
ի սկիզբն յունիսի (401 տարւոյն), մտաւ յԱսո-
րիս, տարաւ բանակը մինչև յԵփրատ, անցուց
անդին (ի սկիզբն օգոստոսի), և պաշարաբեր նա-
ւերը յետ դարձուց: Ապա քիչ քիչ իր մեծերէն
սկսաւ՝ ինչուան վարիններուն իմացուց միտքը.
զոր ոմանք յօժարութեամբ ոմանք դժարութիւ
յանձն առին, յուսալով իր խոստմանց և բաղդին
այլ:

Ուշանալ չէր ըլլար. սակայն Միջագետաց չէն
և անչէն ընդարձակութիւնը կտրելու համար այլ
մինչ ի սահման Բաբելոնի՝ ամիս մը պէտք եղաւ:
Անկն միջոցին Արտաշէս այլ իմանալով եղածը՝
պատրաստեցաւ արևելեան զօրօք մեծ բազմու-
թեամբ՝ եղբօրը դէմ ելնելու: Սա աւելի շուտով
հասաւ Եփրատայ և Տիգրիսի ամենէն երարուս
մօտ եղած տեղերը, որ հին Բաբելոնի մօտերն է.
և հոն Կունաքսա անուանեալ աւանի մը մօտ, որոյ
դիրքն շատ յայտնի չէ, (յետին տեղագիրներուն)
եղաւ հին պատմութեան մէջ անուանի և բաղդա-
սահման պատերազմաց մէկն, որ մեր այս երեկո-
յեան զրոյցներէն դուրս կու մնայ: Այլ այսչափ
ըսելի է, որ երկու կողմէն այլ կրքով և կարըճու-
թեամբ կռուեցան. իրաւունքն յաղթող եղաւ.
Կիւրոս ոչ միայն անձամբ հասարակ զինուորի
պէս կու կռուէր, այլ և եղբօրը հետ զարնուե-
ցաւ ու վիրաւորուց գնա. բայց մեռնողն ինքն է-

ղաւ, ըստ ոմանց 'ի նոյն ինքն յԱրտաշէսէ զարնուածն: Կէնացն հետ վերջացաւ պատերազմին, և ցրուեցաւ արևմտեան բանակն:

Գ

*Կիւրոսի ասիական գունդերն նուաճուեցան օրինաւոր իշխանուԹեան. իսկ Ցոյնք՝ որոցմէ քիչ մարդ ինկեր էր պատերազմին մէջ, անկէ շատ աւելի գժար փորձանքի բռնուեցան: Արտաշէս իրենց պատգամ խաւրեց որ զէնքերնին Թողուն, ու իրմէ ուրիշ փոխարէն առնլով ազատ ինան կամ երԹան. Ցոյնք պատասխանեցին, Թէ քանի որ զէնք ունինք՝ անոնք մեզի բանի կու գան, առանց զէնքի մենք այլ կրնանք բանի չգալ. էնպէս ուզեր մեր ատոյգ օգուտը՝ Արտաշէսի անատոյգ վարձուց հետ փոխել. և Թէ կ'ուզէ Արտաշէս փորձել զէնքերնուս արուեստը՝ պատրաստ ենք: Հարկ եղաւ որ առանց կռուի զինքնին Թագաւորին՝ Թողլու զանոնք երԹալ իրենց երկիրը, միայն Թէ անցած տեղերնուն վրնաս չընեն: — Այս այլէսէր անվայել Արտաշէսի ուշեղուԹեանը. բայց գժբաղդաբար շատ հեղ շատ ուշիմ Թագաւորք և անԹափ իշխանական գլուխք՝ ուշաԹափ կ'ըլլան իրենց պաշտօնէից անարժան ԹէլադրուԹեամբք. այսպէս այլ եղաւ Արտաշէսի: Հաւանեցաւ իր ախրելի Տիտափեռն մեծ նախարարին խրատուն, դաւելու զՑոյնս. զոր և գործով կատարեց անխիղճ խրատուն, հրաւիրելով զգլխաւոր զօրապետս Ցունաց իրեն վրանը, իբրև 'ի խորհրդակցուԹիւն և դաշնակցուԹիւն. և զամենքն այլ (տասնումեկ հոգի) սպաննել տուաւ, Կլէարքոսէն սկսեալ մինչև 'ի Պրոքսեն բարեկամն Քսենոփոնի: Երկրորդական զօրավարքն գոյժը լսելով փախուցան հեռանալու. և իրենց առաջ-

նորզ ընտրեցին Քլերհատի Սպարտացին. իսկ վերջապահ բանակին՝ զմերս Քաեռնոփոն, որ հայրենակցաց սիրոմբն և մուերմին մահուան ցաւովն դերդուած՝ յանձն առաւ այս ծանր և վտանգաւոր պաշտօնը, և մեծ հնարագիտութեամբ և քաջասրտութեամբ կատարելով յաջողութեամբ այլ ապահեց, և Թողուց յետոյց զարմանալի պատերազմական արուեստի օրինակ մը, որ կրնայ նախօրինակ ըսուիլ յաղթուած բանակի մը ետ քաշուելուն, որուվ այս դարուս սկիզբն այլ այնքան անուանի եղաւ Մօրոյ զօրավարն Փռանկաց, մեծին Նաբոլէոնի հետ բաղդատուածն:

Նորընտիր զօրավարքն խորհուրդ ըրին բոլոր գլխաւորներով՝ ինչ ձամբով յետ դառնալնուն վրայ. որովհետև երկու մեծ և դիւրին ճամբայ կար, որով արդէն եկած այլ էին. բայց թէ՛ անշէն կողմեր ունէր այն ճամբան՝ (ուր գժայր էր պաշար գտնելն) և թէ Պարսից արքունի գունդերէն բռնուած պիտի ըլլար. ինչպէս որ արդէն այլ Տիսափեռնէս մեծ գնդով մը, և Միհրդատ անուամբ զօրապետ մ'այլ 5000 ընտիր զօրօք եւոնուն ընկած կու հալածէին: Նոր, անփորձ և դժուարին ճամբայ մը հարկ սեպեցին բանալ Յոյնք, բայց իրենց նպատակին հասցընելու աւելի յարմար. և այս էր Տիգրիսի եզերքներէն մինչև՛ի Ձորոխի եզերքը, կամ Կորդուաց լեռներէն մինչև՛ի Խաղտիս՝ ձեղքել մեր Հայաստան աշխարհին լեռնակոհակ բարձրաւանդակը, յարևելեան հարաւոյ յարևմուտս հիւսիսոյ, ձեան և սառամանեաց եղանակի ատեն, և ելնել Տրապիզոնի և ուրիշ յունական գաղթականաց կողմերը:

Ահա յանդուգն և բռնադատեալ խորհրդով՝ չտապեցին Յոյնք Բաբելոնի և Ասորեստանի կողմերն դէպ՛ի Միջագետաց վերնակողմը. Տիգրիս գետոյն եզերքը բռնելով անցան անոր օժանդակ-

10477396

նեըը (կապրոս և Մեծ Ջաւ գետ՝ որ Հայոց Ալբակ գաւառին լեռներէն կ'իջնէ), և երկու մեծ ծամեծ քաղաքներն՝ Լաըիսա և Մէոփիլա. զոր հնագէտք Ճանչնան՝ Ռէսէն [1] Ս. Գրոց և Նիմրոտ հիմակուան, մեկայլն Նինուէ կամ Մոսուլ, որ և հին աւեն այս անունը կրեր, Մուծղ կամ Մօսլ կոչմամբ: Ասոնցմէ վեր Զախոէի և Գզերայի (Ձեզերէ-իան-Էօմեր) գաւառները մտան, ուր այն աւերներ և քիչ մ'աւալ Հայոց և Ասորեաստանեայց միչտահմանք սեպուէին. և հիմայ հոս հանեընուն, մինչ Տիտափեան եաւնէն կու հալածէր՝ գիմացնէն կամ քովերնէն երեցաւ արեւելեան Հայաստանի կուսակալ ըսուած Ոլոնդ մը, որ ըստ մեզ Հրանդ կամ Եըուանդ պիտի ըլլայ, թէ ոչ Արտոտ [2], որ ըստ կարգի Հայկազանց Խորենացւոյն՝ այն ժամանակուան Հայ Թագաւորն կու հանդիպի: Յոյնք երբեմն զարնուելով երբեմն փախչելով միշտ գետն 'ի վեր եկնելով հասան Ձէզիրէի այն կուլմերը, ուր գրեթէ գետն խորունկ դարափներով կու մօտենար լերանց և Ճամբան կտրէր. հարկ էր կամ գետը անցնիլ և Միջագետաց դաշտերը մտնել, կամ լեռն 'ի վեր դիմել. և ահա այս և հոս էր Յունաց ըրած ընտրութիւնը, որոց հրաւէր կամ հրապոյր մ'այլ էին բարեբեր Հայաստանի համբաւքն. ինչպէս ինքն Քսենոփոն այլ վկայէ:

Նոյեմբեր ամսոյն կէսն էր երբ սկսան Յոյնք ելնել Կորդուաց լեռները, որ հոն 'ի սկզբան՝ գետոյն երեսէն հազիւ իբրև 1500 ոտք բարձր են, այլ երթալով կու բարձրանան՝ ինչուան 10000 և աւելի այլ: Ոչ անմիջապէս ելած տեղերնին յայտնի է, ոչ ձիւղ բռնած Ճամբու գծերնին, և

1 Դասան, ըստ այլ թարգմանութեան:
2 Եթէ արդարև Արմոդ է անունն և ոչ Արմոգ:

ոչ ինչյան կոլմերնին, և ոչ այլ ուրիշ քալած և իջեվանած տեղիքն. այլ շատ կամ քիչ հաւանու-թեամբ, ըստ քննութեան գիտնոց՝ որք աշխատեր են այս Ճամբորդութիւնը հետաքննելու, և դեռ իբր անտարակոյս ցուցած չեն, որովհետև հին և նոր անուններըը միաբանել շատ դժար է. դար-ձեալ բաւական անուն նշանակած չեն հին ու-ղևորքն, և ոչ այլ ամեն անգամ՝ գացած կամ դարձած օրերնուն թիւը. թող ուրիշ պատճառ-նեըն այլ, զոր աւելորդ սեպեմ հոս մէջ բերել, կամ մանր հետաքննել. առ այժմ հաւանագոյնը յիշելով թողում՝ անոնց՝ որ մանաւոր փոյթ մ՝ու-նենան այս նիւթոյս:— Իսկ այս առջի լեռնակատար եօթնօրեայ Ճամբանին՝ հաւանօրէն Ձէզլիրէի և Սլերտայ (կամ Սիէրտայ) միջոց Ֆընըզ և Ֆըն-տըզ ըսուած բերդաւանաց կողմերէն սկսելով՝ դէպ 'ի Մոկաց երկիրը ձգուած է, յետոյ անկէց այլ դէպ 'ի Բաղէշու Ճամբան. և բոլոր երկամ-սեայ Հայաստանի մէջ ըրած Ճամբանեըննուն դը-ժուարագոյն մասերէն մէկն է. թէ լեռնոտ երկ-րին քննութեան պատճառաւ, թէ լեռնաբնակաց բարուցը:

Դ

Ի սկզբանէ կամ հազարամեայ դարերէ վեր՝ քիչ փոփոխութիւն ունեցող ազգերէն մէկն այլ Քուրդն է. որոյ և անունն գրեթէ անփոփոխ ասկէ 2300 տարի առաջ այլ յիշուի 'ի Յունաց՝ Քարդուք կամ Կուրդուեանք, ինչպէս մեր նախնիք այլ անուանեն Կուրդուք կամ Կուրդուաստիք, ևս և Կուրճայք. որք և ինչուան հիմայ բանասիրաց մեծ քննութիւն նիւթ են, մանաւանդ այս եօթն տարիներս. այսինքն թէ երենց և թէ լեզուներնուն ինչ ազգէ ծագած կամ որու նման ըլլալն: Հիմակուան լեզուներ-

նուն նայելով աւելի՝ Պարսից մօտ են. քնակած աւելորնուն նայելով՝ հին Քալդէացւոց և Մարաց սեփական են: Իսկ այս Յունաց և Հայոց և ուրիշ հինեերու յիշած Կորդուէքն՝ Հայոց և Քալդէացւոց կամ Ասորեստանեայց միչտ հսման ազգ և ժողովուրդ մ'են, երբեմն մեկուն երբեմն մեկայլին նուաճուած, շատ հեղ այլ ինքնագլուխ և ազատ կու մերձաւորաց: Այսպէս էին նաև Քսենոփոնի ատեն. որ և յիշէ, Թէ քիչ առաջ Պարսից Թագաւորն ուզելով նուաճել զանոնք՝ 120000 զօրաց քանակ մը խաւերեց, որք գրեթէ բոլոր ջարդուեցան, ևէս մը 'ի լերանց ևէս մ'այլ 'ի քնակըչացն Կորդուաց. մինչև ասխատուեցան Պարսք դաշնադրութեամբ վնչանիլ:

Այսպիսեաց միչտ ձամբայ ընելու համար՝ կրնաս երևակայել Թէ ինչ զգուշութիւն և քաջասրտութիւն պէտք էր Յունաց. որք գիշերանց մօտեցան լերանց, և առտուն կանուխ կամաց և լուիկ սկսան ելնել, որ չիմանան լեռնցիք. և այնպէս այլ եղաւ: Վասն զի արդէն ձմեռն կու ասէր լերանց. արածականք 'ի գոմ փակուած էին, դուրսը Թափառուղ չկար. ամենքն քաշուած էին իրենց գեղերը, որ շինուած են լերանց գոգոց ու խառնչից մէջ, և ևէս մը ծածկուած քարերու մէջ և գետնի տակ. բնականապէս այլ իրարմէ հեռու և ոչ բազմաչէն: Ի՛նչ զարմանք ընկաւ սեղացւոց վրայ՝ երբ յանկարծ լրիկուան դէմ՝ աներնուն գլուխը սեան հազարաւոր զինեալ երիտասարդներ, որ ոչ Պարսից նմանէին և ոչ Հայոց: Սասլին գրգռուին՝ մեկէն սեղերնին Թողուլ և փախչիլ տուաւ. Յունաց ուզածն այլ այս էր. անհաշտ ներս մտան, ինչ ուտելիք որ գտան առին. բայց ուրիշ բանի չդպան՝ որ չգրգռուին բարբարոսքն. մանաւանդ Թէ ընտանութեամբ այլ կու կանչէին զանոնք, և կ'իմացընէին որ միայն կերակուր և ձամբայ կ'ուզեն:

Կորդուացիք ոչ եկան և ոչ դէմ կեցան. ինչ-
ւան որ Յունաց բանակն սկսաւ լեռներէն վար
դէպ 'ի ուրիշ գեղեր իջնել. գիշերն այլ վրայ կու
հասնէր. այն ատեն փախստեայքն դարձան և
սկսան Յունաց վերջապահից վրայ կարկըտալ
քար ու վիքին. և ոչ քիչ հոգի սպանեցին ու
վիրաւորեցին: Ահա երկուքն էին իրենց գլխա-
ւոր և ահաւոր զէնքերն.— քար ու նետ.— առա-
ջինը ոչ այնչափ հեռուէն պարսատիկով կու նե-
տէին, որքան 'ի մօտանց մեծամեծ կտորներ և
ժայռեր լերանց վրայէն գլորակելով կու ջախջա-
խէին հանդիպածը. երկրորդը՝ կու ձգէին երեք-
կանդնեան մեծամեծ աղեղներով, որոց լարը քա-
նած առեններին ձախ ոտուընին առաջ կ'երկընցը-
նէին, և երկու կանգուն երկայնութեամբը կու թըռ-
ցընէին անանկ ուժով որ գրեթէ միշտ վահանն
այլ զրահներն այլ կ'անցնէր, և գոնէ առանց վէր-
քի չէր թողուր դպածը: Յունաց համար այնչափ
մեծ կու գար այս նետը՝ որ նիզակի տեղ 'ի գործ
կ'ածէին. խակ Կորդուաց նիզակներն ինչուան 15
կանգուն (յունական) երկայն էին: Կրնաս չափել
զանոնք հիմակու Ֆրդաց նիզակներով, թէ որ ոչ
անոնք զքեզ չափեն: Յոյնք առաջին անգամ ատոնց
փորձն առած, ու նորէն գեղերու մէջ ապաստա-
նած՝ շատ վախով և զգուշութեամբ անցուցին
այն գիշերը. վասն զի Կորդուացիք լերանց ջորա
կողմը կրակ վառած կու հսկէին, ահաւոր գե-
ղեցկութիւն մը տալով արդէն բնութեամբ խո-
ժոռապեղ տեղեացն: Նոյն զգուշութեամբ և կաս-
կածով եղան և ճամբանին շարունակեցին Յոյնք
երկրորդ օրը, բռնած գերինին և անասուննին ալ
ապատ թողլով՝ որ իրենց արգելք չըլլան և պաշար-
նին այլ շուտով չապառնեն. և այնպէս երթեմն կը-
առնելով երթեմն անխռով անցուցին այն օրը:
Երրորդ օրն բնութիւն և բնակկնչք միաբան հա-

10477396

կատակեցան Յունաց. եքսախատն փոթորիկ մը
փրթաւ վերէն, զոր աւելի դժնդակ ըրին կոր-
դուաց պարսերն ու նետերն. Յոյնք կ՚ուզէին առ-
մը քաշուիլ պատսպարիլ. բայց եթէ գոնէին այլ
պաշարնին հատած պիտի կորսուէին. հարկ էր որ
ելքց և փքնաց մէջ յառաջեն անծանօթ ճամբուն.
որուն երկու կողմերն այլ բռնեցին տեղացիք երբ
նեղ կրձերու հասան, և անհնարին տագնապ հա-
ուեցին Յունաց: Հոս Քսենոփոն իր ամեն հնարքն
և համբերութիւնը հատուց, քաջալերելով և յոր-
դորելով իրեններըզ՝ որ անխռով և յուշիկ առաջ
երթան, և շատ անգամ կանգ առնեն կամ ետ քա-
շուին թշնամիները ցրուելու, և չարտորան այն
անատոյգ և վտանգաւոր տեղուանքը: Այս պի-
տանի իրատը անանկ տագնապի առեն դժար էր
ամենուն հասկըցընել. և նոյն ինքն առաջնորդն
Քիրիսոփ՝ ձանձրանալով ատանկ կամկար շարժե-
լէն՝ երազեց ընթացքը իրեն յառաջագնաց գնդա-
պետ. անանկ որ վերջապահ գունդն ստիպուեցաւ
գրեթէ փախչելու կերպով փութալու անոր ե-
տևէն: Այս խուճապման առեն քաջ սպարտացին
Կլէոնիմ՝ նետահարեալ՝ ի կոն, վահանն այլ
կաշիէ զրահներն այլ ծակուելով ընկաւ անկանգ-
նելի: Անկէց ոչ հեռու՝ չոր ժայռերու վրայ փը-
ռուեցաւ Բասիաս Արկադացին, փոխանակ իրեն
դրախտանման Տեմպեան հովիտներուն. Թերևս
զանոնք և իր ցանկալի ջերմիկ տնակը և ընտանիքը
կ՚երազէր՝ երբ սուր փքին մը գլխին մէկ կողմէն
մեկայլն անցնելով և ելնելով միտք ու շունչն այլ
մեկէն Թռուց... հասո՞ց այլ հայրենի հոգւոց: —
Աւազէլի սուուգութիւնն այս է՝ որ երկու երիտա-
սարդաց մարմինքն այլ հայրենեաց հողէն հեռու՝
ծնացին ուր որ ընկան. և երկուքին հաւատար ե-
ղաւ օտար և խորտ գետինն, Թէ իտուավոր ասպա-
տացւոյն և Թէ փոխիակավոր Արկադացւոյն: —

10477396

Բայց Քաենոփան շատ մեղադրեց Քիրխոփայ ատրատրալը. իսկ նա պատճառ բերաւ ձամբուն նեղ ղուածքը, ուր պէտք էր շատով հանդիլ՝ քանի որ Թշնամիք բռնած էին կիրճերը:

Ան օրը Քաենոփան քանի մը հոգի բռներ էր լեռնաբնակներէն և երկուքը պահեր էր. մէկուն հարցուցին թէ յարմար ձամբայ մը գիտէ անցնելու. պատասխան չտուաւ, որչափ այլ չարչարեցին, մինչև սպանեցին միւսոյն դիմաց. նա այլ զարհուրած՝ խմացուց որ խեղճ ընկերն այն կոլմերը կարգած ալչիկ մ'ուներ, անոր համար էր ուզեր զլուսել ձամբան. իսկ ինքն ապահովցուց որ կայ լերանց մէջ ալէկ ձամբայ մը, բայց հոն հանելու համար՝ հարկ է մօտիկ լերան մը գլուխ ելնել շատով՝ քանի որ Թշնամիներն չէին հասած, ապա թէ ոչ անկարելի կ'ըլլար անցքն:

Երկու հազար կարիճք՝ Արիսաէոս Քիոսացւոյ առաջնորդութեամբ՝ յանձն առին նոյն իրիկուն ելնելու բռնելու լերան գլուխը, և փող զարնելով խմացընելու մեկալնց՝ որ երկրորդ օրը հոն գան: Քաենոփան այլ իր վերջապահ գնդովը ուրիշ ձամբայ մը բռնեց՝ որ Թշնամիները խաբէ և չտեսնեն առջիններըը: Երբ հասաւ ձորեզրը՝ որոյ դիմացէ կոլմն էր լեռնանցքն, Կորդուացիք սկսան վերէն մեծամեծ սայլի բեռան չափ քարեր գլորտըկել, որոնք կոտրտուելով ժայռից վրայ՝ էին Թողուր ցուռնց առաջ անցնիլ. պէտք եղաւ որ յետ քաշուին և գիշերը հոն անցընեն, մինչ Կորդուացիք մինչև առաւօտ այլ անդադար քարերը գլորելու հետ էին: Ան միջոցին յառաջադէմ գունդն անկասկած հասաւ Թշնամեաց պահնակներուն վրայ, զոմանս սպանեց, զոմանս փախուց, և բռնեց առնց տեղը, ուր գիշերը հոն կեցաւ, կարծելով Թէ լերան գլուխը հասեր է. բայց դեռ բարձրագոյն բլուր մ'այլ կայր ելնելու: Առաւօտուն՝

մէգն օգնական առնելով Յոյնք յառաջ խաղացին Թշնամեաց կողմը, և միգին փարատած առեն՝ վրանին հասնելով, փողելով կանչելով ու զէնքերով հալածեցին: Փողոց հնչումը լսելով Քիրիսոփ յառաջապահ գնդումն եւս երթալու նոյն Ճամբէն. իսկ Քսենոփոն վերջապահ գունդն երկու բաժնեց, մէկուն յանձնելով պաշարները և կապրանքը՝ քովընտի Ճամբէ մը գալու: Առնք հասան ընդի մը, ուսկից հալածեցին Թշնամիները. և տեսան ուրիշ բարձրագոյն ընդ մ՚այլ զոր Թշնամիք բռնել էին. Քսենոփոն առջինին վրայ պահապաններ Թողուց երկու սպայից Ձեռաց տակ, որ պաշարաբեր գունդը պաշտպանեն, և ինքն կէս գնդովն յարձակեցաւ երկրորդ ընդն այլ ընդնեց. բայց անոր վերև ուրիշ և աւելի դժուարակոխ մ՚այլ բարձրացած էր, և էր այն ընդն՝ ուր որ գիշերապնաց Յոյնք Կորդուաց պահնականները սպաներ և վռնտեր էին: Քսենոփոն երագոան կտրիճներով այս երրորդ ընդին այլ տիրեց. վասն զի բարբարոսք առանց իսկ նեռելու և պարսելու՝ յետ քաշուեցան: Այս յաջողութիւնս ձախողութեան մը նշան էր. և յիրաւի հազիւ երրորդ ընդին վրայէն Քսենոփոն իրեններուն պատուէր կուտար կամաց շարժելու, Արգիացի մը շնչակտուր վազելով հասաւ և գուժեց, որ առջի ընդին վրայ Թոլած երկու սպայքն (Կեփիսոդոր և Սմիկրաս)՝ մասամբ պահապան գնդին պաշարուած սպանուեցան 'ի Թշնամեաց. որք և փութալով հասան Քսենոփոնի կեցած տեղւոյն դիմաց ուրիշ ընդոյ մը վրայ դիզուեցան:

Հոս Սաոխկեցի մեկնեն իմացաւ որ խայթոցի տեղ մեղրը բանեցընելու է. մարդ ղրկեց հաշտութեամբ խօսելու անոնց հետ, և զինադուլընելու. և խնդրեց որ մեռածներն այլ Թողուն վերցընելու: Կորդուացիք այլ պահանջեցին որ Յոյնք ի-

բենց գեղերը չայրեն: Ան միջոցին մեկայլ գունդն այլ եկաւ հոն ժողովեցաւ, և միաբան սկսան չարժիլ. Թշնամիք անխտիր Թողուցին զանոնք. բայց երբ սեսան որ բլուրներէն վար կ'իջնեն, նոր-ըէն քարերու ձեռք զարկին և Յունաց եասէն հասուցին: Ան տագնապին սեն Քսենոփոն վահանակիրն փախաւ քովէն, և մեր մեղուն չախ-չախելու վրայ էր՝ երբ Եւրիլոք Լուսիացին հա-սաւ, վահանաւը պաշտպանեց ապրեցուց. ինչ-պէս երբեմն իր մեծ մարտակից Սոկրատէս՝ ի Դելիոնի պատերազմին ազատեր էր զնա: Վերչա-պէս հասան բլրոց ստորոտը, ուր միացան ամեն գնդերն այլ. և ըստ իրենց խոստման արձրկեցին կապած առաջնորդնին, անոր տեղ իրենց մեռե-լոց մարմինները առնելով, և իրենց ստվորութեամբ Թաղեցին: Ան գիշեր կեցան գեղերու մէջ, ուր առատ համբար և կերակուր այլ վայլեցին. մա-նաւանդ պատուական գինի, որ մեծամեծ գեսան-Թաղ բուած կարասներու մէջ լցուած էր:

Երկրորդ օրը նորէն իրենց կարգը առնելով, Քիրիսոփ առաջապահ, Քսենոփոն վերջապահ, չատ հեղ Կորդուաց հետ զարնուելով, լեռներէն ելնելով իջնելով, վերջապէս հասան անոնց ստորո-տը, վերջին գեղերուն. որոնցմէ վար դիմացնին քիչ հեռու երկայն արծաթ գօտւոյ պէս տարած-ծուած տեսնուեցաւ Տիգրիսի օժանդակ գետ մը, զոր կընդրնիք կոչէ հեղինակն, և որոյ միւս կողմը կ'երևէին սահմանք և լեռնապաշտակք Հայաստա-նի, որք և այն ժամուն՝ Թերևս քան մեզի՝ աւելի ցանկալի էին Յունաց:

10477396

Ե

Ա յս աշխարհագրաժին գետս զոր գրեմք առնայն հետազնողք կու ձանչնան հիմիու Պօհպանը, է արևելեան առաջք մը Տիգրիս գետոյ, զոր և Շոպախ կոչեն Հայք՝ ի կողմանս Մոկաց, և նոյն երևի զոր Խորենացին յիշէ՝ ի պատմութեան ատենս Տիւտամօրն, գոնէ նոյն Անձևացեաց հարաւակողման քարաձերանց բղխած ալբիւրներէն գետացեալ. իսկ անուն՝ եթէ հայկական է՝ կըրնայ կարծուիլ Կոդէի կամ Կոդէնոյ գետ, զի այսպէս կոչուէր Կորճայից մեկ գաւառն. եթէ պարսկական է նըւր կնդ-րուպ՝ նշանակէ ժանդ-ջուր կամ գետ. և դարձեալ յիշել սոյ Խորենացւոյն բանն, թէ «Զոր ջուրքն հոսեալ՝ ի լերանց Կանգաւոյ, որ է Ագռաւաքար», երթան՝ ի Տիգրիս: Արդ այս գետոյն գլխոյ գիշեր մը դադրելով առաւօտուն մօտեցան Յոյնք՝ անցքը փորձելու և շատ դժար գտան. վասն զի առաւիկ արընթացք և մեծ կարկաչանօք թափելով կ'երթար գետն խառնուելու ընդ (արևմտեանն) Տիգրիս, անկէ քանի մը մղոն հեռու: Ջրէն և խոլէն աւելի այլ վախնալու երևցան Յունաց՝ կորդուացիք, որ լեռներէն իջնալով կու գային եռանուն վերջի նետերնին և պարսերնին այլ պարպելու. իսկ դիմացնէն՝ գետոյն այն կողմը բռնած էին նախայրեալ Հրանտայ կամ Ոլոնդի, և մեկ Արդոկ անուն իշխանի մ'այլ (հաւանօրէն Արծուկ Մոկաց նախապարի) հեծեալքն. և անոնց եռևէն այլ բարձրադանդակաց վրայ՝ հետևակ զօրք, ճամբուն նեղութենէն անցքը պահելով: Իրեք կողմանէ վտանգ կար, և գոնէ մեկէն կամ երկուքէն փախչելու ճար չկար:

Հոս Քսենոփոն իր հնարագիտութեամբն՝ զբաղմութեան մէջ մտաւ, սկսաւ յայլոց երթալով

պատմել. զոհերն այլևայլոյ եղան ի՛ըսէր. ոմանք այլ տուր լեռներն որ պետայն դիմացի կողմը ապրկոտնք և ծերեր լաթ կու դնէին քարածեռակերոտ մէջ. ըսել էր որ հոն գետն ծանծաղ և անցանելի էր: Դէպ յայն կողմը գիմեցին, իրարու սիրտ տալով հասան գետոյն եզերքը, նորէն զոհ մ՚ըրին ջրին վրայ, և յաջող գտան: Քերխտի սօթաճուեցաւ ցառքեց նեռս իր առաջնակարգ գնդովը. Քաենափոն այլ վերջապահովը, բայց քիչ մը ուրիշ գիրք բռնելով. նէր թէ ի՛ուզեն Թշնամիները մէջ փակել երկու գիտց. և ամենքն միաձայն սկըսան կանչել իրենց ազգային պէռռա ըսուած երգը, զոր մեծ վտանգաց կամ հանդիսից մէջ կ՚երգէին. որ և յիրաւի թէ զարմանք թէ շփոթութիւն ձգեց մեր կորձայից և Մոկաց. և նախ հեծեալքն ապատ հեռևակքն յետ քաշուեցան: Բայց լեռնցիք մեկայլ կողմէն մօտեցան Քաենոփոնի վերջապահաց, իրենք այլ իրենց կորդ լեզուովն երգելով. սակայն քանի մը հոգի միայն կրցան վիրաւորել, մինչ ձիաւեալքն անցան գետը, և սկսան շուտ շուտ առաջ երթալ, մինչեան 15 մղոն տեղ, որ անմարդի էր, (պատճառաւ Կորդուացոց սոսկ այրչականաց) մինչեան որ հասան իշխանանիստ մեծ աւան մը, որոյ ամէց շատին վրայ աշտարակներ կային: Հընդամէնք կարծեն թէ այս տեղս հիմիու Սղերտ քաղաքաւանն ըլլայ. շատ հաւանական է գոնէ անոր մօտ ըլլալն. և Յունաց բռնած ճամբան կ՚երևի թէ անկէց ՚ի Բազէշ տանողն է, երկանց նեղուցներու մէջ, որ կէս ՚ի քնէ կէս արուեստով բացուած էն, մինչեան Ռահվայի քաջածանօթ հովիտը. որոյ ճամբան վրայ մինչեան հիմայ կատանք կ՚ապաւինին բարձրաթիւ ամրաշէն խաներու մէջ. թէ և ատոնց շէնքն շատ հին չերևան, սակայն ճամբան հին տեղէն բացուած և վարուն էր. և այս է մեր նախնեաց յիշած պահակն և

10477396

Դրան Աւորէսպանէսյց, որոյ պլուխն կամ մէջն՝ վա-
նայ ծովուն հարաւային արեւմտեան գին Պահակ
Հողյոյ կ'ըսուէր, Աղձնեաց և Տուրուբերան նա-
հանգաց ու Մոկաց միջոց. Յունաց քունած Ճամ-
բան այլ գայս կարծեմ:

Զ

Աւջն հանդիպած գեօղաքանէն 30 մղոն այլ
վեր եղնելով երկու օրուան Ճամբով Տիգրիս գե-
տոյն մէկ ալբերակին Տատան, որ ինծի կ'երևի
նոյն իսկ Բաղնիս գետն, և ասկէց բանեցին Մշոյ
Ճամբան Ռահվոյն ձորէն. և Տատան Տարօնոյ գե-
ղեցիկ և գիւղաշատ դաշտը, որոյ Մեղրագետն
կամ Մեղուայ գետն կարծուի Քաենոփոնին Տէլէ-
բոաս կոչածն: Անյա կողմն այն առեն Արճաթէոն
Հայոսպան կ'ըսուէր. և կողմնակալն էր Տիրիբազ,
Պարսից Թագաւորին շատ սիրելի, որ միայն Համ-
արձակութիւն ունէր անոր ձի հեծնելու առեն՝
ձեռքը բռնելու: Անկայ հեծելազօրք Յունաց
գիմաց ելաւ, բայց խաղաղութեան պայման գը-
րաւ որ առանց գեղերուն վնասելու՝ անցնին նրան
սահմաններէն, և ուզածնուն չափ պաշար առ-
նուն: Բայց ապահովութեան համար ինքն այլ հե-
ծելքն քիչ հեռուէն Յունաց եռանդն կ'երթար,
ինչուան որ անոնք ուրիշ գաւառ մը հասան (որ
Թուռի Հաշտեանք), ուր արքունի կամ իշխանա-
կան ապարանք և շատ գեղեր կային: Բնակչաց
բարեկամական կերպն, իրենց անօթութիւնն և
ձիհնախառն ցաւրան՝ համարձակեցուցին զՅոյնս
խումբ խումբ բաժնուելու գեղերուն մէջ, և ա-
ռատապէս վայելելու համել կերակուր, արմունկ,
չամիչ և հոտաւէտ գինի մը. կաւ մնար անոյշ քուն
մ'այլ քաշել, բայց իրենց պահնակներն զոյց բե-
րին՝ Թէ զօրաց շարժմունք և խարույկ (կրակ) կոտ

առանձն. Մեկէն զէնքերուին առին գուրս վազեցին և բանակեցան բաց օդոյ տակ, որ ձիւնով ու ցըրտով ծեծեց ծածկեց զանոնք. և Թերևս բոլոր սառէին այլ, եթէ Քաեռնոփոն օրինակ չտար փայտ ժողվելու կրակ վառելու. և եկով (Թէ տուաւի, Թէ ուեանի) և Հարպով օծուելու: Բարեբաղդաբար՝ Թշնամեաց վտանգն մերձաւոր ջըլլալով՝ նորէն քաշուեցան գետերը, գուրսը բանբեր և պիշերապահ Թողլով: Ասոնք Պարսիկ կամ Հայ աղեղնաւոր մը բռնեցին բերին զօրավարաց, և իմացան անկէ՝ որ Տիրիբազ երեկոյ անցնելու վերան Համբան բռներ է.—ինչ վտանգաւոր էր այս, յայտնի չէ. որովհետև ինչուան հիմայ այլ այս կողմերս ձանօթ չեն աշխարհագրաց և Համբոլդտայ. բայց կ'երևի Կինձ ըսուած վիճակին կողմերը: Յոյնք ամենէն ապահով փորձը սեպեցին շուտ և վտակ նոյն վերան վայ վազելը, յանկարծակի բերելով զՏիրիբազ, և յաջողեցան այլ. դիմացինին եղածը զարկին փախուցին, 30 ձի բռնեցին, Տիրիբազայ վրանն այլ ձեռնընին ընկաւ, անոր արծաթափիկ անկողնովը և կարասեօք:

Երկրորդ օրն այլ ձիւնի տակ քալելով և գարշելր եղնելով հասան այն բարձրաւանդակը՝ ուր Տիրիբազ բանակեր էր առջի օրը. անկէ այլ երեք օթևանի ըրին անշէն և ձիւնապատ վտակաց վայ, ինչուան որ հասան յԱրածանի գետ (յաղբևերեան Եփրատ), զոր և անցան ծանծաղ տեղէ մը, ուր ջուրն ինչուան գօտինին կու հասնէր: Չարմանք է որ սառած այլ չէր, վասն զի դեկտեմբեր բերի կէսն էր. ապա կ'երևի Թէ Արածանւոյ սառնամիկ և նեղուցէ վազած տեղերուն մօտ էր անցքերնին Ճապաղջոյ մօտերը, և ոչ շատ հեռու Պինկէօլ լեռներէն: Անկից այլ գարվեր սկսան եղնել Հայոց բարձրագոյն տափարակները, և երեք չորս օր շատ դժարութեամբ 30 մղոն չափ կրցան եր-

թալ ձեան և սառամանեաց մէջ։ Բայց վերջի օրն և գիշերը (որ կ'երևի թէ խնուսայ 5000 ոտք և աւելի բարձր լեռնագաշտին վրայ էին) շատ նեղեցան և վանգեցան. հին ձեան վրայ՝ սաստիկ ցուրտ հիւսիսային հովով սկսաւ առատ տեղալ նոր ձիւն, որ գրեթէ մարդաչափ բարձրացաւ պետնին երեսէն, ամեն ճամբու հետք ծածկեց ընկեց։ Խեղճ Հելլենացիք յուսահատեալ՝ ձիւնածեծ բքահեղձ կ'ըլլային, չկրնալով ոչ առաջ և ոչ ետև երթալ. ոմանք ոտքի վրայ, ոմանք 'ի գետին փռուած՝ բոլորովին ձերմակցեր, և սառելու փափաքնալու վանդի մէջ էին. փուճ տեղ զոհեր կ'ընէին հովմոց հիւսիսայոց, որ չհասկըցան Հելլենաց լացն ու լեզուն։ Մասնաւորապէս դարձող նահապետն Քսենոփոն բանակին սոսկալի և արտակարգ տեսարանքն՝ 2200 տարի առաջ հանդիսեցան և նկարեցան հոս Հարքայ բարձրաւանդակին վրայ, ուր որ նախահայրն մեր Հայկ իր սիրական տունը հաստատեր էր, և 'ի բեղայ կոչնախատուրը, թէ «Բնակեցար 'ի մէջ ցրտութեան սառամանեաց»։ Սակայն այն ցրտերուն վարժելով մեր Հայկն և իր նման Հայկազունքն՝ կրցան օտարաց դէմ կենալ և Բաբելոնի ու Նինուէի ջերաբնակ երկին աւելի տերունդ թողուլ մինչև 'ի մեզ։

Անվարժ ցոյնք մահուան և կենաց միջակուրին՝ ամեն կարելի հնարք ըրին, ոմանք շարժելով, ոմանք քիչ մը գուած փայտերնին վառելով, և ոմանք այլ բոլորովին անշարժ մնալով. զորս ոչ տաքցընել կրցաւ և ոչ վեր կանգնել առաւօտուն պայծառ բայց վատորժ արևն։ Գրասուց մեծ մասն տառեր Հաթերասևժայռերուն պէսպիսներէն Քիւնափոլին մէջ. կարիճ զինուորներէն 30 հոգի և հասարակ կամ ծառայական մարդկանցմէ աւելի տասնեք մեռեր տուեր էին. շատերն այլ կիսամեռ և կիսաշարժ՝ կու չանային պակաս կեանքերնին

10477396

քերնին վատաբանելու. ոմանց աչքն կուրցեր էր պատղ հովէն եղբէն և ձիւնէն, ոմանց ոտքերն ձաթեր ու ձերմկցած. բայց շատերն հազիւ քանի մը քայլափոխ ըրած՝ կ'երթային 'ի գետին, նոր հիւանդութեամբ մը բռնուած, զոր պուէնոս կոչէին, անօթութեան և ակարութեան հետևանք. որոյ դեղն էր կերակուր և ոտքնալ. բայց հազիւ թէ նոյն իրիկուանը կրցան գտնել այս դեղը, այն այլոչ ամենքն:

Քիրխաոփ յառաջադէմն իր գնդովն հասաւ գետ մը, որոյ պատկին քով աղբիւրէ մը ջուր կ'աւանութին աղկուն. զսանիք խաբելով ըսին որ Պարսից թագաւորին կողմէն կու գան առ նախարարն՝ և մուտն գետը հանդչելու: Իսկ մեր խղճալի Մեղուն՝ այն օրն այլ շատ չարչարուեցաւ իր վերջապնդովը, և շատերը թողուց ձեան վրայ, որ կամ ցրտէն և հիւանդութենէ մեռան, և կամ թշնամիներէ գերեցան, որք և խեղճերուն ալ մնացած գրասանեն այլ յափշտակէին. ինչուան որ տատապելքն հեռուէն տեսնելով սև գետին մը՝ ձիւնը հալած կարծեցին և հոն վազեցին. և գտան ջոգելից ջերմուկ մը, որ 'ի հարկէ քովի ձիւնը կը հալեցներ և հոտն յերևան կու հաներ: Հաւանօրէն այս ջերմուկս պիտի ըլլայ Բասենոյ գաշտին հարաւային կողմն լերանց վրայ, ուր իկան Յոյնք, (որպէս Թուխ Դեղթափ և Զէքմէ? լերանց միջոց լեռնանցքն) : Տաքը տեսնելուն պէս ցրտահար և անօթի գոնդն փութացաւ ջրին եզերքը. Քսենոփոն՝ որ լաւ գիտէր անոր վնասը՝ ամենայն հնարքով յորդորեց, վախցուց, սպառնացաւ, բայց ձկրցաւ հետացընել շատերը, որք՝ Սպանելու այլ ըլլան՝

ասկէ չէնք շարժիր, ըսին, նասան: Եւ ահա մեր նահնի հարց յարատձիկ լաձերն և Պարսիկք սկսան անոնց վրայ նետեր թափել փոխան ձեան: Ան առեն կարիձները յուսահատաբար եկան վազեցին ատոնց վրայ, իսկ ակաղքն միայն զէնքերնին վահաններուն զարնելով վախցնել կու ջանային: Ան փորձա Քաենոփոնի իրատաներէն ազդու եղաւ. սկսան շարժիլ ու առաջ երթալ. և քիչ մ'որ հեռացան՝ իրենցմէ առաջ հանող գնդի մը հանդիպեցան, որ հոն փռուռեր վերարկուներնուն տակ ծածկուռեր էին. զատնք այլ քաջալերելով և իսիատ ակաղներըը ուրիշներուն Թևով քշելով կամ կրելով՝ գէպ 'ի գեղերը ուղղեց. նոյն միջոցին Քիրիսոփէն այլ մարդ եկաւ, առաջնորդեց, և հասան մոտն իրենք այլ չէնքի տակ, այլ և այլ գեղերու մէջ:

Է

Քաենոփոնի վիճակուռած գեղին վրայ վազեցին Յունաց կարիձք՝ Պոլիկրատ Աթենացւոյ մ'առաջնորդութեամբ, և բռնեցին գեղին գլխաւորը (որ հիմայ մելիք կամ ուէս կ'ըսուի), և անոր նոր հարս ալջիկը, որուն փեսայն ուսկ գացեր էր. քանի մ'այլ ալէկ ձի բռնեցին, զոր Հայք հարկի տալու տեղ կու բռնծանէին: Քաենոփոն պեղատեսին սիրտ տալով վախը փարատեց. նա ալ պատուիրեց որ սիրով ընդունին այս անծանօթ հիւրերը. և ուէն օր բարեկենդան մը ընել տուին՝ հոլանծոցի և տաքուկ աներուն մէջ, ուր անասունք կենդանի վառուրան մ'էին Թոնիրներէն զատ: Հոն առատ և կերակ կերակ մսեղէն կերակրոյ հետ գտան ընդեղէններ այլ, և պատուական գարեջուր ու գինի՝ պետանաթալ կարասներու մէջ. ուր ուզուլը կ'երթար եղէգ մը կու խոթէր և ծռած վեր կու-

քաշէր խմէր: Ա յս Յունաց բարեկենդանին զուարճութեանն այլ էին մեր Հայ մանչերն. որոց նորաստեաղ հագուստն, ինքնակատակ ձևերն՝ նշանակի խօսելով, ծառայելու առեն հաստ ու բարակ շարժմունքն՝ շատ ծիծաղն պատճառ եղած Եւրիպիդեայ և Արիստոփանի Թատերաց առաջին ակատնատես եղող Հելլենաց:

Շաբաթ մը հանգչելէն ետև Քաեռոփոն շատ ընորհակալութեամբ՝ ծեր ձի մը ընծայ ըրաւ զինապետին՝ որ արեգական զոհէ.—զեռ արևապաշտ էր այն առենուան մեր պապն՝ Բասենցի կամ Թէքմանցի ուէան.—ուրիշ ընծաներ ալ առաւ. բայց ինքն այլ առաւ երկու լաւ մարուկ, իր ըսպային այլ մէկ մէկ հատ առաւ: Ասոնք այն առանի Հայկական ձիոց քուռակներն էին՝ որ Պարսից Թագաւորին ընծայ կ'երթային տարուէ տարի, իբրև 20000, կամ աւելի. ազգիկ քան զՊարսից ձիանն՝ այլ աշխոյժ և քաջուկ: Հայ զինապետն սակաւ ետքն Յունաց՝ որ ձիոց ոտքերուն տակ քանի մը կտոր ելու է՝ որ կարճնան ձեռն վրայ քալել. եթէ այս բանս մեր նրբամիտ Աթենացիք առաջուց գիտնային՝ Թերևս այնչափ կրուաս չէին ըներ լերանց վրայ: Փոխարէն այս բարի խրատուն՝ անգութ սպարապետն զօրավարն Քիւրիւսի՝ երեք օր ձամբայ ընելէն ետև յանիրաւի կասկածելով որ գինապետն (զոր իրենց առաջնորդ առեր էին) կամաւ անշէն տեղերէ կրնա տանի՝ յանդիմանեց ու ծեծել տուաւ. որոյ համար Քաեռոփոն գժտեցաւ Քիւրիւսի հետ. մանաւանդ որ գեղապետն այլ գիշերանց փախաւ տեղը դարձաւ. բայց իր մէկ որդին որ Յունաց քով էր՝ մընաց հոն, և վերջը յօժարութեամբ գնաց անոնց հետ՝ ի Յունաստան: (Ամփիպօլիս, իրեն տիրոջ Եպիթենեայ տուն, և միշտ հաւատարիմ մնաց. ի հարկէ ալէկ յուշարէն այլ տվնելով:)

10477396

Բաւեննոյ ընդարձակ դաշտերուն մէջ եօթին օր Թափառեցան Յոյնք, ինչուան որ հասան Երասխ գետը, զոր Քսենոփոն Փասիս կոչէ յանուն Բասենոյ. հոս այլ ջուրս օր դադրեցան գիւղօրէից մէջ. ապա ելան և անցնելով գետը՝ մտան Հաւնունեաց և Վանանդայ սահմանները, ընդ մէջ Տայոց և աբևմտեան Գուգարաց: Այս երկու նահանգաց առջինը Յոյնք սոյգ Տայք (Տաօք) կ'անուանեն. իսկ երկրորդին տեղ Խալիպ կամ Խալիպ կ'ըսեն. որով յայտնի կ'ըլլայ այն առեն Խալտեաց ազգին մեծութիւնը և ընդարձակ սահմանները. բայց մեր աշխարհագրութեան նայելով՝ աւտնց հոս ըսած Խալիւպքն՝ Արտահանի (Գուգարաց), Կողայ (Տայոց), որ հիմայ այլ կէօղէ կ'ըսուի, և Կարնոյ կողմերն իմանալու է: Այս կողմերս կարճ լեռնաբնակք կային, որ իրենց անցքերը բռնելով հանկառակեցան Յունաց. բայց անոնք վերջապէս գիշերանց զոհ ընելով առաուն իրեան լեռներէն (որ Թուրին Քիրէձլի կամ Գարկապազար ըսուածքն հիմայ), մտան Տայոց մացառոտ և ժայռոտ երկիրը. ուր շատ դժարաւ կրնային առաջ երթալ. մանաւանդ որ Թշնամիք այլ անդադար լեռներէն քար ու նետ կու Թափէին վրանին, որոնց հետ անօթութիւնն այլ կու տանջէր զՅոյնս. մինչև որ հասան գետերու և կրցան պաշար Ճարել: Անկից դէպ յարևմուտք երթալով (հաւանօրէն մեր Տայոց աշխարհին Պարտիզագփոր, Բերդացփոր և ուրիշ փոքրագաւոր և ձորագաւոր գաւառաց միջէն), չորս օրէն հասան ընդարձակ ամուր տեղը, որ բնակութեան շէնք չունէր, և կ'երևի թէ կամ Ռահվոյի կարաւանատանց պէս տեղ մ'էր, ուր կային բազմութիւն արանց և կանանց հանդերձ անասնօք, և կամ մեծ վաճառատեղի մը: Յոյնք յարձակեցան այս ամրափակ տեղուոյն վրայ, բայց վրանին անանկ քարէ կարկուտ մը իջաւ՝ է

10477396

պաշարեալ Հայոց, որ յետ քաշուելոյն. Քաւեն-
փան նորէն սկսա տուաւ քիչ մ'այլ գիմանալու
և շուտով գիմելու, վասն զի կարճանց ք'էր վը-
տանգաւոր տեղն, և անկէ անդին եղևնեաց ան-
տառ մը կար՝ որ քարերուն գէմ պիտի կենար.
քարերն այլ անհատնում էին: Ինչպէս այլ ե-
ղաւ, Յոյնք վերջին յարձակմունք մ'ըրին, 'ի հար-
կէ ոչ անվնաս, բայց հասան մտան ներս:

Հոս սարսափելի և քիչ հանդիպած տեսարան
մը բացուեցաւ երկու կողմին այլ. Տայք՝ անձրկած
և յուսահատած՝ բայց ջուզելով վտուելեամբ
օտարաց ձեռքն ընկնիլ՝ կրցողը փախուցին. անկար
կանայք կրցողներէն աւելի կրցան. կատղեաց
պէս այլակերպած, մազերնին ցրուըտած, աչուը-
նին խոտոռած, փոխանակ քարի՝ սկսան մանր զաւ-
կընին օդուն մէջ պարսելով քարաձոր վէրուս մէջ
նետել, անոնց ետևէն վերնք այլ գահավիժելով
անդարձ անդնդոց մէջ. բնական յանդգնութիւն ալը
այլ նոյնպէս ըրին. անանկ որ Յոյն մը՝ անոնց պըղ-
խատներէն մէկը բռնել ուզելով՝ անոր հետ մէկ-
տեղ վէրուն մէջ փրթաւ ջախջախուեցաւ: Հազիւ
քանի մը հոգի կրցան բռնել Յոյնք. բայց շատ ա-
նատուն գտան և առին, էշ, ոչխար և կով. որ ի-
րենց պիտանի եղան հետևեալ օրերուն, երբ Խա-
լիւբայ կամ Խալտեաց երկիրը մտան, որ Թուի
արևմտեան Տայք, կամ Թաւուսակեաղի (բուն
Տայոց) և Թորթոումայ կողմերը. գուցէ քիչ մ'այլ
աւելի դէպ հիւսիս մոլորեցան. վասն զի իբրև 50
փարսախ (150 մղոն) ճամբայ ըրած կ'ըսուին այն
երկիրը, որոյ բնակիչք քան զՀայս և զՏայս աւե-
լի յանդուգն և բուռն էին, ալէկ այլ սպառազի-
նուած. Սպարտացւոց նման այլ կարճ Թրեր
ունէին, որք քանի մը Յունաց գլուխներ իրենց
ափը ձգեցին. իսկ միասայր նիզակնին՝ կորդուաց
նման 15 կանգնեայ էին: Անվախ կու գային պա-

10477396

րեալով երգեալով Թշնամեաց դէմ գրգռեալս, կամ երբեմն ամուր գեղերուն մէջ պահռըատած՝ յանկարծ կ'ելնէին. իսկ եթէ հալածուէին՝ ի ցուենց՝ աւելի ամուր տեղուանք կ'երթային, ուր որ իրենց պաշարները այլ ապահովեր էին:

Յոյնք շատ զգուշութեամբ և ոչ անվտանգ առանց սահմաններէն խուսելով՝ հասան՝ ի գետ մը իբր 400 ոտք լայն զոր Քսենոփոն Ակբաուս, Դիոդոր՝ Ակբակ կոչէ. և որուն (առջևին) անուան նմանութենէն՝ չեն խղճեր քանի մը երեւելի աշխարհագիրք[1], հիմիու այլազգեաց Ակբա-ատայս գետը համարել, որ է մեր նախնեաց Ախուրեանն, և կ'անցնի՝ ի դաշտէն Շիրակայ՝ Անիի քովէն: (Ախալցխի զՅոյնս դէպ յարևելս խոտորեցնողք գուցէ կրնային ինչուան Սիւնեաց երկիրն այլասանել, որ բուն հայկական Ակբա գետ մը կայ՝ ի Վայոց-ձոր:) Ոմանք այլ Ասպատրոս գետը կարծեցին, բայց այն այլ Պոնտական լեռներէն անդին և ծովուն մօտ է. հաւանօրէն կամ Թորթոմայ գետն կամ նոյն իսկ անոր ջրերը ժողվող մեծ և ծանօթ Ճորոխ գետն էր Ակբաստան կամ Ակբասին այն, որոյ առագաստ վերջին Տայոց գաւառն՝ է Ակռեայ-էոր, հիմիու Կխախման և Խոտուջուր կոչվելը, թէ և Յունաց սեւաձին չափ լայն չեն այս գետերս:

Ը

Ակա գետս անցնելով՝ մուտն Յոյնք՝ ի դաշտս Սկիւլոյ կամ Սկիւլինէանց կամ Սկոպինայ. որն այլ ըլլայ անուանն՝ սեռն յայտնի չէ. այլ հասարակաց հաւանութիւն է թէ ըլլայ կարնոյ դաշտն, որ հին աւեն չի յիշուիր մեր պատմութեան մէջ,

[1] Ինչպէս Ժոպէր, Ինգլուբրահ (Ainsworth), և այլն:

10477396

և հաւանօրէն ուրիշ անուն մ'ունէր: Իրեք օր այս դաշտին մէջ քալելով հասան մեծ և բազմամարդ քաղաք մը՝ Գինհիաս կամ Գոհհաոհա ըստուած. զոր ամանք նոյն իսկ Էրզիուում քաղաքը կարծեն, այսինքն անոր տեղ եղած հին քաղաքը (որ ըստ մեզ չկայր այլ). ամանք այլ Կարնոյ հարաւային արևմտեան ծայրը եղած Ճինիս գիւղը. ամանք այլ այս անուան մերձաւորութենէն կախարդուած՝ կարծեն զԿինդ-ղխանէ, և պատճառ՝ անոր արծաթահանքով ծանօթ ըլլալը կու գնեն: Ահա գլխաւոր տեղն այլ դեռ վէճի տակ է. բայց Կարնոյ, Սպերոյ և Բաբերդու միջոց ըլլալն շատ հաւանական է:

Գումնիսասայ (Թեւևս Գոմուց) իշխանն՝ Յուսնաց մարդ խաբեց և խոստացաւ զնորեն անվնաս հաստընելու իր Թշնամեաց երկիրը, խնդրելով որ անոնք այլ այն Թշնամի երկիրը այրեն ու աւերեն. առաջնորդ մ'այլ տուաւ, որ խոստացաւ հինգ օրէն ցուցընել Յուսնաց իրենց ցանկալի ծովը: Երկու կողմն այլ խոստմունքնին կատարեցին. Յոյնք անցած տեղերնին այրելով աւերելով, որոց համար իրենց եառէն ընկած բնակիչներն այլ կու հալածէին, և անոնց ուռենիէ հիւսած վահանները՝ եբրև յաղթանակ առին, զոր և իրենց առաջնորդին ոտքն ուրախութեամբ կու կոտրտէր. վերջապէս Տասուց զանունք մէկ արբոպան լեռ մը, ինչպէս կ'ըսեն Յոյնք, և կանուանեն Թէֆէս, կամ՝ Բէնիոն ըստ Ինոդորի. զոր հիմայ հնախոյզք կարծեն Կոբ լեռը, ընդ մէջ Կարնոյ և Բաբերդու, ուսկից Ճամբայ այլ կայ 8000 և աւելի ոտք բարձրէն. սակայն եթէ Գիւմնիսաս քաղաքն Կարնոյ գաշտին արևմտեան կողմն էր՝ ինչուան՝ ի Կոբ հնգօրեայ Ճամբան խիստ շատ է. սակէց այլ զծով առնել իբր 60 մղոն հեռուէն ամեն աչքի համար չէր: Յոյնք՝ գոհութիւն առատապէս վարձատրեցին առաջնորդներն

*Թէ սահակով և Թէ զպեստով. բայց նա աւելի փա-
փագով ուզեց և առաւ անոնցմէ շատ մատանիներ
ու գարմաւ:*

*Այնքան մեծ և անպատմելի եղաւ Յունաց ու-
րախութիւնն ի տեսանելն հեռուէն լերինց սեփա-
կան ոտրան համատարած ալի ջուերուն փայլուն
մակերևոյթը, և այնքան մեծաձայն ձայն ձայն կան-
չէին, որ մօտ եղած գրասաններն խրտէին և շփո-
թէին. վերջապահ գունդն և հեռուն գանուողք,
կարծեցին Թէ Թշնամիք ջուս կոչին բառներ են, և
պէնքի վազեցին: Բայց երբ լերանց դէմ ոչ հակա-
ռակող՝ այլ աւետաբեր տեսան, և ինչ հաւատալով
կէս անհաւատ լեռն ի վեր վազեցին՝ և լերինք այլ
տեսան զծով, ամենքն իրարու պլլուեցան, զուար-
ճար և զինուոր. և շատերն ուրախութենէն արց-
ունք Թափեցին երկարատեն:...*

*Այսպէս եւան մեր հայրենի սահմաններէն:
Պէտք է, երթալ բարով լսենք, անոնց, Հայկակ,
մերազգի առաջնորդին հետ ցուցընելով մօտաւոր
գետը և Մակրոնաց ազգին երկիրը և Ճամբան. ու-
ր հասան Յոյնք երեք օր Թիւոտ մացառուտ ըլ-
լուրներէ ինչնելով. անկէ այլ երեք օրէն մտան ի
սահմանս Կողքեաց. անկէց այլ երկու երեք օրէն
հասան ի Տրապիզոն, լերանց ազգակից գաղԹա-
կանաց մէջ, և տարին մը վեր հեւացած և փափա-
գած ծովեզերքը. և մտան հոն յետ ամիս մը
հանգչելու և բարեկենդան ընելու ի մեծի քաղա-
քին Պոնտոսի, ու նաւելով ի Սինոպ և ուրիշ
ծովեզերեայ քաղաքներ, ապա քիչ մ'այլ ցամա-
քէն երթալով, երբ վերջին միաբան իրևանն ըրին
ի Խրիւսոպոլիս, այնինքն Ոսկեւաւոր Բիւզան-
դիոնի, օգոստոսի սկիզբը, և անկից ցրուեցան
իրարմէ, Պետրոսի հետ Ճամբայ ելնելնէն տարի ու-
կէս եառև:*

10477396

Թ

Կորգուաց լեռները և Հայոց հարաւային սահմանները կոխած առենին, ինչպէս ըսի, նոյեմբեր կէսերն էր, իսկ Խաղտեաց լեռը եղած և ծովը տեսած առենին, 'ի հիւսիսային սահմանապայր Հայոց, փետրուարի սկիզբն էր. ուրեմն երկու ամիս ու կէս ամէնէն ցրտագոյն եղանակին (Քրիստոսէ առաջ 401 ֊ 400 տարին) այս հռչակաւոր Բիւրն Յունաց, գերահռչակ զօրավարի և պատմչի առաջնորդութեամբ՝ կատարեց այս յաւերժայիշատակ նահանջը, անոր գժարութեան մեծագոյն մասը գանելով մեր աշխարհին մէջ. ուր և գոնէ հազար մը կամ հազարներ այն ծայրակատակ Հելլենաց՝ ծածկեցան հիւսիսային առատմանեաց և հայկական հողոյ մէջ: Քսենոփոն որոշ թիւ չըսեր. սակայն 10000 կ'ըսուին նահանջողք, այլ ըստ ոմանց 13000էն աւելի էին կորչասից սահմաններուն մօտ. Քսենոփոն՝ Տրապիզոնէն անդին 'ի Կերասոնտ (Քիրէսուն) գեռ 8600 հոգի կու յիշէ. իսկ Դիոդոր Սիկիլիացի ինչուան Խաւկիւատար՝ ասան հազարէն միայն 3800 մնացած կ'ըսէ: Մեր աշխարհին բարձր կլիմային և օտարաց անփորձ ցրտոյն համեմատ, միանգամային Պարթից թշնամութեանէն հալածուելով, եղած կորուստն՝ գեռ կրնայ քիչ ըսուիլ. և պէտք է տպրողք ընդհակառակն նախ իրենց փիլիսոփայ վերջնապահ զօրապետին, և ապա նոյն իսկ մեր հայրենակցաց, որք աւելի մարդասէր և հիւրընկալ եղան անոնց՝ քան իրենց տահմանակից քրձայք, Տայք, Խալխք, և այլն. և եթէ Պարսկաց Թագաւորի կոմնականքն չըլլային 'ի Հայս՝ աւելի հանգիստ և գիւրին կ'ըլլար Յունաց Բիւրոնն նահանջն: Ձմեռուան համար այլ ըսելու է

10477396

որ որչափ սաստիկ էր՝ գետ սաստկագոյն տարե-
ներուն մէկն էերևելը, այլ և մեղմագոյն. չատ տեղ՝
աղբկանց աղբիւրներէ ջուր հանելն (որ ուրիշ կող-
մանէ կու յիշեցինք մեզ նահապետական Ռեբե-
կաներըն և Ռաքելներըն), կամ նաև միջակ գետոց
(չատուած) միջէն անցնելնին՝ այս բանը կու ձգմար-
աեն. անկէց զատ կու հաւատանք նոյն պատմու-
Թիւնն Թէ այն աաեն այսչափ մերկ չէր մեր եր-
կրին երեսը, այլ աւելի ծառոտ և անտառոտ, ո-
րով ցրտին դէմ դնելու երկու ձար այլ կար, մէկ
մը հովը արգելլով կանաչեաև կամ ձերմակապատ
վարագուրով և պատուարաբ մայրեաց, մէկ
մ'այլ անոնց ձղերով կրակ ընծայելով. յետագայ
դարուց պատմութիւնքն այլ զայս ցուցընեն:

Ձանապարհորդաց մեծ միխիթարուԹիւն մ'այլ
էր բարեկամուԹեամբ ընդունուլ գեղերու և գե-
ղացեաց քով գտած առատ պաշարներն, Թէ՛ մսե-
ղէն (որոյ մէջ յիշուի խոզենին այլ), Թէ ընդեղէն
և ջոր պատուղ, ու մանաւանդ զօրաւոր գինի մը,
զատ՛ի գարեջրէն: Ասոնք յայտնի նշան են Թէ այն
աաեն շատ աւելի բարեկեցիկ էին մեր գիւղացիք՝
քան հիմայ և ուրիշ աաեններ, երբ այնքան փո-
փոխուԹեանց և հարստահարուԹեանց տակ չէին
ընկած. այլ կամ իրենց բնիկ Հայկազն Թագաւո-
րաց կամ արևելից մեծ սիեզերակալին կանոնա-
ւոր իշխանուԹեան տակն էին. միայն երբեմն զրա-
ցի ազգաց ասպատակուԹենէն կու նեղուէին.
սակայն անոնց դէմ կենալու ոյժն այլ ունէին.
հին Հայ երկրագործաց եղբայրքն՝ էին Հայ զինա-
ւորք: Հայոց Թագաւորն այն աաեն հարկատու
էր Պարսից, որք երկու մեծ կուսակալուԹիւն
բաժնած էին զաշխարհը, յարևելեան և յարևմը-
տեան. սակայն այս արգելէր որ Հայկազն Թուն
Տիգրանայ՝ իր նախնեաց օրինօք չկառավարէր իր
սեփական ազգը:

Հայաստանէ անցնող Յոյնք այլ բոլորովին ան-
ծանօթ չէին մերոնց, որք և սահմանակից կըր-
նային լսուիլ՝ Փոքր Ասիոյ մէջ, ուր հազարով տա-
րիներ առաջ մեր Արամ նահապետն երկու ազ-
գերը մօտեցուց իրարու, և Թերևս այս առաջին
անգամն էր մերձաւորութեան. իսկ յետ անոր՝
շատ անգամ այլ զիրար ձանչցեր էին, սկսեալ 'ի
կիսասուտ ուղևորութենէ Սրգոնաւորդաց, մին-
չև յարշաւանս Դարեհի և Քսերքսեսի 'ի Յու-
նաստան, որոց բանակաց մէջ կային Հայկական
գունդք: Բայց ատոնցմէ առաջ և քիչ ետք Սր-
գոնաւորդաց, իբր 800 տարի նախ քան զՔսենո-
փոն և իր բիւրը, Բիւր մը Հայոց այլ կարիճ հե-
ծելոց քան հետևակաց՝ գնացին, Թէ ոչ 'ի բուն
կղզիականն Յունաստան, այլ ընդդէմ Յունաց.
մինչև յարևմտեան ծագս Փոքրուն Ասիոյ, յԱր-
մաւրայ մինչև 'ի Տրոյա, 18 աշխարհագրական
աստիճանի երկայնութեամբ հետև միջոց հորիզո-
նական ուղղութեամբ (գրեթէ նոյն լայնութեան
աստիճանին տակ էին Պռիսոնու և Չարմայրի մայ-
րաքաղաքքն). երբ այս ետքինս Աստուածանեայց
Տևտամոս ինքնակալին կամօք՝ գնաց յօգնութիւն
որդեկոտոր ծեր Թագաւորին Դարդանեանց, և
'ի վերջ ապանման Եկատոմբ յոխերիմ դիւցազնէն,
Թէ և ինքն այլ քաջութեամբ վիրաւորեալ ըն-
կաւ հոն. «այլ Այքիլեայ կամիմ, և մի՛ յայլ ու-
մեքէ 'ի քաջացն»: Բայց ոնց ծնաց մեր այն ժա-
մու Քսենոփոնն՝ որ այս հայկական Բիւրոն
անցքն ու դիպուածը Ճառագրէր:. Արդեօք չէ՞մք
ունեցեր, Թէ ոչ Հոմերոս մը, գոնէ Դիկտիս մը
և Դարեհ մը տրովական պատերազմաց պատմող:
Հիմայ ձեռնընկա բան չկայ, և ոչ իսկ համբաւ
այնքան հին ժամանակաց.—մինչդեռ Քսենոփոն՝
մեր աշխարհին ծանօթութիւնները կու բանեց-
նէ ոչ միայն այս Նահանջիս գրոց մէջ, այլ նաև
կիւրոպեդիային:

10477396

Ժ

Սակայն չեմ ուզեր անմխիթար լռել, Հայկակ. եթէ Քաեննոփոնէն 800 տարի առաջ ջունեցանք իրեն նմանը, իրմէ 800 տարի վերջը ունեցանք մէկ մը. այն ատեգիր և մեղսաբան մէկն՝ զոր ժամանակիս հայ գրականութիւնը նորոգող հարք և զայն յարգողք՝ անուանեցին Հայ Քսենոփոն. Վարդանայ պատերազմին Պատմիչն: Ո՛վ կարծէր թէ Քրիստոսէ ջորս դար առաջ Աստիկեցի մեղաւին անցած Մոկաց լերանց սահմաններուն վրայ՝ պիտի գար Քրիստոսէ ջորս հինգ դար ետև՝ իր քաղցրաթել կենաց հիւսուածը ամփոփելու՝ Աղաթոփեան ձեռն եղիշէ. որ և ինքնին այս Քսենոփոնի անցած քարձր կոհակները՝ Ձիւնեղէն լերինք Հայոց անուանուին է: Ո՛վ կարծէր թէ մեր մեղսն այլ երբեմն Աստիկեցւոյն նման՝ զինակիր էր Վարդանայ՝ մեծի և սիրելւոյ քան զկիւրոս և զՊրոքսեն: Ո՛վ կարծէր թէ Եղիշէ այլ փոխանակ Քսենոփոնի՝ անոր հայրենիքը պիտի երթար՝ պարզ բանաւոր մեղսաբանութեան համար; և անոր Սոկրատ վարժապետին և բարեկամին տեղ պիտի ունենար Սահակ և Մեսրովպ մը՝ ի Հայս, Կիւրեղ մը յԱղեքսանդրիա. — անոր լայնաձակատ ու լայնախոհ աշակերտակցին (Պղատոնի) տեղ՝ Եզնակ մը, Դաւիթ մը և Մովսէս (Խորենացի) ուսումնակից, որք Աթենայ հանճարը փոխադրեցին՝ ի Հայս: Մենք պէտք է հաւատար շնորհակալ ըլլանք մեր ազգակից Հայ հանճարեղ հարց այլ, հելլենացի վարժապետաց այլ. և եթէ աւելի պանծանօք քան Յոյնք զՔսենոփոն՝ պատուեմք զմեզ ազատասեան մեղս, զոր այլով Աստիկե-

10477396

ցկդ (Քսենոփոն՝) անշնորհք մ՚ըլլար եթէ անուա-
նեմք զքեզ՝ ցոցն եղինշէ։
Արդ այս քաւ է մեզի այլեքեզի այլ. դարձիր
դու փութով քու հայրենիքդ՝ պաշտպանելու հին
վարպետդ բարեկամդ և մարտակիցդ, Սոկրատը։
Ահա զծերուհին կու քաշեն ՚ի բանտ. ահա մոլե-
լընդին մահաբեր բաժակը ձեռքն է.—եթէ չկըր-
ցար ազատել զնա յԱնիտոսեանց, որպէս ոչ
մեղք զՄահակ ՚ի Սուրմակեանց, կամ հին հա-
ւատարիմքն՝ զՆերսէս և զՏրդատ, գրէ գոնէ ա-
նոր Պալպանուհին, որպէս Խորենացին զՈլբն,
և ելլէջ իր պատմութեան և միանձանց ձառին
մէջ՝ արտասուաւք յիշատակները։—Եւ եթէ դու
այլ հալածուիս և աքսորուիս՝ քու նրբամիտ՝ այլ
փոփոխամիտ քաղաքացիներէդ, ասով այլ ելլէջէն
և ընկերակցացն հալածանաց և կամաւոր աքսո-
րանաց կամ միայնութեան նման սեպուիս։— Ա՛ռ
դու այլ Կորնթոսի օտարութեան և առանձնու-
թեանդ մէջ՝ մեղսածոր գրիչդ, և Կիւրոմարզի
վիպասանութեանդ մէջ իսառնէ ՚ի Հայաստան և
՚ի Հայոց լսածներդ, իրենց դար մ՚առաջ վախ-
ճանած սիրելի Տիգրանին վրայօք. հիւսէ անոր
պարկեշտ ու խանդակաթ կողակցին նազաբանու-
թիւնը, հանդերձ քու Պանթէայիդ կեղծ ողբե-
գակ պատմութեամբ. որով փոխանակ աւելի վեհ-
մտկան փափկութեամբ մեզք կարդանք մերազգի
մեղուին դրուագը՝ զփափկասուն Տէհնայ Հայոց
աշխարհին և զկանանց կապելոց նախարարացն։—
Ի հարկէ չէս մոռնար Տիգրանէն առաջ՝ անոր պէս
Հայոց սիրելի եղած՝ իրենց գեղեցիկ և ողջախոհ
նահապետին՝ Արայի՝ մայրը և առաքելախառն
յարութիւնը՝ պատմելու քու քաղաքական վար-
ժութեան կարծեցդ ընդդիմաբան, այլ և քեզմէ
վեծ ու Ճարտարրուքեան գրչին և խոհատուիրի՝
Պղատոնին. որ անհաւան չէ՛ թէ քեզմէ լսած՝ և

այլափոխած պատմէ իր Հատարակապետութեան պրոց մէջ էր Հայկազին [1] դարձն'ի մեռելոց և տեսիլքը։ —Իսկ երբ յիպոտմանութեան կամ հեծելութեան վրայ գրես, անշուշտ չես մոռնար հայկական եանդուն երիվարները և քու սկզբով առած մրոտութիւնդ, և այն խնամքն՝ որով Հայք դարմանէին զանոնք։ Որոց վրայ այլ գրած առենդ, և մանաւանդ նապատակին Ճարտար նկարագրութեան առեն՝ անշուշտ դեռ կու յիշես Հոլքոցի կամ Հաւնունի (կամ այլ Հայ դաւառի մը) պատմին փեսայն, որոյ իննօրեայ նոր հարսը գերած կամ պատանդ բռնած առենդ, նա անպէտ եղածին՝ նապատակ որսալու երեր էր 'ի սառնամանի առ սարս Ձիւնեղէն լերանցն Հայոց։ — Ախպէտ քու զանազան գրոցդ մէջ՝ յայտնի կամ ծածուկ խառնես մեր Հայաստան աշխարհի յիշատակները՝ քու բանական մեղդ գործելու. ինչպէս մեր Նալչէ այլ՝ իր ոգին վրայ գրած առեն՝ քու հայրենեացդ խնամոց ծանկնելոյն պիտի հնազանդ իր քաղցրաբանութիւնը։

Արդեօք այս երկուքէն որն աւելի անուշահամ է և պիտի ըլլայ մինչև խոպան՝ համազգային ճաշակաց, Աստիկեցին՝ իր Հեղեղաց, թէ Արտառանեանն՝ մեզ Հայոց։

1 Ագգաւ Հայ և ծննդեամբ Պամփիւլիացի կ'ըսէ Պղատոն. տես 'ի Բազմավէպ ժդ. էջ 341։

10477396

10477396

ԻԲ

ՆԷՍՏՈՒՈՍ ԵՒ ՊՕԼԻՒՏՈՍ

22 *Ապրիլ*, 260.

Ա

Ա*պրիլ ամսոյ* 22. *գարնանային եղանակի գե-*
ղեցիկ օր. գեղեցիկ և զբօսանք մատց ու մարմնոյ
՝ի գեղեցկութեան վայրի, այսինքն ՝ի բնութեան.
՝ի մէջ նորաբողբոջ և բարգաւաճ ծաղկանց և տըն-
կոց, պայծառ ջրոց հեզասահ կամ՝ կարկաչուն
գնացից քով, դալարածայր ծառոց անուշահոտ
ստուց հովանեաց տակ, հաշտ և անկասկած երկ-
նակամարին ներքև: Ախպիսի առեն այսպիսի
տեղ՝ քաղցր է թողուլ երբեմն ընտանի հոգեր և
առանձին մտածութիւներ (բարձրերն անգամ), և
առանց նուաստանալու ՝ի մարդկութենէ՝ խառնըր-
հիլ բնութեան ուրիշ անմեղ որդւոց հետ, մար-
դասէր կենդանեաց հետ խառնուիլ, խաղալ ընդ
գառին և ընդ ուլոյ, անոնց և մեզ համար հաւա-
սար սիրուած մարմանդից վրայ. յիշել և կար-
դալ հին մարդկան հովուական երանախառն ը-
ստած կեանքը, գոնէ ըստ նկարագրութեան քե՛ր-
դողաց:... Բայց ո՛ւր են մեր հովուերդակքն. ո՛ւր
Հայ Թէոկրիտք և Մաւռոնք, որ հուշակէին հայրե-
նի եդեմաբուսիկ գետոց հովիտները՝ ոչ պակաս,
այլ և աւելի գեղեցիկ և ելջանիկ եղած քան զՍի-

կապիա։ — Արկադիա. Յոյն և Լատին քերդողաց երգածեալ Եդեմն, ուր ընդ ամենայն գեղեցկութեանց բնութեան՝ ընդ հովտաց, ջրոց և բուսոց՝ խառնէր և երգոց ներդաշնակութիւնն այլ, ըստ իր բնիկ երկրէն ըլլալով. ուր հովուաց հեղինակն և պաշտպանն՝ պայխն Պան՝ հնարեց Սրինգը, և ջրյակայ գեղեցիկ տեղեաց և անոնց միջի գեղեցկաց անուններն՝ քաղցրալուր հնչակեցան։ Երբ կաթնատուն շրթունք՝ ի շար եղեգանցն փափացին, տեղւոյն բրտաբարոյ բնակչաց վրայ անանկ երանգերանգ քօղ ինչաւ, որ բուն մարդավայել և երանագոյն երկիր՝ այն տեղն կարծուեցաւ. վայրենի ու անկիրթ սեպուեցան սիրտ և ականջ՝ որ չհաւանին առանց կեղծեացն անգամ, կամ չախորժին այսպէս գարնանահոտ օրեր՝ պարապիլ առանց հնչակողաց հնչակեալ պրուաձոց հետ. և նոյն ինքն հնչակող բանաստեղծքն՝ թէ և օտարք և հեռւնք աշխարհաւ, այլ գրեթէ կու հարկաւորէին լրւենց գովանի հովիւներըլ և երգողներըլ Արկադիոյ ընել. և թէ և ոչ պակաս քան զԱրկադիոյ՝ այլ գուցէ և աւելի գեղեցիկ Իտալիոյ մասն վրայ, Մինչեւոյ գեռոյն հովտաց մէջ կ'երգէր և երգել կու տայր Մառոն (Վիրգիլիոս) իր Թիւրսիսը և Կորիդոնը, քայց գեռ Արկադացի կ'առնուէր զանոնք.

Երկոքեանցիւր իսկ ծաղկատունք, երկոքեանցիւր
Արկադացիք
Եւ յերգել հանդիսատզօրիք, եւ յանդրադարձն
ձրն դիմագրաւք[1]։

Զըլլան մեզի այլ անախորժ, ոչ Հայկակ, ոչ առնուն, ոչ բնութիւն և ոչ երգիչք Արկադիոյ. մա-

1 Ambo florentes aetatibus, Arcades ambo,
Et cantare pares et respondere parati.

10477396

նաւանդ օտարաց մէջ՝ մեզի այնչափ քաղցր ըլլայ, որչափ անոր չինական և բնական վայրացը մէջ կու լսենք ոչ սակաւ մեր հայրենի տեղեաց նման նաձայն անուններ, ինչպէս Փռաւլակ, Պետրոսակ, Պարոյր, Երիզան (Արածանի) գետ, Մելաս գետ, և այլն:

Ահա յետին գետոյս՝ երիմանդեանն Մելասայ անուանն՝ օրուանս յիշատակաց հետ խառնուելով, յափշտակէ զմեզ յԱրկադիոյ՝ անոր հովուաց և երգոց հետ, և փոխադրէ մեր Դ Հայոյ մեզնեան Մելասայ գետահովիտը. մեր Մելան՝ որ՝ ի ջրկայ լերանց Կապադովկիոյ և Կոմագենոյ կ'իջնէ, կու ձևանայ և կ'երթայ Թափիլյեդեմոկանն Եփրատ. և ան՝ մեծ գնդնչմամբ քարեաներ կորելով հոս կու զատէ մեկմեկէ զՄեծ և զՓոքր Հայս, այս եռքննիս նահանգ Թոլլով զՄելխինէ. զայն՝ զոր յառաջ քան զ'4000 տարի՝ քաջ բազուկն Արամայ երբև կամրջաւ իր բնիկ աշխարհին հետ միացուց և հայացուց: Հոս, այս մեզնեան Մելասայ հայրենի հովտաց և առուց եզերքը՝ կու հրաւիրեմ զքեզ այսօր, Հայկակ: Ե՛կ, այս գեղեցիկ ժամերուս և հովերուս՝ հանգչինք ընդ հովանեաւ հայեաց և հաճարենց, ընդ Դաբնիտեայ և Մելիբեայ, լսել և յիշել երջանիկ ժամանակաց, և երջանկապոյն անձանց մրցանք մը՝ մեծապոյն սիրով քան երգով:...

Ո՛վ, քանի՛ վեհ ու վսեմ է քու հոսանքդ՝ ով Եփրատէս, որ մարդկութեան նախածնողին հետ՝ և անկէ այլ առաջ յիշուած՝ կ'իջնես երբև ընդ սահմանս բազմադարեան ժամանակի՝ երթալ յանդունդ յաւիտենականութե. — քանի՛ քաղցր կրկնելով կու խառնուի քու ծոցիդ այս մեղմածորան Մելասս այլ. որ թէ և անծանօթ և անայցելու է ձեզ՝ ի վայրենաբեր մուսայից, այլ ինծի հաճոյապոյն և սրբազոյն է քան զամենայն վտակս

և հովիտս, հովիւս և երդիչս Արկադիոյ: Զոնի մինչ և մերն Մելսա իր երդով սիրով մրցողները, իր եւանդուն և զուգահասակ ատամնիքը, իր աննման ջուխտակը, որք և

Երկոքեան իսկ ծաղկամիք եւ երկոքեան Մե-
լիտացիք:
Հաւասարք յերգ, յերգ սուրբ սիրոյ, եւ 'ի
մրցանս կազմապատրաստք:

Արդ բարով եղիր, ով Մելիբէէ [1], քու սահ-
ման և քու հռչակած Արկադացիքդ, և Թիր-
սիան և Ալէքսան, իրենց ամենայն երգերով և եր-
գոց առիթներովին. և գան մեզի, ու միշտ մնան՝
ձիմարիտ ընորհաց ծնունդք՝ հոգւով երկուորեակ-
քըն՝ Մելիտացիք մեր ազնիւք ՊՕԼԻՒՏՈՍ և ՆԷԱՐ-
ՔՈՍ: Աստնք ոչ հովիւք արուեստաիւ և եղեգով եր-
գաշարժք, այլ հոգւով հեռևողք այն մեծի հո-
վուին՝ որ հովուէ միշտ 'ի վայրի դալարուոջ և անու-
ցանէ առ ջուրս հանգստեան. մարմնով զգօնա-
տոլք և զինաշարժք՝ կայտառ կարիճք. երկուքն
այլ զինուորեալք հռովմէական բանակին ՃՒ գնդին
մէջ. այն գնդին, որ երբեմն (յամի 174) ընդ Մ.
Աւրեղիոսի կայսեր երթալով 'ի պատերազմ ընդ-
դէմ բարբարոսաց, յերկիր անջուր և անապատ,
'ի տարակուսել և 'ի վտանգել բանակին և պա-
րապ տեղ կանչել անմահունչ և անակնկալ չաս-
տուածներու, ընծայեց իրմէ գունդ մը քաջաց
քրիստոնէից, որք արտերնին և աչուընին յերկինք
վերցընելով առ Աստուած աղաղակեցին, և մէ-
կէն Թնդալով որոտացին անամպ անմրուր եր-
կինք, կայծակներ Թափեցան, անձրևաց հեղեղք

1 Զայս անուն կ'առնու Վիրգիլիոս իր Է հովուերգու-
թեան մէջ, յորում երգով վիճել կու տայ Թիրսիս և
Կորիդոն հովուաց, և եաքինս յաղթող կու սեպէ:

իջան, և մարմրած բանակն խմեց կենդանացաւ. անկէ ետև բարեացատարար զօրագունդն այն՝ անմահացաւ Շանլուայիգ Լէգէան [1] կոչմամբն յերկրի, խակ յերկինս՝ վկայութեամբ սուրբ հաւատոցն: Այս դէպուածէս դար մ'ետև՝ սոյն անուամբ գունդս պահապան նատէր եփրատական կողմանց՝ 'ի Մելիտինէ քաղաք, զոր կայսերքն Հռովմայեցւոց բացընել տուեր և զօրանիստ սահմանակալ քաղաք պատրաստեր էին: Եւ ահա հոս այս գնդիս մէջ զինուորեալ և յառաջացեալ էին մեր հոգեզոյգ խեղճիկքն [2], Պօլիքարոս և Նէարքոս, քնիկ իսկ տեղացիք:

Բ

Մելիտինէ վարուց հայացեալ՝ յառաջագէմ այլ եղած էր 'ի հայութեան, ազնիւ և մեծ նախարարութիւն մ'ընծայելով ազգերնուս և տէրութեան, որ կու յիշուինաև 'ի Գահնամակին Խոտրովու (հօր Ս. Տրդատայ), որոյ թագաւորութեան ժամանակ ծաղկէին մեր նահատակքն, և որոյ եղերական մահուան տարին (260) կատարեցաւ մերոնց երանական հանդէսն այլ: Այս նախարարութեան պայազատն էր Թեոդոս Պօլիքարոս, զոր ամենքն վկայեն ազնուատոհմ ըլլալ, (Seigneur Arménien ըստ Գոռնէյլի). ապա թէ ոչ՝ անհաւատալի կ'ըլլայ որ Փեղիքս՝ հռոմէական կայսերաց կուսակալն՝ զկնի անոր կինուն Թեան տալու իր դուստրը՝ Պաւլինէ կամ Բուլինա. ուրեմն թէ քաղաքական և թէ զինուորական պատուով

1 Legio Fulminata կամ Fulminatrix ըստ Լատինաց: Ըստ ոմանց այս անուամբ լեգէոն յիշուի Տիտոսի կայսերութեան ատենէն, 'ի վերջ Ե դարու:

2 Ջուխտակք, եղբ:

առաջին աղիւս երիտասարդն էր Մելխիսեդեկ մեր Պօլիքառս: Այս անուն՝ եթէ կամօք աներոյն չէ հռոմայեալ՝ հարկին անուան մերձեցնելով, կրնամք յուշացեալ կարծել, ինչպէս Ս. Եւստաթեոսէ և ուրիշ հայազգի սրբոց ումանց անուանքն այլ. բայց անհաւան այլչէ որ նոյն իսկ ազնուական Հայք ինամուԹեամբ Յունաց և անոնց գպրուԹեամբ վարեալով այն աւեն՝ յունական անուններ այլ կու գնէին իրենց որդւոց. ինչպէս էր և Սալհունեաց սուրբ երիտասարդ ԱԹենոդոր, և մայրն այլ ՍղուխԹա [1]: Արդ ինչպէս այլ ըլլայ՝ մեր Մելխեան երիտասարդին անունն՝ որ յունարէն Բօլիէ-ւֆոս (Πολύευκτος) գրի և ԲազմաղօԹ կամ Բազմանուէր Թարգմանի, ՚ի Լատին նաց կէրտ կէրտ կոչի (Polieuctus, Polioctus, Polictus) և մանաւանդ ՚ի Հայոց, Պօլիէ-ւֆոս, Պօլիոփիոս, Պօղտփիոս, Պողտփիոս, Պօղէ-ւֆիոս, Պաւլիոս-ւֆ, Պօլիւֆոս. որոցմէ առաջինն հաւատարմագոյն է յունական ձայնին, վերջինն մեզի աւելի ընտանի և դիւրալուր:—

ԶինուորուԹեան մէջ ինչուան մը աստիճան բարձրացեր էր Պօլիքառս, չէ նշանուած. բայց միայն զի աստիճանաւոր էր, և ֆլամիդ ունէր. և անտարակոյս է՝ որ իր հասակին, քաջուԹիւնն, արիւնն, փեսայուԹիւնն Փեղիքսի՝ իրեն ցուցընէին և մօտեցընէին շատ բարձրագոյն աստիճաններ և ընդարձակ սահման երկրաւոր փառաց և պատուոյ. որոց արժանաւոր էր՝ այն ձիրքերէն ազնուելի՝ բարուց լաւուԹեամբն: Զի էր նեղբուստ և արտաքուստ կայտառ և աշխոյժ, եռանդուն և վառվռԹ խառնուածքով, լայն և բաց սրտով և ձեռքով. միայն պատերազմի բանակաց մէջ ահաւոր և չանԹահաղ. իսկ անկէ դուրս՝ նաև արիա-

[1] Տե՛ս Հայս. Ս. 216:

կան սպառազինութիւնն՝ իր հասակին և երեսաց նոր փայլք մը տալով կ'երևցնէր զինքն ըղձալի և սիրահար: Կարծես թէ գեղեցիկ լաւութիւնները վառ 'ի վառ դրօշներու պէս հռոմէական և հայրենի նիզակաց վրայ պլլելով պիտի կարենար ամեն գժուարութիւն մերժել, ամեն յաջողութեան դուռ բանալ, և ըլլալ երկրիս երջանիկ վայելուչ և տէր մը: Գուցէ երբեմն ինքն այլ այսպիսի իղձերով և կենակցին սիրովն՝ կու լուալար ծանուցեալ և անծանօթ երանութեանց և յուսոց մէջ. բայց իր գեղեցիկ և մեծ սրտին համար՝ անոր ստեղծողն գերերկրեայ բարիք մը պատրաստեր էր:

Իսկ Նէարքոս [1], որոյ սեփական յիշատակն է այս օր (22 ապրիլի), հասակաւ, պատուով և սրտիւ մերձաւոր զուգակից Պօլիքարոսի, ունէր արտաքին փոքր զանազանութեանց մէջ՝ նեղքին մեծ տարբերութիւն մ'այլ: Զինուորութեամբ պնդակից և ատենաւոր այլ յառաջացեալ՝ անոր նման, ցեղին այլ ազնուական և մեծատուն. և հաւանօրէն 'ի նոյն Գ Հայոց սահմանէն, բայց ոչ 'ի քուն Մելիտինեայ, այլ 'ի Կանան [2], կամ քան յունացեալ կոչման՝ Կանանէպոն քաղաքէ, այսինքն Կանանացւոց քաղքէն. որոյ դիրքն մինչև հիմայ անծանօթ է մնացեր, բայց միշտ կարծուած է մերձաւոր Մելիտինէի: Սակայն ոչ այնքան աեղեաւ, հասակաւ և բաղխիւ՝ որքան սրտով մերձաւորք և համազոյգք էին «Նէարքոս... և Պօլիքարոս եղբանեղի սուրբ վկայքն՝ Եղբարք կոչէին,

1 Նէարքոս կամ Նէարխոն ըստ ոմանց կրնայ թարգմանուիլ Նաւապետ կամ Նաւ էլլեան:

2 Կանան անուամբ գեղ մը յիշուի Կիւրիկիոյ մայրաքաղաք Տարսոնի քով, յառաջ քան զժամանակ այս պատմութեանս:

» ՞ջ եթէ ազգականութեամբ, այլ ըստ բարւոք
» յօժարութեանն և սրբոյ՝ հանդիպէին. և զբն-
» ական պէրպ պէրն զոր ունէին՝ կոչեցան բարեխառ
» և ընկերս. ըստ Աստուծոյ խորհրդեան գաան
» խորհրդակից եղկոքեան » [1]: Ահն պէրպ պէրն
այնքան մերձաւորեր, միացուցեր, ձուլեր էր զա-
նոնք, որ ոչ երկիր և ոչ երկինք կրցան իրարմէ
զատելու:

Սուրբ, մեծ և աստուածային էր ուրեմն Նէար-
քոսի և Պօլիքարոսի սէրն. որոց քով կ՚աղօտա-
նան, մթանան, չքանան սիրելութիւնք դիւցա-
զանցն Աքիլլեայ և Պատրոկլեայ, զօրավարացն՝
Աղեքսանդրի և Հեփեստիոնի, Պիւթագորեայցն՝
Պիւթիասայ և Դամոնի, և Դիոսկուրեայց՝ Կաս-
տովրի և Պոլիւկքեսեայ, և այլոց նմանեաց, եթէ
քննուին անոնց կիրքն, գործքն և կատարածն:
Թերևս երկրիս վրայ գրուած կամ կրուած ձշմա-
րիտ և հզօր բարեկամութեան սիրոյ չկան գերա-
գոյն օրինակք՝ քան զմեր Մելիտացի նահատակս.
որոց համար ամենատոյգ է վկայեալն, թէ « էին
յերկոսին մարմինն՝ մի ոգի և մի կեանք ». այո,
ամենատոյգ, զի ինքն իսկ կրօլաց մէկն է և գը-
րոն զայս, նազելին Նէարքոս: — Ի բարեբաղդու-
թիւն հասարակաց և ՚ի պարծանս Հայաստա-
նեայց՝ սոյն ինքն սուրբս այս քաներս և իր սրտա-
կըցին նահատակութիւնը գրով աւանդեր է, որպէս
չաթաք ՚ի սրբատգրաց վկայեն, այլ չեն տեսեր գը-
րուածը. զոր կարծեմ ամբողջագոյն քան զնոսա՝
ունիմք մենք մեր ազգային գպրութենե աւանդեալ
գանձուց մէջ: Ահա գրուածս, թէ և մէջն ուրիշ
ձեռք այլ մուած և 1600 տարուան հնութիւնն
քիչ մ՚այլայլած ըլլայ, գեռ ոչ միայն իբրև հնա-
գոյն գրուած քան զՀարց Ցուխաց և Հայոց պա-

1 Այսպէս կ՚ըսէ հին վկայաբանութիւնն:

տուսանկրեալ է, այլ և պաշտեալ՝ իբրև կենդանի Թարգման սրտին Նէարքոսի։

Սիրտ Նէարքոսի, հեզուկ և նազուկ. որոյ սէրբազան սպիտակութեան վրայ կու յանդգնիմ նըշմարել լուսաթափանց տրամութեան շուք մ՚այլ. բայց այնքան բարակ և թեթև շուք՝ որ կրնայ վկայութիւն մ՚ըլլալ առաջին դարուց կուսամանուկ քրիստոնէի մը սրտի. այնպէս անոյշ մեղամաղձ կամ մեղմամաղձ մը՝ ինչպէս կրնար վայելել երկրաւոր արքայ մը։ — Նէարքոս քրիստոնեայ էր և արժանի Քրիստոսի անուան և սէրոյն. մեծատուն, ծաղկահասակ և գինաւոր. բայց այս ձիրքերս փոխանակ զինքն յերկիր ձգելու՝ աւելի վսեմութեամբ մը յերկինք վերցնելու տային։ Ո՛հ, որքան տարբեր էին Նէարքոսեանքն՝ իրենց հասակակից երիտասարդներէն ոմանց, որք կ՚ուզեն աւելի ստուգել իրենց հասակին քան հաւատքին քնութիւնը. անվայելք՝ մեկուն քնատուր բարեաց, մեկայլին երկնաւոր փառաց. — արդարև մեծամիտք անխմաստք, որք չեն կրնար հասկընալ թէ քնութեան ուժոյն և հնարհաց վրայ՝ այնպիսի ոյժ և հնարհք կ՚աւելցընեն կրօնք, զոր ուրիշ հնարքով մ՚անկարելի է գտնել։ Ո յժ մարմնոյ, հնարհք հասակի և արքութիւն սրտի, մտաց բացութիւն, և հոգւոյ հաւատք, ինչ գեղեցիկ, ինչ վսեմ, ինչ ցանկալի խառնուրդ։ — Այսպիսի էր մեր հաւատոց նախահարցն, առաջին դարուց ծաղկահասակ քրիստոնէից. այնպիսի սպիտակ սրտեր կային անոնց երակարիւն եռանդնոտ ծոցերը, որ երբեմն՝ ի հարկի և հալածանաց ժամանակի՝ քահանայք սատուածային պատարագը մատուցանելու համար՝ յարմարագոյն և պատրաստագոյն խորան չէին գտներ քան զանոնց պարկեշտ լանջը, և այն սիրատաք ջերմիկ և կենդանի սեղանոց վրայ կու դնէին և կատարէին անմահութեան խորհուրդը։

10477396

Ո՞ր կրօնք կըրցեր է այսպիսի բան մը մտածել, այսպիսի երիտասարդներ ընծայել. յորոց մի էր և մեր նախանձելին Նէարքոս: Թերևս Մելասայ համ Կանանայ լեռնապարիսպ հովիտքն՝ իր երկրաւոր հոլիզոնը քիչ մ՝ամփոփած էին, և շատ աշխարհային ծանօթութիւններ չունէր. սակայն հալածանաց ժամանակն, երկու կրօնից (քրիստոնէութեան և հեթանոսութեան) անհաշտ կըռւին, աշխարհակալ Հռովմէացւոց հետ զինակցութիւնն այլ՝ 'ի հարկէ բաւական տեղեկութիւններ տուած էին իրեն. և ոչ տգիտութեամբ՝ այլ ընտրութեամբ՝ կու սիրէր ամփոփ մնալ. իր սրտին ու մտաց ընդարձակութիւնը՝ և բարձրութիւնը՝ կ՝առնուր անյագ ընթերցմամբ գրքի մը, որոյ անունն և խօսքն Աստուած է, գործն՝ արքայութիւն, վայելքն՝ անմահութիւն:

Այսպիսի գրքով և ձիրքով Նէարքոս առաքելութիւն մը կու տանար Պօղիքարոսի քով, որ արտաքին ձրիւքն առաւելեալ կ՝երևէր քան զՆէարքոս: Սա պայծառ և հանդարտ արշալոյսի և տուընջեան մը նմանէր. նա լուսնկայ գիշերոյ մը, որ ամենայն փայլմամբն այլ՝ էնկրնար հաւասարիլ ցորեկուան. սակայն կ՝իմացընէ՝ որ իրմէ այլ ուրիշ բան էնկրնար ծագիլ՝ բայց պայծառ տիւ մը: Տէս, Հայկակ, ինչ փափկութեամբ և պարկեշտութեամբ կ՝ըսէ զայս՝ ինքնին պատմիչն և պատմեալն մեր. « Եւ Նէարքոս քրիստոնեայ էր. իսկ » երանելին Պաւղիքարոս՝ հեթանոս բարուք զինքն » անուանէր, ըսկ պանուն Դեայն. այլ 'ի ճշմարիտ հա- » ւատոց ոչ փոխեալ լինէր. և զբազումս յերկմիտ » քրիստոնէից՝ յայտագս ճշմարիտ հաւատոցն՝ 'ի » բաց որոշել փութայր »: Ըսել է որ Պօղիքարոս արդէն համոզմամբ քրիստոնեայ էր և քրիստոնէից չատապով. բայց դեռ անկընուշք, դեռ հեթանոսի փեսայ և կենակից, դեռ աշխարհային կա-

10477396

պերով կապուած, վանդնեով պաշարուած, վտրձանաց և հրապուրանաց մէջ. դեռ բոլորովին սիրալը չէր տուած երկընքի, այլ տուած էր Նէարքոսի. և Նէարքոսի սայն՝ առհասաւորէայ էր սալու Քրիստոսի:

Բայց ըրբ պիտի ծագէր այն երջանիկ օրն. արդեօք այսօր վայն լսելով մէկ մ'այլեր յուսացեալ վարը պիտի ջանեանար. — կամ ժամանակն երկընաւալով Պօլիկարտոսի պատուոյ և փառաց մէջ յառաջադիմութիւնն և գլխաւորն՝ արգելք պիտի ըլլային երկնաւոր որդեգրութեանը. — և նոյն իսկ բարեկամին ուշանալն՝ իրեն (Նէարքոսի) այլ արգելք չէր իր երկրորդ մկրտութեանն (արեամբ): Այսպիսի մտածութիւնք էին Նէարքոսի պայծառ ապտակերին վրայ այն բարակ շուքը բերողքն, որով աւելի այլ կ'աճէր իրենց սէրն. մէկ և դրացին կու չկարար ամենևին նշան չտալ սրտին ծածուկ տագնապին. զոր և շատ անգամ կու փարատէր Պօլիկարտոսի զուարթութիւնն և ախորժելով լսելն բարեկամին աւետարանութեանը: Թերևս և ոչ այնքան աշխարհի և զինուորութեան հոգն, որքան նախնի քրիստոնէից ոմանց սովորութիւնն՝ կ'ուշացընէր զա՛ի մկրտութենէ, սպասելով ետեւանալոյ տարիքին կամ կենաց հանդարտագոյն և վերջին հասակին: Նէարքոսի կասկածն աւելի իր բարեկամին աներոյ կողմանէն էր, որ հասատարիմ իր աերանց (կայսերաց), կռամոլ մարդ մ'էր. անոր կոյր նախանձն և հաւատքն կրնար Պօլիկարտոսի գայթակղութի ըլլալ, աւելի քան զանոր հարսին՝ Պաւլինեայ. և փեվկա կրնար յուսալ՝ որ Թռուններն մէկ մէկ նոր գամ կամ կապ ըլլային փեսային սիրտը՝ իր և իր գաւեր, իր ազգին, աէրութեան և կրօնից հետ անքակ պահելու:

Սակայն Նէարքոսի և Քրիստոսի սէրն աւելի աեղ գտան այն սրտին մէջ. և աւելի քան զՊաւլինէ՝

սիրէր Պօղնքաոս զՆէաղքոս, և սիրուէր. և եր-
կուքն այլ կրնային իրարու ըսել (Դաւթայ պէս
վան Յոնաթանու). «Գեղեցկացար ինձ յոյժ.
» զարմանալի եղև սէր քո ինձ՝ քան զսէր կա-
» նանց». անոնց պէս ասոնց ոգին այլ կապուած
էր բարեկամին ոգւոյն հետ. և իրարքանչիւր ո-
ընէ՞յ զընկերն ըսի անչին ի-ըռա՛. և կարծեմ մեր Մե-
ղիաեան սիրելեաց արդիւնքն և կատարածն՝ առա-
ւել սիրալի և արտառուչ եղաւ քան զայլոց:

Գ

Ո՞ր արտի գլխաւոր լուցկին չէ սէր. բայց կան
արտեր՝ որ միայն սիրելու և սիրուելու համար ե-
ղած կարծուին. սիրտք՝ որ սիրով կու անանին և
սիրով կու հալին. սիրով ապրելու և սիրով մե-
ռնելու համար եղած են: Սէր, կ'ըսեմ, Հայկակ,
և չեմ հասկընար ոչ Թանձր զգայական և ոչ Թա-
ւերական կրքերը. այլ ստուրբ և նուրբ սէր, որ-
պիսի էր Նէաղքոսին.—սէր մը՝ որ էր ամանէն
(արտէն) աւելի և զօրաւոր ըլլալով հուսով զայն
պիտի ապահոէր և վերանար՝ ի բնագաւառն սիրոյ,
յերկինս. և եթէ դեռ կ'ապրէր Նէաղքոս՝ բարե-
կամին սիրով և սիրոյն համար էր այն: Քանի՛ տա-
րի քշեց այն հղօր և մաքուր բարեկամուԹիւնն.
քանի՛ տարի այն մէկ կեանքն և ոգին՝ երկու մար-
մնոց մէջ բնակեցաւ. և ի՞նչ ըրին, ո՞ւր գնացին ե-
կան սիրելիքն.—աւելորդ և պզտի բաներ են ա-
ռանք՝ անոնց բարեկամուԹեան աննման մեծու-
Թեանը քով: Պօղնքաոսի շատ հետ յանձնեց անոնց
գինուորական գործերը. զոր նա խոհեմուԹեամբ
և արուԹեամբ՝ ի գլուխ հանեց. հաւանօրէն գոր-
ծակից և մերձակից ունենալով իր Նէաղքոսը: Իսկ
ան՝ որ կնոջ և ուրիշ կենակցի հոգէ ազատ էր,
միայն զԱստուած և զՊօղնքաոս մտածէր: Իւրէնց

կենաց գեղեցկագոյն մասն (ուսկից զատ մասն այլ չունեցան), այսպէս սիրով և խաղաղութեամբ անցաւ. գրսէն այլ խաղաղութիւն էր՝ի կողմանէ տիեզերակալ կայսերաց Հռովմայ. ինչուան որ՝ի կէս գ դարուն՝ Դեկոս կայսր հալածանքի հրաման հանեց ընդդէմ քրիստոնէից. ինքն շուտով կորաւ, բայց հրամանն քիչ շատ կուս պահուեր իր պէս կարճժամանակեայ իշխող յաջորդաց աեն, մինչև յետ քանի մը տարուց Վալերիանոս կայսր նորէն սաստկացուց հրամանը. պատուիրելով դատաւորաց՝ որ ամեն ծանօթ քրիստոնեայ որ չաստ յանձն կուց զոհելու՝ անոնց գոհ ըլլայ:— Այս հալածանաց աեն կատարուեցաւ մեր Մեղիտեան սիրելեաց նահատակութիւնն. զոր պատմիչքն ոմանք դնեն այդ երկու կայսերաց աեն, և քննաբանք տարակուսին տարուոյն վրայ. եսկ ինձ կ'երևի թէ Դեկոսի աեն սկսաւ Նէարքոս աւետարանել Պօլիկտոսի՝ զհաւատս Յիսուսի, մինչև Վալերիոսի և մեր Խոսրով Թագաւորին հալածանքն եկաւ. և անոնց երկուքին ապաշուաձ տարին (260, 'ի Պարսից Թշնամութենէ) նահատակուած կ'ըսեմ զմեր Քրիստոսի նահատակքն [1]:

1 Յունք և Հայք յ'ինն յանուարի տօնեն զՍ. Պօլիկտոս, և յիշատակագիրն Հաւատարիմ՝ ինքն իսկ Նէարքոս՝ ասէ զօրն այն յառաջ քան զչորս ընդվիքտիոնին աթոց ամսոյ, կամ յառաջ քան զչորս աւուրս արաց ամսոյ, որպէս Թարգմաներ են նախնիք մեր, զարաց ամիս զուգելով ընդ յանուարի, որ յիշուի 'ի յոյն բնագրին. և անոր իդոսից չորսէն առաջն՝ է իր իններորդ օրն: Դարձեալ Նէարքոս վկայէ Թէ «ի գալատեանն և 'ի Յայտնութեան (Քրիստոսի) յետ չորից աւուրց երանելին Պօլիկտոս վկայեաց». և դարձեալ Թէ «Թաղեցաւ աուրքն յաւուր չորեքշաբաթոջ». որ ցուցանէ Թէ այն աեն այլ հոն տօնէին զգալուստ (Ծնունդ և յայտնութիւն)

Հալածա՛նք. բ՛նչ անիրաւ և անտանելի վտարանք բնութեան և սրտի. ձմարտին հաւատալ, ձմարիտը խօսիլ. անյանց անմեղ ըլլալ, մանաւանդ թէ ուրիշներու բարիք այլ ընել. և ատոնց համար՝ իբրև ամենաչար գաւազարտիլ, տանջուիլ, սպանուիլ:... Յիրաւի բնութենէ վեր ազնութիւն և համբերութիւն պէտք էր հալածուելու, և ամենազօրաւոր երկնային յոյս մը. այս երկուքն այլ աւանդեց Փրկիչն մարդկան, ձշմարիտ երանութեանց ամենէն վերջը դասելով. «Երանի՛ որ հալածեալ եղեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից»: Ո՛հ. ո՛րքան խոր և քաղցր էր այս վճիռս հոգեբուղխ ակընջաց, որ մեկէն հալածանաց սպրատուր փուշերը կոխուղ վարդից թերթից պէս սփռեց 'ի ներքև ոտից, ոչ միայն երկաթկոշիկ զօրականաց, այլ և փափկամորթ կուսանաց անգամ. որք իբրև ընդ ծաղիկս վազելով անցան ընդ հուր և ընդ սուր. և իբրև բաղանեաց ջրով լուացան իրենց ջերմաջերմ արեամբն, ուրախութեամբ և խնդութեամբ կրելով ամեն հարուած, ցաւ ու մահ. վասն զի անոնցմէ զօրաւոր է ձշմարտութեան հաւատքն և սէրն: Ա՛յսու մտօք գեղեցիկ զարմանօք խորհըրդածութիւն մը կ'ընէ ինքն մեր Նէարքոս. «Տէ՛ս, կ'ըսէ, զպքանչելի մատակարարութիւնն Աստուծոյ». յառաջ քան զգալն Քրիստոսի՝ ի փրկութիւն

Տեառն 'ի 6 յանուարի, և տօնին չորրորդ օրն է ինն յանուարի. և զի այն տարին այս օրս չորեքշաբթի էր, միայն այն հալածանաց ատեն մէկ տարի մը կայ որ Յայտնութիւնն կիրակի կու հանդիպի, և չորրորդ օրն՝ ինն յանուարի 'ի չորեքշաբթի, և է այն Քրիստոսի 260 տարին, յորում Պօղիքտոս նահատակեցաւ, հաւանօրէն և իր զուգակից Նէարքոս, և յորում սպանան Վաղերիանոս և մեր Խոսրով՝ հալածիչք եկեղեցւոյ:

մեր, ամենքն իբրև միգով պատած պաշարուած՝ այլ աւելի դէպ ի մթութեան խորը կ'երթային. եակ Փրկչին գալէն եաև՝ ամենքն իբրև թէ գահավէժ տեղէ մը վեր ցնապքեցին իրենց մոլորութենէն. նէին. «որպէս ի վախէ իմեքէ՝ ի գերոյ կուապաշտութենէ՝ ի վեր յարուցեալք»:

Ախսպիսի կռքեր արթընցան վերոյիշեալ հալածանաց առեն ի Մելիտինէ, ուր կ'երևի թէ մինչև այն առեն ոչ աստիկ հալածանք եղած էր, ոչ քրիստոնեայ իր հաւատոց համար նահատակեալ. վասն զի նոյն իսկ մեր Մելիտեան պատզաման՝ առաջին վկայ Քրիստոսի կոչուի այս կողմերս, գոնէ այս հալածանաց առեն. որ առաջիններէն աւելի ընդհանուր հրատարակեցաւ և աստակացաւ. և այս մայրաքաղաքին մէջ այլ կայսերական հրովարտաին կախեցաւ ի հրապարակս, կամ յերկրպագութենէն կռոց կամ ի մահ կոչելով զամեն նշանաւոր մարդ, և մանաւանդ զքինակերս. որոց՝ կամ ի պատիւս յառաջելու հրաւէրք կար, կամ զլուխնին կորուսանելու սպառնալիք. և թէ կ'ուզես Եկեղեցւոյ նմանաբանութեամբն ըսել, կամ նորէն ի խորս միգին և մթան իջնել ընկնիլ, կամ ի վախէ և ի գերոյ անտի՝ վեր ցատքել եկնել թռչիլ:...

Իսկ արդ ինչո՞ւ դուն ինքնին՝ որ այսպէս խորհրդածէիր, ինչո՞ւ դուս այլ թևերուդ ջուխը, չիմացար սրտիդ նեռած տեղը, – յերկինս. ինչո՞ւ չելար զոլորովին այս միգախառն կեանքէս և զբաղեցար ի լոյն անգիշեր. ինչո՞ւ կուս անոնաս կուս տարակուսիս. և մանաւանդ ինչո՞ւ այդչափ կուս տրտմիս, կ'այլայլիս, և երեսացդ հրեշտակային պարզութենէն՝ հիւանդի և ցաւագարի կերպ կ'առնուս: Ինչո՞ւ այդ պայծառ աչքերդ իբրև աթեռս լուսէն այլ խորշելով իրենց կապիճներուն խորը կուս քաշուին՝ մշուշ ու մրուր առած, և ի-

10477396

կընցած ծնօտիցդ վրայ գեռաբոյս մօրուացդ փընջ-
ջիկքն կու խուռուին. և քու խօսքերովդ խակ ըսեմ,
ինչո՞ւ ով Նէարքոս «՝ի նեղասրտութիւն եկեալ՝
» հանապազ յոգւոց հանելով լաս գառնապէս »:
Տրամութիւն՝ քու քաղցր հոգւոյդ անծանօթ
էր. արտասունք՝ քու մաքուր դիմացդ վրայ ձամ-
բայ չէին բացած. սիրտդ՝ նեղութիւն և ցաւ
գրեթէ չէր կրնար կրել, որովհետև կրկնակ երկ-
պառիկ էր, հաւակիր համաշունչ բարեկամի
մը սրտով ամրացեալ, քու Պօղիքառոսիդ սրտովը:
Չկար վէրք մը՝ որ այն սրտով չբժշկուէր. ոչ
անդուրեկան կամ պաղուրեկան մը՝ որ անոր կրա-
կով չհալէր. արդ ինչո՞ւ չես փութար երթալ դի-
մեր անոր՝ որ քու միւս Եաղ է. այլ մանաւանդ
կ'ըսես թէ սիրտդ « և ոչ սովորական խօսիցն կա-
» մէր հաղորդել Պօղիքառոսի »: — Ո՛վ սիրտ փա-
փուկ, սիրտ ղպայուն. կրնայիր արդեօք քան
զայս սաստիկ հարուածդ մը տալ թէ դու քեզի՝
թէ քու մէկիկ բարեկամիդ:...

Դ

Զատրակուսինք, Հայկակ, որ այս այլ Նէար-
քոսի սաստիկ սիրոյն ակամայ հնարքն է. արդա-
րեւ « Բո՛ւռն է իբրև զմահ՝ սէր »: Սէր մը այն-
պիսի մաքուր սրտի մէջ անած՝ որ կարծես թէ
Յովհաննու Սիրելոյ պէս Քրիստոսի կուրծքէն
ծըծեր էր իր հրեղէն աղբիւրը:... Բայց Պօղիք-
առոս՝ որ դեռ չէր ընկած այն աստուածային լան-
ջաց վրայ, դեռ չէր մարմնով ընդ մարմին Աստու-
ծոյ միացած, և ոչ հոգւով հաղորդուած ընդ Յի-
սուսի հոգւոյն, աւելի քան զՆէարքոս կ'ափշէր
շուարէր անոր անսովոր անկարծելի սիրութեա-
նը և մանաւանդ լռութեանը վրայ. սիրան տակն
ու վրայ եղած՝ կարծէր թէ այնքան տարտան

բարեկամութիւնէ քաղցրութեանց փոխանակ՝ յանկարծ ամենածանր դառնութիւն մը պիտի գայ. կու խռովէր, կու լար ինքն այլ, և բիւր անգամ կու հարցնէր պատճառը: Նէարքոս՝ պատասխան անգամ չէր տար կամ չէր կրնար տալ: Պօլիկատոս երբեմն սախելով՝ երբեմն ինքն այլ լռելով, մէկ մը իբրև յուսահատ, մէկ մ'իբրև արտաբեկ կ'երդուընցնէր նորէն կու հարցնէր. Չեմ կրնար հասկընալ՝ Նէարքոս, այս ինչ գործ, ինչ մտածութիւն է. ոչ բարկութեան նմանի ոչ տհաճութեան..: Ակդեօք իրաւ կրնայ ըլլալ, կրնամ հաւատալ որ Նէարքոսի սիրտն պաղի՛ւ Պօլիքատեայ. կրնար կարծել Պօլիքատոս՝ որ Նէարքոս իրեն հետ չխօսի, իրմէ գաղտնիք պահէ: Ցետ այնչափ ժամանակաց անարժան գտուեցայ քու սըրտիդ: Բայց ըսէ գոնէ՝ ինչ բանով, ինչ կերպով. « զինչ տրտմութիւն ընկալար յինէն երբէք, կամ որ » վհատութիւն եղև քեզ յինէն»: Նէարքոսի սիրտն որ սիրելոյն ամեն մէկ խօսքէն նոր նոր կու խոցուէր կու կարկէր, ոչ կրնար դիմանալ և ոչ կիրքը բացատրել. շատ անգամ շրթունքը շարժեց և ձայնն հեկեկանաց մէջ հեղձամղձուկ թաղեցաւ: Երկուքն այլ իբրև առանց վերքի վիրաւորք, առանց կռուի զարնուածք՝ կու տանջուէին. մէկ մը պլուխ պլխի տուած, մէկ մը երեսանին իրարմէ դարձուցած՛ի լալ և հառաչել. մինչև հազիւ սիրտն և շունչը այնքելով սկսաւ ըսել Նէարքոս. Տըրտմութեանս պատճառը կու հարցնես. կրնայ ուրիշ կամ աւելի պատճառ մ'ըլլալ սրտիս՝ քան զքաժանումն:...

Ի՞նչ կայծակ էր որ Թռաւ Նէարքոսի բերնէն: — Բաժանո՞ւմն, կանչեց Պօլիքատոս: — Բաժանում, կրկնեց Նէարքոս:. Կայսերական հրամանքն սակէ եաև մեկմեկէ զատեն պիտի զմեզ. այսուհետև Նէարքոս և Պօլիքատոս մեկ չեն...

Թող, լուծնք հեռանանք, որ մեր սէրն աւելի չտան-
ջէ զմեզ:...

Վէր ցատքեց Պօլիքտոս՝ կրակէ աչք և շըր-
թունք չարժելով. Այդ ի՞նչ անակնկալ խօսք է
որ կու լսեմ քեզմէ, Նէարքոս. մինչև հիմայ գի-
տէի և գիտեմ որ մէկ բան մը, միայն բան մը կըր-
նար զմեզ զատել իրարմէ, մահն. բայց ծ՛է կայ-
սերք կրնան մեր բարեկամութիւնը բաժնել, և
ոչ աչխարհք մեր սէրը մարել. Պօլիքտոսի անկա-
րելի է բաժնուիլ ի Նէարքոսէ, բայց եթէ մա-
հուամբ: — Այն ատեն խորունկ հառաչանքով
մ՛լսաւ Նէարքոս. Ա՛հ, բնական մահուանէ ա-
ւելի զօրաւոր բան մը կայ՝ որ զմեզ կրնայ բաժ-
նել իրարմէ:... Դարձեալ ցնցեցաւ Պօլիքտոս,
դարձեալ թևերը թօթվեց, պլլուեցաւ Նէարքո-
սի վզին. կու գար գորովքը կ՛ալէին կ՛եր-
գուընկերնէր որ ըսէ պարզաբար ինչ էր միտքն.
ինչ բան կրնար ըլլալ մահուանէ զատ և անկէ
զօրաւոր՝ որ զնորէնք իրարմէ բաժնէ: Նէարքոս՝
տրտում պէս և Թերևս աւելի այլ լալով հեկեկա-
լով՝ ձայնը ու սիրտը կու կտրտաէր. քերնով
չկարնալով՝ կ՛ուզէր աչքերովը խօսիլ սիրելոյն
հետ. և անոր խռովութենէն կրկին ու կրկին խառ-
վելով՝ դողալով, և ոչ ոտքի վրայ կրնալով կենալ՝
ընկաւ ի գետին: Պօլիքտոս այլ աւելի շուարած
ու այլայլած՝ սկսաւ անտուղտ կասկածանաց եր-
թալ. բայց մէկէն խիղճն կ՛ըսէր. «Ոչ ինչ ուռնիմ
» կարծես չարի ի լաւ բարս Նէարքոսի». սա-
կայն չըլլայ թէ Թշնամի մը խօսք խառնած կամ
պղտորած ըլլայ միտքը. — այս այլ անկարելի է իր
բարի սրտին. — չըլլայ թէ մէկն չարախօսութիւն
ըրած ըլլայ Նէարքոսի վրայ, կամ իբրև քերնէն
անպատշաճ խօսք մը լսած, կամ իբրև անհաւա-
տարիմ իր խոստման. կամ թէ պարտքի տակ ըն-
կած ըլլայ: Այս և այսպիսի խօսքեր կ՛ըսէր ու

Հարցընէր Նէարքոսի, կու խոստանար իր ամէն ստացուածքը, ընտանիքն և կեանքն անգամ մինչև էն տալու՝ ի սէր նորա, որուն արդէն իսկ նուիրած էր:

Այս խօսքերէս գրեթէ ամաչելով՝ վեր ելաւ Նէարքոս, և գարձեալ կէս համարձակ կէս վախվըխելով ու անհնարին տրամութեբ ըսաւ. Մեր բաժանման օրն հասած է. — վաղը. — ժամանակին կու սպիպէ, պիտի բաժնուինք, վասն զի վարքով ու ձևով նման չեմք իրարու... Թէ և սիրելիք:

— Պօլիփտոս յիրաւի խռովելով և խոցուելով այս խօսքէս, իմացաւ որ Նէարքոսի վրայ յիմարութիւն չէ եկածն, այլ սրտին վրայ ծանր բան մը կայ, որ այնչափ կու տանջէ զնա. ինքն այլ ձայնը վերուց, ու սիրով սրտմտած կու կանչէր կու սպիպէր որ ըսէ շուտով ու յայտնէ՝ ի՞նչ էր իրենց մէջ մնած տարբերութիւնն՝ որ վաղը զիրենք պիտի բաժնէր. ապա Թէ ոչ, կ'ըսէր հիմայ հոս ոտքիդ տակը կ'ընկնիմ կու մեռնիմ: — Վերջապէս Նէարքոս ջուր մ'այլ կրմկրմալէն ետև ըսաւ. Կայսերական խնամատարութեան ելած է քրիստոնէից վրայ, կամ զոհելու է կամ մեռնելու. ես քրիստոնեայ եմ, դու գիտես, գիտեն ուրիշներն այլ. բոլոր աշխարհքիս համար չեմ Թողուր զիս քեզ Պօլիփտոս, բայց Պօլիփտոսին համար չեմ կրնար Թողուլ զՔրիստոս:... — Ո՛վ օրհնեալ սիրելի անձն, կանչեց Պօլիփտոս, նոր կրակով մը վառուելով և փայլելով, ինչո՞ւ հեռանաս՝ի Պօլիփտոսէ՝ Քրիստոսդ չԹողլու համար. մինԹէ միայն քո՞ւդդ է Քրիստոս... Ես այլ այսօր՝ դու ինծի չեկած՝ տեսայ այն Յիսուս Քրիստոսը, որ եկաւ վրայէս հանեց այս սլտեղի զինուորական քլամիտը, և գեղեցիկ լուսանման զգեստ մը հագուց, ու Թեւաւոր ձի մ'այլ տուաւ ինծի, գերագոյն զինուորութեան գաս անցընելով զիս:

Զայս որ լսեց Նէարքոս՝ զմայլեցաւ. արտասունքն աչքերուն մէջ՝ ի կայծակ փոխուեցան, տատրակ սիրան արծիւ դարձաւ. բոլոր հասակին ուժն՝ և բնութենէն աւելի զօրութիւն մ՚այլ առած, ոտքին, կանչեց, դու այլ Ճանչցար զԿրիտոս՝ Ախաւուած. իրաւ է որ Պօլիքսոս կու հաւատայ Կրիտոսի: — Եւ երբ չէի Ճանչցած ես զինա. կամ երբ անհաւատութիւն ցուցած էի, ոչ Նէարքոս. երբոր դու քրիստոնէից վարքը կու պատմէիր՝ միթէ ես չէի հաւնիր. երբոր Կրիտոսէդ աւետարանը կարդայիր՝ ես չէի զմայլիր. երբ իր մահը կու նկարագրէիր՝ ես չէի լար դոլալով:.. Իրաւ՝ անուամբ և ընկերութեամբ չէի քրիստոնեայ, բայց ինծի արարիչ և տէր՝ զԿրիտոս միայն կու Ճանաչէի. Կրիտոսի միայն կ՚ուզէի ծառայել, և անոր հակառակ կանգնած ատա և խայտառակ կուռքերը անարգել և մերժել:

Նէարքոս ուրախութենէն կու դոլար կու սարսէր. բայց սիրոյն սաստկութեամբն ինչուան՝ ի թերահաւատութիւն կ՚երթայր. Այդ ըսածնեդ ոտդ ժամանակն է, կ՚ըսէր, ոչ Պօլիքսէ. հեթանոսաց հրամանքն հրաժարակեցան, և որոշիչ վճիռն կարուած է. կամ զոհել կուց կամ մեռնիլ:.. Ո՛հ, Պօլիքսոս, կու վախեմ, կու վախեմ թէ զքեզ կորսընցընեմ. դու դեռ կատարեալ քրիստոնեայ չես. եթէ վարը սոխակուխս զոհելու կուց՝ արդեօք պիտի կարենաս դէմ կենալ, թէ... հնազանդիլ կայսերաց... և անով բաժնուիլ՝ ի Նէարքոսէ և՝ ի Կրիտոսէ:..

Ահա խօսքը լսելուն՝ Պօլիքսոս երեսցաւ իր բոլոր եռանդուն բնութեան և բարուց մէջ. աչքը՝ մէկ մը յերկինք նետեց, մէկ մը փայլակելով Նէարքոսի վրայ, և անոր ձեռքը բարկութեամբ մը թօթուելով, Հնոյ ի՛ իմանամ, ըսաւ, միտքդ. այս էր քու տրտմութեանդ և վախիդ պատճառն.

այս կարծիքն ունէին Պօլիկատոսի վրայ. այսպէս Ջանչնայիր բարեկամդ, յետ տեսանելոյդ թէ ինչ ախորժով կու լսեմ և կ'ընդունիմ քու բանդ ներդ քրիստոնէութեան վրայօք, կու վայլէր որ Պօլիկատոս 'ի Նէարքոսէ սաանկ խօսքեր լսէ: Եթէ այսպէս սրտով միշտ զերար սիրեցինք, միթէ հոգով կրնամք բաժնուիլ, և մարմնաւոր բարիք ուսեր հոգևորէն վերը դնել: Եթէ հասեր է ժամանակին, ինչու կ'ուշանամք. ինչու պարտքերնիս չկատարեմք. ինչու չյանդիմանեմք չխայտառակեմք զկռա, և չբարձրացընեմք զԿրիստոս Աստուած:...

Ո՛վ առաքինի և վկայավայել խօսուածք. ինչ անբացատրելի ուրախութեամբ լցնէք Նէարքոսի սիրտը. որ «որպէս թէ 'ի քնոյ ինչ զարթուցեալ » յերանելոյն 'ի Պօլիկատոսի բանիցն, և զիւր հո» գին և զմիտան վերսանին կանգնէր, և սաէր առ » Սուրբն. Թէ ինձ՝ ով Պօղիոքաէ, ոչ մեծութիւն » և ոչ զինուորութեան պատիւ, ոչ կեանք աշ» խարհիս այսորիկ պատուականագոյն Թուին՝ » քան զկեանն Քրիստոսի. այլ զանմահութիւն » և զփրկութիւն և զյաւիտենականն՝ փոխանակ » մարդկային և ժամանակեան կենացս՝ յա» ռաջ պատուել հաճոյ է ինձ »:

Ե

Խօսակցութեան սկսած առեն՝ Նէարքոս կարծէր թէ մեծ նահատակութեան համար ինքն բանական փորձ ըրած է, և պէտք է զՊօլիկատոս այլ կրթել և ըմբիշ ընել. հիմայ այն սառիճան կարողութեան նշան տեսաւ անոր վրայ, որ կրնային երկուքն այլ հաւասարապէս մրցիլ.

Եւ ինուագիլ հանգիստաւորք եւ ի մըրցանըս դիմագրաւք:

Ո՛հ, թէ կարելի էր այն Արկադացի մըցող հովուաց դասուղ մեծ քերդողը հոս հրաւիրել, եր խօսքն ալլաբանել և ըսել.

« Մատիր այդ ո Մելիբէէ, զի քեզ խոյդ եւ նոխազաց.
Եւ թէ կարես վայր մի դըլալ՝ ևկ հանդիր աստ ընդ հովանեաւս »...
Ուր Մելասայ ճապուկ իշամբ աքօղեալ քծըննին խաղք դալարիք,
Եւ արքազան ի կամարաց մեղուաքաստակ հծծեն հրեշտակք.
Զի մեծ պայքար է աստանօր ընդ Պօլիքառեայ Նէաղրքոսի.
Այս ցիսուսի են կամք՝ մըցել նոցին սիրով փոխանակաւ [1]:

Եթէ քիչ մ'այլ երկայն ապրած ըլլայիր, կամ քիչ մ'այլ ուշ յաշխարհ գալով՝ տեսնէիր քու հռչակած Կումեայ Սիբիլլայիդ չէզին ժամանակը և նոր գարուց կարգը, Կուսին վերադարձը, և նոր ապգի մը յերկինց վրկուելը, անոնց մէջ պիտի տեսնէիր այսպիսի սուրբ սիրով և քու դիւցազանցմէ գեղապոյն զօրութեամբ մըցումներ. և արդեօք ինչ զարմացմամբ պիտի մոռնայիր քու Թիրսիտ և Ալեքսէ, ով քաղցրերգակ Վիրգիլ, և ինչ անոյշ տաղերով պիտի չանայիր աւանդել մեր մելիսացի մըցողաց փոխադարձ մենախօսութիւնը. յորում ոչ քու Արկադացւոցդ պէս մէկն կու յաղ-

1 Huc ades, o Melibœe: caper tibi salvus et hœdi;
Et si quid cessare potes, requiesce sub umbra...
Hic viridis tenera prætexit arundine ripas
Mincius, eque sacra resonant examina quercu...
Et certamen erat Corydon cum Thyrside magnum...
. . . . Alternos Musæ meminisse volebant.

10477396

թէ և մէկն կու յաղթուի, այլ թէ մէկն յաղթէ և թէ մեկայն. ճշմարտապէս երկաքանչիւր հաւատարմօրէք։

Նէարքոս զՊօլիքառս փորձել էին և հաւնել էին եաւ՝ կու ծնայր որ Պօլիքառս այլ զՆէարքոս փորձէ, երբ նա յաւիտենականութեան համար ժամանակաւոր կեանքը արհամարհել կու խոստանար. «Եւ ո՞չ խնայես դու, ով Նէարքոս, յայդ» պիսի պատիւդ», կ'ըսէր։ Պարզամիտ սիրելին՝ կարծելով թէ իրաւցընէ կ'ըսէ Պօլիքառս, Ի՞նչ պիտի ըլլայ այս պատիւս և ասկէ մեծերն այլ, պատասխանեց, այն պատուին քով՝ զոր ես 'ի Քրիստոսէ ունիմ. եթէ գիտայիր թէ ո՛րչափ յառաջ տարբեր է զիս Քրիստոս իր գինուորութեան մէջ։ — Գիտեմ՛ գիտեմ, կանչեց Պօլիքառս առանց պատրուակի, քու յառաջադիմութիւնդ այլ՝ որ 'ի Քրիստոսէ, քու հանդերձեալ պատիւդ այլ անկէ. բայց հիմայ ես քեզմէ յառաջադէմ պիտի ըլլամ. «քանզի երկնաւոր և թագաւորական քալ» միդ 'ի Փրկչէն՝ 'ի ձեռն յայտնութեանն՝ ընկալ» լայ այսօր»։

Իսկ յետ մրցանաց և փորձանաց՝ երբ երկու բարեկամքն այլ առջինէն աւելի հանդարտեցան վատահացան կապուեցան իրարու հետ երկնաւոր սիրով, Պօլիքառս հեզաբար և աշակերտաբար սկսաւ հարցընել Նէարքոսի քանի մը տարակոյսներ, իբրև իրմէ վեր և հին քրիստոնեայ վարպետի. «Ես քեզ կամիմ գլուխ մի հոգևորական» քանի հարցանել». մէկ մը՝ որ դեռ բաւական պատրաստութիւն չէր տեսած, և թերևս աւեն այլ չըլլար քրիստոնէական սուրբ խորհրդոց հաղորդուելու. և եթէ այնպէս 'ի նահատակութիւն երթար, արդեօք ընդունելի կ'ըլլար 'ի Քրիստոսէ։ — Նէարքոս մէկէն լուսաւոր մտքով և բաց սրտով սկսաւ քաջալերել և ապահովել

գնա, թէ հաւատոց զօրութիւնն բաւական էր այնպիսի առեն. և՝ ի սուրբ գրոց օրինակներէ բե-
րաւ. « Եւ բազումք՝ ի հեթանոսաց մարդիկ՝ կար-
» գին՝ ի զօրականութիւն Քրիստոսի. քանզի ա-
» հաւասիկ առհասարակ ամենեցուն բացեալ են
» դրունք երկնից. և անմահ էրիւնէն մօտ՝ ոչ էր-
» բէք ֆակեցաւ. թէպէտ և՝ ի սակաւ ժամու ոք
» հաւատասցէ՝ մեծ վարձս ընդ սակաւսն ընդ
» այնորիկ և ընդ ձշմարտի հաւատոցն՝ ընդունի »:
Յիշեցուց Քրիստոսի ըսած մշակաց առակն այլ, *որ թէ առաջին ժամուն եկողներն և թէ մեա-*
ան ժամուն՝ հաւասար վարձք առին: — Իրաւ
իրաւ, կու յիշեմ, ըսաւ Պօղնքառոս, որ ուրիշ ան-
գամ այլ այս բանս ինծի կարդացեր էիր յաւե-
ատարանէդ. « Թէ մի ժամ վաստակեցին մշակքն,
» և ընդ այնոսիկ՝ որք զաւուրն ծանրութիւն բար-
*» ձին՝ հրամայեաց Քրիստոս տալ զվարձան »: Սատր
վրայ բերաւ Նէարքոս աւազակին պատմութիւնն այլ, որ Քրիստոսի հետ մեռնելու խաչին վրայ՝ հաւատաց անոր. և « Քրիստոս՝ ընդ փոքր և ընդ*
» անպատճոյճ հաւատոյն՝ որպիսի մեծամեծս խոս-
» տանայր նմա և ասէր. Դու այսօր ընդ իս ես՝ ի
» դրախտին: Տեսանէս ով Պօղնքառոս, զինչդ փոքր
» մի հաւատք որպիսի՛ մեծ աւետիս պարգևէ. ա-
» հաւասիկ հաւատք ըստ աւետարանին ասա-
» ցուածին, թէպէտ և փոքր՝ հանդիպին ըմբռըռ-
» վին իսկ զլերինս փոփոխել »:

Սուրբ խորհրդոց վրայ ապահոված՝ Պօղնքառոս երկրորդ տարակոյսն այլ հարցուց. « Եւ ի՞նչ կա-
» րօղութիւն, ով Նէարքոս, առանց մկրտութեան
» այսպիսի իրաց դիպել մարդկան: Ասէ ցնա Նէար-
» քոս. Ամենայն ինչ սուրբ է արբոց, որպէս և
» աստուածային գիրք ասէն »: Օրինակ այլ կու բերէր՝ ի Քրիստոսէ բժշկութիւն խնդրողները, յորոց միայն հաւատք պահանջէր Քրիստոս և ոչ

ակրատութիւն կամ խորհուրդներ. այսպիսի նեղ և հարկի ժամանակ՝ սիրոյ և մահուան ակրատութիւն մեծագոյն ևս էր քան զկնոյն: « Ահա այսոսիկ երա-
» նելին Պօղոքախոս յորդորէր զհոգին իւր, և երբ-
» կրաւոր իրաց՝ ի մոռացումն գայր. գոչէր յան-
» կարծօրէն և ասէր. Թէ ես ընդ Քրիստոսի միա-
» ւորեցայ՝ ի սկզբանէ. և նա պարտի ինձ հոգ
» տանել և ինամել. քանզի ես՝ ի բաց հրաժա-
» րեցի՝ ի մարդկային իրացս, այսուհետև պարտ
» է ինձ վասն Քրիստոսի վկայել»: Եւ հոս կու
յէշէր՝ իբրև՝ ի քնոյ արթննալով, որ օր մը իր հեթանոս զօրականներն վկայեցին, թէ զՔրիս-
տոս կու տեսանեն լուսաւոր կերպարանօք Պօղիք-
տոսի քով, և իր երեսներն այլ անոր Հառագայթ-
ներէն լուսաւորած էին. Ուրեմն կ'ըսէր, քանի-
հաւատան Պօղիքտոս, Քրիստոս՝ ի սկզբանէ ընտ-
րեր է զիս և կու հրաւիրէ յերկինս. այլ ինչո՞ւ
կ'ուշանամք. « Արդ ժամ է մեզ երթալ, և ըն-
*» թեռնուլ զանարժան հրամանս Թագաւորին»:

Զայս ըսելով հոգեվից և վառվռուն երիտա-*սարդն Պօղիքտոս՝ յետին անգամ մ'այլ գրկելով իր ամենասիրելին, և հաւատարմութեան ուխ-*տերնին կրկնելով, այնպէս ջուտ արացաւ Թռաւ-*այն մրցանաց տեղէն, որ Նէարքոս կարծեր Թէ արդէն բարեկամին հեծած ըլլայ Քրիստոսի իրեն տուած Թևաւոր ձիոյն վրայ, զոր կու ճանչնար նշան անոր վկայաբար յերկրէ յերկինս վերանա-*լուն. հիմայ կու հաւատար իր սրտակցին ըսածին, Թէ « Նախ քան զքեզ ես յառաջագէմ եղէ » ՚ի Փրկիչն»: և Թերևս Թէ կամաւ Թէ ակամայ հետևակ մնայր Նէարքոս, և չէր կրնար հասնիլ անոր՝ որ իր կրակէն վառուած՝ իրմէ աւելի բո-*ցով ծխով կու բռնկէր փայլակէր կ'երթար այրե-*լու լափելու:...

Որպէս դու ինձ ի գիմագրաւ տալ զանձն
ի վտանգ կամակար:

ՊՕԼԻԿ. Զոհք ի բագնին կան ի զենուլ, չևք յա-
մէլոյ ժամանակ.
Օ՛ն, Աստուծոյն Ճշմարտի անդրը Ճե-
պեսցուք նահատակ.
Երթիցուք տալ ըզնաղալիկըն չանթ՝ ո-
տից ի կոխան,
Որով ըզփայտըն փուտ զինէ դիւրահա-
ւատըն խուժան:
Օ՛ն, երթիցուք բանալ ի լոյս զաչս՝ առ
ի մահ կուրացեալ
Եւ փչեսցուք ըզկուռըն տուտ ըզկոփա-
ծոյ եւ զհրահալ.
Երկնազդեցիկ ի մեզ հըրոյ՝ լիցուք կե-
նօք մեր Ճարակ.
Հարցուք զերկնից ըզպատերազմ՝ թո-
ղեալ ինա զյաղթանակ:

ՆԷԱՐՔ. Օ՛ն, երթիցուք մեծահանդէս փառացն
երկնից տալ ըզցոյց,
Եղեալք գործօնք հաւատարիմք կամացն
առ մեզ զոր եցոյց:

Է

Մինչեւ Նէարքոս զՊօլիքարոս գտած՝ բոլոր Մեղիտինէ անոր ըրած գործէն տակն ու վրայ եղած՝ մեծ շփոթութեան, աղաղակի, զարմացման և զայրացման մէջ էր. ձայնն, ստիպմունքն և սպառնալիքն հասան մինչև ՚ի կուսակալն և «աներ նորա Փեղիքս, որ հալածիչն կարգեալ էր
» յանօրէն Թագաւորացն. յիմարեալ հիացեալ
» լինէր ընդ իրան՝ որ ՚ի սրբոյն Պօղիքարոսէ գոր-
» ծեցան »: Վասն զի այն սրաթեւութեամբ՝ որով
Թռաւ իր բարեկամին գրկէն, հասաւ Պօղիքարոս

'ի մեծ հրապարակ քաղաքին, և տեսնելով կա-
խուած կայսերական հրապուրիչ հրովարտակը,
աչքին հետ ձեռքը ձգելով՝ շուտ մը պատռեց գը-
րուածը. պատառը վար չձգած՝ տեսաւ որ ուրիշ
կողմէ քուրմք և պաշտօնեայք գառաւորին տան-
երկու նկարեալ կուռքեըն առած, ծաղկիներով և
դալար ճիւղերով զարդարած կու բերէին մեհենից
մէջ և բագնաց վրայ կանգնելու, յորդորելով
խառնիճաղանճ խեղճ ժողովուրդը յերկրպագու-
թիւն: Զգուանաց և անարգանաց ծիծաղ մը փըր-
թուց դիւցազնացեաըն Պօլիքտոս. բազմութեան
մէջ նետուելն, բոլոր կուռքեըն այլ մէկիկ մէկիկ
յափշտակել 'ի գետին զարնել և ջախջախելն՝
մէկ ըրաւ: Ինչափ բազմութիւն քրմաց, զի-
նուորաց և ժողովրդեան՝ էկրցան մեր մէկ նախա-
տակին դէմ կենալ. հրեղէն անձ մը, հրէշ մը,
նոր աստուած մը, չեմ գիտեր ինչ կարծէին, աս-
կային, պաղէին: Բայց երբ կոտրտած կուռքեր-
նուն վրայ կոխկրտտելով անցաւ եկաւ սուրբն, ու
կրակոտ աչօքն կուռնայէր թէ կայ ուրիշ ընե-
բան մը, ապշածներն արթննալով, մանաւանդ թէ
աւելի քնանալով չարաչար ապշութեամբ, սկը-
սան խայտառակաբար չաստուածնեընուն չար-
դուիլը լալ, բողոքել և վրէժ պահանջել 'ի Պօլիք-
տեայ: Անոնք Փելիքս վրայ հասնելով տեսնելով
և լսելով եղածը, ուրիշներէն աւելի անձկրկած,
կերպ կերպ կրքերով պաշարուած՝ նախ և առաջ
սկսաւ յուսահատաբար ինք զինքն ոլբալ՝ որ զփե-
սայն պիտի կորուսանէր. և այս երկու անգամ
է, կ'ըսէր, որ այսպէս ձղակոտոր անզսաւակ կ'ըլ-
լամ. « Վրիպեցայ 'ի յերկաքանչիւրոցս, և այժմ
» անզսաւակեցայ ես Փելիքս. քանզի առաջինն
» վախճանեցաւ, և ես պերճացեալ պարծէի փե-
» սայիւս. իսկ այժմ չտեսանեմս անզսաւակե-
» ցայ. քանզի ոչ ոք յայսմհետէ ոլորմել կարէ-

» ցէ Պօղոքսիոսի, ոչ ասուածքն և ոչ ինքնա-
» կալ Թագաւորքն. որ զայնպիսի իրս յանդգնե-
» ցաւ առնել, և զամենայն աստուածքն մեր յա-
» նիրաւի փշրեաւ իսորտակեաց »: Ա յս խօսքերէս
և պատմութեան ուրիշ նշաններէն պէտք է իմա-
նալ՝ որ Փեղիքսայ առաջին կորուսան ուրիշ փե-
սայ մ'էր, առաջին այր Պաւլինեայ, ուսկից դե-
ռաբոյս զաւկներ այլ ունէր. զորս որդեգրեց Պօ-
ղիքսոսի՝ այրն մայրերնին առլով անոր 'ի կնու-
թիւն. ասոր համար պատմութեան մէջ Թէ Պաւ-
լինեայ զաւակ կու յիշուի, Թէ Պօղիքսոս ներ-
քոսի տխրութեան և ծագնապին առեն կ'ըսէ.
« Թէ որդի իսկ ունէի՝ ոչ ինայէի յաղագս սի-
» րոյն Նէարքոսի, նա և նուազ ևս համարէի զնա՝
» քան զսէր նորա. և յառաչադէմ ունէի զսէրն,
» ամբողջ պահելով և անվնաս քան զամենայն[1] »:

Պօղիքսոս ժողովուրդէն աւելի իր հարկևոր և ալևոր աներոջ վրայ ցաւօք ծիծաղելով՝ ըսաւ. Եթէ ես չստուածներդ չարդեցի՝ ըսել է որ շատ սակաւ անպիտան բաներ են եղեր. Թէ որ ուրիշ այլ կայ՝ շուտով բերել տուր, որ զանոնք այլ չնչեմ: Իմացաւ Փեղիքս որ զՊօղիքսոս անկա-
րելի է համոզել, որուն սիրտը արդէն կու ճանչ-
նար, բայց հալածանաց հրաման չըլլալուն հա-
մար՝ կու լռէր. հիմայ՝ իբրև յեսուին փորձ և հը-
նարք գնա չարժելու, յորդորեց որ հանդարտի և
գոնէ յեսուին հրաժարական մը տայ ինոջը: — Ի՞նչ
կին, ի՞նչ զաւակ, կանչեց Պօղիքսոս. եթէ Պաւ-
լինա ինձի հաւան և ընկեր է՝ Թող ինծի պէս ընէ
և գայ իմ հետս. ապա Թէ ոչ՝ ինծի բաւական է իմ
'Դրիսաոսս. սկզբնիկդ Թող քեզի ըլլայ և կուռքե-
րուդ: Փեղիքս յուսահատ արամաւթեամբ և ար-

1 Թող զայս այլ գիտնամ մեր կամ օտար Գոռնէլն. Թէ և ես չեմ համարձակիր բանաստեղծից Թևերն ամփ ոփել:

ցուռնքով դարձուց գլուխը: Սկի՛ն երեսդարձու-
Թիւնն նշան մ'եղաւ իր պաշտօնէից. որք իբրև
վրէժինդիրք չաստուածոց և կայսերայ՝ պաշա-
րեցին զՊօլիկարտոս. և «կոձկամբն [1] իւրեանց ան-
» ողորմն ծեծէին զբերան նորա »: Իսկ նա զեւ
վարդաթափ շրթամբքն կու սոխակը զաներն՝ որ
փուճ սեղ չլայ և զինքը էյորդորէ կնոջ և զաւա-
կաց անուամբ. այլ կամ իրեն չեառևի, կամ կայ-
սերայց հրամանը կատարէ:

Աւաղ, կանչեց աւաղելին և ոչ իր անուանն ար-
ժանին Փեղիքս. — աւա՛ղ Պօլիկարտոս, որ զքեզ այլ
քրիստոնեայք մոլորեցուցին: Եւ իր մոլորահին
դուստրը կանչել տուաւ: Պաւլինէ հերարձակ
լալով վազելով եկաւ, սկսաւ ողբալ և հօրը պէս
աւաղել իր ամուսինը, որ այնպէս անակնուռնելի
գործով 12 չաստուածները մեկէն ջարդեր էր:
Իսկ սուրբը վկայն ծիծաղելով անոր ըսածին վրայ,
եթէ այդ 12 չաստուածոց ջնջելովն, ըսաւ, ան-
աստուած մնացիր, եկո՛ւ Պաւլինէ, ցուցընեմ քե-
զի ուրիշ և ճշմարիտ Աստուած մը, որով կարե-
նաս ինծի պէս արհամարհել այս անցաւոր կեան-
քը և յաւիտենականը ժառանգել:.... Հապա՛ւ
այս ձայնս Պաւլինեայ սրտին խորը, և շարժէց
հոգին միանալու որուն հետ որ միացեր էր երբեմն
մարմնով: — Քերդոյն կու հաւանի և կու հաստա-
տէ զայս. մենք ամենայն սրտով կու փափագիմք.
բայց պատմութիւնն լռէ:...

Սակայն թէ ոչ աներն և կինն՝ բայց Պօլիկար-
պի խօսքերը լսողներէն շատերն հաւանեցան իրեն
և հաւատացին՝ի Քրիստոս, և զարմացմամբ քա-
ջալեր կու տային իրեն: Իսկ ինքն իր բնատուր և
շնորհատուր զուարթութեամբն և համարձակու-
թեամբն կ'ըսէր անոնց. Մի տարակուսիք ոչ ըն-

1 կոնտակտուխ գաւազան կամ ուռն:

կերջք, որ ես անխռով եմ. վասն զի քովս կու առեմ
նեմ երիտասարդ մը՝ որ ամեն վախ ինծմէ կու
փարատէ, և զիս երանելի կեցոց կու հրաւիրէ:
Ա յս խօսքերս ուշադիր որ կ'ունկնդրէին և գո-
վեստով կանչել կու տային հաւատացեալց,
այնչափ անհաւատները զկծեցընէին. որք և գան-
գատելով թէ Պօղնքտոսի աւելի խօսիլն և ապրիլն՝
քրիստոնէից պարծանք և իրենց նախատինք կ'ըլ-
լայ, սուիպեցին զդատաւորս և զԹէշուսան Փեղնքս՝
անոր մահուան վճիռը տալու. որոյ վրայ ամե-
նէն աւելի ինքն Պօղնքտոս գոհ ըլլալով՝ իբրև յաղ-
թանակի կառաց վրայ ելնելու կու վազէր կ'ե-
թար խայտալով ինծաալով իր կատարման տեղը...:

Բայց մէկ մ'այլ յանկարծ կանգ առաւ. և
այն խառն'ի խուռն բազմութեան վրայ աչքը փայ-
լակելով՝ ինչուց մէկի մը վրայ միայն՝ իր սիրտոտը
կայծակը. և. — Ներկ ինծի Սուրբն և արբոյն ըն-
կերն այլ, եթէ անտուրբ բանտատեղծի մը միտքը
Թողով՝ բուն խօսքը նրենց վրայ Թարգմանեմ. —

« Նա եւ ի ջոկըս խուռներամ պատանեաց
Երթայր՝ զչքնաղըն կարդալով Նէարքոս [1] »:

Նէարքոս՝ մարմնով լուռ, այլ սրտիւ և հոգւով
բիւր բերան եղած՝ քայլ առ քայլ հեռուանց հե-
տևելով՝ կու դիտէր կ'ազդէր սիրելոյն: Հոս ինք-
նին չդիմանալով կ'ըսէ իր պատմուճէ մէջ. « Իսկ
» Նէարքոս զբարեկամուհին սիրոյն ոչ երբեք
» մոռանայր. քանզի էին յերկոսին մարմինն՝ մի
» ոգի և մի կեանք: Յայնժամ հայեցեալ վկայն
» ի Նէարքոս՝ ասէ ցնա. Ողջոյն ընդ քեզ. և գան-
» ճասէլի սրտակուռիւնն էմ և ջո՝ չիշէա էդբայը: Եւ

1 Cum per obstantes juvenum catervas
Ibit insignem repetens Nearchum.

Horat. Գ:

» զայս զվերջինն զձայնա՝ իբրև զկնիք Թողոյր Նէարքո
» քոսի: Եւ ինքն՝ կատարի սրով »[1]: Կնիք արժա-
նաւոր անունման սիրոյն ՚ի վերայ սրտի բարեկա-
մին, յիշատակն իրենց խոստման. զոր ինչուան
երկնից պատուանդանին վրայ այլ հաւատարմու-
Թեամբ պահեց իր ծոցը՝ յառաջադէմն Պօլիքարոս,
և աւանդելով իր սրտակցին, Նէարքոս և Քրիս-
տոս անուանց խառնուԹեամբ՝ աւանդեց զհոգին:
Ա յսպէս քրիստոսատուր ձերմակ Թևաւոր ձիոյն
վրայ հեծած, մէկ Թռիչքով՝ Թողլով իր կարմրա-
Թաթաւ կայտառ պահարանը (մարմինը), հասաւ
յօԹեվանս Հօրն երկնաւորի, իր մէկիկ երկրա-
ւոր սիրելոյն համար այլ գահ և առագաստ
պատրաստելու և փուԹացընելու հոն:

Ը

Իսկ Նէարքոս որ բարեկամին կենակցուԹեան
առեն մի ոգի և մի կեանք կարծէր զնա և զինքն,
հիմայ մարմնով միայնանալուէն՝ երկու գոտաւ զին-
քը. մէկ մասն յերկինս՝ ընդ հոգւոյ սիրեցեալին,
ուրախ, գոհ և երջանիկ, անոր յաղԹուԹիւնը
երգելով և պարծելով. իսկ միւսն՝ յերկրի, սըր-
տահար, տրտմազգեցիկ և դողդղալով՝ իր բարե-
կամին բաժնուած մարմնոյն քով:... Ո՛հ. ինչ
տարբեր և անկշիռ էր առաւօտեան իսկակցու-
Թեանց և գրկածուԹեանց վայրկեանն (երբ եր-
կու կայտառ գլուխք տաք տաք իրարու սրտով
կու տրոփէին՝) այս երեկոյեան վայրկենէս. յո-
րում գլխոց մէկն միայն կանգուն՝ իբրև անԹափ
բաժակ շուշանի որոյ մէջ նուռն ծաղիկ մը ըն-
կած ըլլայ, կ՚առնուր նազելին Նէարքոս՝ իր սի-

1 Հին օրինակն պատմուԹեան գուցէ գեղեցիկ և հա-
ճոյ սխալագրուԹեամբ մը կ՚ըսէ ֆոթոչէ ոչխով:

բելոյն անգին գլուխը. կու մօտեցընէր անոր արիւնաքամ շրթունքը իր դողդոջուն շրթանցը, և անոր մանուշակացեալ աչաց ցամաքութիւնը՝ իր չերմաջերմ աչաց ցօղերովը կու թրջէր. արտասուանքը Պօլիքտոսի արեամբ խառնելով կու նուիրեր Աստուծոյ, չարժուն բաժակ գոհութեան...: Զարմանայինք արդեօք թէ ինչպէս անոր անշունչ անմռունչ շրթանց մէջ՝ Նէարքոս իր շունչն այլ չաւանդեց, և մէկտեղ չլռեց չընկաւ:

Նէարքոս յետին ապաստարութիւն մ'այլ ունէր իր սիրելւոյն երկրաւոր մասին. հաւատացեալ եղբարց օգնութեամբ՝ դրաւ իր կենաց գին Պօլիքտեայ գլուխը՝ անոր տարածեալ մարմնոյն քով, և երկուքն այլ ծածկեց մայրենի մեխոտեան հողով. «Յայնժամ ապա զպատուականն և զտուրբ » մարմին նորա 'ի Մելիտինէ քաղաք Հայոց թա» ղեցին պատուով՝ եղբարքն. և իբրև զժառանգ» գութիւն յաւիտենական իւրեանց ընծայեցին»: Ջիչ ժամանակէ ետև հոն բարձրացաւ տաճարը մը յանուն տուրբ վկային Պօլիքտեայ, որ իբրև մեծ ուխտատեղի կու յիշուի 'ի սրբազան պատմըչաց՝ դար մը ետքը: Նէարքոս չառաւ մասն անոր նշխարքներէն, որոց քով կու փափագէր քիչ առեն էն ինքն այլ հանգչելու. բայց չէր այլ կրնար իր քաջայաղթ զինակցին նշան մը չունենալ աչքին առջև, մինչև որ իսկապէս տեսներ զնա յարքայութեան երկինից: — Կտաւ մը, զոր աւետարանին անծանօթ երիտասարդն [1] աւելի պնդապէս հետը կու կրէր, — բայց մաքուր և ծալած, — տուրբ կտաւներ՝ թաթաւեց 'ի թափած արիւն Պօլիքտոսի. մինչև 'ի յետին կաթիլը չընչեց մաքրեց գետինը. և իր ապայութեան հանդիսից օրերը բարձրացուցած դրօշէն բարձր ու պանծալի

1 Մարկոս:

աւետառնմամբ տարաւ զայն իր հայրենի երկիրը, « եթէև զերանելի իմն ժառանգութիւն և զէն փըր- » կութեան կանանացւոց քաղաքին, մերձաւո- » րաց և հեռաւորաց »:

Երկրորդ և մեծագոյն և ամենեցուն ցանկալի սպաս մ'այլ կատարեց Նէարքոս, աւելի մեզի քան իր տուրք սիրելւոյն, անոր յիշատակը երկ- նից վարագուրէն դուրս այլ՝ անմահ թողլով երկ- րիս վրայ. և արեան արտասուացն հետ մեզան այլ խառնելով՝ գրեց Պօլիքարոսի վկայաբանու- թիւնը: Ահա իր խօսքն. « Եւ յետ չարչարանաց » սրբոյն Պօլիքարոսի՝ ես տառապեալս Նէար- » քոս, եռոս զՅիշատակարանն՝ Տիմոթէոսի կա- » նանացւոյ և Աւկտար Նեղոսի, և երդմնեցուցի » զնոսա 'ի գաղտնեան Քրիստոսի և 'ի յաղթու- » թիւն սրբոյն Պօլիքարոսի 'ի Քրիստոս, որպէս » զի տարւոյ տարւոյ կատարեացեն զօր (նահա- » տակութեան) նորա, և զՅիշատակարանն ըն- » թերցցին խնամով: Իսկ Տիմոթէոս ընկալեալ » զայն Յիշատակարան՝ եդ 'ի տուրք եկեղեցւոջ, » ուր և...: » Հոս դժբաղդաբար կ'ընդհատի մեր օրինակն. բայց կ'իմանանք ուրիշ գրուածէ որ Տիմոթէոսն այն (Թուի երէց Կանանացւոց աւա- նին), ըստ պատուիրանի սուրբ իչխանին Նէար- քոսի՝ ամեն տարի Քրիստոսի ծննդեան առնէց օ- րերը կու կարդար անոր անմահ քարեկամին ան- մահացուցիչ Յիշատակը. իսկ Նեղոսն այն Աւ- կտոր՝ կարծեմ Թէ ըստ Հռովմայեցւոց է Actarius կամ Actuarius, զի այսպէս անուանէին զինուո- րական գործոց գրողները: Պօլիքարոս այլ Թէ երկրաւոր Թէ երկնաւոր զօրական լլլալով՝ կու վայլէր որ քրիստոնեայ գործակիր մը անոր վար- քը վաւերացներ: Արդէն այն առեն եկեղեցւոյ հայրապետք այլ հրաման հանած էին՝ որ որո- շեալ դիպուք գրեն սրբոց Գործը կամ վկայաբա-

10477396

նուԹիւնը: Եւ ահա այս Նէարքոսեան և Նեղոսեան Գործք Ս. Պօղիքարոսի է մեր ձեռքն ընկածն այլ, Հայկակ, որ և ինչպէս առաջ ըսի, ամբողջացոյն՝ մինչև հիմայ ուրիշ լեզուով ծանօթներէն (գոնէ ինծի), Թերևս ուրիշ գրչէ այլ անցած՝ կամ ԹարգմանուԹեամբ տեղ տեղ այլափոխեալ ըլլայ. և որոյ սկիզբն արժան կու սեպեմ հոս կարդալ քեզի, որ յետ լսելոյ զպատմուԹիւնը՝ կրնաս վերջաբան այլ սեպել, և յարմարը Նէարքոսի սրտին պարծանօք գոչելու իր բարեկամին յաղԹանակին վրայ.

« Ա՛յժմ մեծուԹիւնն չնորհացն Աստուծոյ և
» զօրուԹիւն նորին ՚ի ձեռն սրբոյ մարտիրոսին
» Պօղոքարոսի՝ ամենեցուն տեսանի: Այժմ՝ հե-
» Թանոսք Թախծեալ եւ տրտմեալ, որք յան-
» շունչ կուռան իւրեանց յուսային. որք մոլո-
» րեալքն էին ՚ի դրօշեալս իւրեանց՝ յամօԹ լի-
» նէին. վանն զի յաստուածային զօրուԹենէ ան-
» տի՝ նմանուԹք սրբոյն Պօղոքարոսի լինել ակա-
» մայ հարկաւորէին, որպէս յամենեցուն ստաց-
» էին և արարչին Աստուծոյ. ըստ աստուածային
» գրոց, Թէ Ամենայն ծունր կրկնեսցի երկնաւո-
» րաց և երկրաւորաց և անդարամետականաց.
» քանզի յաստուածային զօրուԹենէն որ սը-
» եաւալ լինի մարդկան՝ յայժմու ՚ի մերձակայ ի-
» րացս առաւել և օրհնի և փառաւորի: Քանզի
» ահաւասիկ և երանելին Պօղոքարոս որ կարծէր
» զհեԹանոսական զվարս և զպաշտօն ունել, նոյն
» ինքն արագ արագ զՔրիստոսի պաշտօնն ունել
» ինքն, զօրացուցանել զինքն. և որ երկրաւոր
» Թագաւորին զօրական էր, զՔրիստոսի զինա-
» կրուԹիւն փոխանակ երկրաւոր զինուորուԹեն
» ամենայն յօժարուԹեամբ փոխանակէր. և պը-
» ակ անԹառամ զիւրոյ զՅան վաստակոց և ըզ-
» ժուժկալուԹեանն՝ զգեցեալ ցուցանէր: Քան-

ամաչ և ծին բառերէն բարդած, ինչպէս կըսնայ ալ կարծուիլ։

Յովհաննէս անոնցմէ մէկն եղած է՝ որ կրնային ըսել Իմաստնոյն, և իրեն իսկ անուանակից և ապագակից՝ Հայոց մեծ Իմաստասիրին հետ, թէ Մանուկ էի ամաւարժ, և ոչ ոք բարեաց դիպեցայ. կ'ելևէի թէ ծնողքն ալ հոգ ունեցեր են ալպաքուց զինքը ուսման տալու. իր մէկ բաղդն ալ այս եղաւ որ իր հայրենիքն Հուսաւորչի լերան վանքերով շրջապատած էր, որոնց մէջ դեռ բաւական գրքեր և գրագէտներ կուգտուէին. և աւելի բաղդն ալ այս էր՝ որ իր ծոյլութեան առեն՝ Երզնկա քաղքին քաղաքական իշխանն էր Յովհաննէս պարոնն. հոգևոր տեսուչն ալ էր՝ այն պարոնին հայրն Սարգիս արքեպիսկոպոսն. երկուքն ալ աշխարհաշէն և ջանասէր և ջանասիրաց ձեռք տուող։ Երզնկացին առջի ուսմունքներն ըրաւ Ս. Մինասու անապատ ըսուած վանքը, Սեպուհ լերան արքայազն շուքին տակ. վերջը անոր քովի վանքերն ալ պարտեզով՝ մեղուն նման քաղեց անոնցմէ ինչ որ իր խնամատարը մտացը պատուական գտաւ. բայց անոնցմով գոհ չըլլալով՝ ելաւ հեռու տեղեր ալ պարտեզու, գիտութիւն ժողվելու համար։

Այն տեղերը Հայոց մէջ ամենէն անուանի վարդապետ Ճանչցուած էր Վարդան Արեւելցին, և թէ Կիւրիկիոյ արքունիքը թէ արեւելեան Հայաստանի մէջ պատկառելի եղած. այս բազմահմուտ և բազմագիր վարդապետ՝ իր վերջին տարիները քաշուեր էր Հայոց և Վրաց սահմաններուն մօտ, Հաղբատ և Սանահին հռչակաւոր վանաց մէջ տեղ՝ կայենոյ ձոր ըսուած տեղը, ուր որ պզտիկ վանք մը կար. հոն կու նստէր և աշխատեցաց գաս կու տար. Յովհաննէս ալ գնաց անոր քով, և կ'ելևէի թէ ինչուան անոր մահը հոն

կեցաւ, և կ'անուանէ զինքն «Աշակերտ Հոգեւքից » Հօրն և սուրբ վարդապետին Վարդանայ»: Յովհաննէս դարձաւ Երզնկայ, ուր յաջորդ տարին (1272) հոն մեծ դիպուածք մը հանդիպեցաւ. այսինքն սրբոյ Մեծին Ներսէսի մարմինն գտուեցաւ, 640 տարուընէ վեր փլած Թէլ գեղին եկեղեցւոյն տակ, և Սարգիս արքեպիսկոպոսին ձեռքով փոխադրեցաւ յԵրզնկայ: Այս գիւտիս և փոխադրութեանն ոչ միայն ականատես կու կարծուի Երզնկացին, այլ և կ'երևի թէ ինքն է անոր պատմութիւնն ալ գրող և գեղեցիկ Ճարտասանական Ճառ մ'ալ լսող՝ փոխադրութեան հանդիսին մէջ, արքեպիսկոպոսին հրամանաւն, ինչպէս որ գըրուածքին ոճէն գուշակուեն բանասէրք: Բայց ասկէ յայտնի և փաստաւոր յիշատակ մ'ալ Թողուց Երզնկացին Ս. Ներսէսի վրայ, «Որ զլոյս անճառ» երգած շարականովն, որ ընտիր շարականաց կու հաւասարի ազնիւ շարադրութեամբ և խոհաստեղծութեամբ և վսեմութեամբ. այս շարականէն երգեց՝ երբոր Լեւոն գ Հայոց Թագաւորն լսելով Ս. Ներսէսի նշխարաց գիւտը՝ եկեղեցի մը նուիրեց այն մեծ հայրապետին:

Երզնկացին քանի մը տարի հայրենեաց սահմաններէն հեռացած չերևար. գուցէ Սարգիս արքեպիսկոպոսին քով կը ծառայէր, ինչուան անոր անպարտ սպանումը իր որդւոյն հետ մեկաւեղ: Տարի մը ետև, 1280ին, Ս. Գրիգոր վանից վիճքանքն՝ միաբանութիւնին նորոգելով՝ խնդրեցին իրմէ որ իրենց կանոններ գրէ. ինքն ալ գրեց «Կանոն» նոնք և սահման միաբանութեան եղբարց՝ որք » առաուածային սիրով միաբանեցան յեղբայրու» թիւն միմեանց՝ յԵրզնկայ, 'ի ՉԻԹ...». և կու սկսի, «Բանն Աստուած որ բանիւ գոյացոյց զա» մենայն արարածս», և այլն: Այս յիշեալ վանքերուն մեկուն մէջ գտայ Փիլոնի Եբրայեցւոյ Ճա-

աստեղանման ցրուըրաէին Թօթափէին. բազմու-
Թիւն մարդկան չորս բոլորն առած՝ երկու կլոքով
բաժնուած կու նայէին՝ ի կրակն և՝ ի կայծակն.
և անշուշտ արժանաւոր աչքեր տեսան անոնց մի-
ջէն արեգական նման և աւելի անուշալոյս գունտ
մը՝ վերանալով սրանալով անցնելով քան զամեն
բարձր կայծ ու ծուխ, նաև քան զաստղերն այլ,
և ծածկուելով երկնագմբէթին մէջ:...

Ահն էր պայծառ, սիրավառ ու սիրածախ հո-
գին Նէարքոսի. որոյ պատշաճագոյն վախճան մը
չէր կրնար ըլլալ՝ քան զկրակն. այն մշտակնդրուկ
անուշահոտ ողջախոհ սրտին պէտք էր որ վերջա-
պէս մարմինն այլ ըլլայ մաքուր լուցկի ողջակէզ:
Թերևս յայս ակնարկէ պատմուԹեան սկիզբն
եղած երկրորդ յառաջաբանի մը այս խօսքս. « Ի
» Ձեռն այսպիսի հրաշագոյն երջաց՝ հատատեաց
» զառաքելական ձայնն որ ասէ. Հաւատով չի-
» լոցին զզօրուԹիւն հրոյ, խցին զբերան ա-
» ռիւծուց: Ո՛ Քրիստոսի աշակերտ՝ ի չեռն հրոյ,
» և զօրական ճշմարիտ և ընտիր »:...

Արդեօք այն փլփլկած փեղկի էր Նէարքոսի
նահատակուԹեան երկրաւոր վճիռը տուողն, Թէ
ուրիշ դատաւոր. և ինչ առԹիւ և կերպով կա-
տարեցաւ այս ուրբ պատարագս այլ.... լուռ-
Թիւն է: Բայց մէկ դիպուածՙ մէկ խօսք մը միայն
պահած է պատմուԹիւնն: Պօլիէուտոսի վերջի խօս-
քը լսեցիր, առ Նէարքոս ըսածն, զոր Թողլոր
յերկրի. Նէարքոս յերկրի Թողլու բան ջունելով,
զայս խօսքս ըսած է խարուկին վրայ բոցով ջըլա-
պատած առեն. Այս կրակս չի կըրնար արգելուլ ի-մ
սրտիս կրակը՝ ասոր փեղ գալու, Տէր Յիսուս: Եւ Թռաւ
գնաց առ Քրիստոս և առ Պօլիէուտոս. զոր՝ կրնամք
մեք հոդեվէնքս և անփորձքս երկնից սովորու-
Թիւնեւրուն, երևակայել աստուածափայլ կայ-
ծակի մը պէս ՀառագայԹած՝ երկրէս եկող Նէար-

10477396

քոսի ձաւագայլթեալ հոգւոյն հետ. և անհամեմատ գերազանց ու աննման արամազգեան կոչնականին, իրարու պլլուած ու խառնուած՝ առաւածային աթոռոյ շուրջը փարիլ փայլել խալ խնտալ:

Այսպէս Պօլնքառոս և Նէարքոս, Նէարքոս և Պօլնքառոս «Սիրելնք և գեղեցիկք և վայելուչք» ըսնկնեալք 'ի կենդանութեան իւրեանց՝ և ոչ ըսնկնեցան 'ի մահուն իւրեանց»: Թէպէտ հակիրճ օր կու համրեն երկրաւոյք ընդ մէջ մահու միոյն և միւսոյն. Թէպէտ և մէկն քաւութեան սեղանոյն վրայ պատարագեալ յարիւն Թաթաւ, մէկայլն յողջակիզաց սեղանոյն վրայ 'ի խառնիկ և 'ի ձեռնձեր. կտրճին կատարածն՝ սրով, փափկին փափագածն՝ հրով. սակայն երկուքն այլ հաւասարք սիրով, հաւասարք անմահութեան երգով.

Երկոքեան իսկ ծանկափայլք, եւ երկոքեան
Մելնատացնք,
Եւ երկոքեան զոյգք յերգել, եւ յանդրապարձ
հանգիստազօրք: —
Յայս վայր յիշեմ. եւ ի մտացն սիրոյ յեաւ
նեալ չասեմ ըզմին.
Յայսմ հետէ վեհ ինձ Պօլնքառոս, եւ Նէարքոս
ինձ զոյգ նըմին [1]:

1 Hæc memini et victum frustra contendere Thyrsin:
Ex illo Corydon, Corydon est tempore nobis.

Վիրգիլ:

10477396

Ժ

Ձշմարիտ բարեկամին և բարեաց առիթ սուրբն Նէարքոս՝ իր բարեկամին կրկին անմահութեան պատճառ եղաւ վկայաբանութեամբն. որով Պօ-լիկրատոսի անունն աւելի հռչակեցաւ յերկրի, և պաշտօնն՝ի Հայս, յԱտրիա, ՚ի Լատինս և՚ի Յոյն: Յուստինիանոս կայսեր առեն հարուստ ոմկին մի կ.Պօլսի մէջ Պօլիկրատոսի եկեղեցին քոլոր ոսկւով պատեց, կայսեր ձեռքէն ազատելու համար իր ստացուածքը: Ինչուան Փռանկաց մէջ այլ հին առեն տարածուած էր Պօլիկրատոսի պատիւը. զոր և սովորութիւն էր ամեն ոխտից հաւատարմութեան պաշտպան բռնել և երդնուլ անոր խորհրդովն գիմաց. ինչպէս որ հին հեթանոսք այլ անոր համանունն՝ Պոլիւքսի՝ սեղանին վրայ կ'երդնուին զհաւատարմութիւն. կտրիճներն՝ անոր, իսկ կանայք՝ կ'երդնուին անոր ընկերակցին՝ Կաստորի՝ սեղանին վրայ: Ո՛րքան փափագելի էր մեզի այլ, Հայկակ, Մեհեւեան ափանց վրայ տեսնել սուրբ տաճար մը, մէջը կրկին սեղան, մէկուն վրայ Պօլիքատոս նշանաւ սրոյ, միւսոյն՝ Նէարքոս նշանաւ հրոյ. և առիւծանիրաք մեր՝ անոր, ա-ղանէանիրաքն՝ անոր գիմաց, նուիրելով սրտերնին՝ ընկերաց և Աստուծոյ.—Մեր ազգն այլ իր արիութեան օրերուն, և (որոյ անմահ սիրով) մինչև հիմայ այլ՝ մեծ զգացմամբ և եռանդեամբ ոճնէ զարի և զինակիր նահատակս, զԹէոդորոս, Գէորգ, Մերկեւռ, Սարգիս, Վարդան, և այլն. անոնցմէ հին է իր ոճնած (այլ ոչ նոյնպէս պանծանաք՝ վան անծանօթ մնալուն) Ս. Պօլիքատոսն այլ. որոյ զինակից Նէարքոսին անունն սահեր է մեր Յայսմաւուրքն: Դարձեալ, հին և աւելի երկանիկ օրերուն, մեր տաղնուաստիրտ և ընկերասէր

10477396

նախնիքն՝ քարեկամութեան զգացմունքն այնչափ սրբազաներ էին՝ մինչև եկեղեցական օրհնութիւն ի կարգս Մաշտոցի անցընել զ'կանոն Եպիսկոպոսութեան. ապաշտպան և ուխտընկալ քարեկամացն նըւիրելոց ունելով զսուրբ առաքեալն Փիլիպպոս և Բարթողիմէոս, և զվկայն Սուքիա և Բագոս: Արդ ես այլ, Հայկակ, իմ կոչմանէս մեր հաւատոյ ապրիսիրաց և ընկերասիրաց՝ անունն օրինակ և պաշտպան վերընծայեմ զսուրբ հայրենակիցս մեր՝ Նէարքոս և Պօլիքարոս, Պօլիքարոս և Նէարքոս:

10477396

ՍԱՐԿԱՒԱԳ ՍՈՓԵՍՏԷՍ

Բնաւորեալ մեծ հանճար՝ կրթութեամբ և երկար ուսմամբ կրկնակի մեծցած և զօրացած, բազմակողմեայ ըմբռնումն և վարպետ բացատրութեան, լեզուս արուեստաւորը՝ բոլոր յատակ և հայկաբան. արտաքին և աստուածային գիտութեանց համառութիւն, քաջախոհ դատողութիւն, վեհեմ և անխռով ոգի՝ անխոնջ հետաքննին և սիրող ստուգութեան, պատկառելի ծանրութեամբը հետ զըւարճախառն ընտանութիւն, միանգամայն և մէկ զարմանալի խորհրդաւոր կերպ մը՝ որով կարծէ թէ ինքզինքը կու քօղարկէ հասարակ նայուածքներէն. ասոնք են մեր մեծանուն Յովհաննէս Սոփեստին, հոգւոյ վարդապետին յատուկ բնութիւնը, բարքը, ձիրքը, ոյք ախորժելի պարտք մը կը դնեն զինքը ծանօթացընելու իրեն համազգեացը: Այս ձիրքերովս է որ ինքն՝ իր գանուած ժամանակին և դիպուածոց մէջ՝ զինքը ճանչցուներուն զարմանք բերելէն զատ, իմաստութեամբը թողած յիշատակարաններովն անմահ է այսօր ալ, և անմահ պիտի մնայ միշտ մեր հայ գրականութեան և ընդհանուր իմաստնոց կարգին մէջ. և իրեն հասար անձինք գտնելն միշտ աշխատալի և դժար գործ պիտի ըլլայ:

Մեր գրականութեան մէջ յայտնի է քեզ, Հայկակ, որ երկու նշանաւոր դար ուշեցեր ենք, մէկ

10477396

մը Քրիստոսի հինգերորդ դարը՝ որ է Թարգմանչաց ոսկեգրիչ ժամանակին, մէկ մ՚ալ երկոտասան՝ ներորդ դարը, յորում մէկ դպրոցէ ելան սուրբն Ներսէս Շնորհալի և իր հօրեղբայրն Գրիգոր վկայասէր, մեհինէքն Սարգիս և Իգնատիոս վարդապետք, և իրենց մերձաւորներն Ներսէս Լամբրոնացի, Գրիգոր Տղայ, և այլն. որոնք նորոգեցին ոսկեղէն գրիչները, և հնազարդ մատց ծննդոցը վրայ նոր ծաղկափթիթ շնորհք մը բերին, այսինքն յատակագոյն բացատրութիւն մը խօսից՝ որ աւելի յարմար էր նոր դարերուս: Սարկաւագ վարդապետ այն դպրոցէն չէր, բայց կրնայ դայր ըսուիլ անոր, որովհետև քան զայն քիչ մը առաջ՝ նոյն շնորհքով փայլեցաւ, հանդերձ հինոչխոյ վեհմտութեամբը, և իր վարպետ զուարցուածքովն՝ եղաւ եզական և աննման մատենագիր մը: Մեսրոպեանդարդ գարուն կիսէն ինչուան ծր. դարուն երեսանեղարդ տարին քշեց իր կեանքը, ըսել է թէ իր խոր ծերութեան առենը վերոյհշեալ վարդապետանեն դեռ երիտասարդ ու միջահասակ էին, և գրեթէ ինքն գրիչը Թոզլու առեն՝ առնոնք ձեռք կ՚առնուին: Ա առենները քաղաքական հին Հայաստանն ալ նորոգուելու վրայ էր. Բագրատունեաց տէրութիւնն նոր վերջացած, Հայոց մէկ մեծ մասն իր բնական աշխարհքէն եւ լած՝ ուրիշ աշխարհքներ գաղթականներ կը հաստատէր. ոմանք դեռ իրենց մեծ տէրութեանը կառնեերուն վրայ կուսլատելով՝ այն հին աշխարհքին առուր կողմերը ապաւինած կամ բռնացած կեցեր էին, առաղաքաչնից ըսած՝ մեծ մոլորակի կարը մանր մոլորակաց պէս. ոմանք ալ ապիէն անդինէն մեկուսեղ եղած՝ մէկ ամբողջ կահ մը վառել կուսլանային, այսինքն մեր Պահլաւեան և Ռուբինեան իշխաններն Կիլիկիոյ մէջ: Զատանք պայծառացընելու համար՝ Սատուած հանեց Ներ-

10477396

սէաներ ու Գրիգորները. իսկ վերին Հայոց ծնած կողմերը՝ որոնց յետին փայլուն հասեր էր, պարգևեց սա լուսատու վարդապետը:

Իր հայրենիքն էր Արցախ աշխարհին Փառիսոս կամ Փառնէս գաւառը՝ Սիւնեաց քնիկ Սիսական գաւառին դրացի, որ սա առեներս զատ Թագաւորութիւն ունեցաւ՝ Սիսականի կամ Փառիսոյ անուամբ, և երեն իշխաններն հին Հայկազանց սերունդք էին: Սարկաւագին աշխարհք եկած առեն ասոնց սակաւատև փառքն ալ մարելուն վրայ էր, և քիչ առենէն փոխուեցաւ յիշխանութիւն Պահլաւներուն: Իր մանկութիւնն՝ հայկական վեհապանծ օրերուն տեղ՝ անոնց վարագական գաղթիլը և Սկիւթացւոց յարձակմունքները տեսաւ: Ալփասլանին ըրած արիւններն դեռ կու մնային աչքին առջևը. և անանկ տպաւորութիւն մ'ըրած էր վրան սա բարբարոս ազգին մեր աշխարհքը գալն ու տիրելն, որ այն առենէն մրաքին մէջ նկարուած պիտի ըլլան այն պատկերները՝ զոր վերջը գրով աւանդեց յետնոց. երանի թէ մեզի ալ հասած ըլլային: Բայց սա չիտնաս թիւններս իրեն դաստիարակութեանը և ուսումնասիրութեանը արգելք չեղան: Իր հայրն արդէն քահանայ էր, և ինչպէս կ'երևի՝ այն արբազան աստիճանն իրենց ցեղին մէջ շատք ունեցեր էին. ուստի իր որդին ալ՝ որ Յովհաննէս կ'ըսուէր բընիկ անուամբը, և կ'երևնայ թէ շուտով սարկաւագ ձեռնադրել տալուն՝ Սուքաւագ ըսուեցաւ անկէ վերջը, ուզեց նոյն ճամբան դնել. անոր համար պզտիկուց զրկեց որ ուսումնք տովի: Անոր առենի արևելեան կամ Խոր Հայոց երևելի ուսումնարաններն էին Բագրատունեաց և Վրաց Թագաւորաց ծաղկեցուցած վանքերն, Հաղբատ, Սանահին, և ուրիշ քանի մը անոնց մօտ վանքեր. սա տեղուանքս անցուց Սարկաւագ իր անյագ

10477396

ուսումնասիրութեամբ վառուած Հայսակը, Հա-
մեմատ դիտման և կամաց զանոնք կանգնողներուն
և զարդարողներուն. որպիսիք էին Թագաւորք,
իշխանք, եպիսկոպոսունք և վարդապետք նշանա-
ւորք իրենց ժամանակին, և հիմայ այլ ոչ անոնք-
չանք իրենց հոն Թողած գերեզմաններովը. որոց
մէջ է և մեր Սարկաւագ վարդապետինն. և այն
ամենուն մէջ այլ նշանաւորապոյն անձն և յիշա-
տակ՝ ըստ իս՝ ինքն է և իրենն:

Բայց գրեթէ անկարելի է յիշել այս երկու
հռչակաւոր վանքերը, որ մայրավանք և հայրապե-
պք այլ կոչուեցան, և լսել իրենց ծագումը և
պայծառութիւնը. այն զուգակները՝ որ ծՁ–ծԳ
դարուց մէջ վերին Հայոց ամենէն ծաղկած իմաս-
տութեան կենդրոն կու սեպուէին, միանգամայն
և քնարան եղան և են Թագաւորաց և մեծամեծ
իշխանաց, զատ՝ի գիտնոց և եկեղեցական առաջ-
նորդաց: Ծ դարուն կիսէն վերջը Յունահայ Ռո-
մանոս և կայսերէն հալածուած քանի մը միան-
ձունք եկան՝ի Հայս, և ինչուան Գուգարաց աշ-
խարհին արևելեան ծայրը Զորոյգետ կամ Զորո-
փոր գաւառին գլուխը՝ Սանահին գեղին քով, սա-
րատափի մը վրայ յանուն Ս. Աստուածածնի
եկեղեցի մը շինելով՝ հոն պատսպարեցան: Աւան-
դութիւն էր՝Հայոց որ Ս. Լուսաւորիչ այլ հոն
նոյն անուամբ եկեղեցի մը շինած էր, վասն զի
նոյն իսկ Բարդուղիմէոս և Յուդա առաքեալք
այլ հոն իսաչ մը կանգներ էին. լսել է որ ժամա-
նակաւ մեր նախնիքն հոն կռատուն կամ բագին
մ'ունէին: Քանի մը տարի վերջը մեր Բագրա-
տունի Թագաւորն Աշոտ Ողորմած և իր Թագու-
հին Խոսրովանոյշ՝ մեծ եկեղեցի մը շինեցին
հոն Աղնաֆէնիէ անուամբ և վանքմ՝ այլ, յ'966 թը-
ւին Քրիստոսի: Սանահինէն ժամ մը հեռի գեպ
արևելեան հիւսիս և անկէ ձորակով մը զատուած

է Հալբատ գեղն. ասոր քով այլ նոյնպէս ասլատաւիկ մը վայր հիմնեցին Ս. Նշան եկեղեցին և վանքը, զոր կատարեալ հինութեամբ լմընցուցին իրենց որդիքն, Սմբատ և Գուրգէն Թագաւորք. և երկուքն այլ յանձնեցին արժանաւոր վանահարց և վանականաց. միանգամայն հոն ընտրեցին իրենց գերեզմանատունը. որոնց հետևեցան իրենց ուրիշ ազգակից Թագաւորներ և մեծամեծ իշխանք. ինչպէս Սարգիս սպասալար, որոյ դուստրըն կանգներ էր այն իմ երբեմն քեզի յիշած Անագ կամուրջը[1], ուսկից պէտք է անցնիս, Հայկակ, արևմուտքէն Սանահին գալու համար, որոյ մօտիկ է: Բայզով մը, որ սակաւագիւտ է մեր աշխարհին մէջ, ոչ միայն ասոնց գերեզմաններն, այլ և կամուրջն և եկեղեցիք, յիշատակարանք և արձանագրութիւնք՝ մեծաւ մասամբ անեղծ մնացեր են ինչուան հիմայ, 800 տարիէ վեր: Ահա այս վանքերուն մէջ զարգացաւ մեր Սարկաւագն:

Անյագ և մտադիր ուսումնասիրութեն վրայօք կու պատմէ Կիրակոս Պատմիչ դիպուած մը, որ հաւանօրէն անոր զարգացած հասակին մէջ հանդիպած է. Հալբատայ վանքին քովերը Զորոյ գետեզքին վրայ քարայր մը կար, ուր տեղւոյն ամրութեան և ապահովութե համար կու պահէին գիրքերը, և փափագողն կ'երթար հոն կու քննէր կու կարդար. օր մը բանասէրը ոմանք, Սարկաւագ այլ մեկտեղ, գացին կարդալու, Սարկաւագ իր սիրական գրքերն ընտրելով՝ ծածուկ կողմ մը քաշուեցաւ կարդալու, և այնչափ ուշն ուշով անգրքալ կու կարդար կու քննէր, որ ոչ ժամերուն անցնիլն իմացաւ, և ոչ ընկերներուն դուրս ելնել և դուռը գոցել և երթալնին. վան զի ատոնք չտեսանելով զՍարկաւագ՝ կարծեցին Թէ իրենցմէ

1 Տես Ա. Հատոր, երես 31:

10477396

առաջ դուրս ելեր է: Քանի մ՚օրէն նորէն եկան գինըք առնելու. և օրջափ զարմացան երբ հոն գտան զԱարկաւագ. սկսան հարցընել, Թէ «Ո՞րպէս ապ-
» րեցար առանց կերակրոյ և ըմպելոյ. և նա եցոյց
» նոցա զպրեանն՝ զոր ընթերցեալ էր, և ասէ.
» Այդ է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և
» արբի զաւուրս զայսոսիկ »: Իր աշնուական բարքն և ընաւուր սրամտութիւնն ալ չանիցը. հաւատար, անկատար հասակին մէջ ալ գինքը կատարելոց կարգը անցուցին. և ինքն իսկ կրնայ վկայ սեպուիլ այս բանիս իր խօսքովը՝ որ գրուածքի մը մէջ կ՚ըսէ. « Ի նախնեաց բարեպաշտից և
» յիմաստուն ծնողաց բուսեալ, որք սնուցին զիս
» օրինօք հոգւոյն կենաց՝ առնել քան ըստ բնու-
» թեան տածիւք խնամս յառ մանկունս. որովք
» յառաջնուն հասակին դաստիարակեալ՝ յոյս
» տայի քաջութեան »:

Առջի ուսումնական տարիներն անցուց, ինչպէս կ՚երևի, անդադար կարդալով և համառանալով, եղբն ալ գիր անցընելով իր հասուն մտքին պտուղները. բայց ինչպէս որ ընտիր ընթերցուածներու սիրող էր, այսպէս ալ իր գրուածքն ընտիր կ՚ուզէր. անոր համար մեծ չանք ըրած կ՚երևնայ գեղեցիկ ոճ մը ստանալու, միանգամայն և բարձր ու վսեմ. վասն զի արծիւ միտքն արծուոյ Թև ալ կ՚ուզէ. և յիրաւի, իր ամեն գրուածքներուն մէջ կ՚երևին ճարտար ու սովորականէ վեր իմաստասիրական չարտադրութիւնք՝ իմաստակութենէ և արուեստակութենէ հեռու, և միանգամայն պարզ և խորամուտ. որ մեկէն կը ցուցընէ Թէ այսպիսի գրուածք միայն իրենն է և ոչ ուրիշի: Շատ լաւ կ՚ըսէ ատոր համար Կիրակոս պատմիչ. « Սորա բանք ամենայն իմաստասիրա-
» կան ոճով է, որպէս զԳրիգորի աստուածաբա-
» նի, և ոչ գեղջուկ »: Աստուածաբանին հետ յի-

10477396

չէլաե էր մեր Յովհան Իմաստասէրն ալ, որուն Թէրևս միայն հեռևոլ եղաե Սարկաւագ, և անոր Ճարտար ոճը՝ Շնորհալւոյն քաղցրութեանը հետ խառնելով՝ կրնայ Սարկաւագի գրչին գտղափար սեպուիլ:

Յովհան Իմաստասիրին անունն ալ մականունն ալ գրչէն ալ ժառանգեց Սարկաւագ. և ամեն պատմիչք և յիշատակոլք չեն կրնար անունը տալ՝ առանց կոչելու Սո-րէ, Իմաստասէր կամ Մէծ Իմաստասէր, Աստուածային Իմաստասէր, Գերաշնակ վարդապետ, Մէծ ոգեսպէս, և այլն. այս եռքն զուրցուածէս կրնանք իմանալ որ զուտ Իմաստասիրական գրուածքներ ալ ունէր, որոնց հետքը միայն կ'երևին հիմայ. միանգամայն և Ճարտասանական և քերթողական արուեստից հետևեցաե, և յաջողութիւնը ցուցուց իր շարադրութիւններովը. ինչպէս ատոր ալ վկայութիւն կուտայ ինքն իրեն համար քանի մը խօսքով Սարեկի դիմաստնական երգոյն մէջ՝ ուր կ'ըսէ.

« Որով յաղթեալ մեզ իմաստնոցս եւ կարծեցեալ բանաստեղծացս »:

Եւ գարձեալ սարեկին քաջ երգեցողութիւնը գովելով, կ'ըսէ.

» Աստ գաս նըւաստս մերձ առ ինեւ՝ իբր արուեստիւ ինձ չանգակից,
Բազմալեաե երգարանաե եղանակեա եւ կաքաւես.
Հոմերական տաղիցըն չափ՝ քեւ ծանուցեալ լինի բազմաց,
Յոտանաւոր եւ ցուցական ըստ քերթողացըն տեսակի.
Կամ թէ եւս աւելագոյն որպէս թըւի ինձ գիտողիս »:

Իակ էր անխոնջ ուսմանց զբաղեալն համար կ'ըսէ հոն.

« Ուսայ ես զեզերմամբ եւս ի բազմաց ամաց հետէ.

Չի տքնեցայ զօր ամենայն եւ ըզգիշերըն քո-
վանդակ

Եւ իմաստից ցանգուածեամբ, նաեւ սիրովն որ առ հանճար »:

Վերոյիշեալ պատմիչն ալ կ'ըսէ. « Մեծիմաստն գիտութեամբ քան զյոլով և հանճարեղն յամե-նայնի, և մուահարուածան. սա բազում ինչ աշ-խատասիրեաց 'ի գիրս՝ յիշատակ բարւոյ թողեալ... վասն զի յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ »:

Սարկաւագայ շնորհքն միայն եկեղեցական և հոգևոր աղբիւրներէ չէր, այլ և բնական հեղինա-կաց ջանից և փորձոյ արուեստն այլ կ'երևի վը-րան. զոր գուցէ ոչ միայն մեր նախնեաց թարգ-մանած գրքերէն ստացեր էր, այլ Թերևս նաև դեռ չթարգմանուած յոյն հեղինակներէ այլ. Թէպէտ հաւաստիք մը չունիմ երեն յօժարէն գիտնալուն, բայց անհաւանական չէ որ Ռոմա-նոսէն փախչող և հոս եկող Յոյն միանձունքն, գար մ'առաջ, հեռերնին բերած և հոս Թողած չըլլան իրենց նախնեաց գրուածքները. որոնք դիւրաւ կրնային չարժել Սարկաւագայ պէս հետաքրքիր բանասէր միտք մը:

Ախալիսի զօրաւոր միտք՝ ուսմանց երեսովը էր բաւականանար, հապա խորերը կ'ընալ կը սիրէր. անոր համար գժուարութիւններէ չփախ-չելով, ինքը զանոնք դիւրացնել կը չանար ու-րիշներու, և տարակուսական բաներու մէջ ըս-տուգապոյն սպրիւնները քննել կ'ուզէր. ինչպէս որ քանի մը յիշատակներէ և գործքերէն կ'երև-

10477396

յուբէ: Ասոնց մէկն էր նախնեաց իմաստասիրական գրուածքները պարզել կամ դիւրիմաց ընել, որոյ համար առաջին հարկաւոր բանն է ատոյգ և ազէկ գրուած օրինակներ ունենալ: Յայտնի է քեզի, որ մեր մէջ ամենէն առաջ և ամենէն նշանաւոր փիլիսոփայական գրուածքն են Դաւթի Անյաղթի: որք թէ իմաստից խորութեամբն և թէ շարադրութեան իրթնութեամբն միշտ անիմանալի կամ դժուարիմանալի մնացեր են, թէ և շատեր կարդացեր են զանոնք: Իսալիոյ երևելի համալսարանաց մէկուն մէջ հանդիպեցայ այս գործքերուս ընտիր ձեռագրի մը՝ ձգ դարուն մէջ գրած, որուն վերջը այսպէս գրուած էր. «Իմաս» տութիւն Հաւր և Բան, սիրոյին իմաստութիւ, » վարդապետին Սարկաւագ կոչեցեալ՝ աշխատա» նաց յուսլութիւն տառիս, զարժանն Հատոյ » յանյաչալ ձրիցդ »: Ահա քանի մը տող գրուածիս վրայ գրած շեշտերուն կամ առոգանութե նշաններուն պէս լի և ծեփած էր բոլոր գիրքն Դաւթի. և ըսել է որ Սարկաւագ վարդապետ օրինակ մ'առեր արքապրեր է՝ շեշտերով և հէտերով, և անկէց օրինակուած է իմ առածս այլ, արժանի քննութեան և բազդատութեան: Ասոր պէս ըրած էր ուրիշ մեր նախնեաց Թողած ամէն դժուարիմաց և խրթին գրոց այլ՝ զոր Նո՛ր գէնանհոս կոչեն մեր բանասէր վարդապետք, այսինքն բարակ գրուածք. և Մխիթար Այրիվանեցին կարգած կոչ չիշէ զանոնք. ինչպէս, Փիլոն Եբրայեցւոյն գործքերէն 9 գիրք, Դիոնեսիոս Արիոպագացւոյն 5 գիրք, Գր. Նիւսացւոյ 7 գիրք, Գր. Աստուածաբանին 4 գիրք, Բարսղի 3 գիրք, Եւագրի, Եպիփանոս, Եփրեմի, Կիւրղի Աղեքսանդրացւոյ, Ոսկիբերանի զանազան գրուածք, Ասիտասեղի, Պրոկղի, Հերմէսի, և ուրիշ իմաստասիրաց գրուածք, Մովսէսի Խորենացւոյ գիրքը,

10477396

Յովհ. Մայրագոմեցւոյ 3 գիրքերն, և այլն. միանգամայն 50էն աւելի գրեանք, զոր Սարկաւագ տուգեր և յատակեր և այնպէս օրինակել տուեր էր իր աշակերտաց: — Ահա կարևոր աշխատութիւնա որ՝ի հարկէ շատ տարիներու այլ կ'պրօտէր՝ կ'արժէր Սարկաւագայ մեծ յիշատակ մը Թողլու՝ եթէ ուրիշ յիշատակ այլ չունենար: Եթէ այն գրոց Լոգմոսի գրող՝ այսինքն մեկնուԹիւն, առաջին ինքն չեղաւ, գոնէ իր աշկերտներն եղած են նախ, և յետոյ այլք:

Ահրաքին նուրբ գրոց վրայ այսքան մտադիր աշխատողն՝ի հարկէ աւելի խնամքով պիտի բըն տըռեր Ս. Գրոց ընտիր օրինակներ և ընԹերցուածներ. և այնպէս այլ ըրաւ. «Գրեաց և օրինակս ատոյգ գրոց», կ'ըսէ Կիրակոս: Նախ հաստատեց որոնք որ կանոնական կամ ընդունելի եղած էին մեր մէջ, յետոյ ընԹերցուածները, այսինքն տարբեր շարադրուԹիւնները ստուգեց. ինչպէս որ կու վկայէ և կու նշանակէ վերոյիշեալ պատմիչն՝ ըսելով. «ԿարգադրուԹիւն գրոց սրբոց, որք ստուգաբանեցան՝ի Սարկաւագ վարդապետէն, և գրեցան յինէն՝ի Տէր ՄխիԹար վարդապետէս պատմագրէ՝ՙի մին տուփ, յաւուրս 170»: Ահա պրպտող պատմագիրը վարդապետս՝ որ 150 տարի Սարկաւագէն ետև գրող է, անոր ստուգած Ս. Գիրքերը գտեր և օրինակեր է ամբողջ մէկ մեծ հատոր մը ձեւացընելով. որուն մէջ զատ հիմակուան մեր Աստուածաշունչի կանոնական գրքերէն՝ կու յիշուին նաև «Դ Մակաբայեցին, »Յովսեպոսն՝ որ է Կայիափայ քահանայապետ, »Ենովքայ տեսիլն, Կտակն նախահարցն, Աստ »ՆեԹի ազօԹքն, Եզր ՍաղաԹիէլ, (որ է Գ Եզր) »Մնացորդքն Գ, Մահ մարգարէիցն ԻԴ»: Նոր կտակարանին մէջ կայ և կորնԹացւոց Գ ԹուղԹն: Եւ յետ նոր կտակարանաց՝ իբրև անմիջապէս

արքային գիրք գրուած էն, «Ալեքսանդրոսին » Սահակայ և Մեսրովպայ », որ է ժամագիրքն, «Պատարագն Ս. Մանդակունւոյն », որ է Պատարագամատոյցն. և որ զարմանալի է՝ առնցմէ առաջ գրուած է «Դաւթի փիլիսոփայի Բարձրացուցէքն ». այնքան պատուելի և սքանչելի սեպուած է այս մեր Անյաղթ փիլիսոփային Ճառն՝ի գովեստ Ս. Խաչին: Անուանաշունչ գրոց մէջ ամենէն աւելի աշխատալին ստուգութեան համար՝ էր հին կտակարանաց ամենէն աւելի շատ գործածուած, և ամեն քրիստոնէից (և գուցէ աւելի մերազգեաց) մէջ յաճախած Սաղմոսաց գիրքն, որ և խիստ շատ օրինակուելով այլայլեր էր, և շարադրութեան և գրուածքի տարբերութիւններով՝ չփոթութեան պատճառ եղեր էր կարգացողաց, և հարկաւորը ուրն է՝ կ'ուզէին իմանալ. այս բանս Սարկաւագին ալ մեծ հոգ եղած էր. և շատ օրինակներ քննելէն եաև՝ վինաւելով գտաւ Հաղբատու գրանոցին մէջ ամենէն տակը գրած մէկ հին սաղմոս մը՝ որ Թարգմանչաց ձեռքովը գրած էր, կիսամաշ ու բարակ գրերով. այն պեղեցիկ յիշատակարանը համբուրելով և աչացը վրայ դնելով առաւ գնաց, աշխատութեամբ օրինակեց, և ուրիշ շատ ալ օրինակել տուաւ ու ցրուեց Հայաստանի ամեն կողմը: Իրմէ եաև իբրև գար մը վերջը Յովհաննէս Գառնեցի վարդապետն այլ (որ այս բանս կու պատմէ) չկանց այլ աւելի ծաւալեալ Սարկաւագի ստուգած սաղմոսը՝ անոր հաճար շատ ձեռագիր սաղմոսաց մէջ կու գտնէի իր յիշատակարանն, կամ նոյն սաղմոսարանն գտնէի կ'ըսեմ:

Ահա սուրբ և արտաքին գրոց ստուգութեան պէս, և շատ մասին այլ աւելի մեծ ստուգութիւն և նորոգութիւն մ'ընտրեաց Սարկաւագ՝ Հայոց պատմին. «Սա զբազմաց փոխարկեալն և ոչ ձեռնհաս՝

» զհաստատ և զանշարժ ուսմանն կարգեաց Հայոց,
» փոխանակ շարժականին և անհաստատանոյն. ա-
» րար և զիւաքանուելիսն ամենայն ազգաց առա-
» մարին ընդ Հայոց ». կ'ըսէ Կիրակոս պատմիչ։
Վասն զի Թէպէտ իրմէ առաջ ոչ դարձին 'ի վէր
ջանացեր և կարգի մը խոթեր էին՝ բայց շար-
ժական ըլլալուէն դեռ չհոսթուելիւնները գտ-
րած չէին. իրաւ Անանիա Շիրակացի և Անա-
տաս կոթուռնիկա, ի դարուն մէջ ջանացին այս
բանս այլ շրջակելու, բայց կոթուռնիկոսին մա-
հուամբը փիլիսոփային ջանքն անպտուղ մնաց։ Իսկ
Սարկաւագ վարդապետներէն աշխատեցաւ, տա-
րեկան ուսմանը հաստատուն ըլլալ, և Հայոց ու-
մարը ուրիշ ազգաց ուսմանցներուն հետ բաղդա-
տելով՝ համեմատութիւն ըրաւ. այս կարգաւո-
րութիւնը մերոնք կ'անուանեն Սարկաւագարէք
հարգ։ Ան բանիս վրայ ուրիշ անգամ խօսած ըլ-
լալով, Հայկայ շրջանը բացատրած առնելս, չեմ
ուզեր հոս նորէն կրկնել. միայն յիշեմ համառօտ
ինչ որ այս նորոգութեամբս եղաւ։ Նախ, ուրիշ
բարեկարգ ազգաց նման մեր եկեղեցւոյն մէջ այլ
ամեն օրուան վրայ դրուելոյն հաստատ տօնք և
յիշատակք Սրբոց, անոնց համառօտ պատմու-
թեամբք, որով Յայտաբարէք պիտի ձևացաւ, և
ինչուան հիմայ եկեղեցեաց մէջ կու կարդացուէր
բան աւուրն պատշաճէ. թէ և հին առեն այլ
կային Ճառընթէրց, Մարտիրոլոգ, Սղոմոսթէրց, և
այլն, որոց մէջ սրբոց վկայաբանութիւնք և գո-
վեստք գրած էին կարգաւ մը, բայց ոչ հաստա-
տուն օրերով, և ոչ այլ ամեն օրուան յիշատակ
կար։ Բ. Մեր թէ եկեղեցական և թէ քաղաքա-
կան տօնքն՝ հաստատուն, յստակ, յայտնի օ-
րինք և կերպ մ'առաւ։ Գ. Հաստատուն տումա-
րին համեմատ հաստատուն թուական մ'այլ ակը-
նաւ, ատոր արեգակնային տարիներով, այնինչն

ջորա տարին օր մ՚առնլցընելով, սկսեալ ՚ի 1084
Թուականէն Քրիստոսի. վասն զի այն տարին կու
լմընար Հայոց մեծ ըտուած Թուականէն (552)
սկսած հինգհարիւրեակի (532 *տարուան*) *շրջանն.*
և ըտուեցաւ Սարկաւագայ կամ Նոր Ըռուական, և
կամ Մբռուի, որ աւելի Զորոգեաց կոչմերը գոր-
ծածուած է, և Միխիթար Գոշն այլ կու բանե-
ցընէ: Ահա Թուականիս հետ սկսած հինգհարիւ-
րեակ շրջանն այլ ՚ի հարկէ լմընցաւ յամին 1616.
և ահա այն տարին Ազարիա Զուղայեցին՝ երրորդ
շրջանին հետ նոր Թուական մ՚այլ հաստատեց՝
իր երկրին կոչմերը, տարեգլուխը հաստատելով
՚ի մարտի 21, *որ պիտի ըլլար գարնանային գի-*
շերահաւասարին օրը. և այնպէս այլ ի՚ըլլայ՝ եթէ
նոր տումարին մարտի 21*ը առնուինք. այս Թուա-*
կանս այլ Սպարէայի անուամբ կու կոչուի: Դ. Հին
Հայոց տումարը և Հայկայ Թուականը և Շրջանը
յայտնեց և նորոգեց Սարկաւագ, որ յիրաւի
մեր պատմութեան և ժամանակագրութեան հա-
մար կարևոր և պանծալի գան մ՚է. ինչպէս որ
ինչած եմ քեզի այն շրջանին վրայ իւսած ա-
ռենս: Ե. Ժամանակագրական Թիւերն այլ քննե-
լով՝ երևելի դիպուածները հաստատեց քանի մը վայր. զանազան Թուականութեանց մէջ ընտ-
րեց այն եօթանասնից հաշիւը՝ որ յԱդամայ մին-
չև ՚ի ծնունդ Քրիստոսի ու համրէ 5198 *տարի,*
մինչև ՚ի Քրհեղէն՝ 2242 *տարի: — Ա. յս տումա-*
րական քաներէս մաս մը գրած է յամի Տեառն
1107, *մաս մը* 1116, *մաս մ՚այլ աստնց միջոցը. և*
կ՚երևի որ ոչ առանց դժարութիւն կրելու հին
տոմարութեամբ վարժուընէրէ, ինչպէս քանի մը
խօսքերէն ու գուշակուի. նոյնպէս այլ կ՚երևի
որ մէկ մասը գրած է իր մէկ մտերմին, որուն խոս-
տանալով յետոյ աւելի տեղեկութեամբք գրել.
այսպէս իրատով և ընտանեբար ու վերջացընէ.

10477396

« Արդ դու ընկալ այժմ զսակաւութեան պատաս-
» խանի հարցմանն. նախ խոստովանութեամբ, ոչ
» ուժեք հակառակելով և ոչ վիճելով. քանզի
» բանս ընդդէմ դնել անզգամին՝ ոչինչ օգնեացէ.
» վասն որոյ լուել և առանձին խմաստասիրել՝ կամ
» ընդ խորհրդականս, յոյժ շահաւոր է։... Եւ
» դու որպէս և գրեցեր՝ և կարես գալ՝ բարւոք
» է. ապա թէ ոչ՝ զամենայն ինչ որ տարակու-
» սելի քեզ՝ հարցցես գրով. ընդ հօքն Աստուծոյ
» պատրաստ եմք լուծանել զտարակուսանսն և
» ուսուցանել զանգիտացեալն, ապաստանի յոյս
» Հոգին սուրբ։... Այլ այլ ինչ որ պակաս լցէ,
» և եթէ հաճոյ լիցէ քեզ, զամենայն ոճս՝ նո-
» րովս (տումարով) գրեմք՝ որ չեն գրած »։

Վերջին խօսքերս կ'իմացընեն որ սրբոց ոճնե-
րուն կարգաւորութեանն համար էր ինդիրն, և
թէ կային ծանօթ սուրբք՝ որոց ոճն օր գրուած
չէր, և ասոնց համար կ'ըսէ, թէ որ կ'ուզես իմ
ցուցած նոր և հաստատուն տումարիս օրերուն
վրայ գնեմ ասոնց յիշատակը։ Ինքն այնչափ ըս-
տուգութի և ճշդութիւն կու բնաւէր այս սրբոց
ոճնից օրերուն, մինչև օրերուն տարակուսանքն՝
զսուրբեն այլ կամ անոնց ոճնելի ըլլալը տա-
րակուսելի կ'ընէր իրեն. այս բանիս կու վկայէ բազ-
մահմուտ Սրուեցի (մեծ) Վարդան վարդապետս,
առ Չեթում թագաւոր գրելով այսպէս. « Սար-
» կաւագ վարդապետս ասացեալ էր ընդ իւր խոր-
» հրդակից, թէ ես այնց ոճն չեմ ոճնել՝ որ չեմ
» տեսեալ զոճնին պատճառն և զաւուրն ընորհն։
» Ի սուրբ Ստեփանոսի ոճնին՝ յետ արձակման
» ժամուն՝ զժամուան դուրն փակեալ էր, գիտե-
» լով թէ մարդ չինաց 'ի նեղլք, և սկսաւ աղօթել.
» և եկն սուրբն Ստեփանոս և համբուրեաց զվ-
» արդապետն, և ետ նմա ըմպելի հրնգէն. և ա-
» ւաց Վարդապետն, թէ յուշ էր եկիր յայս

» տարպայս, (անգամ). և առէ Նախավկայն. Գի-
» աքս, հայր, Թէ քանի եկեղեցի եմ գնացել՝ ի
» մեծարել զաօնողն՝ շնորհօքն Քրիստոսի, և
» լուկ օր վճարեցի: Եւ աբեղայ մի Թագուցեալ
» կայր՝ ի դան, եռես և լուաւ. և եկն անկաւ
» յոտս վարդապետին. և նա ասաց, մի ուժեք
» ասիցես»: — Ուսումնականէն կերպով մը՝ ի
Հրաշյալին տարաւ զմեզ պատմութիւնն. ուր ես
այլ հնմայ չեմ ուզեր ուշանալ, բայց ոչ այլ զանց
ընել ըսելու, որ այս տեսիլքս աւելի պարզ և հա-
ւանելի կերպով կու յիշէ Վարդանէն հին հեղի-
նակին և իմ նախ յիշածս՝ Ցովհաննէս Գաւռնեցի.
« Ահա Սարկաւագս, կ'ըսէ, այր սուրբ և տեսող
» և զուարթերես և լի հոգւով. որ և՝ ի ծոնի
» սուրբ Նախավկային ինդրեաց՝ ի սուրբ վկայէն
» տեսանել զինս, և ահա երևեցաւ նմա գէմ յան-
» դիման և գրկախառն համբուրիւ ողջունիւ ոչ-
» ջունեաց զինս. և բազում բանս վսեմագրականաս
» խօսեցաւ ընդ նմա»:

Ահյսչափ քննութիւնք, տոհմագրութիւնք, նորո-
գութիւնք և ակնարկս գրուածք՝ լաւ իմացուցին
Թէ կայ ազգին մէջ անանկ ամենահաս և կարող
գրիչ մը. անոր համար շատոնք իրեն ուրիշներ
նեղուն լուծմունքն իրմէ ուզեցին, ինքն ալ ան-
նախանձ և բարեաէր՝ լցուց կարօտութիւննին:
Ահյսպէս են մեզի հասած քանի մը մանր գրուածք-
ներ՝ Հովերու և Երկրաշարժի պատճառին վրայ,
որոց մէջ՝ ի հարկէ հնմանուան բնագիտաց կար-
ծիքը և գրութիւնը պէտք չէ բնտռել, բայց բա-
ւական ոգևամտութիւն կ'երևի, շատ հմտութիւն
և քանք տոյգ և զանազան գիտութեանց, մանր
գիտողութեամբ և զգայմամբ բնութեան տեսա-
րանաց և օրինաց. որոց օրինակ ըլլայ, անգամ
մ'այլ, տակի Թաղնոյն Ձայնին եղանակն, ՝ի քաց
Հանելով բարոյական քաղգատութիւննէրը.

Արթուն եւ զուարթուն թռչուն, հակոտ եւ բարբառոտ,
Կանչող եւ կարկաչող, ձուձուռոտ, ձայնոտ, պաշտօնատէր...
Անմերձ եւ մօտաւոր, ուրախարար լսասիրաց.
Քաղցրաձայն գաշնակաւոր, որպէս կարծեմ՝ ըստ արուեստին.
Սաստկախօս եւ հարթավանկ, խանդաղատող եւ ողբերգակ.
Հրամայող եւ ողջոյն, ըզնուագահանդիսական շնորհաւորող,
Սպառնացող եւ հեզախօս, գգուող, կոչող եւ հրաժարող.
Կականող եւ ձայնարկու, յոյժ ինդացող եւ զուարճացեալ.
Արդ գիշերն քեզ ի սիւս, եւ խաւարն որպէս ըզկոյս:

Որ և է բնապատում կըրնայ գովուԹեամբ չեԼ այս սարեկին եղանակին յատկուԹիւնները, որք երբեմն Սարկաւագին աղօԹքը շփոԹեԼ կու տային. և օր մ'այլ ձարն հասանելով՝ նստաւ գրեց այսպէս 200ի չափ երկայն տողերով ոտանաւոր « Բան իմաստուԹեան, ի պատճառս զբօսանաց, » առ ձապն՝ որ զաղօԹանոցաւ նորա ձևուողէր » քաղցրաձայն, որ կոչի Սարիկ ». և գրեԼոն ա֊տեն՝ յանկարծազդեցիկ բանաստեղծի պէս այն֊պէս վառուեր և յափշտակեր էր, որ գրի կացա֊մարն վրան Թափեցաւ և հադած կաշին զգեստը աղոտեց. հարկ սեպեց որ այս բանս այլ գան֊գաոեԼով մեզի իր քաղցրախօսիկ դրացւոյն.

Այլ եւ զայժմուս իսկ պատահումն՝ ոչ լռեցից պատաբերել.

10477396

*Ընտանեաց հօրըն փոխադրեան՝ որ կու անկ-
ման ընձեռեցաւ՝
Ապացոյց մեռելութեան եւ գուշակիչ ան-
կութեան,
Ընկերակուա՝ ինձ համեմատ՝ զայս արարել
գու անպիտան:*

Ահա կէս իմաստասիրական կէս գուարթական քանատեղծութիւնն՝ որ Սարկաւագի մեզի հասած գրուածոց մէջ ամենէն գուարճալին է, մեր գրականութեան մէջ անման գրուածոց այլ մէկն է, և ախոյ ճոպ անմատանալի: — Իսկ ինչն ուսումնական բաներ տալով և գրեթէ հանուր յայտնապէս կու պահանջէ, թէ «ամենևին բազմութենէ » հմուտ պարտ է գոլ ձեռնարկուին այժմ, ոչ » միայն արտաքնոց և սառուածաշունչ գրոց, այլ և » արտաքնոց »: Սակէ այլ դէպեցիկ և հասարակ փիլիսոփայութեամբ կու պահանջէ որ ուսումն կամ գիտութիւնն փորձով այլ սորվելու. « Դարձեալ թէ և ոչքօք կիրթ եւ վարժ, » ասանց փորձի՝ կարծիքն հաւատարմանալ ոչ » կարացեն. և փորձն՝ հասարակն և անեղկ- » քայ... վասն զի ոչ է պարտ միայն հնագիտակ » լինել, այլ և ինքնաբեր՝ քան զնորհացն Աստու- » ծոյ »: Ասանց այսպիսի հնարիկ գրոյ կամ խոսոյ գիտնոյ խելքը՝ մեզապրելով կ'անուանէ « խօլ հանճար՝ անհանճարիկն »:

Արդ անտարակուսաբար կրնանք ըսել որ Սարկաւագ վարդապետս շատ մեծ արդիւնք ունեցաւ այսպիսի ջանքով և գործերով, որոց բովանդակութիւնն է՝ ըլլալն իր ժամանակին և երկրին մէջ նորոգող ուսմանց և քնարը ախտաժակ մըացընող. ինչ որ ծն գարուն մէջ սկսան Եւրոպացիք՝ ինքը մեռանելեն ալեր էր, կամ թէ իրեն ժամանակակից դպրոցական ըսուածներուն չհաս. և

10477396

Թէպէտ չհասան մեզի այն առեալ գրուածներըը, բայց յայտնի է որ ինքն գաստատուածքեամբ այն նոր ոճը բանեցուց. անոր համար կոչուեցաւ « Մեծ Սոփեստէան Հայրապետ »:

Սարկաւագ վարդապետ իր մտաց ուժը՝ գիտութեանց, հոգին ալ Աստուծոյ և աստուածայնոց նուիրած էր, ինչպէս որ ամեն սասնկ զօրաւոր և զգօն իմաստասիրաց յատկութիւնն է. և իրեն գրուածքներն ալ կը վկայեն որ աստուածային բաներու մէջ խորամուխ էր, միանգամայն և մեծ հոգեսիրութեամբ վառուած՝ ճշմարտութեան և վարուց ուղղութեան բերելու զուարճները. քայց առանց կուսասէր վիճման և բանադատութեան, այլ անհակառակ և խեղճացի հասանոտական խօսքով և գրով: Այս հոգին և այս մեծ հանճարն էր որ զինքը Հայրապետու վանաց առաջնորդ կամ հոգեւոր հայր ըրին. այն պաշտօնն այլ ինչպէս իր պատճառաւ ուրիշներուն՝ սասնկ ալ իրեն շատ օգտակար եղաւ միտքը աւելի բարձր աստիճանի հասցընելու. լաւ ճանչցաւ մարդուս սրտին ճամբաները, և անանկ ծափանցող եղաւ որ հոգեսեութեան ձիրք ունեցած կու կարծուի: Քաղցրութիւնը իրեն գործիք էր ըրած սիրտ շահելու, քայց ոչ երբեք անով թեթեւութեան մը կիյաւ. վեհմութիւնը իրեն խօսքին հաւանեցուցիչն էր. աքանչելի վարքն և օրինակն՝ անհոս և բանադատիչ քարոզ. ակարաց և կաթօսից համար՝ գըրածքները միշտ յիշեցուցիչ և արթնցընող. սեղին յարմար խաւութիւնն ու անուշաւութիւնն ալ՝ վարդապետական պաշտօնին համեմատ, և անոր պատիւը աւելցընող՝ քան թէ ակարկուս ընող:

Կը պատմուի, թէ իր պաշտօնին անարժան քահանայ մը շատ անգամ խրատուելով քայց իր անկարգ վարքէն ետ չկենալուն՝ Սարկաւագ վարդապետ զինքը պատարագէն արգիլեց. անօրէնն

10477396

ոչ վարդապետին քաղցրութիւնը և ոչ սաստը, և ոչ ժողովրդեան արհամարհանքը (որ ծալլելով Զոմզոմա կու կանչէին նրեն) բանի տեղ դրաւ, հապա զայն՝ որ իր անարժանութեանը արգելք կ'ըլլար տուրբ խորհուրդը մատուցանելու, ուզեց անոր տուրբ նախանձաւորութեանը զոհ ընել. վասն զի Աչմարտութիւն միշտ ծանր կու գայ ծռած ըլլելուս: Որ մը Համբան հանդիպելով իր վարդապետին (որ վանքին մօտ գետոյն վրայ եղած քարայրէն կու դառնար՝ կարդալէ), աւազակաբար յարձակեցաւ՝ այն մեծ և պատկառելի գլխուն վրայ ձեռք վերցընելով. իսկ վարդապետն անխռով և քաղցր ծանրութեամբ ըսաւ, սիրելի որդեակ Սուեփանոս, ինչո՞ւ կ'ուզես չարչարել քու վարդապետդ. պատասխանեց լերկն. Ինչուան հիմայ Զոմզոմա էի, հիմայ սիրելի Սբէֆանոս դարձայ. ինչո՞ւ դուն ալ զիս սպաննեցիր՝ զրկելով եկեղեցիէն: Վարդապետն տեսնելով որ խրատն բաւական չէր ըլլար անոր պարտքը ձանձցընելու, ուզեց Աստուծոյ Թույլտուլ դատաստանը. տարաւ զանիկայ եկեղեցին և ծանուցուն ըրաւ, Թէ աս եղբօրս յանցանքը զրպարտութիւն սեպելով՝ կը նեղուինք և կ'ազատուինք բանադրանքէ: Իսկ անեղեան այն չափը հասեր էր՝ որ յանդգնեցաւ նոյն օրը պատարագ մատուցանելու. բայց Աստուծոյ բարկութիւնը վրան հասնելով՝ դիւահարածի պէս ընկաւ. ինչուան որ նոյն հոգևոր վարդապետան աղօթքով Թէ անոր առողջութիւն պարգևեց և Թէ խելքը գլուխը բերաւ:

Իր հոգեսիրութեանը համար ըսուեցաւ, Այր սեաոլ և լի հոգւով. և իր աքանչելի աղօթքներն ալ նոյնը կու ցուցընեն. և ինչպէս կ'երևի սա աղօթքներս ոչ միայն իր սրտին զովացմանը համար գրեց, հապա նաև անոնց՝ որոնց հոգը իր վրան էր ասեր. անոր համար ըստ կանոնական

հաւակն և կրից հոգւոյ շարադրեց. տըղոց համար՝ անոնց հաւակնին յարմար ընորհքները խնդրելով, և մեզաւոր ու աչքկոծ հոգիներուն համար՝ ողբը, և այլն: Համբակները խնամատուրեան սիրոյն յորդորելու համար՝ գրեց խնամատուչ յորդորները, որոնց միացորդները հասան մեզի. քահանայից՝ իրենց ահաւոր պաշտօնը արժանաւորապէս պաշտելու համար՝ քահանայութեան վրայ ընտիր ճառ մը գրեց խոհական վարդապետութեամբ. սրբոց, և մանաւանդ մեր եկեղեցւոյ հարց յիշատակը նորոգելու համար՝ իրենց որդւոցը սրտին մէջ՝ գեղեցիկ ներբողներ հրատարակեց և անոր թոռանցը վրայ. եկեղեցական պաշտօնին ալ զարդարեց ընտիր երգերով: Այսպիսի ջանքն անկարելի էր որ անպտուղ մնար. իրեն արժանի աշակերտներ ունեցաւ, բայց ժամանակն՝ որ վարպետին գործոյը չնայեց՝ աշկերտներուն ալ ըստ մասին մոռացութեան մէջ թողուց:

Բայց ինչպէս որ առաջ ըսինք, ածային բաներու մէջ ծանրութիւնը՝ մարդկանց քաղցր ընտանութիւնը չմոռցաւ, հապա գիտէր զինչանել մարդկանց և կենակից քաղցրաբանութեամբ, ինչպէս որ Զըւարթաւս ալ կ'անուանեն զինքը: Զուարթութիւնը ոչ միայն երեսին, այլ և լեզուին և արԹուն մտացը վրայ կը փայլէր, որով շատ օգուտ բերաւ իր վանքին ալ, իր մօտ գտնուած ազգայնոց ալ. վասն զի շատ խշմանութեան և բռնաւորութեան սիրտը կ'ատնուր աս ձիւքերովը, նման իր պատուական Յովհաննէս Իմաստասիրին: Դաւիթ Վրաց Թագաւորն այնչափ լաւ ճանչցեր էր աս մեծ մարդուս յարգը՝ որ շատ հեղ հետը կը տեսնուէր, և գլուխ ծռելով օրհնութիւնը կը խնդրեր. Սարկաւագ ալ մեծութեն չծախելով Դաւթի մարգարէին խօսքը յարմարցնելով կ'ըսէր. «Գան զԴաւիթ ծառայ իմ, և խոսով սրտով ի-

» մով օծի զնա . չեան իմ ընկալչի զնա , և բազուկ
» իմ զօրացուսցէ զնա » :

Ժամանակին խնդիրները , և Յունաց դեմ վիճ-
մունք ատիպեցին մեր Սարկաւագը որ Աստուա-
ծաբանական գրուածքներ ալ հանէ . ասոնց ոճն
ալ Թէպէտ երբեմն Սարկաւագին է , այլ երբեմն
ալ հեռու է անկէց . և ասոնք գրուածոց մէջ օ-
տար ձեռք խառնուելն նոր բան չըլլալով նաև մեր
ազգին մէջ , չենք կրնար Սարկաւագին ընծայել
զոլոր գրուածքը՝ ինչուան որ աստուածգոյն օրի-
նակներ չունենանք ձեռնընկա :

Ինչպէս դուս կ'ելլէ ինչուան հիմայ անոր մեզի
ծանօթ եղած գրատուր աշխատութիւնները , որոնք
ամենն ալ ընական գրուածոց կարգը կրնան գրուիլ :

ա. Սուրբ Լուսաւորչի վրայ նեղբոզական ճառ
մը , որ բաւական է Սարկաւագ վարդապետին
ոճը և ճարտարութիւնը ծանցընելու , լեցուն ի-
մաստներով և կարճ խօսքերով , ինչպէս նրբեն ե-
զական ձիւքն է : Լուսաւորչի վրայ գրուած ճա-
ռերուն մէջ ասիկայ ամենէն կարճն է , բայց ամե-
նէն ալ գեղազանց . աս ճառիս սկիզբն է . « Ջնա-
» հատակութիւն արբոյն ածնէ եկեղեցի » :

բ—ե. Սրբոյն Սահակայ և Մեսրովպայ , մե-
ծին Ներսեսի , Տրդատայ և Գրիգորիս վրայ ալ
ճառեր գրած է , կ'ասեն , բայց ես չեմ տե-
սած . և Թէպէտ կան մեկ երկու գրուածքներ ա-
սոնց վրայ՝ որ Սարկաւագին կ'ընծայուին , այլ իր
ոճին հեռու են :

զ. Վասն մասանց պատուոյ և պատկերաց ընդունելո-
ւեան . արժանի իմաստասէր անուանը գրուած ,
Թէ խեղքն և Թէ ոճն , և վեմ գրուածքն . ա-
սոր մէջ կը ցուցընէ Թէ ինչ առումնան պատիւ
տալու է պատկերաց . և սկիզբն է , « Յանուանէ
» Քրիստոսիդ և հանգարեալք յանբաւու-
» Թիւնս » :

10477396

Ե. Վան ջրծման էջիէ. Համառօտ գրուածք մը, կամ գրուածքն մը կատր, ուր հովէրը երկրին տա-
կին ստանուելոնց պատճառ կու կարծէ, և քանի մը բնական երեւոյթներու վրայ կու խօսի:

Ը. Մէնուելեան փոմպէն, և Յաղագս անկէնաւոր ըն-
ող. որուն ինչպէս յիշեցի՝ միայն հատուածներն ունինք:

Թ. Բան նրպտո. իմաստուելեան վրայ վարդա-
պետուելեան մէն է, մեկ երեսիկ մը գան, բայց ոզջախկուելեան մէջն ալ այնչափ ընտիր՝ որչափ են ոզջախկ գոհարները:

Ժ. Աղօթագիրք. զանազան վերնագրով, քսան հատի մը չափ, ամենն ալ ընտիր վասն արտաշարժ, որ և ամեն մեր նախնի աղօթագիրներէն գերազանց, և կերպով մը Նարեկացիէն աւելի բնական և կատարեալ. Թէպէտ Նարեկն ալ անհաւասարելի է իր կարգին մէջ:

ԺԱ. Աստուածաբանական բան. քսան կամ քսանուհինգ գլուխ բան, որոնց մէջ միայն ինչպէս վերը ըսինք՝ աւելի հասարակ զուրցուածք կամ անհատական ձև կ'երևնայ:

ԺԲ. Սրբոց Վանդեանց վրայ համբարձի շարականն՝ Պայծառացիր, որուն ամեն բանաստեղծ անօթ պիտի ըլլան:

ԺԳ. Ս. Հոգւոյ վրայ գրուածք ձառ մը:

ԺԴ. Վանական աւետարանի մեկնուելեն, զոր իր աշակերտն Սարգիս կու յիշէ:

ԺԵ. Շատ անգամ յիշատակած քանաստեղծուելեն 'ի Սարկին:

ԺԶ. Տաղ 'ի Յարուելեն Քրիստոսի:

ԺԷ. Անշուշտ իր ամեն գործքերուն մէջ գլուխ գործոց սեպելու էր իր Պատմուելեանը, որ դեռ կատուածներուն կարգն է ինծի. բայց Վարդան, Կիրակոս, Մխիթար Այրիվանեցի, Սամուէլ Անեցի կը յիշեն զայն, և կը վկայեն անոր ընտիր համա

10477396

և պանդխտելն գրուածքին: Այս եւթէն պատմագիրս՝ որ անոր աշակերտն էր, իր ժամանակագրական պատմութեանը մէջ երկու խրթին հատուածի կը քերէ այս ցանկալի պատմութենէն, որ ոչնչափ ուրախութեան պատճառ է մեզի, գոնէ ան մէկ թըղթի պատառիկն ունենալնուս և անով ամբողջ գլուխին վերծութիւնը և պղնուութիւնը ձանչնալնուս, այնչափ ալ ցաւ կու տայ անոր կորստեանը վրայ. վասն զի այն հատուածներն՝ նման վերծոգրեալ գրուածոց վերծութեան՝ փաստ մը կըրնան ըլլալ, թէ այն պատմութիւնն այլ մեր գրականութեան ընտիր գրուածքներէն մէկն էր, և իրեն ցեղին մէջ թերևս առաջինն ընտիրը: Այս պատմութիւնս կ'երևի թէ երկու գլխաւոր մասն էր. մէկ մը ընդհանուր Սկիւթական (Թուրք) ազգաց ծագման և արշաւանաց վրայ, որ ժա դարէն սկըսան գալ Հայաստան, Սէլճուգեանց և Տուրլիքեանց, Ալփասլանին և անոր նախորդաց գործքերը. մէկ մ'ալ Ալփասլանի որդւոյն Մէլիքշահին գործքերը, որուն մահուամբը կը դադրեցնէ Սարկաւագ իր պատմութիւնը: Ահաւասիկ ատոր վրայօք ըսածն, որ քեզի այլ ձոյակ մ'ըլլայ մեր տափեատէսին պատմաբանութեանը և իրըդածութեանցը. «Իբրև առնոյր զփառս էշ
» խանութեանն՝ բարեբաղդն Մէլէք-Շահ, զկնի
» հօրն մահուանն՝ Ալփասլանն կոչեցեալոյն, մեծա
» պէս կարգօք յօրինէր զթագաւորութիւնն. ըստ
» անուանն արդարև եղեալ արքայ արքայից: Ոչ
» հեռևեալ հօրն բարուց և կամաց, այլ և յա
» էտս մանաւանդ զընդդէմն ախորժեալ, մինչ
» զի և մոռացաճ եղեալ՝ զնորայն բարեր զիմաց
» մոռնա, իբրև եղեալ հնակառակ իշխողութեան
» և կենաց մարդկան, արեամբ և զկնմամբ խան
» դագեալ: Իսկ ինքն նմանաբար քաղաքավա
» րութենէ կարգօք պատրաստեր զամենայն: Որ

» իսհեմն այն և. ալի քան զյոլովս ՚ի Թագաւորաց
» և քան զամենեսեան ոլ առ. մեօք, ոչ այնքան
» առանէր հոգ՝ ոլքան արդարութեամբ առ ամե-
» նեսին վարիլ. զի մի ոք լեցի արտաւմ ՚ի զսկեղց,
» և հպարտ՝ ՚ի գոռոզաց: Էր և ազատաբարոյ և
» մեծախորհուրդ. այլ և սեպիլ մարմնոյն ար-
» ժանի Թագաւորութեանն. ընդ որում հեզու-
» թիւն՚ի քաղցրութիւն բարուցն լծակցեալ՝ առ-
» նէր սիրելի ամենեցուն. զոր միայն կոչեցից Թա-
» գաւոր և փարթամ: Սա ՚ի դոյզն ժամանակի
» փոքր ինչ նուազ զբոլոր հնազանդէր զաիե-
» զերս. զոր այլք ՚ի Թագաւորաց՝՚ի բազում ժա-
» մանակս և կամ ոչ բնաւ. բայց ոչ այնքան ապա-
» տերազմաւ և բռնութեամբ՝ ոլքան սիրով և
» քաղցրութեամբ: Զի Թէ սակաւ ինչ ժամանա-
» կաւ այնքան զօրեաց՝ կարծեմ Թէ և ոչ Եւրո-
» պէ կարէր ոչ առ մուաս ոլքայութեան նո-
» ցա, եԹէ յոլովեալ էին կենաց նորա ժամա-
» նակք:...

» Ի շԽՍ. (1092) Թուականին սպանաւ մեծ հա-
» զարապետն ոլքային Պարսից Մէլիքշահին, ո-
» րում անուն էր Հասան, իսկ ըստ պատուոյ աս-
» ւիճանին՝ Վզուրկ խոճայ: Եւ զկնի աւուրց
» քանի և ոմեքից մեռանի և ինքն Մէլիքշահն.
» զորմէ համբաւեր յոմանց դեղակուր ՚ի կնոջէն
» լեալ. որ էր հեզ առ ամենեսեան և քաղցր
» բարուք յոյժ առ ազգս քրիստոնէից: Եւ յետ
» մահուան նորա անպատմելի եղև խռովուԹիւն
» ամենայն ազգաց զամն ջորս. զի եղբայր նորա
» Դըզդուշն և որդի նորա Բէքիարուխն՝ զայսոսիկ
» զամն մարտիւ պատերազմաց զբարեյարմարս.
» ԼԹիւն զամենայն ՚ի բաց կարեցին[1], վասն ոչ
» ընդ փոյթ միոյ ՚ի նոցանէ սիրելոյ. Հասանայ ա-

1 կամ ընկեցին:

» բեանց իբրև զուռխից լինէր, ոչ միայն զինակիր
» նահատակացն՝ այլ և առհասարակ ազանց և
» գաւառաց. և նեղութիւնք վշտաց տուու և գե-
» րութեան: Եւ այսպէս բարկն՝ ի բաց վճարե-
» ցան ընդ խզման կենաց Թագաւորին. որոյ երկք
» և աշխատութիւնք Թագաւորականք՝ ուրոյն, և
» շահն և օգուտն՝ հասարակաց ամենեցուն, մե-
» ծամեծք և ընտրելիքն. մանաւանդ զնաղա-
» զականն առեմ զկեանս և զանհակառակն. զի
» սիրէր զազգս մեր այնքան՝ զի աղօթս հայցէր
» և օրհնութիւնս. յորմէ և անդ երբեմն չոգաւ
» Հայրապետն [1]: Ո՛չ, թէ միայն էր աշակերտեալ
» քրիստոսական կրօնից և կարգաց: — Արդ՝ ի
» քաղաքին՝ յորում նստաւ և Թագաւորեաց՝
» Յանապահան մայր քաղաքացն Պարսից՝ և մե-
» ռանի անդ »:

Զարմանալի հանդիպութիւն. որչափ որ բա-
րակ և ազնիւ Ճաշակ ունէր Սարկաւագ և ազնիւ
բաներու վրայ կ'ուզէր գրել, այնքան Թանձր և
դժար ժամանակի և անրտպեսութեան առեն
հանդիպեցաւ. և փոխանակ բարեկիրթ Թագա-
ւորաց գործերը գրելու՝ ստիպուեցաւ այն խոր
Սակայ միջնաշխարհէն եկած ապաստանիներուն
գործերը նշանակել, ինչպէս որ հաճելով մը կ'ա-
նուանէ. «Սկիւթական ազգաց, ոչ եկեղեցիս-
» հիցն՝ այլ բարբարոսացն՝ եղեալ մուտ յաշ-
» խարհս (մեր)»: — Սակայն մեզի համար՝ որ
գիպուածները չեմք կընար փոխել՝ միշտ բաղդ
սեպելու էր գոնէ այն բարբարոսաց գործերն այլ
լսել եկեղեցիս ապաստիճէ մը:

Ա. յս Պատմութենէն զատ՝ զոր կընամք անուա-

1 Բարսեղ կաթուղիկոս, որ գնաց ի Պարսկաստան
յամին 1089-90, առ Մելիքշահ, և խնդրեց և ընդունեցաւ
Թեթևութիւն հարկաց քրիստոնէից և հանգստութիւն:

10477396

նել Թուղքայ պատմութիւն, և որ Սր. Լաստի-
վարտեցւոյն պատմութենէն եաև պէտք է գա-
տուի՝ ըստ ժամանակին, անցեալ գարուն վերջը
գրուղ բանասէր մը կ'ըսէ, (ԺՀ) Թէ « Սարկաւագ
» վարդապետն սուրբ Յովհաննէս՝ արար Եկեղե-
» ցական Պատմագիրք »· այս բանիս վրայ հինեերէն
վկայութիւն մը չունիմ, միայն փափագիմ Թէ յի-
րաւի գրած ըլլար, և առաւել Թէ գառւած ըլ-
լար· գուցէ Թէ աս եկեղեցական պատմագիրքն՝
ըլլայ (ԺԹ) Կանոնագիրք· վասն զի այսպիսի բան
մ'այլ կ'ընծայուի Սարկաւագայ: Առնցմէ զատ
կու յիշուին, ի· Յաղագս ջրոյ առաքինութենէց:
Հարցուածն վարդապետաց առ Սարկաւագ: Մեր
ժամագրոց մէջ կարճառօտ ալօթք մը կայ Յէ-
ղիա Տէր պատգամնէտյս ֆո, որոյ վերնագիրն է « ի
» սարկաւագ վարդապետէն ասացեալ »· սակայն
այս ալօթքս մեր Սարկաւագ վարդապետէն ա-
ւելի առաջ այլ յիշուած ըլլալով՝ կամ եաքին-
ներն սխալմամբ իրեն ընծայած են, և կամ ըսել
է Թէ այն ալօթքը սարկաւագին կու վայլէ ըսել
եկեղեցւոյ մէջ: Այս այլ յիշեմ որ Սարկաւագ
անուամբ ուրիշ անձինք այլ եղած են· որոցմէ
մէկն է Հաղարծին վանքին առաջնորդն, ժամա-
նակաւ յետոյ քան զմեզն: Բայց Թէ նա և Թէ
ուրիշք՝ գրուածք այլ Թողած ըլլան՝ մեր տգիտա-
ութեան գրուածքն իրենց իսկատիպ չնորհքն ու-
նին, որով մէկէն կու ճանաչուին· և զարմանքն
այս է՝ որ այնքան զանազան և տարբեր նիւԹոց
վրայ ըլլալով գրուածքն և այնքան պէտպէս ոճե-
րով գարձուցած, դեռ ամեն այլ իսկութեան
կերպ մ'ունին, ամեն այլ իրենց առանձին մէջ
ընտիր են· և կու յայտնեն հեղինակին մեծ, զո-
րաւոր գեղմաւոր և զանազանեալ հանճարը· որ
և հաւանօրէն իմ յիշածներէս զատ ուրիշ շատ
բաներ այլ արտադրած պիտի ըլլայ, Թողուս (իր
ըսածին համեմատ) յիշատակ

. . . . . « ըզկնի անապականն
Առ հանդերձեալսն ժամանակ »:
Գուցէ այն հանդերձեալ ժամանակին օր մը յայտնէ քեզի, Հայկակ, այդ ցանկալի գլուաւոր գանձերը:

Սարկաւագայ աշակերտներէն այլ քանի մը միայն կու յիշուին. մէկն է վերոյիշեալն Սահակ Անէցի, ժամանակագիր պատմիչ. երկրորդ՝ նոյնպէս յիշեալն Կոնոպ Սոփէս վարդապետ, որ գրած է մեկնութիւն աւետարանաց Յովհաննու և Ղուկայ, ուրց մէջ իր վարպետին խօսքերն այլ կ'անցընէ. գ. Եզէմա Անդրէէ, որուն անգամ մը վարդապետին կու տայ եղած մեծ համարմունքն:

« Դէպս եղև զի յաւուր միում նստէին երեք այր » արքս սքանչելի. եկն անդ այր մի չինական, և » ասէ ցնոսա. Երանի՛ որ գիտէ՛ ի ձէնջ թէ ո՞ » իմաստնագոյն լցէ: Զայս լսելով ծաղրական ա» սաց: Պատասխանի եա թ՝ոքակերն որդին և ա» ս է. Ես ասեմ քեզ. մինչդեռ էաք՝ ի մերում աշ» խարհին՝ ես կարող էի և կարող. իսկ Սարկա» ւագս կարել միայն գիտէր. իսկ այժմ սա կարէ » և կարէ, և քաղցրագոյնս յաւելու՛ ի վերայ:
» Զայս առակաբար ասէ իմաստութեան նորա
» ասաց »:

10477396

Յաւալին է մեզի Սարկաւագայ վարուց և գոլոծոց մասամբ անծանօթ մնալն, ինչպէս նաև իր վերջի տարիներուն և մահուան կերպն. և զարմանք է որ Յայսմաւուրաց մէջ չեմ հանդիպած անոր վարքին կամ յիշատակին, ինչպէս որ իրմէ եաքը եղող շատ վարդապետաց վարքն կան. գուցէ դեռ իր ապրած կողմերուն մնացեալ վանից և եկեղեցեաց Յայսմաւուրաց մէջ գտուի այս փափագածնիս: Միայն իրեն կենաց լման Թուականը կ'ասանդեն Սամուէլ և ուրիշ ժամանակագիրք. «Ի ՇՀԸ Թուին (1129) փոխեցաւ 'ի Քրիստոս » մահուամբ նը վարդապետն Սարկաւագ 'ի Հաղ» բատ »: Բարեբաղդութեամբ գոնէ այն եկեղեցի խոհ և բարձրաձեմ պլուխը ծածկոյլ քարն ծանօթ մնաց. յիշեալ վանքին Ս. Աստուածածնին եկեղեցւոյ գեղեցիկ զանգակատան տակ՝ կու կարգացուի. ԱՐՁԱՆՈՅ ԱՅՍ ՍԵՄԱԿԱՆ Է ՍՈՓԵՍՏՈՍԻ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ: Անծանիկ նշանաւոր անձին կամ վայրէր նշանաւոր արձանագիր մ'այլ, որոյ նշանական բառն է Սէմոկան, զոր ոմանք կ'ուզեն Սէֆեան կարդալ. այլ կըրնայ նոյն իսկ սեամ բառին ածանցն ըլլալ, նշանակելով թէ այն քարն իբրև սեամ է, զոր կոխելով Սարկաւագ՝ ալիսի մանէ յանմահութեան տաճարը: Ո՞ գիտէ թէ արգեօք ինքն իսկ էր պատուիրած այնպէս գրել: Սարկաւագի Թաղուած տեղն այն տեղ հին պըզտի եկեղեցի մը կար, զոր դարմ մ'եաև քակելով՝ չինեցին զանգակատունը, բայց ինչպէս կ'երևի՝ չգիտեն գերեզմանին:

Երախտագէտ և զգայուն համազգիք մեր, իրենց պանծալի վարդապետաց և գիտնոց հանճարոյն և պրսաձեն համեմատ՝ մականուններ նաև ըեր են. ինչպէս, Քէրդոզ (Մովսէսք), Փէլէոոֆոյ (Դաւիթք, Թէոդորոսք) Հոէպոր (Խոսրով), Վէրծանոզ (Մամբրէ), Իմաոպատէր (Յովհաննէս Օձնեցի),

10477396

Հատարաշ (Աղանիա), Շնորհալի (Ներսէս Կլայեցին), և այլն. մեր Սարկաւագին այլ սեփականեր են Սոֆէսպէս կոչումը. յետ Յովհաննու Իմաստասէր կաթուղիկոսի՝ այսպէս կոչում մը չէր արուած մէկու մը 400 տարուան միջոց, մինչև յայս երկրորդ իմաստասէր Յովհաննէս. անկէ ետև այլ մէկու մը արուած չէ: Սոփեսէս կամ Սոֆիստէս ըստ Յունաց՝ երկեմն իմաստասէր և յետոյ իմաստակ նշանակած է. մեր մէջ փիլիսոփայութեան հետևողք և այնպէս անուանողք կան քանի մը, բայց գլխաւորք այս երեքն են՝ Անյաղթն, Օձնեցին, և մեր Սարկաւագն. երեքն այլ նոյն գիտութեան մէկմէկ կոչմամբ աւելի սեփականեալ, մին Փիլիսոփայ, երկրորդն Իմաստասէր, երրորդս Սոփեստէս. որով յայտ է թէ ժամանակակից՝ այլ լաւ ձանչցեր և կու պատուէին Սարկաւագայ զարմանալի հանճարը, բազմապատիկ հմտութիւնը, խոր մտածութիւնը և ճարտար գրուածքը. միով բանիւ հին ընտիր հելինական հետևողութիւնը, էլէնախոհութիւնը կարճ ըսելով. և այնոր համար այդ մականունը տուին երեն. և անով կ'որոշուի մինչև ցայսօր Հայքս և Սահակեան տապանատանց տակ քնացող այն բարձրաձօճ գլուխներէն՝ որոց տեսչութիւնն վերին տուած թագեր և առած. իսկ ատոր՝ տուած իմաստութիւն, որ անթառամ և անմահ պահեց երեն կէնդանի օթևանը, Սարկաւագայ գլուխը:

10477396

10477396

ՒԳ

Ս. ՅԻԶԻՏԲՈՒԶԻՏ

9 Նոյեմբ. 553.

Աստուածատուր՝ *հնարհաւատ անուանն՝ պանծալի և սիրելի է աստուածապաշտ ազգաց, աւելի ևս քրիստոնէից՝ ճշմարիտ աստուածապաշտից. և այլ աւելի՝ յարևելս, ուր Թուրք և պարսիկ լեզուաւ ալ յաճախ լսուին Աբդուլլէրփ և Թէոփորտ անուանքն, որ Աստուածատուր նշանակեն: Հայոց մէջ այլ այս անուանս որչափ գործածուած ըլլալն՝ յայտնի է մերայոց, նաև խանգարեալ և կարատեալ այլափոխութեամբքն Աստուր, Աթոր, Ծոփոր, Տոփոր, և այլն: Կրօնք՝ հարկաւ կերպով մը կ'ազդէին մարդկան երեսց կենաց տուրքը՝ ոչ միայն Ճանչնալ յԱստուծոյ՝ այլ և խոստովանիլ, անոր համար բնական էր որ երեսց զաւակներն այլ կանչէին Աստուծոյ տուրք կամ պարգև: Այսպիսի բնական ազդման անտարակոյս օրինակը տուին բոլոր մարդկութեան՝ անոր նախածնողքն, երբ առաջին ծնեալ մարդուն (Կայենի) համար գոչեցին, Ստացայ մարդ Աստուծով: Նոյն զգացմամբ շատ հեղ այլ Աստուծոյ մէկ մանաւանդ զօրութեանը կամ շնորհացը նուիրեցին մարդիկ երեսց ծնունդքը, ինչպէս որ Եբրայական աստուածատպաշտ կրօնից մէջ էլ (Աստուած) վերջա-

ցեալ անուանքն կու յայտնեն, Գոբրիէլ, Միխայէլ, Դանիէլ, Ո-րիէլ, Ուփայէլ, և այլն: Ըստ այսմ և հնեթանոսք՝ որ Աստուծոյ վայլած և չվայլած զօրութիւնները և կրքեր անձնաւորելով բազմաստուած եղան, այն առանձին աստուածոց պարգև կամ նուէր սեպհին իրենց որդիքը. ինչպէս՝ (Թոլլով զօտարս և) գալով մեր և մեր դրացի ազգաց՝ կու գոնեմք զանուանս Տրդաթ, Մխիթար, Զրուանդաթ, Որմզդաթ, և այլն, որք նշանակեն աստուած Տրի, Մխիթայ, Զրուանայ, Որմզդի: Այսպէս գեղեցիկ կերպով մ՚այլ սեփականեալ են նոր կրօնից արբազանեալ անուանակոչութիւնք, ինչպէս Քրիստափոր, Տիրատուր, Խաչատուր. որք մեր քրիստոնէութենէ բաւական հին դարուց մէջ այլ կու լսուին. ինչպէս նաև Աստուածատուր անուամբ եպիսկոպոս մը յառաջին կէս զ դարու [1]: Բայց այս դարուս կիսէն կու սկսի Թէ մեր ազգեաց և Թէ մերձաւոր և հեռաւոր արևելեայ քրիստոնէից մէջ՝ այս վսեմական անուան յաճախութիւնն, և շատ աւել՝ սիզբնաւորութիւնն. պատճառաւ նահատակութեան մէկ անծանօթ և անկարծելի մարդոյ մը, որ զայս անուն ինքն նին ընտրեր առեր էր վրան, Թէ և ուրիշ եղբօրաւ և կոչմամբ. և որոյ յիշատակն հինայ փառօք կատարուի մեր եկեղեցւոյ մէջ:

[1] *Ե և Զ դարուց մէջ կու գտուին աւելի ևս բացատրեալ անուանք առ Լատինս. ինչպէս* Quodvultdeus *կամ* Quodvultdeo, (*Աստուածահաճոյ կամ Զոր Աստուած կամի*), Cumquodeus, Coddeus, (*ընդ որում Աստուած*), Deogratias (*Աստուածաշնորհ, կամ փառք Աստուծոյ*), Deusdedit, (*Աստուած ետ*), Deumhabet *կամ* Habetdeus (*Աստուածունակ*), Servusdei, (*Աստուածասպաս կամ ծառայ Աստուծոյ*). *ուսկից ծագեցան և իտալականքն* Amadio, Bonadei, Donadei, Omodei.

Մեր հին պատմչաց հարևանցի յիշատակօք և Յայտնութեանցն Յովհաննու՝ անշուշտ անծանօթ էր քեզ այլ, Հայկակ, Ս. Աստուածածնոյ ծագքն այն հանճարեալ յիշատակաց ազբիւր՝ որոյն վկայաբանութիւնն՝ որ դեռ չէր յերևան ելած մեր ազգային պատմութիւնը և Սրբոց վարքերը երկարօրէն գրոցաց ժամանակն [1], այսօր կու գամ իմ ձեռքս, սրբոյն ժամանակակից և էարտակից անձի մը ձեռօքն նախ գրուած [2], և ուրիշ Հարտատր գրչով կոկած. ուսկից կ'իմանանք՝ որ անոր նահատակութեան օրն եղած է սուրբ այսօր, այսինքն 9 Նոյեմբերի 553 տարւոյն, (և ոչ 552 ինչպէս կարծուէր ինչուան հիմայ). միանգամայն և քանի մը ազգային պատմութեան և առելութեանց կարևոր տեղեկութիւններ կու տայ գրուածքս: Սուրբ հաստատութիւն ունիմք և ժամանակակից ևս ծանուն յոյն հեղինակի մը գրուածոց ձեռագրդը, նոյնպէս նոր գտուած, որ մեր պատմած և կերպով մը սրբոյս այլ պարծանք մը կրնայ սեպուիլ. և է նա Մենանդր՝ ժամանակին ամենէն Հարտատր գրիչն, յորում դեռ յոյն ընտիր դասագրաց ընտրեալքն փայլի, և որ ծանօթ և նշանաւոր էր՝ ի դրան կայսերաց Կ. Պօլսոյ: Ահա ասեն (՝ի կէս Զ դարու) դեռ երիտասարդ էր Մենանդր, և լսելով Աստուածածնոյ նահատակութիւն՝ ի Հայս՝ այնպէս սքանչացաւ և վառուեցաւ, որ ուղեղագրելն մը գրեց այն գիտուածքն վրայ, ինչպէս ինքն կու յիշէ, և մեզի ցաւելը նէլ կու տայ անոր կորըստեանը վրայ. քիչ մ'այլ կու ևսիմարէ անկորուստ հասցընելով մեզի իր

1 Հ. Մկայել Վ. Զամչեան: — Հ. Մկրտիչ Վ. Ա-գերեան:

2 Ըստ Յայտաբերութեան՝ սրբոյն բանուակից Ներսէս աբեղային գրից զայս:

10477396

ուրիշ կարճ գրուածք մը՝ 'ի նոյն վկայն, զոր յետոյ յիշեմ քեզի, Հայկակ:

Բայց ինչո՞ւ արդեօք Աստուածատրոյ վկայութիւնն այնպէս մեծ զարմանք բերաւ և հռչակ ձգեց այն առեն, որով հիմայ այլ արժանապէս հռչակելի է:— Աստր պատճառն, քաց 'ի սրբոյն արհական և գեղեցիկ գործէն և խօսքերէն, մէկ մը նոյն իսկ իր ազգը կօ սեպեմ, Պարսիկ ըլլալն, ազգ գժուարահաճաստ 'ի քրիստոնէութիւն. մէկ մ՚այլ այնպիսի առեն և այնպիսի տեղ նահատակուիլն:

Տեղն է Դուին, քոլոր Հայոց ոստանն կամ մայրաքաղաքն. ժամանակն այլ՝ եկեղեցւոյ հանդարտութեան և մարտիրոսութեանց դադարման առեն մը:— Կայան զի, հոս (եկեղեցական և քաղաքական պատմութիւն մեկտեղ խառնելով) պէտք է յիշել, որ գրեթէ դար մը, կամ գոնէ 70 տարի էր՝ որ դադրեր էին 'ի Հայս հալածանք Պարսից, (որք սիրէին մեր աշխարհին մեծագոյն մասին), արդեամբք քաջին և առաքինւոյ Մեծին Վահանայ Մամիկոնոյ, որ յետ երկար և դիւցազնական պատերազմաց և յաղթութեանց՝ ստիպեց զարքայից արքան Պարսից, ոչ միայն ազատ թողլու զՀայս իրենց կրօնից մէջ, այլ և յանձն առնլու անոնց վրայ փոխարքայ կամ մարզպան դնել իրենց ազգայիններէն. ինչպէս որ եւրաւ նախ ինքն Վահան 25 կամ 30 տարուայ չափ, յետոյ իր եղբայրն Վարդ 3 կամ 4 տարի. ուսկից եաւ Թէոդոսիոպէտ քանի մը տարի Սուրէն անուամբ Պարսիկ մարզպան մը կեցաւ, քայց նորէն իրեն յաջորդեց Հայ իշխան մը, Մժէժ Գնունին, որ 30 տարի (518-547) քաջութեամբ և խոհեմութեամբ վարեց իշխանութիւնը. և Յունաց ու Պարսից երկար հակառակութեանց և պատերազմաց մէջ՝ իր առմունները (զարևելեան Հայս) պահեց 'ի խա-

10477396

զաղուեթեան. մինչև նոյն ինքն մեծանուն՝ բայց և խեղկատակ և գռեհիկ շահնշահն Խոսրով Անուշեւանան, – զոր Պարսիկք գերագոյն և սիրելագոյն կոչ սեպեն քան զամենայն Թագաւորս իւրեանց, նաև քան զԿիւրոս իսկ, – Խոսրով ինքն՝ որ ամեն բան և կարգ վեր վար կուշարժէր, չկարցաւ Հայոց մարզպանը մեղադրել: Թէպէտ պէտք է հոս զայս այլ խոստովանիմ, որ այս չինեալ 70 տարուան միջոցս, այսինքն մեծին Վահանայ մարզպանութենէն մինչև 'ի նահատակութիւն Սահակ Տաճատոյ՝ (485-553) մեր պատմութեան մըԹագոյն ժամանակներէն մէկն է. այս միջոցիս և գրեթէ բոլոր Ջ դարուս մէջ ազգային պատմիչ մը չունիմք կամ չեմք գտած, որ մեր աշխարհին մէջ հանդիպածները մանրամասն նմանցընէ մեզի:

Արդ յետ մահուան Մժեժայ, որ հանդիպեցաւ Յունաց և Պարսից կուռց և վիճից առեն, երբ կուռ մեծանուն սիրատեսաց օրով, (Յուստինիանու կայսեր և Խոսրովու) որովհետև արդէն քանի մը Հայ իշխանք (Արշակունիքն Յովհաննէս և իր որդին Արտաւան և կամսարականքն Ներսէհ, Հրահատ և Սահակ եղբարք, և այլք՝ անցեր էին 'ի կողմն Յունաց, և զԱփրիկէ ու զԻտալիա նուա-

10477396

վատահիլ Հայոց, և ծերուն Գնունուն (Մժե-
ժի) պէս՝ հաւատարիմ համազգի յաջորդի մը
յուսալ: Ուսոի զրկեց պարսիկ մարզպան մը,
զոր պատժիչք մեր Դենշապուհ կ'անուանեն. քայց
մեր վկայաբանուհին ցուցընէ զինէորական,որ գու-
ցէ պատուանշան կամ ցեղական կոչում մ'է,
իսկ առաջինն՝ բնիկ անուն. քայց յոյն պատմիչք
այլ Նախորական անուամբ յիշեն զսա քանի մը
տարի եաև: Սա սկսաւ Պարսից առաջին մարզ-
պանաց պէս դառնութեամբ նայիլ քրիստոնէից
վրայ. և Թէպէտ դեռ չէր հանարձակեր Հայոց
վրայ ձեռք ձգել, քայց ուրիշ ազգաց՝ որ հոն 'ի
Հայս գտուէին՝ չէր խնայեր:

Ան առեններըը Դուին մայրաքաղաքն Հայոց՝
ոչ միայն անոնց քաղաքական վարչութեան կեն-
րոնն էր, այլ նաև մեծ շահաստան մը վաճառաց,
հնդկական, յունական և կովկասեան ճանապար-
հաց և կարաւանաց միջոց. և երկար խաղաղու-
թեամբ այլ խիստ շատ հարստացեալ և պայծա-
ռացեալ: Ամեն արևելեայ ազգէ մարդ գտուէր
հոն. որոց մէջ բազմաթիւ էին և Ռաքիկ քսուած
ազգի մը վաճառականք, (որք հաւանօրէն էին հին
Ռագաւի սահմաններէն, այսինքն է Ռէյ, Դէհ-
րանի մօտ. վասն զի Պարսիկք Ռաքի կոչեն զՌա-
գաւցիս, որ են Պարսից և Ասորեստանի միջոց):
Ասոնցմէ աւելի էին Խուժիկք, որ կրօնիւք քրիս-
տոնեայ, քայց շատն նեստորական լլլալով՝ Հայոց
չհաղորդուին և աստլուին պատճառէին. ա-
նոր համար Ներսէս կաթուղիկոս և յաջորդքն
ժողովքով չկանային զգուշացընել զՀայս, չկարե-
նալով իշխանաբար վռնտել զԽուժիկս, որք եր-
թալով շատնային և լրբանային: մանաւանդ երբ
Մանաճիհր անուամբ Ռաժիկ մը հաւատալով 'ի
Քրիստոս և մկրտուելով ու Գրիգոր անուանելով
նահատակեցաւ Նիխորականի հրամանաւ կամ

քանութեամբ (յամի 547-8)։ Կ'երևի թէ Խուժիկն կամ պատճառ եղած էին սորը քրիստոնէութեան, կամ իբրև իրենց ազգին մերձաւորը սեպելով մեծ ձայն և հռչակ հանեցին, եկեղեցական և աշխարհական հանդէս և աղաղակ իրարու խառնելով. և անոր մարմնոյն վրայ մատուռ մը շինելով, Դունայ մէջ սկսան թէ հերձուածով և թէ անկարգութեամբ պաշտօն կատարել։ Այս բանս ոչ այնքան գայթակղութիւն՝ ոչքան գարշուելի և նախատինք կ'ըլլար Հայոց. մանաւանդ որ հոն մօտ էր իրենց կաթուղիկոսն և կաթուղիկոսարանն և գլուխք հայկական աշխարհաբնակութեան. ոչք և ամենայն ուժով միաբանեցան հարկեցուցին զմարզպանն այլ, և այն Խուժիկաց ժողովարանը հիմն՝ի վեր աւերեցին։ — Այս վկայիս՝ (Գրիգորի Ռաժկի) որ յետ երկայն տարիներու նոր վկայ և առաջին օտար վկայ եղաւ՝ի Հայս, պատմութիւնն կամ վկայաբանութիւնն մեզի դեռ հասած չէ, որով կարևոր դիպուած մը մեծ թեան մէջ կու մնայ. այսինքն այն Ռաժկին և Խուժկաց մէջն եղած կապակցութիւնն. ասկայն իր առած Գրիգոր անունն և մեր ծանօթացուցին մէջ անցնիլն՝ վկայ են իր ուղղահաւատութեանը. մէկ մ'այլ յայտնի կ'երևի՝ որ հրապարակաւ և նշանաւոր կերպով մ'եղած է նահատակութիւնն. այն այլ պատճառ եղած է ուրիշ աւելի հռչակաւոր նահատակութեան մը։

Ռաժկին վկայութեան առեն որոշ չի յիշուիր, այլ այնպէս կ'երևի թէ Նիխորականի բանակին մէջն էր և ճամբու վրայ՝՝ի Հայս գալու առեն. և յայտնի այլ է որ մարզպանի մը բանակն բազմաթիւ և դաս դաս մարդկանց ժողովք մ'էր. անոր համար շատ հանդիսաւոր կայլն անոր վկայական մտհուան, ինչպէս նաև անոր քննութեան և պատասխանատուութեանը։ Հանդիսաւորաց ամե-

10477396

նէն աւելի զուարճացուլ դան, և լսա մեզ աւե-
նէն զզուելին՝ էր Պարսից կրակապաշտ մոգուց
դան, որք մարզպանին հետ կու գային՝ դարձեալ
իրենց մոխրովը մեր այրարատեան արքային դաշ-
աերը սիրեցընելու. և Թերևս իրենք գրգռեր էին
զմարզպանն՝ այնպիսի տարաժամ զոհով մը իր
մուտքն ՚ի Հայս նշանաւոր և աաելի ընելու:
Բայց իրենց մէջ կար երիտասարդ մ՚այլ՝ մոգ և
մոգի որդի, իբր 25 տարուան, որ իրենց դէնին
ամեն վարդապետուԹիւնը լաւ գիտէր, և յայլոլ
ու խելացի ճանաչուէր. և հոս ոչ այնքան հաճու-
Թեամբ որչափ զարմացմամբ կեցեր, բարձրակա-
մար յօնքերը կիտեր, սրաձև Թուխ մօրուքը
ձեռքն առած լուծ կու դիտէր և կ՚ափշէր. մինա-
ւանդ երբ կու լսէր Ոսաժիկ վկային անվախ և զը-
աարԹ խօսքերը՝ չարաչար տանջանացը մէջ: Եւ
երբ անոր զոհը կատարուեցաւ, գրեԹէ իրենն
այլ սկսաւ. մոգուԹեան իաբէուԹիւնը և քրիս-
տոնէուԹեան ճշմարտուԹիւնը և մեծուԹիւնը
ճանչցաւ. այն օրէն եաև այլ երեսին գոյնն և յօն-
քերուն հպարտուԹիւնն գնաց. մինաւանդ երբ
օր մը տարակուսի և տագնապի մէջ քնանալով՝
տեսաւ յերազի զինքը քրիստոնէից եկեղեցւոյ
մէջ, ուր սպիտակապետ անձ մը զինքը կու ըն-
դունուէր հոն գաուելուն համար, և կու յոր-
դորէր հեաևելու քրիստոնէից: ԱրԹընցաւ և զը-
աարԹացաւ երիտասարդ մոգն, որոյ անունն էր
Մախոշ կամ Մախոթ, և հայրենեօք էր ՚ի Բեերջա-
պուհ գաւառէ Պարսից, ծննդեան գէղն այլ կո-
չուէր Քոնարատան. որոց ՚ուր կողմն ըլլալն հե-
ռայ շատ ծանօԹ չէ, և ոչ այլ շատ հետաքննե-
լի. այլ աւելի իր կատարածին տեղը գիտել ա-
ժարժելի է:

Մախոժ զաւուելով մարզպանին բանակէն՝ որ
Այրարատ կ՚երԹար, Համբան փոխեց գէպ ՚ի

10477396

նահանգն Սիւնեաց. և առանց որոշ ամենուն յայտնելու ում և ինչ մտաց վրայ ըլլալը, սկսաւ գաղտուկ քննել և տեղեկանալ քրիստոնէութեան, որ այն (Սիւնեաց) կողմերը թէ աւելի համարձակ կը պաշտուէր և թէ աւելի գիտուն վարդապետներ ունէր, յաշակերտաց մեր երանելի քեռի Թողհօրն Մովսէսի և Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի: Քանի մ՚ամսէն գարձաւ Մախոժ՚է Սիւնեաց՝ իբրև կէս քրիստոնեայ, և եկաւ՝է մայրաքաղաքն Դուին. ուր իր մոգ ըլլալը յայտնի ըլլալով պէտք էր որ մոգուց քով այլ գտուի. ուստի մտաւ խառնուեցաւ՝է դաս մոգուց Հայոց համակարին. (այսպէս կ՚անուանէր Պարսից Թագաւորին կողմէն դրուած հարկաժողով պաշտօնեան): Թէ և մոգուց հետ կու կենար և անոնց պաշտամանց ներկայ կ՚ըլլար Մախոժ, բայց սրտով ուրիշ տեղ էր. մարմնով այլ անոնցմէ հեռանալու և սրտին հետ միանալու համար յեղեղեցւոյ առիթ մը միայն պէտք էր. առիթն այլ շատ չուշացաւ հանդիպելու:

Զրադեշտի հետևողք կամ մոգք՝ որչափ այլ՝է սկզբան պարզ կրօնք մ՚ունէին, այնչափ այլ անոր յետնագունները կամ ծոներըը շատցուցին. ատ՚ոնց ամեն օրէն այլ մէկմէկ խէթի կամ ոգւոյ նուիրած էր. իսկ ամսոյն առաջին օրն կամ ամ՚ապրելին՝ աւելի արբշռոյն սեպուէր և հանդիսիւ կու ծօնուէր աստուծոյն (կրակարանին) դիմաց: Ա՚յսպէս երբ եկաւ իրենց մէհեկանի ամանապրելին՝ ձմեռ առեն (որ Թուի Թէ Մէհր ամիսն էր, և երբ՝է սկիզբն 349 տարուոյն), համակարն իր ապարանից մէջ աստուծոյն դիմաց օրինական ծոնը և կրակին նուէրը կատարել տուաւ: Ա՚յս նուէրը կենդանեաց զոհ էր, ուրիշ հեթանոսաց ըրածին նման, այլ եղաւ նիւթեր որ կրակին վրայ կու Թափէին. զոր մեր պատմիչն տպաւորիչ կոչէ. « և ըստ

» սովորութեանն իւրեանց զոհս աղաէզ մատու-
» ցանէին հրոյն »: Մոգերն այլ սասանկ ատեն կը-
րակին դիմաց կենային՝ բերաննին մանաւոր շի-
նուած երկզով մը կապած, որպէս զի շնչով այլ
չպղծեն սուրբ կրակը. ձեռուընին այլ կուռնա-
գլուխ գաւազան մը կամ ոտն կ'ըլլար, ի նշան
հրամայելու: Ա.յս ձևով և կերպով կեցեր էր
Մախոժ այլ միւս մոգուց հետ կրակին դիմաց. և
անշուշտ բերանակապին տակ առանց տեանուելու
կու ծիծաղէր իրենց խայտառակ կրօնքին վրայ.
մանաւանդ երբոր սաստիկ պաշտօնատարութիւն
չափէն աւելն առատապէս մատուցին աղտոտ աղ-
տէզը. անյագ կրակն այլ իբրև լափելէն վերջա-
պէս կշտանալով՝ սկսաւ ուռիլ, բոցերը բարձրա-
ցընել ինչուան սենեկին ձեղունը:

Մախոժի ծիծաղն ուրիշներուն ի լաց գարձաւ.
կրակն կատղեցաւ, բոցն աճեցաւ, բռնկեցաւ ձե-
ղունն, և յանկարծ հրդեհի ծուխն ծաւալեցաւ:
Շփոթեալ մոգերն՝ կապերնին քակեցին, զոհինիւ-
թերը և գործիքը մէկդի քաշեցին, իրենց պաշտած
կամ պատուած կրակին չափազանց գործունէու-
թիւնն այլ սանձել կ'ուզէին, կ'աշխատէին, բայց
հնարք չեղաւ. անձերկած՝ ատրուշանէն դուրս
ընկած, և քիչ մ'ատաջ կապած բերաննին հիմայ
կրցածնուն չափ մեծ բանալով՝ սկսան օգնութեան
կանչել իրենց բոցածաւալ չաստուածը զսպելու:
Շընկոց շփոթութիւնն ձայնձնեցաւ բոլոր քաղա-
քը. հազարապետն Հայոց, այսինքն ազգային կամ
քաղաքին ներքին կառավարութեան իշխանն՝ փո-
խանակ նիւթական հնարքի դիմելու, այսինքն ջրոյ,
որով կրակը մարելը՝ մեծ մեղք և յանդգնութիւն
կու սեպուէր Պարսից, և հետևաբար իրեն կամ
ազգին մեծ վնաս կրնար բերել, գրեթէ կու հար-
կատուէր գերագոյն հնարքի կամ հրաշքի մը դի-
մելու. ուստի փութացաւ վազեց յեկեղեցին, ուր

կրօնիչ սրբութեան պաշտօնեայքն այլ իրենց տօնը կու կատարէին, և կ'ապրէր կու տիպէր որ տուրբ իսչն առնուն երթան յաղթեն մարեն կրակը: Փութացան քահանայապետ պաշտօնեայքն այլ[1], առին իրենց և ամենայն աշխարհի փրկութեան գործին՝ տուրբ Խաչը. հասան կանգնեցին ինքեանին կատարած կրակին վրայ. և ՄԿԿԷՆ « քոյն տարածեալ՝ շինչանէր առհասարակ »: Բոլոր մեծ մայրաքաղաքն Դուին տեսաւ այս հրաշքը, քրիստոնեայ և հեթանոս հաւատար. ոչ ոք կրնար ուրանալ կամ զարմանքը ծածկել. ուստի և առանց վախի նոյն իսկ համակարին խաթունն՝ որ իր տանը և ընչից մոխիր դառնալը աչքին առջև կու տեսնէր, այս անակնկալ ազատութեան վրայ լի գոհութեամբ չնորհակալութիւն (և ընծայ) ղրկեց պաշտօնէից տուրբ եկեղեցւոյն և Խաչին:

Սակայն եղածին վրայ ամենէն աւելի զարմացողն կամ զարմանքէն օգուտ առնողն եղաւ մեր Մախոժը. այսպիսի յայտնի հրաշք, և քրիստոնէից պարծանաց Խաչին զօրութիւնը տեսանելով՝ այլ չդիմացաւ կամկար կարկած կենալու. իրեց բերանակապը՝ ձգեց կոխեց, ձեռքի մոգական ուռը զարկաւ՝ ի գետին կոտրտեց. և վազելով եկեղեցւոյ պաշտօնէից մէջ՝ յափշտակեց տարկաւագին ձեռքէն բուրվառը, և քան զամէնն լիուլի լեցընելով խունկը՝ ամենայն ուժով կու շարժէր կու ձօձէր, անուշահոտ և պղծահալած ծուխը՝ հրդեհին բոցէն ու մուխէն այլ վեր բարձրացնել ջանալով: — Եւ անշուշտ հասաւ այլ, թէ ոչ տե-

1 Ցայտաւուրք կ'ըսեն. « Եւ կաթուղիկոսն տէր Մով-
» սէս առեալ զքահանայն ամենայն խաչիւ և աւետա-
» րանաւ, լուցեալ մոմեղինօք և բուրվառօք և եկեալ ե-
» կաց ». և այլն: — Բայց անշուշտ այն ատեն դեռ Մով-
սէս չէր եղած կաթուղիկոս:

անեալին՝ այլ իմանալի ծուխն, աւելի՛ ի սրտէն Մախաժի քան՛ ի բուրվառէն՝՛ի վեր քան զբարձրադրայարկս ապարանից Նամանկարին, նա և քան զկաթուղիկէ գմբէթս Դուռնայ, մինչև յերկինս՝ յորս հանգչի Աստուածն։ — Ապա նոյն ատքուծեամբ և վառեալ հաւատով բուրվառը գարձընելով պաշտօնէից՝ Ճամբայ գրաւ որ երթան իրեանց եկեղեցին և իրեն համար այլ ալօթէն. «Ինդրէք յԱստուծոյ վան իմ, զի և ես քրիստոնեայ եմ»։

Մէկ ժամուան մէջ ինչ այլ և այլ տեսարանք. քանի զարմանք յերկրի և յերկինս. ինչ ուրախութիւն և պարծանք քրիստոնէից, և փառք քեզի, ով աքանչելի գործիք՝ որ Խաչ. որ երբեմն քան զամենայն գործիս գժպհի և չարաչար էիր, հիմայ քան զամենայն՝ ցանկալի և փրկարար. երբեմն անյուսից անգամ գժոխագոյն՛ի գառնութիւնս, հիմայ ամենէն վերջին և զօրաւոր յոյս սրտի. սրտի՝ որ աշխարհիս և կենաց ունայնութեանց և սպառելութեանց մէջ թաւալելով, երբ կու հասնի անոնց վերջը, և երբ ոչ օգնութիւն և ոչ փրկութիւն մը կրնայ գտնել անոնցմէ կամ ուրիշ մէկէ մը, այլ և տակալի վախով կու պաղի՝ չարիտենական դատաստանի և դատապարտութեան մը մերձաւոր չիշատակաւ, — յանկարծ նուաղեալ աչաց վերջին լոյսը քու վրադ կ՛ընկնի. և հաւատոց վերջին ձգով տեսնելով՛ի քեզ կատարուած աստուածային գերագոյն հանդէսը և զոհը, վերջին քայլին հասած յոյսը պնդապինդ կու բռնէ. սիրոյ կայծակ մը կու ծագէ հոգւոյն վրայ, և զքեզ, ով աննման անգին գործիք, զքեզ՝ որ ընչին փայտի կտոր մը կ՛երևիս, աւելի քան զհամատարած ջրհեղեղին վրայ լողացող մարդակերպ լայտ լատամփայտը՝ մեծագոյց և ամուր կամուրջ մը ձգելավ երկու յաւիտենականութեանց իրարու՝ դուռդ վհին վրայ, կ՛անցնի՛ի կողմն փրկութեան

և անվախճան կենաց։... Ո՛հ. ինչմե՝ այսպիսեաց կրակը մարեալքն մեծ հրաշքդ՝ որ Մախոժի հոգւոյն աչքերը բոլորովին լուսաւորեց, ինչմե՞ չքաւցաւ անոր ընկերաց մոգուց աչքն այլ, որք փոխանակ անոր պէս պայծառանալոյ, կարծես անոր լուսոյն աւելի սևերես երևցան. կրակին վախէն աւելի՝ Մախոժի քրիստոնէութենէն տագնապելով՝ իրենց չաստուածոյն աւելցուցած մոխրին գոյնն առին. և պահլաւերէն պապաջելով, մանաւանդ Թէ սատանայօրէն բարբանջելով մոռցան, կծրլքն և ապերախտք, դեռ նոր տեսածնին. և այն գիշերը խառնակ ու խեղաւ խորհուրդներով կոծուելով, երկրորդ օրը հազիւ լուացած՝ գնացին մարզպանին մատնելու իրենց դաւէն ելած և Քրիստոսի փարախը մտած Մախոժը։

Նիխորական, որ (ինչպէս իր վերջը ուրիշ աշխարհի մը մէջ ըրած գործովն այլ կ'երևի), մեծահոս քայց վատասիրտ մարդ մ'էր, մեկէն Մանաճհրի պէս զՄախոժ այլ չատեան կանչեց, և սկսաւ յանդիմանել. « Ա՛յ Թշուառական, ընդէր » զհայրենի մոգութիւնան Թողուս, և չիմար և » ուխտակոտոյս լինիս։ — Պատասխանի ետ երա- » նելին և ասէ. Ճշմարտիւ ասեմ, ով դատաւոր » վան իմ, զի 25 ամ ունիմ՝ որով ընդ վայր ա- » նդադաւորեցայ. իսկ այժմ ծանուցեալ զՃշմա- » րիան Աստուած՝ 'ի հայրենի բազմաստուածու- » Թենէն հրաժարեցի. վասն որոյ ոչ այսուհետև » կենցաղոյս պատրանք չայլոց հաւատոց անջա- » տեացեն զիս. քանզի հանդերձեալ եմ տանել » հատելոց տանջանաց »։ Ա՛յս համարձակ և կրօրոշ խօսքին փոխարէն՝ հրամայեց մարզպանն՝ որ ծեծ զարնեն Մախոժի երկու անգամ տասներկու. (որ կ'երևի Թէ Պարսից պատժողական օրինաց մէջ նշանակուԹիւն մ'ունի)։ Անկէ զատ՝ անոր վայելուչ հատակին և մոգութեանը զարդ մօրու-

10477396

քը և մազերը՝ կտրել տուաւ. ձեռք ու ոտքն այլ կապել տալով հրամեց որ ձգեն ՚ի բանտ. ուր որ բաւական աւենէ վեր բանտուած էր իրեն պէս զրադեշի ալանդէն հրաժարող և քրիստոնեայ եղած Ռաժիկ մը Ներսէս անուամբ, որ և յետոյ Մախուժի վարդքը և նահատակութիւնը գրեց. (ըստ Յայսմաւուրքաց վկայութեան.) իսկ հինայ կուսուսելներէր անոր «զտուրը հաւատս, և զսաղմոս» քան. և այսպէս անդադար պաշտէր զԱստուած» և աղօթէր»:

Նիխորական՝ Թերևս Մախուժի նշանաւոր և մոգ ըլլալուն համար՝ չէր համարձակեր աւելի խիստ և յետին դատաստանաւ դատելու, կամ յարմարագոյն ժամանակի կուսպասէր: Բայց էյաջողեցաւ իրեն այս ժամանակը. վանզի յետ կանչուեցաւ ՚ի Խոսրովայ արքայէն Պարսից. և զՄախուժ Թոզլով ՚ի բանտին՝ գնաց աւ Թագաւորն, ուր քիչ աւենէն սպարապետ դրուելով Յունաց դէմ Լազիստանի պատերազմաց միջոց, հոն զրկուեցաւ 60000 զօրօք. որոց մէկ երկու անգամ իր հպարտութեամբ և անհանձարութեամբն յաղթուելու պատճառ եղաւ, և գրեթէ բանակին քաոտրդը կարդել տալով առանց Թշնամեաց մէնաս մը հասցընելու՝ քաշուեցաւ ՚ի Վրաստան. ուսկից կանչուեցաւ ՚ի Պարսս, և իրեն իսպատուակ զօրավարութեանը վարձք, չարաչար և պժգալի պատիժ մ՚առաւ. սրտմտեալ Թագաւորն՝ ոչ ոչ անոր կաշին հանել տուաւ, և տիկ ձևացընելով Տիզբոն մայրաքաղաքի ամենէն բանուկ հրապարակին մէջ կախել տուաւ:

Նիխորականի յաջորդ մարզպան եղաւ Նախորդին պէս, իրեք տարի. որ և ՚ի սկզբան իր նախորդին պէս յատեան քաշեց զՄախուժ, և քննելով ու նոյնպէս հաստատուն գտնելով զնա ՚ի հաւատս Քրիստոսի՝ աւելի չարաչար ծեծել տուաւ, և եր-

կաթի չլթաներով կապել ու թողուլ 'ի բանտին: Այս եռամեայ բանտարգելութեան միջոց Մախոժ անդադար աղաչանօք մկրտեցաւ իր բանտակիցէն՝ (Ներսէսէ) որ և քահանայ էր, և Յայսմաւուրքն աբեղայ կոչէն. և ինքը խնդրեց, որ իրեն անուն դնէ Յիպէփօպէփ, կամ ըստ Պարսիկ հնչման Եպիփէոպէփ, որոյ բուն իմաստն է Աստուծոյ շնորհահաւորյց կամ Աթոռածագումէոյց, ինչպէս կ'ըսէ Յովհան կաթուղիկոս. կամ ինչպէս մեր վկայաբանն կ'ըսէ, յԱթոռածոյ-ֆրկնէալ, և կ'աւելցնէ թէ և ընդգմանի Աթոռածագոր. վասն զի այս անուանս աւելի ծանօթ և իմաստին մօտ ըլլալով այսպէս անուանեցին Հայք և այսպէս կարդացին 'ի ծննդոցյց. նոյնպէս կ'ընեն և օտարք՝ երբ ուզեն թարգմանաբար կոչել այս Պարսիկ անունը: — Կնքոյն և անուանն հետ երանելի մոգն փոխեց իր ձևն այլ. ինչուան այն ատեն իր սովորական հագուստներովն էր, հանեց զանոնք, բաժնեց աղքատաց, և անոնց տեղ հագաւ մազեղէն, և բոպիկ ոտից՝ այլ հողաթափ: « Եւ այսպէս » պահովք և աղօթիւք հակէր, սաղմոսելով անդադար, գեղեցիկ կրօնաւորութեամբ »:

Յետ երեք տարւոյ՝ Նախապետին տեղ եկաւ Քնարին ըսուած մարզպան մը, որ հակառակ գեղեցիկ կոչմանն՝ խառնակ և դաժան ձայներ լեցուց. առջիններէն աւելի խստանալ սկսաւ քրիստոնէից վրայ իրեն համամիտ պաշտօնէիքը, որոցմէ քարագոյնն էր ատենադպիրն: Սա լսելով Աթոռածատրոյ դիպուածը՝ գնաց 'ի բանտ, և կէս յանդիմանութեամբ և կէս խաբէութեամբ սկսաւ ըսել. Միայն դուն այդչափ խելացի գտուեցար՝ որ քոլոր Արեաց (Պարսից) աշխարհը բաւական չտեսեր, և ելար դնացիր ուրիշի ծառայ ու գերի եղար: — Աթոռածատրոյ պատասխանեց, թէ ծառայելն ամօթ չէ, այլ և բնական ամենուն. դու

որոյ որ կարօտիս՝ անոյ ծառայ եա, կենդանիք մարդկան կու ծառայեն, մարդն այլ Աստուծոյ. եա երբեմն ոգիատաքար ընդունայնութեան ծառայեցի, « Իակ յորժամ գթացաւ յիս Աստուած՝ » կալեալ զմտածութենէ իմէ՝ կապեաց ՚ի սէր » պատուէրանաց իւրոց, ներկեալ յաւուն ընորհն » իւրոյ. զոր ոչ կարացեն կենցաղոյս փորձու- » թիւնքս փոփոխել »: Դպիրն փոխանակ իր լե- զուի ճարտարութիւնը թափելու, որով՝ իմացաւ թէ պիտի չկայցուն, բերը վերցընելով՝ անգթաբար ծեծեց զվկայն. և յետոյ ուրիշ տանջանք և նե- ղութիւններ այլ տալ տուաւ. բայց ոչ բրով և ոչ բանութեամբ կրցաւ յաղթել: Մ՚նայն թէ իր և նմանեաց ըրածներն ձանձրացուցին զՀայն, որք և ազգովին բողոք խաբրեցին առ Թագաւորն Խոս- րով, յիշեցընելով իր պապուն խոստմունքը՝ էնե- ղելու զՀայս վասն հաւատոց:

Խոսրով առանց դժուարութեան լսեց Հայոց պատգամաւորաց. վասն զի կու վախեր որ չըլլայ թէ նեղանալով իրմէ գլուխ քաշեն և Յունաց կոչմն անցնին, որոնց հետ արդէն թշնամութեամբ և կռուով էր: Խոսաւցաւ շուտով քննութիւն և արդարութիւն ընել. և յիրաւի, առանց ուշացը- նելու խաբրեց ՚ի Հայս երեք մեծ և խոհեմ իշ- խաններ, որք էին Նախոյ, ըստ պատուոյ աստիճա- նին կոչուած պրովինպական. Խոյոտ՝ Թագաւորին հաւատարիմ պատասաւորաց մէկն, և Պէրոզ՝ Ուէյ գաւառին մոգպետն. որ և իրենց տիրոջ հրամա- նին համեմատ՝ անուշա քննութեամբ գաւեալով՝ դատապարտեցին անիրաւ զրկահարները, և ա- ռաջնոյն պէս դիւրութիւն ընդին Հայոց, որ վիա- մութեամբ ծառայեն Պարսից Թագաւորին:

Սակայն այս դիւրութեան մտանակից չէզան Հայ էրզրոք, մանաւանդ զրադէշական կրօնքէն ՚ի քրիստոնէականը դարձնելք, ինչպէս էին Յի-

զնատեռազնա, Ներսէս, և անոնց բանտակից Աուրը-
պատիկ մը Սահակ անուամբ: Ահա երեքն այլ յա-
ւետեան կանչեցին եռապատիկ քննիչք, քանի մը
անգգամաց մատնութեամբ գրգռուած: Պետրոզ՝
իբրև պաշտօնեայ կրօնից՝ սկսաւ մէկ մէկ քննել.
« Դուն ինչո՞ւ քրիստոնեայ եղար », հարցուց նախ
Ներսեսի: Նա այլ ըսաւ. Մայրս բուն քրիստո-
նեայ էր, զիս այլ քրիստոնէութեամբ մեծցուց:
— Հապա դո՞ւն. հարցուց Սահակայ: — Ես ար-
ղարութեան սուինէս քրիստոնեայ եղած եմ, ը-
սաւ: — Կարգն եկաւ Աստուածատրոյ, որ ըն-
կերացը քննութեան առեն՝ եռանին կեցեր ցած
ձայնով «Տէր, մի սրտմտութեամբ քով յանդի-
մաներ զիս » սաղմոսը կ'ըսէր. իր ով ըլլալը լա
պիտէին դատաւորքն, և իրենցմէ առաջ եղած քըն
նութիւններն այլ լսելով՝ վախցան որ նորէն ի-
րենց կրօնքին նախատինք չհասնի անոր իսօքերէն
ամենուն դիմաց. ուստի զինքն առանձին կանչե-
լով և յանդիմանելով՝ ըսաւ մոգպետն. « Ահ թը-
» շուառական, ընդէր զլուսաւոր դէնն Թոզեր, և
» նախմաւոր քրիստոնէութեան հաւատացեր »:
Աուրբն պատասխանեց Թոզած կրօնքին խայտա-
ռակութիւնը ցուցընելով, և ընդունածին սրբու-
թիւնը. և թէ « Քրիստոնէութեան միայն է կա-
» րողութիւն փրկել յահապին 'ի մահուանէն»:

Յայտնի է որ այսպիսի գեղեցիկ պատասխա-
նեաց փոխարէն ծեծ ու փետ պիտի ըլլար, և այլ
սեբէլին. վասն զի հրամեց լսրբ մոգպետն որ սրբ-
բոյն պարկեշտ պարեգօտը պատռեն, կնկտուքը
գետին զարնեն, գլուխը կոպեն, և մօրուքը փետ-
ռեն: Ասանկ խղճալի կերպարանքով գարձուցին
զԱստուածատուր 'ի բանտ՝ իր եղբօր ընկերնե-
րովը. և երեք օրէն եռա նորէն յատեան բերին,
քննեցին ու նոյնպէս Հաստատուն գտան: Ապա
ջատագով մոգպետն պատուիրեց որ երեքն այլ

10477396

զատ սեղ սենեակի մը մէջ փակեն, ցորեկն անօթի թող թողուն, իսկ գոլոր գիշերը ծխով մխով հեղձամղձուկ ընեն զանոնք: Թէ և չմեռան, բայց շատ չարչարուեցան նահատակքն. սակայն խեղդուած ձայնով այլ չդադրեցան աղաղակել մինչև ցառաւօտ: Տան օր այսպէս չարչարանօք մնացին 'ի բանտին. վերջի առաւօտն որ էր Նոյեմբեր 9 և կիրակի օր, Աստուածատուր պատմեց ընկերացն՝ Թէ այն գիշեր յերազին տեսաւ որ մէկն վարոցով ուժով մը զարկաւ գլխուն, ուսկից արիւն կը վազէր երկու աչաց միջոցէն. բայց մէկէն երեք լուսաւոր անձինք վրայ հասան, վերցուցին վարոցաւոր մարդը, և իր գլուխը մարգարտակապ պսակ մը դրին: — Անշուշտ, ըսին ընկերքն, քու մարտիրոսութեան և պսակուելու ժամանակդ մօտեցեր է:

Ոչ միայն մօտեցեր, այլ և հասեր էր օրն և ժամն. արդէն դահձապետն բանտին դուռը կուգիտէր. և ներս մանելով՝ նշան տուաւ Յիզիտբուզիտ որ գայ ետևէն: Զգիտեմ իր ընկերաց տրտմութիւնն աւելի մեծ եղաւ իրմէ զատուելնուն և մնալնուն համար, թէ իր ուրախութիւնն՝ 'ի հանդէս նահատակութեան կանչուելուն համար. անշուշտ երկու կողմէն այլ ոչ առանց արցունքի տուին այն ողջոյնը և համբոյրը՝ որ երկրի և երկնից միջոց կախուած կապ մ'էր. ամենքն այլ փափագէին այն կապը բռնած վերանալ յերկինս, բայց միայն մէկուն հրաման եկած էր վերջն: Փութացաւ Յիզիտբուզիտ բաժնուելու իր քրիստոնէութեան վարդապետին գրկէն, ('ի Նեռսխէ) որ ջուշանայ երկնաւոր վարդապետին Քրիստոսի) գիրկը հանգելու. և երթալուն աւեն՝ «ի կարդալ իմում լուար ինձ՝ Աստուած», մալմնան ըսելով շուտով հասաւ յատեան դատաւորացն, որոց հետ նստեր էր երբեմն մ'այլ,

կամ դահճապետն կամ նոր մարզպան մը [1]: Զորս դին պարսպաձև քոլորած կենդային մեծին Դուռնայ քրիստոնէից անհամար բազմութիւնն, որք իրենց կրօնից ազատութիւն ունենալով՝ անվախ եկեր էին տեսնելու օտարազգւոյն նահատակութիւնը. մէկէն հոգւոյ ինամութեամբ իրենց եկեղեցւոյն պայազատելու զնա:

Հրապարակաձև տաճարին, կամ այն զարմանալի Թատրոնին մէջ երեք փայտ կանգնած էր, երեք կենդարան գոնի օրհասականաց:... Գեղեցիկ ծառն և ամենապէտ փայտն՝ ասկէ աւելի պիտգալի պաշտօն չեն կատարեր. բայց կետ որոյ այն գերագոյն Մէկն տանկ փայտի մը վրայ կախուած անմահական կենաց պտուղ երևցաւ, այդպիսի փայտն այլ շատ հեղ շատոց ցանկալի եղաւ, ինչպէս հիմայ այլ Աստուածածառոյ. որ և ուրախութեք իր կետին կենդարանը ողջունելով, գուցէ պահ մը կարծեց, թէ ուրեմն իր երկու բանտակիցքն այլ վերջապէս իրեն ընկերակից պիտի ըլլան յաւիտենական Ճամբուն մէջ: Իրաւ ունեցաւ երկու ընկերներ, բայց ոչ զՆերսէս և զՍահակ. այլ զնմանիս անոնց՝ որ իրեն նմանութեան նախօրինակին երկու կողմը կանգնեցան՝ ի Գողգոթա. — երկու յանցաւոր, երկու չարագործ, երկու մահապարտ: Այս Յիսուսի նմանակցութեան պատիւն այլ ունեցաւ Աստուածածառը. — Կու տեսնէք այդ փայտը, կանչեց մոգպետն, ադոր վրայ պիտի մեռնիս չարաչար, եթէ յամառեալ ծնաս մոտդ վրայ: — Ես հաստատուած եմ, ըսաւ տուրըն, ՚ի հաւատս Քրիստոսի, և ամենևին դառնալիք չունիմ. դու ընելիքդ կատարէ տուր: —

1 Յովհաննէս կաթուղիկոս՝ Վշնաս-Վահրամ կոչէ զմարզպանն. «յորմէ բազում չարչարանս կրեալ... ՚ի Դուին քաղաքի պատկի մարտիրոս պսակաւն»:

10477396

Հրամեց մոգպետան որ տանին զնա 'ի փայտն. Ա-
ուաւածատուր ուրախութեամբ վազեց գահիճ-
ներէն առաջ, որք մերկացընելով զնա՝ կապեցին
և կանգնեցին:

Շնորհակալ եղաւ Սուրբն՝ որ նաև այսպէս
զգեստներէն կողոպտեալով այլ՝ զինքը կուռնամանցը-
նէին իր տիրոջն 'ի խաչին: — Մոգպետան՝ կամ յի-
րաւի խնայելով, կամ սատանայութեամբ յայլ-
ել ուզելով նահատակին, վերջին անգամ մ'այլ
խաւրեց անոր՝ ըսելու, որ դեռ ժամանակ կար,
բայց վերջին և կարճ ու անդարձ ժամանակիկ մը՝
զինքն ապրեցընելու, եթէ հրաժարելով 'ի քրիս-
տոնէութենէ՝ գառնայ 'ի հին մոգութիւնն: —
Սուրբն և ոչ պատասխանուց արժանի սեպեց այս-
պիսի դեսպանութիւնը: Իր լռութիւնն լուծեց քրո-
նաւորին արիւնալից հրամանը. և ահա սկսան
գահիճքն սուր սլաքներով խոցոտել կողերը, և
արեան անձրև մ'իջուցընել:...

Նոյն տեւն երկու յանցաւորներն այլ հանե-
ցին 'ի փայտն. աչակոլմեանն՝ նման Քրիստոսի
խաչակցին, որոյ հաւատացեալ էր, և ազգաւ
Ցուժիկ, հաւատքով սրբոյն ոտքերը պագաւ, և
անոր արիւնով թրջած հողը իր ծոցը կուլեցը-
նէր. իսկ անզգամ գահձապետն անոր գլուխը
կոփելով շուտով հանել կանգնել տուաւ 'ի փայ-
տն, և նետով զարնել. որ և շուտով աւանդեց
հոգին: Զախակոլմեանն այլ նոյնպէս նամանոլ ե-
ղաւ իր հին կոչմնակցին. աներաւութեանցը վրայ
մեծապէս մ'այլ աւելցուց. Հրեայ էր ազգաւ.
սկսաւ աղաղակել վայրախօս տոութը. Չխա «մի
» կորուսանէք. զմոգութիւն յանձն առնուամ»:
Դատաւորը մեկ ջըրին անխիղճ և անգթի ձայ-
նին. կապեցաւ կախուեցաւ և կորաւ. ինքն իր
պատապարտութեանը վկայելով:

Իսկ «Երանելին 'ի մէջ երկուց մահապարտացն՝

» ՚ի բարձր տեղւոջ ողջակիզեալ յանդիման ա-
» րեգականն և ամենայն ժողովրդոցն. որ ունէր
» խորհուրդ զարմանալի, որ յիշատակեալ ՚ի նա
» տերունեան էր՝ ըստ Ճշմարիտ խոստմանն, թէ
» որ հաւատայ յիս՝ զգործն զոր ես գործեմ և
» նա գործեացէ, և մեծամեծ ևս քան զնոյնս. և
» Առաքեալն ասէ. Զորս յառաջն Հանուէր՝ յա-
» ռաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել
» պատկերի Որդւոյ իւրոյ: — Եւ այսպէս քա-
» ջութեամբ վկայեաց տէրըն Ցիզիտբուզիտ, ՚ի
» իգ ամին Խոսրովու Թագաւորին, որ օր երկու
» (էր) քաղց ամոյ, յաւուր կիւրակէի, յեր-
» րորդ ժամու »:

Ամենապարտ դատաւորքն իբրև վերջին վճիռ՝ չԹողուցին որ մեկէն վերցնեն Աստուածածարոյ մարմինը. բայց ոչ այլ շատ կրցան ուշացընել. հաւատացելոց խնդիրն և ձայնն բարձրացաւ. յալթանակաւ նկուցին քրիստոնէացեալ մոգին մարմինը, և մեծ հանդիսիւ ու փառօք փոխեցին ՚ի հանգիստ վկայից, երեն արժանաւոր տեղ մը ՚ի տէրը տաճարին. որ և երկնափայլ լուսով պայծառացեալ՝ աւելի զուարճացուց զհաւատա-
ցեալս և ամաչեցուց զմոխրապաշտ մոգերը:

Այսպիսի պանծալի և շատ առեներ վեր չբաւած նահատակութեան մը համբաւ, (որով և Ցիզիփ-բո-ղիփ անունը)[1] շուտով տարածեցաւ բոլոր ա-
րևելեան քրիստոնէից մէջ, և Ցունաց կայսրու-

1 Այսանուանակ մէկ հնագոյն գործածութիւն մը կայտնուեցաւ ՚ի Զինաստան, գիտնոց և քրիստոնէութեան մէջ հռչակեալ արձանագրութեան մը վրայ, չինարէն և տորերէն, պատմելով այն աշխարհին մէջ քրիստոնէութեան քարոզութիւը յամին 636. արձանն գրուած է յամին 781. տորագրողներէն մէկն է Յեզբոլոփ քահանայ, հայր Ադամայ տարկաւագի, փոխանորդ արքեպիսկոպոսին:

Թեան ընդարձակ գաւառները. ուրախացան մեր սուրբ կրօնից նոր և յայտնի յաղթանակին վրայ. բայց ամենէն բաղդաւոր սեպուեցան Հայք, ա- նոր հանդիսարան ընծայելով իրենց մայրաքա- ղաքը, մայր եկեղեցին, և ինչուան հիմայ՝ տարե- կան տօնախմբութիւն մը:

Նախայիշեալ Մենանդր պատմիչն՝ իր կորու- սեալ և կորատեալ պատմութեան մէկ պատա- ռին մէջ՝ սրբոյն մէկ վերջի խօսքը կու յիշէ, երբ խաչին վրայ պրկուած էր, և երբ կու յորդորէին Թողլու զքրիստոնէութիւնը՝ որ իրեն մահուան պատճառ պիտի ըլլար. Ես ոչ եթէ կը ցաւիմ, ըսաւ, այսպիսի կրօնք մը գտնելու, հապա ուշ գտնելուս համար: — Իսկ նոյն հեղինակին ա- սուրբն նուիրեալ վերատեսութիւն, զոր և 'ի սկզբ- բան յիշեցի, այս է.

Մոգ ես երբեմն ի Պարս էի Ցիզիտուզիա,
Ի հեղեգնան անտառս ըզյոյս իմ կատուցեալ.
Հուր ճարակէր զոստանն իմ. յօգըն ձեպեցի.
Ձեպէր ի նոյն ու ամենազօր Քրիստոս ծա-
ռայն.

Նա զբրանութիւն նուաճէր բոցոյն. իսկ ես պարտեալ՝
Զատուածայինըն յաղթուեր ընկալայ պատկ:

Ա յսպէս օտար մը, Ցոյն մը, բայց հաւատա- լիմ և ընտիր հեղինակ մը, Մենանդր, կարճ տո- ղերով գեղեցիկ և թանկ վկայութիւն մը կու տայ՝ թէ Աստուածատուր յաղթական Նշանացը, և թէ յաղթանակի հաւատոց ամենազօր Քրիստոսէ ծա- ռային. որ թէ ոչ կաթուզիկոսն Հայոց՝ այլ Ցըս-

10477396

նայ մէկ եկեղեցւոյն աւազեբեցն էր. որ «զբըռ-
նութիւն նուաճեաց բոցոյն» ի Ճարտարեբն ի սան
հաստատարին, և զաղօթաձայնին յաղնուելեան պատի
կողց ի գլուխ քրիստոսահրաւէր մոգին Մաշտո-
ժի, փոխեբով զնա ի Ցիպիոպոլիս, այն է Աղ-
պատաճարատպատ:

10477396

10477396

ԵՐԱԶ ՎԱՐԴԱՆ ԿԱՅՍԵՐ

3 Յունիս, 713.

Սովորաբար քնացողքն կարծուին երազա-
ւեա. բայց բարոյապէս խօսելով՝ աւելի շատ են
արթնութեան ատեն երազ տեսողք, երբ չըլ-
լալու կամ շատ անատոյգ ու դիպուածական
կամ չափազանց բաներ կու մտածեն, կու
յուսան, կ'ուզեն կամ կ'ատեն: Ախորհի քուն
կամ երազն այլ՝ գրեթէ բնական քնոյ և երա-
զի պէս հասարակ է մարդկան, թէ և ոմանք
քիչ ոմանք շատ տեսանեն. խակ իր ազդեցութիւնն
աւելի զօրաւոր է, իր բերած երբեմն ուրախու-
թեամբն և շատ հեղ տխրութեամբը: Ման մ'ե-
րազել փափագով և յուսով՝ և գանել զայն, մեծ
բաղդ մեծ ուրախութիւն է. երազել և չգանել՝
տխրութիւն է. առանց երազելու՝ գտածը կո-
րուսանել՝ աւելի մեծ և սոյգ տխրութիւն է.
խակ երազել և գանել, յետոյ գարձեալ այն փա-
փագած և գտածը երազն պէս կորուսանել՝ տըխ-
րութենէ ալ վեր է, ցաւալի ափշութիւն է: Ախ-
պիսի է մեր պատմելու երազն ալ. որուն նը-
ման սատիկ՝ երաւ քիչք երազած են, բայց շա-
տեր կան որ ատոր կու նմանին, գոնէ երազին մէկ
մասովը: Երկրաւոր փառաց և բաղդի յեղափո-

խուԹեանց մեծագոյն օրինակ մը ցուցընելով՝ կըրնայ ամենուն իրատ ըլլալ Վարդան կայսեր երբալն։

Ա յս Վարդանս ինքնին երազեալ՝ այսինքն մըտացածին կամ առասպելեալ անձ մը չէ. այլ ստոյգ և պատմական, Թէ ինքն և Թէ իր գլխաւոր երազն. քեզի ազգակից է, Հայկակ, և Յունաց Կոստանդնուպօլսի կայսերաց Թագակից, ը գաբոն սկիզբը։ Երբոր մեծին Կոստանդիանոսի ցեղին պայազատուԹիւնն հատաւ մահուամբ Փոքր Թէոդոսի և անոր քեռւան Մարկիանոս կայսեր, կայսերուԹիւնն զօրաւոր կամ բռնաւոր իշխանաց ձեռք ընկաւ, (աւելի Թրակացի իշխանաց) որք դար ու կէս տիրեցին. ասոնց վերջինԹերն Մօրիկ կայսր՝ ըստ մեր պատմչաց՝ Հայ էր, յՕշականի գեղէ Արտագածոտն գաւառի[1]. ասոր յաջորդ Փոկաս սպանանելով անուանին Հերակլ կայսր՝ յափշտակեց զԹագը և ժառանգեցուց իր ցեղին ամբողջ դար մը։ Բայց որովհետև Թէ ինքն Թէ իր նախորդաց շատերն յափշտակող եղեր էին, և իր յաջորդքն այլ անարժան և ժողովրդեան անտիրելի էին, ԹագախնդրուԹիւնն կամ կայսերուԹեան փափագն և կռիւն՝ ազգային քան մ՚եղաւ զօրաւոր և ձարպիկ իշխանաց։

Ասոնց մէջ՝ եԹէ ոչ շատուԹեամբ Թուոյ՝ բայց շատուԹեամբ արդեանց և ուժոյ, նշանաւոր էին գլուԹէ բոլոր ե–ԺԱ դարուց միջոց՝ մեր հայրենի Հայ իշխանաւորքն և զօրավարքն՝ Կ. Պօլսի ինքնակալաց ծառայուԹեան մէջ, ինչպէս յայտնի է ազգային պատմագիտաց. տպա զարմանք չէր եԹէ իրենք այլ՝ բնիկ Ցոյն իշխանաց հետ՝ կայսերա-

1 Ըստ Յունաց՝ էր յԱրտաբիտոս քաղաքէ կապպադովկիոյ, որ է՛ի փոքր Հայս, և բուն ցեղն հռոմէացի էր։

10477396

կան Թագին փախչագող կամ յափշտակող ըլլա-
յին. մանաւանդ որ շատ հեղ իրենցմէ առաջ՝ թէ
ազգային թէ յոյն զօրքն և իշխանքն՝ իրենց կ'ըն-
ծայէին Թագը: Արդէն Հերակլի վերջին պայազա-
տաց առեն մէկ երկու այսպիսի անձինք փորձ
փորձեցին, թէ և ոչ յաջողեցան. ինչպէս Շաոպուհ
մը ամատունի կամ պարսիկ, որ երբեմն արևմը-
տեան Հայոց զօրավար կամ իշխան էր, և յամին
667 ի Կոստանդ (Թոռն Հերակլի) կայսերէն
գլուխ քաշեց, բայց դիպուածով մը շուտով մե-
ռաւ (ձիէն ընկնալով): Հետևեալ տարին Կոս-
տանդը սպանողք իրենց կայսր ընտրեցին զՄժէժ.
որ հաւանօրէն Թոռն էր մեր Մժէժ Գնունի զօ-
րավարին, որ Հերակլի առեն քաջութեամբ և
խոհեմութեամբ շատ անուանի էր. իսկ կայսր
ընտրուած Մժէժն աւելի երևելի էր իր հասա-
կին մեծութեամբ և գեղեցկութեամբն, որով հա-
մար ընտրեցին զայս սպանելոյն հակառակորդքն,
և խոստացան պաշտպանել. վասն զի ինքն Մժէժ
կու հրաժարէր և յանձն չէր առնուր. և անոնց
տիրատեցութեան ալ զոհ եղաւ. և ոչ տարի
մը ակամայ կայսրութեան անունը կրելով Թագին
հետ իր Թագադանուր գլուխն ալ կորոյս (669),
զոր Սիրակուսայէն (Սիկիլիոյ քաղաքէ) խաբե-
ցին՝ ի Կ.Պօլիս առ որդին Կոստանդայ՝ Կոստան-
դին Դ: Այս Կոստանդին Թէ ծննդեամբ և Թէ ար-
դեամբք արժանի ժառանգ էր աթոռոյն, բայց
անարժան հօրը նման՝ անարժան որդի մը յա-
յտնուեցաւ, այն է Յուստինիանոս Բ:

Ասոր անկարգութեանց, անգթութեանց, և
անկրօնութեանն էդիմանալով իր ժողովուրդն՝ գահ-
ընկէց ըրին (695), և տեղը նստուցին Ղէոնդ
պատրիկ քաջ զօրավարը, որ հայրենեօք էր յի-
սաւրիոյ Կիւրիկիոյ, և հաւանօրէն Հայ, ինչպէս
էր անուանակոչ իրմէ ոչ շատ տարի վերջը ընտ-

րուած և 25 տարի (717-741) կայար եղող Լեւոն Իսաւրացին. (Թէպէտ վարքագիրն և գործքերուն իր նախորդէն՝ Յուստինիանոսէն՝ պակաս զգուշ չեղաւ): Ղեւոնդ Թէ և սիրելի և արժանաւոր անձն, բայց իրեք տարիէն եաև (698) իրմէ բռնագրուելի մը ձեռք ընկաւ. Ապիխալ անունով Կոռիկոսցի մը տիրեց Կ.Պօլսոյ, և Ղեւոնդի քիթը կտրելով, (ինչպէս Ղեւոնդ ալ Յուստինիանոսին կտրեր էր) փակեց վանքի մը մէջ, և ինք գինքն տնօրանեց Տէրէր ը:

Այսպէս կայսերութեան կամ Թագին խաղալիկ եղած առեն՝ մեր Վարդանն այլ իր կայսերական երազը առաւ: Իր ինչ տոհմէ կամ առնէ ըլլալն յայտնի չէ, Թէ և յոմանց Մամիկոնեան կարծուի. անշուշտ այն Հայերէն էր որ շատոնց Յունաց ծառայութեան մէջ մտեր և յառաջացեր էին. իր հայրն այլ յունական անուամբ Նիկեփոր պատրիկ կոչուեր. ինքն այլ զինուորութեան մէջ յառաջադէմ և ճարպիկ, լեզուանի և զուարթ մարդ մ'ըլլալով՝ սիրելի եղած էր ճանչուորներուն. և աւելի այս ձիրքերուն ուժովը՝ քան Թէ քնով կամ գինուով հարբած ըլլալով՝ երազ մը առաւ, (յամին 701) որ իր կենաց մեծ և իրական երազին պատճառն եղաւ: Տեսածն էր, ինչպէս ինքն պատմէր, արծիւ մը որ գլխուն վրայ կու Թռչըտէր. Անշուշտ ասիկայ նշան է, ըսաւ, որ օր մը ես կայսր պիտի ըլլամ: Եւ ինչպէս որ կ'երևի՝ միայն զինուորական և աշխարհային բաներու համառ, աւելի հարկաւոր բաներու անհամառ էր. գնաց անուանի եղած ճգնաւորի մը պատմելու և խորհուրդ հարցընելու. ճգնաւորն, որ խաբուած կամ խաբեբայ մ'էր, միանգամային և մեղրաթաթիր ժպտումնդաւան և երազագէտ մը, Վարդանայ փառահեղ կերպարանքէն յոյսառնըլով որ երաւ կրնայ օր մը կայսր ըլլալ, ինչպէս

վերոյիշեալներն. Անտարակոյս է, ըսաւ, կայսր ըլլալ. բայց՝ (հայհոյանք մ՚ալ աւելցուց) այս պայմանաւ Աստուած քեզի կու տայ կայսերութիւնը՝ որ եկեղեցւոյ չ ըսուած տիեզերական ժողովը ընչեա, այսինքն անոր հաստատած գաւանանքը: Վարդան առանց առաջ եւս մտածելու, իսկոյն տուաւ, որ եթէ կայսր ըլլայ՝ այնպէս ընէ: Եւ երազէն աւելի այն տուա մարգարէին հաւատալով և վստահանալով՝ պատմեց իր մէկ բարեկամին՝ եղածը և ըլլալիքը. բարեկամն՝ որ Ճգնաւորին պէս ցած մ՚էր, ապագայ անստոյգ կայսրէն աւելի՝ ներկայ ստոյգ կայսերէն վարձք առնուլը իրեն շահաւոր գտնելով՝ գնաց ատոր պատմեց լսածը: Ապահովար մէկէն բռնել տուաւ զՎարդան, և խեղի պէս ծեծելէն եւս՝ գլուխն ալ ածիլելով՝ չլթայի զարկած աքսորեց մինչև՝ ի կիփրանիա կղզի, Յունաստանի արևմտակողմը:

Վախնալու մահուանէ մը ազատելով՝ Վարդան՝ տասը տարի առեն ունեցաւ իր երազին վրայ նոր նոր երազներ տեսնելու և դեռ յուսով սպասելու. երբ իր աքսորուելէն քանի մը տարի վերջ Յուստինոսն Ռինոտմէտ, այսինքն Պնչատն (քիթը կտրած), կատղած գազանի պէս փախչելով իր արգելանէն՝ որ էր Քերսոն քաղաքն Ղրիմոս, նախ Խազրաց սպասինելով, տպա Բուլղարաց, և տասնմէկ զօրք առնելով եկաւ պաշարեց տուաւ իր հին Թագաւորանիստ քաղաքը և Թագը (705), բռնեց զԱպսիմար որ փախեր էր, և անոր նախորդ Ղևոնդ կայսեր հետ մէկտեղ բերելով, և ամեն խայտառակութիւն տալով՝ կրկնին մէջ գետնի վրայ ձգեց կոխկրտուեց, մինչդեռ լման բած ժողովուրդն սաղմոսին խօսքը իրեն յարմարցնելով կու պոռչըտար. «Ի վերայ իժի և » քարբի գնասցես դու, զառիւծն (Ղեւոն) և » զվիշապն (Ապսիմար) առ ոտն կոխեսցես». կե-

10477396

ոյ ուրիշ գազանաց ամփիթէատրոն մը տանել ու գլխատել առաւ զանոնք: Իսկ ինքն իր տգեղ կերպարանաց ծածկոց մը հնարեց, ոսկեզէն քիթ մը. զոր՝ ամեն անգամ հանած առեն, կ'ըսեն, տակալի գազանական կատաղութիւն մը կ'իմանար. և գազանէ աւելի անգութ և անկարծելի կոտորածներ ըրաւ՝ իր երկրորդ անգամ վեց տարի Թագաւորութեանն առեն: Սատանայական լըրութեամբ մը Սատուծոյ գէմ երդուած էր իր ամեն հակառակորդներէն վրէժ առնուլ. և ոչ միայն անոնց, հապա շատ անմեղաց ալ չարաչար տանջանք և մահ հատուց. արիւնոտ աչացն առջև կրօնք արբազան բան չէր երևեր: Ոչ միայն կայսրութեան, այլ և մարդկութեան զգուանք և ցաւցանք մ'եղաւ, ուսկից ամենքն կու գանէին և կու դողային:

Յետ չարդելու ընչելու Կ.Պօլսի և անոր մօտ տեղերու մէջ իրեն Թշնամի սեպածներըը, բոլորովին գարձուց իր աքսորանաց տեղւոյն (Քերսոնի) բնակչացը վրայ. որովհետև հոն անոնց մէջ եղած առեն միշտ կու սպառնար Թէ երբ ազատութիւն գտնեմ՝ զձեզ պիտի չարչարեմ, անոնք ալ ուզեցին զինքը հալածել, և հազիւ Թէ կըրցեր էր փախչիլ անկէ: Հիմայ բոլոր նաւերը ժողվեց, և զամենքը սոխպեց որ գան օգնութեան. ինչուան, կ'ըսեն, 100,000 մարդ լեցուց նաւերուն մէջ և ղրկեց'ի Քերսոն, գլուխ գնելով Սատափանոս անուանեալ գազանամիտ մարդ մը՝ զոր անոլորմութեանն համար ամենքն (ώմոփագոս) կոչտ կամ կատղած կոչէին. պատուիրեց սորա՝ Քերսոնի բնակչաց մէկն այլ ողջ չթողուլ, և անոնց տեղը աքսորածներով լեցընել: Սա աքսորելոց մէկն այլ ըրաւ երազատես Վարդանը, կեփալոնիա կղզիէն հանելով և հոս քշելով:

Թողուինք հոս յիշել Քերսոնի մէջ եղած ահեղ

կոտրածը, և անկէ ապրած ու նաւով դէպ՝ ի Կ.Պօլիս վերադարձ տալով և մարդկանց կորսուելը նաւահանգստեմէն Սեւ ծովուն մէջ. որոց թիւը կ՚ըսեն (գուցէ չափազանցօրէն) 63,000 էր, թէ և մեկտեղ սեպուին նաւաստիք և զօրականք. պիականին հարիւրապետը մղոններով հեռու ծովեզերքներ ծփալով զարնուեցան երկայն ատեն: Կատաղին Սաեփանոս՝ որ քան զՊնչեան նոսազ կատղած էր, աչք գոցեր էր որ մաս մը՝ ի բնակչաց Փերատի փախչին, և երեն տեղ վերակեցուս Թողեր էր զԵղիա՝ կայսեր զինակիրը: Երբ այս փախչողներն լսեցին որ Սաեփանոս նահապետ ծեալ խեղդեցաւ, սկսան գառնալ երեից ամայի հայրենիքը. բայց գազանացեալ կայսրն այլ լսելով անոնց ապրիլը՝ նորէն զօրք խաբեց վրանին. անոնք յեսին յուսահատութեամբ զինուած, և խուզուց օգնութեամբ՝ ջարդեցին կայսեր զօրքը, և միաբերան անէծք ու նզովք կարդալով այնպէս հրէշի մը վրայ, ուզեցին զԵղիա (որ երեից կողմը գարձեր էր) կայսր անուանել. սա վախնալով հրաժարեցաւ: Ահա այն ատեն միաբանեցան և կայսր կանչեցին ու դրին զՎարդան, անուն այլ փոխեցին՝ ի Փիլիպիկոս, զոր սկսալ ըսելով և գրելով ոմանք՝ Փիլէպէի անուանեն, ոմանք Փիլիպոս, և ոմանք՝ ի մեր պատմչաց այլ Փիլէի: Ահա բանս եղաւ 711 տարւոյն վերջերը. Վարդանայ երային ատուգութեաւ, բայց ոչ բոլորովին և ոչ կարծածին չափ երկայն և յաջող:

Ահա վայրկենէն եաւ Յուստինիանոս կայսեր անդադարելի կատաղութիւնն և տագնապը նկատրագրել՝ գրեթէ անկարելի է. առջի գործքն եղաւ մեկէն վազել երթալ Եղիայի տունը. անոր երեխայ տղայքը երեից մօր գրկին մէջ ինքն իր ձեռքով սպաննեց, մայրերնին այլ մահուանէ աւելի մեծ նախատանաց մատնեց. յե-

ոտ չուտով նոր նաւախումբ մը կազմեց՝ առնային պատերազմական գործիքներով լցուց, Մօրս անուանդ մէկու մը յանձնեց սաստիկ սպառնալեօք՝ որ երթայ հիմնայատակ ընէ զՓերսան, և ոչ մանր ուլայոց խնայելով. անանկ որ ոչ կեանդանի մնայ, ոչ շինքի նշան մը, այլ վարուցանի տեղ դառնայ: Մօրս սիրտը բաւձանաց համեմատ չուտով հասաւ՝ի Փերսան, և սկսաւ պարիսպը ծեծել ու փլցընել. բայց յանկարծ խազրաց գունդ մը վրան հասաւ, դադրեցուց: Մօրս տեսնելով որ կամ սասնցմէ պիտի ջարդուի, կամ չետ դառնալով կայսեր բարկութեան զոհ պիտի ըլլայ, ինքն ալ Փերսոնացւոց կողմը դարձաւ, միացաւ անոնց հետ. նոյն միջոցին Վարդան այլ խազրաց կողմէն գալով նոր զօրագնդով մը՝ նորէն կայսերական պատուով ընդունուեցաւ: Յուստինիանոս ինչպես կու զարմանար իր նաւերէն լուր մը չառնելուն, և կասկածելով՝ անհամբերութեամբ մնացեալ զօրքը ժողվեց, գունդ մ'ալ՝ի Բուզարաց օգնութիւն առաւ, և գնաց ցամաքէն մինչև՝ի Սինոպ: Հոնկէ տեսաւ որ նաւատորմին ապատասխանաց կու գայ դէպ՝ի մայրաքաղաքն. նաւ մը խաբեց ընդ առաջ լուր բերելու. լուրն այս եղաւ՝ որ աքսորեալն Վարդան կայսր եղեր է և կու գայ Կ.Պօլսի վրայ:

Հոս վերջին անգամ Յուստինիանոս ոսկի քիմն ընկաւ, և բոլորովին գազանացաւ. անհանգիստ և անդադար վազեց դէպ՝ի մայրաքաղաքն. բայց տեսաւ որ Վարդան իրմէ առաջ հասեր սիրեր է. նոյն երագութիւն դարձաւ՝ի Դամատրիս՝ որ Քաղկեդոնի (Գաաը-քէօյ) և Նիկոմիդիոյ (Իզնիմիտ) մէջտեղն է. բայց հոն ալ Վարդանայ վախն և սուրն հասեր էր. վասն զի հոս խաբերը էր զՆեղիա, որ երբեմն իրեն տէրը պաշտպանող զէնքերը անոր դէմ դարձընէ: Նեղիա տեսաւ որ այն իր կատղած

հին տէրն պատրաստուեր է պատերազմի. մօտեցաւ անոր Յոյն և Բուլղար զօրացը, իմացուց որ ինքն պատերազմի համար եկած չէ, այլ զերեզք ազատելու անանկ այլանդակ հրէշի մը ձեռքէ. և խոստացաւ նոր կայսեր շնորհքները. մեկէն իր կողմը դարձան դիմացի գունդերն այլ: Քրիստոտոր կայսեր ուրիշ բան չմնաց՝ բայց յուսահատ փախուստ. սակայն շուտով վրայ հասաւ իր քաջ բայց սերպանեզ զինակիրն (Եղիա). մազերէն բռնեց քաշեց, և իր դաւաճան սրովն կտրեց այն գուռզ գլուխը՝ որ 26 տարիէ վեր ահով դողով և անքաւ արեամբ լցուցեր էր զծով և ցամաք արևելեան ընդարձակ կայսերութեան. և խաբեց առ Վարդան: Նոյնպէս սպանուեցաւ Յուստինեանոսի առաջին պաշտօնեային և գլխաւոր պատրիկն Վարազբակուր, որոյ անունն յայտնէ որ ազգաւ Հայ կամ Վրացի էր:

Մօրուսի և Յովհան Ճնճղուկ ըսուած մէկու մը յանձնուեցաւ՝ աւելի անգութ և սրտակուռ գործ մը. սպաննել զՏիբեր՝ զորդին Յուստինեանոս: Իրաւ հրէշի մը ձագ էր սա՝ բայց դեռ անչնաս անմեղ ձագուկ մը, վեց տարեկան. զոր մանն (Անաստասիա) փախուցեր էր Ս. Սոփոյա ծածկի եկեղեցի մը, և վրան գլուխը սրբոց նըշխարքներով լցուցեր էր. մէկ Թաթիկովը խորանը բռնել տուեր էր, մէկալովը Քրիստոսի աշխարհակեցոյց խաչին կտոր մը. ինքն մամին ալ խորանին դռան առջև պահապան կեցած՝ վայրկենէ վայրկեան կուսակերս սրտաթափ սև վայրկենին. և ահա անողորմ դահիճքն ներս թափեցան: Անաստասիա՝ վազեց ընկաւ պլլըւեցաւ Մօրուսի ոտքերուն, լալով ձչալով ողորմութիւն կուկանչէր. զորը ծառն, կրնաքը ըսել թէ զորը բընութիւնն իսկ ողորմութիւն կուտար առանց պատուհասի մը համար. բայց այն օրերը՝ միայն

10477396

մարդկանց սրտին վերցուեր էր ոլորմունքիւնն։ Մինչդեռ մանն Մօրուսի կու պատրաստէր, անդին ա֊նուանեալ ձնձղուկն՝ գիշատիչ անգղ դարձած՝ աղուն վրայէն սրբազան մասունքները վերցընե֊լով, և կէս մ'ինքն իր վիզն անցընելով՝ քաշեց ե֊րեխային ինչուան եկեղեցւոյն դուռը, աստիճան֊ներուն վրայ ձգեց, մերկացուց, մորթեց. տարաբ Թաղեց ուրիշ եկեղեցւոյ մը մէջ։ Անով մարեցաւ Հերակլեան ցեղն, ամբողջ դար մը ինքնակալելով վեց Թագակիրներով. որոց վերջնոյն (Յուստի֊նիանոս) տպեղ գլուխն՝ յետ խայտառակուելու 'ի Կ.Պօլիս՝ ղրկուեցաւ մինչև 'ի Հռոմ. և հոն աչ Ժողովդեան ուրախութեան պատճառ եղաւ։

Այս ուրախութիւնը երկարատև չըրաւ Վար֊դան, ինչպէս կու յուսացուէր. վասն զի իր խռով֊մանը վրայ չարաչար հաւատարիմ կենալով՝ ան֊հաւատարիմ եղաւ իր պատուոյն և կրօնից. սուտ Ճգնաւորին ըսածին համեմատ չանաց միակամեայց մոլորութիւնը ծաւալել յարևելք բոլոր. ուղղա֊փառ եպիսկոպոսները հալածելով և մոլորեալ֊ներ դնելով տեղերնին. Ժողովակ մ'ալ ընել և պատապարտել սուրբ Ժողովը. և իր խելօք գիր մ'ալ գրեց 'ի Հռոմ առ սրբազան հայ֊րապետն. զոր ամենքն արհամարհելով մերժե֊ցին, և ինչուան զէնք առնըլով իր խաբրած զօրքը չարդել կ'ուզէին, եթէ Ս. Պապն չարգելուր։ Միայն մէկ քարի հովուի մը ինայեց Վարդան. ա֊սիկայ էր Ռաւեննայի արքեպիսկոպոսն Փեղիքս, զոր Յուստինիանոս կուրացուցեր և աքսորեր էր 'ի Փերսան Վարդանայ հետ. որ պանդխտութեան և Թշուառութեան ընկեր ունենալով զնա՝ սէր կապեր էր հետը. և երբ կայսր եղաւ՝ դարձուց իր աթոռը շատ ընծաներով. (որոց մէջ կար պզտիկ տակելէն Թագ մը՝ անգին գոհարներով զարդա֊րած, որուն համար Հրեայ մը ըսաւ յետոյ Մե֊

10477396

ծին Կարտլոսի՝ թէ բոլոր Որաւենայի քրնաղաքերտ մայր եկեղեցին աւելի կ՚արժէ):

Իր երազին և երազահանին միայն հաւատացող և ինչուան կրօնքն ալ արհամարհողն՝ ի հարկէ ուրիշ ազնիւ զգացմունքներ չէր կրնար ունենալ. պէտք չէ բնաբանել, թէ արդեօք յիշից Վարդան իր ծագումը, ուր ցեղէ, ուր ազգէ ըլլալն. և երբ բարիք մը իր նախնական հայրենեացը: Ընդհակառակն կ՚իմացընեն պատմիչք, որ նեղէց գՀայս, և շատ գալթական հանել տալով՝ ի Մեծ Հայոց՝[1] քշեց գ և դ Հայոց կողմերը, որ են Մաղադիա և Խարբերդ. որոց տիրելով Արաբացիք՝ ընդունեցան և աեղ տուին Հայոց. ասոնք ալ յօժարութեամբ միաբանեցան զիրենք ընդունողաց հետ: Թերևս տով աւելի քաջալերուեցան Արաբացիք Փոքր Ասիոյ զանազան կողմերը կոխելու, ինչպէս Բուզանդ ալ ինչուան Կ.Պօլսոյ մօտ տէմանները աերելու և այրելու: Վարդան՝ ոչ իր անուան, ոչ իր պատուոյն և ոչ իր աղջի տուած յուսոյն համեմատ՝ քաջութիւն ցըցուց ասոնց դէմ. այլ կարծես թէ իր երազածը և չերազածը տուգել ուզելով՝ ինք զինքը Թոլուց բաղդին գիրկը, և միայն անոր ցուցած փափկութեանցը մէջ Թալուեցաւ:

Իր նախորդն (Յուստինիանոս) անչափ բանաբանութեամբ և կռտրածներով՝ անբաւ տպացուածք և հարստութիւն ժողովեր էր, որով շատ քաղաքներ կրնային շինուիլ, և շատ բանակներ պահուիլ. Վարդան իր կայսերութեան մէկ ուրիշ տարուանը մէջ՝ գրեթէ բոլորն ալ մսխեց, անչափ և անկարգ զեղխութեամբ, որով շատ խայ-

[1] Յայտմ. Հոռի Զ. վասն Յուստինիանու ասէ. «Հա-
» լածեաց զազգս Հայոց վասն ուղղափառ հաւատոց յիշ-
» խանութենէն իւրմէ. և ուրախացեալ Տաճկացն բնակե-
» ցուցին զնոսա ՚ի Մելտենի, ՚ի Միջագետս Ասորւոց»:

առաքուԹիւն, Ճնաս և մեղք հասուց չառաոնց. և եԹէ գեռ արտաքին սիրուն կերպարանքը և Ճարտար ու բանիբուն խօսուածքը պահած չըլլար, անշուշտ և ոչ այն 18 ամիսը կու Ժագաւորէր: Բայց ինքը մեծ յոյս ուներ՝ իր խաբեբայ մարգարէին վստահացած՝ որ երկայն տարիներ պիտի վայելէ կայսերուԹիւնը: Սակայն եԹէ այն կարծեցեալ տարիներն այլ այդպէս վատուԹեամբ պիտի անցընէր, պէտք է մեր ազգուԹեան և մարդկուԹեան պատուոյն համար գոհ ըլլանք՝ որ յոյն պարապ ելաւ, և շուտով հասաւ իր երազին վերջը, կամ նոր և անակնկալ երազ մը. որ պատմուԹեան ամենէն հիացուցիչ և ահագուցիչ եւոյԹներէն մէկն է, կենաց նշանաւորագոյն յեղափոխուԹեանց մէկն, բարոյականի զարմանալի դաս մը. յորում կրնանք բովանդակ մարդուս բնուԹիւնը կամ փափագները նկատել՝ ի վարդան և խրատ առնուլ:

Աշխարհիս մէջ անշուշտ շատերն փափագեր և երազեր են, բայց խիստ քիչ եղած են վարդանի նման այսպէս յանկարծօրէն և այսչափ մեծ փառքի, իշխանուԹեան և բարեաց հանդոյք. երկու անգամ աքսորուած և շատ հեղ հազիւ մահուանէ ազատած, մանաւանդ անանկ բռնաւորի մը (Յուստինիանոսի) ձեռքէ, որուն զոհ եղան աւելի ապահովագոյն կեանքեր. և երկրիս ամենէն բարձր և փառաւոր գահոյքը վայնասած, որ այն տեն դիպուածով մ'այլ (զոր վերն յիշեցի) անբաւ գանձով և հարստուԹեամբ լեցուած էր: Ջատնք՝ անկարծ բաղդ գոնուղի մը պէս անկուշտ կերպով վայելելը բաւական չտեսնելով, ուզեց վարդան (մէկ քանի շատ անուանի եղած փափկակեաց և զեղխ մարդկանց նման) մէկ օրուան մը մէջ փորձել զգալ այն ամենայն բարիքը՝ որուն կրնայ բաղձալ մարդուս սիրան և բնուԹիւնն,

10477396

միայն ներկայ կեանքը մտածելով. մէկ օրուան մը մէջ բովանդակել իր աշխարհական կայսերութիւնը կանխելն փառքը և վայելքը: Ահա եղաւ իր մեծագոյն երազն. որ ուզածին պէս սկսաւ, չուզածին պէս լմընցաւ:

Ան օրն էր Քրիստոսի Թուականին 713 տարուն յունիս ամսոյն երեքը, Հոգեգալստեան տօնին նախընթաց օրն (շաբաթ), որ ամանք կ.Պօլիս քաղքին հիմնարկութեան օրն էր կ'ըսեն, և այն ժամանակի սովորութեան համեմատ Քաղքին ծննդոց օրն [1]. բայց ըստ այլոց նոյն ինքն Վարդանայ ծննդոց տարեդարձ օրն էր: Ահա օրս ուզեց իր աւուրց մէջ նշանաւոր ընել, և եղաւ ուզածէն շատ անդին. նշանաւոր բոլոր կայսերաց, գարուց, ազգաց և մարդկութեան աւուրց մէջ: Առաւն՝ քաղքին մեծ կրկէսը՝ (Ամթ Հիպոտրոմը) զարդարել տուած ըլլալով՝ մեծահանդէս և փառազարդ կառարշաւ մ'ընել տուաւ ի զուարճութիւն աշխարհախառնմէ ժողովրդեան. յետոյ նոյնպէս մեծահանդէս և սխրալի հեծելութիւն [2] մը, յորում անշուշտ ինքն ալ իր անուան համեմատ՝ [3] ահիպարանոց և սիգաշարժ և ոսկեզարդ երիվարի մը վրայ նստած, աւելի իր նախնեաց սեփական Հարսիկ նստուածքով և վազուածքովը կուզայ. լեցներ տեսողները, քան իր և իր ձիուն և իրեն անմիջապէս քովէն գացողներուն վրայի ակնախնայիղ և մեծահարուստ զարդուց և սպառազինութեանց փայլմամբը. որով՝ երկրիս երեսէն առհոզ արեւու մը պէս կ'անցներ քաղքին մէկ ծայրէն մինչ ի մեկայլ ծայրը. և շատ աշխարհական ներուս չըրած մեծութիւնը ցուցնելով՝ ինքն որ

1 Γενέθλιος τῆς πόλεως ἡμέρα.
2 Cavalcade, Տ՛. Պէնէլ:
3 Φιλιππικὸς Հետեր ըսել է:

հազիւ աչքառհապիւտ կրնար լսուիլ, հազուր հատ յաղթուելեան և փառաց նշան դրօշներ օդուն մէջ բարձրացուցած տանել կու տար. հազար երաժիշտ, մեծամեծ և բարձրաձայն փողերով և փանդուամբք՝ այնպէս կու թնդացընէին չորս դին, որ կարծես թէ ոչ քաղքին հիմնարկութիւնը հռչակել՝ այլ անոր հիմերը դուրս հանել կ'ուզէին. — փողերէն և փանդիռներէն աւելի կը տիրէր ուրախական և հանդիսական ձայն ժողովրդեան, որ զիրար հրելով՝ իւր թէ առանց ոտքի հեղեղաբար հնծելոց քովէն և ետևէն կ'երթային: Ան օր Կ. Պօլիս նեղ եկաւ իր ժողովրդեան, կայսերութիւնն՝ Վարդանայ սրտին:

Օրուան մէկ մասն փառաց փոյլման և վայելից նուիրելով, մէկայլ մասն այլ փոփկութեան վայելից պահուած էր: Վարդան նախ գնաց մուտ Չեբքսիպեան չերմուկք ըսուած բաղանիքը, որ կայսերական պալատան և Ս. Սոփիայ եկեղեցւոյ միջոցն էր: Ցետոյ կարգն եկաւ կերուխումի, ուր երկայն ժամեր անցուց իր պալատան մեծամեծաց հետ. և ինչ որ այնպիսի օրուան մը համար կրնայ մտածուիլ և պատրաստուիլ՝ կար սեղանոյն վրայ, ի հարկէ չափէն շատ և շատ աւելի. ուր նստած աեեն՝ Վարդան դեռ Վարդան կայսրըն էր. սիրան առջինէն աւելի ուռած մեծցած, Թերևս քան զնաբուդոնոսոր և զԲաղտասար մեծափառք և մեծավայելք կարծելով զինքը. իսկ անկէ ելած աեեն, աւաղ, ոչ Թէ արևելքի կայսեր, ոչ Թէ Մշոյ գեղի մը յեսին Վարդանին չընորհքն այլ չկար վրան, այլ կ'ամաչեմ ըսելու՝ Թէ նուաստացեր էր քան զանբան. խուճած խանգրած տիկ մ'էր դարձեր, աւելի գինւով քացխած քան կերակրով փքուած: Այսպէս լմընցաւ յորեկուան հանդէսն, երկրննալով՝ի մէջ ջահերու գիշերուան, որոյ մէկ հատիկ հարկաւոր վայ-

Եւք պիտի ըլլար խոր և երկար քուն մը. որու մէջ յիրաւի ընկաւ Թալուեցաւ Վարդան շատ խոր, Թէ և ոչ շատ երկար:

*Բայց ո՛վ մարդկային բնութիւն, այդպէս մեծապէս պատուեալ քու հանճարդ յԱստուծոյ. քու բարակ և հրեշտակամօտ ազնուութիւնդ՝ ինչպէս կրնայ այսչափ Թանձրանալ և կոպտանալ խոզի ու վարազի երևոյթ մ՚առնուլ. մանաւանդ Թէ անոնց բարքն և սխորժակը՝ քան Թէ կոշտ կերպարանքը: — Ա՞յս էր քու երկայն աւետն երկնած երազդ, ո՛վ յանկարծաբաղդ կայսր Վարդան. այս էր քու անդրածայրագոյն փառքդ և վայելքդ: — Տառապեալ մարդկի իրենց սառապանաց և օրական աշխատանաց ու տրտմութեանց՝ անոյշ դեղ մը մխիթարութիւն մը կու գանեն գիշերուան քունը. քեզի՝ այդ մէկ ցորեկուան վայելքդ ու մխած գանձերդ՝ որ կրնար հազարաւոր ընտանիք երջանիկ ընել, քանի ծանր ու սխուր պիտի ըլլայ. — անոնք գոնէ այն աւեն տեսած սուտ երազներով պահ մը կու սփոփին, քու ստոյգ երազդ՝ քեզի ո՛րչափ անտանելի պիտի ըլլայ, երբ աղէկ մ՚արթննաս:. Արթնցի՛ր, ով վաստաբաղդ Վարդան, ո՛վ կարճօրեայ կայսր. վասն զի ահա քու վերջին ինջոյից տաճարիդ պատէն այլ բազատասարեան ձեռք մը դուրս ելած՝ կու գրէ կայսրութեանդ, փառիկութեանդ և ամենայն բարեացդ վերջ ու վախճան: Կամ գոնէ, եթէ կրնաս, դարձեալ երազէ գլխուդ նոր գալիքը: Մանիկ դիր պահ մը խղճիդ. լսէ եկեղեցւոյ և ժողովրդեան մէջ ծածուկ փսփսուք մը, տհաճութիւն մը, դանգատ մը, սպառնալիք մը քեզի դէմ. զգա մեծամեծ իշխանաց դառնութիւնը և ոխը՝ իրենց և իրենց կանանց հասուցած անարգութեան համար. տարսէ այն պարկեշտ հաւատարմութեան սրտապոչ աղօթքէն՝ որ իրենց աստուածա-

10477396

նուէրը կուսակրութեան և աւանդապահութեան ջնասանեբոլոր վրէժը կը պահանջեն յեղկնից։ Թնդա՜մ մէկ մը այն որոտմունքէն՝ որ Թրակիոյ վրայէն գոռալով՝ քեզի կու մօտենայ. հոն է Գէորգ Բոլսակ (գուցէ քեզի պէս արևելցի մը), Վարագբակոբի աեղ Օպսիկիոնի[1] կուսակալ եղողն, որ վրադ կու խաբէ քու դահիճդ։ Եւ ահա այդ քու կենացդ և շատերու կենաց ամենէն մեծ և փափուկ օրուան հանդիսից մէջ՝ գոռլն կամ ցեցի պէս ծածուկ կու մօտենայ քու երջանկութեան թելդ կրծելու կտրելու... արդէն պալատիդ շորս դին քննելով համարձակ մուտք գտած. վան զի քու պահապաններդ այլ քեզի պէս գինով խեղապատած՝ զքեզ Թոռլեր՝ զիրենք քնոյ կամ հեշտութե՛ տուեր են... ահա հասաւ ինչուան քու նեղքին սենեակներդ, քու ննջարանիդ, քու անկողնոյդ... Ո՛հ, հիմայ արթընցիր ըսենք արդեօք, Թէ քնացիր առանց բնաւ արթննալու...։

Դեռ կու խռկար Թանձր քնոյ և յօդնութեան մէջ աւազէլի կայսրն Վարդան. դեռ ինքն նեբսէն ուրիշ երազ կու տեսներ, դրսէն իր վրայ ուրիշ երազ կու տեսնուէր. և դեռ չատ ուշ սաստիկ ցնցումէ մը Թօթուեըով՝ բացաւ աչուըները... Ո՛վ ահաւոր վայրկեան, Թէ և կարճ. այն մէկ ակնթարթի մէջ ո՛րչափ բաներ տեսաւ և իմացաւ. ի՛նչ նորանշան և կակծալի երազ, մանաւանդ Թէ 13 տարուան տաքուկ երազոց վերջ՝ ի՛նչ ցրտաշարսուռ արթնութիւն։ Անկարելի անբացատրելի ափշութիւն, զարմանք, կիրք, վախ և այլայլութիւն. — մէկ վայրկենին մէջ՝ մէկ մը անցած օրը և քնոյն անկողինը յիշեց, մէկ մ՚ալ տեսաւ որ անկողնոյ տեղ՝ մեծ վերարկուի մը մէջէն

1 Անուն կուսակալութեան՝ որոյ գաւառներն էին Փռիւգիա, Միսիա, ԲիւԹինիա։

10477396

դուրս կ'ելնէ, (որով զինքը պլլեր բեռներ էր հոն Ռուփոս՝ Բորտֆոսի պաշտօնեային.) – փոխանակ իր պալատան ջահերուն՝ այլանդակ լոյսեր կը չարժէին չորս դին. – փոխանակ ննջարանին՝ ընդարձակ ձիարձակարանը, ուր ինքն սկսեր էր այն օրուան մեծ հանդէսը. – փոխանակ իր սպասաւորաց՝ ձառադէմ դահիճք. փոխանակ իր փափկութեան սպասուց՝ սոսկալի տուրեր:... Ի՞նչ, ոմ, ոըր... լսել չենաց. իրաւ թէ տուտ, երանի թէ արթնութիւն. ինչ նոր աշխարհ կ'երևի աչքերուս:... Եւ ահա նոյն իսկ վայրկեանին սև և անբացուելի վարագոյր մը՝ զամեն բան ծածկեց աչքերէն, եթէ դեռ կրնային աչք լսուիլ անոնք՝ որ պահիկ մ'առաջ թանձրամած քնով գոցուած էին, հիմայ արեամբ և յաւիտենական մթութեամբ կղպեցան:... Երկու սպրատսուր երկաթ՝ չուխտակ կայծակներու պէս իջան զարկին, դուրս ցատքեցուցին բիբերը... Քանի մը կաթիլ ջրոցած արեան և երկու պժգալի վէրք լցին այն խարկած ու խաւարած փոսերը, որոնց երէկ առտուն բոլոր աշխարհիս մեծութիւնը և գեղեցկութիւնը քիչ կու գար. հիմայ անոնց ամեն զբօսանքէն և հեշտութիւններէն՝ հազիւ քանի մը դժուարաձին արցունքի կաթիլ մնաց մխիթարանք:...

Այսպիսի ահեղ փոփոխութեան վրայ՝ կարծես թէ ինքնին դէպքն կամ պատմութիւնն այլ հիացած, լռեց ծածկեց, և ինչուան հիմայ չէ յայտնած այն վայրկենէն ետև մեր կուրացեալ կայսեր ինչ եղած ըլլալը. իրեն՝ ուրիշ կերպով, մեզի և բոլոր աշխարհիս ուրիշ կերպով խրատ և զարմանք թողլով այս նորանշան պատահարը, փլուկ Վարդանայ ստոյգ կարծած երազը, երազ կարծած ստուգութիւնը:

10477396

10477396

ԻԶ

Ե ՎԱՐԴԱՆ ԿԱՑՍՐ

19 *Յուլիսի*, 803

Ա

Կոստանդնուպօլսի քիչ կամ շատ դիւրակեաց բնակչաց տեղափոխութեան կամ օդափոխութե՛ան սովորութիւնն՝ նշանաւոր բան մը, մանաւանդ թէ մաս մ՚է իրենց կեանաց. և այն քաղաքը ձմեռնաբուղաց յայտնի է թէ ինչպէս աշնան միջի կամ եաքի հովերը փչելուն պէս՝ ցրուեալ բնակիչքն կը փութան կը ժողովին այն արևելից և արևմուտից մեծ ութաձև կեներդրոնին մէջ. իսկ գարնան առաջին տաքուկ հովերուն՝ կ՚ելլեն, իբրև թռուցեալ ութէն դուրս թափելով և բազմաձիւղ երակաց մէջ մղուելով՝ գեղերը տուն տեղ բնակելու և բնակելու: Վոսփորոնի երկու շրթանց վրայ եղած շէնքերն չբաւելով այնքան բազմութեան, կամ չյարմարելով ամենուն ախորժակին և պէտքին, շատերն այլ (մանաւանդ այս եոքի տասեններս) փոքրիկ նաւարկութեամբ մը կ՚երթան Պրոպոնտոսի կապուտակ կոնքէն (Մարմարայի) դուրս ցրցուած զանազան տեսքով գեղեցիկ, ա-նուշհով մանրիկ ու մեծկակ կղզեաց մէջ քանի մ՚ամիս անցընելու, զբօսանաց ձայներով փախ-

ցընելու այն առանձնութիւնը՝ զոր գրեթէ հա-
զար տարի եկեր բնաբուեր էին հոն՝ շատ մեծամեծ
և փոքր մարդիկ, արք և կանայք, առուսիներ և
հուսանք, կայսերք և կայսրուհիք, բռնաւորք և
բռնադատեալք: Անոնց բազմաթիւ վանորէից և
արգելանոց՝ (իրաւ հիմայ շատ քիչ՝ բայց) գուցէ
դեռ բաւական նշխարք մնացեր են՝ յիշեցընելու
հին աշխարհ հին քաղաքականութիւն մը, կամ
տարբեր մտածութիւն և զգացմունք: Յոյն կայ-
սերաց ժամանակ գրեթէ այս կղզեաց ամեն դուր
ու դար տեղուանքն այլ ծածկուած էին եկեղե-
ցիներով և վանքերով, զոր կամ իրենց հոգւոց
կամ իրենց ազօթողաց համար կու շինէին իշխա-
նազունք. անոր համար ալ մինչև հիմայ Իշխանաց
կամ Իշխանուհեաց կղզի՛ կ'ըսուին այս Մարմարայի
արևելեան ափանց մօտ եղած տասնի չափ կղզիքն
և կղզեակք, հանդերձ քանի մը ցամաք ժայռե-
րով, որոց այլանգակ ձևերն, և նոյն իսկ մեծա-
գոյն կղզեաց ապառաժներն, և ծովուն միջէն յան-
կարծօրէն ելնն ցցուիլն՝ հին առեն Քաչաց կամ
գիւաց բնակութեան յարմար կարծեցուցին զա-
նոնք, անոր համար՝ ի նախնեաց Տէմոնիսեան կղզիք
անուանէին. բայց քրիստոնէութիւնն հալածե-
լով զդևս և զքաջն՝ սրբազանից բնակութիւն ը-
րաւ այն ծովակոծ անկոխ և անմատոյց ժայռերն
այլ. անկէ ետև համարձակեցան ամենք յիշխա-
նազանց՝ չինել հոն նաև իրենց առանձնական զբօ-
սանաց կամ բնակութեան տեղեր. որք և այնչափ
յարգի եղան՝ որչափ մեծ մայրաքաղաքին մօտ էին
սահմանով, և հետու անոր խառն՝ ի խուռն աղ-
մուկներէն և կիրքերէն:

Յայտ է տեղւոյն ծանօթից՝ որ այս կղզեաց մէջ
(որոց չորսն միայն մեծկակ և բազմաբնակ էին)
ամենէն մօտն՝ ի ցամաք՝ Անաչին ըսուեցաւ՝ ի Յու-
նաց Բուծա, որ և հիմայ այլ Բուծի կ'ըսուի. խակ

10477396

'ի Թուրքաց Գընալը կամ Գալըջափա, իր պետնին կարմրութեանը համար. և անկէ՝ բոլոր Իշխանաց կղզինեըն ալ նոյն անուամբ կը կոչեն (Գըզըլ աւտալար). Գաղկեդոնէն (Գաստըքէոյ) հազիւ չորս հինգ մղոն հեռու ըլլալով՝ առաջին երեցոյն է այն փոքրիկ միջերկրեայ ծովուն ծփանաց վրայ՝ կըծկաձև ուռած և քառածայր տարածուած: Իր հին շէնքերուն մէջ ամենէն առաջինն և նշանաւորն էր մեծ վանք և արգելանք մը, շինուած 'ի սկիզբն թ դարու (801). ուր ընդ կամաւոր կրօնաւորաց՝ ակամայ կամաւ կու բնակէին և աքսորեալ իշխանք և պաշտօնեայք կայսերաց, և երբեմն նոյն իսկ կայսերք. բայց ասկէ ալ քիչ առաջ կու յիշուի ուրիշ վանք մը՝ զոր շիներ էր (Ը դարուն վերջերը) տէրութեան երևելի պաշտօնէից և զօրավարաց մէկն, և յանձներ էր աղօթասէր և հոգեսէր անձանց. անոր քով երեն համար ալ պահելով պզտիկ երկիր մը, ուր իր ամենէն հանգիստ և զբաւորձալի օրերը կ'անցընէր, գետինը մշակելով, պարտէզ դարմանելով, երբ որ իր մեծամեծ պաշտօններն և պատերազմաց դադրիլն պարապ առնեն Թուրքին. վասն զի կայսերութեան ասիական Թեմից կամ նահանգաց մէկուն կողմնակալ վերակացու էր. և եռքերը, անոնց ամենէն գըլխաւորին, բուն Սփնեէնց (Անատոլիքոն) ըսուած նահանգին, որ կը բովանդակէր հինգ հին աշխարհ, Լիկայոնիա (Ղոնիա), Փռիւգիա (Քէրմիան), Իսաւրիա, Պամփիւլիա, Պիսիդիա (Համիտ, Թէքքէ). զինուորական կարգի մէջ ալ յառաջադիմելով Ճարտարութեամբ, քաջութեամբ և երկար արդեամբք՝ բոլոր արևելեան աշխարհաց բասպարապետ կամ միագլխապետ (մոնոտրատիլոս) եղաւ, և կայսերութեան առաջին քայլ և անուանի զօրավար: Ասիկայ էր հայազգի իշխանն, (հռանուէն Մամիկոնէից ցեղէն) Վարդան պապրիկ Թուրք կոչուած:

Ա յս կոչման պատճառը չեն իմացըներ պատմիչք, և այնչափ աւելի նշանաւոր է՝ որչափ որ գեռ Թուրքաց անունն հազիւ կը լսուէր յարևմուտս այն ատեն. Թերևս Արաբացւոց (կամ Խազրաց) հետ պատերազմի մ՚ատեն Թուրքի հետ կռուելով և յաղթելով այս անուն առած ըլլայ: Նոյնպէս կը լռեն իր երկար ատեն նահանգաց կառավարութեան, և զօրավարութեան մէջ ըրած մեծամեծ գործքերը, որովք այնքան փառք, համբաւ և իշխանութիւն ժառանգեր էր, մինչև զոլոր Արևելից սպարապետ ըլլալ և խաղաղութեամբ պահել այն խիստ շատ անգամ խռոված աշխարհները. Թուի Թէ ինքն էր այն Հայկական Թեմին (Արմենիակք, Արմենիաքոն) կառավարիչ Վարդանն՝[1] որ կը յիշուի յամին 772՝ ուրիշ Թեմակալ իշխանաց հետ Արաբացւոց յարձակման դէմ Խաւարխոյ մէջ (Թաշ-իլի). անկէ վերջը ինչուան 30 տարի ուրիշ յիշատակ չըլլար վրան, բայց՝ի մեծ և արժանաւոր վարուցը գովութենէ՝ որով էր իշխանակցաց մէջ երևելի եղաւ. մանաւանդ անանկ վարուց ապականութեան դարուն մէջ, յորում նախ կայսերք անկրօնութեամբ և անկարգութեամբ հասարակաց գայթակղութիւն և իշխանաց համարձակութիւն կուտային՝ի չարիս: Վարդան՝ ոչ անոնց օրինակէն և ոչ իշխանութեան և յաղթութեանց մեծութենէն ուռեցաւ աւրուեցաւ. այլ արդարակրօն, առատաձեռն, բարերար և բարեսէր բնութիւ՝ իր և ասպիճանին պատիւը պահեց, և ամենուն սիրելի եղաւ, մանաւանդ զօրաց. որոց քաջութեան և հաւատարմութեան համեմատ առատ վարձք կուտար, առանց աչառութեան և ագահութեան. արդարութեամբն ամենուն պատկառելի, բարե-

[1] Լբ Պզ ժր. 285:

10477396

պաշտուելիանին ալ վատահանալն անդ մ'եղած էր, և այնչափ աւելի յարգելի և սիրելի, որչափ զգուելի էին ժամանակակից կայսերքն իրենց պատկառանք և գործակալք, մանաւանդ ամենէն եաքի կայսրն. որ պատճառ եղաւ Վարդանայ բաղդն և վիճակը փոփոխելու, և նոր պատմական տեսարան մը բանալու: Բայց այս բանս լաւ ձանձնանալու համար՝ հարկաւոր է նախ ը դարու կայսերաց վրայ համառօտ տեսութիւն մը, սկսեալ մեր Վարդանայ համանուն կայսեր յաջորդէն:

Բ

Շատ տաեն չէ որ պատմեցի քեզի, Հայկակ, այդ երազատես Վարդան կայսեր վերջին աշխարհահռչակ երազը և արձնուելիանն ի խաւարի. որուն ծածկուելէն վերջն՝ անմիջապէս երկրորդ օրը (Հոգեգալստեան՝) իր մտերիմն և սէրուելիք դիւանապետն Արտեմիոս (որ գուցէ իրեն համազգի Հայ էր) կայսր ընտրեցաւ, և անունը յանձնատաս փոխեց. և երկու և կէս տարի տիրելէն ետև՝ ծովային զօրքն Թէոդոս անուամբ անձնչան մէկն ընտրեցին. Անաստաս տեսնելուս առանձնանալ և քահանայանալ. նոյնպէս տարիէ մ'ետև Թէոդոս ալ. վասն զի Կոնոն անուամբ Մարաշցի Հայ մը՝ կամ Իսաւրացի մը, որ զինուորութեան տեսն ինքզինքը Լևոն անուաներ էր, Արմենիացւոց Թեմատական՝ Արտաւազդայ՝ օգնութեամբ կայսր եղաւ 25 տարի (716-741). որուն յաջորդեց որդին Կոպրոնիմոս 35 տարի (741-775). ատոր ալ իր որդին Կոստանդին Խազիր (775-780). ատոր ալ որդին Կոստանդին ե (ա. Պորփիւրոժէն յամն 780-797). որք Թէ և քանի մը ցանցառ լաւութիւն ցուցին, բայց պատկերամարտութեան աղանդով, ամբարշտութեամբ, անապաշտութ,

10477396

անպէտութեամբ, հալածանօք և պէսպէս մոլորու-
թեամբք՝ կայսերութեան և կրօնից նախատինք,
և հպատակացն գարշելի և գանելի եղան. մինչև
երեսից նախահօր Լևոն Իսաւրացւոյն մեռանելէն
վերջը՝ Կոպրոնիմոսի բռնաւորաբար իշխել սկսած
աւեն՝ զօրքն ապստամբեցան, և իր քեռայրը՝ վե-
րոյիշեալ Հայկազն Արտաւազդը՝ կայսր ընտրե-
ցին. որ տարի մը կայսերութեան աւեն՝ պատ-
կերաց պաշտօնը նորոգեց և կայսերութեան ալ
մեծ յոյս կուտար. բայց Կոպրոնիմեայ կուսակ-
կիցներէն յաղթուելով՝ դատապարտեցաւ ՚ի
բանտ և ՚ի կուրութիւն, իր երկու կարիճ որդիք-
ներովը: Կոպրոնիմոսի համանուն թոռն և վերջին
Իսաւրացին (Կոստանդին Ե) ինն տարուան էր
հօրը մեռած աւեն. անոր համար մայրն Եւդոկիա
եղաւ խնամակալ, և քիչ աւեւնէն բռնակալ. ի-
րաւ եկեղեցւոյ հալածանքը դադրեցուց և պատ-
կերները կանգնեց, բայց իր գահն ալ գոնէ իր
որդւոյն գահէն աւելի բարձրացընել չանալով՝
մայրութեան պատիւն և անունն ալ պղծեց. եր-
կու անգամ իշխանութիւնը յափշտակելով և զոր-
դին իբրև ՚ի բանակի արգելական պահելով, ու խո-
րամանկութեամբ զօրքերէն հաւատարմութեան
երդումն պահանջելով. միայն Հայկական գունդն
մերժեց կայսրուհւոյն անարժան խնդիրը և դէմ
կեցաւ: Եւդոկիա անոնց վրայ իւաւրեց իր գիշերա-
պահ գնդին հայկազն զօրավարը՝ Մուշեղ Ալէքս,
որ իր համազգեաց կողմն անցաւ և գլուխ կեցաւ.
զոյն տեսանելով մնացեալ գունդերն ալ՝ միացան Հա-
յոց հետ. Եւդոկիա սարսափած արձակեց իր կայսր-
որդին յարգելանէն, ուր ինքն արգելուեցաւ յոր-
դւոյն. որ և իրեն հաւատարիմ եղող Մուշեղը՝
Հայոց գնդին զօրավար դրաւ. բայց մայրն (որ
ամենայն կանացի նրբութեան, խորագիտութիւն
և փառասիրութեան օրինակ կրնայ ըլլալ, մինչև

՝ի յեւսին անգթութենէն), նորէն աւիրնութեան հասաւ. որդւոյն սիրոյն ալ չահելով՝ ուրիշներ-ոեն այլ, քայց՝ի Հայոց գնդէն, որով իրարու Թշնամի եղան: Հայք իրենց Թեմը քաշուելով յԱրմենիակք, որ է մանն Կապպադովկիոյ և Պոնտոսի) հոն եղող Թեմակալ Թէոդոսոսը մերժեցին և համակրութեամբ զԱլեքս Մուշեղ կ'ուզէին. կայսրն Թէպետև երախտապարտ էր ասոր, և արդէն Հայոց զօրավար դրեր էր, բայց վախնալով անոնց պահանջմունքէն, և մանաւանդ տեսա համբաւէն՝ (զոր գուցէ Եւթնէ հնարել կամ հրդեհակել տուեր էր), Թէ զանիկայ կայսր դնել կ'ուզեն, քունեց քանսեց զՄուշեղ, մազերը կարել տուաւ (իբրև կրօնաւորի), յետոյ և կուրացուց անգթօրէն: Այս քանիս վրայ իրաւամբ գրգռեալ և զայրացեալ Հայք՝ ապստամբեցան. կայսրն երկու զօրավար խաբեց վրանին բաւական գնդով. Հայք՝ զօրքերը ջարդեցին, զօրավարները քունեցին կուրացուցին՝ի վրէժ աչաց Մուշեղայ. պէտք եղաւ որ Կոստանդին բոլոր կայսերութեան զօրքերը ժողովէ և խաբէ Հայոց վրայ. որոց սրինոտ աչքն՝ որ այնքան մեծազօր բանակը բանի տեղ չէին դներ, դժբաղդաբար ոսկւոյ փայլմունքէն շլացան. ոչ ամենքն, այլ մէկ մասն, որք և մասնութեամբ եաս կեցան իրենց ընկերներէն. սոսկք քիչըոր մնալով՝ պաշարուեցան կայսերական զօրաց բազմութենէն, և յետ երկար դիմակալութեան և երկու կողմէն կոտորածի, քունուեցան ուժաթափ Հայք, գլխատուրնին գլխատուեցան, ոմանք աքսորեցան, մէջերնէն ամենէն յամառ և անհաշտները հազար հոգի կապուած բերուեցան՝ի Կ.Պօլիս, ուր մեծ կրկիսին մէջ նախատուելով՝ Հակատնին խարան զարկին՝ կրակէ գրով գրելով Հայ ապուպամբ [1], և աքսորեցին՝ի Սիկիլիա

1 Ἀρμενιακὸς ἐπ' βουλος.

և ուրիշ կղզիներ. իսկ իրենց մատնիչ ընկերներն ալ փոխադարձաբար յունական ագահութեան մատնուելով՝ արժանապէս անվարձք մնացին. ապա արտմատած անցան Ախրաբացւոց կողմը, և սկըսան վազել աւրել կայսեր երկիրները: — Կոստանդին ալ իր թեթեւամտութեան և ապերախտութեան պատիժը գտաւ, թէ և շատ դժնդակ կերպով. Մուշելայ կուրացման հինգերորդ տարեդարձին օրը (19 օգոստոսի, 797) քարասըրտեալ մայրն Եւինէ՝ որդւոյն քնացած աուեները դահիճներ խաբելով՝ աչուըները խարկել խաւարել տուաւ. որոյ ցաւէն աւելի եղաւ իրեն նեղսրտութիւնն, անկէց ալ աւելի՝ մօրը նախատինքն, որ իր ամեն լաւ գործերն ալ ծածկեց, և իշխանասիրութիւնը բռնաւորութեան գարձընելով՝ ալ աւելի ատելի ըրաւ զինքը. մինչև հինգ տարի հազիւ կրնալով համբերել՝ արքունեաց պաշտօնակալ եօթն նեղբինիք միաբանեցան ընդդէմ իրենց Թագուհւոյն, և ճիւաղի մը ձեռքէ ազատիլ ուզելով՝ գրին կայսր մը, որ և ոչ Եւինեայ լաւ յատկութիւններէն մէկն ունէր:

Աւիկայ էր Պլսիդիացի մը, ըստ ամանց արքայի ծագմամբ, Նիկեփոր անուամբ. ցած, կծծի, ինամար մարդ մը. բայց պատերազմարուեստ չըլլուն համար՝ ոմանց գովելի երևցաւ. սակայն քիչ աուենէն պալատականք և զօրականք իմացան իր արժէքը, երբ սկսաւ անոնց թոշակին պակասեցընել, ստացուածքնին կերպ կերպ հնարքով յափըշտակել, և ճիւացածն ալ կողոպտելու նոր հնարքներ մտածել. մոլութեանցը վրայ գոնէ առջին կայսերաց ազնուական տօհմին շուք ու շնորհքն ալ չունէր. անոր համար շուտով զզուեցին և եղաւ. մինչև նոյն իսկ զինքն ընտրողքն այլ զըղջացան, և անոնցմէ մէկին կը պատրաստուէր դահճանելու, բայց իմացուելով՝ Թունով սպա-

10477396

նուեցաւ: Տարի մը չանցած կայսերուհեանը վը-
րայ՝ Փալկեդոնի դրան քով ձիավարելու աոեն՝
ընկաւ և ոտքը կոտրեցաւ. ժողովուրդն կը փա-
փագէր ոյ մէջքը կոտրած ըլլայ, և գրեթէ փա-
փագն իրաւ կարծուելով՝ ինչուան գրոի գաւառ-
ները համբաւ թուաւ թէ Նիկեփոր մեռեր է.
սկսան ուրախութեամբ նոր և արժանաւոր կայսր
մը ընտրուել. և թէպէտ քիչ աոեն Նիկեփորի
ողջութեան և առողջութեան լուրն իրենց կար-
ծիքը ցրուեց, բայց չկրցաւ փափագնին փարա-
տել. մանաւանդ զօրաց, որ իրենց թոշակէն զըր-
կուելով՝ աւելի գրգռուած էին: Աոնց մէջ այլ
աւելի զայրացողքն էին արևելքի գունդերն. թէ-
րևս ոչ այնչափ իրենց եղած զրկանին համար՝ որ-
քան կայսերութեան պատուոյն անարգանացը.
մանաւանդ որ իրենց մօտ, նեղկայ և վերակեցու-
ունէին անանկ իշխան և վարիչ մը՝ որուն արիւ-
նութիւնն, արիութիւնն և առատաձեռնութիւնն՝
մէկ կողմէն յանդիմանութիւն էր Նիկեփորի բա-
րուց, մէկայլ կողմէն հրապոյր մը՝ փոխանակ ա-
նոր՝ կայսր ունենալու զան ինքն, զՎարդան:

Գ

Կամաց կամաց հրապոյրն ՚ի խորհուրդ գար-
ձաւ, խորհուրդն ՚ի յորդոր, ՚ի փորձ և ՚ի գործ,
որուն միայն ինքն Վարդան կամակից և գործա-
կից չէր. որքան որ իր արդիւնքն և զօրաց սէրն
իրմէ աւելի արժանաւոր մը չէր գտներ ՚ի կայս-
րութիւն, յոր արգէն իսկ Թեոդոս հրաւիրած կ՚ըլ-
լային զՆիկեփոր ընտրողքն՝ եթէ իրենց մօտ ըլ-
լար Վարդան, կամ շատ չվախնային անոր արգա-
րութենէն. և որչափ ալ այս առաքինի զօրավարս
կ՚ամբչնար Իսաւրացի ազգին առջի այսպիսի ա-
նարգ Պիսիդիացի մը աւելեաքի կայսր և իրեն հրա-

10477396

մանատար ունենալոյ, իր վեհանձնութեամբ և ազնութեամբ ոչ միայն հեռու էր այնպիսի վատասէր մտածութենէ, այլ և՝ ի հակառակէ ա-նոր հետ, զոր ազգն՝ թէ և անգիտութեամբ՝ կը-գիւներ էր, և սրբակրօն պատրիարք մ՝այլ (Տա-տիոս) թէ և վախով օծեր էր՝ ի կայսր: Զար-հուրեցաւ արիասիրտ զօրապետն՝ երբ իր ինչուան այն աստեն հնազանդ զօրաց հրաւէրք և յորդոր-ներ՝ ի կայսրութիւն, և դէմ կեցաւ. թէպէտ չկրցաւ օտարաց յաղթողն՝ իր զօրաց ալ յաղթել: Միայն հոս զարմանալի և իրեն արժանաւոր գո-ւեցաւ Հայկական գունդն. երբ ուրիշ ամեն-թեմից գունդքն միաբան և միահաւան կու կանչէին կու ստիպէին զինա՝ ի կայսրութի, Հայք՝ որ գեղ-ոան տարի առաջ իրենց հաւատարմութեն հա-մար առ Կոստանդին, անոր մօրը գառն ու սրճ-գալի վշտիմնդրութեան զոհ եղած էին՝ ճակատ-նուն վրայ այնպիսի նախատանաց դրոշմ մ՝առնը-լով, հոս փոխանակ աւելի արդար վշտիմնդրու-թեան՝ իրենց առաքինի համազգւոյն և ուրիշնե-րէն ընտրած կայսեր՝ չուզեցին կողմնակից ըլլալ, այլ անկէ առաջ օրինաւորապէս ճանչցուած կայ-սեր հաւատարիմ մնալ: Այսպիսի թեւ թեւ մա-նուած պատահարներու մէջ մերայոց այս գործը՝ յիրաւի շատ զարմանաց և շատ մեծատուութեան գործ մ՝է. միանգամայն և մեծ խրատ և օրինակ մ՝էր Վարդանայ՝ զգոյշ և հաստատ կենալու իր մտաց վրայ:

Արդարև շատ հեռի էր այս թուրք Վարդանայն Փիլիպպիկ Վարդանէն, որուն կերպարանաց ճոխութիւնն և լեզուին ճոռոմութիւնն՝ զինքը հանեցին՝ ի գահ կայսերութեան. իսկ զա՛ զօրք-ըէն աւելի՝ անձնական արժէքն կը հրաւիրէին հոն, բայց առաքինութիւնն չէր համարձակեր: Ատոր վրայ կ՝երևի մեր հին և մեծ, կորիճ ու կար-

մէր սուրբ վարդանայ հնարհաց նշոյլն, և անոր բարեկ խնդձն, գուցէ և խղճահարութիւնն, այլ օրինակ կերպով մ'այլ՝ նաև իր արտառուչ և եղերական բաղդն: Կրակապաշտ Պարսիկ մոգերուն և Հռոմայեցւոյ հաւատքը պահող ու պահպանող Հայրապետաց ձայներուն մէջ գտուղին նման՝ ասիկայ այլ ընկաւ ընդ մէջ լուսթեան Հայոց գնդին և յորդորանաց ու սպառնալեաց ցունաց գունդերուն, որք ինչուան արեգոտոյ անհնայ առաջման մահ կը կանչէին, եթէ չընդունէր զթագն կայսերական: Վարդան յօգնեցաւ, դեղևեցաւ, տկարացաւ. գուցէ և վայրկեան մը իր մոռացութեանց որոշման վերջն առաւօտն չծագած՝ Փիլոմելիոնի տխակաց ամառնային անուշակ գիշերահոսութենէն հետ՝ ինքնակալութեան և աշխարհի հրամանատարութեան հրապուրական ծածուկ ձայն մ'այլ ազդեց սրտին:

Յուլիս ամսոյն առջի կէսն էր այն առեն, և ինքն այդ Լիւկաւլ (Փիլոմելիոն) քաղքին մէջն էր, որ իր ընդարձակ Թեմին չորս մեծ նահանգաց գրեթէ միջոցահման է, Պիսիդիոյ, Իսաւրիոյ, Լիկաոնիոյ և Փռիւգիոյ, և այս եռքինիս սեփհական. իսկ հիմայ Համիտ գաւառի կամ Գարամանն նահանգին Սէլեհիւ քաղաքն սեպուած է. ոյոյ քաղցրաձայն տխակքն անուանի են, և կարծուի թէ անկէց գրուած է քաղքին հին յունական անունն, որ կը նշանակէ այս Թռչնոց երաժշտապետը:

Վարդան գեռ տարակուսանաց պատերազմի մէջ էր. թէ և ակամայ կամ կիսակամ յանձն առաւ զօրաց բռնադատութիւնը, և անոնց ընծայած կայսերական պատկը. սակայն կը խրտչէր՝ երբ կը մտածէր որ անով Կ.Պօլսի գահին վրայ փայլելու համար՝ պէտք էր հանել պատենէն իր քաջայաղթ՝ այլ և ինայող սուրն. մինչև այն ա-

10477396

ուն հայրենեաց, սերանց և իրաւանց դէմ եկող Թշնամեաց վրայ ցուցեր էր անոր փայլը և իջուցեր հարուածնելը. ինչպէս հիմայ՝ որ այդչն հասակին և կշռացած փառքին՝ հանգիստ կը վայլէր, ինչպէս այն ահագին և վեհժինդիր տեսլը՝ իրեն փառք և պատիւ բնաբերելու գործնք մ'ընէ: Իրաւ կրնար ինքն ոչ միայն քան զՆիկեփոր՝ այլ և քան զՅաստս 'ի նախորդաց և 'ի յաջորդաց նոր՝ արժանաւոր և օգտակար կայսր ըլլալ, գուցէ և պէտք էր քիչ տարի առաջ զինքն ընտրել, բայց ինչպէս կրնար համարձակիլ ինքն ատանկ բանի համար՝ անպարտ արիւն մը թափել և քաղաքական պատերազմի պատճառ ըլլալ: Հոս բանակներէ անվախ սիրտն՝ ինքն իր տեսքէն սկսաւ գոլալ. և այս ժամ մը իր բոլոր գունդերուն՝ վտղդան կայսեր էրկար կեանք կանչելն՝ բաւական չեղաւ խլճին ձայնը մարելու. ուզեց գոնէ աւելի վատահանալի և վկայեալ խլճի մ'ալ խորհուրդ հարցնել:

Ան կոլմերը արբունեամբ և խնամատուեամբ համբաւեալ ճգնաւոր մը կար, որ և հոգեւոր Թեան շնորհք ունէր, ըստ պատմչաց, գոնէ ըստ հաւատոց այն առենուան ցունաց, որ այս հաղուստ շնորհքը՝ շատերու կ'ընծայեն. և կ'ըսեն Թէ երբ Վարդան եկաւ իրեն խորհուրդ հարցնելու՝ ճգնաւորն յայտ և համարձակ պատմեց իրեն գլխուն գալիքը. և ոչ միայն իրեն՝ այլ և իրեն հաւատարիմ ընկերացը. ըսաւ Թէ իրեն զինակիրն Լևոն՝ (Արծրունին) պիտի ըլլայ կայսր. նոյնպէս միւս զինակիր կամ Թիկնապահն այլ՝ Փռիւգացի Թոմա Մնքայէլն. իսկ իր մեկայլ զօրավարն Թովմաս՝ նոյնպէս պիտի փորձէ, բայց պիտի չյաջողի կայսրութեան: Այս ամենն այլ առենին կատարուեցաւ ստուգապէս, ինչպէս եղեկ ըսած էր և եղեկ չըսած. բայց բանն այս է՝ որ

Վարդանայ վրայ ըրած մարդասիրութիւնն՝ յայ-
ղուլ չէր: Հայկազն անուանքը հռչակուելու կայսրն
ոչ ինքն էր, ոչ իրմէ 90 տարի առաջ կայսերա-
ցեալ Փիլիկն Վարդան, և ոչ այն Վարդն՝ որ ե-
ղեալ որդւոյն Թագաւորած տարին (780) ու-
զեց Թագը կորզել, և ջայլողելով բռնուեցաւ,
ծեծուեցաւ, հալածուեցաւ. այլ անոր որդին
վերոյիշեալ Լեւոնն՝ զինակիրն Վարդանայ: — Թէ-
րևս այս անակնկալ նախատացութիւնք աւելի
խռովեցին չիտնթեցին արդէն տագնապեալ սիրտը.
և այն որ երբ միայնակ ըլլալով փառաց կեղա-
կարծ հանդիսարանին մէջ՝ կու յուսար և կու յու-
սացներ ինքն իրեն յաղթելու, հիմայ իրմէ նը-
ւաստից և իրեն ապատաւորաց չկարծուած կայ-
սերութեան հանդիսը և իր կարծուածին անյա-
ջողութիւնը լսելով, կարծես Թէ սրդոլեցաւ, և
իրեն մեծ նախատինք սեպեց. ուզեց հոս իր բուն
կամքը խորտակել կարողութեան ուժովը: Հոս
իր խղճին ալ քաղաքականութեան ալ ուրացու-
թիւն ըրաւ. և որ առաջ զմարդիկ և զբանակս
սկսար կու սեպեր զինքը համոզելու, և չէր ուզեր
կայսր ըլլալ, հիմայ կարծես Թէ ուզեց Աստու-
ծոյ ալ յաղթել կայսր ըլլալ կարեւնալով: — Բայց
և ոչ իր խնդիրը կրցաւ նուաճել երկար առեն.
և այս ինքն իր մէջ ըրած կռիւն և կամ վերջին
յաղթութիւնն՝ իրեն վայելուչ և փառաւոր յայ-
ղթանակ եղաւ:

Դ

Յունիսի 19 էր, յամին 803, երբ անուանեցաւ
ինքն Կայսր, որ և ԺԱ Վարդան պիտի ըսուէր, և-
թէ այն վայրկենական ուրացութիւնը վրայ ու-
զէր յամառիլ: Ի մեծ խնդութիւն զօրացը՝ թա-

նակը չարժեց, երագ երագ գիմեց չիտակ գէպ՝ի մայրաքաղաքն կայսերական. հատաւ նատաւ ա-
նոր գիմաց Խրիւատոփէսայ (Իւակիւատար) պարըս-
պաց տակ. ուր օր հոն կեցաւ առանց զարնելու
առնելու մտնելու այդ Վռափորի սպիտակ ափանց
առաջին քաղաքը. կու սպասէր և գիտէր որ գըռ-
նեները բանան և զինքը հրաւիրեն. կ՚ուզէր փորձել
Թէ զօրացը պէս բոլոր քաղաքացիք ալ կ՚ընդու-
նէին իր կայսրութիւնը, զոր՝ միաքը դրած էր ա-
ռանց սրեան և վնասու սպանալ, Թէ որ այնպէս
չլլոզէր բաղդն, որ անյուսալի էր: Կու զարմա-
նային և զայրանային զօրքն՝ Վարդանայ դանդա-
ղութեանը վայ, և առաջել իր հաւատարիմքն,
սպայքն և անձնապահքն, մանաւանդ գլխաւորքն
Լևոնն և Մկրտչէն. որք լաւ իմացան Թէ Վար-
դան առանց զարնելու որս ընել կ՚ուզէ, և իր սո-
վորական բարեպատուութեամբը ձեռք ձգել այն-
պիսի բան մը՝ որ անկարելի էր առանց բռնու-
Թեան և սրեան. և Թէ այդպէս ուշանալն իրենց
բաղդին և կենաց մեծ վտանգ է: Ոչ զՎարդան
կրցան համոզել և ոչ իրենք համոզուեցան այն-
պիսի որոգայթի մէջ մնալու. և գուցէ անոր տէր՝
իրենց ապագայ կայսերութիւնը ապահովելու
համար՝ Թողուցին զանիկայ, և Վռափորոն զիրենք
բաժնելով՝ ձգեց՝ի կողմն Նիկեփորի. որ իբրև
աւետաւոր հրեշտակներ ընդունեցաւ զանոնք, և
վախով կորացեալ գլուխը կանգնեց. երկուքին
ալ մեծամեծ պաշտօն և իշխանութիւն տալէն
զատ՝ մէկմէկ ալ Թագաւորավայել պալատ և
երկիրներ տուաւ. և ակտա զօրք ժողվել Վար-
դանայ դէմ ելնելու: — Իսկ ասիկայ՝ որ եԹէ ու-
զէր գործել՝ ինչուան այն աստեն գուցէ գործն ալ
վճարած կ՚ըլլար, երբ տեսաւ որ փոխանակ մայ-
րաքաղաքին իրեն պատգամաւոր և հրաւիրակ
գալու՝ զինքի ձայներ կը լսուին, վերուց բանակը

՝ի Խրիստոփօրոսէ եւ տարաբ Պրուսայի մօտ Ողիմ-
պոս լերան ոտքը դադրեցուց [1]:

Զօրքն գուցէ կարծէին թէ Վարդան նոր պա-
տերազմական խաբէութեան հնարք մը կը մտա-
ծէ, բայց անհանգիստ կու սպասէին զարնուելու
կայսերական զօրաց հետ, դեռ վատահ ըլլալով
յաղթութեան՝ իրենց քաջ առաջնորդին վրայ:
Իսկ նա իր սրտին մէջ սաստիկ եւ մեծամեծ պա-
տերազմներ ունէր. ամիս մ'առեն բաւականէն
աւելի եղաւ իր տաքութիւնն իջեցընելու եւ նորէն
առջի խիղճը բանեցընելու: Պատերազմ, յաղ-
թութիւն, կայսրութիւն, շատ պզտիկ եւ չնչին
կ'երեւէին՝ կենաց վերջին աւուրին եւ հանդերձեալ
պատուոյն եւ Աստուծոյ քննութեանց ու հա-
տուցմանց առջեւ. որոց յիշատակաւ զարհուրած՝
կու մտածէր թէ իր խիղճն ու հոգին անվնաս
պզտաբել այն վտանգաւոր վիճակէն՝ ուր կամայ
ակամայ քշուեր եկեր՝ էր. ամենէն դժարն էր
վինքը քշել եւ սիրտները հաւանեցընել, այսինքն
զօրքերը. որոնք եթէ իմանային միտքը՝ ոչ միայն
գուցէ կատղած զանիկայ կատր կատր կ'ընէին,
այլ եւ իրենք Նիկեփորի կատաղութեան զոհ կ'ըլ-
լային. եւ ահա այս եռքին էր Վարդանայ տագ-
նապ. երկու դիէն սուր եւ արիւն կու սեանէր,
երկու կողմէ կու սպասուէր մեծ գործ մեծ որոշ-
մունք մ'ընելու:

Ահա հոս մեր Վարդանայ դիմաց այլ ձգուած
էր այն կեսարու բաղդավէճիւ Ռուբիկոն գետոյ
կամուրջն. « Դեռ կրնանք յետ դառնալ, բայց
» մէկ մ'որ դա կամրջկին անցնինք, այլ անկէ եառ
» ինչուան վերջը զէնքով պէտք է առաջ երթալ»...:
Կեցաւ, վերջի մտածութիւնն ըրաւ, նետեց իր
նարտին քուէն, և կամուրջը... չանցաւ: Եթէ

1 Մալակինա բառուած քաղաքի մը քով:

կարճութեամբ էր պակաս քան զՀնաար՝ խոհեմութեամբն շատ աւելի եղաւ հաս. էփաթթեց իր մատց աչքը և էնղաւ անոր պէս գահավէժ՝ ի վինա պատահարաց և վտանգաց [1], այլ իր առաջին մեծոպհութեամբ և իմաստութեամբն ու քրիստոնէական արիութեամբ՝ որ զյանդգնութիւնն այլ կը նուաձէ, և որ կրնար Կեսարու մ՚ալ մեծարել տալ զՊոմպէոս, քանի մ՚օր զինուորները յուսացընելով բարի վախճանի մը, ծածուկ մարդ խաբեց առ Նիկեփոր, և խոստացաւ զատել զնա ամեն վախէ և վտանգէ, միայն թէ ինքն ալ իրեն և իր բանակին նեղութեան տայ և անհշաբար ըլլայ:

Ա յս պատգամաւորութիւնս՝ Նիկեփորի համար իր ամենէն վախնալու անձին ձեռքէն երկրորդ անգամ Թագ ընդունիլ և կենաց ու կայսրութեան մէջ հաստատուիլ էր. անբացատրելի եղաւ զարմանքն և ուրախութիւնն: Ապշածն՝ չէր կրնար հասկընալ՝ թէ այնպիսի հակառակորդ մը կրնար այդքան առաքինութիւն ունենալ: Չէր գիտեր ինչ կերպով իր հաւանութիւնը, խոստմունքն և երդմունքը յայտնէ. և երանի՛ թէ այն չափ աստիկ յայտնութեան ձեռք չզարնէր, որ յետոյ երդմնազանցութեամբն վրան աւելի նախատինք և մեղք չբերէր: Մէկէն հրովարտակ գրել տուաւ խոստմանց և ներմանց. և բաւական չեսպելով իր ձեռնագիրն և կնիքը, Տարասիոս պատրիարքին և ամենայն պատրկաց ալ տորա. գրել տուաւ. դեռ այնչափին ալ բաւական չեսպեց վատահիրան, այլ և իր վզէն կախած կենաց փայտին նշխարն այլ հանեց և խաբեց Վարդանայ, իբրև անտարակուսելի և անդրժելի գրաւական, վկայ և ընծայ. որուն՝ Թերևս միայն սա-

1 Ինչպես կ՚ըսէ Պլուտարքոս կեսարու համար:

տանայ կարենար չհաւատալ. բայց պատմուԹիւն
ցըցուց որ հոս Նիկեփոր այլ ատանայի հետ
մխաՀաւան է եղեր:

Վարդան իրմէ աւելի իր զօրաց կեանքն ապա-
հովցնելուն վրայ գոհանալով, անոնցմէ զատուե-
լուն հնարքը մտածեց. և մինչդեռ անոնք վազուը-
նէ վաղը կու յուսային Թշնամեայ վրայ վազելու,
և վերջապէս իրենց տէրը տանելու Համելու 'ի
գահ կայսերաց, նա իրենցմէ աւելի արԹուն և
անքուն կու ապասէր կու դիտէր ժամն ու վայր-
կեանը. իր 50 օրուան անուանեալ կայսերու-
Թիւնն՝ իրեն 50 տարուց ծանրուԹիւն տուած էր:

Ե

Սեպտեմբերի 8ին Ս. Աստուածածնի ծնըն-
դեան տօնին գիշերն՝ իր բանակին չնչուցը լուեր
էր, քունը հանգչեցուցեր էր զզօրս և զգէնս. գի-
շերապահք իրենց վրանին դիմաց Հանդարտ և ան-
կասկած կեցեր էին. ապին անդին վառած և
ալլալեալ ճրագք և կրակն՝ չէին կրնար բաւակա-
նապէս փարատել մԹուԹիւնը, որուն մէջ Հա-
զիւ կրնար նշմարուիլ վիԹխարի և դիւցահասակ
լեառն Ոլիմպոս՝ բանակէն մեծ վրանի մը պէս
գիշերուան միջէն դէպ յերկինք քաշուած: –Վար-
դան՝ մէկ մը աչքն ատր տալով, մէկ մը դէպ 'ի
Մարմարայի ծովեզերքը տեանուած լոյսերուն, և
յետոյ դարձընելով իր բանակին վրայ՝ որ յուսոյ
և քնոյ մէջ ԹաԹխուած դադրեր էր, պահ մը
կեցաւ իր վրանին դռնէն դուրս, ուսկից հեռա-
ցուցեր էր պահապանները և միայն իրեն հաւա-
տարիմ մնացող Թովմաս Թիկնապահին լսելու
տուեր էր: Մտածեց իր և լսելով՝ մարդկային
արարկ և կենաց բաղձն ու պատահարքը. մտածեց
քանի մը ժամուան մէջ բազմուԹեան մարդկան

և բոլոր կայսերութեան մը կարելի փոփոխութիւնը. նը. մտածէց իր ապագայ կեանքը և Թոլեռւ չի. շատակը. մէկ մ՚այլ իր այնքան տարի վտանգայ և փառաց տարած զօրաց գունդերուն վրայ նայե. ցաւ, որոցմէ տասնկ անակնկալ և անպատրաստ կերպով մը պիտի զատուէր, և այլ պիտի չլսէր պատերազմի արտաքոյնդ Թմբուկն և ռանատրոփ երիվարաց փռնչիւնն. այլ ոչ յաղթութեանց նը. ւագք և տաղտապէն դալար պատկք. այլ ոչ ա. ւարներու և գերեաց բաժին... «Մնայք բարով, մնայք բարով. Աստուած չեզի օգնական և պա. հապան», ըսաւ, հառաչեց, հեռացաւ:... Իբ. րև գիշերապահն մենամարտութեան ելած՝ նախ յուշիկ ճնչիկ սկսաւ ոտնփոխել դէպ՚ի հիւսիս, դէպ յերեւրա Մարմարայի, միայն զթովմաս Թոլ. լով եռւէն զինակիր գալու. յետոյ հազիւ բանա. կին պատնիշէն անցած օտար ձամբով՝ սկսաւ հրա. կայացքայլ յառաջել, փութալ հեռանալ անոնց. մէ՝ որ միայն իրմէ հեռանալ չէին ուզեր. և քա. նի չափ մղոններ կարճ կարճ կարելով հասաւ Մու. ռանիոյ ծոցոյն ծայրը կէմլէկիկ քաղաքաւանը, որ այն աւեն կիոս կոչուէր, ուսկից և ծովածո. ցկին այլ Կիանեան խորշ, կամ Աստակեան ծոց:

Կիոսի քով Կատապոլիոն անուամբ գիւղաւան մը կար, և անոր մէջ Հերակլի անուամբ վանք մը. Վարդան իր բանակը Թոլեռվ՝ չհասակ այս վանքս իջաւ, վանահայրը կանչեց. սա անոր գիւցազնեայ կերպարանքէն և ազատազինութենէն ապրաափած կու կասկածէր. բայց ան աւելի ափշեցաւ և տա. րակուսեցաւ երբ զօրավարն խնդրեց որ ընդու. նի զինքն իբրև կրօնաւոր, և շուտ մը ձևը փոխէ. էրցաւ վանահայրն ոչ մէկ կերպով հաւատալ և հաւանիլ: Ուշանալ չէր ըլլար. Վարդան՝ որ դեռ զէնքերը չէր Թողած, զինուորական և կրօ. նական քաշկատութիւնը մէկ առ մէկ դանեցընե.

10477396

լավ՝ քաշեց ուրիշներու գլխուն վախ տուող սու-
րը, և Թերևս անոնց վրայ իջեցընելէն աւելի մեծ
կարճութեամբ՝ իր գլխուն վրայ հանեց, ինքն ի-
րեն կտրեց իր գիսակները, և իբր երախայրիք նոր
և սրբազան կենաց՝ ընծայեց Աստուծոյ. ապա
զինքերը զրահներն ալ Թափելով և իշխանական
զգեստը Թողլով՝ հագաւ Թանձր պարեգօտ մը.
և ամենայն քաղաքական և զինուորական զարդե-
րէն և նշաններէն Թեթևնալով՝ Թուաւ Կէմլէյիկի
նաւահանգիստը, ուր արդէն հասած էր զինքն
ընդունելու նաւն՝ի Նիկեփորէ ղրկուած. ցատ-
քեց մէկը, հրաման տուաւ որ շուտ շուտ Թիա-
վարեն, պատեն Պեսիդիոնի հրուանդանը (Պօզ-
պուռուն), և Թողլով Նիկոմիդիոյ ծովածոցը՝ ուղ-
ղեն դէպ Իշխանաց կղզիները. մինչև՝ի հեռա-
գոյն, մինչև՝ի Բրոդա (Գլնալը), իրեն հին և
ծանօթ առանձնութեան ըզօթարանն՝ Բրոդա, իր
ընած վանատեղը և անկած պարտէզը. ուր և ե-
լաւ շատ աւելի ուրախ՝ քան եթէ Ոսկեղջիւրը
(Սէրայպուռնու) կոխած ըլլար. «Ահա է հան-
գիստ իմ», ըսելով:

Իր դաստակերտին բնակիչ վանականք և տե-
ղապահք չէին կրնար հաւատալ տեսածնուն և
լսածնուն, Թէ իրենց իննամակալն, այն մեծ Թե-
մականն և սպարապետն Արևելից՝ այդ իրենցմէ
խելք և գծուծ քուրջերով ծածկուած կրօնաւորն
է. բայց նա լաւ իմացուց որ եթէ ձևն և արուես-
տը փոխեր էր, և հիմայ անունն ալ կու փոխէ,
փոխանակ Վարդանայ՝ Սոֆա անուանելով զինքը,
հոգին նոյն է. առաջ կարծը զինուց և զրահից
տակ կակուղ քրիստոնեայ սիրտ մ'ուներ, հի-
մայ մաշկի և մազեղինի տակ կարիճ նահատակի
և Ճգնաւորի սիրտ մը. առաջ զօրավարաց օրինակ
էր քաջութեամբ և խելքով, հիմայ նոյն իսկ հին
վանականաց և միանձանց, խստակրօն, զուարթ

10477396

և աշխատասէր վարքով. և յիրաւի, օրուան կէսը յաղօթս և ի հոգևոր մտածութիւնս կ'անցընէր, կէսն այլ գեաին քանելու և իր պարտէզը գործանելու: Փորձով ալ իմացաւ շուտով որ այսպէս կեանք իրեն համար կայսերութենէն քաղցր և ցանկալի է, և եթէ աղաչանքով այլ նորէն իրեն տային տան Թագ՝ չէր ուզեր իր Բրոդայի առանձնական և վենական կենաց հետ փոխել. սուրբն և մականէն շատ աւելի Թեթև և դիւրաշարժ էին իր քաշն ու բրիչը. միով քանիւ խիստ շատ աւելի երջանիկ էր՝ քան իր նախաորդն Նիկեփոր:

Զ

Ատոր ապահութիւնն նորէն արթընցաւ՝ երբ ապահովութիւնը ստացաւ. Ատոնց և մարդկանց վախուն դիմաց՝ կեղծաւորութիւնը և սուտը միջնորդ ձգելով՝ իր ամեն խոստմունքն և ահաւոր երդմունքն ոտքի տակ առաւ: Նախ վարդանայ կուսակից եղող կամ կարծուողները բռնել քանտել տուաւ և ամեն ստացուածքնին կողոպտեց. յետոյ Վարդանայ հարստութիւններն ալ յափշտակեց. միայն անոր զինուորները չնեղեց, վասն զի վրանին կողոպտելու բան մը չկար: Բայց ամենէն անիրաւ և պժգալի կողոպուտն, միանգամայն և ամենէն ցանկալին և Թանկագինն՝ եղաւ իր շատ բարի և գթասիրտ հակառակորդին լուսաւոր և զուարթահայեաց աչքերն: Վարդան իր կամաւոր արգելանքէն քիչ օր վերջը՝ գիշեր մը, երբ գուցէ գեռ իր երկար աղօթքներն ալ չէր լմընցուցած, յանկարծ ոտնաձայն և շփոթ մը լսեց՝ իր ծովափայտ վենանոցին մէջ. քանի մը այլանդակ լեռընցի Վիկայոնացիք, զոր և ոչ մարդ՝ այլ մարդագայլ (լիգանրոպոս կոչէ պատմիչն),

10477396

ոլք Նիկեփորի հաւատարիմ և արժանաւոր դա-
հիճքն էին, յանկարծ պղծելով և խռովելով տես-
ւոյն և ժամուն և անձին խաղաղութիւնը, բռնե-
ցին իրենց սիրոյ նախանձորդ կարծուածը, և
գաղանօրէն խլեցին իսաւարեցուցին այն աչքերը՝
որ միայն յերկինք վերցընելու, պարտիզևանը վե-
րայ իջեցընելու և երբեմն ծովուն վրայ պտըտցը-
նելու պահեր էր՝ ամբողջ կայսերութենէ մը հրա-
ժարուն. և մեկէն Թոդուցին փախան կղզիէն.—
ինչուան քաղքէն և մարդկանցմէ ալ փախչել ու-
զելով կամ ձևացընելով՝ ապաւինեցան 'ի մայր
եկեղեցին՝ Ս. Սոփիա:

Հազիւ այս լուրն լսուրն հռչակուեցաւ, վանք,
եկեղեցիք, պալատք, բոլոր քաղաքն շարժեցան
գթով և բարկութեամբ. անէծք և նզովք թափել
ակսան կայսեր և գործակցացը վրայ. երանելի
պատրիարքն Տարասիոս, պատուական պատրիկ-
քըն՝ արտասուալոր վազեցին աղքատնիքը, յիշեցու-
ցին կայսեր իրեն երդմունքը և ստորագրութիւ-
նը. Նիկեփոր երդում պատուաւ եղաւ ծերպակու-
աին դիմաց թէ ինքն ամենևին այդպիսի բան չէր
մտածած և կարծած. և թէ ուրիշի թշնամութե
գործ է. պատուիրեց իրենց՝ որ երթան բռնեն
այն չարագործներն՝ որ 'ի Ս. Սոփիա ապաւիներ
էին, թէպէտ և կանխեր անոնցմէ առաջ ուրիշ
մարդ ըրկեր ու փախուցեր էր զանոնք յեկեղե-
ցիէն. և անոնց տեղ քանի մ'ուրիշ մարդ բռնել
քննել տուաւ, որ անմեղ ըլլալով՝ 'ի հարկէ ան-
վնաս ալ արձակուեցան: Իսկ ինքն իր չաւատալն
կեղծաւորութիւնը մինչև 'ի ծաղրածութիւն տա-
նելով՝ եօթն օր փակուեցաւ իր պալատին մէջ,
մարդու չէր երևեր, միայն ոլքոց և վայերու ձայ-
ներ կու լսեցընէր, զորոնք ձևացընելու շատ ա-
ղէկ կրթուութիւն ըրած և վարպետ էր. միայն թէ
չկրցաւ մէկն ալ խաբել. այլ աւելի առատացաւ

10477396

իրեն գէմ եղած հասարակաց ատելութիւնն և անէծքն:

Ոչափ ժժգալի եղան Նիկեփորի գործն և ձայներ, այնքան զարմանալի և սրտառուչ եղաւ վարդանայ լռութիւնն. ամենևին գանգատ մը, սրտմտանք մը, հեծութ մը չհանեց, և գրեթէ միայն ինքն եղաւ որ չանիծեց զՆիկեփորը. նա և ոչ իսկ մեղադրեց զնա, հապա ինքզինքն յանցաւոր ճանչնալով՝ մինչև 'ի մահ ապաշխարողի վարք անցուց. և միշտ իր պակասութիւնը պատմելով, ի'ուզէր գերագոյն առաքինութեամբ մը՝ ծածկել կայսեր անիրաւութիւնը և անգթութիւնը. առաքինութիւն այնքան հիանալի՝ ոչքան այնպիսի ապականեալ ժամանակի և աղքտանեաց մօտ փայլեցաւ: Ճգնաւորութեան հոգին աւելի խոր և պինդ հագեր էր ներսէն, քան դրսուանց մաշկեղէն մը ամառը, մազեղէն մը ձմեռը, որ էին իր բոլոր հագուստը. իսկ գլուխն և ոտքն միշտ բաց և բոպիկ: Ատոր նման կերակրիկն ալ, եթէ կրնար ըսուիլ կերակուր. ոչ միայն բերանը չդրաւ մսեղէն և կթեղէն, այլ և ոչ ձէթ և գինի, այլ միայն գարիւն հաց. այն այլ ինքն իր ձեռօք կու պատրաստեր և կ'եփէր մոխրի տակ. լուսազուրկ աչքերն չթողլով իրեն երկար ձեռագործ աշխատանք՝ մըտաւոր աշխատութեան ատելցուց, աղօթք և խոկմունք. որոցմով զմայլած՝ ոչ ծագին, ոչ աշխարհիս և ոչ իսկ ամեն սրտի մխիթարիչ արևուն կու լուսաը կ'իմանար:

Միայն մէկ հոգ, մէկ ցաւ, մէկ փափագ մ'ունէր գէտ սրտին գրգիռ. — ընտանիքն. վասն զի ունէր և գետ ողջ էին կինն և զաւակներն: Անոնց ցանկալի երեսաց տեսութենէն զրկուելն չէր իր մեծ ցաւն. վասն զի գոնէ ձայներնին կրնար լսել և խօսիլ. այլ ինքն իր հոգւոյն խորին ձայնը կ'ուզէր լսեցընել անոնց հոգւոյն, և կրցաւ: Ուրիշ

Նեղուկ աւելի ինքզինքն օրինակ ցուցընելով աշխարհիս ընդունայնութեան, և հանդերձելոց անփոփոխ վիճակին, այս կենաց ցաւերուն կարճութեանը, և այն կենաց անվախճան երանութեանը, զամենքն ալ հաւանեցուց իրեն նմանելու. նախ ութկին Դոմինիկ (կամ Տոմինիգա) յանձն առաւ քաշուելու ի վանս հաւատաւորաց, և ինքնին վարդան փոխեց ամուսնոյն անունը, դրաւ Անանասիա. իր մեկ դստրիկն ալ հետը մտուց ի հարանարան Քրիստոսի. յետոյ իր կտրիճ որդիքներն այլ հաւանեցուց, որք յօժարութեամբ սուրբերնին այլ, ամեն ունեցածնին այլ ծախեցին բաժնեցին աղքատաց, և առանձնացան վանքերու մէջ՝ միայն հոգինին հոգալու:

Է

Այսպէս երկրիս վրայ ապահովելով անոնց երկնաւոր վիճակը՝ որոնց որ պարտական էր հոգալու իբրև հայր և տանուտէր, անկէ ետև այլ աւելի ազատութեամբ և հանգարտութեամբ իր հոգին կ'ուժովցնէր և կու հացընէր յաւիտենական նպատակին: Շատերն տեսան և կու զարմանային Սաբայի սրբութեանը վրայ. և ով կըրնար կարծել թէ անիկայ էր Արևելքի քաջ սպարապետն՝ Թուղք Վարդան: Համբերատար հանգստութիւնն և չարքաշ վարքն յայտնեցին իր ճգնութեանց խստութեանը, և երկարեցին կեանքը. մինչև լսեց ութ տարին ետև իր անխրատ նահանջողին՝ Նիկեփորի՝ խելք և չարաչար մահը, զոր գրեթէ ինքն պատճառեց իրեն և իր բոլոր բանակին, անխոհեմութեամբ յառաջ երթալով Բուլղարաց երկիրը, և ամէն ամէն լսելով, թէ «Չեմ գիտեր՝ Սատուածծ թէ սատանան է զիս առաջ քշողը, բայց չեմ կրնար ետ կենալ». մին-

10477396

չև հասաւ Ձորափաշտի մը, որոյ երկու կողմը պատեցին Բուլղարք՝ անտառներ ջարդելով և ծառէ պարիսպ քաշելով. ապա կրակ տալով անոնց, իրենք ալ զինուած յարձակելով՝ կայսրն ալ, մեծամեծներն ալ, բոլոր զօրքն ալ մէկ առուր մէջ (25 յունիսի 811) սրամահ և ծխամահ ընկեցին: Նիկեփորի գանկն Բուլղարաց Թագաւորին գինու բաժակ եղաւ. բոլոր Բիւզանդիոն և կայսերուհին ագահով իրենց զօրաց և զաւակաց կոչեան վրայ՝ միայն Նիկեփորի կորուստն իրենց այրած սրտին մխիթարանք կու գտնէին. այնքան առելի եղած էր անկուշտ ագահութեամբ և անհոգութեամբը: Երկու տարի ետև (յորում տիրեցին Ստաւրակ՝ որդի Նիկեփորի և Մէքայէլ Կիւրոպալատ), լսեց Վարդան իր առաջին զինակրին և նախկին հրամանատարին Լեւոնի Արծրունւոյ կայսրելլսելը (813-820), ինչպէս լսեր էր հինգ տարի առաջ (808) ուրիշ հայազգւոյ և Լեւոնի աներոջ՝ Արշաւրի փորձ փորձելն ընդդէմ Նիկեփորի, և իրեն պէս չյաջողելով՝ բանակիլ ու աքսորուիլն ոչ հեռաւոր վանքի մը մէջ ('ի Բիւթինիա):

Այս դէպքերս իրեն սրտին մէկմէկ հարուածք եղան, իր ըրածը յիշելով և իբրև ընկերացը չար օրինակ մը տուած համարելով զինքը. անոր համար նախախնամութեան կամաց և կարգաց թողլով եղածը՝ ինքն իր ձգնութիւնները և հոգևոր հրանդն աւելցուց առանձնութեան իր ծովակոծ՝ բայց անվտանգ կղզեկին մէջ. որուն շրջապատ ալեաց ծփանքն և անուշ հովերն բաւական էին իրեն՝ մերձաւոր մեծ մայրաքաղաքին և բոլոր աշխարհիս խառնաձայն կոծմունք և ծփումնքը ցածցընելու. մինչև որ ձկնարկտ և յաւիտ. նական Թագաւորութեան հրաւէրքն յափշտակեց զինքը յերկինք. ուր ընդ յիշատակելի սուրբս Ձանչցան զնա ցոյնք. մինչդեռ իր յաւուրկ աշ-

10477396

գայնոց՝ Հայոց պատմչաց մէջ՝ և ոչ ձանչցուած է այս կրենց ամենէն երևելի զօրավարներէն, միանգամայն և ստբայացեալ ճգնաւորներէն մէկն, որ յետոյ օր այլ կրնար կոչուիլ Ե ՎԱՐԴԱՆ ԿԱՑՍՐ[1]։

1 Ցետ Վարդանայ՝ իր առանձնութեան կղզին և դասատակերտն Բրոդա՝ ուրիշ գահէ ընկած կամ մերժուած կայսերաց ալ արգելան և բնակարան եղաւ. որոց մէջ ա-նուանի է իրեն և մեր ազգակիցն Ռոմանոս Ա Լեկապէն. որ յետ 25 տարի զանազան գործովք կայսերութեան՝ հոս քշուած և քաշուած՝ շատ գոհութեամբ և զգաստութիւ, գուցէ և իր հին նախորդ Վարդանը յիշելով ու անոր ա-ռաքինութեանը նմանիլ ջանալով՝ վախճանեցաւ (944)։ — Ե Ռոմանոս (Դիոժեն) կայսրն ալ՝ Ալփարսլանէն գըժ-բաղդաբար յաղթուելէն աւելի դժբաղդաբար՝ իր ազգա-կցաց ապերախտութենէն մերժուած և կուրացած՝ հոս աքսորանքի մէջ քիչ օրէն կնքեց իր դառնացեալ կեան-քը (1077)։

10477396

ԳԼՈՒԽ Ի ՀԱՅՍ

Ա

Հին աշխարհին հիւսիսային կողմերն՝ որ մինչև հնամեայ ցրտութեամբ և երկար ձմռութեամբ ահարկու են, քանի որ աշխարհագրական գիտութիւնք չէին ընդարձակած՝ Անձանօթ աշխարհ կոչուէին: Բայց այս անծանօթ աշխարհս՝ մեր նախահարց վաւվաւուն մուաց ոչ այնքան ահաւոր՝ որքան խորհրդաւոր կ'երևէր. և եթէ քարկ բոլորեայ շուրջն էրենց այլ երբեմն դպչելով՝ զգացուցեր էր փչած երկրին բնութիւնը, անոնք գեռ անկէց այլ անդին կ'երևակայէին զարմանալի կամ ախորժելի երկիր և ազգ մը՝ Գերհիւպոռեան, (ինչպէս կոչելի է Թերևս գերհիւսուեան գրուածն 'ի գիրս նախնեաց մերոց, որ է Թարգմանեալ յունական Ὑπερβόρειοι): Այս անծանօթ երկրին բնակիչքն՝ արբազան կուսեպուէին, միշտ աստուածոց և պաշտամանց նուիրեալք՝ զոհերով, երգերով, պարերով, ծաղկներով պսակուած. և կ'լսուէր, թէ հազարաւոր տարի ապրելէն վերջը՝ պսակ 'ի գլուխնին և քնար ձեռուընին բարձր հրաւանդանէ մը վար կուգլորէին կուծածկուէին յանդունդս ծովուն:

Ա յսպիսի զարմանալի եղած (կամ չեղած) ազգի մէջն այլ զարմանալի անձ մը ծանօթ և հըռչակուած է՝ ի Յունաց՝ իբրև մեծ իմաստասէր կամ բժիշկ, Աբարէս անուամբ. որոյ համար ասանդեցին ոմանք թէ քուրմ էր Ապողոնի, և նէպէ մը վրայ կռթընած կամ հեծած՝ անդադար կանգուն երկրին բոլորտիքը: Այս առասպելս՝ ըստ ոմանց արդի բանասիրաց Թուի նշանակել Ա-ար ազգը (Αβάρεις), որ յարմար հայաձայն անուանն՝ աւարտող և աւերտող էր. և այն հիւսիսային ազգաց մէկն՝ որք առանց հաստատ բնակութեան՝ վանօք տեղէ տեղ կու փոխադրէին, և զիրար կամ զօտարս քշէին իրենց հասարակ և սովորական զէնքովն՝ որ էր նէպ. ըստ այսմ ամենքն այլ իրաւամբք կոչին Նէպողպ: — Մեր ազգին փառաց և պերճութեան առեն երբ 400 իշխանք և տոհմապետք Թագաւորին հետ կու բազմէին՝ ի հանդիսի, անոնց մէկուն տոհմն կամ պայազատութիւնն այլ Նէպողպ կոչուէր. քայց հաւանօրէն Թուի գլխապետ նեռաձիգ զօրաց, (ինչպէս ձիաւորացն այլ Ասպէպ՝ որ և Բագրատուն է), քան թէ Նեռոց ազգի մը գալթական. որն այլ ըլլայ՝ մեր ազգին Նեռոցց զէնքն պաշտպանական էր և ոչ թշնամական՝ իբրև այս հիւսիսային Թափառիկ ազգաց:

Ըստ նկարագրութեան հին աշխարհագրաց և պատմչաց, վերոյիշեալ գերհիւսիսականքն՝ բնական ըլլալին մօտ բնակիչք կ'երևին. որոց հարաւային եզերքն՝ մինչև ի ծանուցեալ Կովկասեան և Ափեաց, Հնդկաց ու Չինաց աշխարհները եղած լայնածաւալ միջոցն՝ անուանէին Սուտոպիա (յարևմտակողմն) և Սիբիա (յարևելակողմն): Այս եզերքնս էր բնիկ Նեռոցց ընդարձակ ազգաց:

զանազան ազգեր՝ յարևմուտք և ի հարաւ աս-
պատակելով: Շատ ուղիկ սահմանագրէ այս աշ-
խարհս՝ մեր հին աշխարհագիրն Մ. Խորենացի.
« Սկիւթիա աշխարհ.ք՝ որ են Ասպախպաէ, այսինքն
» Թոռգտոպանք. ըստ հիւսիսոյ՝ Անծանօթ երկրաւ
» (սահմանի), և ըստ մուտից՝ Սարմատացւոց աշ-
» խարհաւ (մինչև) առ Ահել գետով. ի հարաւոյ՝
» Վրկան ծովով և Արեօք և Հնդկօք, առ հարա-
» ւային բազկաւն Եմաւոն լերինն... իսկ ըստ ե-
» լից կուսէ՝ սահման ի Ճենաց: Եւ ազգք են
» Նորա 44 » (կամ 43): Հիմակուան հմուտագոյն
բանասիրաք այլ յայս կարծիս են, թէ հին Սկիւ-
թիա է Թուրքաստան աշխարհն, որ և Ազատ Թա-
թարք կոչի հիմայ. իսկ Ասպախպաէ՝ հիւսիսային կամ
արևմտեան Թարգմանի: Ես չեմ ուզեր քեզի
հետ, Հայկակ, այս երկայն և ձիձիլած խնդրոյ
մէջ մտնել. այլ միայն գլխաւորը և մեզի ծանօթա-
գոյն ազգերը յիշել:

Բ

Մեր աշխարհագրին 43 կամ 44 ըսած ազգաց
մէջ յանուանէ միայն (ըստ զանազան ձեռագրաց)
երբորդ մասին չափ յիշէ, որոց մէջ նշանաւորք
են Թոախարէ, Մազգոնէ կամ Մասագէթաց, Հոնք,
Սօդիք կամ Սոգդոպան (Սոկաք կամ Սակասիանա
հեղինակաց), Հէֆթաղ, և այլն. մեկալոյց հա-
մար մեկ օրինակագիրն, որ անշուշտ յետոյ է քան
զԽորենացին, կ'ասէ յլսկնէ. « Եւ զայլ ազգս ասէ
» խուժական անուամբ, զոր չէ հարկ ասել. զի
» այժմ այլ ազգ ոչ գիտեմք, բայց միայն զԲուշան
» ազգ՝ որ Ճարակի զերկիրն զայն »: Ահա յետին
ազգս, (զոր մեր աշխարհագիրն յիշէ նաև ի մէջ
առեալ Սարմատաց՝ որ սահմանակից էին Սկիւ-
թիոյ յարևմտից), զոր և մեր ուրիշ պատմիչք

10477396

այլ լիշեն, Թուխ երենցմէ յետոյ լիշեալ Պաշ-
խէտ ազգն Թուրքաստանի, որ արդարև ըստ վը-
կայութեան արաբացի պատմչաց՝ երենց տոհմա-
կցաց մէջ ամենէն զօրաւորք և ահարկուք էին մին-
չև՛ ի գարն ԺԲ. և համարին մերձաւորք Ոնհոտ
Թուրքաց՝ նախահարց Ունգարացւոց, այսինքն
Մաճառաց. արևմտեայք Պոպոփէր անուաներ են
զսոսինք:

Թողլով այս ամեն ազգաց վրայ հետաքննական
գիտելիքն, մեկ երկու բան ըսեմ. և նախ այս՝ որ
ինչպէս հին աւեն Սկիւթիա ըսելով՝ ամեն հիւ-
սիսային ազգերն իրարու հետ շփոթէին, այսպէս
այլ քրիստոնեայ և արաբացի հեղինակք, մանա-
ւանդ արևմտեայք, Թուրք անուամբ շփոթեն զա-
նազան ժողովուրդներ նախայիշեալ աշխարհաց:
Բայց ըստ ստուգագոյն և նոր աշխարհագրաց՝
Թուրքաստան կ'իմացուի Կասպից ծովէն ինչուան
Թանկուտ կամ Չինաց արևմտեան սահմանը, իբ-
րև 36 երկայնութեան աստիճանի միջոց արևմուտ-
քէն արևելք, և Հ. լայնութեան 36-55 աստիճա-
նաց մէջ: Բայց այս ընդարձակ երկրին մէջ այլ
բնիկ Թուրքաստան համարուի անմիջապէս Կաս-
պից և Արալ ծովուց միջոցն, և այս եռքինիա մէջ
Թափուղ երկու մեծամեծ գետոց լայնատիւս
հովիտքն, որք հիմայ յարևելեայց կոչին Ձիհոն
կամ Ջահան և Սիհոն: Առաջինն՝ որ և հարաւա-
յինն՝ կոչի և Ամո-փէրէա, և ըստ նախնեաց Ոքսոս,
ըստ հին Պարսից և մերոցս՝ Վէհ-ոսոփ. երկրորդն՝
հիւսիսայինն՝ Սէր-փէրէա (Դեղին-ծով), և ըստ
նախնեաց Եաքսարտ և յոմանց ևս Երասխ, որ բնա-
կանապէս սահմանի էր նոցա քան զՈքս-
սոս. մինչդեռ անունք անմիջապէս ասկէ անդին ե-
ղող երկիրն այլ կ'անուանէին Անդր-Ոքսեան
Transoxiana, յորմէ և Արաբացիք Թարգմանե-
ցին անուանեցին Մաուարէ-ուան-Նէհր, Յայնկոյս-գե-

տոյն, և եղծմամբ Մավար-էլ-Նահար. որ և յետոյ (յ՚ԱԳ դարուս) ձինկիզ խանի որդւոց մեկուն իշ-խանութեան բաժին ըլլալով՝ անոր անուամբ Չե-ղաթայ կոչուեցաւ: Ա,յս ընդարձակ երկիրս՝ յին-չեմսակ ժամանակաց՝ ջեմարան և չուարան է վանաբնակ քան շինաբնակ, խաշնարած և ձիա-րած ազգաց, քարաբարոյից և աղեղնաւորաց. ո-րոց նախահայրն անծանօթ է, Թէպէտ և ըստ հին և նոր հաւանագոյն ուանդուԹեան՝ ի Թորգո-մայ սերեալ են: Ոմանք այլ ի Մագովգայ սահն զատանք. սեռի անհաւանական (ոմանց ի մերոց պատմչաց ըսածն) Թէ ի Քամայ ըլլան (Թուրքք):

Իրենց սեռ սեռ խոպան և ազուտ, սեռ սեռ դալար և սիզաւէտ անհուն դաշտերուն և անա-պատներուն մէջ՝ հազարաւոր տարիներ կու Թա-փառէին և կու Թափառին այս ժողովուրդքս. հնագոյն սահնները դէպ ի հարաւ տապատակե-լով, Պարսից սահմաններուն վրայ. իսկ սահնք՝ (որ իրենք զիրենք Իրան կոչէին) զբարբարականս այլ Թուրան կոչէին. և անհաշտ կռիս ունէին ա-նոնց հետ՝ իբրև ընդ որդիս չարին (Ահերմէնի): Պարսից շատ գիւցազանց քաջուԹեան տապա-լէզն այս Թուրանս եղած է:

Սահնք են արևմտեայ հին հեղինակաց ՍկիԹա-ցիքն. բայց իրենց ծանօԹագոյն են՝ սահնց երկրին հիւսիսակողման ազգերն. որք մեկմեկու ետևէ զիրար քշելով 1000 տարիէ աւելի միջոց՝ հիւսի-սային կողմէն դէպ յարևմուտք և՝ ի հարաւ կ՚տա-պատակէին. յետոյ սկսան հարաւէն արշաւել: Ի մարգարէից յիշեալ Գովգայ և Մագովգայ և Թո-բէլայ ազգերն այլ սահնք են. յորոց (ըստ Մի-խայէլի պատմչի) Նաբուքոդոնոսոր և Կիւրոս օգ-նական զօրք վարձեցին, զորս և համարձակ Թուրք կ՚անուանէ պատմիչն. բայց այս անունս անծա-նօթ է հին օրինակագրաց. և Թերևս յայտնի յի-

ջուած չէ յառաջ քան զ'Ջ դարը, (եթէ 'ի յետոյ նոց աւելցուած չէ այդ անունն՝ մեր Խորենացւոյն աշխարհագրութեան մէջ):

Գ

Իսկ առ հինս և 'ի պատմութեան ծանօթ եղած Սկիւթացւոց մէջ՝ թերևս հնագոյնք են Ալանք. որ և մեր ազգային պատմութեան մէջ շատ ծանուցեալ և խնամիք Թագաւորաց մերոց Արշակունեաց. որոց ընծայեցին և շնորհագեղ դշխոյներ՝ զԱշխէն և Սաթէն (Սաթինիկ): — Առանց ատելոյ մակից սեպուին Մազքուտք, Քրիստոսէ վեց դար յառաջ յիշեալք. և Թաւասպարք [1] վեց դար յետոյ հինսայլ յիշեալք, և ձանաչին հիմայ Եւրոպիոյ հիւսիսային և միջին երևելի ազգաց նախահարք կամ հօրեղբարք, այսինքն Գոթաց և Տևտոնաց. որոց առաջին բնակութիւնն էր Ովրալ գետոյն վերնակողմը, և յետոյ ընդարձակ ազգի անուանները: Սակից՝ Քրիստոսի Թուականէն քիչ ետքը յարձակեցան 'ի Կովկաս, և անցան այն լեռները, Թափեցան մինչև 'ի Հայաստան, և դաշնադրութեամբ ու խնամութիւն յետ քաշուեցան. բայց դէպ յարևմուտք տարածուելով՝ հասան մինչև Ադրիատ ծովն. և 400 տարուոյ չափ հիմակու Ռուսաց Յոյակոյս-Կովկասեան լսուած երկիրները պրաւեցին զատ՝ անդադար կ'աստիճակէին 'ի Վիրս, 'ի Հայս, և 'ի սահմանս կայսերաց. երբեմն ինքն իրենց շահուն համար, երբեմն այլ ուրիշ ազգաց օգնական, ինչպէս երբեմն և Հայոց՝ ընդդէմ Պարսից: Գունդ մը կամ տոհմ մը Մազքթաց Կովկասէն ատկին մնացին Դարբանատայ հարաւակողմը, և մեր Արշակունեաց չետ այլ խնամեցան,

[1] Արաբացի հեղինակք կ'անուանեն Թուպաճկրան:

և նաև՝ ի Քրիստոս հաւատացին Տրդատայ առեն. բայց յետ մահու նորա՝ մեր Լուսաւորչին թոռը Գրիգորիան այլ նահատակեցին, իրենց Անեսան Թագաւորին հրամանաւ. Արևմտեայ Մազգուեք դ դարու մէջ անցան ինչուան՝ ի Սպանիա և Յա-փրիկէ. վանն զի իրենցմէ զօրաւորք զիրենք քըշէին, որ էին Հնդ. և Եւրոպիոյ մէջ ե դարուն վերջերը, Ասիոյ մէջ՝ չին եաքերը՝ գրեթէ անյիշատակ եղան Ազանք:

Ցաջորդ (է) դարուն մէջ ծածկուի Հոնաց անուն այլ, որ ե և զ դարուց մէջ ամենէն սիրուն էր, մանաւանդ իրենց վայրենի դիւցազին Ատտիլատայ առեն, ի կէս ե դարու: Թէպէտ Հոնաց անուն գրեթէ հազար տարի առաջ այլ յիշուի և կարդացուի (բան ոմանց) Պերսեպօլեայ բևեռաքանդակ արձանաց վրայ, այլ տեղեր-նին շատ որոշ չէ, կամ շատ կարծելի չէ՝ որ ըլլայ ինչուան Սեաւ ծովուն մօտերը. Թէ և յետ ժամանակաց հասան այն կողմերը. մինչև մեր յետին պատմիչք կամ յուշագիրք ծգ-ծե դարուց՝ Եւիէր Հոնաց անուանեն զԱրիմն այլ: Հոնաց ցեղից մէջ մէկ գլխաւորն է Ոգոր կամ Ոնգոր կոչուածը, Հոն-անգոր ըստ մեր հին պատմչաց. որուց անուանի և մեծազօր հակայի կամ ըմբշի մը հետ մենամարտեցաւ և յաղթեց Բաբիկ՝ հայրն Վահակայ ուրացողին. ինչպէս յառաջ քան զնա հրեայն մեր Տրդատ՝ ընդ Գուիհոնի Թագաւորն Նոցա (Թերևս Գուդոր-Հոն) յերկրին Տարօնոյ, ուր հասեր էին արշաւանօք և մատնութեամբ: Ետ անդամ Ձորայ (Տէրսէնտ) պահակէն անցնելնուն համար յարձակելու յարևմուտս՝ այն անցքն ըստեցաւ Հոնաց Դուռն. զոր և տեղն մը մեր զօրաւոր Արշակունի Թագաւորք զգուշութեամբ ամրացուցած պահէին անոնց դէմ. յետոյ Աղուանից Ձեռքն անցաւ, որոց անուամբ այլ կոչի:

10477396

Աստիճաւոյ Թագաւորութեան տեղն մեր Ս. Մեսրովպ Աղուանից քարոզելով ինչուան կովկասեան լերանց անդին այլ լսեցուց Քրիստոսի աւետարանը, նաև իր աշակերտաց գործակցութեամբ. որոց ձեռօք հաւատաց՝ ի Քրիստոս Հոնաց զօրավարն՝ որ յԱղուանս յարձակեր էր, և յետոյ իր ընտանեօքն և հեռևուօք նահատակեցաւ հոն: Երկու գար և աւելի վերջը երբ Հոնք տկարացեր և Խազրաց նախիշխանութեան տակ ընկեր էին, դեռ իրենց հին մայրաքաղաքին մէջ՝ որ կոչեր Վաղալան և է հիմայ Թարկո՝ ի հիւսիսոյ Դարբանտայ, կուռնատեր Թագաւորնին կամ զօրավարնին՝ Անֆ անուամբ, որ և պատուով Էնոեր[1] կոչեր, յորմէ և Էլնոեբուրեան պատիւ (ինձ անծանօթ): Սա՝ իր երկրէն (զոր Ախոթաշէնան աշխարհ Գովգայ՝ կոչէ ժամանակակից պատմիչ մեր)[2], ապաստակի եկաւ յԱղուանս. յետոյ հաշտեցով Թոլուց որ եպիսկոպոս մը (Իսրայէլ Մեծկոնեաց) գայ իր երկիրը և քարոզէ զՔրիստոս (յամի 684). արդէն քանի տարի առաջ Հոնաց Թագաւորն խնամացեր էր Աղուանից իշխանապետին հետ:

Ահկէ եաև գրեթէ չեն յիշուիր Հունք. այլ փոխանակնոցա իսպիսս սկսիլը յիշեալ Ասողկն, զոր Թուրքք քշեցին (յամին 551) իրենց երկրէն՝ Յոկորիոյ՝ որ է հիմիս Սիպերիոյ Վոլոլոյ երկրին, ուսկից եկեր էին և Հունք: Բիւզանդացի պատմիչք սակս յիշեն զԱեարս և կ'ըսեն Թէ Թուրքք Վարխան անուանէին զանոնք, որդ մեր

1 Այս պատուանունս նախ կու յիշէ Մովսէս Կաղանկատուեցի պատմիչն մեր յԻ դարու, և յետոյ Ղևոնդ պատմիչ յԸ դարու. «Իգնդէն (Խազրաց) խաթիր-Էլիթեր» բերայ»:

2 Մ. Կաղանկատուեցի:

աշխարհապին այլ վերոյիշեալ Սկիւթացի ազգաց մէջ համրէ զԱխէոն և զՎալխոն: Դարձեալ վկայեն անունք թէ Աւարք ազգակից և բուն Հունք են, այլ երբեմն Աւար անուն թագաւորքն այսպէս կոչեցան: Կայսերաց երկիրը մտնելով կամաց կամաց յառաջ եկան մինչև 'ի գաւառս Դանուբայ, և երբեմն առաջ հոն հաստել Հուները նուաճեցին. բայց երբեմն վայ այլ հասան բռնկտ ('ի խազրաց վարեալք) և ուրացան այն կողմերուն՝ ը դարուն մէջ և այլ եւս, ուր և մինչև հիմայ մնան երբեմն սերունդքն խառնեալ ընդ հոռոմ ցեղին, և երկիրն այլ երբեմն անուամբ ամենուն ծանօթ է:

Ահա զօրաւոր և Սլաւեանց տոհմակից բռնազգն այլ՝ յառաջ քան զայլ ամեն յիշուի մեր Հայոց պատմութեան մէջ, Քրխատոյ գար մը կամ աւելի առաջ. երբեմն հին հայրենիքն այլ ծանօթ է՝ Վոլկա գետոյն վերին կողմերը, որ և անունէմէ առած է այս անունս. (Վոլկային առ հինս Իռա կոչի և 'ի Թուրքաց Էթիլ). ուսկից եկեան էջուան անոր բերանը և աւելի վար՝ Կովկասու հիւսիսակողմը. և ասկէց այլ քշուելով երամէ՝ գունդ մը կարեց զԿովկաս լեռները և անցաւ յԱխրատատ, Բասենոյ կողմերը, երկուց վոնդ իշխանին առաջնորդութեամբ 'ի Վչընդուր ցեղէ, որոյ անուամբ բնակած տեղերնին ալ Վանանդ կոչեցաւ 'ի Հայս, մինչև հիմայ:

Դ

Հոնաց անհետանալու համ նուաճելու առեն յերևան եկան համ նշանաւորեցան Սպիպակ Հոնք ըստ Բիւզանդացւոց, համ Եփնալիպտ (սխալմամբ և Նեֆթալիտք), որ են ըստ մեզ Հէֆթաղտ, նաև Թէպաղտ համ Թէպալտոյիտ. (նոյն Թուրի և Տաղկան համ Իպաղան՝ թէ չիցեն Տահտ, Dahae): Անոնք

ուրիշ նշանաւոր անուն մ՚այլ ունին առ մեր-
ձինա, Քուշանք, որ է ըստ Զինաց Քուէյ-շուանկ.
(արդեօք՝ ի Քուշայ համարեալք որպէս Հնդիկք)։
Ժամանակին պատմիչք կամ յիշողք՝ Հոնաց առա-
ջակից և մերձաւոր կարծեցին զասունք. ոմանք
Թուրք ցեղ մը, ոմանք Հնդկաստանի. իսկ նոր
բազմահմուտ աշխարհագիր մը [1] երկար քննու-
թեամբ կու հաստատէ՝ թէ Զինաց մօտ Դիպէ-
թէն Տագեալ ժողովուրդ մ՚էր, և ըստ նոցա
եօթէի կամ եօթէլի կամ Ճոթ անուանեալ։ Ա-
յայտնի է որ Հեփթալք Դիպէթի հիւսիսակողմը
բնակէին նախ, որ է Թուրքաստանի հարաւա-
կողմը. ուր՝ Մերապզի բայց գաղղիագիրը երևելի
արևելագէտ մ՚այլ՝ [2] արաբացի հին պատմիչնե-
րէ կու յիշէ Դահոպնակ Թուրք հզօր ցեղը, որոյ
գլխաւոր քաղաքն էր Քուշան. և ըստ այսմ՝
Դիպէթի և Թուրքաց սահմանակաւն երկիր և
ազգ մը կ՚ըլլայ ազգս. և ՚ի պատմութեան Զի-
նաց լինչուան գ դար Քրիստոսէ առաջ յիշուին.
և միայն անկէ դար ու կէս յառաջ գէպ յարև-
մտահարկողին եկած են և ակրած Սոգդիանի և Բակ-
տրիոյ, այն տեղի յոյն Թագաւորութիւնը վերցը-
նելով։ Ա յս է մեր պատմչաց յիշածն այլ, թէ
Արշակ՝ Թեսալաց Թագաւորին որդին՝ տիրեց
Պարթևաց, և ասոնց հահլ քաղաքը՝ ըրաւ իրեն
աթոռ. մէկ եղբայրը Թողով իրենց առաջին աշ-
խարհին մէջ, որ է Թեսալիա, միւս եղբայրն այլ
(Վաղարշակ) Թագաւորեցուց Հայոց։ — Սահակ
հեռաւոր և անծանօթ կողմերէ ծագած են եղեր
մեր քաջածանօթ և պերճահռչակ Արշակունի Թա-
գաւորքն, Տրդատք և Տիգրանք։ — գ–զ դարուց
մէջ պայծառացան կամ հռչակեցան Քուշանք-

1 Վիվիէն Սէն Մարտէն։
2 Մուրատճա Տ՚ Ոհսոն։

Հեփեթալք. բայց՝ անկէ առաջ այլ բառական՝ բանաւոր գործեր ըրած պիտի ըլլան, որ յ'գ պատրուա անոնց պատմութիւնն այլ պրուած և ծանօթ եղած ըլլայ Հայոց. վասն զի Զենոբ՝ ժամանակակից Ս. Գրիգորի Լուսաւորչի կ'ըսէ. «Ընթերցիր զթագաւորութիւն Հեփթալիտայ (կամ Եփթաղեայ), հեղինացի գրով, և կամ զթագաւորութիւն Ճենաց, զոր գտանես յՈւռհայ քաղաքն առ Բարդայ (կամ Բարդեճան)[1] պատմիր»:

Ահա առիններս՝ կամ քիչ առաջ՝ երբ Սասանեանք նուաճեցին զՊարթևս՝ մեր թագաւորն խոտրով իբրև տասնամեակից թէ անոնց և թէ Քուշանաց՝ սանոց դեպան խաբեց և դրդեց ընդդէմ Արտաշրի, բայց Քուշանք անփոյթ եղան. սակայն երբ Սասանեանք յաջողեցան և զօրացան՝ Քուշանք անոնց գլխահար եղան, և յափշտակեցին Պարթևաց երկիրը, ուր հան'ի Բահլ դրին իրենց գահը, ինչպէս յիշէ և Բուզանդ, պատմելով Շապհոյ պատերազմը ընդդէմ նոցա, և անոնց ձեռքէն ազատիլը՝ քաջութեամբ Դրաստամատան Հայ իշխանին, (որոյ վարձք եղաւ իր աէրը՝ Արշակ կոյր թագաւորը՝ բանտէն հանել և վիրաւորել. և ապա անոր հետ կամ անոր վրայ անձնասպան ըլլալ): Կ'ըսուի ի մէրոնց թէ Ս. Մեսրովպայ քարոզութեամբն քրիստոնէացեալ այլազգեաց մէջ կային Հեփթալք այլ, բայց սուրհանդակ էին. և Ճապկերիչ պատմիչք յիշեն անզգամ Յազկերտին պատերազմները ընդ Քուշանաց, որոց մէջ գտուեցան մեր քաջ նախարարք և Մեծն Վարդան այլ. նոյնպէս անոր որդւոյն՝ Պերոզի սպանումն կռուի մէջ ի Քուշանս:

1 Եթէ, որպէս թուի՝ անուանի Ասորի Բարդածանն է սա, ի վերջ կոյս Բ դարու գրած է այս պատմութիւնս:

նաց, յամին 488: Դարձեալ ուրիշ պատմիչք այլ յիշեն վահրամ Զուպին Պարսից բռնաւորին պատերազմիլը և Քուշանաց երկու թագաւորներուն նուաճելը (յամին 580), որ կոչէին Շօդ և Պալիւհ: Ի սկիզբն ի դարու մեր Բազմայաղթ Սըմբատ մարզպանն կռուեցաւ և յաղթեց անոնց. մինչև ստիպուեցան ինդրիլ օգնութիւն 'ի Խազրաց, և եկան ասոնցմէ 300,000. բայց Սմբատ դիւրաւ ցրուեց զանոնք, անոնց հսկայ թագաւորին հետ մենամարտելով և սպաննելով: Վերջին թագաւորն Սասանեանց Յազկերտ՝ հալածեալ Արաբացւոց սպաւինեցաւ 'ի Քուշանս, բայց չգտաւ օգնութիւն, և անոնց քով սպանուեցաւ ('ի Մէրվ): Քուշանք Արաբացւոց այլ դեմ դրին նախ. բայց իրենց զօրաւոր դրացիներէն նուաճուելով, կամ անոնց հետ խառնուելով, անյիշատակ եղան ի դարուն վերջերը: Այս զօրաւոր ազգերն էին Խազիրք և Թուրքք. շատ պատմիչք այս երեք ազգերն այլ իրարու հետ շփոթեն, մանաւանդ զՀեփթաղս և զԹուրքս. ոմանք հին Հեփթաղաց այլ Թուրք կ'ըսեն, և ոմանք ինչուան ժԱ դարու հասարակաց Թուրք կոչածն այլ Հեփթաղ կ'անուանեն[1]: Մխիթէր Աւորի համարձակ կ'ըսէ. «Թեւտալիա՝ որ Թուրքաստան» կոչի», և Պարսից Արտալ աշխարհին սահմանակից կու դնէ:

Ե

Հեփթաղաց անհետանալէն ինչուան 'ի յառաջանալն Թուրքաց, որ է ըսել ի–ժ դարուց միջոցն, սիրասիեռող Սկիւթացիքն եղան Խազէրք, որք և Խազիւնան կոչին 'ի մերոցս, ևս և Գիւռա-

1 Ինչպէս կերեւոա, յամին 1044:

բաց ապէ[1]. և շատ հին ատեն՝ ինչուան յԵրզոր-
ատեայ յիշին Ախածէրէ և ատոր նման կոչմամբ,
(Քրիստոսէ ե դար առաջ) տոհմակից և սահ-
մանակից Հոնաց և Ասարաց և երբեմն անոնց
հետ հաճանուն: Արաբացի հին պատմիչ մը՝ Վը-
րաց տոհմակից կ'ըսէ զանոնք. ուրիշ մը արքա-
գրութեամբ զնա՝ ուչ Վրացի այլ Հայ են կ'ըսէ Խա-
զիրքն. նաև Վէրք՝ երեսից երկրին վրայ առաջին
տապատակող ազգը Խազիրք կոչեն: Մեր պատ-
մութեան մէջ կու յիշուին՝ ի սկիզբն գ. գարու,
յորում Վոլկայի վարի կողմերը բնակէին ատոնք.
և ուրիշ տոհմակից հզօր ազգ մ'այլ Բասէլ կամ
Բարչիլ. որոց յոնարքն կոչումն Վասիլէ՝ թա-
գաւորական նշանակէ. և այսպէս կարծէ յոմանց
Թարգմանաբար կոչուած յաշխարհագրութեան
Խորենացւոյն, Թագաւորական Սարմատք: Ահա եր-
կուքա՝ Խազիրք և Բասիլք միաբանեալ յամի երբ
212, անցան Կովկասու մեծ դունէն (Ճորայ կամ
Դարբանտայ) և կուր գետէն ապին այլ վազե-
լով՝ կոխեցին ինչուան Հայոց սահմաններըը, Վնա-
ւեպ Սուրհատ անուամբ Թագաւորի մը առաջ-
նորդութեամբ. իսկ մեր Թագաւորն Վաղարշ մեծ
պատերազմով վռնատեց զանոնք ինչուան նոյն կով-
կասայ պահակէն այլ անդին՝ չափազանց վնէժ-
նդրութեամբ. մինչև հալածեալքն երեսից բնիկ
սահմաններուն հասնելով և նոր օգնական ժող-
վելով՝ դարձան Հայոց վրայ, զՎաղարշ սպանե-
ցին, զօրքը յրուեցին: Խոսրով և որդի և յաջորդ
Վաղարշայ՝ նորէն վրանին զօրք հանեց, հօրը
վրէժն առաւ. և այնպէս վախ ձգեց այն անվախ
ազգաց վրայ՝ որ սահմանէն երեսից մէկ պատանդ առ Խոսրովու. և նա քաջու-
թեան յաղթանակը հան յոնարքն արձանագրե-

1 Այսպէս անուանէ Մովսէս կաղանկատուացի:

լով քարերու վրայ՝ գարձաւ, և բերած գերին քնակեցուց՝ ի Հայաստան. ուր բազում ազնուական կանաց հետ խնամուխթիւն ըրին Առաւելեանք և Ալանք, նոյնպէս յայլազգեաց գաղթեալք՝ ի Հայս։

Խոսրովայ որդւոյ Տրդատայ առեն այլ բազում ուրիշ հիւսիսայնոց ժողովուրդներ յարձակեցան Կովկասէն ասդին. բայց քաջայաղթն և երազահան Տրդատ՝ ընկաւ անոնց վրայ Ա. ղուանից երկրին մէջ, և իր սրով թագաւորնին երկու կտոր ընելով՝ քշեց ապատակը մինչև յերկիրն Հոնաց. և հօրը պէս անոնցմէ պատանդ և նիզակակից առնելով՝ տարաւ Պարսից վրայ։ Անկէ ետև բազում ինչուան՝ ի Ջ դար և այլ ետև՝ Վրկայի եզերքը կու բնակէին, ջրջակայ ազգաց և տոհմից տիրելով, մինչև հզօրագոյն և վեհագոյն և լերև թագաւորաց թագաւոր կու սեպուէր երեներց գլխաւորն, և կ'ըսուէր Թուրքաց կոչմամբ խագան, կինն այլ խաթուն։ Երկու ազգն այլ գրեթէ համապատիւ էին, բայց միայն ըստ աշխարհագրին մերոյ «Թագաւորն Հիւսիսոյ էր խա» քանն, որ է Տէր խազրաց, և գլխոյն Թագուհի՝ » կին խաքանայ՝ ի բազաց ազգէն »։ Խաքանին հզօրագոյն ցեղն աւելի այլ զօրացաւ և բռնացաւ բազաց վրայ՝ երբ բուլղ Թուրքք՝ զոր նախ յիշեցի, մօտեցան երեներց. այնչափ որ ըստ հին և պատմական աշխարհագրին մերոյ՝ կու սոխպուէին բազք ամրանալ՝ ի Սև կզլին Վրկայի բերանը, « ՝ի հզօր ազգէն խազրաց և բուլղաց՝ Ճարակեց » ղոց յերկից և ՝ի մօկց, եկեղոց անդր ՝ի ձմերոց»։

Ե դարուն կիսէն ետև՝ (յամի երբ 462) խազիրք երեներց բնիկ երկրէն (յՈւկորնոյ) քշուելով, այս Վրկայի վարի կողմերը և ինչուան Կովկասու սարերուն սփռեցան. արևելքի կողմէն այլ ինչուան՝ ի սահմանս Թուրքաց. որոց հետ շատ մերձաւորութեամբն՝ ի բնութիւնն՝ ՝ի բնազանդութենէ կոչին Ա-

ընէլէան թոռըփ, միանգամայն և առ՝ի զանազա-
նել յԵբրայա անցնոյլ և քնակոյլ Կռանմանաց և
Մաշտառաց, զորս Արնմպէան թոռըփ կոչէն: Մեր
ազատիչք այլ ցուցընեն Թէ զանազան իսն կամ
խաքան ունէին նոքա, քայց ՌԷ Խափանն էր տէրն
Խազրաց, զոր և կ՝անուանեն Նագաոր Հիսխոյ.
առակ օգնութիւն ինդրեց Հերակլ կայսր ընդդէմ
Խոսրովու Պարսից Թագաւորի. և եկաւ իրեն օգ-
նական Ջէբու Խափանն՝ «որ երկրորդ էր Թագաւո-
» րութեան Թագաւորին Հիսխոյ», իր Ետէ
կամ Զաճ որդւոյն [1]: Սա մնաց յԱղուանս, և
ազգացնօք կաթողիկոսին սուրբ (Վիրոյ) սրգի-
չէց տապատակը: — Ականատես ընկերն Վիրոյ՝
ազատիչն Մովսէս Կաղանկատուացի՝ շատ հե-
տաքնին և կարևոր տեղեկութիւններ կու տայ
այս Խազրաց արքունեաց տովորութեան վրայ,
զոր ուրիշ պատմչէի քով չես կրնար գտնել, Հայ-
կական: — Թէպէտ այս անգամ ապահով Թողին
Խազինք զԱղուանս, քայց յետոյ դարձեալ զա-
նազան անգամ յարձակեցան և նուաճեցին, մին-
չև հարկ եղաւ որ ե դարուն վերջերը՝ Աղուանք
Թէ ատոնց հարկատու ըլլան Թէ Արաբացւոց:
Մահմետի յաջորդքն արևելից մէջ իրենց տե-
նէն զօրաւոր դիմակաց գտան զԽազին. և Թէ-
պէտ Կովկասեան լեռներն իրարմէ կու զատէին
անոնց սահմանները, քայց շատ հեղ կամ մէկն
կամ մէկայլն կարենալով զպահակը կամ անցնելով

1 Այսպէս կ՝ըսէ Մովսէս Կաղանկատուացի: Անկէ ա-
ռաջ յամի իբր 600, երբ Քուշանք յաղթուեցան՝ի Սըմ-
բատայ մարզպանէ, «խնդրեցին իւրեանց օգնական, կ՝ըսէ
» մեր Սեբէոս պատմիչն, ՝ի ՌԷՆԷն Խոսոանոյ ոչխարէն Հող-
» մանցն Հիսխոյ, և ինքն եղ ամբոխ 300,000»: — Անկէ
այլ առաջ Խորենացին աշխարհագրութեանը մէջ կ՝ըսէ.
« Թոռփառորդն Հիսխոյ է Խաքանն, որ է տէր Խազրաց»:

'ի Դարբանայ՝ իրարու հետ զարնուելեան, երկու կողմին շատ արիւնհեղութեամբ և ջնասով. որոց երբեմն հալորդ կ'ըլլար մեր աչխարհն այլ ամիրապետաց իշխանութեան ատակ ըլլալով, կամ ատիպուելով դէմ կենալու Խազրաց ասպատակին. ինչպէս մեր Գրիգոր Մամիկոնեան խոհեմ և կարիճ իշխանապետն այլ անոնց հետ կռուելով՝ ընկաւ պատերազմի մէջ, յամին 685 (16 ո. գոստ.): Վերջապէս Աւրաբացիք կրկին անգամ ատրելով և ամրացընելով զԴարբանտ՝ այն կողմն արգիլեցին զԽազրս: Սրևէլեան կողմէն այլ ուրիշ հնարքով յաջողեցան, այսինքն նուաճելով զԹուրքս, և իրենց (մահմետական) կրօնքին հաւանեցընելով, և իշխանութեան հասցընելով, ոչ միայն այն կողմերը, այլ և ինչուան Խալիփայից արքանիքը 'ի Պաղտատ. ուր՝ նախ անոնցմէ գերիներ և առրուկներ բերէին, անոնց կերպարանաց հաւնելով. յետոյ մեծամեծ պաշտօններու այլ հասուցին, մինչև գրեթէ բոլոր իշխանութիւնն անոնց ձեռքն անցաւ: Ահա կերպով Խազիրք՝ որ ինչուան Կասպից հիւսիսային և արևելեան ափունքը տարածուելով՝ իրենց անունը տուին այն ծովուն (Խազրոյ ծով, ինչպէս կոչուիլ հիւսիսային երկրին այլ՝ Խազրոյ դաշտ), ը–ծ դարուց մէջ՝ ամիսոփուեցան Վոլկայի վարի կողմերը, և առջի վայրենութիւննին Թողլով՝ բաւական քաղաքականութեան կարգ և ձև տուին: Ահա բանիս մէկ պատճառն էր Իւզանդեան կայսերաց հետ երբեմն դաշնակցելնին՝ Թշնամութեամբ ընդ Աւրաբացիս, Թէ և ոմանք այլ թ դարուն բնակիզբները (820) մահմետական եղան՝ որ Աւրաբացւոց հաճոյ ըլլան և չնեղուին 'ի Թուրքաց:

Բայց ասելի չատերն, ըստ աւանդութեան, այն կողմերը հին Հրէից գաղթականներէն (կամ ուրիշ պատճառաւ՝) հրէական կրօնէ հետևե-

ցան. մինչև պատմեն Հանապարհորդք Թէ թ–ժ դարուց մէջ անոնց Թագաւորներն Հրեայ էին. և շատ նշանաւոր է առ քանասէրս՝ ժ դարուն կիսուն մօտ դէպք մը (եթէ իրաւ է). Անտալուսիոյ (՚ի Սպանիա) Արաբացի Թագաւոր մ՚ուներ Հրեայ պաշտօնեայ մը Ռաֆ Խատոյի անուամբ, որ Թղթով Հարցուց և տեղեկութիւն ուզեց Խազրաց Թագաւորէն իրենց կրօնից և ծագման վրայօք. նա այլ պատասխանեց և իմացուց՝ որ Խազիրք են ՚ի Խոլարայ՝ յեօթնեերորդ ոլորմայ, որոց առաջինն այլ կ՚անուանէ Սիէյոր՝ որ է մեր Հայկն, ըն Ծանուր, թն Պոլտոր, ժն Սաբիր (Սաբիրք), և այլն. և կ՚ըսէ Թէ Վոլկայէն գրեթէ ինչուան Դանուբ կու տիրէին: Իր նախորդաց մէկն առաւածային յայտնութեամբ ընդուներ էր հրէութիւնը, և ինքն (գրողն) Յովսէփ՝ տասնևչորրորդ հրեայ Թագաւորն էր Խազրաց: Ուրիշ կարևոր գիտելիք այլ կ՚աւանդէ, զոր հոս յիշել աւելորդ կու սեպեմ, Հայկակ: Բիւզանդիոյ և Ռուսաց պատմութեան մէջ, որոց երկուքն այլ սահմանակցութեամբ գործեր ունեցան ա-նոց հետ, ինչուան ԺԱ դարուն առաջին քառորդը կու յիշուին Խազիրք. և ըստ ոմանց՝ այն ա-տեն (կամ յամին 1016) Ռուսք բոլորովին նուա-ճեցին զԽազիրս: Սուտակ մէկ կողմէն Ռուսք երբեմն նեղեալք ՚ի Խազրաց՝ կամաց կամաց զո-րացան նաև տիրացան անոնց սահմանաց. մէկայլ կողմէն բուն տիրոջք և անյիշատակ ընդոջք, և Սկիւթացի ազգաց գլխաւորութիւնը առնոջք՝ յետ այնքան նախայիշեալ հզօր ու նեղող և ա-պատակող ժողովրդոց՝ եղան տակաւ թո-ւոյ:

10477396

Զ

Թոռըփ ազգն որ յետ ամենայն ակիւթացական ազգաց հասաւ նախիշխանութեան և գերազանցեց քան զամենքը, թէ ընդարձակ թէ երկարատև աշխարհակալութեամբ և թէ քաղաքակրթութեամբ, ինչպէս՝ ի սկզբան ըսի՝ ի հնուց առանձին զատ ազգ մը չէր Ճանչցուած, այլ շատ զատանուն ազգք կամ ցեղք միանգամայն սեպուէին Սկիւթացի կամ Թուրք: Հին պատմչաց կամ աշխարհագրաց մէջ՝ և գարէն առաջ այս անունս որոշ պրուած չիգտուիր, այլ մօտ կամ ծռած ծեքաճ հնչմամբ մը. մինչև անկէ գրեթէ հազար տարի առաջ Երոդոտոսի յիշած Սկիւթացւոց նախահայր Տարգիպաոսն այլ՝ բանաձերք Ճանչնան Թոռըփ կամ Թուրգամ[1]: Ըստ արևելագիտաց՝ Հընդկաց հին սանսկրիտ լեզուով գրոց մէջ Թուրփա կոչուի այս ազգս: Ջ գարէն ինչուան ծ գար՝ աեւելի կամ պակաս ծանուցեալ և յիշեալ է Թուրք ազգն. անկէ (ծ գարէն) եառև քալածանօք եղած՝ իբրև աշխարհակալ ազգ մը. իսկ յետ ծդ գարուն իբրև առաջին և ախրող ազգ արևմտեան Ասիոյ: Ըսեր է որ այս Թուրք ազգս՝ աշխարհիս ամենէն հին, նշանաւոր և բազդատական ազգաց մէկն է. և որուն բազդին կամ սահմանին ծայրն գեռ անծանօթ է, ինչպէս նաև իր իշխանութեան տակ ընկած շատ ազգաց այլ: Նման այն գետոց՝ որոց

1 Բաշխու մեծ պատմիչ Թաթարաց՝ ի ծդ գարու յիշէ Թուխրամ անուամբ երկիր մը Պայքալ լճին արևելակողմը, զոր արևելագէտք սահման ստուգաբանեն: Թուրքք՝ ինչպէս իրենց՝ այսպէս այլ Հայոց նահապետ Ճանչնան զԹորգամ, անոր համար այլ զմեզ և զիրենք հօրեղբօրորդիս անուանեն:

հեռաւոր ակունքն ծանօթ, միչեւն ընթացքն ծածկուած կամ անորոշ մնան. շատ մանր վտակներ՝ որ անոնց մէջ կու թափուին կամ անոնցմէ կ'ելլեն՝ կարծուին թէ այն մեծ գետեն են, և անոր անունը կ'առնուն. բայց ինքն գետն իւր երկար սահմաններ անցնելու՝ նորէն հեռու տեղ մը՝ ի յայտ կու գայ՝ հզօր և լայն, և անկէ ետև ամեն նուն յայտ յանդիման յորդասահ կ'երթայ ու կ'երթայ:

Թուրքաց բնաւայրն ուր ըլլալն ըսի առաջ և ինչպէս կոչուիլն. նոյնպէս յիշեցի որ Թուրքք, Խազիրք և Հեփթաղք առէպ չիոնիին կարտու հետ՝ ի պատմչէից. անոր համար թէ և չ-ի դարուց մէջ շատ հեղ յիշեն նոքա զԹուրքս, բայց չեմ գիտեր կամ չեմ ուզեր այսօր մանր պրպտել, թէ անոնցմէ ո՞րն ըսուն Թուրք և ո՞րն օտար է. հաւանականն այս է՝ որ՝ ի հնուց ժամանակաց Թուրքք առանձին ցեղեր և ժողովուրդներ բաժնուէին, և զանազան խաներ և իշխաններ ունէին, երբեմն ինքնագլուխ, շատ հեղ մէկու մը գերագոյն իշխանութիւն ճանչնալով, որ և Խաքանաց խաքան կամ Մէծ Խոփան կոչուէր. երբեմն այլ ցեղերուն մէկուսով ուրիշ մերձաւոր հզօր ազգի մը հարկատու կամ հպատակ սեպուէին, ինչպէս էին Խազիրք և Հեփթաղք, (եթէ այս եւրքիններս այլ չէն Թուրքի կամ Թաթարի խառնուրդ). որոց մերձաւոր են, (թէ ոչ նոյն այլ) Ճուճէնփ կամ Ճուան-Ճուանք, և թուին Ճուճն յիշեալք՝ ի մերոց նախնեաց, որոց տէրեցին Թուրքք՝ ի կէս չ դարու:

Թուրքք երեսից միչեւն դարուց առեն՝ (՝ի չ–ժ դարս), Ուրալ գետէն ինչուան՝ ի Դնիպէր և՝ ի բնիկ Թաթարս տարածուած սեպուէին զանազան ցեղերով, որոց գլխաւորքն կամ մեզի ծանօթա-
պոյնքն են՝ այս յիշեալ միջոցիս (թէ և ոչ ամենքն

այլ մեկ տաեն), սկսեալ 'ի հիւսիսոյ արևմտից՝ (ուսկից և սկսան իրենք ծանօթանալ արևմըտեսոց) , նախ Ուրալ գետոյն վերին կողմերը Թափառող Պաշխիր՝ զորս համարեցանք մեր աշխարհագրին ըսած ահաւոր Բուշխ ազգը. յետոյ նոյն գետոյն (զոր արևելեայք Եայըխ կամ Եայիկ կոչեն) վարի կողմերը և նաև անոր ու Վոլկայէ միջից՝ Փաչինէկ, զոր մերայինք և Բիւզանդացիք և այլք կոչեցին Պաճինէկ, Պէճենակ, և այլն [1]. և ըստ ոմանց նոյն են տաճց հետ կամ մերձաւորմբ՝ Գանգըլը կոչուած Թուրքք: — Ուրալի բերդին արևելակողմը, որ է ըսել կազբից ծովեան հիւսիսային կողմը՝ զանազան ցեղեր ապրին ըլլան, յորոց յիշեն Արաբացիք յ'Ասքէլ և Թէրկէս: — Կազբից ծովեան և Արալայ ծովակին միջոց ամենէն նշանաւոր ազգատոհմն է Ղուզ կամ Օղուզ կամ Կուզ ըսուածն, որ մերոց և արևմըտեսոց ծանօթ է Ոզ անուամբ. որք և ըստ ընդհանուր Սիհոնի՝ երեք տոհմ կու զատուէին, 'ի Վերին, Միջին և Ստորին. բնական կազմուածով քան զուրիշ տոհմակից իրենց ազգեկ կամ կարճահասակ էին, այլ ուժով երբեմն գերազանցեցին քան զամենքն: Ասոնց մերձաւոհմ կամ սերտընդ Թուրին Խալէջ որ մինչև հիմայ ծանօթ են հոն: Ընդհանուրին իրենց սահմանակիցքն 'ի հարաւոյ արևելից՝ Գարլուք՝ ամենէն մեծահասակք և զօրաւորք սեպուէին, միանգամայն և նախնչականք, զի ասոնց էր Խազքանաց խաքանն. և Թերևս ասոնց խաքանն էր կչխոլ ուղ խաքանաց՝ Արսլան անուն (Արսլան?) յիշեալ 'ի Բիւզանդացւոց յամին 580: Ասոնց մեծ սերտութեն տևեց մինչեան յ'ԺԲ դար, յորում Զինաց գլխակից Խի-

Այս անուններ՝ ըստ Թուրքաց՝ Պաճանագ, քննայր կու նշանակէ ըստ ոմանց, կ'ըսե Համիդ:

10477396

Թան աշխարհին տէրն անկէ հալածուելով՝ եկաւ տիրեց այս Թուրքաստանի կեդրոն երկրին և անուանեց Գարա-Խէնայէ. գար մը վերջը ձինկիզ խան նուաճեց զայս այլ:

Բուն և առանց ուրիշ անուան յիշեալ Թուրքաց հզօր տէրութիւնն՝ ջ դարուն կիսէն մինչև ը դարուն կէսը քշած է, յորում նուաճեցին զանոնք՝ իրենց հիւսիսային արևելակողմի բնակիչ Թուրքք: Անոնց հիւսիսակողմը Թուխ Քէհոտ ըստած ցեղն. և հարաւակողմն կամ դէպ յարևելս՝ մեծ ցեղն Ո-յղուրտ, ինսամի Ղուզաց, որ և ցարդ յիշուին: Գար մը ետև զասունք այլ նուաճեցին իրենց հիւսիսային արևելեան կողմերը բնակող և ինչուան հիմայ հռչակեալ Խըղըտ, յիշեալք՝ ի ջ դարէ [1]. որոցմէ վար՝ ի հարաւակողմն էին այն Դահպնակ տոհմն՝ որոց մայրաքաղաքը յիշեցինք Քուչան կոչեալ, որով և խառնուին ընդ Հեփթաղաց և ընդ սահմանս Դխպէթ աշխարհի:

Արդ այս ամենայն ցեղից երկրին՝ որ մեծաւ մասամբ անապատ է, հիմայ հիւսիսակողմը բըռնած են Խըրղըզք զանազան ցեղեր բաժնուած. սևէլի վերնակողմն այլ Ռուսաց Օրէնպուրկի և ուրիշ նահանգներուն մէջ՝ բնակին Խապախ. իսկ վարի (հարաւային) կողմն է Խուարէզմ (հանդերձ Խուար անապատիս) և Պուխարայի իշխանութիւնը. արևելակողմն այլ Թաթարաց մնացեալ իշխանութիւնք, զորս հիմայ Ռուսք կուռնըսաձէն և գրեթէ կուռ վերցուի Թուրքաց և Թաթարաց անկախ ազատութիւնը՝ իրենց անհոգ ապատ և անապատ երկիրներուն:

1 Մենանգր:

10477396

Է

Դառնալով առ յիշեալ ցեղս Թուրքաց, ասեմ զհեռագոյնն և արևմտագոյնն Փաչինէք՝ բնապէս առաջին ազ եղեալ ի ծանուցեալ և քաղաքավար աշխարհս մտնելու և բնակելու. թ գարուն կի՛ սուն՝ արդէն ոչ միայն Վոլկա գետն անցած էին այլ և զՆեբեր, և արդէն Ազախու ծովեզերքը բռնած ինչուան Դանուբայ կողմերը տարածուէին. երեսից առջևէն քշելով ինչուան Դանուբայ բերանը զՈնգուր Հոնաց ցեղը, որ առաջնորդու. Թեամբ Արլատայ՝ հաստատեց Մաճառաց տէրութիւնը. բայց երեսք այլ հալածուելով յՈւղուր ցեղէն, և յետոյ (894) յՈւզաց՝ օգնու. Թեամբ Խազրաց, քշուեցան ինչուան ԲրուԹայ և Սերեթայ հովիտները, և երԹալով մօտեցան Բիւզանդացւոց սահմանաց. և երբև բաւական ուժով աէրուԹիւն մը՝ շատ հեղ անոնց դաշնակցելով՝ օգնական եղան ընդդէմ այլոց Թուրքաց և Խազրաց, և ուրիշ պատերազմներու մէջ. երբեմն այլ ասոնց և Ռուսաց հետ՝ զՅոյնս նեղեցին մին. չև ԺԱ. դարուն վերջերը. յորում Ուզք բոլորովին նուաճեցին զՓաչինէքս, ինչպէս նաև զԽազիրս, և սկսեցին գրեթէ բոլոր Վոլկայի և Դանուբայ միջոց՝ դէպ ի Կովկաս և ի Ս և ծով սփռուելով: Ցետին յիշատակ Փաչինէքաց առ պատմիչս մեր հանի ի սկիզբն ԺԲ գարուս (1108), յորում Գոզ վասիլ ասոնցմէ գունդ մը տուաւ յօգնուԹիւն Պալտուինոյ կոմսին Ռուհայոյ: Իսկ առաջին յիշատակ հզօր ցեղին Ո՛ղուզ՝ կ'ընէ պատմիչն Մեսրովպ, երբև ընդ այլոց սկիւԹական ազգաց Հոնաց և ՄազգԹաց՝ Պարսից օգնական եկած ընդդէմ Հայոց՝ Ձերմաւայ գաշտին մեծ ճակատամարտին մէջ, յամին 372. բայց եԹէ այն

աստեն չէ՝ յայտ է որ պատմըչէին աստեն՝ ի ծ դա-
րու ծանօթ էր Ուզին, զոր յաջորդ դարուն մէջ
շատ հետ յիշէ և Մատթ. Ուռհայեցի, գեռ իբրև
Պածինեւկաց հետ նկզակակից։ Ուզաց իշխանու-
թիւնն ծԱ և ծԲ դարուց մէջ զօրացաւ և տիրա-
ցաւ մինչև՛ ի բանանուն Թաթարաց, և արևմը-
տեայց այլ ծանօթացաւ, Թէպէտ և պէտպէս ա-
նուամբք. վասն զի շատք՛ ի մինչին դարու Կոհան
անուանեն զանունք, ինչպէս մեր Հեթում պատ-
միչն այլ. որ և վկայէ Թէ շատ ապատազէն զօրք
ունէին, և տարածեալ տիրէին Կազբից և Պոն-
տոս ծովուց միջոց՝ Կովկասայ սարրոսը լայնա-
սփիւռ տափարակ երկրին, ուր և՛ ի Քուպան գե-
տոյ սահն այդ անուանը (կամ տուին անոր)։ Եր-
կրին այդ տափարակ բնութեանն համար Ռուսաք ա-
նուանեցին զասունք Բոլովեց, այսինքն դաշտային
կամ դաշտաբնակ. զնոյն (խոպան գետին) նշա-
նակէ էջլադայի Թուրքք լեզուաւ Քոփչաք անուանն՝
որով կոչին սոքա. և զոր ծՒ–ԺԴ դարուս պատմիչք
մեր գրեն Ղըլչաք, Ղիլաղ, Խփչախք, և ատուգաբա-
նեն՝ ի Վրաց լեզուէ Զոր-ոման, ըստ Մխիթարայ
սարկաւագ, «զի խիտ ձոր ասի, և չոխն ամուն. որպէս
» Թէ յամանն կան՝ ի ձորս (Կովկասայ), և ըստ
» պետոյից հանեն՝ ի ժամանակս ժամանակս»։
Կ՝իմացընեն[1] այլ Թէ առաջ այն երկիրն կ՝ըսուէր
Դաշտ Խազրաց, ինչպէս իրենց ատեն՝ ի Տաճկաց
այլ՝ Տէշտի-Քըփչաք. իսկ ասէլի առաջ՝ ըստ Սահ-
մանոսի Ուռպելեանց կոչուէր Աշխարհ Խազար-
ջոց, զոր յիշէ հին հեղինակ մեր Եղիշէ։ Արդ
Ուզք-Կումանք-Քափչաքք նուաճելով զԽազիրա՝
խառնուեցան անոնց հետ. նաև ըստ Մխիթարի՝
ոմանք քրիստոնեայ այլ եղան, և կ՝օգնէին Հայոց
և Վրաց։ Անունք էին բուն մեծ և մինչև մեռն ազ-

[1] Սահմ. Ուռպելեան։

գին, որոց սերեց ՚ի կէս ժԹ դարու Պայտու խան որդի Օխադայի որդւոյ Ճինկիզ-խանի, և անկէ եւ ևս Թաթարաց անցաւ սկիւթական տիրապետութիւնն. յորոց հալածեալքն այս տեղէն՝ գացին իրենց արևմտեան ցեղակից եղբարց քով, որք Պաձինեկաց տեղը բռներ էին և մինչև ՚ի Թրակիա սփռէին. ոմանք այլ անցան գնացին ինչուան Ունկարաց երկիրը (Մաճառք), որոյ համար ա. ռնք այլ Կումանք կ՚ըսուէին: Իակ մէկ մասն այլ Ուզաց՝ ճնացեր էր միշտ իր հին բնաշխարհին մէջ յարևելս, Խուարէզմի և Ճիհոունի սահմանները, և պահէր իր հին անունը. որ ըստ աւանդութեան նոցա ծագեալ է Յոլուզայ՝ որդւոյ Գաբա-խանի՝ (իբրև վեցերորդ ՚ի նոյ նահապետէ). որք և զարձեալ կ՚ըսեն անոր համար՝ Թէ իր ազգականաց հետ կռուելով վասն աստուածպաշտութեան՝ իրեն հաստակակիցները անուանեց Ույղուր, այսինքն օժանդակ, օգնող. և անկէ ծագեցաւ Ույղուր ցեղին անունն:

Ուզաց մէկ մասին դէպ յարևմուտս երթալն՝ Թուխ Թէ իրենց դրացի ցեղերէն նեղուելուն համար եղած է. և ճնացեալքն հարկաւ աւելի սակաւ ըսյան. և յ՚ետ գարուն ուրիշ շատ ցեղից հետ խազրաց ինքնակալութեան տակ ընկած էին:

Ը

Ահա առեննեբս Ղուզաց գլխաւոր ցեղատեսից մէջ անուանի էր Տէգաք կամ Թօխտաք. որ և ըստ աւանդութեան նոցա 33դ էր յէֆրատեսպայ Թուրանի (Սկիւթիոյ) հսկայ Թագաւորէն, (որ հին Պարսից քաջից դիւանացուն էր). խազրաց բէկին կամ խաքանին այլ մեծ իշխաններէն մէկն էր. և կոչուէր ևս Թէմուր-Պուղի, այսինքն Երկաթապինդ, երկաթածայր նետ կամ երկաթա-

կապ ալեղ լաւ գործածելուն համար, (որ լսա մէր ոճով ըսելու էր հաստատէն կամ հաստատի գ՚ընտրէ) : Սա է նախահայր առ մեզ նախագուշակեալ կամ համբաւեալ աշխարհաւեր ՆԵՏՈՂՑՑ : Ալեզանը պէս խատաւիրտ կամ մեծախրտ ըլլալով՝ գժտեցաւ Խազրաց խաքանին հետ և կ՚ուզէր գլուխ քաշել. բայց մինչդուրեթեամբ բարեկամաց դարձեալ հաշտեցաւ և պատիւ գըտաւ՝ի խաքանէն, որ Տէգապայ Սէլտուկ որդին իր արքունեաց մէջ անուցանել տուաւ. և երբ քիչ առեն էն Տէգապ մեռաւ՝ Սէլճուկ անուանեցաւ զօրավար: Սա առանելով որ արքունի իշխանք վրան կուռնախանձին, ինքնակամ Թողուց արքունիքն այլ[1] և եկաւ (յամի 956 կամ 964) Ամրղանտայ և Պուխարայի կողմերը, ու բնակեցաւ՝ի Ճանդ: Հոս մահմետական կրօնքն ընդունելով[2], սկսաւ ոչ միայն պաշտպանել կրօնակիցքը՝ այլ և հալածել նեղել այլահաւատները, և իրեն կոչ ժնակից շաղկընել, որովք զօրացաւ և աթոռը հաստատեց՝ի Պուխարա. ուր և մեռաւ ԺԱ. գ. տարն սկիզբները (ըստ ոմանց յամի 1020) 107

1 Մեր Կիրակոս պատմիչն՝ Սէլճուկեանց բնավայրը կ՚անուանէ «Սղնախն՝ որ է խարչուխ լեառն, յորմէ Սալճուխքն են»: Իսկ Միխայէլ Ասորի կ՚ըսէ, «Ելին Թուրքք յերկիրն Աբխազէ. այս եղև սկիզբն ելից Թուրքաց»: Ուրիշ տեղ կ՚ըսէ թէ յԱրաղայ աշխարհէն՝ որ՝ի սահմանս Պարսից՝ ելան Սալճուկեանք բռնադատեալք՝ի Մահմուտ Սուլտանէ:

2 Այս առեններս ուրիշ Թուրք իշխան մ՚այլ Ձիհունի և Սիհունի միջոցէն՝ Սաղըր կամ Սէբէկ՝ մահմետական կրօնքը ընդուներ էր, և իր նախնեաց սովորութիւնները քիչ մը հեռանալովն իր հեռուղքն և ազգն՝ Թիւրքիման (Թրքակրօն) (Թիւրքման) կոչուեցան, այսինքն Թուրք քի նման. և ասոնցմէ մաս մը Խուարէզմի մէջ բնակեցաւ, մաս մ՚այլ անցնելով յարեւմուտս՝ եկաւ՝ի Հայաստան:

տարուան: Իրմէ առաջ՝ բերդ մը պաշարելու ա-
տեն՝ մեռեր էր իր անդրանիկ որդին Մկրտչէլ,
երկու կտրիճ Թոռլուվ, Զաքըր պէկ և Տօղրուլ պէկ,
զորս մեծցուց և կրթեց պապերնին: Ձեռս անոր
մահուան՝ այս երկու եղբայրքն միաբանք և միա-
սէրտք՝ սկսան աշխարհակալութեան. շատ պա-
տերազմներով հալածեցին զԱլփէկին կամ Իլէք
խանն Սմրղանտայ: Ըստ վկայութեան բազմաց՝
Մահմուտ Սապըքետտին (Սէպէքթէկին) Վազ-
նէեան սուլտանն՝ հրաւիրեց զանոնք ճիհօնը
անցնիլ և Խորասանի սահմանները գալու, թէ և
շուտով զղջացաւ՝ տեսնելով անոնց ուժը. ոմանք
այլ՝ (որ այնքան հաւանելի չէ) բռնի և գերու-
թեամբ բերած կ'ըսեն զանոնք:

Այսպէս ասանգեն և մեր Միխայէլ Ասորին, և
Վահրամ Տիգրանայ որդին կամ Տիգրանակերտ-
ցի պատմիչ մը (առ Վարդանայ). այլ ստուգա-
գոյն և Մխիթար Անեցին, որ «Ցոլով աշխատ
» եղէ, կ'ըսէ (առ Վարդանայ) գտանել զորպէսն
» սուլտանացն՝ որ 'ի Թուրքաց, և գոհ չնորհօքն
» Աստուծոյ այսպէս. Մահմուտն զոր ասացաք՝
» Սպքթանայ որդի... 'ի գնալն յօգնականութի
» ազգին՝ որոց գլխաւորն կոչիւր Խորղան Պօղը-
» ղան (այսինքն Գաւրղխան որդի Պօղրախանի,
» տէր Գաշկարայ, զոր նեղէր Իլէկ խանն), 'ի
» ձանապարհին պատահէ բազմութե ինչ Թուր-
» քաց (Սէլջուկեանց), և 'ի գառնալն նոյն ձա-
» նապարհաւ՝ մեծաւ յաղթութեամբ, առեալ
» զամիրայն նոցա զԱփաղու (որ է Բէկ կամ
» Բայղու որդի Սէլջուկի), բերէ 'ի Խորասան և
» դնէ 'ի կապանս. և ազգ նորա (եղբարքն և եղ-
» բօրորդիք) եկեալ խնդրեցին... և ոչ եառն:
» Իսկ նոցա բարկացեալ անցին ընդ Ջահան՝ ամե-
» նայն բանակօքն իւրեանց, և զանձինս 'ի մահ
» եդեալ կռուեցան և յաղթեցին, և առին զնը-

» շաւորն, և կոտորեցին զերս Սուլտանին 'ի Դա-
» դանղանն մօտ 'ի Մրմն...: Իսկ յառաչադէնն 'ի
» Թուրքացն՝ որում անուն էր Մուսէ Սելոյ (Մու-
» սա Բէկ) Սարջուքեայ որդի, ունէր հինգ եղ-
» բօրորդիս, որոց անուանքն Աբուսաալիմ, Դա-
» ւութ, Զաղրբէկ, Աբուտաալիփ, Տօղրիլ-բէկ,
» որ և առ զինչհանուելիւն սուլտանութեանն», և
այլն: (Ըստ վերոյգրեալոցս՝ Զագր և Տօղրիլ՝ որդիք
են Միքայէլի մեծ որդւոյն Սէլճուգայ):

Ոչ այս պատմիչներս (Մխիթար և Տիգրան) գտուին այսօր, և ոչ անտնցմէ հինն և մեծ իմաստասէրը գրիչն Յովհաննէս Սարկաւագ, որ նոյն բաներըը քննութեամբ գրեր էր, և որոյ քանի մը խօսքն մնացեր է (առ Սամուէլի Անեցւոյ). «Ըստ-
» կիւրեղեան ազգաց՝ ոչ հելլենախոհէն այլ բար-
» բարոսացն՝ էղեալ մուտ յաշխարհս, որպէս ա-
» սեն, այսպիսի պատճառաւ: Զյոլովս նուա-
» ճեալ ազինս որ յայնմ ժամանակի Թագաւոր-
» քըն... և կրեալ ապա զընդդիմութենէն 'ի Հընդ-
» կաստանացն՝ ոչ սակաւ ժամանակս, հրաւիրեն
» յոգնաւատս խոստմամբք պարգեւաց զնուաճ-
» դութեան 'ի մարտակցութենէն. և մարտուցեալ
» նոքօք ժամանակ լինչ՝ ընկրկէր (Մահմուտ) զա-
» պըստամբեն. և զի կամէր միւս անգամ գումա-
» րել 'ի մարտ՝ անդրէն դառնալ արգելոյր զե-
» կեալն. և 'ի լինել պատերազմանն՝ լքանէր զկեն-
» ցաղս արքայն: Իսկ Մեգացւոցն (որ Թուրքն
» ըստ Մխիթ. Անեցւոյ՝ Մարաց Ռէ կամ Ռա-
» գա երկրին տեարքն) էղեալ դաշնադիր ընդ
» օտարան՝ մերժեն զՊարսիկքն, և դրաւեն զին-
» խանութիւնն, որպէս ոմանք ասեն, Սկիւթա-
» ցւոցն, այլ որպէս վարկանիմ, Բակտրիացւոցն.
» (և ոչքա) բառնան զյոլովից ազանց աէրութիա
» մեծամեծ պատերազմօք անզսպմաբար զաւերե-
» ալն սատակելով»: Ընդհատ վարդապետս կ'ե-

լևի ըսել, թէ Ղազինէան Պարսից Հպատակքն՝ անոնցմէ ապստամբելով՝ յօգնութիւն կոչեցին զՍկիւթացիս, զորս լաւ ևս էր ըսել Բակտրիացիս. վասն զի այն հին աշխարհին կողմերը՝ որ է Բահլ՝ նախ տիրեցին այս Սկիւթացի ըսուած Թուրքքն՝ սերտունդք Սէլճուկի զոր Սարջուկ կոչէ պատմիչս (Սարկաւագ)։ Ուրիշ մեր մէկ չափաբան պատմիչ մ'այլ՝ (Վահրամ Րաբուն 'ի վերջ կոյս ծգ դարու) ասոնց համար կ'աւանդէ.

« Ի հիւսիսոյ եղեն շարժեալ
Ազգ՝ որ կոչմամբ Թուրք անուանեալ.
Ի քան ի ջորս ցեղս ոլոշեալ
Զիշխանութիւն Տաճկաց առեալ.
Թէպէտ յաղանդ նոցին դարձեալ,
Եւ կայսերաց յաղթող գըտեալ ». ևն, ևն։

Այսչափս բաւական սեպենք, Հայկակ, այս նոր տիրապետող Թուրք ցեղին՝ (Սէլճուգեանց) ծագման վրայ, ճանչնալով մեր հին հեղինակաց ոմանց կարծիքն այլ, և ցաւելով անոնց գրոց կորստեան կամ մեր ձեռքը չհասնելուն վրայ. որով անոնց քով չգտածնիս՝ առ օտարս և բնիկ պատմիչս արևելեան ազգաց բնաւրեննք, մանաւանդ այն Նեստորաց առաջին աստիճան գլխաւորը և պատճառը, որ իմ այսքան երկայն խօսից և բարբարոս յիշատակաց պատճառ եղաւ։ Ոսակից և որմ առաջնորդութեամբ եկած էին անոնք 'ի տունն Սենեքերիմայ 'ի Վասպուրական երկիրը, այսպէս կանուխ՝ յամին 1019 (ինչպէս որ ալիտի պատմեմ քեզի ուրիշ օր մը), մինչդեռ ուրիշ և ոչ մէկ արևմտեան Ասիոյ կողմ մը լուսած էր Սէլճուգեանց անունն և գործն։

10477396

Թ

Սէլջուգայ Թոռնեցն Ճիհանէն ասպին անցած ախրապետելով՝ կամաց կամաց սկսան դէպ՝ ի հա-
րաւ յառաջել, և Ղազնէեան Մահմուտի քոյն սահմանաց՝ այսինքն Խորասանի մօտենալ. քայց
դեռ ակնածելով անկէ, որ կամ երեսց քարերարն
էր կամ կըրնար զօրաւոր թշնամի ըլլալ: Սակայն
աշխարհակալութենէ աւելի էր երեսց աւարա-
ռութեան փափագն, և ալ աւելի գրգռուէր՝ լսե-
լով արևմտեան աշխարհաց հարստութիւնը. զոր և
ցանկութէ հեռուէն քննելով ինչպէս որ՝ ի բարձրէն
որսը կու դիտէ բազէն, յանկարծ Նեստորայ առ-
մապետ բազէանուն Զապրպէկն այլ՝ Թեւերը թօ-
թափելով, հետը իր Թուրքերէն զատ գունդ մ՝այլ
Թիւրքմէն առած, կատարձն ուսերուն վրայ ցը-
ցած, ալեկն՝ ի ձեռին, նետերն աջկնէն թափը-
նելով, կորեց անցաւ Խորասանէն յերկիրն Մա-
րաց, անկէ այլ յԱտրպատական և՝ ի Հայս: Մին-
չև ուր երթալն յայտնի չէ. քայց հասած կոխած
է ինչուան Յունաց ինքնակալութեան արևելեան
սահմանը, որ այն աստէն Հայաստանի մասն էր.
և յանկարծահաս մըրկի մը պէս կարկատելով կո-
խած տեղը՝ կրցածը կողոպտեց իրեց, դիմացը կեցող-
ները զարկաւ, ինչուան շատ բերդեր այլ անըզ-
գոյշ գտնելով՝ նուաճեց. և շրջան մ՝առնելով
նոյն աւարառութեամբ և աւերածութեամբ՝ դար-
ձաւ յետս իր տեղը: Մահմուտ սուլտանն լսելով
անոր իր երկրէն անցնիլը՝ դժարեր և պատուի-
րեր էր որ՝ ի դարձին բանեն զինքն. քայց այն
խորամանկն ծպտելով օտար փեռուբներով՝ (վա-
ճառականի զգեստով), անցաւ Մահմուտի սահ-
մաններէն և հասաւ՝ առ եղբայր իր Տօղրուլ՝ ի
Ռուխատա:

Ահա անշուշտ այս աւարտուռւ Բագէին առաջ-
առկուԹեան գարձին առեն էր՝ քէչ մը վերջը քե-
զի պատմելու դէպքս Վասպուրականի մէջ յա-
ռաջին մուան Նետոլաց՝ ի Հայս. որոց ճիւրանե-
րէն փախաւ հնացեալ Արծուին Աւսւր-Հայոց
(Աննէքեւրնին Արծրունի). և ալէկ ժամուն աճա-
պարեց: Վան զի նոյն տարին (1021) Զաքըրայ
եղբայրն անուանին Տուղրիլ այլ արշաւանք մ'ը-
րաւ՝ ի Հայս, մինչև՝ ի կենդրոն Այրարատեան
աշխարհին՝ ի Դուին. Թէ և ինքն ալ եղբօրը պէս
շուտ գարձաւ, և Թեւրևս անկէ աւելի ծեծուած.
վան զի Բագրատունեաց ապարապէսն՝ քաջն
Վասակ Պահլաւունի (հայր Գրիգորի Մագիս-
տրոսի՝) հակայ զօրավարի մը հետ ըմբշամարտե-
լով՝ յաղԹեց, սպաննեց, ցրուեց բանակը. ինքն
ալ յետ յաղԹուԹեան դարանակալի մը ձեռօք
սպանուած՝ նահատակ սեպուեցաւ: Պատմիչն՝
Մ. Ուռհայեցի՝ այս առպատակողքս ոչ Սէլջու-
գեան Թուրք՝ այլ Դեյլիկ (Տիլէմ) կ'անուանէ.
այսինքն այն ժողովուրդն՝ որ Կազբից ծովուն ա-
րևմտեան հարաւային եղերքը կու բնակէր՝ մօտ
՝ի Գիլան, տահմանակից հին Կազբից Հայոց կամ
Փայտակարան աշխարհի. որ և յիրաւի առանձին
ԹագաւորուԹիւն կանգնեց ծ դարուն մէջ Խալի-
ֆայից տէրուԹեան երկպառակուԹեան առեն.
ատկայն Անոյ մօտ Մարմաշէն վանաց եկեղեցւոյ
գեղեցիկ արձանագրուԹեանց մէջ՝ Վահրամ եղ-
բայրն Վասակայ՝ կ'ըսէ տարբ համար. «Նահա-
» տակեցաւ՝ ի Թուրքաց պատերազմի»:

Ահա դիպուածքս եաև 20 տարուոյ չափ Թուրքք
քաշուեցան յարևմտից, զարևելք տէպհականե-
լով իրենց, վերջընելով Ղազնէւեանց տէրուԹիը
և ուրիշ մանր Թագաւորներ. Տուղրիլ անուա-
նեցաւ սուլտան (1038), յետ մօտու եղբօրն՝
Զաքըրայ. ամիրապետէն այլ առաւ պատիւ ու

հատատուրեան իշխանութեանը. ապա համար. ձակ դիմեց յարևմուտս, և աւելի համարձակ ու շատ անգամ՝ ի Հայս, ուր Բագրատունեաց տէրութեանն այլ դադրեր էր: Գան տարուան մի. ջոց (1042-1063) գրեթէ ամեն տարի մեր աշխարհին մեկմեկ կամ նոյն կողմերը աստատակեցին Թուրքք, և ահա անոնց ըրածն՝ լսելու ու չլսելու արժանի՝ ոչքսաբանէ Լաստիվարնցին, մնա մ՚այլ Մատթէոս Ուռհայեցի. զորս կրնաս աչքէ անցընել, եթէ սիրես դու այլ, Հայկակ, արեան ու կրակի վրայ ալցուռնք թափել. մանաւանդ եթէ Արխատակիսի հետ հանդիպիս ի Վաղարշաւան (1044), յԱրզնի և ի Թլհուժ (1046), ի Բասեն (1048-1050), յԱրծն (1049), ի կարս (1053), ի Հարք (1055), յՕկոմի (1056), ի Բերկրի և յԱրձէշ (1054), ի դ Հայս և Տայս (1054-1057) ի Միջագետս Հայոց (1057), ի կամախ և Մելտենի (1058), ի Սեբաստիա (1060), ի Պաղին և Թլհուժ (1063). և այլն, և այլն: Կըրնաս երբեմն այլ սրբել աչքերդ, տեսնելով ամուր քաղաքաց (Անոյ, Կարնոյ և Մանազկերտի) ընդդիմանալն Թուրքաց. և առաւել լեռնորդ Սասնեցոց արիաբար կռուիլն ի Տարօն և անկից հալածելն զԹշնամին (1058): Սակայն այլ աւելի ախտի դառնացընեն զքեզ գործք Տուղրիլի եղբօրորդւոյն և յաջորդին, այն ահեղ առիւծուն (Էլփ-Արսլան) որ ութ լինն տարուան մէջ (1064-72) Թերևս հօրեղբօրը 20 կամ 30 տարուան մէջ ըրածները գերազանցեց չարաչար:

Անի՝ չքնաղագեղ քաղաքն քաղաքաց Հայոց՝ իբրև անճար սպանդ պրպտողիտ եղաւ, ըստ Պատմչին. ոչ Մանազկերտ՝ որ իբրև քսան տարի առաջ դիմացեր էր երկար պաշարման և Տուղրիլի ամեն բռնութեար բաբանեերուն, կրցաւ Ալփարսլանայ դէմ կենալ, և ոչ Հայոց և Յունաց միա-

10477396

բանեալ գումղքն՝ ամոր աշխարհաւեր բանակին գէմ։ Կայսրն Կոստանդին Դիւժէն՝ իբրև հինն Վաղերիանոս ՚ի Շապհոյ՝ բռնուեցաւ որս ընկաւ ձիրանաց առիւծանուն Սկլըռւկին, որ մանչելով էրա կոլմ կու յարձկէր և աշխարհիս աւերը փոխթացընէր, եթէ իր անկարծ և չարաչար մահն այլ չփուխթար (1072), մանաւանդ անկէ ետքը իր որդւոյն Մէլիք Շահին խաղալատէր Թագաւորութիւնն (1072-1092). վասն զի սա թէ և հօրը փափագը կատարեց՝ աշխարհակալելով մինչև ցեղը ովկիանոս, (այսինքն Միջերկրական ծովուն Ա. տրւոց), և մնաց հոն իր արեւամէջ կրակած տուրը, սակայն գարձուց ՚ի պատեանը, և բռնաբարնուածքեզոց՝ հայրաբար տէրատեաց։

Ա յս Ալփ-Արսլանայ գործոց յարմարի կամ յարմարեալ է Ներսէսեան ըսուած գուշակութիւնն, որ և Թուրկիոյս այլ ըսէ թէ «Յարի-
» ցեն ազգն այն Նեաոլաց... իբրև ընուցու 700
» ամաց ժամանակ (յետ մահուան Ս. Ներսի-
» սի)... յարևելից աշխարհէն, բուռն կազմու-
» թեամբ ժիր և քաջ առն և ձիոյ, տուսեր թևա-
» ւոր ընդ մէջ ածեալ...։ Եւ նոքա բարկութե-
» և ապականութեամբ աւերեացեն զերկիր լին
» իբրով և անձահարեացեն զամենայն զարևելք
» և զհիւսիսի և զհարաւ և զարևմուտք, մինչև ՚ի
» ծովն Յունաց, և զգեղեցիկ նաւահանգիստն.
» կոտորեացեն զհազարս և զբիւրս, և զամուս
» Թագաւորաց յերկիր կործանեացեն. և ՚ի նո-
» ցանէ դուլացեն ամենայն երկիր. զի ՚ի Տեառնէ
» ուղղին գնացք նոցա ՚ի վրէժխնդրութիւն աշ-
» խարհի ամբարշտելոց։ Որպէս արծուի երա-
» գամիւ ելացին ձեռով ընդ երկիր, զի Տէր կո-
» չեաց զնոսա յարևելից ՚ի ծագաց սրեգականն.
» և քաղաքք մի փախեացին առաջի նոցա, և նե-
» ւնք սպառեացեն զերկիր. արբուցանեն զնեաս

» Իբրեանց յարկեսն ամենայն ազգաց հեռաւո-
» րաց և մերձաւորաց: Խակ նեղլիք քրիստոնէից
» ազգն արևելեան լիապէսիք և անպատճիք նեւաո-
» զաց՝ ոչ քաղցեցեն և ոչ ծարաւեացին և ոչ խոր-
» շակահարք եղիցին վասն բերկրելոյ սրտից իւ-
» րեանց և յաջողութեան գործոց իւրեանց: Այլ
» աստաստակեացեն ընդ երկիր. և ընթացեն որ-
» պէս կարապետաք նեւռինն». և այլն: Յայտնագոյն
ևս նշանօք յիշէ կարծեցեալ գուշակութիւնն ըզ-
Տուղլիլ և զԱլփարսլան. «Բարկացեալ սրտմբ-
» տութեամբ Տէր... յարուցանէ յարևելից կոզ-
» մանէ... Խոտանայ՝ թագաւոր այլազգի և
» այլալեզու, անուն նորա Սուր և Թէթև և ըզ-
» պատ... ահեղատես և զարմանալի, ժպիրհ և
» սէգ և լիրբ և երկայնահեր. (և այլն):: Եւ գինի
» առաջին թագաւորին այնորիկ՝ զոր յայտ արա-
» րաք, նացի՛ և նոյն ազգէն նորին անուամբ ե-
» կրոյզ թագաւորն, ՛ի նոյն յաթոռ յարևելից՝
» որ առաւելու չարեօք քան զառաջինն, սերմն
» ժանդ և որդի դառնութեան. նա բարձցէ զքա-
» հանայապետութեան և զթագաւորութեան ա-
» թոռ ՛ի Հայաստան աշխարհէ. խոտորեացի յաջ
» և յահեակ, և կերիցէ զմնարմին բազկի իւրոյ, և
» ոչ յագեացի. այլ ինքն իւր ազգատոհմին ոչ
» խնայեացէ. և է գազան ատամիկ և յափշտակող
» յայտնեալ, և արագաթև արծուի օրինակեալ
» զնա. և ունելով զբաժակ դառնութեան՝ ար-
» բուացէ զամենայն հասակ մարդկան: Նա ըմ-
» պիցէ զոմն ՛ի թագաւորացն Յունաց ՛ի սահ-
» մանս Հայոց, մեծաւ յաղթութեամբ. (և այլն)..
» Եւ յետ այս բռնակալաց,.. նացի այր խաղաղ-
» արար... (Մէկնիք շահ) և խնամակալութ քրիս-
» տոնէից, բարեհամբաւ բարեաւասակ». և այլն:

Այս կարկառեալ մարգարէութիւններէն ա-
ւելի ազգու են մեզի մեր ժամանակակից պատմը-

էին (Ասատիվարտցոյն) զտոյնքն ոչընաճայնք. »Ո՞ր
» անգուանդք անհնարինք քան զԹուրքատան
» կամ զեզերա երկրի խորագոյն է, յորս մեր գե-
» րիքն հեռացեալ կորեան »..: Ուրիշ մեկնաւոր
մ'այլ ժամանակաւ [1] կ'ըսէ. « Ազգք Թուրքաց
» տիրեցին աշխարհի 'ի ծովէն արևելից (Կազբից)
» մինչև ցծովն արևմտից, և ոչ մնաց 'ի նոցանէ
» մինչև ցքարտանձաւ մի՝ որ ոչ մատնեաց Ա-
» ուաւած 'ի ձեռս նոցա ». և այլն:

Ահա այս աուեն նեաուղաց նեաուերէն փախչելով բազմութիւնք Հայոց՝ իբրև յաւիտենական մնաս բարով մը ըսին հայրենեաց և անոր սահմանաց, և հեռացան մինչև 'ի միջավայրս Եւրոպիոյ, 'ի Լեհաստան, և այլն:

Ձեռ մահուան Մելիք շահի՝ Սէլջուկեանց իշխանութիւնն իրենք չորս ձիւղ բաժնուեցաւ. գլխաւորն էր սուլտանն Պարսից՝ որ և տիրէր մեր աշխարհաց. երկրորդն՝ Սէլջուկեանց նախ քնաքած առեղերուն վրայ կ'իշխէր, այսինքն Խուարէզմ. երրորդն եղաւ սուլտանն Իկոնիոնի, այսինքն Ղոնեայ, և ամենէն աւելի երկարատեւ եղաւ, գրեթէ մինչև 'ի վերջ ԺԳ դարու, և դրակից ըլլալով Ռուբինեան Թագաւորաց մերոց՝ իրարու հետ շատ գործ ունեցան. չորրորդն՝ սուլտանք Հալէպի և Դամասկոսի, որոց 'ի կէս ԺԳ դարու (1260) տիրեցին Թաթարք:

Ժ

Ա յս ազգս (Թաթար) յեռին եղաւ սկիթական ստպաստակոլաց, միանգամայն և ամենէն հեռու հասանող, ամենէն հզօր կամ վայրագ, կամ լաւ ևս ըսել՝ ամենէն աւելի Ներգոշ. այնպէս որ

[1] Շարունակող պատմութեան Թոմ. Արծրունեաց:

մերայինք ասոր սեփականած են այգ կոչումը, Սուգն Նեպոլոյ. և Ներսխեան գուշակուեր ասոնց վրայ իսկին յետ Սէլճուկեանց: Թուրքաց ցեղակից և՛ի Թուրքաստանէ եկեալ դէպ՛ի յարեւելս ծաւալեալ և շատ տոհմեր բաժնուած էին Թաթիք, որոց առաջին նահապետին համար գաղթականի առաջնորդն՝ անծանօթ է. բազմաթիւ տոհմից գլխաւորներէն մէկն էր Մոլալ (Մոնկոլ ըստ Եւրոպացոց), որ և հին Պարթեւաց պէս վարուտական համար փախաւեայ կու նշանակէ. ուսկից յառաջ եկաւ աշխարհիս անունէն աւերածու և քանակալից մէկին համար առաջինն, Ճինկիզեան. որոց արիւնագին պատմութիւնն մեր այսօրուան տեսարանէն դուրս թողունք. ծր գարուն վերջերը իշխանութիւնը ձեռք առած՝ սկսաւ աշխարհակալութեան՛ի ջորս կողմն, և տիրեց՛ի Չինաց մինչև՛ի Կասպից. ՛ի հիւսիսոյ արեւմտից այլ մինչև՛ի Վրիմ, մինչև՛ի Ռուսս և՛ի Լեհս, իր նամանաբարոյ որդւովք և թոռամիւք. նուաճելով և ջնջելով Պարսից և Խուարեզմի Սէլճուկները, որոց յետինն էր Ճէլալէտտին սուլտան: Ասոր բաժինը ժառանգեց Հուլտղու խան (1258), Թոռն Ճինկիզայ. իր սերունդքն պայազատեցին տիրելով մեր աշխարհին և արեւմտից՝ դար մը ժամանակ. յետ որոց արիւնկզան Լենկթիմուր գլուխ եղաւ նոր պայազատութեան, որ տեւեց մինչև ցվերջ ժե դարու. յորում (1499) Շահ Իսմայէլ Սէֆեան՝ Պարսից նոր թագաւորութիւնը հաստատեց և Ներսէսեց բռնութիւնը վերջացաւ:

ԺԱ.

Բայց բուն անուն ազգութեան յայնժամ եղաւ գարձեալ Թուրք տոհմն, որ մինչև ցայդ կու ծնայ մեծատարած իշխանութեամբ, բայց և քա-

ղաքական օրինօք: Ա յս թուղք առհմն ծագեալ
'ի հզօր Ոսղոզ թուղքաց, զոր նախ առեանք,
կոչէր Գայէխանըը, Թերևս յանուն Գայէ-խանի որ-
դւոյ Թուղք-խանի՝ Թոռին Յաբեթի նահապետի,
ըստ աւանդութեան նոցա: Ա յս Գայէ խանէն
յորդւոց յորդիս ցեղաբանելով լինաերորդ կ'ըլլայ
Սէլճկան շահ, որ կոչ առիւծը իր առհմին՝ 'ի Մահան
քաղաքի 'ի կողմանս Մէրուայ, ուր եկեր էին իր
նախահարքն Սելճուգայ հետ՝ իրենց խոր աշխար-
հէն: Երբ Ձինգիզեան հալածեց զՃէլալէտտին՝
Սիւլէյման նախապատիւ եղաւ Խուարէզմի կողմի
իշխանաց մէջ. բայց Թաթարաց ոտնակոխ ըլլա-
լու համար՝ վախաւ յուեց բազմութեամբ իրեն
հաւանելոցն, եկաւ նախ բնակեցաւ յաշխարհն
մեր 'ի Հայաստան, 'ի կողմանս Խլաթայ. ուր շատ
գարեկէ 'ի վեր մահմետական տէրութիւն մը հաս-
տատուած էր. բայց Թաթարաց վախէն՝ անկէց
ալ հեռացաւ անցաւ յարևմտեան Հայս, յիշխա-
նութիւն Իկոնիոնի Սէլճուկեան տոհմանին՝ Ա-
լայէտտին Քէյքաւուսայ, որ մարդասիրապէս
ընդունեցաւ և տեղ տուաւ անոր 'ի սահմանս մեր
հին Եկեղեաց գաւառին (Երզնկա). անկէց եկաւ
'ի Ջահան գաւառ (Մարաշ): Յետ մահուան նո-
րա՝ իր Էրդօղրուլ որդին նորէն գարձաւ 'ի Մեծ
Հայս՝ 'ի Բասեն գաւառ, յետոյ գարձեալ 'ի Փոքր
Հայս և 'ի Փ. Ասիա. ուսկից իր որդին Օսման՝
նախապէս համանուն մեծիշխան Թագաւորաց,
և իր որդիքն՝ ջորս կողմի տիրելով, և աւելի գէպ
յարևմուտք երթալով՝ յետ գարուս կիսոյ հասան
առին և գրին իրենց աշխարհակալ իշխանութեան
աթոռը՝ աշխարհիս ամենէն հզօր մեծ և գեղեցիկ
քաղաքին մէջ, 'ի Կոստանդնուպօլիս, զոր կոչե-
ցին և կոչեն Ստամբօլ մինչև հիմայ:

Հոս հին Ասորեաց նեռան իր վարուց կորուսած
կատարչը գաւառ, մնաւ: Պայազատք պայազա-

10477396

ատց Նեռոլաց՝ նոր զէնքերով իրենց ահը և զօրութիւնը հին աշխարհիս երեք մասանց մէջ այլ տարածելով, (ուր մինչև հիմայ այլ կուռ տիրեն), եւ իւր աշխարհակալութեանց եզերքն սահմանեցան, ի քալաքական կրթութիւնս դարձուցին իրենց ընթացքը, ըստ եւրոպական հրահանգեալ ազգաց, և դեռ այս անծայր տափարիզին մէջ կուռ կշռեն քայլերնին: Աշխարհիս խաղաղութեան և իռովութեան մէկ բաղդաշարժ քուէն՝ այս սկիզբնական թուղք տոհմին արուած կ'երևի ի հնուց մինչև հիմայ, և դուցէ մինչև ի հեռագոյն և յանծանօթ եղբայ ժամանակի. ինչպէս ուրիշ մեծագոյ քուէ մ'այլ՝ անոնց հին դրակից և մեծ մասին անլոյծ սոսմատական Ռուս տոհմին:

10477396

10477396

ԻՐ

ԱՌԱՋԻՆ ԱՄՊԱՏԱԿ ՆԵՏՈՂԱՑ Ի ՀԱՅՍ

1 Յունվար, 1019.

Ա

« Ժամանեցին մեզ աւուրք չարչարանաց, և
» պատին վմեզ նեղութիւնք անհնարինք... Ազգք
» օտարածնաց օտարացուցին զմեզ ՚ի բնակու-
» թենէս մերմէ. և դարձան փառք մեր յապակա-
» նութիւն... Յաղթութիք ՚ի յաղթութեց փոխանակե-
» ցին, և նուաճեաց արդիւն արծարծիչ ընդդէմ կեն-
» դանութեան. հաստատուն ՚ի պան-
» ղըխտութեան իբրեւանց պանդխտեցան երկրորդ
» անգամ, և եղեն վտարանդիք ՚ի ձեռանէ պան-
» ղըխտաց ապստամբեաց. ՚ի սիրելեաց քակտեալք,
» զորս ոչ սուր ստահակեաց, ցրուեցան զօրէն աս-
» տեղաց մոլորական կոչեցեալոց... Բարձան ու-
» րախութիւնք յերկրէ. լռեցին ձայնք քնարաց,
» լռեցին բոմբիւնք թմբկաց. բարձրացան ազա-
» ղակք լալեաց »:

Այս ինչ ցաւագին ձայներ. ինչ սիամոյ գե-
րութիւնք և կամաւոր օտարութիւնք. ինչ սըրտ-

մաւթի լուսթիւնք քնարաց և թմբկաց: — Եւ ոլ մեզն այսօր, Հայկակ, մեր հայրենի քնարաց և թմբկաց չախջախանքը գուժէ, և լուսթիւնը հուչակէ: — Ականատես վկայ մը, հայրենակէզ հո պի մը, զգայուն և խոցեալ սիրտ մը, փափուկ և մաքուր գրիչ մը. մէկ հատիկ մնացեալ ձայն ոլբարկու և պատմիչ ժամանակին՝ 'ի մէջ մեր պատմըչաց ծ և ԺԲ դարուց, միակ մնացեալ շաղկատ պատմիչ ԺԱ դարու. Ագիսպիկոս Լասթիվերտոի. որ համառօտէ զյիշատակ «անդէն անդելոց 'է »յայտնեաւն պզծոյ՝ որ ըստ ալեքսիոս «Հայոց»: Մէկ մարդու կեանց ժամանակն չափ է իր պատմութեան վիջոյն, 72 տարի. սկսեալ 'ի 1001 թուոյ. յորում՝ տեսնելու կամ լսելու ծանր ծանր դիպուածք հանդիպեցան իր և մեր աշխարհին մէջ. — մեծամեծ և սքանչելի փոփոխութիւնք, որոց ականատես ականջալուր և կարեկից ըլլալով, միակ վիպիչ այրած և անշէջ սրտին գաւա՝ տեսածը և կրածը գրչին, և անով յետոյց ասանդել:

Բայց որչափ որ եղածքն մեծամեծ և ծանր ըլլան, մարդ իր սրտովը կու կշռէ կու զգայ. և այսով իր զգայուն աւելի մեծ կ'ըլլայ. գոնէ մեր Վատիվարացոյն համար այսպէս եղած է. անոր համար եղածէն աւելի զգածը կու նկարագրէ. ընդարձակ տեսարանը՝ իբրև իր սրտին հայելւոյն մէջ բովանդակելով կու ցուցընէ. — աւելի ոլբացայտութիւն քան պատմաբանութիւն. — զոր և ինքնին շատ անգամ խոստովանի, և ուրիշ պատմիչ կարօտ կու սեպէ դիպուածքը. Իսկ ես, կ'ըսէ, գրեցի «ոչ լիով, այլ միայն պինդքն իրացն »որ եղև և անց ընդ մեզ»: Դժբաղդաբար ինչուան հիմայ մենք այլ իրեն հետ «կարօտացաք »հին ժամանակագրացն պատմութեան, զի ըստ »պատշաճի և յարմարական բանիւք դիւշմա-

10477396

» ցեն... զանցեալոյն զհանդիպումն անսխալապէս
» որ լինէ եղեն »: Ոչ ոք իր առեն կամ յետոյ մանր-
րամասն գրեր է այն բաները, մանաւանդ թէ գլ-
լեր՝ և մեզի չէ հասեր. որով պատմագրիք՝ թե-
րևս 'ի զուր մեղադրեն զՆրիատակէս՝ փոխանակ
երից՝ մեզի լաց աւանդելոն համար:

Սակայն ով կրնայ երաւամբք մեղադրել այն-
պիսի սիրտ մը՝ այնպիսի վշտաշատ տեսարանաց
մէջ պաշարեալ. « 'ի ջրից կողմանց՝ յարևելից
» ուռը, յարևմտից սպանուածն, 'ի հիւսիսոյ հուր
» և 'ի հարաւոյ մահ ». սիրտ մը՝ որ երբեմն տես-
սաւ իր ազգ ու հայրենիքը՝ բարգաւաճանաց և
պանծալի փառաց և ուժոյ մէջ, երբև 'ի գեղեցիկ
առաւօտու և յերիտասարդական հասակի, և ա-
պա տեսաւ յանկարծ երեկոյացեալ և ծերացեալ,
հաւարեալ և օրհասական: – Տեսաւ, ինչպէս ինքն
կ'ըսէ, « Զոլք աթոռք թագաւորութեան ունէր
» Հայք, Թոլ Թէ զկիւրապաղատին (Տայոց) էշ-
» խանութիւն և զոր 'ի Հռոմոց ». ամենքն այլ
իշխաններով, գունապոյն զրօշներով և զինուորու-
Թեամբք զարդարեալ և զուարճացեալ. և յետոյ
ամենքն այլ մէկմէկու եաւէ քակեալ քանդեալ
քայքայեալ, պանդխտեալ յօտար աշխարհս.
տեսաւ Հայոց քահանայապետական աթոռը,
« հայրապետութիւն մեծ և նախանձելի ամենայն
» ազգաց », իր ամենէն մեծ փառաւորութեան և
եկեղեցական բազմութեան մէջ (Պետրոս Գե-
տադարձ Հոխաեր կաթողիկոսն առեն), և յե-
տոյ զնա այլ՝ իր յաջորդներն այլ՝ անտեղի և ան-
հանգիստ Թափառել յօտարաց երկրի և քանու-
Թեան.– տեսաւ անապատները ծաղկեալ միան-
ձանց բազմութեամբ, և յետոյ Թագաւորանիստ
քաղաքներն անպատ անապատացեալ յիշխանաց
և 'ի զօրականաց.– տեսաւ զՀայաստան յոլով-
ցեալ հարստութեամբ վաճառականութեան և

երկրագործութեան, բաւական ժամանակ աշխարհին հանգարտ մնալովը, և յետոյ՝ գանձերը բաժնողներուն անգամ մուրացկան կամ բարբարական պոլտիկը. — տեսաւ Հայաստանի յեսին պարծանաց պատկ՝ հազարապաճարեան Անին՝ կրկին անգամ մատնեալ, անկեալ յօտար և բարբարոս ձեռս, և արեամբ ոլողեալ. — տեսաւ իւր սեփական հայրենեաց պանծալի քաղաքը (Արծն), և իր ընտանի ծննդեան գեղաւանը (Լատաիվարտ) արով և կրակով այնպէս մաշած, որ մեկուն հալվիւ աւերակաց հետքը և ան անունը կու մնայ (Գարտ Ապտ) յետ 800 տարուան, մեկայլին՝ ոչ հետքը և ոչ անունը. մինչև թէ և ուզեմք այլըսպէս պատմել, չեմք կրնար զԹոլեանն պատմել ’ի նմանէ՝ յաւերակացն ուսանել: — Տեսաւ իր հանգիստները, նաև իր աստիճանակիցները, անաստուններէ աւելի անարգ և խշխալի կերպով մորթուած և մորթեզերծ եղած՝ նորատեսիլ վայրենի ասպատակաց ձեռքով:... Այսպիսեաց անհատեան մը տրտաշարժ քան մատղաս գրիչը, ես չեմ կրնար մեղադրել. մանաւանդ որ իր յատակ վայելչաբանութեամբն, ազնիւ զգացմամբք և նկարագրութեամբք, և իր իսկատիպ ոճովն՝ ոչ միայն նորօրինակ և աննմանակ պատմիչ մ’ է մեր, այլ թերևս յետ մեր ոսկեղէն դարուն պատմչաց՝ քան զամեն ուրիշներն աւելի հաճելի է և սիրելի ընթերցողաց: — Եւ ահա սա ինքն է որ այնպէս անասելի կամ մարգարէական իմն ոճով լրած է իր պատմութեան նախաբանը, զոր և ես քեզ նախանեցի, Հայկակ. և յորում՝ գեռ ախորժեմ և կարծեմ լսել Լատաիվարտացոյն ակնարկած լեռալ քնարաց յետին արձագանգը, և անթոպ Թմբկաց Թաքուցեալ բոմբիւնքը:... Ով կու յիշէ՝ կու լսէ. ով որ ի՛ապրի՝ կու յիշէ. թէ հարկ է ապրիլ՝ հարկ է և յիշել և լսել. գոնէ անծերա-

նաւլն յերուսաղէմ՝ լսել այն ըմբիշի բոմբիւնը, առանց որոյ չկեան և չկան հայրենիք։...

Բ

Բայց ինչ Թմբուկ հայրենի, և ինչ տաւիղ վայրենի, որ մեկզմեկ կու չանային խափանել այն տաեն։ — Սկիւթիոյ անտպատին բարբարոսաց արտակարգ ծպտուքն՝ որ մեր աշխարհին հին մերը Թնդացուց, գեա ամենանուագ բզզիւն մը սեպուեր այն սխեզերապտերդ փոլոյն ձայնէն աւաչ, զոր զարհուրեալ նախնիք մեր համարէին տարուէ տարի լսել. և ոչ մեր նախնիք միայն, այլ գրեթէ ամեն քրիստոնեայք յարեւելս և յարեւմուտս՝ մեծ տապնոպի մէջ էին այն տաեն. երբ՝ի գալսանէ Քրիստոսի Տեառն մերոյ հազար տարի նոր անցեր էր։ Ի հնուց կարծիք էր շատ հաւատացեալց՝ Թէ անկէ եաւ աշխարհիս վախճան պիտի ըլլայ. Յայտնութեան գրոց մէջ ըսուածն՝ Թէ «կապեաց զսատանայ հազար ամ՝» լցուած ըլլալով նորէն պիտի արձակի սատանայ և քանանայ չարութեամբք՝ի վերայ երկրի. անծանօթ ազգեր՝ի ծագաց երկրի պիտի վազեն՝ի վերայ քաղաքացեալ ազգաց, և որով ու աւերմամբ ջնջեն. և՝ի ժամանակի անդ քանութեան բարբարոսաց, Նեռին և սատանայի՝ գայ պիտի Քրիստոս Սատուած, դատրեցընելու զժամանակ և զծնունդս ժամանակի, և երկիրս աւել պիտի գառնայ։ Ըսա բազմաց կարծեաց ոչ՝ի ծննդենէն Քրիստոսի այլ՝ի խաչելութենէն կու համրուէր հազար տարի. և ահա մեր պատմչին այլ կենաց ծանրած տաեն էր այս ժամանակս. որ և առանց յայտնի երկար բանիւ այս ահաւոր ըլլալիքը յիշելու (զի և չէլաւ այլ), դարձեալ նոյն տարին կու սեպէ մեր աշխարհին չարութեց դուռը. մանաւանդ որ արե-

պական խաւարումն մ'այլ հանդիպեցաւ ուրբաթի օր մը [1] նոյն տարին (1033). « զոր տեսեալ քա-
» զումք ի գիտնոց՝ կարծեցին գոլ զծնունդ նե-
» ռինն՝ զօրն զայն, կամ մեծամեծ չարեաց գու-
» շակ. որ եղև իսկ յաւուրս մեր, յորս պատմու-
» թիւն բանիս առաջնորդեալ ոմանի վրէպ, զոր
» տեսաք աչօք մերովք զաստուածատուռս հա-
» րուածան », և այլն: Նաև պատմութեան վեր-
ջաբանին մէջ այլ կրկնէ. « զի յայնմ ետուն զոր
» յաւելպտոյն ասացի, յորում Թուականի Հայոց
նշԶ (1033) էր, մինչև ցայժմ՝ ուխտ սրբութեան
» և կարգք եկեղեցեաց քայքայեալ տակաւին.
» ցան. և ոչ համբաւ խաղաղութեան կամ աւե-
» տիս բարեաց լուաք, և ոչ մի ուրճան յաղթու-
» թեան կանգնեցաւ, ոչ Թագաւորաց և ոչ իշ-
» խանաց »: Ուրիշ պատմիչ մը համարձակ այլ
կու զլուսկ այն տարուան համար, թէ « Արձակե-
» ցաւ աստանայ ի կապանաց խաչելութեանն
» Քրիստոսի »:

Իսկ մեր՝ ուրիշ նշան կամ դիպուած մ'այլ
կու տայ այն հանդերձեալ մեծ ըլլալիքին. Երու-
սաղէմի կործանման առեն հանդիպածին պէս կ'ը-
սէ, 'ի Հայաստան այլ մէկ անծանօթ մարդ մ'ե-

[1] Պատմիչս կ'ըսէ « յամենայնէն արաց՝ յաւուր ուրբա-
» թու ». ամսուն օրը չըսեր. ոչ հայկական հաստատ տո-
մարի հաշուով և ոչ շարժականով արաց ամսոյն մէջ նոյն
տարին արևու խաւարմունք կ'ըլլայ. հապա թէ որ մեր
ամիսներն այլ սկսինք համրել Հռոմայեցւոց ամսոց հետ,
այսինքն նաւասարդը յանուարին հետ, միայն այս կեր-
պով արաց ամիսն կու գայ ընդ յունիսի, որոյ 29ին ուր-
բաթ օր յամի 1033 սուտգիս արևն խաւարած է: Մխի-
թար Այրիվանեցի քաղց ամսոյն 13ին կ'ըսէ այս խաւա-
րումը, սակայն այն օր այն տարի խաւարումն չկայ. ուրիշ
պատմիչք այլ քանի մը տարի ետև կու ձգեն խաւարումը:

10477396

բևեցաւ նոյն առեննեըը, որ արեւելեան գաւառ-
նեըէն գալով դէպ ՚ի յարևմուտք կ՚երթար, վա-
նայ ծովուն հիւսիսային եզերքներէն մինչև յԵը-
զընկա՝ անդադար կանչելով. Եղեռնք զնա, եղեռնք
զնա. (վայ ինձ, վայ ինձ). — Ու հարցընէին թէ
ուր ես, ուսոի կու գաս, ինչո՞ւ կ՚լսես. ոչինչ պա-
տասխան չէր տար, բայց նոյն եղուկը. մինչև ո-
մանք (զոր անվիտ կոչէ պատմիչն) խելագար
սեպեցին զնա. «Բայց իմաստունքն առին, այդ
» եղուկդ ամենայն երկրի լինելոց է »:

Ա յսպիսի դիպուածներ՝ եթէ շատ կամ աւելի կերպով մերազգեաց և մանաւանդ Թադաւորաց և իշխանաց միտքը շփոթեցին ու սրտերնին վախ-ցուցին, առանձին ազգային աւանդութիւն մ՚այլ ունէին պատճառ. այն էր՝ իրենց նախնեաց անլրաւ գործերը, և անոնց համար ժամանակին սուրբ և ընտիր անձանց յանդիմանութիւնը և սպառնալիքը. մանաւանդ Ս. մեծին Ներսեսի: Սա նախաձեռնութեամբ գուշակեր էր Հայոց գլուխը գալիքը, և վերջի ժամանակներ ըլլալու բաները՝ աշխարհս կատարածին մօտերը. նաև Ներսէս ազգին ըը արշաւանքն ՚ի Հայս, և ետևը աշխարհս տանին ու վայ ընել և ժողովուրդը ցրուելը: Զայս կու յիշեն իր վարուց գրիչք, նա և ուրիշ պատմիչք այլ ևս դարէն ետև. իր վարքը երկարօրէն գլրոցն Մեսրոպ Երէցն այլ ՚ի ա դարու՝ այնպիսի խօսքեր կ՚աւանդէ Սրբոյն. սակայն իր գրոց հնագոյն օրինակաց մէջ (ուշագիր հանդիսեր եմ), չկան այն ուրուշակի խօսքերը՝ զոր յետին օրինակաց մէջ կարդանք՝ Սէլջուկեան և Թաթար ներուց վայ. և յայտնի է որ յետոյ աւելցուած են. կէս մը այս (ա) և յաջորդ (ա) դարուն մէջ, կէս մ՚այլ յետ արշաւանաց Թաթարաց ՚ի սկիզբն ա դարու. սրբոյն Ներսեսի ընդհանուր խօսքերը մանաւանդ և յամառօտութեամբ Տուղ-

10477396

ընկեանց և ճինկիզեանց: Սակայն ասոյգ է որ հա-
սարակ եղած էր այն Ս. Հայրապետաւին սպառնա-
լեաց վախն. և երբ այսպիսի նշաններ տեսանէին՝
մէկէն անոր խօսքերուն կատարումը կարծէին:

Այսպէս ըրին նաև ժամանակին Թագաւորք և
ազգային գլխաւորքն, Յովհաննէս-Սմբատ հա-
պրատուէին, որ Յովհան Կոզեռն վարդապետին
ձեռքով քննել տուաւ և նոյն կարծեաց վրայ
հաստատեցաւ. և Սենեքերիմ Արծրունեաց Թա-
գաւորն՝ որ չատոնց նոյն վախին մէջ էր, և իրեն
համար Քրիստոսի 1000 Թուականէն սկսած էր:
Առաջին նեա Նեռոդաց իրեն դիպաւ: Զարմանքն
այս է որ մեր պատմիչն՝ միայն առջ մը անցողա-
բար և լռելեայն կու յիշէ այն դիպուածը՝ որ իր
յետագայ օրերուց նախասկիզբն պատճառն է, և
պատմութեան պէտքն այլ կու պահանջէր յիշե-
լը: Կ'երևի որ բաւական տեղեկութիւն չունէր
Հայաստանի սահմանածայրը եղած բաներուն,
նոյն իսկ Արծրունեաց մէջ. բայց դիպուածին տա-
րին ատյգ կու յիշէ, 1022ին հանդիպած բան մը
պատմելու առեն. «երկու կամ երեք ամօք յա-
ռաջ գործեցաւ», կ'ըսէ, Սենեքարիմայ հասած
վտանգն. որ է 1019 ամն Քրիստոսի:

Գ

Մինչդեռ 'ի բաւական խաղաղութեան և հնու-
թեան էր աշխարհնիս և սահմանակիցքն այլ, ան-
ակնկալ առեն և կողմէ նոր և անծանօթ ապա-
տակ մը ափեցաւ Հայաստանի հարաւային ա-
րևելեան ծայրը, 'ի վատասրտական աշխարհ, որոյ
իշխան և Թագաւոր էր Սենեքերիմ Արծրունի.
հասակաւ, պատուով և խելօք յառաջացեալ, սի-
րելի վասալ կայսերս և պատկառելի իշխանաց Հա-
յոց: Անդէպ անկարծ, աննման, անշնորհք և

անգութ երևցաւ այն խոնջատուժ ոչխն անօրինաց, որ ոչ այսչափ միայն կ'ըսէ պատմիչն, այլ և կարծէ թէ «օձիք Թևաւորիք հասին և կռմէին ցոլա- » նալ ընդ ամենայն աշխարհ հաւատացելոց. այս » առաջին եւն արիւնարբուս գազանացն»: Տարա- կոյս չկայ որ մեծ շփոթ և սարսափ ձգեցին թէ խաղաղաբնակ ժողովրդեան (որոց չէնքերը և վա- րուցանը կոխէին և կոլոպաէին), թէ իշխանական և զինուորական դասուց, որք ոչ միայն անպատ- րաստ էին, այլ և «չէին քնաւ սովեալ (այնպէ- սի) զօրք հեծելոց... այլակերպ, աղեղնաւորս և » հերարձակս իբրև զկանայս. և յայնժամ զօրքն » Հայոց չէին սովոր պատրաստ լինել ընդդէմ » նետից». կամ ինչպէս ուրիշ և գրեթէ ժամա- նակակից պատմիչ մը կ'ըսէ. «Նոքա ունելով » զքնութիւն արիւնարբուս գազանի, զի են ազգք » ահաւոր սովելեամբ. զի սովիլ գինւոց նոցա զար- » հուրեցուցանէ զաշխարհն և ահաբեկ առնէ, և » քնակութիւն նոցա 'ի լերինս և 'ի գաշտս և յա- » նապատս, որպէս գվայրենի գազանաց. և են » շարժակերք որպէս զգազանս. ոչ պատուհան գմե- » ծանեն, ոչ ինայեն յաչխս և 'ի հարկս ծե- » րոցն, ոչ ողորմին երիտասարդին և տղայոյն, ոչ » ինայեն 'ի մանկութիւն ուժիք, ազգ չար և դա- » ժանագոյ»:

Այսպիսոյ նետից 'ի վան և յՈստան էնա- սած՝ Սենեքերիմայ և իւր եղբօր Դերենկայ զօր- քերն խմբեցան ելան զանունք յետ դարձընելու, առաջնորդ ունելով զՇապուհ՝ ծեր և փորձ սպա- րապետն Արծրունեաց, որ քանակ և պատերազմ վարելը իրեն խաղ ըրեր էր 'ի մանկութենէ. և սակայն հոս գժուարին և նոր խաղ մը սեռաւ. անձառնի հերարձակ հեծեալք, և մանաւանդ լայ- նաձիգ հետաձիգ աղեղանց նետք, որ առջի բե- րան էին Թոլուր Հայոց՝ իրենց մտեռնալ ան-

պամ:... Ո՛հ. և Հայք էին երբեմն ալեկնաւորք, այլ և քաջաձիգ արք աղեղանց, որոց ազգահայրն ինքնին համարուի հնարող աղեղան յետ լըհեղեղին, Հային հակայ. և որոց զինուորութեան աե֊ւական նշան իսկ՝ աղեղն և կապարճն էր. զոր և ինչուան հիմայ կուռ տեսանեմք իրենց հետ կռուող Հռոմայեցի կայսերաց դրամոց վրայ: Բայց երբ այս Փռիւգացի գաղթականն՝ (Հռոմայեցիք) հին Աքաեանաղայ սերունդն կամ մերձաւորն՝ Լատինն ոխերով՝ կամաց կամաց բոլոր Իտալիոյ, Յունաց, Փոքր Ասիոյ այլ տիրեց, իր աշխարհակալութեան գրեթէ յետին սահման ընելով մեր աշխարհը, հակայակերտ Հայաստանի ուսէն վերուց անոր պարծանաց և ուժոյ զարդ՝ հարուստ կապարճը: Հայաստան ոչ այնքան կողոպտուելով Թոլոմեայ իր կրօնի բազկաց խաղալիկ կամարը (աղեղը), որքան ընարութեամբ փոխեց զայն՝ աւելի յարմար զինուց հետ, մօսէն կռուելու մօտեցող դիմամարտից դէմ: Ինչուան այն առեն՝ հիւսիսային և արեւելից ասպատակաց դէմ՝ անոնց գործածած զէնքով կ'ընդդիմանար հեռաձիգ աղեղամբ. անկէ եաև տեսաւ որ արեւմուտքն ե իր գլխաւոր դիմակացն. Լուկուլ, Պոմպէոս, Կեսար, և Կրասոս սովրեցուցին իրեն նոր օրէնք կռուելու՝ արուի և վիքնաւ: Յետոյ Բիւզանդացոց դաշնակցելով կամ հետևելով անոնց զինուորութեան օրէնքն և կերպերն առին Հայք, առանց բոլորովին Թոլոմեայ իրենց նախնական և Հայրենի Թաւջուն զէնքերը. սակայն քիչ գործածէին, և այն այլ՝ աւելի լեռնաբնակք կամ ընդդէմ լեռնաբնակաց:

10477396

Դ

Այլ հինայ այս նորաստեալ Նեռոլայց հա-
րուածներէն՝ նախ տագնապեցան մերայինք, յե-
տոյ խնդախեղմով ուժով յարձակեցան հասան այլ-
ազգեաց այլանդակ բանակին. և սուր բանեցընե-
լով՝ առատ արիւն հանեցին: Եթէ դաշտին վրայ
ընկնողաց բազմութիւնն յայտագրեաց եղաւ, բայց
վիրաւորելոց բազմապատկին՝ ի Հայոց, այն յանկար-
ծական և հեւաձիգ նեռներէն՝ որոց դէմ չէր կըր-
նար Շապուհ ուզածին պէս իր կարիճները քշել
և քաշել. մանաւանդ որ իրեն արգելք կ'ըլլար մէկ
նեռ մը, կամ այն նեռէն նպատակ մէկ գլուխ մը,
որ իր գլխէն այլ բարձր և թանկ էր, թէ և ոչ ի-
րեն պէս իսոհական և փորձ. աւելի տաք արիւնոտ
և լի եռանդեամբ և յանդգնութեամբ: Սա էր
Թագաժառանգն Արծրունեաց Դաւիթ. անդրա-
նիկ՝ ի մէջ էրս կարիճ որդւոց Սենեքերիմայ:
Հասակին և ատելանին դրդուեմն, հօրը պատիւն
և սէրն, և քաջութեան գինովցուցիչ մոլութիւնն՝
գրեթէ աչքերը գոցեր էին ընդդէմ վտանգաց, և
բացեր միայն՝ ի խնդիր վրիժուց և փառաց. ինու-
սիկ կամ արաբիկ երկաբին վրայ Թռչելաբով
սանձը Թողած, միայն սուրը մերկ վզերու և լայն-
շի երեսներու վրայ իջեցընելով կու բանար ահել
և վտանգաւոր ճամբայ մը, Թէ և անվախ քաջու-
Թեամբ, Թշնամեաց խառնակ գնդերուն մէջ. ուր՝
յորաւի էին կրնար սոսկք դիւրաւ նետ բանեցը-
նել իրենց ձակատին և կռնակին հասնող կարըճին
վրայ. բայց նա այլ էր կրնար երկար սուեն ոլջ
կամ անկաց մնալ: Շապուհ շուարած՝ իր զօրաց
կարգը և Թշնամեաց անկարգութիւնն այլ մոռ-
նալով Դաւիթ վրայ հոգալով կու կանչէր. «Թա-
» գաւոր, եա գարձիր, այս իմ և քու սեռած ա-

» վտրտական պատերազմը չէ. նոր ու յանկարծա-
» հաս զինքեր են. այս անիծեալ նեառերուն դէմ
» բաւական պատապարտութիւն չունի մեր զօրքն.
» և ահա մեծ մասն վիրաւորած է: Մի այդպէս
» շատ առաջ նեառուիր. ետ դարձիր թագաւոր.
» յիշէ որ հօրդ պատասխան պիտի տանք կամ
» դու կամ ես... Թող այս անգամ պահ մը յետ
» քաշուինք, նեառերուն դէմ դնելու վրան հագ-
» նինք, և այնպէս քշենք դա գազանները»: Գանի
անգամ այլ այսպէս յորդորեց ետ կանչեց, Թիկ-
նապահ հասուց, Դաւթի աչքը արիւնով լեցուած՝
ականջներն ալեզանց կաշիներուն շփահիւնէն խըլ-
ցած՝ յամառած չէր ուզեր յետ դառնալ, ինչուան
որ Թշնամիներուն երեսը իր երկրին սահմանէն
չդարձընէ: Երբ տեսաւ Շապուհ՝ որ այլ ոչ խօ-
սելու առեն կայ ոչ մտիկ ընել տալու, ինքն այլ
իր սպարապետութեան և մանաւանդ գայեկու-
Թեան իրաւամբք (վասն զի Դաւթի և անոր եղ-
բարց գաստիարակ և կրթողն էր, և իր գրկաց մէջ
գտուեր էր անոնց մանկութիւնը), յառաջ քշեց
ձին, հասաւ ալքայորդւոյն և անոր Թիկնապահ
կանգնին կուտա կոպ մը տալով՝ ձիուն գլուխը բըռ-
նի դարձուց, քշեց իր զօրաց բազմութեան կող-
մը. բոլոր բանակն այլ կամաց կամաց յետ յետ
քաշելով, հանեց յայտնի վտանգէն, արիու-
Թեան և խոհեմութեան պարտքերը միատեղ կա-
տարելով. ոտվէտաւ Նեառոլքն այլ իրենց կողմէն
յետ դարձան կռուան. զօրս հարկ ըլլայ մեզի յե-
տոյ քնարերել:

Անենքերիմ եղածը խմանալով՝ մէկ կողմանէ
ընդհակառակ եղաւ Աատուծոյ և իր կարմիններուն,
բաւական փառաք դառնալնուն վրայ. մէկայլ կող-
մէն մտածեց՝ որ եթէ Թշնամիք այլ յամառէին
կամ նորէն ետ դառնային, երկար առեն անոնց
դէմ դնելու այժ չունին, մանաւանդ Թէ կայս զու-

10477396

նի. և այս անյուսութեան գլխաւոր պատճառն այլ մեր նախայիշեալ ներսխեան գուշակութիւնն էր՝ Նեռոլայ յարձակման վրայօք: Բոլոր օրը տարակուսանօք անցընելէն եաև, գիշերը (կ'ըսէ պատմիչն) հասարակաց քնոյ և լռութեան ատեն՝ ինքն իր աչխատրհին և տանը հոգովը տքուն՝ գըրքեր կ'ըստց և կ'ընէց Ս. Ներսխի խօսքերը, և տարին յարմար գտաւ. արդէն սատանայն արձակուած էր ըստ կարծեաց նոցա: Ահն գիշեր ծեր և երկարահոգ Թագաւորն մէն մինակ իր սէրուածութեան սահմանը և քաղքը վտխեց. երկիրը Թոզլով՝ Ժողովրդեան գոնէ մէկ մասը ազատել և յաւպահովել յանձն առաւ: Արևելեան այլազգի ազգաց և տարուէ տարի եկած նորանոր սէրուածներ դէմ դնելու զօրաւոր սէրուածին՝ միայն Յունաց ինքնակալութիւնն կրնար ըլլալ այն ատեն, որ արդէն իսկ եօթն հարիւր տարի առէպ կառուցը էր ընդդէմ Պարսից և Արաբացւոց: Աստենին Բիւզանդիոյ կայսրն էր մեծն և խոհեմն Վասիլ, որ շատ տարի առաջ (1001) Վրաց և Հայոց սահմանները կտխեր էր. և այն ատեն նախատեսութեամբ իմն Սեննէքերիմ մեծատանց գեղային խաբեբայով անոր գաշնագրութիւն ըրեր էր հետը. հիմայ այլ անոր վրայ վատահանալով՝ իրեն ձայն գտաւ: Ձեռին ձար. – երկիրը Թողուլ Յունաց կայսեր, և տարը սէրութեան մէջ երկիր մ'առնուլ, և հոն փոխադրուիլ իր արքունեօք և զօրականօք և Ժողովրդենէն գաղթիլ յանձն առնելով: Վրկեց իր տաքցուն անդրանիկը՝ Կ.Պօլիս, առ Վասիլ կայսր, ուրիշ 400 ազնուականներով, 1000 ձիաւորով և իր երկրին սէր Եպիշկ արքեպիսկոպոսով. 300 չորս եռ այլ ընծաներով. զոր ընդունելով Վասիլ՝ կայսերապատշաճ պատիւ իր պատուհասները, ընծայներնէրը՝ ընծայեց, և երկրի փոխանակութեան գաշնագրու-

10477396

Թիւնն այլ կնքելով՝ գարձուց պատգամաւորները:

Հետեւեալ տարին (1021) եւս ծեր Թագաւորն՝ անուանակիր և պայազատ հին Ատրեատացի մեծ Սենեքերիմ Թագաւորին, տոհմապետեան Արծրունեաց և Սանեցոց, իր ընտանեօք և ազգականաց մեկ մասամբ, բազմութեամբ իշխանաց և պաշտօնէից և 14,000 հեծելովք կամ կտրիճ մարդով, որոց հետ՝ի հարկէ այր և կին, մեծ և փոքր հնպատակաւիկ աւելի բազմութիւն այլ պիտի ըլլար, գուցէ բոլորն իբրև 100,000 հոգի. Թողուս հին Դայրենեաց հողը և նոր հայրենիք հիմնելու յերկիր օտար, եթէ հնար է այս:... Շատ հեղ անկէ առաւ այսպիսի գաղթականներ գնացին՝ ի մեր բնիկ աշխարհէն՝ յօտար աշխարհս, ուր և ցարդ բնակին իբրև յիւրեանց աշխարհի. սակայն Թերևս ոչ մի գաղթական անոր պէս հանդարտ և հանգիստ կերպով գնաց. ուրիշներն աւելի ընդխռովմամբ և արտորնօք, սակայ աւելի մասածութեամբ և հաշուով: Բայց հանդերձ այսու՝ ոչինչ պակաս ոլորմելի: — Թողուլ սիզբնական հողը, հազարամեայ շէնքեր և տուներ, հարց և նախնեաց կերպ կերպ յիշատակներ, եկեղեցիներ և գերեզմանները. — մեծամեծ չարեաց սպառնացեալ վախով՝ երթալ յանծանօթ երկիր. նոր տեղ, նոր լեռներ և դաշտեր. — անծանօթ կամ օտար ազգաց մէջ բնակիլ և խառնուիլ. — իբրև յաւիտենական մնաս բարով մ'ըսելով այն ամենայն բանի՝ զոր բովանդակէ անուանն Հայրենիք:... Ապա չեմ տարակուսիր որ շատ սրտառուչ եղած պիտի ըլլայ այս Արծրունեաց գաղթուածն և բաժնուելն իրենց հին և բազմայիշատակ տեղէն. — շատ դառն եղած պիտի ըլլայ նոյն ինքն գաղթողաց վերջ գլուխ Սենեքերիմ Թագաւորին, Թողուլն իր հայկական գագիաշէն պատկան Ոստանայ ար-

քաղնիքը, Աղթամարայ գղեակը, Վանայ լերկը, և մանաւանդ հարց գերեզմանն, իւր գաւառակերտ և կամ զարդարած հռչակաւոր Վանփն Վաղագայ. ուր և յետին մխիթար պանդխտիկ և օտարացեալ, նաև յետ գաղթականութեան՝ ուզեց (և բաղդ ունեցաւ) որ մարմինն Թաղուի, և իր նախնեաց հետ ննջէ անոնց հասարակաց բարձին վրայ. Թողլով ունայն գերեզման մը 'ի Ս. Նշան Աբեղաստոց, զոր ընարեր էր իրեն երկրորդ վարդապ. և հոն դնելով վարդապ մեծահռչակ աուրբ խաչը, զոր հետը բերեր էր, և յանուն նորին կոչեց նորաշէն և մինչև ցայժմ անուանի վանքն այլ Ս. Նշան, մօտ 'ի քաղաքն Աբեղաստոց: Աբեղաստիա՝ որ երբեմն գլխաւոր քաղաք էր ի Հայոց նահանգին, հիմայ այլ եղաւ մայրաքաղաք և աթոռ Սեւնեքերիմայ նոր Թագաւորութեան. որոյ սահմանքը որոշ գծած չէ մեզի պատմութիւնն. այլ կ'ըսէ թէ Աբեղաստիոյ հետ արուեցան Արծրունեաց՝ Վառնա և Ապարա? քաղաքք և շատ գեղեր, որք չէին հաւատարեր[1] ոչ շատութեամբ և ոչ հարստութեամբ՝ իրենց Թոլած աեղւոյն. որ էր Վանայ ծովուն չորս կողմն երկինն. ուր միայն ծովուն եզերքը կամ մօտ՝ սան քաղաք կային, զոր և Թուէն Յայտաւուրք մեր. Վան, Արտամէտ, Ոստան, Հոյց, Խլիսան, Խլաթ, Մանազկերտ, Արծկէ, Արձէշ, Բերկրի. և տունդմէ օրերով ճամբայ հեռու սահմանք՝ մինչև 'ի Ջուղամերկ ընդ հարաւ, Սալամաստ ընդ արևելս, և

1 Յաջորդ տարին (1022) քիչ մ'այլ ընդարձակեցան այն կալուածքն, երբ Դաւիթ՝ վասլի դաւաճաններէն զատուելով՝ անոնց գլխաւորը (Նիկիփոր փոկասը) սպանեց, և 'ի կայսերէն պարգև ընդունեցաւ Կեսարիոյ սահմանները, զորս յետոյ ժառանգեց իր փեսային՝ տարաբաղդ Բագրատունին Գագիկ Ե:

Երասխ գետ ընդ հիւսիս. ուր այն քաղաքաց հետ Թողուց Սենեքերիմ առ Յոյն «գեօղս 4400 լայ. «նանիատ և արդիւնաւորս», և 70 կամ 72 բերդ: Մեայն իրեն և իր ժողովրդեան, և իրենց նախնեաց անմահ արդեանց անմահ յիշատակ պահեց և չօտարացուց՝ հազարէն աւելի վանքեր, կամ ըստ ումանց 900 փոքր աննշան վանքերը Թողով՝ 115 մեծ և հռչակաւորներ՝ իբրև սեփական կալուած կնքեց իրեն, իր և առաջնոց տուրքերովը պարմանելու. որպէս զի վանականքն այլ՝ իբրև հաւատարիմ պահապանք արբազան հայրենի գեղեցկութեանց և յիշատակաց՝ աղօթեն վասն հետաւորաց և մերձաւորաց, վասն հանգուցեալց և հանգիստ բնաւրեալ պանդխտելոց [1]:

Ահա նոր օրինակ գալիք և մանաւանդ անոր պատճառն՝ կ'երևի թէ մեծապէս ազդեցին Սենեքերիմայ թագակցաց, որոց գլխաւորն էր Շահլընշահն Հայոց Յովհաննէս-Սմբատ թագաւորն Բագրատունեաց. որ՝ երբ նոյն գալիքին տարին վասիլ կայսր երկրորդ անգամ եկաւ 'ի Հայաստան, իրեն ընդ առաջ ղրկեց զկաթուղիկոսն Պետրոս, և տոր ձեռքով գալու կատակ ընել սրբոյ, յետ իր մահուանը կայսեր Թողու իր թագաւորական քալաքը՝ Անի, և բոլոր իր վիճակը. զոր և կատարեց ու կնքեց կաթուղիկոսն: Հետևանքն յայտնի է. — յետ 23 տարւոյ (1045) Սմբատայ տարաբաղդ յաջորդն՝ եղբօրորդին Գագիկ՝ տխուժեցաւ Թողու իր թագաւորական աշխարհը, և Սենեքերիմեանց տահմանները քովերը պանդխտութեան տեղ առնուլ: Ոչ յետ

1 Յայտնաւորք յունիս ամսոյ մէկին նշանակեն այս դիպուածները, որոց մէկն միայն այս օր հանդիպած է. այսինքն կամ Նետողաց պատերազմն (որ հաւանագոյն թուի), կամ Սենեքերիմայ գալթելու օրն, իր երկրէն ելնելն, կամ Սեբաստիա մտնելն:

*չատ ժամանակի՝ իր անուանակից Վանանդայ Թա-
գաւորն այլ նոյնպէս ըրաւ. Թողուց Յունաց ըզ-
կարգս, և առաւ երկիր մը Մեկալոնց մօտ: Ինչ ա-
ռնէին ուրիշ Թագաւորազունք և մեծամեծ ի-
շխանութիւն այլ, ինչուան արևելեան Արցախոյ և Հա-
յաստանեայ Սանոյ մօտը երկիրներէն՝ գալթական
եկան, վերոյիշեալ Թագաւորաց տահմանեցուն
հարաւակողմը, Փռիւգիոյ և Կիւղիկիոյ տաւրո-
սական լերանց մէջ իրենց նոր հայրենեաց բոյնը
հաստատելու, շատ գժուարութեամբ և աշխա-
տանօք: Սակայն այս եռքիններս՝ իշխանազունք
և տոհմականք՝ աւելի բազդաւոր եղան. վասն զի
Թէ և ջանքով՝ տակաւին կոխած տեղերնին հաս-
տատ բռնեցին և տիրացան. մինչդեռ երեք Թա-
գաւորքն այլ իրենց տերտունդներովն՝ գրեթէ
հազիւ 30 կամ 60 տարիէն անհետացան, Թէ ի-
րենց և Յունաց հակառակութեամբն, և Թէ վի-
րենք իրենց հայրենիքէն նետահալած ընդ բար-
բարոսաց՝ այն նոր հայրենեաց երկիրներուն այլ
տիրելով կամ անհանգիստ ընելովն...:*

*Հիմայ Թէ ոչ միսիթարական՝ գոնէ հետաքրքր-
կան է այս աշխարհավերով Նետոզաց հետամուտ
ըլլալն պատմական քննութեամբ. Թողլով այսօր
մեր անոնցմէ նետահատեալ հայրենեաց և փո-
ռազուրկ իշխանաց չէնքերը: Եւ եթէ այս ցաւ-
ագին տեսարանէս աւելի ցանկալի մը չէ անոնց
ջարդաց տալիքը քննելն այլ, տակաւին պատմական
տեսութեան մէջ՝ մեծ և կարևոր դէպք է Նետո-
զաց արշաւանքն, որ ոչ միայն մեր աշխարհը այլ
և ուրիշ շատ աշխարհաց յեղափոխութիւն բե-
րին, և Թերևս ինչուան այս օրս այլ կարևոր կամ
գլխաւոր կերպարանք մը կու տան քաղաքակա-
րութեան ազգաց արևելից, մասամբ նաև ա-
րևմտեայց: Ասոր համար էր որ պատմիչն քեզի,
Հայկակ, այդ Նետոզաց սկիզբը և տոգտաւորն՝ Հա-
յաս:*

10477396

10477396

ԼՈՒԿԱՍ

1042.

Ա

Զարհամարհենք պախատաւոր կամ նուաստ անուն մը, Հայկակ. զի ոչ անուամբն՝ այլ գործովն է մարդ. լաւն և քաջն միշտ հռչակեալ են իրենց լաւ գործովն իսկ. անոնց գործոց էգիտացողքն են խօսիլ, թէ և ակամայ: Ո՛րքան ծանրացեալ և խլացեալ են մեր ականջքն այլ մեր հարց ու նախնեաց գովանի գործոց հռչակներէն, զորս նեղնալով՝ ոչ Լիւթոս մը երկարօրէն պերճաբար ազգին պատմութիւնը ձառող, ոչ Պլուտարք մը նշանաւոր մարդկան վարքը դատողութեամբ գրող, և ոչ անգամ արուեստիկ գիշերախօս վիպասան մը. և «սակայն բազում գործք արութեան գտանին» գործեալ և՛ի մերում աշխարհիս, և արժանի» գրոց յիշատակի[1]»: Այլ նորէն և միշտ հարկ է մեզի դառնալ և շնորհակալ ըլլալ՝ մեր թէ հմայութեան և թէ հարևանցիկ, թէ ոճով և թէ անոճ պատմագրաց այլ, որ այն բազում արութեանց

1 Խորենն. գիրք Ա. գլ. Գ:

10477396

գործերէն գոնէ զոմանս աւանդեր են գրով. և ժա-
մանակին այլ՝ որ իւնայեր և այս չափս մեզի հա-
սուցեր է. զոր կրնամք դեռ հաճութեամբ պատ-
մել և լսել, գուցէ երբեմն աւելազանցութեամբ
այլ: — Ահն հռչակելի գործերէն և հանդիսանե-
րէն մէկն այլ՝ այս դեռ ոչ շատ ծանօթ՝ հին Խաչ-
կայ և իր որդւոցն ըրածն է:

Խաչկայ Խուլ կոչման պատճառն ինծի անծա-
նօթ է, և ոչ այլ գտնեմ երկու ժամանակագրաց
մէջ, ուր մէկմէկէ առած լիշեն իր դէպքը. Մատ-
թէոս Ուռհայեցի և Սմբատ Գունդստապլ. առա-
ջինն՝ գեղեցիկ և հաճոյ կոչումի և ցեղ մը կ'ընծայէ
Խաչկայ՝ կտրիճ ոճով մը, «Աւ-է-ծ ընկէ [1]. իբր թէ՝
նա որ ազգաւ Ախծրունի էր կամ լիշխանաց Ախծ-
րունեաց տէրութեան, ցեղով կամ անձամբ՝ ար-
ժան էր առիւծ կոչուիլ. զոր անոր քնիկ մակա-
նուն կարծէ նոր պատմահայր մեր [2], ինչպէս նաև
վերոհպարտեալ մականունն այլ: Իսկ իր բուն ա-
նունն Խաչիկ՝ իրմէ դար և աւելի առաջ կրէր և
Ախծրունեաց դիւցազնն՝ Գագիկ Ա, նախասկիզբն
Թագաւորաց Ախծրունեաց, իբրև մկրտութեան
անուն. որոյ հետ անոր բարձր և հզօր տէրան այլ
կրէր այս Խաչիկս, որ տեսաւ Ախծրունեաց Թա-
գաւորութեան վերջանալն՝ անձամբ և կամօք Սե-
նեքերիմայ՝ Թոռին եղբօր Գագկայ, ինչպէս պատ-
մեցի քիչ յառաջիկըզն յուշիկ:

Ահա բանաբեր և մեծ դիպուածս՝ որ Ախծրու-
նեաց գրեթէ երկհազարեան հին և պանծալի տոհ-
մին խորտակումն բերաւ, տոհմապետ պայազա-
տը վատրելով յօտարութիւն, դառն հարուած
էր ամենայն մեծասիրտ տոհմակցաց համ հպա-

1 Կ'լսեինաև յոպիփ 'ի Վէրոյն, զոր չեմ հաւկանար. անշուշտ սխալ գրուած է:

2 Հ. Մկր. Զամչեան, Պատմ. Բ, 923:

ատկաց այն ցեղին՝ որ գար ու կէս Բագրատու-
նեաց հետ Թագաւորք բարձրագլուխ նազէր Հա-
յոց ամեն տոհմից և իշխանաց մէջ: Ա յս հարուա-
ծը սատակագոյն զգացողաց մէկն էր Խաչիկ՝ Սե-
նեքերիմայ աէրութեան իշխանացմէ, աէր Վա-
սպուրականի հին Թոռնեան գաւառին, որ մօտ է
Երասխ գետոյ և Նախճաւան և Գողթն գաւառ-
ներուն. յորում անուանի և անշուշտ իշխանա-
նիստ այլ էր ամուր բերդն Նկան, ուր շատ հեղ
վառնգի առեն կ'ապաւինէին աեարքն Արծրու-
նեաց, և որ հիմայ անուանի լուծ՝ կարծուի ըլ-
լալ Զոր անուանեալ բերդին աեղն, այն որ մեր
պատմութեան դիպուածէն առ՝ ուրիշ առանձ-
ին մը (Հայէն) անուամբ՝ Հայկանէաց դաշտ կամ էրկիր
կոչուէր:

Ցետ հետանալուն Սենեքերիմայ մինչև՛ ի Սե-
բաստիա՝ Խաչիկ էր Թոռնեան գաւառին մէջ
մնաց այն սակաւաւոր իշխանաց հետ, որք աւելի
ընտրեցին իրենց հայրենի հողուն վրայ կենալ կը-
ուսլ ու մեռնիլ, քան օտարութեան յաջող կամ
անյաջող բաղդը փորձել: Անշուշտ Խաչիկ տեսած՝
բայց էր զարհուրած առաջին Նեռոլաց սլաք-
նեբէն, և կու վատահէր իրեն և Շապուհ սպա-
րապետին նմաններուս հետ՝ անոնց դէմ ելնելու,
եթէ Թագաւորն հաւանէր մնալ իր տեղը: Բայց
երբ նա բազմութեամբ իշխանաց և զօրաց հետա-
նալով՝ երկիրը բաց Թոլուց Թշնամեաց առջին,
և երբ ըստ գաշնադրութեանն՝ Ցոյնք եկան ա-
րեցին Թագաւորական ամրոցաց, և անարի վա-
սիլ Արշակուրաս կաթեպան եկաւ կայսեր կոչմա-
նէ, Խաչիկ գանացեալ և զղուեալ՝ քաշուեցաւ
իր գաւառը իր բերդը, կխափոց առիւծու պէս
մռնչելով մոռ գալով մռածելով ու դիտելով:

Ցոյնք իրենց անծանօթ էրկրին և անատոյգ ժա-
մանակին յարմար կառավարիչ չգտնելով՝ անդա-

գար կու փոփոխէին ղևկած կուսակալնին՝ ի վտա-
պուրական. այսպէս այն արծաթազօծ Արգելը
վասիլը էկարենալով նուաճել զաշխարհը՝ յեա
կանչուեցաւ, և տեղն ուրիշ ղևկուեցաւ. անկէ
ետք այլ (1023) Նիկեփոր կոմինաս կամ կոմիա-
նոան, որ չափազանց գործօնեայ գտուելով ին-
ջուան կայսերուհեան այլ փափագեցաւ, անոր
համար կուրուհեան վարձք առաւ (1027), և
տեղը եկաւ (1028) նեղքինին Նիկիտաս. յեսոյ
կաւսակլաս և այլ աննշանք. մինչև եկաւ արժա-
նաւոր և կարիճ անձ մը, այն տաճկին Յունաց ա-
ռաջին զօրավարն Գէորգ Մանիակ, Գուգեղի որ-
դի, և կոլինակալ Եգեսիոյ. բայց նոյն իսկ իր
քաջուհեան զրկեց մեր աշխարհը իր փառաք
վարչուհենէն, զինքն այլ իր պատուէն. վասն զի
Յոյնք նեղեալք յԱրաբացւոց Աֆրիկոյ՝ որ՝ ի Սի-
կիլիա վազէին, քիչ առենէն յեա կանչեցին զՄա-
նիակ:

Ա.յս առեն Յունաց կայսր էր վատանշան Մի-
քայէլ Դ. Պափլագոնացին, որ ապանեելով իր
նախորդ Ռոմանոս կայսրը՝ ալիւնելուայ թագը
յափշտակեր էր, և անոր հետ Հայոց Թագին այլ
նախանձելով կու սպասէր. վասն զի մեր այլ կէս
իմաստուն կէս անիմաստ Յովհաննէս Թագաւորն՝
Անի մայրաքաղաքին և իր Թագին գերուհեան
գիրը տուած էր Յունաց կայսեր, զոր Ռոմանոս
վհհանձնուհեամբ և արդարամտուհեամբ ուզեց
յետ դարձնել. բայց անարժան էերկցու մը ա-
գահուհեամբ՝ նորէն անցաւ այս անարժան (Մի-
քայէլ) կայսեր ձեռքը, որ բոլոր կեանքը անպա-
տուհեամբ անցընելով ուզեց գոնէ մահը պա-
տուական երևցընել. այն այլ Թեոբեւս մեր հեռա-
ւոր Խաչիկ եշխանին անակնկալ գործակցուհեամ
բը: — Ա.յս կայսր էր որ զՄանիակ խաչբեց (1035)
կուսակալ Արծրունեաց երկրին, և նոյն տարին

յետ կանչէց՝ ու նաւախմբով ղրկեց ՚ի Սիկիլիա. պատուիրելով որ հետը բերէ երբ կուսակալու թեան մէջ գտուող կարիճներէն այլ։

Հաւանօրէն այս առթով (թէ ոչ աւելի ա ռաջ) Խաչիկ՝ որ արդէն տարիքն առած էր, կամ մոյ կամ ակամայ խուզրեց ՚ի Կ. Պօլիս՝ իր երկու աղջիկներ կարիճները՝ Հասան և Ձնձղուկ՝ ՚ի գուան կայսեր. որ զինուորական կարգի և պատուոյ մէջ յառաջանան, և Թերևս օր մը լի փառօք և իշխանութեամբ գառնան, փոխանակ օսար յոյն կուսակալաց՝ իրենք իշխեն և վերակացու ըլլան իրենց հայրենի գաւառաց. ինչպէս որ յիրաւի ոչ շատ ժամանակ ետև՝ (1051) գրուեցաւ այլ Վասպուրականի Հայ կուսակալ և գունք մը, մեծանունն և իմաստունն Գրիգոր Մագիստրոս։ Ըստ յուսոյ հօրն իւրեանց և պատուոյ Հայ անուան՝ Հասան և Ձնձղուկ յաջող և քաջ գանուելով յառաջադէմ եղան կայսեր քով և սիրելիք. և Թերևս սոյն այս ձգնող Ձնձղուկն է խորհրդակից և օգնական կայսերն, ոյոյ հետն էր Բուլղարաց պատերազմին մէջ, ուր միայն կրցաւ արուեստիւն մը ցուցընել Մխքայէլ, և յետ որոյ գառնալով ՚ի Կ. Պօլիս, իրաւունք Ձնձղկան՝ զոր կողմաս Ծինծաղուկ կոչեն Յոյնք, մտաւ իր չինած Անարծաթից վանքը, և հոն 1041 տարուոյն վերջը կնքեց խղճապատում կեանքը։

Բ

Խաչիկ ՚ի բացակայութեան երկու կարիճներուն՝ կարօտը կ՚առնուր իր վերջին կորիւնովը, ծերութեան յետին ծաղկովը. զոր Թերևս երկրորդ հարուածոց կոտաքոյս մը ընծայեր էր իրեն. կայսուս և սիրուհիք մանչ մը, որ այս աւուն տանուհինք տարուան գալստութեան հետ՝

10477396

աւելի մեծ հասակի զարգացմամբ, ուժով և այրական կերպարանօք փայլելով հօրը սիրտը և յոյսը կը պարարէր: Շատ հեզ հօրը ծալլած ձրնկերուն վրայ նստած՝ լսեր էր իր պապերուն քաջագործութիւնները, Թուրքաց առջին արշաւանքը, և իրենց առհմային (Արծրունեաց) Թագաւորութեան խեղճ վատրանգութիւնը. որուն հետ բաղդատելով անոր կանգնումն՝ ի ձեռն մեծոգւոյն Գագկայ, և անոր նախնեաց այլ քաջութիւնները, զոր գար մ՝առաջ Թովմաս վարդապետեան գրեր էր, աղուն պայծառ արիւնն երագելով լայնալանջ կուրծքէն՝նոր կարմիր մը կու տար երեսացը. մանաւանդ երբ հայրն՝ կամ իր ապարանից աւագ աշտարակին պատուհանէն, կամ շրջագայութեան առեն՝ սարէ մը ցուցընէր ինչուան հեռաւոր հորիզոնին եզերքը՝ Արարատեան և կորճայից լերանց արծաթագագաթ սարերը և արևափառ տառնամանիքը, ուր որ իրենց Թագաւորութեան սահմաններն տարածուէին: Անշուշտ՝ տարւոյն աղէկ և յարմար եղանակին՝ Խաչիկ կ՝առնուր իր Իշխանը (վան զի այսպէս կ՝անուանէր իր վերջինեկն), կու հաներ ի հով և ի դաշտ, կու վարժեցընէր որսոց և զինուց՝ որք երթալով կու ծանրանային իր բազկացը, ոչ այնքան ծերութենէն՝ որքան երկար առեն ի գործ չածելէն. և արդէն իր հայրենի սուսերք ու սլաքքն՝ ժամանակին ժանգոտ հաճն առեր էին. կապարճք իրենց աշխոյժ նետերն արգելած պահուէին, և կմրթաձև վահանքն անկոփ անգործ մնային. բայց եթէ երբեմն մաքրէին սրբուէին, կամ Խաչիկ և Իշխանիկ զբօսաբար իբրև քնարի զարնելով զանոնք հնչեցընէին նիզակի ծայրով:.. Ո՛րքան նուաղ, խառնակ, աննշան հնչիւն. սակայն ինչքո՛ր չէր լսեր անկէ Խուլ Խաչիկն. ինչ արձագանգք Թնդային իր դեռ արծաթածամ ալեաց տակ այլ չպաղած գլխուն

մէջ, իբրև ընդարձակ գոգաւոր սրահի մը մէջ։ — Ա՛յսգուսս ամենէն ուշ ծերացողն սկրան է. Խաչ-կայ սկրան ժրուխթեամբ՝ արեան և քրտանց մէջ անած՝ հասակին և բազդին հետ կռուէր հակառակէր, չոխ-ծ ջնէ էր. և Թէպէտ բռնադատեալ այգեբէսալ յորսոց և յարենէ, բայց անարգել սկրան երբեմն իր մնացեալ անգործ ուժովը կու ճնչէր ու մունչէր, երբեմն այլ անցեալ ուժոյն և կենաց վրայ հաչէր հառաչէր։ « Քանզի էր այր » քաջ և յաղթող պատերազմող, բայց ծերա-» ցեալ էր՝ և Թոյլեալ զգործ պատերազմին, և » հառաչելով ապաշաւէր », կ'ըսէ պատմիչն։

Տարեաց տկարութեան և սրտի սառակութեան պատերազմին չատ զօրաւոր կ'ըլլայ եռանդուն բնաւորութեան և գործունեայ պատերազմականի անձանց մէջ. մանաւանդ եԹէ այն կենաց խոնարհման առեն իրենց վրայ ազդեցութիւն ընող դէպ-քեր այլ պատահին. կարծես Թէ դեռ երկնից պարզ երևութիւն այլ՝ հեռուէն ծանր ու Թանձր որոտմունքներ կու լսուին, կամաց կամաց կու մօտենան՝ գուշակելով մեծ մրրիկ մը, մեծ յեղա-փոխութիւն մը։ Ա՛յսպէս կ'երևէր կ'ըլլար Խաչ-կայ. որոյ ականջէն աւելի դիտող միտքն՝ մեծա-մեծ խլրտմանց խլուրտիւն լսէր։ 1042 տարուայն սկիզբն էր. մեկ դիէն կը հնչէին երկայն շփոթ և կարևոր ձայներ 'ի տանէ Բագրատունեաց, յետ մահուան Յովհաննու-Սմբատայ դանդալ Թագա-ւորին, և անոր աշխոյժ եղբօր Աշոտոյ Թոլած կարիճ Գագկայ ժառանգութիւնն ուշանալուն միջոց. երբ Պահլաւունին Վահրամ՝ ծեր հաւա-տարիմ և կարիճ սպարապետն՝ կու ջանար զինա Թագաւորեցնել. և վիսաբարոյ վեհան Սարգիս՝ Յունաց մտանել Բագրատունեաց գահը. — մեկ-այլ դիէն կու հանէին երկրորդ անգամ հեռա-ւոր շառաչիւնք Եփրատայ, յետ քսան տարուան

լուսնեան, Տուպլսիլ բեկին չարժեցուին յարևելից և արշաւելով դէպ յԱտրպատական, որոյ մօտ էր Խաչկայ գաւառն այլ։ Իսկ յարևմտից կու հասնէր ջամբաւ մահու կայսեր Միքայէլի, որոյ գուրը գաուէին եօթն ուղթ տարիէ՝ ի վեր Խաչկայ կարիճքն՝ Հասան և Ձնձղուկ, որոց հնոյ յետ գառնալու աւելի հաւանականութիւն կար, կամ մանաւանդ աւելի փափագ երեննց հօրը սրտին մէջ... ո՛չ, և այլ աւելի պէտք այլ կար, զոր չըգիտէր ծերուկին, այլ գուցէ կ՚իմանար նախազգայ անբաւարեալի կրքով մը։

Գ

Ահա՝ բազմաց և իր բաղդին կերպափոխութիւն մը բերել կրցող դիպուածքն, Թագաւորաց մահերն և չարժմունք արևելեան նեաոտղ աշխարհաց կալլին, հորիզոնին զանազան կողմերէն երևցող կասկածելի ամպերու պէս հեռուանց նկարէին Խաչկայ առուութեան եզերքը. բայց երեն փոթորիկին փրթաւ անկարծելի կէտ մը, յանկարծեցուկ ամպ մը, նոյն իսկ Նկանայ սահմաններու մօտէն։ Շատ հեղ հեռադէտ աչքեր չեն առներ կամ զանց կ՚ընեն մօտագոյն բաներըը, որ երեննց աւելի կարևոր էին դիտելու։ Թոռնևանայ սահմանակից են ուրիշներէ զատ՝ Պարսկահայոց աշխարհին Հեր և Զարևանդ գաւառքն այլ, որ հին կ՚ըսուին Խոյ ու Սալամաստ. մեր հին Թագաւորաց ժամանակէն՝ ի վեր՝ այս երկու գաւառքն միշտ մէկ առղ կու յիշուին, իբր մէկ իշխանի տակ (որ Շահապ կ՚ըսուէր). նոյնպէս յիշուի այս պատմութեանս առեն այլ, Թէ և առանձնակ տերտղ այլ ոչնէին (ինչպէս անկէ առան տարի առաջ (1031) յիշուին[1] Հերայ տէրն Հերասին,

[1] Մատթ. Ուռհայեցի։

Սալմանասայ տէր՝ Կոպան)։ Արտաքացւոց աշխարհակալութեան առեն այս կոլմերս առանձին կուսակալ կամ բռնաւոր մը նուաճելով՝ յաջորդաբար կու տիրէր անոր ցեղն մինչև այս պատմութեան ժամանակ այլ, և շատ հեղ Արծրունի իշխողաց միասս կամ կռիւ կու հասցնէր։

Հիմակուան տէրն կամ տեառնք Հերայ և Զաբևանդայ՝ կամ վերոյիշեալ քաղաքական դիպուածներէն դրդած, և կամ ուրիշ պատճառէ մը, գուցէ և կասկած մ'առնելով Խաչկայ կարիճ որդւոց դարձին 'ի Յունաց, ուզեցին յանկարծ արշաւանօք իրենց դրացի դեռ ազատ հայկեան երկիրը կոխել։ Եւ յիրաւի ամենևին չկարծած առեն՝ Խաչիկ գոյժ լսեց թէ Թշնամիք 'ի Թոնդրակայ Թափեցան անթիւ քաղմութեամբ՝ և ապատակ կու սփռեն. եթէ քիչ մ'այլ ուշանան՝ ամեն առել աւար աւեր կ'ըլլայ։ Հառաչեց ծեր իշխանն դէպ յարևմուտս. Ո՞ւր էք Հասան և Ճնճղուկ, ձեր ժառանգութիւնն ապահովելու և ձեր հօր խոնարհած արևը չմարելու։ Եթէ այն հրեղէն հառաչանքն այլ հասնէր փայլական կամ եղեկարական սղգման ակս մինչև 'ի Պօլիս, ապականն որդւոցն իրեն շուտով օգնութեան հասնելու հնար չկար։ Բայց անկէ աւասրելին այն էր՝ որ ուշ թէ միայն հեռուէն՝ այլ և 'ի մօտէն օգնականք և զօրականք չկային այն կարևոր և յանկարծահաս ժամուն. Թերևս այլ աւելի աւասրելի հաշուէր Խաչիկ՝ իր իսկ անցեալ հասակը և Թողլացեալ Թևերը. վասն զի ինչպէս ըսաւ պատմիչն (Մատթէոս), և ինչպէս կրկնէ միւսն (Մարաս), «Ծերացեալ էր և պարապեալ 'ի բազում ժամանակաց»։ — Բայց սիրան միշտ երիտասարդ, սիրտ հայրանախանձ, սիրտ հայկանման, որ սկիզբ Թագի նորանշան և նախագուշակ նեռամներէն անգամ՝ չզարհուրեցաւ, չմոռաց չփախաւ իր

10477396

հարց սահմաններէն՝ նաև յետ հեռանալու իր ներկայէն և պաշտպան Արծրունեաց. հիմայ հասած վտանգը՝ իրեն յետին քայլուածեան և պարտուց գործ սեպեց. հազիւ վայրկեան մը մտածեցէն և աչքերը չորս դի պտըտցընելէն ետև, իր ահեղ ձայնովը կանչեց, և դլխուն արծաթափայլ ալիքն ծփացընելով շուրջ եկաւ իր նախնեաց դարպասին մէջ. իսկ առաջ երիտասարդութեան գաւազանը՝ երկայնատեպ նիզակը, կոփեց դրած լուծ պընձակուռ վահանին. հաւատարիմ պաշտպանակն հնչեց իր նետերու տարափով ցնծացեալ ձայնը. զուարճացաւ Խուլ Խաչկայ ականջն. և չորս դիէն՝ իրեն հաւատարմագոյնք ձինք սկսան չարժիլ. և երբ մէկ մէկ իր կարճութեան օրերուն ապաւազինութիւնը կ'անցընէր դողդոջուն մարմնոյն մասանց վրայ, կարծես թէ մոգական դեղով մ'այլ զանոնք կու նորոգէր կ'ուժովցընէր, կու մանկացընէր. սպրաւարան՝ ի գլուխ դրած, սուրը փորձած և ձին ձայնած աւեն՝ հին Յունաց և Հայոց գիւցազանց մէկին կ'ելլէր: Ափսո՛ս, որ անոր արժան զօրագունդ մը եաւէն չեկաւ. այլ ընդդէմ հազարաւորաց այլազգեաց նահատակ ելան եօթանասուն կտրիճք, ինչպէս երբեմն Աշոտ Երկաթին հետ՝ի Սևան կղզւոջ, կամ մեծին Վահանայ Մամիկոնոյ՝ ընդդէմ Սասանեանց: Անոնց և Խաչկայ պէս սուաջնորդին հետ՝ քաջական էին եօթանասունքն այլ, որոց մէկին հարւրերի վրայ վախ կու ձգէր, և յանկարծակի հանդուներուն վրայ՝ աւելի անկարծաքար հանելով՝ կու ցրուէր:

Խաչիկ՝ այն անունն և անհատատար պատերազմին մէջն՝ գուցէ իր երիտասարդութեան աւունէն աւելի և նոր կերպով մը կու կռուէր. Թուխ Թուխ ամպոց մէջ ձերմակ ծխանման ծուէններու պէս մէկ մը հոս մէկ մը հան կ'երևէր

արտավար երիվարովը, և լայն Թուրը փայլատակե-
լով աջ ու ձախ կ'ելլէր. արէն աւելի ձայնովը
շփոթելով ու հալածելով պէհնա. որոյ աւելի
շուտով հասնելու և ամեն դի դառնալու համար՝
իր արտորանացը դանդալ կ'երևէր վարժ ու ճա-
պուկ և հաւատարիմ ձին. և կարծես Թէ առն
աւելի շուտով իր անհարժեշտ ոյժը և արուեստը
գտեր էր, քան Թէ իր ռազմամուտ երիվարն: Երբ
կռուին կամ Թշնամին մղելու ամենէն տաք տեղ
Խաչիկ առաջ քշէր, ձին ականջները ցըցած, աչ-
քերը շեղած՝ վիզը յետ յետ դարձընելով անտ-
վոր խրխինջ մը կու ձգէր, որուն մէջ՝ վայ վայ
կարդալէն աւելի ձայն մ'այլ կար: Ականայ կա-
մօք Խաչիկ մեկ մը գլուխը եաև դարձուց... Ան-
պատճառ չէր, ձին իր տխուրակցին հոտն և ձայ-
նը կ'առնուր: Խաչիկ ալ նշմարեց տեսաւ անոր
պզտիկ ընկերը, սպիտակ խնուսիկը. ան էր, ա-
նոր քաղուածքն, անոր խրխինջն, անոր զրնգ-
նելն, անոր զարդերն, նշանն, ցցուածքն, լուսնա-
կըն... Բայց ամենէն աւելի աչք ու սիրտ առօրն՝
անոր կայտառ վերելեակն էր, փայլուն ապակեան,
ծաղկահատակ պատանեական, Խաչկայ արժանի
համհարըն, հարազատ հօրամոյնն, իր որդեակն,
Իլխանէին:

Ճօճ նիզակն 'ի ձեռին, ձիուն գլխուն վրայ
ծռած՝ անհամբեր կու մորակէր կ'երագէր, ան-
փորձ յանդգնութեամբ Թշնամեաց մէջ կու նե-
տուէր. առջի անգամ որսի մտնող բարակի պէս՝
ամեն կողմէն շարժուցը վրայ կանչելով, սպառ-
նալով, զէնքերը շարժելով. ուսկից անշուշտ քա-
նի մը մահացու կամ ազգու հարուածներ այլ
Թռան շփոթած այլազգեաց վրայ. Թերևս անոնց
փոխարէնն այլ պետի գար էր վրայ. երբ հասաւ՝
Խաչիկ, «Ա՛յ յանդուգն՝ իսոք ջնջուլ ուզայ, կան-
չելով. չպատուելուդ քեզի որ ամրոցէն դուրս

չէլնես. կ'ուզէս որ այսօրուան թէրևս իմ եաքի քաջութիւնս և յաղթութիւնս քու արեամբդ ծածկուի. և Թշնամեաց չքերած սուգը՝ գոնե քեզ քու հօրդ, քու տանդ և ամեն ազգիս»:... ԵՒյս և այսպիսի խօսքերով՝ պատերազմական ձեռքը սրտուն կուրծքին դրած (որոյ այնպիսի ոյժը գեռ չէր փորձած Իշխանիկ), քշեց հանեց վտանգէն դուրս, և նորէն՝ի տուն գարձընելով՝ խստիւ սպրսպրեց սպասաւորաց որ զգուշանան պահեն զնա:

Ինքն Թռաւ գարձաւ իբրև երրորդ հանդիսի համ նահատակութեան, նորէն հետամուտ ըլլալու Թշնամեաց, որ պահ մը հոգի առեր էին առջի չիտութիւնէն սթափելով. այլ գարձեալ ծեր՝ բայց փորձ առեր ծի մը վերջին ճգանց հանդիպելեցան, որ գրեթէ միշտ իր հին ոյժը կու պահէ, Թէ և վէրք առնու մեռնի այլ, բայց յետ համ՝ի վերայ Թշնամեացն: Հոս երկայն առեն կռուելով այլ՝ գեռ Խաչիկ ոչ օրհասական էր և ոչ վիրաւոր. այլ որ կողմն որ գառնար՝ ասպատակներն անկէ կու պահէին ցրուելէն. որով չիրաւի առելի կու յօգնէր Խաչիկ և չէր գիտեր ո՛ր դի գառնայ. մինչև տեսաւ որ հեռուն աւեղ մը՝ փոթորկէ փչուած ամպերու պէս վայրատեալ ասպատակներն՝ իբրև անհով խորշ մը գանելով՝ կու դիմեն կու դիզուին, պար կու գան, ամեն կողմէն զէնքերնին կ'ուղղեն գէպ՝ի կենդրոն: Ինքն այլ գարձուց ձիուն գլուխը գէպ այն նոր փոթորկին վրայ, ու ամպէ ամպ ցատքող փայլական պէս հասաւ: Բայց կարմրուկ կայծակն երագ էր քան զփայլակն, իրմէ առաջ հասեր, չանթեր, վառեր, պարպեր էր իր կրակները, և ահա մարելու վրայ էր:... Հազիւ Թշնամեաց ջոջապատ ձամբային հասաւ Խաչիկ, տեսաւ անոր մէջ արծաթափայլ զրահաղեաս մը՝ որ իբրև իւռվեալ ծովու ահեկ ահեկ

հանուղ ալեաց պէս՝ մէկ մը վեր կու ցատքէր փայլէր, մէկ մը վար կու ցածնար կու ցնդէր. մանաւանդ թէ այն ալեաց խաղ ու ձայլ եղած նաւակն մը պէս՝ մէկ մը դողդոջալով դնդլներուն գաթը կ'ելնէր, մէկ մը թնդալով անդունդներու մէջ կու ծածկուէր: Երբ վերջի անգամն ևս ամեն անգամներէն աւելի պայծառ ու ոգևորմունք կերպով վեր երևցաւ, Խաչիկ որոշակի տեսաւ,... մէկ մ'այլ բան չտեսաւ. կորուս էր արևն այլ էր միտքըն այլ. էր ամեն բանն այլ կորուս:...

Դ

Դատնանք Իշխանական. երկրորդ անգամ հօրմէն արգիլուած ամրոցին մէջ, առջինէն աւելի կու նեղէր կու դժարէր անգործ անհանգիստ մնալու. մանաւանդ որ մէկ մը պատերազմի հոտ այլ առեր էր, արեան կնուռնքն այլ Ճակտին հասեր էր. տեսեր էր նոյն իսկ իր ծերունի հայրը՝ երիտասարդ տաւիճ դարձած այնպիսի վտանգի տեն. ինքն պատանեակ՝ ախտի չկարենար կրակոտ կուրնի մը դառնալ:. Նոյն ինքն հայրն քերնով խատիւ արգիլած տեն՝ միթէ գործով և օրինակով զինքն այլ աւելի չէր գրգռեր՝ այն տեսի Թշնամեաց վրայ Թափելու ունեցած այժն ու վրէժը: Հայրն նեղացաւ, բարկացաւ, կրնար այլ աւելի այլ նեղանալ, զինքը պատժել, Թերևս կապել ու բանտել այլ, որ սովի խօսք մնել, հանդարտ կենալ, վտանգէ ազատ մնալ. բայց եթէ յանկարծ, ո՛հ, Աստուած չթողու, հայրս՝ այն շուներէն պաշարուած՝ ակարանայ, ընկնայ, ըսպանուի, ես ի՞նչ պիտի ըլլամ. ո՛վ անկէ ետև ի՞նչ կրնան հնազանդիլս պիտի գովէ: Մանաւանդ Թէ զինքն այլ Թշնամեաց գետի չէր կրնար, ասկայն որքա՜ն կրնամ ազատ սեպուիլ. ով պիտի նայի

վրաս, կամ ով երեսս պիտի չզարնէ՝ այն հատաւ-
կին և այն վտանգին մէջ հայրս մինակ թողուբը:..
Ի՞նչ պիտի ըսէ Հասան, ինչ պիտի ըսէ Ճնճղուկ.
ինչ պիտի ըսեն մեր տան հաւատարիմքն, երբ
վաղը գտնեն յօտար աչխարհէն, և տեսնեն մեր
տուն ոեղն աւերած, և հայրս Թշնամեայ ձեռ-
քով մեռած. ու ես անոր որդի, անոնց եղբայր,
անպաշտպան անընկեր Թողած ալևոր հայրս...
Ես հօրս յետին յոյսն ու գաւազանն. ես Իշխանիկ՝
որոյ անունս յուսով յիշեն ամէն Թուռնեանցիք.
ես Թողում վտանգի մէջ հայրս ու նահիմ հոս...
անկարելի, անկարելի:...

Այս և սանդմէ աւելին մտքով ըսած առեն,
մարմնով ալ անգործ չէր կենար. այլ լալով սպառ-
նալով երդուելնալով ըրաւ չըրաւ ինքզինքը նո-
ղէն նետեց իր ձերմակին վրայ. ու առջինէն աւե-
լի մորակելով երսգելով հասաւ կուռոյ տեղը.
ինչպէս հին առեն Մամիկոնեան պատանեակն Ար-
տաւազդ. և քանի մը կտրիճ հետևորդաց հետ՝
հօրը հաւասար և արժանի կու զարնէր կու զար-
նուէր, շատ ախոյեաններ գետին կու փռէր: Ա-
ռանց գիտնալու հայր և որդի իրարու կու մօտե-
նային. բայց Թանձր խուռմբ մը Թշնամեաց իրենց
մէջ պարիսպ կար: Ան խուռմբին մօտենալով էր
որ Խաչիկ տեսաւ այն արծաԹհատիկ սպառազէ-
նը, որ չորս գին պատած Թշնամեաց վրայ իր ա-
մեն զէնքերը Թափելէն ետև, մօտեցուներուն վրայ
կոփեցընէր նետահար և չախչախած վահանիկը. և
երբ այն այլ փշրեցաւ՝ իր անզէն բազկունքը շուտ
շուտ շարժելով՝ կարծես աւելի կ'ուզէր Թշնա-
մեաց չոլացած զէնքերը չփոթել, քան Թէ իր վտ-
վրուն ու արդէն ոչ անարիւն վարդ երեսները
պաշտպանել: Ճանչցան Թշնամիք այլ Թէ ով և
ինչպիսի կորիւն է գիմացնին եղողը. և անգութ
սուր նիզակ ոէգ տեղացին վրան:.. Ետ վահանին

Չախչախեցան այն չաղուտ բազկներն այլ, իբրև ըարկտուր անպիտան աղել՝ ուսերէն ի վայր կախեցան. և երբ եռքի անգամ ձերմակ ձին ցատքեով իր հեծելոյն գլուխը բարձրացուց՝ մահուն հարուածն այլ չիտակ անոր վրայ հանելով անհրաժեշտ ըրաւ։։ Տեսաւ Խաչիկ Իշխանիկայ վկէն վազած վարդարիւնը, և կատաղի թշնամեաց մէջ գլորիլը։։ Մի և նոյն վայրկենին հայրական աղեաց սէրն ամեն բան չմոռնեց ծածկեց իրմէ. անկասկած հասաւ սև գիշերն, գիշեր՝որ այլ չիլուսնար. զինքերն ձեռքէն, ինքն երիվարէն վար ընկաւ։։ Երբ հասաւ գոտաւ գԻշխանիկ՝ այդէն երկուքին մարմինն այլ վէրքերով և արեամբ ծածկուած էին դաշտին վրայ. զինքերնին զարդերնին թշնամեաց ձեռք ընկած. տաքուկ շուներնին՝ հոգիներն էին իրարու հանդիպողքն։ Անլուր ծերուներն և մայրազ մանուկն՝ ծառի ու ծաղկի նման քովէ քով կոտրած ընկած էին դաշտին վրայ. բայց հոգինին զուգափայլ լուսաթև Թուան արդար հայրենասիրաց և նահատակաց երկնաւոր հանդիսարանը։։։

Թուիր դու այլ գուժաւոր համբաւ, դանդաղ թևերդ սևով ու կարմրով ներկած. հասիր յերկիր Վասպուրականի, երկեցիր Հասանայ և Ձնձղկան. լսանան երեսց հօր և եղբօր սիրալի և տիրալի կատարածը։։։։

Ե

Հասաւ ազաւոր համբաւն ի մեծ քաղաքն կայսերաց. այն վիպասանից և ոտքերգուաց հաճոյ՝ այլ կրոնից անհաճոյ ժամանակը, յորում Հասան և Ձնձղուկ լուեցաց երկայն պանդխտութեան վերջը տեսանելով և դառնալու պատրաստուելով, ոչնախ որ կու մօտենար Ճամբորդութեան օրն՝

10477396

այնքան սրտերին կուռ տպագնապէր, կրկին կրէց՝ ուրախութեան և կասկածանաց մէջ. Թէ արդեօք ինչպէս ալիսի գտնեն իրենց ծերուկի հայրը և տուն տեղը: Ձամբայ ջընկած կուռ փախապէին նոր և վերջին լուր մ'առնուլ, որ և արդարև վերջին եղաւ. իրենց ամեն ակնկալեալ ինդուրթեանց վերայ սիրտ ոգոյ քօղը: Նաւահանգստին մօտ խոտակած նաւուն պէս եղաւ իրենց յոյսն այլ. և Թէ ոչ պարապմամբ՝ այլ պատահմամբ նմանելով կըրնային տանք այլ ըսել մեր հին Թարգմանչաց հետ իրենց ոսկատող և սպասեալ սիրելեացն համար. « Մինչ նոքա զմեզն յօսային գարձ, և պատուա-
» սիրել մերով ամենիմաստ արուեստիւս և կա-
» տարելագոյն յարմարութեամբս, համայն և մեք
» փութապէս դիմեալք ՚ի Բիւզանդիոյ՝ յօսայաք
» հարանեաց պարել, անվեհեր երագութեամբ
» կրթեալք, և առագաստի ասել երգս. արդ փո-
» խանակ խրախճանութեան ՚ի վերայ գերեզմա-
» նի ողբս ասելով ողորմելի հառաչեմք. ուր և ոչ
» տեսութեանն ժամանեցեալք աչացնոցա կափուց-
» մանց, և լսել զվերջին քարքառն (Իշխանական)
» և զօրհնութիւն » (Խաչկայ): — Յանկալի հօր և եղբօր այսպէս անկարծ և ցաւալի զրկման վրայ անհրաժեշտ արտմութեան պարտքը հատուցանելէն ետև, Հասան և ձնձղուկ Թէ զգայուն և Թէ կարկաչ, երիտասարդական և զինուորական եռանդով բորբոքած աչուընին և սրտերնին զայրացեալ դարձուցին յարևելք, իրենց չարեաց եկած կոյմը. և յետ արտասուաց՝ արեան պարտք մ'այլ առին վրանին. ծանր ոխտ մը դրին. ցաւն ՚ի վրէժխնդրութիւն դարձուցին. սուր ծածկեցին իրենց վեհասութեան զգեստները և սպայապետութեան սպատազինութիւնը. երդմունք ըրին՝ կամ այն սևուռ սգով խլնել իրենց արեւնակցաց հոգը, կամ անոնց վրէժն առնելով ՚ի Թշնամեաց՝ փոխել ձևերնին:

Ծով ու ցամաքի մէջ վիճակ ձգեցին թէ ուրն ա-
ւելի շուտով զնրեանք կրնայ հասցընել իրենց սի-
րոյ՝ ցաւոց և վրիժուց ասպարէզը: Ո՛րչափ կու
տրնտրնային Պոնտոսի դնդղնեերն զնրեանք սահեցը-
նելու գէպ՝ ի Տրապիզոն. ի՛նչպէս տակաւ կու գա-
յին արևմտեան հովերն՝ քշելու զնաւն արևուն
եւած կողմը: Նոյն իսկ իրենց հլու երիվարաց ոտ-
քերն չէին երագ երագ սրոփեր Խալտեաց լեռ-
ներէն իջած և Հայոց Մեծաց լեռնագաշտակ-
ներու վրայ կոխած առեննին: Սակայն ձամբան
շուտով կու կարճնար, անհամբերութենն էր
որ շատ ուշ կարճցած. ինչուան որ Երասխայ
հովտաց և ձորոց ձամբաները բռնելով հասուց
մեր զոյգ կարիճները այն գետոյն արևելեան դար-
ձուածքին մօտերը: Հայրենասահման սարերն ե-
րևցան. սրտերն մեծամեծ թռունդ առին թռունդ
առին. հայրենեաց հոտը կոխուեցաւ: Հասան և
ձնձղուկ մտան՝ ի թռուռնեան. մօտեցան՝ ի նկան.
ձանչցան իրենց բերդին ձամբան, իրենց պատա-
նեկութեան խաղոց և ձիասլարժութեան դաշ-
տումարգը. երևցաւ հայրենի և ծնողական ապա-
րանից աւազ աշտարակն:..

Ա՛յլ ո՛ւր էր իր կարմիր–կանաչ նշանակն. իր
պարծանաց դրօշն... ինչո՞ւ չէին լսուեր իշխանա-
կան փողից հնչմունքն և որսական եղջերաց վան-
գիւնքն. ո՛ւր ընկած լռէին թռռունեանց դափն և
թմբուկն:.. Չէին լսուեր ձայնք աւետաւորաց,
ձայնք բարեաւ տեսութեանց. չէր լսուեր ձայն
հօր, ձայն եղբօր. չէր հասներ՝ ոչ առիւծային
բարբառն Խաչկայ, և ոչ անուշակ կանչիւնն Իշ-
խանկան:... Ո՛վ սրտաթափ լռութիւն. ով ան-
երթեւեկ ձանապարհք. ով ամայութիւն հայրե-
նեաց. և չար քան զամենայն՝ ով անմեծար գե-
րեզմանք:.. Քաչկայ պէս ընկան. ինչո՞ւ դեռ ան-
պատիւ մնան. Թուէր թէ առանց վրիժուց պիտի

էկաղնեայն խաղալուիլ՝ ի հոլ՝ Խաչկայ կամախուքն. և ոչ շուշանն վայրենի ախտի շարժէր իր բաժակ-ներն Իշխանական հողվերաց վրայ, քանի որ անոնց նշանակը գերի ընկած էր յօտարութեան: Եթէ անհնար է անկեալ քայլից արևը յետ դարձընել, մինչ էջը հնար յետ դարձընել անոնց արևէն եաքը ամենէն սիրելի բանը. պէնն ու պարտը:

Ջ

Ախտիկ կրքերով միանգամայն խորապիտու-թեամբ առանց ժամանակ ծախելու՝ Հասան հայ-րենի իշխանութիւնը պայազատելով, կանչեց ի-րեն դրացի և առաջուց ծանօթ ու բարեկամ Քուրդ-էֆէնտի մը, որուն վրայ վստահ էր. Թափեց դիմացը հազար կարմիր, – հայ քրտինքով շահած յոնական գանձ, – հազար ոսկի. Ա՛ռ, ըսաւ, ու ասոնց տեղ ոչ զէնք ոչ զինակիր կ՚ուզեմ քեզմէ ինծի օգնութեան ու վրէժխնդրութեան. հապա ինծի դէմ մարդ ու թշնամի, գունդեր ու բանակ-ներ. այնչափ որ սիրտս հանդչի, և հօրս ու եղ-բօրս այրեցուածքը մարեմ: Գնա պարտէ ձայնէ իմ երկրիս չորս կողմը. իմաց տուր Հերայ տնաւեր բռնաւորին, արիւնցու այլազգիները. Ի՞նչ ապ-շեր դադրեր էք, ըսէ. ինչո՞ւ չէք վազեր Թալներ զԹուռանեան, քանի որ անուէր ու շուար միացեր է. եկէք եկէք ու միանգամայն տակն ու վրայ ը-րէք Խաչկայ երկիրը, որ իրեն պէս անհետ կոր-ծուի: — Ցանկարծ գանձ գտած Քուրդն՝ մէջքը այնքեց հազար կարմրով շարած կամարը, Թաւա-լը քաշուկ ձիուն վրայ, ու երկայնաձօճ նիզակը ծռած՝ մոլեկան գիւաւորի պէս չորս սահման ման գալով կանչէր դրդէր ոտք հանէր այլազգիները գիտել Թալնել զԹուռանեան: Ամենէն առել Հերայ ու Սալմաստայ ապստամբներն, « Երթանք, ը-

» սին, մէկ անգամով հիմնայատակ ընենք չէնքե-
» րը, այրենք աւերենք գաշտերը, յատակին հոլն
» օդուն հանենք »: Զայն առնին լրտարու, մարդ
մարդու ձի ձիու հասուցին, գունդեր բանակներ
կապեցին. 15000 զինեալք և հեծեալք խառն 'ի
խառն յարձակմամբ ահել սպառնալեօք հեղե-
ղաբար Թափեցան 'ի Թոռնևան:

Լսեց, տեսաւ, զուարթացաւ Խաչիկ պայ-
ազան. մունչեց ինքն այլ առիւծաբար. ցասաքեց իր
կրակոտ երիվարին վրայ, բարձրացուց հայրենի
դրօշը, հնչեցուց անգամ մ'այլ հայկական Թըմբե-
կին խրոխտուրտ դոփիւնը:... Լսեցին, զարմա-
ցան, սոսկացան բնաւրաւորքն առպատակաց. և
այլ աւելի ափշեցան՝ երբ առյսի և ոչնչանալու
մօտ կարծուած Թոռնևանայ գաշտաց վրայ իրենց
գէմ 5000 զինեալ ու հեծեալ հատաքաղուկ
Հայեր տեսան, զորոնք՝ իբրև պղնձապատ լիշկացը
կոփեալին՝ հողէն գուրս հաներ էր Հասան. որ և
եղբօրն հետ սպառազինեալ, և գեռ սգոյ նշանն
այլ զրահէն հետ խառնելով Երասխայ և Գողթան
հին դիւցազանց նման սիգալով վեր վար կու գայր
իր գնդին մէջ: Հայոց անկարծելի պատրաստու-
Թիւը տեսնելով Թշնամիք այլ պատերազմի պատ-
րաստել կ'ուզէին, երբ Հասան արտորալով երկու
բանակաց մէջ մտաւ, ու զայրագին և տխրագին
խառն և ահել ձայնով մը կանչեց, իմացուց որ
իր հօր անպարտ արեան վրէժն առնուլ եկեր է,
և կու հրաւիրէ անոր սպանողն իր դէմն ելնելու
և մենամարտելու:

Հրաւէրն ընդունայն արձագանգ մը չտուաւ.
այլ իսկոյն կարգ կարգ զինելոց եռանդն մրրիկ
փրփած ու ամպի կտորի պէս՝ առաջ անցաւ բա-
նակէն դուրս ցատքեց, Հասանայ դիմացն ելաւ
հսկահասակ սեւ մը, որուն գոյնն և ջահին աւելն
վախ կու ձգէին քան սպառազինութիւնն. որոց

10477396

նման էր սիրտն այլ՝ խիստ և յանդուգն. ձայնն այլ կծու և արտախոց, մանաւանդ Հասանայ, երբ կանչէր, Թէ Ես եմ հօրդ սպանողն. և ահա կու տեանես ներքեւս իր ձին, ահաւասիկ իր Թուրն ու դրօշն. եԹէ կարիճ ես՝ ա՛ռ ու սար: Ուրիշնե րու սոսկումն ազդեցին այս ձայնս ու տեսքն, քայց Հասանայ արտմտուԹիւնն ու վրէժ. տեսնելն՝ լսելն՝ և փայլական նման սև ամպին վրայ զար նուելն ու յերկու ձեղքեւն մէկ ըրաւ. անանկ ու ժով Թուրն իջուց սեաւ հսկային ուսին ու վզին միջէն՝ որ աջ ու ձախն իրարմէ քաժնուած երկու պատառ ընկան: Հասան հօրը ձին ու զրահներն առած՝ դեռ կայծակնաԹափ աչօք գարձաւ իր բանակը:

Կարգն եկաւ ՃնՃղկան, որ անհամբեր կ'ըսպասէր իր մեծ եղբօր գործը վՃարելուն. և նոր որոտմունքով դուրս ցատքեց իր գնդէն, անվախ ու հանարձակ կանչելով իր ոտից եղբօր՝ Իշխանական խոշոր գազանը. որուն յանդգնուԹեան և արհամարհանաց չըռելով մէկէն երևցաւ կարիճ Պարսիկ մը. Ահաւադիկ՝ կ'ըսէր, քու մայրազ եղբօրդ սպիտակ ձիուն. ահա իր դրօշն ու նշանն, ահա իր զէնքերն. Թէ կարիճ ես մէկ ու ա՛ռ. սպա Թէ չէ՝ ես զքեզ խաւրեմ քու եղբօր քով:... Այլ երկայն չկարցաւ ըսել և հայհոյել. վասն զի Իշխանական նշանիկը տեսնելով ՃնՃղուկ, զոր Թերևս ինքն այլ անկէ առաջ կրեր էր, արեան և արցունքի գոլշեօք աչքերն լըցուած՝ մորակեց ձին, դրաւ ռումբը դէմ սրտի Պարսկին, հրեց Թափ անցուց, 'ի գետին փռեց իր եղբօր սպանիչը. և անոր ցատքըտուկ սպիտակը ու զէնքն և զարդերը յափշտակելով դարձաւ ետևդարձ Հասանայ քով:

Երկու եղբարք այլ իրենց ազնիւ հարուածատց վրէժն առնելով, աւարնին յետ գարձնելով իբր

առաջին և երկրորդ յաղթանակին ըրած հաշտութիւնն. կոչ ձիւսալ երրորդ մ'այլ, իրենց երկրին և մարդկան վնասանքն այլ փոխարինելու: Արդէն Թշնամիք այլ այս քանիս յորդոր կոչ ուղին իրենց չինութեամբ. և խուճապելուն. իրենց կողմէ երկու շահատակաց՝ Խափշըկին և Պարսկին ընկնալ և Թալինը առնելով՝ ոմանք փախչելու ոմանք կռուելու կոչ չարժէին, երբ Հայք յարձակեցան վրանին. և Թէպէտ անոնք եռապատիկ աւելի էին Թուով, բայց չկրցան Հասանայ և ձնձղկան և անոնց նմանեաց յաղթել կամ երկար դէմ կենալ. Թուանեանց և Արծրունեաց վրիժոյ օրն էր. քանի տարիէն վեր դարձած Թրեր Հայոց՝ չդարձան՝ ի պատեան, մինչև 4000 այլազգի փուեցին՝ ի փուչ. ճնացեալներն այլ հալածելով հանեցին իրենց հայրենի սահմաններէն շատ հեռու:

Կատարեալ յաղթանակաւ դարձան Հասան և ձնձղուկ, օրհնութեան և գոհութեան ձայներով. պանծալի հին Թմբուկն հայկական՝ կանաչներով պատկուած՝ խաւնեց իր անընդհատ Թոպիւն՝ ի չէն դարձող բարձրապինչ բարձրափուինչ երիվարաց տրոփման և խրխընչման հետ. և երբ յառաջ քան իրարմէ զատուելով իւրաքանչիւր իր տան ճամբան բռնելը, վերջին անգամ մէկ տեղ հաւաքած հանդիսացան 5000 հեծեալքն Հայոց, որոցմէ քիչեր ինկեր էին հայրենի հողուն վրայ. Հասան և ձնձղուկ հատարակաց հանդիսին մէջ ամենուն շնորհակալելով և իւրաքանչիւրին վարձքը և արժանը տալով, ապա հանդիսապէս իրենց քաջութեան և սիրոյ ուխտն այլ ամբողջացուցին:—Փակեցին հանեցին հօր և եղբօր սպանման յուշարար սպոյ սեւ նշանները, և անոնց տեղ Թշնամիներէն նոր յեղափոխեցած հարուածոց նշաններուն կապուելեցան զարդարեցան. և պալար

Թուփերով ու պայծառ ծաղկներով, և խաչիս ու
լանկով նորէն սրբեցին սարեցին Խաչկայ և Իշխան-
կան գերեզմանները. ծաղկըներէն աւելի օրհնէնք
Թափելով անոնց վրայ՝ բերանով բիւրատուր բազ-
մութեան, որ անոնց բոլորը մատաղ և ապուռ
վայելեցին, և լեցուն սրտով ու ձեռքով դարձան
'ի տուն 'ի տեղ. երբ Հասան և ճնճղուկ այլ նկա-
նայ աշտարակին ծայրը ազատաբար սուսանեցին
Տայրենի դրօշն 'ի գլխոնս զովարար հովոց և զո-
վացեալ սրտից:

Ե

Ո՞րչափ առեն, քանի՞ տարի արդեօք այն անար-
գել հայրենի օդոց ծնուռնդքն (հովերն) խաղացին
քծնեցան Արծրուռնեաց յեռին պանծալի գրօշուն
հետ, յետ քալլապէս և վայելչապէս կատարե-
լոյ իրենց հօր և եղբօր և երկրին պահանջած վրէ-
ժը. — այս բարեբաղդ և փուռազարդ եղբայրքն՝ կըր-
գան դիմանալ Սէլճուգեանց յարձակման դէմ.
որք այս գործէն քիչ եաև՝ նորէն մոան 'ի Հայա-
ստան և հեռվհեռէ սիրեցին գրեթէ բոլոր մեր
աշխարհին: — Ասոնց բռնութեան դէմ կուռեն՝
'ի հարկէ անօգուտ և անկարելի էր Թոռնեանայ
Իշխանին. ինքն իրեն վայելուչ և հայրենի պատ-
մութեան մէջ միշտ պանծալի գործն արձանա-
գրուց. որոյ փառաց անակնուռնելի կերպով մը
վարձքն այլ հասնելոյ եղան, որ Թերևս քեզի այլ
ծանօթ չէ, Հայկակ:

Խաչկայ պայազատեան Հասան՝ կ'երևի՝ Թէ ոչ
գաշտաց՝ գոնէ իր ամուր բերդին վրայ յամառեալ
սիրեց և էնչուց գրօշն 'ի վայր. մինչև որ ինքնին
իջաւ Խաչկայ հետ հանդչելու 'ի քնարանս հա-
րանց. իսկ իր պայազատ որդին՝ Ապլաբէկ՝ ուրիշ
հայ իշխանաց հետ պանդխտութեան ցուպն ա-

ուս, քայց անոնց պէս անձնական անուես չմնաց. այլ ինչուան կիւլնկիոյ մայրաքաղաքին Տարսոնի, և միւս մեծ քաղաքին Մամեստիոյ՝ ուր և կոլմնա- կալ եղաւ Սկեթա Ա. կայսեր առեն և անկէ առաջ. քաչնուԹեամբն ապահովցուց շէնցուց այն կոլմե- ղը, և բարեպաշտուԹեամբն շատցուց սրբազան շէնքեր, բարձանց վրայ և դաշտաց մէջ կանգնե- լով տաճարներ. ապահովուԹեան համար ընտ- րեց երկու անառիկ յարմար դիրքով բերդեր՝ Տօ- րոս լերանց գԺուարը կոլմերը, զՊապէոն և զԼամ- բրոն. առաջինը՝ իրեն քնիկ տուն ուել պատրաս- ուեց, ամրացուց, և անոր տաճարին քով շինեց ի- րեն և իրեններուն համար յետին քնակարանն այլ, գերեզմանատունը: — Ա՛յս բանիս մեծ հոգ ու- նէին մեր նախնի պայազատք. ուր ուել որ բռնէին՝ նախ ալօԹից տուն, և ապա անոր քով կամ մէջ՝ իրենց մահուան տունն այլ անկէին: Իսկ երկրորդ բերդը տուաւ իր սիրելի պանդխտակից նիզակա- կըցին, որ իրմէ աւելի հեռու հայ աշխարհէ մը եկեր եկեր էր, յԱրցախոյ աշխարհէն՝ Մայրեաց-ջուրք ըսուած ուեղէն. և էր իշխանն Օշին. Լամբրոնի հետ ընծայեց անոր իր հայրենի տունէն բերած անոր սրբազան պահպանակ Ս. Պետրոսի գլխաւոր առաքելոյն մասունքը, զոր հանգոյց Օշին շինած տաճարին մէջ 'ի Լամբրոն, զոր և նորոգեց ու ամ- րացուց. և ինքն այլ հոն գրաւ ու գտաւ իր գե- րեզմանը: Ասոր համանուն Թոռն Օշին (որդի Հեթմոյ) հայր եղաւ հռչակաւոր Ս. Ներսէսի (Լամբրոնացւոյ): Իսկ Հասանայ որդին Սպրլա- լիպ այլ ինչ ջեց 'ի Պապերոն, ուսանելոց բաժնելով ժառանգուԹիւնը. կ'երևի Թէ արու զաւակ չու- նէր. մէկ դուստրը հարանացուց ԴաւԹի՝ Գագիկ Բ. Բագրատունեաց վերջին Թագաւորին որդւոյն. միւսն այլ տուած կ'երևի Օշնի. վասն զի ասոր որդին Հեթում՝ զբերդն Պապերոնի տուաւ իր

Սմբատ որդւոյն. ըսեր է որ ինքն էր անոր վերջա-
ւոր ժառանգն. զՏարսոն այլ Ապղպարիպ տուեր
էր Օշնի վեհապ իշխանին մը:

Ա յս Հեթմոյ որդւոց անդրանիկ Ճիւղն յաջոր-
դաբար տէր եղաւ Լամբրոնի. երկրորդն այլ՝ Պա-
պեռնի. որոյ առաջին սերացող իշխաձ Սմբատան
էր Ռիթա դուստրը տուաւ 'ի կնութիւն Սահ-
մանէի՝ Ռուբինեանց պապազատին, յորոց ծնաւ
մեծն և առաջին Թագաւորն Լեւոն. ասոյ դուստրն
և ժառանգն Զապել դշխոյ՝ հարսնացաւ իշխաձ
Սմբատայ Թոռան՝ Կոստանդին Մոզոնի (որդւոյ
Վասակայ) որդւոյն հետ, որ է Հեղնամ Ա. և այս-
պէս միացան երկու Ճիւղքն Պապեռնեան և Լամ-
բրոնեան, և երկու մեծ ցեղքն՝ Արծրունի և Բագ-
րատունի, Թէ և մայրենական: Այսպէս կեր-
պով մը երկրորդ անգամ այլ, և գրեթէ մինչև 'ի
հազար տարի վերջ, կատարեցաւ մեր խորին հայ-
րենասէս պատմահօր մարգարէութիւնը (Խորե-
նացւոյ), Թէ այդ երկու մեծ ցեղերէն՝ 'ի Բագ-
րատունեաց և յԱրծրունեաց՝ Թագաւորներ պի-
տի ըլլան Հայոց յետ շատ ժամանակաց: Արդ
Բագրատունի Թագաւորութեանն առաջին հեղի-
նակ եղաւ Աշոտ (887) երկրորդ՝ յետ 200 տա-
րւոյ՝ Ռուբէն կամ Լեւոն Ռուբինեան. իսկ Արծ-
րունեաց՝ նախ Խաչիկ–Գագիկ, և երկրորդաբար
մը՝ անձամբ Թոռանցն՝ մեր Թոռնեւանցին ԽՈՒՆ
ԽԱԶԻԿ[1]:

1 Մեծին Ներսիսեան շքասրաց գիւտին պատմիչն (որ Թուի
Ց. Երզնկացին) կ'ըսէ վասն «Ռուբենի մեծի իշխանին,
» որ էր 'ի զօրացն Բագրատունեաց և յոչՓէ նորին, և 'ի
» պանիք և 'ի պոհմէ Աբծրունեաց. որ և մեր պատկառելոյն
» Լեւոն (Գ, որդի Զապելի և Հեթմոյ), զերկուցն ունի
» Թագաժառանգ ազգաց զազգականութիւն»: Ըսել է
որ այս Լեւոնս երկու ճիւղով այլ յԱրծրունեաց էր:

10477396

Ե

ԵՐԶՆԿԱ

ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Ա

Խորհրդաւոր հնութեան և յոնութենէ ընորհք ունող հայկական անուանց մէկն է Երիզա, որ մեր հայրենի երկրին քանի մը կոլմերը յիշուեցէն զատ՝ կու գուոուի նաև Յունաց կոլմերը. և կիւլիկեայ արևմտեան դրացի գաւառաց մէկուն մէջ կար Երիզա անուամբ եպիսկոպոսանիստ քաղաք մ'այլ: Նշանաւոր պատճառ և ծագում մը պէտք է ունեցած ըլլայ այս անուանս, բայց ստուգութենն անյայտ է ինծի, և ա՛ր ազգէն ա՛ր լեզուէն ծագելը, 'ի հայոց՝ (ինչպէս կ'ուզեմ կարծել՝ մեր երկրին հնութեանն և ազգաց ջուարան ըլլալուն համար), եթէ դիպուածով յօտարաց 'ի մեզ մըտած. — վասն զի եթէ այս անուանս նախնական պատճառը սեպեմք երկրի նշանակութենէն մը, ոչ միայն մեր՝ այլ և արաբացի և գերմանական լեզուաց մէջ մեր Երէզ բառին համաձայն և համանիշ բառք կան: Յոյնք ունին առատաբերեալ անձինք այլ Երէս կամ Երէզ անուամբ, ինչպէս խոռվարար դևցուհի մ'այլ Էրէս՝ որ ե ըստ նշանակութեանն և ըստ ձայնին հե՛ռ (կռիւ, տեսլու-

Թիւն) և անշուշտ հետի է Երիզայ անուանա-
պրուեթիւնէն: Բայց անունը Թողլով և երաց գա-
լիք կու գանեմք որ այդ անունը կրող տեղեաց
մէջ ամենէն նշանաւորն և մեծագունն եղած է մեր
Բարձր Հայոց աշխարհին և Եփրատ գետոյն նոր
ձեւացեալ եզերաց վրայ կանգնուած Երէզ աւանն,
որ 2000 տարուան յիշատակաւ՝ այսօր այլ ծա-
նօթ է ամենուն Երզնկա անուամբ քաղաք մը, էր-
զընճէան լատ Թուրքաց, կամ Երզնկեան, Էրզի-
ռումի կուսակալութեան վիճակաց մէկն հիմայ.
իսկ մեր նախնեաց և տէրութեան առեն գլխաւոր
քաղաք Եկեղեաց հռչակաւոր գաւառին, որ շատ
ծանօթ էր Յունաց Ափգենէնէի կոչմամբ, և Լա-
տինաց՝ Աէնէնէն կամ Զենգենէ: Ո՛վ որ Փոքր
Ասիոյ միջնաշխարհէն ի Հայս կ'երթար, կամ ի
Հայոց՝ հոն, կ'անցնէր Եկեղեաց և Երիզայ.
ինչպէս որ գ դարուն վերջը և Դին սկիզբ, Տըր-
գատայ և Լուսաւորչի գործոց և գնացից մէջ կու
կէին ժամանակակից պատմիչք: Բայց միայն
Ճամբու վրայ ըլլալուն համար չէր Երզնկայի ը-
նարհքն, այլ և երկրին հանգամանաց, և ամենէն
աւելի կրօնական դիտաց համար:

Եփրատ գետ Կարինէն իջնելով և Դերջանէն
անցնելով՝ դէպ ի յարևմտեան հարաւ կ'երթայ,
երկու մեծ լեռնագօտեաց մէջ, որոց մէկն ի հա-
րաւոյ կ'անջրպետէ իր զուգակից Մուրատ (Ա-
րածանի) գետոյ հովիտը, միւսն՝ յարևմտից Փոքր
Հայոց գաւառները և գետերը. այս միջոցիս վրայ
է Եկեղեաց կամ Երզնկայի գաւառն, արևմտեան
հիւսիսէն դէպ ի արևելեան հարաւ տարած-
ուած, մեծաւ մասամբ Եփրատայ ջր և հիւսի-
սային կողմը. ուսկից կ'ընդունի այն գաւառին
գլխաւոր վտակը՝ հիմա Վաչինէրտ ըսուած, որ պի-
տի ըլլայ Վասպուրական կամ Վասպիտական, այս անուամբ
աւանդի մը քովէն անցնելուն համար, շինուած ի

10477396

Դ դարու, և անշուշտ անով գետակին հին անու-
նը խափանած, որ էր Գայլ գետ, և որոյ եզերքն
էր Երէզ աւանն, ինչպէս որ հիմայ այլ մօտ է ա-
նոր Երզնկա քաղաքն, Թէ և հին և առաջին Ե-
րզնկայ քնկէ յատակին վրայ չըլլայ: Երբեմն ք-
ղաքներ այլ տեղափոխութիւն կ'ընեն, մանաւանդ
որ որ շատ ժաժ և կործանումն կ'ըլլայ, ինչպէս
հոս: Երզնկայի գաւառն՝ Դերջանոյ և Կամախոյ
մէջ՝ լուսնաձև կամ ձուաձև տարածուած է, իբ-
րև 20 մղոն երկայնութեամբ և 7–8 մղոն լայնու-
թեամբ. գետնին 4000 ոտքի չափ բարձր է ծո-
վուն երեսէն. որով ձմեռը բաւական ցուրտ կ'ըլ-
լայ, բայց շատ պակաս՝ ի Կարնոյ, (ուր ինչուան
25° Ռէօմ. զրոյէն վար կ'իջնէ չերթայիր, իսկ
հոս իբրև 10°). ամառն այլ աւելի տաք կ'ըլլայ.
ինչուան 30° շուքի մէջ. և ապրք կ'ըլլայ որ բնա-
կիչքն ջրկակոյ լերանց վրայ՝ ի հով ելնեն. տպա
Թէ ոչ Թէ տաքն և Թէ քինչ մ'այլ ձնապղտալ
ջուրեր՝ կըլնան չերմալ ինսաել: Հանդերձ այ-
սու Երզնկա դեռ բարեխառն և զուարճալի վի-
ճակաց մէկն է՝ ի Հայս, վայելուչ դիրքերով և
տեսարաններով, միանգամայն և բարեբեր. որուն
մէկ պատճառն այլ գետնին կազմութենէն է,
տակը կրակ, վրան ջուր. վասն զի հրաբխային է
կազմուածքն, ինչպէս յայտնի է և իր ժաժերէն
այլ, ծծմբային չերմուկներէն այլ. կ'արժէր որ
երկրաբան և հանքաբան մը լաւ քննէր այս կոլ-
մերուս լեռները. որոնք հովին չըլլալուն ա-
ւած՝ կարծես Թէ անոր գեղեցկութեամբը կու
զմայլին, իրենք ալ պակաս գեղեցիկ չըլլալով:
Հարաւային կողմէն կու տարածուին Տաւժիկ լեռ-
ներ, տեղ տեղ կանաչ տեղ տեղ սև, երբեմն
ջոր երբեմն գալար կողերով, սիրուն ու ահա-
ւոր տեսարաններով. փէշերնին դէպ՝ ի հովի-
ը փռած են, վրանին բազմաթիւ գեղեր պար-

10477396

ախզաց և ծառաստանաց մէջ կու ծիծաղին, իբրև
Թէ ծաղիկ քաղելու եկած անձինք ըլլան. որոնց
եաևէն լերանց Հարաւային անտառածայր գա-
գաթներն երբեմն սև սև գմբէթներու պէս եր-
կինք քաշուած կ'երևան, երբեմն Թուխ ու կա-
նաչ վարագուրի մը պէս Երզնկայի հորիզոնը կու
ջափաւորեն: Արևելքէն հեռուէն բարձր Հայոց
լեռներն ամպերու պէս երբեմն կ'երևան երբեմն
կու ծածկուին. արևմուտքէն ալ հեռու չէ սրբա-
զան Սեպուհն, որ կարծես Թէ դեռ Նոսաւորչի
վերջին շունչերը կը ընդէ Երզնկային վրայ, ուսկից
առջի անգամ Հայաստանի վրայ քրիստոնէութե
շունչերն փչեր էր. հիւսիսային հեռու սահման-
ներէն ալ Գայլ գետն աճապարող Ճամբորդի մը
պէս գալով դէպ 'ի քաղքին արևմուտքը կը մո-
տենայ, բայց չի հասներ այնչափ մօտ՝ որչափ կու
հասներ առէք 2000 տարի առաջ. և անկէց ալ
դէպ 'ի հարաւ երթալով՝ կը խառնի եդեսական
Եփրատ գետոյն ծերը ու ծաղկած ծոցը, որ այս
կողմերս Ֆրադ կու կոչուի, և ետեն Երզնկայի մո-
տիկ՝ Սեւ ջուր կ'ըսուի յայլազգեաց: Ա՛յս ջուրս
որ հովտին պտղաբերութեան մեծ օգնականն է՝
անոր եզերքներէն առաջ կու գայ՝ լերանց սառ-
ցահալքը քծնելով. ուր որ շատ առէղ քարուտ Ճամ-
բու պատահելով՝ երբեմն հանդարտօրէն իրը աս-
տիճան ընելով այն դարերէն կ'անցնի ձիւնափըր-
փուր ալիքներով. երբեմն ալ արդոլածի պէս ուժ
տալով կ'անցնի կը վազէ անոնց մէջէն, հետն ալ
մեծ մեծ քարերու կտորներ՝ ոչ անախորժ գը-
լըրդմամբ մը՝ քշելով տանելով. ինչուան որ ա-
նոնցմէ ազատած երթայ իր գլխաւոր պաշտօնը
կատարէ, հովիտը խմցընելով: Գետինն՝ որ ներսէն
հրաբղխի երկրի մը բարեբարմար տաքուԹիւնն
ունի՝ դրսէն ալ այս անուշ ջուրը գտնալով կը
բանայ ծոցը ամեն տեսակ ընտիր պտուղներ բըղ-

խեղդու, որոնք ինչուան կարնոյ կողմերը և ուրիշ կողմեր ալ կը գլխուին: Զեմ գիտեր թէ պտղոց առատին աւելի է հոս թէ ազնուութիւնն. բայց եաքինա կը յաղթէ. ինչ որ կը բուսցընէ՝ ամեն ալ ընտիր է, խաղող, թուզ, դեղձ, սալոր, տանձ, խնձոր, մեղրապոպ, և այլն. ինչուան Թզենի ալ. և Թէպէտ ցուրեկի գաւառ չէ, բայց ունի պատուական ընդեղէններ ալ. հունձքն ալ կլիմայեն և պետքին ուժովը՝ կանուխ կու հասնին: Բայց պէտք չէ մոռնալ Երզնկայի պտղոց մէջ՝ իր համեղ փափուկ ծիրանեգոյն ծիրանին ալ, որ արևմուտքի աշխարհքներ պտղոց մէջ Հայկական անունը կու պատուի. անշուշտ այս հովտին ծիրանն է որ Լուկուլլոսի և իր հռոմայեցի զօրքերուն ախորժակը զմայլեցուց, և հետերնին առած Իտալիա փոխադրեցին անոր կուտերը (Թէպէտև Հայաստանէն շահած ամենէն մեծ աւարնին ասլլալով), և ինչուան հիմայ հոն Արմենիոփա անունը կը պահէ: Մշակութիւնը հարիւրի չափ գեղերու յանձնուած է, որ վերոյիշեալ լերանց և հովտին մէջ սփռած են. բայց վայելքին կշեռքն երբեմն Քիւրտերուն նիզակովը կու կշռուի: Այս ազգը հոս երկու ցեղ ունի, Պալապան և Շեխ-Հասան կամ Հիւսէյին ըսուած, որ ձմեռները կ'ելլեն շէնքի տակ, լաւ եղանակները լեռները մէջ կ'անցընեն իրենց հօտերովը, որոնց պարարտ արօտներ կան լեռնադաշտաւաներուն մէջ. գրեթէ անկախ ինքնագլուխ կը տիրեն այս կողմերուս. լերանց նեղ անցքերը բռնած՝ ճամբորդներէ անցքի հարկ կը պահանջեն. Լուսաւորչի ուխտաւորներն ալ՝ ուխտէն առաջ այս անհաճոյ հարկը պէտք է տան. բայց գեռ երջանիկ են որոնք որ նեղութեան քրտինքով արիւննին կը գնեն. վասն զի Քիւրտին նիզակը սուր է. անոր համար հիմայ շատ գեղեր անմարդաբնակ եղեր են:

10477396

Բ

Դաւանանք հիմայ քաղքին, որ հովտին արևմտեան անկիւնը նստած է, և գեղերուն պէս զբաղարձակի տեսք ունի, կանուչութեամբ զարդարուած. տուներն ալ որ 3000էն աւելի են՝ քանական վայելուչ են տեսքով: Բնակչաց իւրաքանչիւր մասը մերազգիք են, մնացածքն մահմէտականք: Քանի մը եկեղեցիներէն զատ Երզնկա նշանաւոր շէնք մը չունի, և ոչ հնութեան արձան, իսիա շատ անգամ երկրաշարժներէ կործանած ըլլալուն համար, որ ոչ հեթանոսութեան առեն կանգնած շէնքերուն և ոչ քրիստոնէութեան առջի դարերուն սրբազան եկեղեցեաց խնայեցին:

Մեր պատմութեան մէջ Քրիստոսէ դար մը առաջ կու տակի Երզնկայի անունն և փառքն. այն առեններն Երէզ քաղաքաւան մ'էր, եկեղեցւոյ գլխաւոր տեղը: Արտաշէս ա. մեր թագաւորն՝ որ Արամ հայկազուն նահապետէն էառ առաջին աշխարհակալ և ծովակալ եղաւ, Յունաստանի սիրած առեն՝ հոն գտած տաճարները մէջ հարստութեամբ և ճարտարութեամբ երևելի կուռքերուն շարը՝ Հայաստան ղրկեց. առաջ մէջ կար Արտեմեայ անդրի մ'ալ, որ կու կարծուի այն հռչակաւոր անդրին՝ որուն համար հինները կ'առասպելէին թէ երկընքէն ինկած էր և Ղրիմոս Տաւրիդեան կողմերը կու պաշտուէր հազար տարիներով առաջ. Տրոյայ պատերազմէն և առ Պրամեմնոնի Յունաց առաջնորդին աղջիկը Եփիգենիա հոն փոխադրեցաւ Անահտայ ձեռքով, որ իր տաճարին մէջ ծառայութիւն ընէ. վերջը երբ իր Ովրեստէս եղբայրն ալ այն կողմերն ընկաւ նաւակոծութեամբ, մեկտեղ կուռքն առին փախան, եկան Արգոս Յունաստանի ու հոն

10477396

*կանգնեցին, որով բոլոր Յունաստանի մէջ մեծա-
պատիւ եղաւ: Հապար տարի անցնելէն եաև մեր
Աբրահամ վրա ալ առաւ Յունաստանէն և վրկեց
ի Հայաստան. և դեռ հրաման չառած ուր կանգ-
նելուն վրայ, ինքը մեռաւ Յունաստանի կղզեաց
մէջ. վիուռքն ալ՝ Հայաստան բերուին ալ՝ Երզն
մօտիկ Անի ամրոցը պահեցին, հանդերձ յոյն
քուրմերով՝ որ չէին ուզած անկէ զատուելու.
Տիգրան ի իր հօրը տեղ անցնելով, հրամեց որ
Անիէն հանեն կուռքը և Երզ սեանին մէջ կանգ-
նեն: Հայք որ շատոնց Անահտայ ջերմեռանդն էին՝
իրենց դիցուհին կարծելով զայ՝ մեծ յարգու-
թեամբ սկսան պաշտել. թագաւորներն ալ զա-
նաին շատ երկիրները՝ տաճարին կալուածք
տուին. անոր համար բոլոր այն երկիրներն Անահ-
փանի գաւառ ըսուեցան, և մեհեաններով ու քուր-
մերով լցուեցան. ամեն կողմէ նուէրք կու գար
այս տաճարները: Այս նուէրաց հետ միցու-
ցող նուիրած եղներ ալ կային, որոնցմէ ձեր-
մակներն և ընտիրներն իրեն ցաճոյագոյն զոհ սե-
պուած էին. տոնց ճակատը ջահաձև խարան
զարկած՝ որ ոչ ոք չդպչի՝ կու թողուին որ խառն
խառն արածին Եփրատայ և Գայլի խոտաւէտ
ափունքներն: Երզն բնակչաց մեծ մասն և քա-
ղինները՝ Անահտայ ծառայութեանը նուիրուած
էին իբրև քուրմք և ծառայուք տաճարներուն
մէջ՝ նուիրաբերաց և ուխտաւորաց, և տները
կառարելու՝ հանդիսից. գարնան և աշնան մէջ մե-
ծահանդէս թափորով ջահերով կը պտըտցընէին
կուռքը մեհենէն դուրս ջրոս գլ. յառաջ Անահ-
տայ մեծ տօնը նաւասարդի 15ին կը կատարէին,
15 օր տարեգլխէն կամ Արտամազդայ տօնէն եաև,
որով կ'երևի ալ թէ Հայք եօթնօրեայ շաբաթա-
կան շրջան ունէին, և Արտամազդէն վերջը Անահիտն
էր իրենց մեծ աստուածն. ինչպէս որ Տրդատ*

10477396

Թագաւորն ալ իր դիցամոլութեանն աստեն մեղադրելով կ'ըսէր Լուսաւորչի. «Մեծի Աստո՛ւած » տայ տիկնոջ, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ. զոր Թագաւորք ամենայն պատուեն, » մանաւանդ Թագաւորն Յունաց. որ է մայր ա» մենայն ազգաստուածութեանց, բարերար ամենայն » մարդկան բնութեան, և ծնունդ է մեծին արի » Աբրամազդայ... որով կեայ և կենդանութիւն » կրէ երկիրս Հայոց»: Ահա այս խօսքերէն կու տես նուի որ Հայոց Աստղիան սեպուած էր Աթենաս, մայր ազգաստուածութեանց, ինչպէս Պղատոն ալ Տիմէի գրոց մէջ Աթենաս կը սեպէ զԱստղիտ՝ նիւթ անուանելով եգիպտական կոչմամբ. բայց իմաստնոց մէջ շատ վէճ կայ Աստղոյ վրայ, և հաւանական կ'երևի որ Հայոց հին Աստղիտն՝ ու Տիգրանայ աստեները՝ Ասորւոց դիցուհւոյն նման Բնութեան աստուած էր, շատ տեղ ալ Յունաց Արեմիա կամ իգական լուսին սեպուածն, իբրև քոյր ՄհՀր աստուծոյ, այսինքն արևու:

Երբոր Տրդատ Յունաստանէն գալով մուտ՝ի Հայաստան հալածելով զՊարսիկս, առջի պարտքը սեպեց Աստղոյ պաշտօնը, զոր և կատարեց հանդիսիւ. և այլ աւելի պատիւ մ'ընելու համար՝ հրամմեց Գրիգորի որ այն տաճն իր ծառայութեան մէջն էր և իրեն սիրելի, որ ուրիշ տեղանին վրայէն ծաղկրներն առնու և նոր տերևներ ալ կտրելով՝ տանի Աստղոյ քաղնին նուիրէ: Ահա այս հրամանիս վայրկեանն էր՝ի յաւիտենից դիտուած մեր ազգին հոգևոր ծնունդեանը: Ամեն Լուսաւորչի որդւոց պէտք է յայտնի ըլլան՝ այն հրամանէն եռքը պատահածներն, որով և աւելորդ կնճռի հոս կրկնելն. միայն չեմ կրնար լռել իմ անձնական զուարճութիւնս եկեղեցական պարտքի մը պէս այս տեղս, ուր իմ հոգւոյս սերմն ալ 1500 տարի առաջ

10477396

ծլեր էր իմ Լուսաւորչիս շնչին մէջ. այս պաշտօնս էր սուրբ արեամբն ոռոգուած էին. աւելի անոնց կաթիլներուն էր հոն գրուած գաւառս Լուսաւորչի՝ քան թէ գրոց աւանդութեամբ. հոն յղացաւ Հայոց հոգևոր անձնաւորութիւնը, որ 13 տարի Արտաշատու վիրապին մէջ երկնելով՝ ընծայուեցաւ վաղարշապատու դաշտին մէջ: — Ո՛րչափ փոխուած էր այն Տրդատն՝ երբոր երկրորդ անգամ Գրիգորի հետ 15 տարիէն ետև՝ եկաւ աշխատական բագիններուն դիմաց, և զայն՝ որ մայր զգաստութեան կ'անուանէր, Հանչնալով մայր մելսրութեան՝ հրամեց ոչ ծաղիով ու տերևով պատուել, հապա մրճով ու բրչով փլցընել, մանաւանդ թէ Քրիստոսի խաչովն, և անոր տեղ կանգնել Հիմարիա զգաստութեանց մօրն՝ Տիրամօրն աթոռը. և նաւասարդի 15ը հաստատուեցաւ. փն Աստուածամօրն եկեղեցին, զոր թէպէտ յայտնապէս չէն յիշեր մեր պատմիչք, այլ Պրոկոպիոս Ցոյն պատմիչն կու վկայէ, թէ Ոսկեայ Կոմնայի տաճարական Աստուածածին մեհենին տեղ՝ հիմայ եկեղեցի է. գիտեմք որ մեր Աստուածածին անդրին ալ ոսկեղէն էր:

10477396

Գ

Երզնկայի հին գարեբուն գիպուածներն մուԹի մէջ մնացեր են, ամենէն պայծառ ժամանակն է ԺԳ և ԺԴ դարերն: Թէ և ոչ փառաւոր և ուրախալի՝ բայց ամենէն նշանաւոր դէպք քաղաքիս կըրնան ըսուիլ իր ժաժեըն և կործանումունքն. որոց առաջինն կու լիշուի յամին 1012, վերջինն 1784, միջոցն այլ 20 անգամէն աւելի, երբեմն գրեԹէ բոլոր քաղաքը կործանելով, երբեմն մեծ կամ պզտիկ մաս մը, և իր քնակչացը պերեզման ընելով իրենց տուներըը. եԹէ միայն նշանակուած մեռելց Թիւը գումարենք 200,000 կ'ըլլայ. անշուշտ աւելի այլ կորած են հոն՝ ուրիշ չնշանակուած աւեններն այլ մէկտեղ. ըսել է որ Հայաստանի մէջ Երզնկա կու նմանի այն հարուածային Իսալիոյ գեղեցիկ քաղաքաց (որոնց գրեԹէ զուգաստիճան է աշխարհագրական դրիւք լայնուԹեան), ուսկից չեն կըրնար հեռանալ տագնապեալ քնակիչքն. կու վախեն և կու սիրեն. որքան սաստիկ և դժնդակ է երկրին աներևոյԹեան, այնքան քարի և անուշակ դրան երեան: Մեր պատմիչներէն զատ՝ քանի մ' արևմտեան կամ եւրոպացի ժամանակակից հեղինակք և ճամբորդք այլ կու լիշեն այս գիպուածներս. որոց գուցէ հնագոյնն է Րիւպրիւքի Փռանկ և Փրանկիսկեան կրօնաւորն, զոր Պապն Հռովմայ գեսպան խաբրեր էր առ Ղանն ԹաԹարաց, և'ի գարձին՝ յամին 1253 առաջ տալի տարին հանգիպած մեծ ժաժին ահաւոր նշաններն և աւերածները. որոնց տակ զատ յաղքատաց՝ 10,000 ունևոր մարդիկ Թաղուած էին, կ'ըսէ, և երեք օր ձիով անցնելով կաս տեսանէինք զարհուրելի պատառածներ գետնին երեսը, և մեծամեծ քարակոյտներ՝ որք լե-

Նէրէն փլթելով ծածկեր էին Հորակնեըը, այնպէս որ եթէ ժամն քիչ մ'այլ երկայն քշէր՝ սատուգիւ պիտի կատարուէր Եսայի մարգարէին ըսածն, «Ամենայն Հոյք լցին և ամենայն բլուրք » խոնարհեցին». մեր յիշատակագիրք՝ 16,000 Հոգի կորսուած կ'ըսեն այս անգամուս: — Յամին 1471 այլ Յովսափատ Պարպարոյ Վենետկեցին անցաւ Երզնկայէն, և քաղաքին կէսը կործանած գտաւ՝ քանի մը տարի առաջ եղած աւանութենէն. մեր յիշատակագրաց մէջ այս Թուականէն առաջ 1462ին եղածը կու գանեմք, յորում 30,000 Հոգի մեռան, կ'ըսեն:

Առնեմք երևեալ և Մինչեւ գարուս ամենէն մեծ Ճանապարհորդն Մարկոս Բոլոյ՝ սեւեալ լաւ առեն մ'անցաւ Երզնկայէ, յամին 1300, յորում շէն էր քաղաքն, Թաթարաց իշխանութեան տակ, Ներսէս եպիսկոպոսին առեն, ինչպէս կ'ըսէ. բազմակոյտ մեծ մասն Հայք էին. իւրենց գլխաւոր ձեռագործն էր բամբակեայ խժապատ կտաւն, զոր ամեն տեղ նման կտաւներէն ընտիր կու սեպէ. miglior bocherame (*կամ* bocassini) del mondo, *որ է* Թուրքաց պօղասը կոչածն. և մինչև յայժմ առնց մէջ անուանի է քաղքիս կտաւն, մինչև տակի պէս կ'ըսեն [1]. նոյնպէս կու գովէ Մ. Բոլոյ քաղքին բամբակեղէն այլ՝ ուրիշ տեղերէն վեր գնելով: — Անկէ 14 տարի վերջը (1314) երեք Իտալացի Փրանկիսկեան քարոզիչք նահատակուեցան Երզնկա, և Հայ երեց մը Թաւրէց զանոնք պատուով. նաև կաթուղիկոսն Հայոց պատուիրեց յիշատակել զանոնք յեկեղեցին. այսպէս կ'ատանգէ անոնց ժամանակակից մեկ ընկերն. մեր պատմչաց մէջ չկայ այս բանիս յիշատակն. այլ անտրտունջ և անկէ առաջ ուրիշ ազգային նը-

1 Երզնճեանցի պէտք:

10477396

ման ցաւալի դիպուածը մը, որ է սպանումն Սարգսի արքեպիսկոպոսի քաղաքին։

*ԺԳ դարուն կիսէն սկսեալ կու յիշատակուի այս անձս 30 տարի գովելութեամբ, շատ բարի կարգաց և շինութեանց համար, որոց գործակից էր և իր որդին, վասն զի աշխարհի կարգ ալ մաեր էր. այս որդին էր Պարոն Յովհաննէս, քաղքին ազգայնոց վերակացուն. ժամանակին յիշատակարկը մը կ'ըսէ Սարգսի համար, «պատուեալ յԱստուածոյ, մեծարեալ յազգաց և յազգանց և 'ի թագաւորաց մեծաց». այս մեծ թագաւորներն էին կայսերք Յունաց և Ղանք Թաթարաց, սուլտանն Իկոնիոնի և թագաւորք Հայոց։ Հուլաղու ղանին կոլմանէ դեսպանութեամբ գնկուեցաւ առ Միքայէլ Պալէոլոգ կայսր և անոր Դեսպինա (Տիրուհի) Մարիամ դուստրը տարաւ 'ի կնութիւն ղանին. Հուլաղու մեռած ըլլալով՝ (1266) որդին Աբաղա ղան առաւ զայն. և այս առթիւ կ'ըսուի թէ Սարգիս Անտիոքայ պատրիարքին հետ մեկտեղ մերեցին զԱբաղա, վասն զի առաջուց յանձն առեր էր քրիստոնեայ ըլլալ։ Քանի մը տարի ետև (1269) Սարգիս հիմնարկեց Ս. Փրկիչ մեծ և հոյակապ եկեղեցին, որուն գմբէթը կանգնեց 1274ին, և վասն այլ յաղթական իսաչը։ Յաչտրդ տարին երբ Երզնկայի քով հին Թիլ կիւղին մէջ գտուեցան մեծին Կերսեհի նշխարքն՝ Սարգիս բերաւ զանոնք և դրաւ իր նոր շինած եկեղեցւոյն մէջ, ուր և Թոլոց Հայրապետին սուրբ աջը. իսկ ձախ բազուկը տարաւ Հանդուց գետոյն անդիի կոլմը Տիւրաշէն ըսուած վանքը. «Իմաստաբար » և մեծ յուսով տրտրեալ խոհեմականն տէր » Սարգիս (կ'ըսէ ականատես վկայ մը, որոյ վրայ » յետոյ պիտի խօսիմ), զի զերկուսեան բազուկն » և զձեռնն՝ առաստաձիր շնորհիւ լեալ տեառն » Ներսիսի՝ զերկրորդ մեր Լուսաւորչին՝ սահմա-

» Նէր յերկուս կողմանս գետոյն, որպէս թէ տա-
» րածեալ ուներով զԹևան Հովանի գաւառին »:
Քանի մը տարի ետև (1279) Թաթարք ուրիշ
կողմ պբատած ըլլալով՝ Թուրքք առին Երզնկա
քաղաքը, և տեղուն վրէժ խնդրելով ապան-
ցին զԱարգիս և զՊարան Յովհաննէս 38 գլխաւոր
անձամբք: Լսեց եկաւ շուտով Ապաղա ղան, տի-
րեց քաղաքին, հալածեց տեղիները, մխիթա-
րեց Աարգսի մերձաւորները, պատուաստիրեց ա-
նոր թոռները: — Թաթարաց բարեկամութիւնն
շատ երկար չտևեց՝ երբոր սկսան իրենք այլ տկա-
րանալ, և Թուրք ցեղերն զօրանալ, որք ծդ դա-
րուն մէջ տիրեցին այս քաղքիս և շրջակայից. ա-
նոնցմէ էր Թահէրդան կամ Թախրադան, որ ան-
ձնատուր եղաւ Թէմուր Լէնկի (1393), և առաջ-
նորդ ու գործակից անոր աւերանացը, որոց մէկ
գործն այլ եղաւ Աարգսի շինած հոյակապ Ս.
Փրկիչ կաթուղիկէն քակել, հանդերձ ուրիշ եկե-
ղեցիներով: — ԺԴ դարուն մէջ Երզնկա զանա-
զան աւերանց կամ բռնաւորաց ձեռք ընկաւ, այս-
ինքն Լէնկթիմուրի յաջորդաց, Ագ և Գարա-
գոյունլու Թուրքաց, և երբեմն երբեմն Պարսից
և Օսմանեանց, մինչև այս եռքիններուս ձեռք նո-
րէն անցնելով յամին 1514, ինաց մինչև հիմայ:

Եկեղեցական հանգամանօք այս քաղաքս Յու-
նաց ինքնակալութեան առեն աւելի ծաղկած էր,
զ դարէն սկսեալ, յորում Յուստինիանոս կայսր
նորոգելով անուանեց Յուստինիանուպոլիս, և ե-
պիսկոպոսի աթոռ եղաւ, որ և Յունաց ժողովք-
ներուն մէջ առէպ կու յիշուի. միայն թէ այդ
Յուստինիանու նորոգած քաղաքն բուն հիմիս
Երզնկայի հետ նոյն ըլլալն յայտնի չէ. վասն զի և
ամենևին յունարէն արձանագիր մը գտուած չէ
հոս, բայց՝ ի քանի մ'անծանօթ նշանագիրներէ
որ պարսպատից քարերուն վրայ կ'երևին. ուր կան

10477396

նաև Սէլճուգեանց (Ղօնիայի սուլտաններց) քան-
գակք և նշանք: Իսկ մեր ազգային եպիսկոպոսանե-
րէն քիչ կու յիշուին Երզնկա. նոյնպէս և եկե-
ղեցիներէն, որք պէտք է բազմաթիւ եղած ըլլան
մեր Արշակունի քրիստոնեայ թագաւորաց ա-
ռեն. մանաւանդ որ ասեն մը վերչին թագաւո-
րաց մէկն այլ Նոս նստաւ. բայց պատմութեան
մէջ Լուսաւորչի չինած Ս. Աստուածածին եկե-
ղեցին վերչ մինչև Սարգսի չինած կաթուղիկէն՝
միայն Ս. Գէորգ եկեղեցի մը կու գանեմ յիշուած
յամի 1223:

Իսկ թէ կրօնական և թէ գիտնական անձանց
մէջ երևելի կամ ինծի յայտնիներն՝ Երզնկա,
ծգ-ծե դարուց միջոցն ծաղկած են. որոց առա-
ջին՝ նախայիշեալն Սարգիս արքեպիսկոպոս. անոր
ժամանակակից Յովհաննէս Վ. Պետրոս կամ Ծոր-
ընէյի, Սբէֆանոս Դ կաթուղիկոս՝ որ գերի բռնու-
ցաւ ի Հռոմկլայ յԵգիպտացւոց. Կոստանդին Եր-
ընկնոյի բանաստեղծն. ծԴ դարուն մէջ Մովսէս
Վարդապետ Երզնկոյի խրատապիր, Կիրակոս Վ. Գէորգ
Վ. աշակերտ Յ. Որոտնեցւոյ, որ քաղաքին ա-
զատութեանն համար ազաչաւոր երթալով առ
Լենկթիմուր՝ վախէն պահուընքն պատռեցան, և
լալով եա գարձաւ. – քիչ առաջ իր վարժապետն՝
մեծահռչակ Որոտնեցին՝ եկեր էր Երզնկա, և
հոս ուրիշներէն զատ իրեն պէս և աւելի անուա-
նի եղած Գրիգոր Տաթևացւոյն՝ վարդապետա-
կան գաւազան տուեր էր. – ծե դարուն վերչը
Երզնկայի եպիսկոպոս էր Մարկոս մը, որ եր-
կայն ձամբորդութիւն մ'ըրած է Եւրոպա՝ բայց
շատ կարճ նշանակած է. Ալեքսանդր Զ Պապն
ատոր գիր մը տուած է ընծայութեան, որուն օ-
րինակն պահուած կայ: ծԷ դարուն վերչն այլ
Երզնկայի եպիսկոպոս էր յետոյ անուանի Ա-ե-
փէ պատրիարքն Կոստանդնուպոլսի:

10477396

Դ

Ա յսքան անձանց մէջ ամենէն յառաջ ԵՒՂՆԿՈՋ կոչուածն, միանգամայն և ամենէն արդիւնաւորն գրականութեամբ և գիտութեամբ՝ ըլլալով Պլուզն Յովհաննէս, կ՚արժէ որ ոչ միայն քաղքին հետաւելի անդուլթեամբ կապուած ըլլայ իր յիշատակն, այլ և մեր մտաց մէջ, Հայկակ. մանաւանդ որ գրապէսք մեր լեզուին յառաջդիմութեան համ վայելուչ գրոցից վերջինը կու տեսանն զաւրանի է որ ամեն բանասիրաց սիրելի ըլլայ՝ այն բանասէրն՝ որ ուսմանց սէրը, հոգեկան կրթութեան եռանդն և խոհեմութիւնը հաւասար իրաւ կապեր էր, որ բոլոր կեանքն իմաստութեան նուիրած՝ եղաւ ճարտար գրիչ, բանասէր, քերական, ճարտասան, մեկնիչ, ծանրագէտ, քրոջիչ վարդապետ և աստուածաբան: Եւ առաւել սիրելի և յարգելի է այն անձն՝ որ ապրելն կարծեաց երկայնակութեան առեն, գժուարին և գժբաղդութեան առեն ալ, կրցաւ խոհեմութեամբ ճամբայ բանալ սիրով միաբանութեան առաջնորդաց եկեղեցւոյ: Արժանի էր հռչակելու այն վարդապետը՝ որ իր նախնի արժանաւոր հայրապետները նեղբօնութեամբ և երգերով հռչակեց, միաբանակեցաց ժողովքներն այլընդունց և վերաբերութեանց, սուրբ եկեղեցիները սրբաբանութեամբ զարդարեց, հայ թագաւորաց արքունիքն ալ՝ պերճաբանութեամբ: Բայց ափսո՜ որ այսպիսի անձի մը վարքն ամբողջ ծանօթ չէ մեզի, հապա միայն իրեն գրոց և քանի մ՚ալ ժամանակակից յիշատակարաններէն կրնանք տեղեկանալ իր արդիւնաւոր կեանքը:

Յովհաննէս ծնած տարին՝ ինչպէս մեռած ն ալ՝ յայտնի չէ, բայց հաւանական է թէ ծնած ըլլայ

իբր 1250ին, և մեռած՝ ի 1326: Զանազան մա-
կանուններ ունի այս վարդապետս, որոնց առա-
ջին և սովորականն է Երզնկացի կամ Եզնկացի,
Երզնկայ քաղաքը ծնած ըլլալուն համար. բազ-
մով ատ վարդապետին բուն իր ձեռքով գրած
մէկ գիրքը տեսայ, ուր գրեր էր «Նուաստ և ան-
» կարգի Յոհաննէս Եզնկացի սպասաւոր քա-
նի», և այլն. ուր և ոտէտ անձ մը՝ Եզնկա-
ցւոյ բառին եռքի գրերը քերեր և Եզնկայ ե-
պիսկոպոս ձևացուցեր էր: Բուն ծննդեան տեղն
է Աբկայ գեղն, ըստ աւանդութեան հիմակուան
Երզնկացւոց: Երկրորդ սովորական մականունն է
Պռշ, որ կու կարծուի թէ կապուտաչուկ ըլլա-
լուն համար՝ ըսուած է, կամ մանաւանդ հասա-
կաւ պզտիկ ըլլալուն համար. Երզնկացիք հիմայ
այլ պռշէի կ'ըսեն և ոչ պշէի [1]: Երրորդ մակա-
նունն է Ծործորեցի, երկայն աւուն Ախտազ գաւա-
ռին Ծործոր գեղին Ս. Աստուածածնի վանքը
քնակելուն համար, ինչպէս ինքն ալ կու վկայէ
յիշատակարանի մը մէջ: Հոս ալ նշանակել կամ
գնաեր ալ կ'ուզեմ, որ Կիրակոս Երզնկացին այլ
Ծործորեցի ըսուած է: Զորրորդ մականուն մ'ալ
կ'ընծայէ ձեռագիր շարականի մը հին կարգաւո-
րութեամբ գրուած գեղեցիկ գրով և աղէկ թա-
նաքով, որուն գրերն նման են Յովհաննու ձեռա-
գրին զոր վերն յիշեցի. և տեղ մը կայ հին գըր-
չով գրած այս պզտի յիշատակարանս. «Յովա-
նէս Եզնկացւոյն է գիրս, մականուն Մաշտոց»:
այս մականունս որ իր ժամանակը գրած կ'երևի
իրեն ձեռնադիր շարականին վրայ, չեմ գիտեր ինչ
պատճառաւ ուրուած է իրեն, և ոչ ալ թէ Մա-
շտոցին՝ մաշած բառին սեռականն սեպելու է, թէ

1 Ընդ հակառակն ոմանք երկայն ըսել է. խոստովան-
ելիք երկայնակեաց ասմիկ ծերուն այլ ոչդ ոմանք կ'ըսեն:

մաշ և ծին բառերէն բարդած, ինչպէս կըրնայ ալ կարծուիլ:

Յովհաննէս անունցմէ մէկն եղած է՝ որ կրնային ըսել Իմաստնոյն, և իրեն իսկ անուանակից և ազգակից՝ Հայոց մեծ Իմաստասիրին հետ, թէ Մաշտոցէ էի մատավարժ և ոչ ոքէ բարբոյ դիպեցայ. կ'ըսէի թէ ծնողքն ալ հոգ ունեցեր են պզտիկութենէս զինքը ուսման տալու. իր մէկ բաղդն ալ այս եղաւ որ իր հայրենիքը Կուսաւորչէն լերան վանքերով շրջապատած էր, որոնց մէջ դեռ բաւական գրքեր և գրագէտներ կուգ ու ուսէին. և աւելի բաղդն ալ այս էր՝ որ իր տղայութեան առեն՝ Երզնկա քաղքին քաղաքական՝ իշխանն էր Յովհաննէս պարոնը, հոգևոր տեսուչն ալ էր՝ այն պարոնին հայրն Սարգիս արքեպիսկոպոսն, երկուքն ալ աշխարհաշէն և չանասէր և չանասիրացց ճեռք տուող: Երզնկացին առջի ուսմունքներն ըրաւ Ս. Մինասու անապատ ըսուած վանքը, Սեպուհ լերան արբազան շուքին տակ. վերջը անոր քովի վանքերն ալ պտըտելով՝ մեղուի նման քաղեց անունցմէ ինչ որ իր իմաստասէր մտաց պատուական գուաճ. բայց անունցմով գոհ չըլլալով՝ եկաւ հեռու տեղուանք ալ պտըտելու գիտուԹիւն ժողվելու համար:

Ան տեւեները Հայոց մէջ ամենէն անուանի վարդապետ չանչցուած էր Վարդան Արեւելցին, և թէ Կիւրիկոյ արքունիքը թէ արևելեան Հայաստանի մէջ պատկառելի եղած. այս բազմահմուտ և բազմագիր վարդապետս իր վերջին տարիները քաշուեր էր Հայոց և Վրաց սահմաններուն մօտ Հաղբատ և Սանահին հռչակաւոր վանաց մէջ տեղ՝ կայենոյ ձոր ըսուած տեղը, ուր ալ ինքզինքը պզտիկ վանք մը կար, հոն նստէր և դեռ աշակերտաց դաս կուտար. Յովհաննէս ալ գնաց անոր քով, և կ'ըսէի թէ ինչուան անոր մահը հոն

կեցաւ, և կ'անուանէ զինքն «Աշակերտ Յոգեբից Հօրն և սուրբ վարդապետին Վարդանայ»: Յովհաննէս դարձաւ Երզնկայ, ուր յաջորդ տարին (1272) հան մեծ դիպուած մը հանդիպեցաւ. այսինքն սրբոյ Մեծին Ներսիսի մարմինն գտուեցաւ, 640 տարուընէ վեր փլած Թիլ գեղին եկեղեցւոյն տակ, և Սարգիս արքեպիսկոպոսին ձեռքով փոխադրեցաւ Երզնկայ: Այս գիւտիս և փոխադրութեանն ոչ միայն ականատես կու կարծուի Երզնկայեցին, այլ և կ'երևի թէ ինքն է անոր պատմութեանն ալ գրողը և գեղեցիկ Ճարտասանական ըսոլ՝ փոխադրութեան հանդիսին մէջ, Ճառ մ'ալ արքեպիսկոպոսին հրամանաւն, ինչպէս որ գըրուածքին ձէն կ'ընէ բանաձէրք: Բայց ասկէ յայտնի և փաքաւոր յիշատակ մ'ալ Թողուց Երզնկացին Ս. Ներսէսի վրայ, «Որ զլոյս անճառ» երգած շարականութէն, որ ընտիր շարականաց կու հաւասարի՝ ազնիւ շարադրութեամբ և իմաստներով և վառվռուն եռանդեամբ. այս շարականէն երգեց՝ երբոր Լեւոն Գ Հայոց Թագաւորն լսելով Ս. Ներսէսի նշխարաց գիւտը՝ եկեղեցի մը նուիրեց այն մեծ Հայրապետին:

Երզնկացին քանի մը տարի հայրենեաց սահմաններէն հեռացած չերևար. գուցէ Սարգիս արքեպիսկոպոսին քով կը ծառայէր, ինչուան առնոր անպարտ սպանումը իր որդւոյն հետ մեկտեղ: Տարի մը ետև, 1280ին, Ս. Գրիգոր վանից միաբանքն՝ միաբանութիւննին նորոգելով՝ հնդրեցին իրմէ որ իրենց կանոններ գրէ. ինքն ալ գրեց «Կանոն» նոնք և սահման միաբանութեան եղբարց՝ որք » առաուածային սիրով միաբանեցան յեղբայրութիւն միմեանց՝ Յիսուսի, 'ի Քրիստոս...». և կու սկսի, « Բանն Աստուած որ բանիւ գոյացոյց զանենայն արարածս », և այլն: Այս յիշեալ վանքերուն մեկուն մէջ գտայ Փիլոնի Եպրայեցւոյ Հա-

ուերուն Թարգմանութիւնը՝ գրուած կիսակատար՝ Երզնկացւոյն համար։

Յաջորդ տարին եկաւ Յովհաննէս հետու ճամբորդութիւն մ՚ընելու, «Գնաց յաստուածային քաղաքն Երուսաղէմ՝ ի տեսութիւն անօրէնութեան Թեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ», ինչպէս ինքն կ՚ըսէ. ճամբորդութիւնը Կիւլիկիայէն ըրաւ, որ հոն տեսի Թագաւորական և Հայրապետական ջանքով պայծառացած գիտութեանց ճաշակն ալ առնու։ Յակոբ կաթուղիկոսն ուսումնասէր և խոհեմ անձն՝ սիրով ընդունեցաւ զՅովհաննէս, և ճանչնալով անոր տալանդը՝ իրեն ուսումնարանին վերակացու դրաւ, քերականական և մեկնական քանի մեկնիչ մը ջնջել՝ անկարելի է համրակաց մեր նախնեաց չինած՝ յոնարկենէն յարմարցուցած քերականութիւնը հասկնալ, ալաչեց իրեն որ այն քերականին դիւրահասկնալի մեկնութիւն մը գրէ, որովհետև Թէպէտ շատերն իսկ առաջ գրեր էին, բայց ամենքն ալ դժուար և մըթին։ Յանձն առաւ Երզնկացին, Թէպէտ չկրցաւ մեկնել կատարեալ։ Բայց իր համբաւն լսուեցաւ աղքատնեաց մէջ. Լեւոն Թագաւոր վինքը պատուեց, ինքն ալ իր հանճարովն զուարճացուց աղքատնիքը։ Ռուբինեան Թագաւորք Եւրոպայի Թագաւորաց քանի մը սովորութեանց հետ՝ անոնց ապեռութիւնն ալ ընդուներ էին, որ իրենք Զէռոր կ՚ըսէին, և Ս. Վլասի անունով ապեռութիւն մ՚ալ հաստատած էին, նման Տաճարականաց և Մալթայի ասպետաց։ Երզնկացւոյն հոն եկած առեն Լեւոն Թագաւորին երկու որդիքն Հեթում և Թորոս, որք վերջը երկուքն ալ Թագաւորեցին, կարճութեան հասակ հասնելով՝ Զհաւոր ընտրուեցան ուրիշ իշխանազանց և արքունեաց մէջ. Լեւոն Թագաւոր վինքը պատուեց, ինքն ալ իր հանճարովն զուարճացուցա

10477396

դիսին մէջ Երզնկացին հրաւիրուեցաւ առեն-
կան ճառ մը խօսելու, և թնաբան դրաւ Առաքե-
լոյն խօսքը, «Ամենայն անձն որ ընդ իշխանու-
է», և այլն. ճառին սկիզբն է. «Յարաժամ բաղ-
» ձանօք նորալուրն և նորատեան և նորագործն
» սիրելի և ախորժական լինել», և այլն. ես այս
ճառին դեռ վերնագիրն միայն տեսած եմ: Թա-
գաժառանգն Հեթում՝ մանաւոր սէր կապեց
Երզնկացւոյն, զոր վերջը իր պարոնութեան կամ
թագաւորութեան առեն ալ կրկին անգամ ընդ-
ունեցաւ 'ի Կիւլիկիա: Իշխանք և եպիսկոպոսք
ալ ճանչցան և պատուեցին Երզնկացւոյն հան-
ճարը: Սոյն մայր եկեղեցւոյն մէջ Քրիստոսի աս-
տուածայայտնութեան օրը ճառ մը խօսեցաւ,
Անարզաբոյ Գրիգոր եպիսկոպոսին առջև, որ եղաւ
վերջը կաթողիկոս. խօսեցաւ ուրիշ ճառ մ՝այլ
քնաբան դնելով «Սքանչելի եղև գիտութիւն քո»,
և այլն: Նոյնպէս Կոռիկոսի Ստեփանոս վարդա-
պետին հրաւիրանօքն ալ եկեղեցւոյ վրայ ճառ
մը խօսեցաւ: Այսպէս ուրիշ յիշատակներ ալ
Թոխաց 'ի Կիւլիկիա, որ որչափ իր իմաստուն ա-
նուանը պատիւ են, այնչափ ալ իր իմաստութիւնը
ճանչցուլ և յարգուլ անձանց: Երանի՛ այն աննա-
խանձ ժամանակին և բաղդին, որ հանճարն իր
արժանաւոր պատիւը և իրաւոյքը գտեր էր Հա-
յոց մէջ. երանի՛ այնպիսի իմաստուն վարդապե-
տաց, այնպիսի իմաստասէր իշխանաց և իմաս-
տասէր եպիսկոպոսաց: Գրչագրի մը մէջ հան-
դիպեցայ այս բանիս. «Յոհաննէս քահանայի ա-
» շակերտի գրոց՝ 'ի բան քերականին որ ասէ. Ա-
» նուն է սան բանի հոլովական. ասացեալ՝ յոր-
» ժամ դարձաւ յուխտէն 'ի տեղի ուսմանն առ
» աշակերտակիցն իւր, 'ի տուրբ վարդապետացն
» ժողովեալ բանից. Աստուածային Հեռին օ-
» ծեալն», և այլն. – կըրնար կարծուիլ Թէ մեր

10477396

Երզնկացւոյն ըլլայ այս Ճառս (որուն միայն քիչ մը սկիզբն գրուած էր)· բայց յայտ է որ կամ աւելի առաջ երիտասարդութեան տաեն ըրած պիտի ըլլայ այս ուխտագնացութիւնս, կամ քնաւ ուրիշ Յովհաննէս մ'է այս· վասն զի Երզնկացին իր քերականի մեկնութեանը վրայ տուած տեղեկութեան մէջ ամենևին չի յիշեր այսպիսի բան մ'այլ երբեմն գրած ըլլալը:

Ե

Արդ մեզի ծանօթ և իր յիշած Ճամբորդութենէն և Կիւլիկիայէն դառնալէն ետև՝ գնաց 1284ին 'ի Տփղիս Վրաց մայրաքաղաքը, ուր Վրաց Հետ Հայոց հին իշխանազանց մնացորդքն ալ կային. Թէպէտ ինքն գրոց և գրագիտաց հետ կ'ուզէր պարապիլ, բայց համբաւն իրմէ առաջ անցնելով՝ զինքն ընդունելի ըրաւ հոն տեղի բարեսէր իշխանաց և հայրապետաց ալ· օր մը Քարխմատին [1] ըտուած Հայոց Ոսկէ ձեռ իշխանին չինած եկեղեցւոյն մէջ ներբող մը խօսեցաւ, որուն մէջ երկնից զարդուն նկարագրութիւն մ'ալ ըրաւ. Ոսկայ կարիճ որդին Վաղթանգ՝ այնչափ զմայլեցաւ այս խօսուածքին՝ որ ալաչէց զԵրզնկացին առանձին գրուածք մը ընել երկնից վրայօք· Տփղիսի Յովհ. եպիսկոպոսն ալ վրայ տուաւ· այն տաեն Երզնկացին ալ գրեց «Յաղագս երկնային շարժման», և՛ն, երկնային մարմնոց և անոնց շարժմանն վրայօք, այն տաեղուան գիտուն յարմար: Այս բանս ինքնին հեղինակն կուտ պատմէ· «Ախորժեալն եղև (բանս» մեր) զուարթամիտ պատանւոյն Վաղթանկայ, » որ էր որդի կրտեր հռչակաւոր անուն Պարոն

[1] Ինչուան հիմայ Տփղիս, որ է Թիֆլիզ, կուտցուցընեն Քարխմատեանց եկեղեցին և անոնց տանը տեղը:

» Ոմէքին, և մայրենի ազգաւ Թուռն ևճծ էշխանէին
» Ջալալին՝ աւազան Խաչէնոյ, որդի մօր քարե-
» պաշտի, որ էր Քրիստոսի օրինաքն զարդարեալ
» յոգի, և՛ի խնդիր բանիս յորդորող զորդի: Սա
» խնգրեաց՝ի մէնջ յաղագս Երկնի և նորին շարժ-
» մանն. յոր հարկեալ յորդորեաց զակարուեիս
» մեր մեծազգի եպիսկոպոսան աէր Յոհաննէս, ազ-
» նուական զարմից և բարեաոհմիկ հարց ծնունդ.
» որ և շարժեալ՝ի սիրոյ և՛ի յուսոյ խնդրոյագ,
» և սկն առեալ՝ի պատուոյ շնորհաշնորհ աեսան
» և գերապատիւ եկեղեցւոյ գլխոյն, ՝ի նրբաշա-
» խիլ և՛ի կտրուածիտ բանից սուրբ հարցն և վար-
» դապետաց մերոց և իմաստախոհ արանց՝ պար-
» զեալ գրեցի համառօտ բանիւ և աշխարհական
» իսկութք վասն դիւրահասկանալի լինել ընթեր-
» ցողաց »: Ահա գրուածս կարդալով ուրիշ էշ-
խան մ'ալ Սպերց անուն՝ ուզեց որ աւելի զուար-
ճալի ոճով նոյն բաներուն վրայ գարձեալ գրէ.
Երզնկացին ալ հազար տող ոտանաւորով երկնից
նկարագրութիւն մ'ըրաւ և ընծայեց էշխանին:
Ահա քերդուածին սկիզբն է.

« Յամենահրաշ գործս Արարչին որ գոյացան՝
Մեծ եւ ահեղ ըմբռնելիք ներգործեցան »:

ուր երբեմն կու նկարագրէ, երբեմն դիմառնաբար
կու խօսի երկնից հետ.

Ո՛վ սքանչելի ձեղուն յարկի այս մեծի տան,
Ի բարձրելոյն բանէ ձըգեալ որպէս խորան...
Դու յարկ մեծին ձեռամբ չինեալ սրբայական
Ջահ ի բարձանց ի քեզ կախեալ անշէջական.
Դու անթառամ ծաղկանց լուսոյ մեծ քուրա-
ստան՝
Որք յանդաստանս քո զեղեցիկ ծաղկադրե-
ցան.

Ոչ պարանոց քո լանջագեղ զարդարեցան,
Այլ բովանդակ մարմին եւ անձըն շքեղացան»։ եւ այլն։

երբեմն այլ արևուն վրայօք կ'ըսէ։

Այլ եւ զպայծառ լուսոյն աղբիւր միշտ հոսական՝
Ըզգեղեցիկ ակն աչխարհի լոյս ցուցական,
Ջնա ի կամարըս քո բերթեա ջահ վոյլական,
Որ զկերակուրն հըրոյ բաշխէ բնաւից պիտան.
Սա մեզ խըրատ օր ըստ օրէ քարոզական,
Ըզմահ եւ զկեանք օրինակէ դէմ յանդիման.
Առաւօտուն ծագմամբ՝ ըզծնունդըն մայրական,
Ի երեկոյին թաղմամբ՝ ըզմեռան ի գերեզման.
Յարեւելից գեղով ծագէ փեսայանման,
Արագապէս զընթացս առեալ հըսկայական.
Զարեգական արդարութեան պատմէ ըզբան,
Զաննիւթ լուսոյն մեզ քարոզէ լոյսն եզական»։

Երզնկացին վրաց կողմերէն կ'երևի թէ Հայոց այն աաեն անուանի վանքերուն այլ այցելութեէ եւած ըլլայ. և եթէ իր անուամբ և մականուամբ ուրիշ Ծործորեցի մ'այլ չկայ՝ իրեն է այն Հառն որոյ խորագիրն է, «Յովհաննէս վարդապետի Ծործորեցոյն արարեալ ի քանէն Եսայեայ՝ որ առէ. Հոգի Տեառն ի վերայ իմ». որոյ վերջաբանին մէջ ընորհակալ ըլլալով Աստուծոյ ինամոյն իր վրայօք վան ծննդեանն և զարգացմանը, կ'աւելցնէ նաև ուսումնական վարժիցն համար. « և ի » մատուրն ծնունդ և ի քանին ծնողութենն և » յերկուսին մատուր աշխատութեանցն արժա- » նացայ կոչիլ, փառ ի ցաւագին մարհուվ. և ի մէջ » ծփան ալեաց ծովածուփ աշխարհիս և տրտմա- » բեր կրից կենցաղոյս, առաջնորդեաց ինձ հո- » գին և էառ առ ոտս բարիոք նաւուղղել և ի-

» մասուն կատարտալապետի: ... Եւ այսը ամե-
» նայնի պատճառ և առթող եղեալ և մեզ գեաս
» Եփրատէս, անուանակիր որդւոյն Ամովայ,
» հռչակեալ'ի տանս Թորգոմայ, որպէս նա յոր-
» դոյն Եբերայ»: Այս վերջի խօսքերս կ'ակնար-
կեն յԵսայի Նէեցի, Սիմեսց Գայլէձորոյ վա-
նոց մեծահռչակ վարժապետն, որ յամին 1284
նստեր էր յաթոռ առաջնորդութե, և 30 տարի
վարդապետեց. տարիքով եթէ պզտիկ այլ չէր,
գոնէ հասակակից պիտի ըլլար մեր Երզնկացւոյն.
բայց գուցէ անիկ առաջ վարդապետական պա-
տուոյ հասած էր, և այն անուանի վարժարանին
գլխաւոր ըլլալով՝ Թուի թէ Երզնկացին խոնար-
հաբար իրեն այլ վարդապետ կամ գոնէ ուսմանց
քարոզաւաճող կու ցրցրնէ զնա մեծարանօք:

Յամին 1287 հանդիպած Երզնկայի մեծ սաս-
նուեցան առեն՝ կ'երևի թէ Յովհաննէս անիկ
հեռու չէր, մօտակայ վանքերուն մէջ ըլլալով.
ուր յաջորդ տարին Սեպհոյ տուրբ Գրիգոր մեծ
վանքին մէջ դարձեալ իր ուրջանիսա լեզուն հան-
գիստաւ: Գեղեցիկ և շատ գովելի տավորութիւն
ունէին Կուսաւորչի լերան վանականներն և ուխ-
տաւորները ընդհանուր, Թուի թէ Երզնկացին խոնար-
հարար իրեն այլ վարդապետ կամ գոնէ ուսմանց
քարոզաւաճող կու ցրցրնէ զնա մեծարանօք:

Յամին 1287 հանդիպած Երզնկայի մեծ սաս-
նուեցան առեն՝ կ'երևի թէ Յովհաննէս անիկ
հեռու չէր, մօտակայ վանքերուն մէջ ըլլալով.
ուր յաջորդ տարին Սեպհոյ տուրբ Գրիգոր մեծ
վանքին մէջ դարձեալ իր ուրջանիսա լեզուն հան-
գիստաւ: Գեղեցիկ և շատ գովելի տավորութիւն
ունէին Կուսաւորչի լերան վանականներն և ուխ-
տաւորները ընդհանուր ընդունելի ըլլալով՝ Թուի թէ Երզնկացին խոնար-
հարար իրեն այլ վարդապետ կամ գոնէ ուսմանց
քարոզաւաճող կու ցրցրնէ զնա մեծարանօք:

Յամին 1287 հանդիպած Երզնկայի մեծ սաս-
նուեցան առեն՝ կ'երևի թէ Յովհաննէս անիկ
հեռու չէր, մօտակայ վանքերուն մէջ ըլլալով.
ուր յաջորդ տարին Սեպհոյ տուրբ Գրիգոր մեծ
վանքին մէջ դարձեալ իր ուրջանիսա լեզուն հան-
գիստաւ: Գեղեցիկ և շատ գովելի տավորութիւն
ունէին Կուսաւորչի լերան վանականներն և ուխ-
տաւորները ընդհանուր զանոնք կու նկարագրէ,
մանաւանդ Սեպուհ լեռը և Մանեայ այրքն և բո-
լոր Դարանաղեաց լեռները: Այս նկարագրու-
թեանց հանդուցօտ և աշխոյժ և աւելի վեմ բո-

10477396

վանդակութիւնն է «Լերինք ամենայն» ըսուած ընտիր շարականն, զոր ինքն երգած է. Թէպէտ տմանք Խորենացւոյն կ'ընծայեն զայս, և արժանի թակ է, գլուխէ և հաւանական: Աւելի հաւանական է որ Երզնկացին երգած ըլլայ մեկալ երկայն այբուբենական շարականն, «Այսօր զուարճացեալ», Թէպէտ զայս ալ տմանք Խորենացւոյն կ'ընծայեն: Ներբողէն տասը տարի վերջը երգած է զայս: Կ'երևի Թէ Լուսաւորչի ներբողը խօսած տարին՝ խօսեցաւ անոր որդւոց և Թոռանց վրայ ալ Ճառ մը, որ առջինին հետ մեկտեղ տպագրեցաւ նախ՝ի Կոստանդնուպօլիս, Թէպէտ յայտնի վկայութիւն մը չկայ Թէ այն Ճառն ալ իրեն ըլլայ: Ճառերէն զատ հաւատօ պատմութիւն մ՝ալ կայ Լուսաւորչի՝ Երզնկացւոյն անունով, որոյ սկիզբն է. «Յադամայ ի նահապետ Աբրահամ». և այլն:

Լուսաւորչի վանքերուն մէջ իր տպայութեան ուսումնարանը՝ Ս. Մինասը ընտրեց Երզնկացին, քիչ մը առեն գաղրելու և շատոնց խոտացած քերականութեան մեկնութիւնը գրելու. որով հետև Մշու Ս. Կարապետէն ալ՝ Յովհաննէս անունով վարդապետ մը եկաւ նոյն բանը տպաչէց, աշկերտներն ալ յորդորեցին. վերջապէս ձեռք զարկաւ. և նախ եաւէ ըլլալով ժողվեց իրմէ առջի քերականի մեկնիչներն. արդէն Յովհաննէս Պարոնն անունցմէ վեց հատ մէկ գիրք օրինակել տուեր էր. որք էին Մովսէս քերթողահայր, Դաւիթ փիլիսոփայ, Բարսեղ վարդապետ, իրեք ալ անանուն, որոնց մէկն անշուշտ էր Ստեփանոս, մէկն ալ Թէրևս Մամբրէ. իսկ Երզնկացին ատոնցմէ զատ գտաւ Հաւատմատուածոյն և Գրիգոր Մագիստրոսի մեկնութիւններն ալ, Արիստակէս վարդապետին քառգիրքն և վերծանութեան կանոնները ալ ձեռքն ունէր. զայս ամենը քննելով՝

10477396

պարզ մեկնութիւն մը գրեց այն հին քերականին, զոր նախնիք կարծեա թէ միայն յօգնեցընելու համար սրելու հասարը գրած էին: Ասկէ զատ ուրիշ համառօտ քերականութիւն մը կամ քերականի մեկնութիւն մ'ալ հեղինակաբար գրեց, առանց առջի հեղինակաց վկայութիւնները բերելու և իրարու հագցընելու, ինչպէս էր առջինը: Այս առաջին մեկնութիւնը զոր հեղինակն կ'անուանէ «առաջին » պտուղ յանապատի կենաց», և իբրև իր առաջին ոճով գրուած գիրքը կու սեպէ, ընծայեց իր երախտաւոր և սիրելի Ս. Հեթումի թագաւորին՝ երկրորդ անգամ Կիւլիկիա գացած առեն, 1293ին: Հոն գտուեցաւ նաև այն աշխարհին դժբաղդութեան առեն, Եգիպտոսի Ալֆի սուլտանին ապատակութեամբը, որուն համառօտ պատմութիւնն ալ գրած է քերականին յիշատակարանին մէջ: Հեթումէն առաջ իր պապն ալ և անուանակից և Հեթում՝ քերականի մեկնութիւնն մ'ուզեր էր Վարդան վարդապետէն, այն ալ գրեր էր. այսպէս երկու մեծ թագաւորք՝ պապ և թոռն փափագող եղան քերականի մեկնութեան. և երկու մեծ վարդապետք՝ վարպետ և աշակերտ՝ գրեցին և ընծայեցին անոնց, և իրենց աշխատանքը նախ թագաւորական ձեռքերու վայ դնելով՝ աւելի հաճոյ ասանդեցին մեզի:

Յովհաննէս ԺԳ դարուն վերջերը գնաց Հայաստանի Արտազ գաւառը, ուր Ս. Թադէոս առաքեալ Ծործոր գեղին մօտ վանք մը շիներ էր Աստուածածնի անուամբ. ինքն ալ հոն թաղուելով Թադէի վանք ալ կ'ըսուէր տեղը. այս առեն Զաքարիա եպիսկոպոսն էր նոյն վանքին ալ Թեմին ալ առաջնորդն, և Ծործորեցի կ'ըսուէր. ասիկա մեծ պատուով ընդունեցաւ զԵրզնկացին և սիրով կը պահէր քովը. ուր այն ալ իր բնաբնակ հանդարտութիւն և իմաստութիւնը գտնելով՝ սիրեց

10477396

Թէ՛ տեղը և Թէ տեղին գլխաւորը. երկուքն ալ մէկ սիրտ մէկ հոգի միաբանեցան Թեմին հոգևոր և մտաւոր յառաջադիմութեան համար: Հոգևոր իշխանութիւնն կը մեծարէր գիմաստութիւնը, իմաստութիւնն ալ կը պատուէր զհոգևոր իշխանութիւնը. խոհեմութիւնը զերկուքն ալ կը հաստատէր:

Զ

Երզնկացւոյն հոս բնակած տեղը երկու մեծ կրօնական դիպուած պատահեցաւ ապգերնուս. մէկն էր Կիւլիկիոյ Հայոց Թագաւորաց լսուին եկեղեցւոյ հետ կրկին միաբանութիւնն. Գրիգոր Անտարզեցի կաթողիկոս՝ Հեթում և Լեւոն Թագաւորաց հաւանութեամբ Սսոյ մէջ ժողով մը գումարեց 1305ին, և ուրիշ վարդապետաց հետ հրաւիրեց Զաքարիա եպիսկոպոսն և իր հին բարեկամն Երզնկացին ալ՝ բայց իր մահը վրայ գալով՝ տանք չգացին. նոյնպէս երբ Կոստանդին կաթողիկոս յաջորդեց զԳրիգոր և հրաւիրեց զատանք՝ ցավհաննէս խոհեմութեան Համբոյ սեպեց չերթալը. ինչու որ Սիւնեաց արքեպիսկոպոսն Ոսկեբերան ցավհաննէս որ միանգամայն գրեթէ իշխան էր իր երկրին՝ և մեծ ազդեցութիւն ունէր ընչական կողմերուն, կաթողիկոսին մտացը հաճելի չէր, ինչպէս որ գրով ալ իմացուց իր միտքը թէ կաթուղիկոսին և թէ Զաքարիայի: Զաքարիա պատասխան գրեց շատ իմաստութեամբ և զգուշութեամբ, համաձայն կաթողիկոսին մտացը. ատոր համար Ոսկեբերանը գժարեցաւ: Այդ որպէս զի այս գժարութիւնը աւելի չզայրանայ և ժողովրդեան խաղաղութիւնն ալ չխռովի՝ Զաքարիա և Երզնկացին միջին և զգուշաւոր Համբոյ սեպեցին՝ թղթով միաբանիլ կաթուղիկոսին հետ,

10477396

անձամբ չջարժիլ տեղերնէն, որ Ռուպէլեանը
չգրգռեն: Բայց տասը տարի վերջը՝ երբոր կա-
թուղիկոսն նորէն Աստանայի ժողովքը գումարեց
Օշին Թոպալուրին հրամանաւ (1316), Երզնկա-
ցին իր ծերութեան տեղն վերջին անգամ գնաց
Կիւլիկիա՝ Զաքարիայի կոչմէն ժողովքին ներկա-
յանալու, և հաւանելով անոր կանոններուն որ
կը հաստատէր զՍոյ ժողովը՝ դարձաւ յԱրտազ:
Ահա ձամբորդութիւնս Երզնկացւոյն մեծ գրա-
ւոր գործքի մ'ալ պատճառ եղաւ. վասն զի գը-
տաւ՝ի Կիւլիկիա Ս. Ներսէսի Շնորհալւոյ սկսած
Մատթէի աւետարանին մեկնութիւնը, որ ինչուան
եօթներորդ գլուխը մեկներ էր և անկատար թո-
ղեր. իբր 150 տարի վերջը Երզնկացին տեսաւ
Շնորհալւոյն բուն ձեռնագիրը, և յորդորուեցաւ
շարունակելու աւետարանին մեկնութիւնն և գլուխ
տարաւ. ինչպէս ինքն իսկ կու պատմէ, նախ յի-
շելով թէ ինչպէս հանդիպեցաւ գրքին, և թէ ին-
չու կիսկատար մնացեր էր. և թէ «Թէպէտ ո-
» մանք նախ քան զմեզ ձեռնարկեցին գրել՝ի
» վերայ շարադրութեան նորին, սակայն ոչ էր
» կարգաւոր որպէս արբոյն, այլ հատակատոր ա-
» րարեալ զբանս առաջին մեկնչացդ, նա և զբնա-
» բանութիւն աւետարանին արտաքս մերժեալ,
» ուստի ոչ գայր դիւրաւ յիմացումն ընթերցո-
» ղացն: Յապագս որոյ ես նուաստս՝ի յեռին
» յորդիս Սիոնի ապիկար ոգիս Յոհաննէս Երզըն-
» կայեցի, սպասաւոր բանի, բնակեալ՝ի վիճակ
» սուրբ առաքելոյն Թադէոսի՝ ՚ի վանս Ծործո-
» րոս կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուա-
» ծածնիս. այլ և ժողովեալ առ մեզ բանսաէր
» անձինք՝ի յուսումն կրթութեան աստուածա-
» շունչ տառիցս լսելութեան, յորոց յորդորմա-
» նէ և՝ի փափագելի խնդրոյ՝ եղեալ՝ի մոի առ-
» նել հաւաքումն մեկնութեան.... Եւ արդ եղև

» գրուեթիւն սորա՝ ի թիւ մարդեղութեան տեառն
» մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ի ՈՑԾԶ. որոյ զօրու-
» թեամբ զսանէս հարցուք զբանէս ». և այլն:
Ահա գիրքը պատճէն քիչ տարի ետև (1335ին) ը-
նակոլ մը այսպէս կ'ըսէ, յետ խօսելու Շնոր-
հալեցին վրայ. « Նաև այլ ոմն յետ այնքան ժա-
» մանակաց, զոր Հոգին շարժեաց, յաշխարհէն
» Դարանաղեաց՝ ի նահանգէն Եկեղեաց, որ է շի-
» րիմ մերոյն հովուապետի և Լուսաւորչի Հայկա-
» զեանս զարմի, Յոհաննէս վարդապետ կոչեցեալ
» Ծործորեցի, յոյժ աշխատանօք և քրանաչեան
» վաստակօք կատարեալ զմեկնութիւն սորա, էր
» զոր՝ ի հնոցն սրբոց ժողովեաց, և է զի՝ ի յի-
» րում կողովամիտ իմաստութէն համառօտեաց,
» խիստ պարզ և յստակ, դիւրին լսողաց, յա-
» ւարտ՝ ի գլուխ էած. զոր Տէր Յիսուս Նաւուս-
» ցէ նորա ընդ հարիւրաւորսն և ընդ վաթանա-
» ւորսն և ընդ երեսնաւորսն՝ վարձս բարեաց՝ ի
» յաներեկ աւուրն. ևս և ծնողացն նորա և ու-
» սուցչաց նորա, որ այսպիսի պտուղ քաղցր մեզ
» ընծայեցին. և ամենեցուն վարձահատոյց լինի
» Քրիստոս, որ զՅոհաննէս վարդապետեան Ծոր-
» ծորեցի սրտի մտօք յիշեն յԱստուած ողորմին
» և՝ ի Հայր մեր որ յերկինս»:

Է

Երկրորդ մեծ կրօնական գիպուածն այս էր, որ այն եռքի տարիներն՝ Լատինացւոց կողմանէ, առաջին անգամ Դոմինիկեան կամ Քարոզիչ ը-նաւած միաձուռնք եկան՝ ի մեծ Հայաստան. ո-րոնց գլխաւորն էր Բարթուղիմէոս անուանով հո-գեւոր անձ մը, որ եպիսկոպոս ալ եղաւ. առնք քարեմասուեթեամբ սկսան աշխատիլ Հայոց և Լա-տինացւոց մէջ միաբանութիւն հաստատելու. և

10477396

այս բանիս միջոց մ'ալ սեպեցին լատին Ս. Հարց և վարդապետաց գլուածներն հայերէն Թարգմանել. ատոր համար աշակերտները ժողովեցին և սկըսան լատին լեզուն սովրեցընել. իրենք ալ հայերէնը կը սովրէին. Թէպէտ երկուքն ալ անկատար սովրելով՝ ըրած Թարգմանութիւննին ալ հայկաբանութեան համը կորսընցուց, և լատինաբանութեամբ աւրեց հայ լեզուն. մանաւանդ երբոր ոգիտաբար հարկաւոր սեպեցին լեզուն ծռել՝ որպէս զի յատենային լատինաց համաձայն ըլլայ բառածնին և գրածնին. ատոնցմէ եւան Ոնիւթոր ըստաձ կէս լատինաձէս Հայ Դոմինիկեան կրօնաւորք Նախիջևան գաւառին մէջ, որոյ մէկ վիճակին անուամբ յետոյ կոչեցան և Ջահկեցի, որոնց պատճառաւ եղած բարիքն և չարիքն ալ յայտնի է: Բայց առջի բերան շատ խոհեմութեամբ կը վարուէին և մեծ օգուտ միաբանութեան կու խոստանային. զոր ձանչնալով Զաքարիա եպիսկոպոսն և իր սրտակիցն Յոհ. Երզնկացի՝ ընդունեցան զանոնք իրենց Թեմը, և Երզնկացին ջնայելով իր ծերութեանը՝ հետևեցաւ լատին լեզուի, գուցէ Կիւլիկիա եղած առեն ալ հետևած էր, օգնեց Թարգմանութեան մեծահոչակ Ս. Թովմայի Ակուինացւոյ գործոց մէկ մասին, որուն ժամանակակից այլ էր Երզնկացին. վասն զի իր առջի անգամ Կիւլիկիա եղած առեն վախճանեցաւ այս մեծ Սուրբս (յամին 1282). իսկ անոր գըրուածներէն՝ բաց յայլոց՝ Եօթն Խորհրդոց վրայ գրածն մահուանէն հազիւ 40 տարի ետև (1321) « Թարգմանեցաւ 'ի ձեռն սրբոյ ուսմանն եպիսկոպոսին » պատի, Տէր Բարդուղիմէոսի, որ է ազգաւ լատին » դին, և քաղ(եցաւ) միջնորդութեամբ լուսաւորին » միտ վարդապետին Յոհաննու Ծործորեցւոյ »: Անիկայ եղած կ'երևի իր եռքի գրաւոր աշխատութիւնն, բայց նշանաւոր աշխատութիւն մը: Եր-

զընկացին միշտ ճշմարտութիւն և իմաստութիւն և ազգին օգուտը դիտելով, այս բանիս մէջ ալ միաբանեց զասունք իր մօքին և սրտին մէջ. ոչ իբրև զոմանս՝ ճշմարտութեան պատուտղ երևնալով, առանց աջ ու ձախ նայելու՝ զազգն ոտքի տակ առող, և ոչ իբրև զայլս ազգասիրութիւն պարծենալով՝ ազգին մէջ գտածը յամառութիւ պաշտպանող: Առակ է թէ Իմաստուն մարդն իր կարծիքը կու փոխէ. և երբ հաւատոց վրայ ըլլայ ճանչցածն՝ ոչ միայն իմաստութիւն այլ և պարտք է այնպէս ընելն: Այսպէս լրաւ անշուշտ Երզընկացին՝ 'ի Կիւլիկիա և յԱրտազ, տեսնելով և լսելով քանի մը կրօնական խնդրոց պայծառ մեկնութիւն, որոց հակառակը գտնելով երբեմն մեր ազգային քանի մը մեծանուն վարդապետաց գրուածով՝ օրինակել տուեր էր մէկուեղ, և յաւելուած մը գրեր էր, յորում կ'ըսէ. « Ցոլով » ժամանակօք և աշխատութեամբ բազմաց ատեցայ զայս երեք գիրքս (Անանիայի, Խոսրովկայ » և Սարկաւագայ)... զոր և գտի ես յայլ և յայլ » տեղի և ժամանակի, և ատացայ զերիս գիրսն. և » 'ի նոցունց դարձեալ եառ գրել և առ միմեանս » եդի, և արարի մի գիրս », ևն: Իր խակագիրը օրինակն է իմ ձեռքս անցածն, և գիրն կրնայ վայելուչ գրութիւ օրինակ ըլլալ, եթէ ոչ և իր հին վարդապետութիւնն: Որչափ այլ չափաւորութիւն և խոհեմութիւն քանեցուցած ըլլայ՝ շատ գժար էր որ Լատինաց մօտենալուն համար՝ ոմանց զգուշանալի և ատելի եղած չըլլար, կենօք և յետ մահու. արդէն վերոյիշեալ Մատթէի աւետարանի մեկնութեան հին օրինակին մէջ, որ իր մահուընէ քիչ տարի վերջ գրուած է, հակառակող ձեռք մը չանուցեր է աւրել թէ Ցովհաննու անունը, թէ յիշատակարանին մէջ Լատին քարոզչաց վրայ գովեստը և թէ գրոց մէջ քանի մ'անոնց վարդապետութեան համաձայնութիւնը:

10477396

Ը

Երզնկացւոյն եռքի տարիները մեծ երկրաշարժ մը եղաւ Արտազ գաւառը և Թադէի վանքն ալ կործանեցաւ։ Զաքարիա նորէն չինեց, և կ'ըսեն թէ չթողուց որ Երզնկացին հանկէ հեռանայ, և հաւանական է թէ հոն ալ կնքեց իր բազմարդիւն կեանքը. թէպէտ և որոշ յիշատակ մը չկայ մահուանը և իր թաղմանը վրայ։ Հազբատայ վանքին գերեզմանատան մէջ անգիր գերեզման մը կուցոյցնեն ինչուան այսօր՝ Երզնկացւոյն է ըսելով. բայց ես ուրիշ տեղուանք ալ հանդիպած եմ սանկ երևելի մարդկան երկու տեղ գերեզման, կամ տեղէ տեղ մարմինը փոխադրելուն համար, կամ սխալ կարծիքով։ Ուր ալ որ եղած ըլլայ գերեզմանն՝ թէ և անգիր, աւելի փառաւոր յիշատակ և տապանագիր սեպհական է Մխիթար Ապարանեցոյն ըսածն, թէ «Փա» ջուխեանն և սրբուխեանն (Երզնկացւոյն) վե» կայեն ամենայն ծրագրեալ գրեանքն և մեկնու» թիւնք և աքանչելիք սուրբ գերեզմանոյն»։ Այս ծրագրեալ մատեանքն են վերի յիշածնիս, և անոնցմէ զատ շատ գրուածքներ. ինչպէս են «Խրատք հատորական փրինտոնէից». պարզ և ռամկաց դիւրահաս ոճով, իրատական տանեաւորներ ալոց և կրօնաւորաց համար. սրբազան երգեր, ինչպէս են Ջրօրհնէայ փաղքն՝ ձմեռնային ժամ օրհնեմք ըզքեզ, և Այսօր ձայնն հայրական և Վարդավառի գանձն՝ ձանձաւ լուսոյն, Աստուածածնի վերափոխման վրայ այբուբենի կարգով տաղ մը, և Մէինոութէան տաղմոսոյ. Հատուածս հարանց վարք մը և խրատք, Քարոզք, Աղօթք, Քաղուածք վարդապետական քանից, և այլն, և այլն։ Մէծոպոսէի մեկնութիւն. Քաղուած Անանիայի (Նարեկացւոյ) գրոց

ընդդէմ Թոնդրակեցւոց. Գովաբանութիւն կաթուղիկոսաց և Եպիսկոպոսաց (որ առաքինութեան գլուխածք մը կ'երևի). գուցէ նոյնպէս ըլլան և իր անուամբ յիշուած Աշխարհացոյցն և Տրամաբանութիւնն. իրն է նաև Ելբն Խոփաճարակաց ջարդեանն Յաւուրս վերջին ժամանակի: — Այս յիշեալ գրուածոց մէջ ամենէն յարգի և ընտիրներն կ'երևին Ճառերն կամ Քարոզքն, որ 30էն աւելի կան, ոմանք Սաղմոսաց վրայ, ոմանք Տօնից և եկեղեցական հանդիսից, յորոց զոմանս 'ի Կիլիկիա իսկ ասացած է, զոմանս իր հայրենիքը, և զոմանս ուրիշ կողմեր. յայտ է թէ շատն այլ գրած ըլլայ Անտազ, գուցէ և 'ի Հաղբատ:

Եթէ այս և եթէ ասոնց նման բազմապատիկ գրուածոցը, միանգամայն և առաքինի վարուցն համար, թէ իր աննախանձ ժամանակակիցներուն և թէ քիչ մը վերջիններուն մեծամեծ գովութիւնք կու յիշուին Երզնկայեցին, և կ'ընծայուին իրեն այսպիսի մակդիրք. Րաբունի, Յոգնիմաստ հռետոր, Անյաղթ վարպետիք, Լուսատիպ վարպետիք, Պատուական, Ընտրեալ, Սուրբ, և այլն. որոց անշուշտ յետինք և ներկայք այլ արժանի պիտի սեպէին զինքը, եթէ գործերն և գրուածներն աւելի ծանօթանային և հրատարակուէին: Փափաքելի էր մեզ գիտնալ և Մխ. Ապարանեցոյն յիշած պատմութիւնն անոր սուրբ գերեզմանին. յուսալով այլ որ աւելի հաւատալի ըլլան քան Ղազար Ջահկեցի կաթուղիկոսին պատմածներն՝ անոր կենդանութեան առեն ըրածին, չեմ գիտեր որ գրուածքէ կամ աւանդութենէ առած. զոր և դու, Հայկակ, կըրնաս կարդալ գոնէ իբրև աւանդութիւն, և կարծիք մը Անոյ կործանման պատճառին, որ տակաւին 1319ին աւրուած կարծուէր մեծ երկրաշարժէն. բայց դեռ անկէ շատ տարի եպքն այլ քանակուած ըլլալուն վկայ են իր եկեղեցւոց

10477396

քանի մ՚արձանագրութիւնքն: — Հիմայ մոխկ ըրէ Զահկեցւոյն պատմութեանը:

Թ

«Ա յս վարդապետս ազգմամբ սուրբ Հոգւոյն գնաց ՚ի յԱնի՝ քարոզել և խրատել զնոսա, զի դարձցին ՚ի մոլորութենէ և ՚ի չար գործոց իւրեանց. մանաւանդ եկեղեցին օթեցաւ զգիշերն. և ոչ ոք կարող փոյթ յանձին գնալ առնա առ ՚ի հարցանել և ումբռնել զնա. այլ իբրև հընչեցաւ զժամն գիշերային՝ գնաց եկեղեցին, և զբեան տեղին առուն նմա. և նա կայր խանարհութեամբ. և յարձակման ժամուն գնաց ՚ի խուցն. և բնաւ ոչ ոք մօտեցաւ առ նա: Իսկ ՚ի ցերեկին իբրև զեղևեցին և արբեցան, ապա եկին մօտ վարդապետին: Եւ զի հասակաւ կարճ էր երանելին, վասն որոյ եդին երկայն գրակալ, զի ՚ի ձգտիլն ծաղր արասցեն զնա. իսկ նա ՚ի շնորհաց Հոգւոյն սրբոյ զամենայն ընթերցմունս ՚ի բեր. րան առեալ՝ առանց գրի անսխալ ասէր աստուածութեամբ: Այլ ՚ի տուէ և ՚ի գիշերի խրատէր մեծաւ հոգաբարձութեամբ, և նոքա ոչ անային բնաւ և ոչ դառնային ՚ի մեղաց. վասն որոյ անկաւ մահ սաստիկ. զի աներևոյթքն իբրև մարմնաւոր երևեալ՝ խոցոտէին յայտնապէս զմանկունս ՚ի գիրկս մօրցն և զայրս ՚ի մահիճս, զոմանս ՚ի մէջ քնոյն և զայրս ՚ի յարթուն: Իբրև տեսին քա. ղաքացիքն զպատուհասս եկեալ ՚ի վերայ իւրեանց, յայնժամ կալեալ ըմբռնեցին զսուրբ վարդապետն և եդին ՚ի բանտի ՚ի նաեմ և ՚ի ժահահոտ տեղի մի. ասելով, եթէ պատարագ արա և հաշտեցո ընդ մեզ զԱստուած՝ որպէս և ասացեր. ապա թէ ոչ՝ մեռանիս ՚ի ձեռաց մերոց: Իսկ նա պատասխանի ետ և ասէ. Ահա կրկին բարկացու.

յինք զԱստուածն. և նոքա ոչ անսային. և անճա-
րացեալ յերկիւղէ նոցա՝ յանձն էառ մատուցա-
նել պատարագ, և եբեալ գնաց յեկեղեցին. և
յորժամ էջ ՚ի սեղանոյն ՚ի խնկարկել, յայնժամ
եբ հուր ՚ի բուրվառէն և այրեաց արս չորեք հա-
րիւր, որպէս ՚ի հնումն Նաբաթ և Աբիուդ: Եւ
խնդոյն զղջացեալ անկան առ ոտս սուրբ վարդա-
պետին, և հայցէին ՚ի նմանէ զթողութիւն, և
խոստանային զառնալ ՚ի մեղաց իւրեանց:

» Եւ յետ սակաւ աւուրց սկսան կրկին գործել
զչարիս և թաւալիլ ՚ի յախտս պղծութենէց: Յայն-
ժամ բարկացեալ Տէր առաքեաց գազանս չարս
և այլակերպս, որ գային ՚ի մէջ գիշերի երամա-
կօք և մանէին տանէ ՚ի տուն. զպատանեակս և
զմանկտունս յափշտակեալ տանէին. և եբեալ ա-
ռաւօտուն տեսանէին արտաքս տանց իւրեանց
դիշատեալ, ոմանց զձեռս և ոմանց զոտս, ոմանց
զլուխս, և ոմանք կիսամեռ անկեալ կային արիւ-
նաթաթախ և դիահարեալ: Այլ և կին մի ունե-
լով զմիամօր որդի՝ որ յափշտակեալ եղև ՚ի գա-
զանաց, գայ արտասուօք անկանի առ ոտս վար-
դապետին ասելով. Արդ օգնեա տառապելոյս,
զի միամօր է ինձ. վասն զի պահեալ էի զամե-
նայն պատուիրանս քո, և արդ պահեմ մինչև
ցմահ: Յայնժամ տեսեալ վարդապետին զհա-
ւատս կինոջն նման Քանանացւոյն, յաղօթս եկաց
առ Տէր. յայնժամ գազանքն որ զանդամս տը-
ղային յափշտակեալն էին՝ ամենեւին բերեալ
եդին առաջի սրբոյ վարդապետին. և վարդա-
պետն առեալ զանդամս տղային դնէր և շարէր
և ձգէր իւրաքանչիւր տեղիան. և սկսաւ աղո-
թել առ Աստուած այսպէս. Տէր Քրիստոս, որ-
պէս յարուցեր զմիամօր որդի այրւոյն ՚ի Նային
քաղաքի, նոյն զօրութեամբդ և ողորմութեամբդ
յարո զսա և կենդանացո, վասն զի անմեղ է. այլ

10477396

և տեսցեն մերձ եղեալքն զզօրութիւնս քո և գարձցին 'ի չարեաց իւրեանց: Յայնժամ եւս կարասեալ մարմինն, կցեցաւ ոսկր առ ոսկր և կենդանացաւ, և գարձաւ հոգի մանկանն և յարուցեալ կանգնեցաւ: Իսկ որ շուրջն կային եբուև տեսին զլքանչելին՝ զահի հարեալ անկան առ ոտս վարդապետին և մեղայ գոչէին. և վաղվաղակի գնացեալ բերէին զդիակունս առաջի վարդապետին և աղաչէին զի յարուցանէ. իսկ սուրբ վարդապետն Յովհաննէս եկաց յաղօթս և գոչեաց ասելով. Ովքդ անմեղք են 'ի սոցանէ՝ եկեսցի նոցա բժշկութիւն. ապա թէ ոչ՝ Սատուածծ վրէժխնդիրը լեսցի ըստ հաճոյից իւրոց: Յայնժամ դիմեցին գայլք 'ի վերայ նոցա յանկարծակի և պատառեցին ականերև զբազումս 'ի նոցանէ: Եւ 'ի տեսանելն զայս ամենայն ահիշեցան ահիւ մեծաւ, և սկսան խատապէս մեղայ գոչել և գառնալ 'ի չար գործոց:

» Եւ յետ երից ամաց մուտացան զառաջին հարուածսն, և սկսան կրկին 'ի տիզմ թաւալիլ, ասելով, թէ առաջին հարուածքն 'ի պատահմանէ եղև, և ոչ վասն մեղաց մերոց: Եւ գարձեալ եկին վարդապետն Յովհաննէս, և սկսաւ քարոզել. և եբուև տեսին զնա զի կրկին յանդիմանէր զնոսա, բարկացան և սկսան ասել ընդ միմեանս, եթէ է մեր քահանյէ. և խորհեցան խորհուրդ նանիր, և արբուցին նմա թմրատեալ և թաւիեցին 'ի խեղաց, և ապա մերկացուցին զնա և արկին 'ի վերայ սայլի, և այնպէս մերկ և խայտառակ 'ի մէջ քաղաքին շուրջ ածեալ մուննետակաւ ծայր առնէին զնա. և ապա բերեալ կախեցին զամբիւղիւ 'ի դուռն աւագ եկեղեցւոյն, զի մատնօղք և եղանօղքն տեսցեն: Եւ յետ ժամուց ինչ անցեալ գայլք վարեցաւ 'ի թմրութենէ. և զգաստացեալ հասու զինքն այնպիսի կերպարանօք. սկսաւ յոգոց հանել և լալ գառնապէս: Եւ լսեալ զձայնն՝

խակոյն իջուցին և բրածեծ արարեալ աքսորեցին զնա. պատուիրելով և ահացուցանելով, եթէ այսուհետև մի՛ տեսցուք զքեզ ասա, ապա թէ ոչ՝ չարաչար մեռանիս՝ ի ձեռաց մերոց: Եւ տեսեալ զայս ամենայն վարդապետին Յովհաննու՝ եւ՝ ի վերայ բարձր բլրի միոյ և անէծ զքաղաքն. կըրկնեաց ծունր ասելով. Տէր, այլ ոչ լինիմ երաշխաւոր. այսուհետև զոր ինչ կամիս՝ այնպէս արա: Եւ յանկարծակի էջ սաստիկ բարկութիւն յԱստուծոյ, և սկսաւ քաղաքն շարժիլ և տապալիլ պարսպացն: Եւ զայն տեսեալ ամենայն ոք՝ ստէպ ընթացմամբ փոյթ ընդ փոյթ բուռն հարեալ՝ ի ձեռաց ընտանեաց և զաւակաց իւրեանց՝ և տարածեալ եւեալ վտարեցան. Թողլով զքաղաքն և զեկեղեցիս և զոսկեզօծ պատառս և զծաղկաձեւ գաշտս իւրեանց, որպէս վիճակաւոր

10477396

10477396

Լ.Ա.

ԼԵՒՈՆ ՎԵՐՋԻՆ

29 Նոյեմբեր, 1393.

Ա

Ամենայն Հայոցդի որ Բարիզու քով Ս. Դիոնեսիոսի աբբայարանի տաճարին այց ելնէ և իջնէ անոր տապանատունը, չիկըրնար առանց մեծ և խոր մտադրութեան չտեսնել քնարան մը թագաւորի, թագիւ, խաչիւ և առիւծով, և վահան մը՝ յորում քանդակեալ են նշանք թագաւորութեան Հայոց և Երուսաղէմի և Լիւսինեան տան: Աչք մէկէն կու տեսնեն այս խորագիրս, Cygist Lyon, Roy d'Arménie. (Ասա հանգչի Լեւոն Թագաւոր Հայոց). և գարձեալ. Cy gist le très-noble et excellent prince Lyon de Lizingne, quint Roy Latin du royaume d'Arménie, qui rendi l'âme à Dieu, à Paris le XXIX jour de novembre, l'an de grace M. CCC. XX et XIII.

IIII

Ա յսմինքն. Ասա հանգչի մեծատոհմ և մեծապայծառ իշխան Լեւոն Լիզինեան, հինգերորդ ազգայ Լատին՝ թագաւորութեանն Հայոց, որ աւանդեաց զհոգին առ Աստուած, ի Բարիզ, ի 29 աւուրն նոյեմբերի, յամի փրկութեան 1393: Հա

ուրուագրուած փոքրիկ [1] ծնօտածաղիկ անձն՝ էր յաջորդ և վերջին հակահայաց Հայկազանց և էշխանազօր Հայպետաց. և աւելի այս նկատմամբ քան թէ իր անուանակցաց մէջ յետին ըլլալուն համար՝ կու վայելէ իրեն կոչուիլն ՊԵՐՋԻՒ: Իր անունն այլ ըստ իմաստին կըրնայինք կերպարա-նել ծեր Աւիւծ մը՝ վատած թաթերը գլխուց և վահանաց վրայ դրած և ընկած. բայց աւիւծա-բար ընկած. որուն խորշոմեալ և կռնձեալ յօնքն ու կիսաբաց աչերն՝ ոչ անվախ իրեն նայել կու տան:

Լևոն ը կամ Ջ դասեալ 'ի կարգի Ռուբինեան պարոնաց և Թագաւորաց Կիւլիկիոյ Հայոց, վերջինն եղաւ 1350ի չափ Հայպետաց կամ ազգապե-տաց Հայոց, որոց կէսն Թագաւորական պատիւ և անուն այլ կրեցին, կէսն առանց այդ անուան և Թագի՝ մեր ազգին գլխապետք եղան, կատա-րեալ 40 դարուց միջոց: Ազգաց դեռ չձեւացեալ կամ չծալկեալ կոկոնակերպ նահապետաց հետ, երբ մեր նահապետն՝ Հայկն՝ եղաւ 'ի նոյաբնակ երկրէն, Քամայ բռնաւոր Թուրան հետ երթալու 'ի Սենաար, յաբեթական գնդի մը գլուխ կեցած, հաւատարմագոյն ժամանակագրութեան թիւն էր 2625 տարի Քրիստոսէ առաջ. երբ Լևոն Ջ Քամայ ցեղին պայազատական աթոռոյն էշխող Եգիպտացի սուլտանին դէմ՝ մինչեւ 'ի յետին հը-նարս կռուելով 'ի վերայ Թագաւորութեան և անուան Հայոց՝ գերի ընկաւ, և բազմութիւնք Հայոց Թողեալ զյետին հայրենիս՝ օտարական գնացին յարևմուտս, Քրիստոսի Թուականն էր 1375. այս երկու Թուոց գումարն կ'ընծայէ ողջ ամբողջ 4000 տարի: Զոր հազար տարի ազգի

1 Թերևս փոքրկութեանն համար կամ պզտանօք Lyonet այլ կոչուեր 'ի Փռանկաց:

մը ինքնանուն և քիչ շատ ինքնուշևան պայազատութեան՝ ի մէջ հին և նոր ազգաց. — բաւական էր այդչափ ազգի մը համար՝ ի չափս Նախաինամողին ազգաց և ազանց, որ մարդկան առեջծմանէն մինչև ցայսօր ձգուած ժամանակի մշտատեց կամարին մեծագոյն մասին վրայ՝ լարած և շարած է Հայոց ազգապետութեան գիծը, որոյ հաւասար շատ քիչ ազգաց գիծք կ'երևին: Ան գիծն՝ Թերևս օտարաց համար անշնան և աղօտ է այսօր. բայց Հայ աչաց լուսանշոյլ և անջինջ գիծ մ'է. կարմիր-կանաչ կամար մը՝ որոյ գլուխն ի լեառն Մասիս, և վերջն յամուրն Սիս. մէկուն քով Հային կանգնած, միւսոյն՝ Լևոն ընկած: Յաւաչ քան զՀային՝ դեռ ժոլովրդոց զանազանութիւն չկայ, չկան ազգք և լեզուք. յետ Լևոնի ազգեան ինայ ազգք և իշխանութիւնք՝ դեռ երեկոյան բաներ են յաչս Հայոյն. Հայն իր ազգային ինքնիշխանութեանը վերցուելէն վերջն այլ, իբրև լեզու և կրօնք՝ ունի պայազատութիւն մը, ունի որոշ տեղն և բարակ գիծ մ'այլ ժամանակին կամարին վրայ. ունի գոնէ դեռ եկեղեցական հարըստութիւն մը, որ կըրնայ ձգել և յարատևել ըզհին Հայութիւնը, քանի որ լեզուն և ծէսն մնան ի վերայ երկրի. յուսամք թէ ցորչափ մընայ և երկնքս:

Լևոն Վերջին՝ Հայոց հարստութեան եռաքինն ըլլալուն, իրմով գրեթէ մեր ազգն և աշխարհն այլ անշնան մնալուն համար, դարձեալ, իր օտար ցեղէ ըլլալովն և օտար երկրի մէջ վախճանելովն, և իշխանութեանն առեն փայլուն և փառաք յիշատակները չթողլուն համար, չի կրնար մեծ սիրելութիւն մը ձգել ազգապանծ Հայոց վերայ. բայց իբրև թագաւոր Հայոց, և սիրող և կառավոլ Հայ փառաց և անուան վրայ, իբրև քաջութեամբ և երկայնմտութեամբ և առ հարկի գերի ընկ-

նոլ. — իբրև անաւրէն քաղաքավարութիւն ու. նոլ 'ի Թագաւորութեանն և յեռոյ, ևս և իբրև ազնիւ, ոլորմած, բարեպաշտ, հնարագէտ, մեծ ծայ և փոքունց և Թագաւորաց և աղքատաց՝ սիրելի անձ մը, — միանգամայն և իբրև քիչ մը քաղաւոր խորհրդապատ (mysterieux) անձ մը, և տարօրինակ բաղդի հանդիպող մը, արժանի եւ ղած է և ազգիս մատդրութեան և սիրոյն. հայկական յուշոյն մէջ խորատիպ անուանց մէկն է վերջինն Լևոն:

Ընդհանուր պատմութեան կամ մարդկութե նկատմամբ այլ նշանաւոր, կամ թէ աւելի որոշ ըսենք, նշանաբաղդ անձ մ'է Լևոն. և բազմաեռ տարան վիպասանութեան մը առիթ ըլլալէն աւելի, կըրնայ մեծ բարոյական պատկեր կամ վարդապետութիւն մ'ընծայել շատ դաս մարդկան, եթէ ուզէ մէկն ուշիւ քննել և նկարագրել իր կեանց ծանօթ պարագաները: Լևոն ե ('ի կարգի համանուն Թագաւորաց մերոց Ռուբինեանց, և ջ 'ի կարգի պարոնաց և Թագաւորաց), այն տաբաբաղդիկ իշխանաւորաց և ազատաց մէկն է՝ որ յետ ընկնալու իրենց բարձէն և բաղդէն, աւելի հանգիստ և հարուստ կ'ըլլան, և աւելի անուանի և յիշելի: Այս երկու յատկութիւններն այլ ուեցաւ մեր վերջին Թագաւորն իր տարագրութեանէն ետև. Հռովմայ պապն, Սպանիոյ, Գաղղիոյ և Անգղիոյ Թագաւորք, իրենց երկիրներուն մէջ առատապէս տուին իրեն քաղաքներ, պարտներ, գանձեր, պատիւներ. և որչափ ապրեցաւ՝ միշտ իրենց բարձակից, եղբայր և համբերակ սեպէին, և արքունի մեծամեծ հանդիսից մէջ վերագոյն աթոռներուն մէկը անոր կուտային: Ինչուան հիմայ Թէ իր և Թէ իրեն պաշտօնէից համար տրուած շատ հրովարտակներ կուգան դէպ ուանատանց մէջ. իր կենաց վերջն տարիներուն օ-

10477396

թագիրը, մահը, կտակը, կտակին մուրհակները պահուած են. և յայտնի մնան գերեզմանն, մահարձանն և կիսանդրին[1], գրեթէ աւելի քան զանձնային Թագաւորաց մերոց: Հոս միանգամ այլ կու տեանեմք աշխարհիս ընդունայնութեան բացայայտանը. որ շատ հեղ մեծամեծ մարդկանց՝ միայն կամ հազիւ և կամ ոչ իսկ գերեզմանը կու Թողու յետոյ. այսպէս ալ մեզի այլ մեր 4000 ամեան հայոց յիշատակարանքը գրեթէ բոլորովին ծածկելով մեզմէ՝ անոնց վերջնոյն գերեզմանը միայն յերևանի Թողած է, աշխարհիս ամենածանօթ քաղքին մէջ, 'ի խորհրդածութիւն իմաստասէր մտաց և քաջազգած սրտի:

Բ

Որչափ ծանօթ է Լևոնի կենաց խաղաղ արևմուտքն, այնքան անծանօթ է արևելքն: Իբրև տանտեաց Թագաւորութեան աւեն ինչքը բրաբ (բաց 'ի քանի մը դժբաղդութեանց), ինչմիվ այդպէս ընտրելի և հաճելի եղաբ Հայոց. Թագաւորութենէն առաջ ինչ կ'ըներ, ուր էր, որպէս որդի էր. — ամեն այլ դեռ անծանօթ են մեզի, բայց 'ի ցեղէն կամ տոհմէն: — Յայտնի է քեզ, Հայկակ, որ մեր Կիւրիկիոյ իշխանքն նախ Պարսկաց կողմանէ պայազատէին՝ սկսեալ 'ի Ռուբինէ ազգականէն Գագկայ վերջին Բագրատունեաց Թագաւորի, որոյ անուամբ և Ռուբինեանք ըսուեցան. և որոյ որդիքն ինչուան հինգ վեց սերտ, 140–150 տարի իշխանապետեցին, ինն կամ տասն անձինք, որոցմէ ինն երորդն՝ Լևոն Ե առաջին Թագաւոր եղաբ Հայոց, և արտ զաբակ չունելով՝ ժառանգ և յաջորդ Թողուց իր Զապել դուստրը.

1 Ի Թանգարանին վերտապէ:

10477396

ատոր հետ պատկուեցաւ Հեթում ու՝ ի ցեղէ Հեթումեանց, ՝ի բնէ Արծրունի ցեղին. և ատոր պայազատութիւնն այլ տևեց իբրև 120 տարի՝ իրմով իրաս ազգ և 8 կամ 9 պայազատ թագաւորօք. որոց վերջինն եղաւ Լևոն Դ կամ Ե, մեռեալ յամի 1341, չթողլով արու զաւակ: Թէ այս և թէ ուրուքեան տկարանալուն պատճառաւ (վասն մեծի թշնամութեան և անդադար պատերազմաց Եգիպտոսի սուլտանաց), ասկէ ետև Հայոց թագաւորութեան ժառանգութիւնն այլ, կարգքն այլ չփոթեցան. և քանի մը տարի անյաջողութեամբ թագաւորեցին Լևոնի հօրաքեռորդիքն Կոստանդին-Յովհան (Ճուան) և Կոհիտոն կամ Կի, որք ՝ի հօրէ գաղղիացի էին ՝ի Լիւսինեան տոհմէ (յորմէ էին և թագաւորքն Կիպրոսի և Իշխանք Տիւրոսի). և իբրև անհաւատարիմք ազգային օրինաց Հայոց՝ ՝ի մահ դատապարտեցան. և անոնց տեղ դրուեցաւ (1346) Կոստանդին Դ, որ Թէ ՝ի հօրէ և Թէ ՝ի մօրէ Հայոց թագաւորաց կողմնակից գծերէ իջած էր. և թագաւորեց զգօնութեամբ գժար ժամանակի մէջ մինչև ՝ի 1364-5: Իր երկու որդիքն կու յիշուին, Օշին՝ ծնեալ ՝ի 1338 և Լևոն՝ յառաջ քան զ'1345: Ինչու աոնք չյաջորդեցին իրեն. — անտարակոյս կարճօրեայ մեռած պիտի ըլլան. կամ ըստ ոմանց՝ Լևոն թագաւորած է, այլ մեկէն Եգիպտացւոց գէմ պատերազմի մէջ բռնուած և Թուխով կամ խեղդով սպանուած՝ հաւատքը չուրանալուն համար: Ինչքան մնացեր է այս բանս, որ շատ ժամանակագիրք և ոչ այս Լևոնի անունը գիտեն[1]. —

1 Սխալին քանի մը նոր հայագնին եւրոպացիք՝ որք զԿոստանդին Դ լատինացի համարելով՝ հօրը Պաղտին կոչուելուն համար, այս երկբայական Լեւոնը և մեր Լեւոնը կու նոյնացընեն. այսինքն զվերջինն Լևոն Զ որդի կ'ընեն Կոստանդնի Դ:

10477396

յայտնի նշան մեծ չփոթութեան ժամանակին և անհանգիստ պատերազմաց և հալածանաց, որ յետ մահուան Կոստանդնի դի մինչև՝ ի թագաւորութեան մեր վերջին Լևոնին տևեցին: Ա՛յն խառնակ միջոցին՝ Թերևա ուրիշներ այլ թագաւորած ըլլան, ինչպէս յիշուի և Կոստանդին մը, որպէս թէ Թոան (՝ի մօրէ) ե Լևոնի և որդի Հեթումոյ իշխանի մը: Ա՛յսպիսի բռնաբարութեան տեղն քնական էր որ Լուսինեանք այլ՝ թէ՝ ի վրէժ սպանման իրենց երկու երիք տոհմակցացն, և թէ իրաւամբք ժառանգութեան՝ ջանային Հայաստանի թագը ձեռք ձգելու: Ա՛յսպէս այլ ըրաւ՝ ցեղին գլխաւորն՝ Պետրոս ե թագաւոր Կիպրոսի, որ բազմութեամբ նաւուց եկաւ ափրեց ծովեզերեայց Կիւլիկիոյ և նուաճեց զքաղաս՝ի պարոնայց. յորոց ոմանք ասեր, ոմանք ուրիշներու կողմնակից կ՝ըլլային. իսկ Հայրապետն Հռոմայ (Ուրբան ե) գրեց առ իշխանս և առ ուխտ եկեղեցւոյն Հայոց (1365, ապրիլ)[1] որ թողուի զուրիշները՝ թագաւորեցընեն զԼեւոն այս (վերջին), զազգական Պետրոսի թագաւորի. որ թէ իրաւամբք մերձաւոր էր թագին և թէ արդեամբք վարուցն: Հայք հպատակելով հարկին և իրաւոնք՝ թագեցին զԼեւոն, նոյն կամ յաջորդ տարին. որ ինչպէս իր տասանապրին վրայ կարդացինք՝ ի սկզբան՝ հինգերորդ Լատին թագաւոր կոչուի Հայոց. ըսել է որ քաց՝ի ձուանայ և կուխտանէ՝ երկու ուրիշ Լատինք այլ թագաւորած են, որոց մէկն Թերևա անպուն իրենց Պէմոնդ եղբայրն, նոյնպէս սպանեալ՝ի Հայոց, միւսն այլ Պետրոս, և կամ թէ Փիլիպպոս առաջին փեսայն Զապելի Թագուհւոյ, զատեր մեծին Լևոնի, որ նոյնպէս Հայոց և իր

1 Տես զնամակն՝ի Պատմ. Հայոց, գ. 355:

10477396

խոսման անհաւատարիմ ըլլալով՝ բանին մէջ մեռաւ: Թողուինք այս խնդիրը և գանք՝ ի Լևոն։

Զոր ոմանք՝ ի մերոց փոքր պատմչաց՝ կոչեն որդի Բրնձէն, այսինքն (prince) իշխանին, — ո՛ր տեզրոյ... Անտարակոյս է Կիպրոսի Լիւսինեան[1] Թագաւորաց հետ մերձաւոր ազգակցութիւնն, ինչպէս վկայեց Քահանայապետին Թուղթն վասն Պետրոսի Թագաւորին. որոյ որդին Ցակոբ Ա (եղբայր Բ Պետրոսի) յետ մահուան Լևոնի Ջ՝ ինք զինքը Հայոց Թագաւոր անուանեց իբրև էրկրորդ ասպիճան ժառանգ նորա: Թէպէտ՝ ի հօրէ Լատին կամ Գաղղիացի, հաւանելի է Թէ՝ ի մօրէ Հայ էր, ինչպէս Ձուանն և Կուիտոն. և կ՚երևի Թէ՝ ի Կիլիկիա այլ կեցած էր իր մայրենի արքայազարմ Հայոց քով, և ընտանի ու սիրուղ անոնց կարգաց, օրինաց և լեզուին. գոնէ Թագաւորութեան աթեն հայերէն օրինօք և պաշտօնէիւք կը վարէր.

1 Լիւսինեան ազնիւ տոհմն (որ հիմայ մարած է) Գաղղիոյ Բուադիէ գաւառին Լիւզինեան դղեկէն առած է անունը. հնագոյն տոհմապետն կու յիշուի՝ ի ԺԻ դար: Փըռանկաց ոամիկն անապաշտութեամբ կամ աւանդութի՛ կ՚ընդունին Մելիւզին անուամբ վհուկ մը կամ ցաւերը ժահարան, որ իր հայրը սպաննելուն համար, կ՚ըսեն, աթեն շաբաթ օր յօձ կը փոխուէր. իր էրիկն Ռայիմոնտ՝ կոմսն Բուադիէի իմանալով այս բանս՝ արգիլեց պահեց զնա Լիւզինեան բերդին մէջ, ուր մինչև հիմայ ձիացեր է կ՚ըսեն: Մեր Լևոնի ժամանակակից Գաղղիացի մը Ժան տ՚Առա (Jean d'Arras) անուանի վիպասանութիւն մը գրած է (յամի 1387-1394) Mélusine կոչմամբ, յորում կու պատմէ Լիւզինեան դղեկին սկզբնաւորութիւնը, Մելիւզինայ դէպքը, և իր երկու անդրանիկ որդւոց մէկուն Թագաւորելն՝ ի Կիպրոս, միւսոյն՝ որ Կիւռն կ՚ըսուէր՝ ի Հայս. ո՛րով անշուշտ կ՚ակնարկէ՝ ի Կուիտոնն Թագաւոր Հայոց. և ասոր որդւոց մէկն այլ, կ՚ըսէ, երկայն ատեն Թագաւորեց՝ ի Հայաստան, և վրան ատ ատ մատ բաներ կու պատմէ, որպէս Թէ յակառատեսից լսած ըլլայ:

10477396

այսպէս հաւանօրէն Լևոնի կինն այլ՝ Մարիամ դշխոյն, որ Մաճառաց Թագաւորին ցեղէն էր, և ազգական Փիլիպպոսի Տարենատյ իշխանին՝ առևելքի կայսր անուանելոյն:

Գ

Լևոն թէ և հանճարեղ և արտաշահ մարդ էր, բայց Կիւրիկիոյ գրեթէ քայքայեալ Թագաւորութիւնը յոտին պահելու համար՝ իրմէ վեր և իրմէ դուրս այլ ոյժ և հնարք պէտք էր, որ չգտաւեցան. և գրեթէ անկարելի այլ էր այն նուաղեալ Թագաւորութիւնը կործանմանէ ազատել. վասնզի մէկէն աւելի զօրաւոր թշնամիք կամ հակառակք կային անոր: Նախ այլազգեաց Թշնամութիւն, որոց գլխաւորք էին Եգիպտոսի և Ասորւոց սուլտանքն. ասոնց Թշնամութիւնն կամ ոխութիւնն հին և արմատացեալ էր: Կիւրիկիոյ դիրքն այս կողմանէս վտանգաւոր էր մեր Ռուբինեանց. որովհետև մէկ կողմէն դրացիք ունէին (ասեն մը) Ղօնիայի հզօր սուլտաններըը, որ Փոքր Ասիոյ մեծ մասին տէրած՝ միայն մեր Հայոց Պարոններէն կ'արգիլուէին ինչուան Միջերկրականին եզերքը ձգելու իրենց իշխանութիւնը. մէկ այլ կողմէն՝ ինչուան այն ծովեզերքը կը հասնէր Եգիպտոսի սուլտանին զօրութիւնը, շատ հեղ Ասորւոց կողմէն, երբեմն այլ նաւով յարձակելով Կիւրիկիա: Առաջին պարոնայքն և Թագաւորքն մեր շատ հնարագիտութեամբ և քաջութեամբ դէմ կեցան Իկոնիացւոց, ինչուան որ Հեթում Ա յաջողեցաւ Թաթարաց զանին օգնութեամբ տըկարացընել անոնց իշխանութիւնն այլ, Բաղատացի վասն այլ: Եգիպտոսի կողմէն այլ բաւական ապահովութիւն ունէին մերքն, քանի որ Լատինք Երուսաղէմի կու տիրէին և Ասորւոց ու Պաղես-

աւնոս մէջ իշխանութիւնին կոս ապահէին. իսկ երբ անոնք վերցուեցան, և Թաթարք այլ՝ կէս մը իրարու մէջ բաժնուելով, կէս մը մահմէտական կրօնքն ընդունելով՝ իրենց վախը և ուժը կորուսին, Եգիպտոսի սուլտանք երբեմն անոնց հաւատարիմ կ'ելնէին, երբեմն հաշտութիւն և միաբանութիւն կ'ընէին, որով մերոնց վիճակը կասկածելի կ'ըլլար: Իսկ երբ այս ձդ դարուն կիւսէն եաև Թաթարք գրեթէ բոլորովին քաշուեցան յարևմտեան Ասիոյ, և Օսմանեանց նախահայրքն սկսան յառաջ գալ հանդարտօրէն տիրապետելով, Եգիպտոսի սուլտանք հանդերձ Դամասկոսի սուլտաններով (որք երբեմն մէկ իշխանութեան տակ այլ կ'ըլլային), առաջին հզօր տէրութիւն եղան Ափրիկէի և Ասիոյ սահմանակից կողմերը, որոց մէջ կը փակուէր Կիւրնիկիա:

Ասոր ամրութիւնն էր մէկ մը ծովն, մէկ մ'այլ ծովային քրիստոնեայ տէրութեանց օգնութիւնն և անոնց հեռաւոր նպաստն. բայց Հայք բաւական նաւային ոյժ չունելով՝ շատ հեղ չէին կրնար այլազգեաց նաւատորմիղը վանել, անով շատ անգամ իրենց մեծ և ամուր նաւահանգիստն Այասանոց ձեռքն ընկաւ և աւերեցաւ. Քրիստոնէից կողմէն այլ շատ օգնութիւն չգտան. վասն զի ոմանք (Վենետկեցիք, Ճենովացիք) իրենց վաճառականութեան զբաղած և շատ հեղ իրարու հակառակորդ և թշնամի՝ մերոնց մեծ շահ մը չէին, թէ ոչ և պնաս. ոմանք այլ (ինչպէս Գաղղիացիք, Անգղիացիք) երբեմն ատակով կ'օգնէին, զօրք խաւրել այլ խոստանային, բայց ոչ երբէք կըրցան խաւրել, թէ ճամբու հեռաւորութեան համար, թէ իրարու մէջ կռիւ ունենալուն: Հին կարևոր Հիւբրնկաչ (Ոսպիթալի) և Տաճարական (Դամբլուն) սպասեցան այլ նուաղեր էին, և ոմանք բոլորովին վերցուած հեռացած 'ի սահման-

10477396

Նաց Կիւլխիոյ. կու ծնար եկեղեցւոյ գլուխն, որ
լքուև հայր հաստատակաց քրիստոնէից կու գթար
Հայոց վրայ. մանաւանդ լաւ տեսնելով որ անոնց
փոքր թագաւորութիւնն էր քալը արևմտեան
քրիստոնէութեան նախամարտիկն կամ նախա-
պարիսպ պատուարն ընդդէմ անքրիստոնեայ ազ-
գութեանց արևելից. ուստի թէ եկեղեցւոյ և թէ
արևմտեայ թագաւորաց օգուտ էր Հայոց օգնա-
կան ըլլալն. և այս բանիս համար ոմանք երկայն
ձառեր և գրքեր այլ գրեցին այն առեն առ Պապն
և առ թագաւորս. որոց մէկն այլ սեպհական է մեր
Հեթում թագաւորին պատմիչը: Բայց ոչ Հայոց
վերջին թագաւորաց առէպ առէպ աղաչանքն և
սրտած դեսպանին կըրցան յարևմտից օգնութիւն
մը գտնել, բաց 'ի սուակէ, խոսմոնքէ և քալ-
լերութենէ, և ոչ Պապին առ նոսա ուսած յոր-
դորն, վասն վերոյգրեալ պատճառաց: Որոց վրայ
հարկ է սեպհականել քիչ մ'այլ կրօնական խնդրոց
յուզմունքն Հռովմայ և Սսոյ մէջ, զոր զայրացու-
ցին պետպէս սխալ տեղեկութիւնք կամ սեպհորդ
պահանջմունք, յամառութիւնք և հակառակու-
թիւնք: Ազգերնուս թէ եկեղեցական և թէ քա-
ղաքական գլուխքն՝ մեծաւորութեամբ, տեսու-
թեամբ կամ թղթակցութեամբ ընդ գլխաւորացն
արևմտեայց՝ բաւական խելամուտ եղած էին, և
իրենց կոլմանէ դժարութիւն մը չէին տեսներ
համաձայն միաբանութեան ընդ արևմտեայց՝ կա-
րևոր խնդրոց վրայ, զորս արդէն շատ հեղ ժողո-
վով այլ ընդուներ և հաստատեր էին. բայց ոմանք
'ի կանխակալծ և անխելահաս եղեռնաց և 'ի ժո-
ղովուրդն՝ ոչ միայն դեռ խորշէին յօտարաց,
մերթ անպատճառ մերթ պատճառաւ, այլ և ի-
րենց գլուխներէն քաշուէին. ինչպէս որ պատ-
մութիւնն ցուցընէ դժնդակ դէպքերով այլ: Մեր
թագաւորքն այլ ինքնիրեննուն բաւական այժ

ջունէին, երկիւղին մասամբ մը՝ պատգաւոտական օրինօք՝ իշխանաց ձեռքն ըլլալով. Ա. Լեւոն ու Հեթում Թագաւորաց կարողութիւնն և ճարտարութիւնն այլ էին՝ որ ինչուան 60000 զօրք գումարեն և դէմ ելնեն Թշնամեաց. ուստի պէտք էր հինայ պաշտպանողական հնարքով՝ ի Թշնամեաց փախչիլ, կամ ապաւինիլ ամրոցներու մէջ, ինչպէս որ երբեմն շատ հեղ մեր Լեւոնն այլ:

Սակայն բնական ապաւէն կամ օգնական մ'այլ կունար ունենալ զԹագաւորս Կիպրոսի, անոնց ազգակցութեամբն. նոյնպէս Լատինաց ըլլալն և հաւատոց կողմանէ անկախութիւնն այլ մեծ օգուտ էր երեն. բայց ժամանակն զայս այլ բանի չբերաւ. որովհետև այլազգիք Կիպրացւոց այլ Թշնամի էին, Պետրոսի յարձակմանն համար երեց երկիւղներուն վրայ. որոյ վրէժն հանել ուզելով Եգիպտացիք՝ յարձակեցան (1366) երկու Լուսինեան Թագաւորութեանց վրայ այլ (Հայոց և Կիպրացւոց). որք ոչ միայն երբորե՝ այլ և ոչ ինքն երեց կըրցան օգնել: Ոմանք կու սեպեն Թէ այս Եգիպտացւոց՝ ի Կիւլիկիա վազելուն առիթն էր՝ որ բազմութիւն Հայոց Թողուցին երկիրնին և նաւով փախան Յունաց կողմերը, ՝ի Հռոդոս, ՝ի Մեղխինէ, և այլն. Կիպրացիք այլ իրաւամբ Ս. Պատրն չանցան հաշտութիւն խօսիլ երեց կղզին վազելուներուն հետ. և այսպէս երկուքին այլ այս անպատմառնց շատ մեծ վնասու՝ կեռ զարձան զԹշնամին: Անկէ ետքն այլ Կիպրոս իր ծովապատ ամրութեամբն և իր Թագաւորաց տարբեր վարչութեամբն ու արևմտեայց հետ հաւատութեամբն կըրցաւ դեռ դարմ մ'այլ դիմանալ այլազգեաց դէմ. բայց Կիւլիկիոյ և Հայոց Թագաւորութեան վախճանին մօտեցեր էր երեց տիեզերիս Թշնամեաց հարուածներով. որք գրեթէ ամեն տարի յարձակելով հոն՝ սրով և հրով կու

մաշէին կ'աւրէին զաշխարհքը, զնչխանս և քեր-
դաստրս կու ցրուէին. Թագաւորն երթալով կու
միայնանար, իշխանուհիքն և զօրքն կ'ամբո-
խուէին. կամաց կամաց կու մարմրէր 300 տա-
րուան ուսուինեանց չահն. ուժով հով մ'այլ քա-
ւական էր զոլորովին անցընելու զայն, և Քրիս-
տոնէից անօգնական Թոլած նախապարհսիքը՝
վլցընելու. որոյ հետ Հայոց Թագն և ազգասե-
տուհիքն այլ ալիսի ընկնէր ու ծածկուէր:

Սակայն պէտք է խոստովանիլ, մանաւանդ Թէ
հռչակել 'ի պարծանս Լեռնի և 'ի փառս ազգիս,
որ եԹէ իր կողմանէն այլ քիչ մ'անխոտոր-
Թեամբ և ԹուլսուԹեամբ այն ակարուԹեանը և
վտանգին հատաւ, բայց ոչ վատուԹեամբ և ան-
ձարակ յուսահատուԹեամբ Թագը և զէնքերը
Թողուց՝ իրմէ շատ ու շատ անգամ զօրաւոր Թըշ-
նամւոյն ձեռքը. և Թէպէտ չեմ կրնար այս վա-
ռաց հասկնալ բոլոր մեր ազգային Կիւլիկեցիա՝
որք արդէն սկսաեր էին ցրուիլ հեռանալ 'ի Կիւ-
լիկիոյ (որպէս երբեմն իրենց նախնիքն 'ի Մեծ
Հայոց, Սելջուկեանց յարձակման առեն), ա-
կայն՝ մէկ մասն երկրորդ հաւատարիմ կեցաւ իր
Թագաւորին, Թագաւորն այլ անոնց իրաւանց և
ազգային պատուոյն: Ոչ միայն պաշտպանողական
հնարիւք, այլ և դէմադէմ պատերազմով զօր-
նուէցան ընդ եգիպտական և դամասկոցի բանա-
կաց զանազան անգամ, բոլոր Լեռնի տասնամեայ
ԹագաւորուԹեան առեն. Թէպէտ և մէկ կողմէն
ու առանէին քաղաքներնուն այրիլը՝ կ'ապաւի-
նէին բերդերու, անկէց հալածելու զԹշնամին և
նորէն բնակարանին վնեալու, և երբ բերդերն այլ
կ'առնուէին, աւելի ամուր բերդեր ու լեռներ
կ'ելնէին: Այս կերպ կռուելն, վնասնք ու զհայ-
րենիքը պաշտպանելն՝ ոչ միայն Լեռնիս առեն,
այլ և անկէ առաջ, գուցէ Թէ անկէ հոգն այլ

տևեց. և անշուշտ կէս դար մը քշած ըլլայ Կիւլի-
կեան Հայոց կուռքին և դիմանալն ընդդէմ գարշա-
կան սպառնացեալ յարձակմանց Եգիպտացւոց,
մինչև խափատ իւրեանց ցրուելուն ու նուաճելն:

Դ

Դիպուածներուն վրայ ցաւ մ'այլ սեպելու է
այն եաքին և բոլոր ծդ դարուն մերայնոց հանդի-
պածներուն ջնջուելը յազգային պատմչէց՝ կար-
գաւ և ոճով: Մեր պատմչաց պատուական չարն
հոս կու գադրի. յետ Սմբատայ սպարապետի՝
որ Կիւլիկիոյ և իր եղբօր (Հեթմոյ Ա) և անոր
որդւոյն պատմութիւնը ժամանակագրօրէն հա-
մառօտած է ցվերջին քառորդ ծդ դարուն, և յետ
անոր շարունակողին, յետ Հեթմոյ պատմչէն՝ որ
մինչև 'ի ծդ դարուն առաջին քառորդը կու հաս-
ցընէ զայն, չեմ գիտեր ազգային պատմիչ մը Կի-
լիկիոյ տանն և թագաւորաց գործոց, բաց 'ի քա-
նի մը տարեգրութեներէ և յիշատակարանաց, ու քա-
նի մը հեռաւոր վարդապետաց (Մեծ Հայոց կամ
Ղրիմոյ) կարճ ու իսանութ գրուածներէն. ո-
րոնց նման իսաւն և հակասական են արևմտեայց
գրուածքն ալ այս գիտից նկատմամբ: Յաւալի
նշանք անհանգստութեան և շփոթմանց ժամա-
նակին ու ատեպ աւերման և աւարման Կիլիկիոյ:
Թէպէտ ես չեմ յուսահատիր որ օր մը անծա-
նօթ պատմիչ մ'այլ յերևան ելնէ այն կողմերէն,
մեր յետին թագաւորաց պայծառ կամ խաւար
օրերը մեզի լաւ ևս յայտնելու:

Ահա այժմ գոհ ըլլանք, Հայկակ, որ գոնէ քա-
նի մը յիշատակագիրք և տարեգիրք մեզի կ'ա-
ւանգեն՝ առանց երկար պարագայից, որ ինչպէս
քանի մը նշանաւոր և կարևոր ազգաց վախճանին
պատահելը է՝ մեծ և ուժով պատերազմով մը

դէմ կենալ հզօր և բռնաւոր Թշնամւոյ, և զէնքն
'ի ձեռին ընկնիլ ու նուաճիլ. և ինչպէս Թեւրևա
հանդիպեցաւ մեր հին Հայկազանց այլ, որոց յե-
աւինն Վահէ երբեմն նիզակակից Դարեհի ընդ-
դէմ Մակեդոնացւոյն, և յետոյ «ընդվզեալ յՈ-
» ղեքսանդրէ՝ մեռանի »[1], այսպէս եղաւ մեր ուս-
բինեան հարստութեանն այլ. և ոչ որպէս զՆեր-
շապուհեացն՝ իշխանաց վաստիկ անձնապատու-
Թեամբ և ախրանենգութեամբ, կամ Բագրատու-
նեացն՝ պէսպէս մատնութեամբք:

Յիշատակագրաց զրուցքէն կ'երևի Թէ Վռամ
շապհ այլ և այլ անգամ ու տարիներ զար-
նուած է Եգիպտացւոց հետ, և մեծ պատերազմ
մ'եղած է յամին 1369, յորում Եգիպտացիք ա-
ռաջնորդութեամբ եղբօր սուլտանին՝ Շահարօղ-
լուի՝ Կիւլիկիոյ լերանց դժուար անցքերէն ներ-
մուան. Վռամ իրեն նիզակակից և սպարապետ զօ-
րաց ունեցաւ անձ մը, որոյ անունն անգամ ան-
ծանօթ և անսովոր է բոլոր Կիւլիկեցւոց պատ-
մութեան մէջ, և սովորական է Վրաստայոց ու
մանաւանդ Օրպելեան տոհմին մէջ (ԺՍ–Դ դա-
րերուն). – Լէպարիտ: Լիպարիտ յետին սպարա-
պետ է Հայոց, վարդանանման քաջութեամբ և
նահատակութեամբ. որ իր սիրոյ գիտաց Հայ
հայրենեաց և Թագին վրայ կռուելով մինչև'ի յե-
տին շունչն՝ յաղթութեամբ յառաջեց Թշնամեաց
խումբերուն մէջ, և հոն ծածկուեցաւ նետերու
հարուածոց տակ. իր մահն՝ յաղթութիւնն այլ
հետը տարաւ. հարկ եղաւ որ յետ քաշուի Վռամ
իր բանակին միացորդովը, և հաշտութեան պայ-
մաններով՝ այն անգամ այլ յետ դարձընէ Վի-
պարիտայ սրէն ապրող Թշնամին:

Ինչպէս այս պատերազմիս ուրիշներուն դէպ-

1 Խորենացի, Ա, ԿԱ:

քերն այլ էիպատմեր մեզի ազգային գրիչն, այս-
պէս և Վիպարիտայ քաջագործութիւնքն ու հը-
նարքն. պատմութեան մէջ փոյլակի մը պէս կ'ե-
րևի և կ'անցնի Վիպարիտ, բայց նախախնամու-
թենէ ծապեալ՝ պայծառ և բարեբաստ փոյլակի
մը պէս. բարեբաղդաբար պատմըչին համառօտու-
թիւնը կամ լռութիւնը՝ երկբայութենէ և տա-
րակուսէ կ'ազատէ և կու հաւատարմացնէ, կու
հռչակէ, կ'անմահացընէ ազգային երգիչն. — օրհ-
նեա՛ըլլայ [1]. որ հեռաւեալ գովք կամ ողբս գրեր
է՝ հայրենասէրը, կարճ և տեղ տեղ (միջին ջորս
տունքն) բանաստեղծական ոգւով: Հայկակ, կար-
գա՛, և գոհացիր:

Հոգւովըդ սուրբ ես եւ ամբիծ.
Զքեզ էր ընտրեալ Տէր ի յերկինից.
Պարծանք եղեր քրիստոնէից,
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վիպարիտ:
Անճամբըդ քաջ Սամփսոն էիր.
Յորժամ Ճօշանըդ հագնէիր՝
Թուրքն ի յահէդ դառնար մոխիր.
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վիպարիտ:
Սրեգական նըման պայծառ,
Երեսըդ լոյս էր կամար.
Բարքըդ բարի, խօսքըդ շաքար.
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վիպարիտ:
Բնութեամբ բարի դէմ աղքատաց,
Վըտող էիր վարդապետաց.
Քո բանդ՝ յամեն երկիր գոված.
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վիպարիտ:
Զանճնըդ սըւիր վան օրինաց.
Մէն կանգնելով հազիւ գիմաց.

1 Երգոյս հեղինակն է աշխոյժ երգիչն Յովհաննէս Թլկուրանցի, որ և Սայ կաթուղիկոս եղաւ ԺԵ դարուն վերջերը (1489-1525):

Ֆո աուրըդ շատ արտեր եւաց.
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վխտարիս:
Դու հազարաց դէմ պահապան.
Մարդ չէ տեսեր քեզվիկ նըման,
Ա.յս հոլածինքս որ յերկրի կան.
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վխտարիս:
Սըսայ երկրիս տասը լուսաւոր,
Կանգնոլ էիր յամէն ժամու.
Թուրքն ի յահէդ ասրսէր մահու.
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վխտարիս:
Ա.յն չար պահինն որ քեզ հասաւ՝
Ֆեզն օգնոլ ջրկայր բընաւ.
Անճնըդ՝ կարմիր պոյն ներկեցաւ.
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վխտարիս:
Զայն չարաչար մահն որ տեսար,
Կակիծ է մօրն որ դուն ծընար.
Ասաղ ըզքեզ բերան հազար,
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վխտարիս:
Սըսայ երկրին պաղչա ու ծառ,
Գոյնք ի գունաց ծաղկունք որ կայր՝
Չառաչանօք առին զնրար.
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վխտարիս:
Կաթողիկոս եւ վարդապետ,
Սուրբ քահանայք առնին ի հետ՝
Շատ արտասուօք սրտէրն էրեաս.
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վխտարիս:
Հնաբնակն հոլմըն հիմիկ՝
Սարպիս՝ յիշոլ եղաւ քեզվիկ [1].
Դուն սիրն էիր Հայոց՝ մեզվիկ,
Ո՛վ մեծ հըզօր քաջ Վխտարիս:
Է Աստուծոյ անունն օրհնած

1 կու յիշէ Ս. Սարգսի համար շարականին ըսածն. « Աշխատասէր Հայոց մեծաց՝ դիմեալ՝ի մէջ երկրի՝ի հիւ- » սիսոյ, հողմն հարաւոյ ». և այլն:

Ո՛ր անըսկիզբն եւ անվախճան,
Ո՛ր ուժ երեւո քաջ Լևսպարտին
Եւ զօրացոյց զիւր սուրբ ծառայն:
Ի սուրբ Սարգիս քաջին նըւման,
Ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան
Ջան ըզՄուշեղ այլ իսիտ յաղթող
Ջան ըզՏրդատ Հայոց արքայն:
Պատերազմիլ եւիր հափայն (?):
Ամեն տարի տան ու քրան.
Ինքն ըզԹուման հալածանէր
Ախուն հաներ գետեր Ջիհան [1]:

Ե

Լևսպարիտայ նահատակութենէն երկու տարի ետև նորէն յարձակեցաւ սովորական Թշնամին յանօգնական երկիրն Կիւլիկիոյ. Լևոն իր մնացեալ սակաւաւոր պարոններով և զօրքերով դէմ ելաւ իր պարտքը կատարելու, և գոնէ ուշացը նելու համ պակսեցընելու անոր չարիքը, երբեմն պարնուելով երբեմն փախչելով. մինչև սակաւցան այլազգիք՝ ամանք անոր ետևէն ընկնիլ և հալածել, և ամանք անոր Թագաւորական քաղաքը պաշարել. զոր և առին յետ երկար ընդդիմաւթեան և սով ձգելու, և շատ աւարով ու այրելով՝ քաշուեցան անկէ և ուրիշ քաղաքներէ ու բերդերէ: Լևոն այլ սակաւեր էր ա-

1 Կ'երևի Թէ երգիչն դեռ կու չարաւնակէր. մենք այսչափս գտանք: — Վերջի երեք տան չէնքն համ ոճն տարբեր է առջիններէն, իբրև յորդորակ համ վերջաբան: Եւ քի տան առջի տողի ետքի բառն անծանօթ է. իսկ իմաստն է, ամեն տարի տան քան անգամ պատերազմի կ'ելլէր, բիւրեր կու հալածէր, և արիւն կու թափէր Կիւլիկիոյ ծանօթ Ջիհուն գետոյն պէս յորդառատ:

մուր տեղ մը ապաստանելու. ուր և պահպանած մնաց, կամ ՚ի գլնդէ Թշնամեաց պաշարեալ, և կամ կասկածելով անոնց դարանակալութենէն: Այս ծածկուելն երկար և տևող ատեն քշած կ՚երևի. և ուր և ինչ ըլլալն մինչև հիմայ իսկ անծանօթ մնացեր է. այնպէս որ այն ատեն՝ աներևոյթ եղած, կամ մեռած կըրած կարծուեցաւ. մինչև նոյն ինքն Թագուհին Մարիամ յուսահատած էրկանը կեանքէն, այրաբար և սիրաբար սկսաւ մտածել աշխարհքին և ազգին փրկութիւնը: Ականջ արժանացաւ տիկնութեան ազգի և մայր հայրենեաց ըսուելու, որքան որ դժուար առթի և ժամանակի մէջ կու ջանար ապրեցընելու զազգն և զերկիրն: Մարիամ այլ փառաք և քաջութեամբ եղաւ վերջին Թագուհի Հայոց: Խորհրդակցութեամբ հաւատարիմ իշխանաց՝ դեսպան ղրկեց զՅովհաննէս արքեպիսկոպոսն Սայ (որ սովորաբար արքունի քարտուղար էր) և զՄանուէլ ոմն ազնուազգի սպասեալ որդի, առ Փիլիպպոս խնամին իւր ՚ի Սիկիլիա, և առ արքայն Հայրապետն Հռովմայ Գրիգոր Թ, խնդրելով Կիլիկիոյ վտանգաւոր վիճակը և օգնութիւն խնդրելով, նոյնպէս Փիլիպպոս այլ գրեց առ Պապն աղաչելով որ հայրաբար հնարի օգնելու Հայոց Թագուհւոյն:

Պապն տեսնելով արևմտեայ տէրութենանց խաղն և խառնել վիճակը՝ տարակուսեցաւ. ՚ի վերայ այսը ամենայնի անհոգ չեղաւ գրելու առ դուքսա Վենետկոյ և Ձենովայ, և առ կարդապետս սպասեալ որդի, առ Փիլիպպոս խնամին իւր ՚ի Սիկիլիա, և առ արքայն Հայրապետն Հռովմայ Գրիգոր Թ, խնդրելով Կիլիկիոյ վտանգաւոր վիճակը և օգնութիւն խնդրելով, նոյնպէս Փիլիպպոս այլ գրեց առ Պապն աղաչելով որ հայրաբար հնարի օգնելու Հայոց Թագուհւոյն:

Պապն տեսնելով արևմտեայ տէրութենանց խաղն և խառնել վիճակը՝ տարակուսեցաւ. ՚ի վերայ այսը ամենայնի անհոգ չեղաւ գրելու առ դուքսա Վենետկոյ և Ձենովայ, և առ կարդապետս Երուսաղէմի և Հռոդոսի, որ ձեռքերնէն եկածին չափ օգնեն Հայոց. նոյնպէս Անտիոքայ անուանեալ իշխանին այլ գրեց (որ այն ատեն Կիպրոսի Թագաւորութեան խնամակալ էր), խնամ տանելու իրենց խնամի Հայոց Թագուհւոյն. Փիլիպպոսի այլ խրատ տուաւ, որ

գրէ և յորդորէ զՀուսովիկ Թագաւորն Մահա-
ռաց՝ օգնելու իրենց ազգական Թագուհւոյն Հայոց:
Ահա օգնութիւններէն աւելի ապահով օգնու-
թեան հնարք մ'այլ մտածեր էին Հայք, որոց
դեսպանն՝ արքեպիսկոպոսն Սիոյ՝ իմացուց Պա-
պին. և էր արևմտեայ Թագաւորացանց մէկը փե-
սայացընել Մարիամայ, որ գոնէ իր հայրենի եր-
կրին ոյժը՝ օժիտ բերէ Հայոց Թագուհւոյն: Ա-
սոր արժանաւոր գտաւ Պապն՝ զՈթոն դուք-
սըն Պրունզուիքայ. որ կորիճ և լաւ անձ մ'էր,
միանգամայն և ազգական շատ ազնուաց: Գրե-
աւ ատ Արքեպիսկոպոսն. իսկ արքեպիսկոպոսն Սիոյ՝
ուզեց անձամբ այլ երթալ խօսիլ հետը, որպէս
զի եթէ չյաջողի՝ ուրիշ մ'ընտրէ և իմացընէ Թա-
գուհւոյն: Ոթոն՝ ուրիշ ակնկալութ Թագուհւոյ
մը խոստացեր էր սիրտը, և փեսայացաւ Նէա-
պօլսոյ դչխոյին. բայց Պապն գարձեալ իրեն յոր-
դորական պարտք դրաւ՝ գոնէ յօգնութենէ ջերը-
կեցու զդչխոյն Կիւելիկիոյ: Ահա յորդորեալ օգ-
նութեանց մէկն այլ չհասաւ Հայոց. Իտալիոյ
երկու մեծ ծովազօր գքաղութիւնքն՝ որք մերոնց
մերձաւորութեամբ և վաճառականութեամբ ամե-
նէն աւելի կըրնային յուսալի ըլլալ, իրարու հետ
կռուելով՝ ոչ միայն ձեռք չտուին Հայոց, այլ և
անոնց ամենէն մերձաւոր և բնական օգնականը՝
զԿիպրացիս այլ զբաղեցուցին, վէնետկեցիք դաշ-
նակցելով զանոնք ընդդէմ Ձենովացւոց: Մարիա-
մայ նոր փեսայ այլ պէտք չեղաւ. իր յանկարծ
աներևութացեալ Թագաւոր ամուսինն յանկարծ
այլ յերևան եկաւ, այն խորհրդաւոր վերջին
Լևոնն՝ որպէս Արշակ կամ էրն Հայկազուն'ի մե-
ռելոց վերադարձեալ. և անգամ մ'այլ մերկա-
պատ երկինքէ՝ արև ծագեց Կիւելիկիոյ:

Բայց այս արևս արդէն խոնարհեր և մօտեցեր
էր 'ի մուտս: Հազիւ երկու կամ երեք տարի այլ

10477396

ՃՈՍՑ Լևոն՝ Ի վերայ գահուն Հայոց, հօգալու իր առնլը և երկիրը, և գրգեալ իր մեծասիրտ զանգակին ու սերունդքը: Յամին 1375 եպիսկոպոսի և ամենակալի գունդեր՝ առաջնորդութեամբ եղբօր սուլտանին՝ վերջին ուժերնին և վերջին թափերնին Լևոնեանց տան վրայ. առին զմայրաքաղաքն Սիս յետ երկար պաշարման: Ժամանակակից մը այսպէս յիշատակագրէ. « Ի պԻդ (Թուին) » բարկացաւ Աստուած՝ Ի վերայ քաղաքին Սի» սոյ, ու սպարեցին զբերդն անպատմբերէն, ու » մինչուր՝ Ի յապրիլ ԺՂ (6), ու առին զբերդն » օրն ուրբաթ, ոչ այլ իրաց՝ քանց՝ Ի սովոյ. որ » մարդոյն մի ցորեանն՝ գՃ (300) գր. էր՝ Ի գլա» վեր. որ կերան կաուռ վ'էշ. ու այս սաստ (սաստ) » էր յԱստուծոյ. յաղագս ծովացեալ մեղաց մե» րոց մանաւանդ զմեզ՝ Ի ձեռս Թշնամեաց մերոց: » Ո՛վ սեանոյր զմեր խաչերոյն արհամարհանքն, » ու զԱստուածաշունչ գրվոյն կարսել. զսուրբ » սեղանոյն կործանելն... »:

Այս անգամ այլ Լևոն եւս Թշնամեաց գէմ. բայց ոչ զԽպարխա ունէր սպարապետ և ոչ առնմանեան օգնական. վերջն անգամն էր որ հայկական գունդն նիզակ կանգնեց գէմ իր սանը կործանողներուն. յետնիզակին վահանը դուռ կոփքին՝ պարթեւաբար յետ քաշուելով երեսն՝ Ի Թշնամին, և ամրացաւ՝ Ի լերինս, Ի սեղի հեռաւոր, օտար և անուրեք:

Վերջին Հայոցեան և Թագաւորն այլ իր արքունի և զինուորական պարտքը կատարելէն ետև, յայտնի մահուանէ փախչելով՝ Ի բազմաթենէ Թշնամեացն, իր Թագուհեաւ և Փիլիա (կամ Ֆիլի) դստերաւ և անոր փեսայիւ Կոռիկոսի Շահան կամ Շահտա իշխանաւ, քաշուեցաւ Տօրոսի լերանց ամրագոյն տեղը, Ի բերդն Կապանայ, որոյ կոչմանէն հիմայ Կիւնէի պօղազը կոչին. և ու-

10477396

լիշ անպատճառութեան պէս դէմ դնելով պաշտպանելոյ՝ սպասել կամ անոնց հեռանալուն, կամ անոնց պաշտպան և հնարք սպառելուն. և այս եռքինս եղաւ: Յետ ինն ամիս չարակրութեամբ հաճելութեան, և յետ զամենայն ուսեալն պաշար սպառելու, մինչև զմիս և զկաշի ձիոց, Լևոն՝ էր և ընկերացը կենաց խնայելու խոստմունք առնելով՝ի պաշտպանէն, անձնատուր եղաւ իրեններովն՝ի գերութիւն, ի կապանս, յօտարութիւն եգիպտական Գահիրէի և՝ի բանտ. այլ և՝ի նեղութիւն, ի սպառնալիս չարչարանաց և մահու, վասն չուրանալոյ զՔրիստոսէ:

Զ

Բայց թէ ինչ և թէ իւրքն իրենց արժանի հաստատութիւն և համբերութիւն ցուցին երկար տարիներ. զիրենք գերող իշխանն այլ՝ տուընութեան հանելով և յիշելով խոստմունքը՝ մահուան սպառնալիքը վերուց. բայց ոչ բանտարկելութեան նեղութիւնը և տխրութիւնը, և ապագային անստուգութիւնը: Քանի մը տարի Լևոն և Մարիամ վերջին Թագաւոր և Թագուհի Հայոց՝ իրենց նախորդաց և պաշտօնէից պակութեան պարտքը քաշեցին. ամեն կորստեան մէջ անկոխուած պահելով սրտերնուն մեծութիւնը և տուրբ հաւատոց յոյսը, բարեպաշտութիւնը կու մխիթարուէր յանմխիթարուճ անդ. ուրիշներէ զատ յիշելով Թեոդիկեայ իրենց նախանին՝ զ Լևոնը, որդին և Հեթմոյ, որ նմանապէս պատերազմի մէջ գերի ընկնելով (հարիւր տասն տարի առաջ), յետոյ ազատելով և վերկանոք հօրն՝ ազատեր էր: Բայց Թագուհին Մարիամ ետեսաւ իր սիրելեաց ազատութեան օրը, Թէ և իրեն Թոյլ տուուեցաւ բանտէն ելնել. բանտին հետ կենաց կապն ալ կտրեցաւ.

10477396

հաւանօրէն գերութեան արտաքսուքին չդիմացաւ, և դեռ Լեւոն՝ ի բանակ եղած աեէն՝ ինքն բոլորովին ազատեցաւ մահուամբ, և թաղեցաւ Գահիրէի Հայոց եկեղեցւոյ մը մէջ:

Լեւոնի մեռաց մէկ հաւիկ ալխիթարութեն, միանգամայդ դուստրն Փիլիա, որ փոխանակ իր պալատան պատշգամին երէն լսելու միջերկրական ծովուն ալեաց ղբօսանքը և հին կառիկեան քարայրներուն զարմանալի ձայները, կու լսէր դաժան շղթայից շրնչէլը: Իրինն Շահան՝ քան զծնողն աւելի իր սիրոյն ու հաւակին արբազան պարտք սեպելով իր արձկին և անեւոյ փրկութիւնը՝ հինգ տարիէն հնարք մը գտաւ բանակն փախչելու, և Լեւոնն Թղթեր առնելավ՝ բերաւ աւ Թագաւորս արևմտից, Թէ ոչ անոր երկրին և Թագաւորութեանը՝ գոնէ գլխուն ազատութիւնը մուրալու: Շահան Թղթերուն հետ բերանացի պատմեց Հայոց Թագաւորական ան քաշած վտանգները՝ սկսեալ իրենց գերութենէն, և ամենուն սիրտը կու շարժէր: Բայց ամենէն աւելի Կլեմէս կամ Րոպերտ գերապատիւն Աւինիոն՝ վառուեցաւ ի ջանս փրկելու զԼեւոն, և գրեց աւ Թագաւորս Քրիստոնէից. յորոց պատրաստպոյնք գտան Սպանիացւոց Թագաւորքն, Յովհաննէս՝ Կաստիլիոյ և Պետրոս դ՝[1] Արագոնի. գրեցին աւ սուլտանն Եգիպտոսի, փրկանք խոստացան և տուին:

Յետ եօթնամեայ գերութեանն՝ ազատութիւն գտաւ Լեւոն. եւս ի բանտէ և յաքսորանաց

1 Մատլադրի Կիպրոսի պատմութեան մէջ հրատարակեց (գ, 759,) զԹուղԹ Պետր. դ. աւ. սուլտանն, գրեալ յամ 1380, սեպտ. 3. սպանիարէն: Նոյնն գրեց և աւ զօրապետն Եգիպտացւոց. այս ԹուղԹս այլ հրատարակեց ուրիշ մը (Bofarull):

(1382), և փութացաւ առաջքն երախտեաց չնորհակալութիւնք մատուցանել առ միակ պատճառն ազատութեան, առ Ազատարարն ամենայն աշխարհի. և գնաց իրեններեօքն ի տուրբ քաղաքն Երուսաղէմ, երկայն ատեն կենալով և պտըտելով յուխտ սրբազան տեղեացն. և այն ատեն կրցածին չափ և յետոյ այլ առատ տրօք պատուեց զանոնք. մանաւանդ որ, եթէ ատոյգ է աւանդութիւնն, իր Թորոս անուամբ որդին (որ չկիշխեր առաջ ի պատմութեան) մեռաւ հոն յԵրուսաղէմ, և հայրն աւանդելով գնա այն տուրբ հողուն, Ս. Յակոբայ Հայոց մեծ տաճարին հիւսիսակողմը եկեղեցի մ'այլ շինեց և կիշատակաւ որդւոյն անուանեց Ս. Թորոս[1]: — Ահա սրբազան տեղիքը և կիշատակքը այնքան սիրեց հեզահոգի տիկինն Փիլիպա՝ որ ջուզեց անկէ հեռանալ. Թերևս ըսաւ Լեւոն, գնամ յարևմուտս, և եթէ յաջողիս նորէն Թագաւորութիւնդ ձեռք ձգելու՝ ես այլ կու գամ. ապա թէ ոչ՝ Քրիստոսի տուրբ անօրէնութեան տեղեաց աղախին ճնալով՝ ի հասարակաց աղքայութեան անոր և քեզ հետ Թագաւորեմ:

Է

Ատանկ մեծ և սրտառուչ պարտաւորութեամբ մեկնեցաւ Լեւոն միայնակ[2]. և գարձաւ իրեն բաբերար և բարեկամ մարդկանց այլ շնորհակալ ըլլալու. նաւեց եկաւ նախ ի Կիպրոս իր մերձա-

1 Շինութեան Թուականն կ'ըսուի ՊԼԵ, 1386:

2 Լեւոն իր պանդխտութեան ատեն և իր վերջի տարիներն այլ ինչուան ի Յունաց երկիրն ճանապարհորդած է. արդեօք չէ՞ եկած անգամ մ'այլ իր դուստրը տեսանելու, եթէ արդարև կ'ապրէր նա յԵրուսաղէմ:

ւոյ մաեցմաց տեսուԹեան: Անշուշտ ոչ առանց խոյս և խուլ հառաչանաց նշմարելով անկէ՝ իր երբեմն տանուտէայ տուտպանօք ԹագաւորուԹեան աԹոռը, Կիւլխիկիոյ եպիսկոպոսը. և դարձեալ հռոմերական պանդխտաին (Ոդիսեւսի) պէս՝ արտասուա աչքերը և ընԹացքը յարևմուտս ուղղելով, ալեցաւ նախ առ քահանայապետն[1] գոլոմանօք շնորհակալուԹեամբ. անկէց առ ազատուԹեան մեծագոյն միջնորդն՝ Պետրոս Թագաւոր Արագոնի, և Յովհաննէս Կասդիլիոյ: Ապա ապնիւ և մեծանձն Թագաւորս՝ իբրև Թագակից եղբայրաբար ընդունեցաւ զԼևոն, և յորդորեց այլ իր երկիրներուն մէջ արքայաբար ապրելու. և անոնց մէջ ազնուագոյն մասը, հիմակուան աշխարհին մայրաքաղաքը՝ գեղեցիկ Մատրիտը՝ ըսաւ Լևոնի տարցուած և աԹոռ. բոլոր անոր շրջակայ սահմանաց այլ ազատաբար տիրելու՝ ցոլշագի ապրի. և անուանեց զինա Տէր Մատրիտոյ, Վիլլա-րէալոյ և Աստուխարայ: Մատրիտցիք իրեն շնորհաւորուԹեան և հպատակուԹեան նուիրական խաբեբեցին (2 Հոկտ. 1383). Լևոն ալ իշխանուԹեան հրամարտակ մը հանեց (19 Հոկտեմբերի), և այն առջի տիրուԹիւնը պահեց մինչ 'ի մահ. նորոգեց Մատրիտոյ արքունի պալատը, Թէ և քիչ բնակեցաւ անոր մէջ: Մինչև հիմայ պահուի 'ի գետանս Սեկովիոյ քարաքին Սպանիացւոց՝ հրովարտակ մը, զոր Լևոն տուաւ Մատրիտեցոց նոյն քաղքէն (յամին 1389) շնորհելով անոնց ինդրած ազատուԹիւնները. նաև Մատրիտցիք գործեալ խնդրեցին իրմէ, ինչպէս

[1] Այս առեն Հռոմայ հայրապետն էր Ուրբանոս Զ. բայց յԱվինիոն այլ հակառակաԹոռ պապ մը կար, կղեմէս Ե. Լևոն կ'երևի Թէ նախ առաջնոյն՝ յետոյ երկրորդին այլևս կաւ, բայց հաւան չէր այս երկպառակուԹեան:

կատիլևոյ Թագաւորէն այլ խնդրեր էին, որ յետ Լևոնի՝ Մաւրիս նորէն կատիլևոյ Թագին դառնայ: Լևոն սորը համար այլ հրովարտակ մը գրեց յամին 1391: կատիլևոյէն անցաւ 'ի Նաւարրա, յայցելութիւն կարոլոսի Ե-ի Թագաւորի, որ մեկ այլ Թագաւորաց պէս պատուով ընդունելով զԼևոն՝ ընծայեց անոր արծաթէ գեղեցկաշէն աման մը (nef) որ կը 2000 Ակաւնի ֆլորին դրած, 20 ֆլորին այլ տուաւ Լևոնի նուիրակին. 15 այլ իրեն հետ եղող ծաղրածուին կամ ձեռնածուին (yuglar, jongleur)[1]:

Սպանիայէն 'ի Գաղղիա անցաւ Լևոն (1385) առ Թագաւորն Կարոլոս Զ, Թէ՛ շնորհակալութեան իրեն խոստմանցը և բարեկամութեանը, և Թէ հնարք և օգնութիւն բնտրելու նորէն կիւլիկիոյ գահը հաստատելու: Նոյն բանը խնդրեց և 'ի Լնգլիա ու Անգլիոյ Թագաւորէն: Երկու Թագաւորքն այլ իրենց հետ հաւատարի և եղբօր պէս ընդունեցան զինքը, բայց փոխանակ անոր օգնելու՝ իրենք կերպով մը իր օգնութիւնը և ձարտարութիւնը ուզեցին, իրենց երկուքին մէջ երկայն հակառակութիւնը և կռիւը դադրեցնելու համար, որով առաջուց այլ էին կըրցած օգնել անոր. Լևոն բնական արտաշնութեամբն, և իր անձնական կամ ազգային շահուն սիրով՝ առէք առէք երկու Թագաւորաց և մայրաքաղաքաց կուգիմը. և անով շահեցաւ անոնց բաւական հաւատութիւն, իրեն այլ Թէ ոչ հին Թագը՝ գոնէ Թագաւորական կեանք մը: Վասն զի ոչ պակաս քան զՅովհաննէս ընդունելութիւն ըրաւ Լևոնի կայսրը այլ. որ և մեծ հարկինք մ' ըրաւ Հայոց Թագաւորին, իր աներութեան բոլոր մեծամեծներէն

1 Անոնք կու պատմէ Ֆրուասար հին ժամանակագիրն Ֆռանկաց:

հրաւիրելով: Երբ ասոնք հեռացընէին անոր դիպուածները, և արևելից վիճակը, մանաւանդ Յունաց կայսրութեան և Թաթարաց բռնակալութեան, և աւելի մոտ դրութեամբ այլ կու լսէին, Լևոն՝ թէ զանոնք հաճեցընելու համար թէ ինքզինքը՝ լաւ և երկար տեղեկութիւն ուսաւ Թաթարաց գանին և ե. դիպատոսն սուլտանին վրայօք, և անոնց երեն ըրած թշնամութեանը և աշխարհքը աւերելուն. նա և իսր ու լուսաւոր քաղաքական նախատեսութե իմացուց՝ որ Յունաց տէրութեան վտանգը ոչ այն. չափ այս մեկէն է կամ մեկայլէն, հապա երբոր մը՝ որուն այնչափ ծանօթ չէին. և էր նորահաս տատ Օսմանեան պետութիւնն, որոյ գլխապետն Մուրատ-Պէկ (այսինքն սուլտան Մուրատ որդի Օրխանայ) շատ կարճ, զօրաւոր և իսհեմ մարդ էր. ուսկից գանն և սուլտանն (Եգիպտոսի) անգամ կու պատկառէին. իսկ նա դեռ կու իննայէր անոնց երկիրները կոխելու՝ երեն հաւատակից ըլլալուն համար: Անշուշտ, կ'ըսէր, Մուրատ-Պէկ պիտի առնու զԿ.Պօլիս՝ եթէ չփութան արևմտեան բայ երեն մինչև պատերազմները դադրեցընելու և շատ զօրք Թափելու յարևելս. նոյնպէս այլ պատերուն երկպառակութիւնը վերցընելու, որ այլազգեաց այլ արհամարհելի կ'երևէր, և անով զարևմտեայս բաժանեալ տեսնելով՝ էին վախեր անոնցմէ: Իսկ ինքն Լևոն այս վիճակին մէջ շատ փափագելի կու սեպէր որ Մուրատ տէրը երեն երկրին (Կիւրիկիոյ). վասն զի, կ'ըսէր, Մուրատ-Պէկ մեծահոգի և առատաձիրտ մարդ է, միայն հպատակութիւն կ'ուզէ յիշխանաց, և կու Թողու որ ամենքն երեն երկրին տէրեն: Այս այլ աւելցուց Լևոն, Թէ Մուրատ-Պէկ միայն ըզՓրանկս կու սիրէ յարևմտեայց, և կու զուարճանայ երբ անոնց վրայօք լսէ, միշտ հարցընելով

ձանապարհորդաց: — Իսկ իր կորուսած թագաւորութեան վայ՝ երբ նորէն հարցուցին, Լեւոն համարձակ խնացուց որ առանց արեւմտեայց օգնութեան անկարելի էր ձեռք ձգել. և թէ միայն կաթիկոս անառիկ բերդն ազատ մնացեր էր հոն ձենովացոց ձեռքը [1]:

Ա յս խօսքերով և ուրիշ պատմութեամբք Լեւոն բոլոր ունկնդրաց սիրտը շահեցաւ. թագաւորն քաւ մեծամեծաց թէ պէտք է պատուեմք և հանգիստ պահեմք զթագաւորն Հայոց, ինչպէս իրեն և ինձի կու վայլէ. ինչուան որ յաջողութեի գլուխ մեմք զօրօք և զինուք անցնիլ յարեւելք՝ և նորէն իր երկրին վայ թագաւորեցընել զնա: Հրամայեց կարծես որ հաւարակաց գանձէն ամէն ամիս 500 ֆր. տրուի Լեւոնի (այն աւերուած Փրանգն ոսկի էր). և հիմայ այլ մէկէն 5000 Փրանգ, իբեն կահ կարասիքը պատրաստելու համար: Իբեն բնակութեան տեղ այլ Ս. Դիոնիսեայ աբեղայրձանին մէջ Սէնդ-Ոուան (Saint-Ouen Saint-Audoin) կամ Ս. Անտոն մեծ պալատնքն, որ և Noble maison անուանեցաւ: Ա յս եղաւ Լեւոնի հաստատ բնակութիւնն իր պանդխտութեան աեն. յորում ամեն արքունի հանդիսից մէջ կու մտնէր կ'ելնէր, աեղի քան զաեղի սիրելի ըլլալով իր հիւրընկալաց:

Բայց իր գլխաւոր ինդիրը յաջողցընելու համար՝ պէտք էր Անգլիոյ թագաւորին սիրան այլ շահիլ. որուն՝ կ'երևի թէ Անգլիացիք աղջի բերան քիչ մ'ընդդիմացան, Փրանկաց դէմ աեղութեան և պատերազմին պատճառաւ. և պատմչաց տարաձայնութենէն որոշ չիմացուիր՝ թէ աղջն անգամ 1385ին վերջերը ինչպէս հոն գա-

1 Որ էր 'ի Saint-Antoine փողոցին, և թագաւորանիստ պալատին գիմաց:

ցեր և դարձեր է. բայց յաջորդ տարւոյն սկիզբ-
նեբրը նորէն գնաց Գալէէն՝ի Տուվր անցնելով. ուր
Ռիչարտայ հօրեղբայրքն բանակով զօրաց պահա-
պան կեցեր էին, և իրեն հետ մարդ դնելով խա-
րեցին Թագաւորին: Ռիչարտ առանձին ընդունե-
լութենէն եաւ՝ իր խորհրդականաց ժողովին ներ-
կայացաւց զԼևան՝ անոր խնդիրքը լսելու համար.
խորհրդականք կասկածելով որ Կարոլոսի Թեզա-
դրութեամբ եկած է նա՝ քիչ մը դժարեցան, և
Կանդորբերեայ արքեպիսկոպոսն կերպով մը մե-
ղադրեց իրեն՝ զինեալ մարդիկներով գալը: Ռի-
չարտ իրրև Լևանի սիրոն առնելու համար շատ
և Թանկ բաներ ընծայեց, զորոնք չընդունեցաւ
Լևոն, բայց՝ի մասանիէ մը որ 500 ֆրանգ (ոս-
կի) կ՚արժէր. շուտով դարձաւ՝ի Գալլիա, ու
պատմեց Կարոլոսի իր բանագնացութիւնը. զոր
իրրև լինքն իր գլխուն հասարակաց բարւոյն հա-
մար ըրած էր, և ոչ՝ի խնդրոյ նորա, և այսպէս
այլ խնացուցեր էր Անգլիացւոց: Կարոլոս իմա-
նալով անոնց ծանրատրտութիւնը՝ սկսաւ նորէն
պատրաստուիլ յԱնգլիա վազելու: — Բայց Ռի-
չարտ նորէն խորհրդածելով՝ զինչաւ Լևոնի բարի
խրատուց, և մեկէն հրովարտակ հանեց խօսելու
հաշտութեան վրայ, վասն փառաց Աստուծոյ և
գնոյ մարդկութեան և վասն շնորհաց Լևոնի Թա-
գաւորին Հայոց. (et auxi à les instanz prières
et requestes, qui nous ont este faites par *no-
tre cousyn, le roi d'Arménie*). և Լևոնի երախտեաց
համար այլ տարեկան Թոշակ կապեց (1386
փետր. 3) 1000 լիրայ. իրեն բնակութեան տեղ
մ՚այլ: Ռոց շնորհակալութեան և խնդրոց յա-
ջողութեան համար՝ նորէն գնացեր է Լևոն՝ի Լոն-
դոն, ինչպես Ռիչարտի պանապան հրովարտակ-
նեբրն և գրեբրն կուտ յայտնեն, որոց միկրով (18 մար-
տի 1386) կուտ պատուիրէ՝ որ ազատ Թողուն զգ-

Լևոն 40 ձիաւորով և ուրիշ պաշտօնէից եր-թալ գալ իր երկրին մէջ. Լևոնի այլ կող գրէ (12 մա-յիս) որ ինչուան 100 ձիաւորով կարենայ պատ-տիլ յԱնգլիա մինչև նոյն տարուան վերջերը. գալ ձեալ հրովարտակաւ պատուիրէ (24 հոկտ.) որ հազարապետն կամ տաճարապետն (magister hospitii) Լևոնի՝ Յովհան Ռոսպեան Johannes de Rusp) կարենայ ազատութեամբ գալ հինգ մարդով՝ և վեց ձիերով, և՝ աղեղամբք և 24 փե-տրաւոր սլաքօք. քանի մ'օր ետքն (28 հոկտ.) ուրիշ գիր մ'այլ, որ հազարապետն կարենայ ա-ռանց մաքսի մտցընել 'ի Գալղիոյ յԱնգլիա 150 ափտոր գինի՝ Լևոնի մարդկանց համար. նոյնպէս գիր մ'ազատութեան Լևոնի սենեկապետին հա-մար (8 նոյեմբ.): — Թագաւորին հօրեղբայրն Կլոսդրըի դուքսն այլ մեծ պատուով և սիրով հիւր ընդունեցաւ զԼևոն իր պալատին մէջ:

Լևոն այս երկու թագաւորաց հաշտութեան համար կրցածն ընելէն ետև՝ պարապ ժամանակ-ները ուրիշ կողմեր այլ կ'երթար, ինչպէս յիշե-ցինք 'ի Սեկովիա գտուելն յամի 1389: Նոյն տա-րին մեծ քաղաքական և արքունի հանդէս մ'ե-ղաւ 'ի Բարիզ (20 օգոստ.) 'ի պատիւ թագու-հւոյն. կոչնոց առեն, յորում շատ արքայազուն հիւրք այլ կային, զԼևոն բազմեցուցին թագու-հւոյն քով:

Ատենք ալէկ, բայց Լևոն իր գահուն վրայ չէր. Գալղիոյ և Անգլիոյ հաշտութիւնն այլ չյաջողե-ցաւ. գոնէ շատ ուշ: 1391ին մեծ ժողով մ'եղաւ յԱմիէն քաղաքի Գալղիոյ վրան հաշտութեան. ուր եկեր էին Անգլիոյ գեսպանքն, հօրեղբայրք թագաւորին. հոն էր և մերս Լևոն. երկու ազ-գաց իշխանքն վրայ իսկեցին ետև՝ կարծես իսկե-ցաւ Լևոնի թագաւորութեանն համար այլ. Անգ-լիացւոց գեսպանքն խոստացան զայն այլ յիշե-

ցընել իւրեանց Թագաւորին: Երկու տարի վերջը՝ (1393) գարնան ատեն նորէն հաշտութեան պայմանաւորութիւն կ'ըլլար ի Գալէ, իսկ ե Կարոլոս յԱպըվիլ էր. հոն եկաւ Լևոն Ցուենոց երկրէն գառնալով, ուսկից գալու ատեն հեռուէն անգամ մ'այլ, և վերջին անգամ, ի մայրն մօտեցած արևու պէս, ողջուներ էր իր հայրենեաց և արքայութեան սահմանները (Կիւլիկիա), չնչխեալով և յետ իբր 20 տարուոյ ոտքը նեռս գնելու. վասն զի իմացաւ և իմացուց որ այլազգիք լսուեր են հոն, և Կառիկոս բերդն միայն գեռ ազատ մնացեր էր ի ձեռս քրիստոնէից:

Զայս լսելով նորէն վաւուերացան շատ Գալլիացիք՝ և զէնք ու նշան իրենց երթալու հոն յօգնութիւն Լևոնի. և կու ապատէին ժամ մ'առաջ հաշտութեան հռչակուելուն: Եւս առաւել Լևոն (անգէտ իր ապառնալ ժամանակին), քանի մ'այլ ևս նորէն փութացաւ գնաց ի ժողովն գեսպանաց, ուր էին երկերկու հօրեղբայրք երկու Թագաւորացն, ի Լուսինկէն՝ Գալէի մօտ: Հոն վերջին արտի Թելադրութեամբ խօսեցաւ իր և Հայոց Թագին վերականգնելուն համար: Ախտանգամ գեսպանքն և մանաւանդ Կլոտդըլի դուքսն աւելի տաքութեամբ ընդունեցան Լևոնի խնդիրքը, և աւելի հաւանականութեամբ խոստացան. Լևոն այլ աւելի մեծայոյս գարձաւ. վասն զի հաշտութեան պայմանքն երկու կողմին այլ հաճոյ կ'ըլլային. և քիչ առենէն իրենց Թագաւորաց առնելով՝ ձեռնադրեցան կինքեցան, զինադուլ և հաշտութիւն երկու Թագաւորութեանց համար: Թեև բնա երկու Թագաւորներէն աւելի այս հաշտութեան վրայ զուարճացողն՝ պիտի ըլլար անոր մինչ նորդն՝ Լևոն, Թագաւորն և Թագասէրն Հայոց. բայց.... աւա՜ղ. գրեթէ հաշտութեանն հետ կընքուած էր և Լևոնի կեանքն:

10477396

Ը

Տարի մը և աւելի առաջ (1392 յունուար 20) Լևոն իր կասկը գրեր էր Յոհան ոը Ֆոլքվիլ Գալ-ղիոյ արքունի մուրհակաց գլխաւորին ձեռօք. յո-րում յետ յանձնելոյ զԿոդին առ Աստուած՝ նախ կոչ պատուիրէր որ մարմինը Թաղուի 'ի վանս նորահաստատ Կելեստինեան կամ Երկնային (Cé-lestins) անուանեալ կրօնաւորաց 'ի Բարիզ. և եթէ անունք չուզեն՝ ուրիշ վանք մը. և վրան պարզ Ջերմակ զգեստ մը հագցընեն, գլուխն և ոտքն բաց Թողուվ. դագաղը վերցընեն 12 ազգատոք, չորս այլ չահակիր ազգատոք, ամենքն այլ Ջերմակա-զգեստ: Յետոյ կոչ պատուիրէր իր ունեցած պարտ-քերը վճարելու. և ապա զանազան գումարներ կոչ տահմանէր այլ և այլ եկեղեցեաց և վանից. իր Թաղուելոչ եկեղեցւոյն այլ կոչ Թողուր բո-լոր իր մատրան սպասքը, որպէս զի իր Հոգւոյն համար աղօթեն: Վերջը կոչ պատուիրէր որ մեռ-նելուն պէս՝ բոլոր այս պանդխտած երկիրներուն մէջ ունեցած տացուածքը չորս հաւատար մարդ բաժնուի. առաջինն որուի ազգատաց և վերոյի-շեալ բարեպաշտութեան տեղեաց. երկրորդ մասն որուի իր Թաղուելոչ եկեղեցւոյն, ուր ամեն օր իր Հոգւոյն համար մէկ երկոչ պատարագ մա-տուցանեն. երրորդ մասն որուի իր մէկ օտարա-ծին որդւոյն՝ Կի կամ Կիւյոդ կոչուած, որ դեռ տղայ էր, և անոր դաստիարակութեան ծախքն Հոգալէն ետև՝ երբ քսան տարուան ըլլայ՝ դրա-մագլուխն իրեն յանձնուի. իսկ եթէ նա քսան տարիէն առաջ մեռնի՝ ազգատաց որուի: Իսկ ընչից չորրորդ մասն բաժնուի իր ամեն ազգա-տարբ, ուր որ ըլլան: Եւ այս ամեն բանս կա-տարել կոչ յանձնէ իր սեռնեկապանին և հազա-

բանեան: Իսկ ընդհանուր կամ բարձր կառավարութիւն կ'ապահովէ որ ըլլան (բաց ի Գաղղիոյ Թագաւորէն), Թագաւորութիւն Անգղիոյ, Կաստիլիոյ և Արագոնիոյ, զորս իրեն հաճելութիւնք (cousin) կ'անուանէ:

Ի 29 Նոյեմբերի 1393 տարւոյն՝ Բարիզու Դուռնէլ (Tournelles) բառած պալատին մէջ՝ պանդխտութիւնն և կեանքը կատարեց Լեւոն Զ, վերջին Թագաւոր Հայոց. և Թագաւորական պատուով ու հանդարտութիւն ոգով յուղարկեցաւ յեկեղեցի վանաց Ելինեանցն, զարերարն բազմութիւն կարօտելոյ և բարեկամն Թագաւորաց: Իր պաշտօնեայքն և պատուաւորքն ամենքն այլ ձեռնակ հագած՝ անոր որոշած ալքատներուն յուղարկաւոր գնացին. իրեն այլ ձերմակ հագուստներ էին, ոչ իր ուզած խոշոր լաթուն, այլ արքունի բեհեզով, ձերմակազարդ անկողնի վրայ դրած, գլխուն քով այլ դրած ոսկի Թագ մը: Հին սովորութիւն էր Հայոց Թագաւորաց՝ ոչ միայն ի կեանս՝ այլ և ի մահուն ապահակազգեաց եւիլ. այնքան զերազանց սեպուած էր Հայոցն առաջի ժողովրդեան: Եկեղեցւոյն աւագ սեղանին քով կանգուն տակ պատին մէջ հաստատած դրին Լեւոնի դամբանը սև մարմարիոնէ, որոյ վերայ հանգուցին իր չափով արձանն ձերմակ մարմարէ՝ արքայական նշաններուն: Հոն 400 տարի հաւատացեալ ննջեցելոց քունը քաշելէն ետև, անցեալ դարուն հոգերը Փրանկաց քաղաքական մեծ շփոթութեան առեն, արբանիկ ձեռք՝ ինչպէս ուրիշ Թագաւորաց՝ այսպէս Հայոց վերջին Թագաւորին հանգիստն այլ խռովեցին. խուրան և դամբան վեր ի վայր եղան. դարական խաղաղացեալ ոսկերքն՝ ժամանակէն առելի՝ ըրա-

նաբարութեան խաղալիկ եղան. Կիւիլիկիոյ Թագաւորաց Թշնամի Փէօլէմէնեանուն ջրածը՝ աշ-

խարհիս ամենէն բարեկիրթ կարծեցեալ ժողովուրդն ըլաւ. այսքան իրարու մօտ են կիրք և կրթուԹիւն: Կենօքն հալածեալ, հանգիստ վախճանեալ, յետ մահուն այլ իր հալածանքը կրեց Լևոն: Բայց դարձեալ բոլորովին անբասիր չեզաւ. ինայիչ ձեռք ազատեցին իր դամբանը, և տարին Թանգարանի մը մէջ դրին, ուսկից յետոյ՝ ի խաղաղացնալ երկրին՝ Փրանկաց Թագաւորաց միացեալ նշխարօք և տապանօք տարին զետեղեցին Ս. Դիոնեսիոսի հոյակապ վանաց տաճարին տակ, ուր որ ականատես եղած՝ քեզ այլ ցուցի, Հայկակ: Հոն է մինչև ցայսօր Հայոց Վերջին Թագաւորի Լևոնի մահարձանն իր ահ և անկողնովն, իր արքունի նշանօքն և արձանագրուԹեամբ, որպէս և առնես. բայց նշխարքն ոչ.:

Լևոնի երկու գլխաւոր բարեկամքն և պաշտպանքն՝ Ռիչարտ Բ և Կարոլոս Զ՝ իննամով հոգացան անոր կտակը կատարելու. և իրենց վկայուԹիւնն կամ անդորրագիրքն այլ դեռ կուպահուին՝ ի դիւանս: Ասկից այլ յայտնի կ'երևի այս երկու Թագաւորաց մեծարանքն և սէրն՝ ի վերայ Լևոնի, և ատոր աջակցուԹիւն, սիրելի և անձնանուէր քնաւորուԹիւնն. զոր սիրեմ ես, Հայկակ, հանարիլ չքնաղագոյն կամուրջ մը Գալէի վրայ ձըգած ընդ մէջ Գալլիոյ և Անգլիոյ, ուսկից անցուց Լևոն այս երկու մեծ և նախանձընդդեմ ազգաց խաղաղուԹիւնը: — Արդեօք այսպիսի բաղդ կամ փոխարէն մը պիտի ունենայ Լևոնի սերմանեալ ազգն ուրիշ անգամ մ'այլ: — Փրանկաց Թագաւորն որ երկարակեաց եղաւ յետ Լևոնի, անոր Թոռան զաւկին վրայ այլ խնամք ցըցուց, և իր մահուանէն տարի մ'առաջ (1421) հաճուԹեան Թուղթ մը գրած է առ ժողով երիցանց Սուսան քաղաքի՝ զԿիւյոդ իրենց եկեղեցւոյն կանոնիկոս ընտրելնուն համար. վասն զի այս ժա-

10477396

առնգա Լևոնի եկեղեցական վիճակ ընտրեը էր, և յառաջ 'ի Պրի (Brie) ատկաւապատեա էր եպած [1]:

Իսկ Լևոնի բուն հարազատն և միակ նշխարը իր և Հայոց արքունի տան որբացեալ և այրիացեալ դուստրն Փիլիա, ըստ աւանդութեան, վախճանեցաւ Յերուսաղէմ, որպէս նուիրական սիրուհի՝ Հայ հայրենեաց արքային մնխրոց վրայ հանելով, և պատնէշի խելամտութեամբ քան զքնաղ հաւն փրկնիկ, այն ամէնացեալ կայծակը խորհրդաբար խառնելով՝ Քրիստոսի կենդանաթող գերեզմանին անմահարար նշուլից հետ:

Ա. յաւիսն են, Հայկակ, համառօտ յիշատակք Լևոնի վերջնոյ: Աւետրտ է մեզի հոս իրմէ եւս իր երկրին և ժառանգութեան անցքը քննել. այլ այսչափս հարկ է ըսել Հայոց Թագաւորութեան վրայօք, որ Լևոնի մահը լսելուն պէս՝ Յակոբոս և Թագաւորն Կիպրոսի իբրև ազգական և ժառանգ Լևոնի՝ պատկեցաւ անոր Թագին այլ, և անուանեց զինքը Թագաւոր Կիպրոսի, Երուսաղէմի և Հայոց [2]. այս անուն անցաւ իր յաջորդաց այլ մինչև 'ի յետինն, որ է դշխոյն Կատարինէ՝ դուստր Գառնարոյ Վենեատկեցւոյ. սա անժառանգ ըլլալով յամին 1489 առաւ զկղզին 'ի Վենեատկեցիս, և ինքն այլ մեռնելով 'ի Վենեատիկ (1510) իր գերեզմանին վրայ այլ Թողուց ոսկեքանդակ գրով

1 Ըստ ոմանց երկու էին անհարազատ որդիքն Լևոնի, մէկն եկեղեցական, միւսն զինուորական. բայց կտակն զմէկ միայն յիշէ:

2 Արդեօք զսա՞, Թէ մանաւանդ զնոյն ինքն զԼևոն կ'իմանայ մեր նախ ծանօթութեան մէջ յիշեալ վիպասանն Լիւսինեանց, ըսելովն, Թէ մինչև ցայսօր, (որ է 7 օգոստոսի, 1394, ինն ամիս յետ մահուն Լևոնի), Հայոց Թագաւորքն Լիւսինեանց նշանները և մականունը կրեն:

10477396

Հայոց սիմնուեան անունը: Բայց երկի առաջ Յակոբոսի Թոռն Յովհաննէս գ Թագաւորն՝ որ նաեւ մանչ զաւակ չունելով, յետ մահուն իր դուստրն Գարլոդա՝ որ այրի մնացեր էր 'ի Թագաւորէն Փորտոգալի, վեց եօթն տարի Կիպրոսի (և անուամբ՝ Հայոց) Թագուհի եղած էր. և երբ Յակոբ ի անհարազատ որդի գ Յովհաննու հալածեց (1464) զԳարլոդա, սա իր իրաւունքը սըաւաւ (յամին (1482) առ Կարոլոս ա դուքս Սաւոյայ Իտալիոյ. այս պատճառաւ տուր յայնորգքն և ժառանգք (որ հիմա Թագաւոր կոչուին Իտալիոյ) իրենց իշխանական պատուանուանց մէջ կու հանրեն և զանուն Թագաւորի Հայոց: — Հաւանական է որ առնցմէ առելի մերձաւոր ժառանգք կամ իրաւատեարք կային 'ի Կիւրիկիա 'ի ցեղէ Հեթմեանց և Կոստանդեանց. և Թերևս ոմանք փորձած այլ ըլլան իրենց իրաւունքը ցուցընել. այս անտարակոյս է որ շատ իշխանք և պարոնայք դեռ Լևոնէն գար մ'եաք այլ՝ ազատօրէն իրենց բերդերուն կու տիրէին [1]. ինչուան Սիս մայրաքաղաքն այլ նորոգուելով՝ գրեթէ անանց ձեռքն էր. և անանց հետ այլ պատերազմելով առաջ Տուղլատրցի կամ Զիւլգատրեան Շահսուար պէկին Մարաշու՝ յամին 1467. քանի տարի մը վերջը Օսմանեան սուլտանք սիրեցին ինացեալ բերդերուն և ամուր տեղերուն, բաց 'ի քանի մ'ամուր տեղեաց և հասարակութեանց Հայոց, որոց նոր և յետին դէպքն՝ հիմայ ծանօթ են ամենուն:

1 Վերոյիշեալ վիպասանն կ'ըսէ, Թէ յետ մահուան պայազատին Գուիտոնի՝ իր պայազատքն շատ նեղութեց և սրտմտեցուն տակ ընկան, և ինչուան հիմայ այլ կու տեէ. Et sachiés que ses hoirs ont eu depuys moult affaire, eomme il appert encores au temps present, et en ont eu moult d'anuys et de pestilence, comme a apparu et encores appert.

10477396

Արևմտեայք այլ փորձեցին կերպով մը երեսից խոսամոնքը և պարտքը կատարել առ Լևոն. երկու տարի յետ անոր մահուան՝ 3. կոմս Նըվերսյ (Nevers) և ուրիշ ազատ Գաղղիացիք զօրագլուխ ղրկեցին Թագաւորին Մահմատայ, որ կու խոստանար նախ Յունաց օգնելու, և յետոյ Լևոնի երկիրն այլ ազատելու. բայց Նիկոպօլեայ քով (՝ի Բուլղարս) յաղթուելով՝ի սուլթան Պայէզիտայ (1395, Հոկտ. 27), լուեցին ամենայն այգպիսի յոյսք և մտածութիւնք:

10477396

10477396

ԿԲ

ՅԻՄԻ

Յ Գևկտեմբերի .

Ա

« Ընկալ, ով աստուածասէր և գթասէր Հոգի, մեծդ
» ըստ մարմնոյ և բարգաւաճ ըստ ոգւոյ, ծիրանածինդ
» ՅԻՄԻ, զքաղձալին քո, երկամբիք ձեռին մեղապարտիս
» Յովհաննու եպիսկոպոսի կրսերս եղբօր Հօր քո. որով
» յԱստուած եւ յաստուածայինն խոկացիս միշտ. եւ
» տրտմեալ սրտի քո սփոփանս տովաս արասցես. գիտե-
» լով՝ զի սեփական է մարդկան նըժդեհութիւն և պան-
» դխտութիւն և փորձանք: Որոց անդորրը տացէ ձեզ՝ որ
» ամենահնար է »:

Ահա վայելուչ և արտառուչ յիշատակարանն՝ զոր հոս իր ակզբնադրէն օրինակեալ տեսանես և կարդաս, Հայկակ, հանուած է Յովքայ և Սոլոմոնի գրոց օրինակէ մը, մեզմէ 600 տարի առաջ գըրուած. զոր եա երբ առաջին անգամ կարդացի, երկար կանգ առի: Ան գրոց երկու մեծաւոր աննման և աստուածաշունչ հեղինակներն՝ (Յոբ և Սոլոմոն) յիրաւի մատաց մեծ մասը կու գրաւէին, բայց անոր առաջին ատացողն՝ զսիրտս կու գրաւէր: Վասն զի ըստ անստուա վկայութեան իր արքային և մերձաւոր անձին՝ այն ատացողն, այն

պրեթէ դէռ մեզի անծանօթ Ֆիմին՝ մեր անցեալ Թագաւորաց մէկուն, դուստր է եղեր, և իր կեն. նաց ամէնէն զգալի երևոյթն այլ՝ փրփրել օդին. և ոչ այսչափ միայն, այլ և ապտակները և գլոա. ները հոգի մը՝ կու վառէ եղեր այն սիրտը: Ախապի. ան սրտի մը հանդիպիլ և զանց ընել՝ սիրտ չուներ նալ է: Զոր ու քար արձանի կուռը մը, դաստակ մը, մատ մը՝ իր փորուածքին ճարտարութեամբ կու յափշտակէ կրթուած աչք ու միտքը՝ առ ձարտարապետն և առ քուն գալափար պատկե. րին. իսկ նշանակը այսպիսի սրտի մը՝ ոչքան ա. նել սիրալի և արբազան պիտի ըլլան զպատա հայ. րենասիրաց. մանաւանդ եթէ գուշակեն որ այն սրտին տրամութիւնն՝ կենօքը չափ քչեր է, թէ և երկնաւոր յուսով կու քաջալերուի եղեր:

Ես չվախցայ և չեմ վախեր նաև Յոբայ մը քով կարեկցութեամբ և զարմանօք տեսնել այդպիսի Ֆիմիկ մը. վասն զի եթէ այն համբերողաց նախօրիկն [1] ամեն տեսակ ցաւ ու զրկանք կրեց եօթը տարի, վերջը 170 տարի այլ վայելեց զբարիս երկրի՝ 'ի մէջ բազմութեան զաւակաց, թոռանց և թոռնորդւոց, զի « Տէր աճեցոյց զՅոբ... և եառ Տէր » կրկին քան որչափ ինչ էրն յառաջագոյն Յո. » բայ 'ի յաճախութիւն... օրհնեաց զվերջինն Յո. » բայ քան զառաջինն. և էին ի նմա հարիւր նորա ոչ » խարիք 14000, ուղտք 6000, լուծք եզանց 1000, » և այլն. և վախճանեցաւ ծերացեալ և լցեալ աւուրիւք »: Եւ եթէ իմաստունն Սողոմոն (առանց Յոբայ պէտս վերտակրելու) լաւ ճանչցաւ և վկայեց թէ ամենայն ինչ ունայնութիւն ունայնութեանց է, սակայն չծածկեց այլ՝ թէ « զամեն. » մենայն զոր ինչ խնդրեցին աչք իմ՝ ոչ զրկեցի

1 Ախապէս անուանէ զՅոբ՝ իմաստասէր կաթուղիկոսն մեր Յովհաննէս:

10477396

» Ի նոցանէ, և ոչ արգելի զներա իմ յաւիտեան » ուրախութենէ » . որոց մէջ Թաղեաւեալ Թա-
ղեցաւ ինքն այլ:

Իսկ Ֆիմի... Այժ, և սա անուց նման ձէրմանա-
ձին էր, և ՌԵՁ ըսպ Տարհոյ, այլ և Բարգաւաճ ըսպ
ոգոյ. Թագաւորական օրինօրդ, մեծատուն և ի-
մաստուն. Թերևս ինքն այլ վայելեց 20 տարի մը՝
երկրաւոր մեծութիւն և բարիք, բայց այլ աւելի
կրեց քան ու չարիք, և ոյ մեծն է՝ ոչ յետոյ Յո-
բայ այս կրկին ամէնա, և ոչ անոյ և Սողոմոնի
պէս Ի գահոյն վախճանեցաւ. այլ անշուք և ան-
շիտի մեռաւորանի մը մէջ, միակ և յետին ոգեղանա
պրպտել ոգին՝ գանելով այս իմաստուն և մեծա-
տուն Թագաւորոյ գերեզմը, զոր նր հօրեղբայրն
Յովհաննէս եպիսկոպոս՝ գրեց իր Յերին էրիմէ, և
զարդարեց պատկերօք և երանգօք և ընծայեց իր
Թոռնէին: Անշուշտ շատ հեղ կաթկըթած են հե-
գիկ և այծաս մարգարիտք արտասուաց սգա-
ւոյ քամըչին՝ այն կրկնակի ինկելի էջերուն վրայ,
որոց մէկին վրայ գրուած էր ահաւոդիկ հոս կար-
գացածդ:

Թէպէտ և ոչ մեր պատմիչք և ոչ այս իր ի-
շատակդիր հօրեղբայրն՝ կամ ծանուցանեն Թէ
ինչ կեանք և ինչ կնիքեր ունեցաւ Ֆիմի, և որ էր
գլխաւոր պատճառ արտմաւթեան սրտին. սա-
կայն միտքդ քանի մը տարեանցի և համառօտ
գրուածներէն՝ Թէ մերոյ և Թէ մանաւանդ օտա-
րոց, փափագեցայ արտաքս անոր գաղանիքը. և
այն կարծած յիշատակներէն՝ եթէ կարելի է՝
նորոգել կանգնել ընկած արտմած ազնիւ սիրտ
մը, որոյ Տանդաստան յիշատակը՝ այս օրուանս
(գեկտեմբերի 3ին) կամ նշանակէ մեր Ռուբինեան
Թագաւորոյ Յայտնաւորութեան՝ մէկ տոլով մը:

10477396

Բ

Արդ Ֆիմի [1] դուստր էր Զապելի և Հեթմայ, այն մեծատոհմ և մարքրակենցաղ ամուսնաց՝ որք կլինան ընծայուիլ յօրինակ Թագաւորաց. և ո՞ւրոց զաւակ ըլլալն իսկ մեծ փառք և բաղդ էր. բայց անոնց հոգւոյն և սրտին՝ քան թէ արեանը նմանութեանը՝ աւելի մեծ եղաւ Ֆիմի. և ըսա այսմ՝ գերազանց իր հարազատաց մէջ այլ. որոց երկպառակութիւնն մեկին էր, և հինգ քերց մէջ՝ ինքն երկրորդ, թէ և հարանութեան վիճակաւ՝ դարձեալ ամենէն առաջ անցաւ: Վասն զի իր անդրանիկ քոյրն Զապլոն՝ իւրմէ վերջը (1254) առաւեցաւ՝ ի կնութիւն Պեմոնդի Ջի՝ Բրընձին (իշխանին) Անտիոքայ, որ նախապատիւ էր՝ ի մէջ վրացի իշխանացն յերկիրն Ասորւոց. իսկ Ֆիմի՝ երկու տարի այլ առաջ ինդրեցաւ և ընծայեցաւ՝ ի հարանութիւն Յովհաննու Իպլինեան, և՝ ի սիրնութիւն Սէդոնի: Ահա երկուքին (սիրոյ և տեղւոյն) վրայօք՝ կ՚արժէ նախ տեղեկանալ. մանաւանդ որ Ֆիմիի կենաց և կրից ծանօթ դէպքե՝ քերը՝ գրեթէ միայն տոհմով կրնամք ժողվել:

Երբ առաջին անգամ խաչակիրք տուրբ երկրին սիրեցին (յամին 1099), մեծ պատերազմով մ՚այլ զարկին այլազգիները՝ հին այլազգեաց պարծանք և հակայ Գողիադոս հայրենեաց (Գէթ քաղքին) մօտերը, զոր ոմանք նոյն սեպէին Յովնաց և Հռովմայեցւոց Յոպէա կոչած քաղաքաւանին հետ, որ և մինչև հիմայ Ճէպնէ կոչուի, և մօտիկ է՝ ի Ռամլեա (հինն Արիմաթեամ): Այս յեռին քաղաքիս մօտ այլ երեք տարի վերջը պատերազմ մ՚եղաւ, յորում ընկաւ և Գողզիոյն կռմին

1 Եւ Ֆիմիա կամ Եւփիմէ անուանն նուազականն է:

Տարդրի՝ Սահմանոս. որոյ երկու որդիքն վկուա-
լով երեից Հայրենի կոմսութենէն, ՚ի Պալեստին
կու գնային ընդ Խաչակրաց. մինչև Փուլկ
կամ Ֆուլգ Թագաւորն Երուսաղեմի՝ անունցմէ
կրասերին՝ որ Պալիան (Պալտուին) կոչուէր՝ տուա
՚ի ժառանգութիւն նախայիշեալ Յաճնիա քա-
ղաքաւանը, որ այն ատեն բաւական բարգաւաճ
էր. և անունը փոխոխուելով կոչուեցաւ Իպլէն
կամ Իպլէմ, Իպլեն, Էպալէմ, և այլն: Պալեան՝
քաղաքին անունը սահմանեց երեն և իր տոհմին.
որ շատ զօրացաւ և աճեցաւ, տարածեցաւ ըս-
ըր Փիւնիկիոյ եզերքը, և Կիպրոսի Թագաւորու-
թեան մէջ. անանկ որ գրեթէ ԺԳ-ԺԵ գարուց մէջ
հան Լատինաց կամ Փռանկաց ամենէն հզօրա-
ւոր տոհմն էր (յետ Լուսինեանց Կիպրոսի): Պա-
լեանուորգոց և Թոռանց մէկն չինեցին կամ կար-
գաւորեցին Les Assises de Jérusalem ըսուած
անուանի օրինագիրքը, որով կառավարէին Թա-
գաւորք Երուսաղեմի և Կիպրոսի, իշխանք Լատի-
նաց յարևելս, և նաև ըստ մասին՝ մերազգի Կի-
լիկիոյ Թագաւորք: Պալեանոյ պայազատաքն իբրև
հպատակք Երուսաղեմի Թագաւորաց՝ անոնցմէ
ժառանգութիւն առին գրեթէ բոլոր Փիւնիկիոյ
կամ Ասորւոց ծովեզերեայ քաղաքները և մանր
իշխանութիւնները. որունք երբեմն Դամասկոսի,
Հալէպու և Եգիպտոսի սուլտանաց ձեռքը կ'ընկ-
նէին, երբեմն Փռանկաց, այսինքն Թագաւորին
Երուսաղեմի, և յետոյ Կիպրոսի:

Այս Թագաւորութիւնս՝ բաց երեն սահմանի
վիճակներէն՝ չորս գաւառ կամ Պարոնութիւն
ունէր, զոր պայազատութեամբ կու տար որու
որ կ'ուզէր: Այս չորս[1] պարոնութեանց մէկն էր

1 Միւս երեքն են. Ա, Յոպպէ և Ասկաղոն. Բ, Գալի-
լիա. Գ, Կրակ, Մոնրէալ, Հեբրոն:

10477396

Սէդոն քաղաքն ծովեզերեայ, իր բաւական ընդարձակ վիճակովը. յորում էլին Կեսարիա, Բեթսան և Պէնփուդ (Գեղեցիկ-բեերդ) նշանաւոր ամրոցն: Այս մեր պատմութեան (և Հեթմոյ թագաւորութեան) առեն՝ Սիդոնի տէրութեայլ անցեր էր Իպելինեան տոհմին, և տիրէր զօրաւոր լշխան[1] մը, Պալեան (գ կամ դ) որդի Յովհաննու՝ տիրոջ Պերութի, (զոր կ'անուանէլին le vieux sire de Berouth). որ և Կիպրոսի թագաւորութեան պայլէր. Պալեան ալ անոր պայլ անուանեցաւ (1246ին, բայց տարիէ մը վեռաս, 1247): Իր այրին Մարգարէթա որ Յովհ. Պրիենայ (Երուսաղեմի թագաւորին) եղբօր դուստրն էր, կոչ հոգալ թէ տէրութիւնը և թէ իր մատղաշ պայազատ որդին Յուլէան կոչուած: Պալեան մէկ հօր եղբօրորդին կոման Յովհան Իպելինեան[2] Յոպպէի տէր էր, և շատոնց առած էր՝ ի կնութիւն՝ Հեթմոյ քոյրը՝ Մարիամ. զոր մեր յիշատակագրաց մէկն փուանկաբար կոչէ Կալա-Մաէ գոնդէս Ճոֆֆան (Marie countesse de Jaffe). Իակ Պալեանայ պայազատան և տէրն Սիդոնի Յուլեան՝ առաջ զՅիմի. ինչպէս յետ քիչ ժամանակի՝ Տիւրոսի տէրն այլ (Սրոյ տէրն՝ ըստ մեր պատմչաց) Ամաւրի Լիւսինեան՝ առաջ՝ ի կնութիւն զՋապլուն՝ դուստր գ Լևոնի, որդւոյ Հեթմոյ և եղբօր Թիւեայ: Գրեթէ յԱ դարուն կէսը բոլոր Սուրոյ նշանաւոր քաղաքաց և տէրութեանց պետերն՝ Հայոց նոր թագաւորութեան օրիորդներն էլին. ոչ միայն՝ ի Փիւնիկէ, այլ և

1 Փրեսերիկոս Բ Գերմանիոյ կայսրն՝ իբրև թագաւոր Երուսաղեմի, այն թագաւորութեան բոլոր տէրութեանց վրայ իրեն երեսփոխան դրեր էր այս Պալիանը:

2 Ասիկայ է վերջին և բուն կարգադրող Երուսաղեմեան օրինագրոց:

10477396

բարձրագոյն գահոյց վայ, յԱնտիոք, ՚ի Կիպրոս, և մինչև ՚ի Բիւզանդիան:

Առանցմէ էր և Ֆիմի, իբրև 14 տարեկան, երբ (1231) պատանին Յուլիան պայազատն Սկոտիոյ և իր հնամեակալ մայրն Մարգարիտ՝ հնդրեցին զնա իրենց հարս. որ և շատ հաւանօրէն՝ առանց հարցն եւս իր հօր ալքոնի գարտպատէն, երբ մեծ չինուԹեան և փառաց մէջ էր այն ալքոնը. երբ չորս կարիճ և մեծիշխան եղբարք Թագաւորին Հեթումոյ՝ Թև Թիկունք էին անոր, և երկոսք այլ ալօԹիւք օգնէին, (Խարտեղ ալքեպիսկոպոսն Դրազարկու, և կրտերն Յովհաննէս Ռաբբան), և ամենուն վայ հակէր՝ հինաւուրց և վնասոյ պէս հավանանալով՝ ծեր և առյգ ալքայհարն Կաստանդին: Յուլիանոս և Ֆիմիի պատկին պայմաններն, այսինքն օժանդն վերաբերած խընդիրքն և դաշինքն՝ բազմովի պահուած գոռեցաւ Մաղթայի առաքեալց դիւանաց մէջ և. հատուածին, այն առենուան Փռանկաց լեզուով գրուած. միայն առաքելուԹիւնն հայերէն կարմրագիր գրած մեր Թագաւորին խնկական ձեռօքն, ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ, և իր ալքոնին կախեալ կնքով վաւերացած, ինչպէս որ կ'լսէ այլ ԹըղԹին վերջը. E por so qui cestes lettres soient fermes é estables, ci avons escrit l'escrit de nostre main vermoil é sayelé de notre ceau pendant. Գաշնագիրքն էին մէկ կողմէն ինքն Հեթում Թագաւոր, մեկայլ կողմէն տիկինն Սկոտոնի և իր որդոյքն (la gentille dame de Sayette, dame Margarite, é le gentil seignor de Sayette Sire Julian). իսկ խոստակատարք կամ վկայքն էին Հիւրընկալ կամ Եղուսաղէմի տաճարաց կարգապետն՝ Գուլիելմ։ Եպ-հէօֆ (frère Guilliam de Castelnov), և Հեթումոյ քեռայրն Յոհան Իպլինեան (gentil cunte de Jafe sire

Johan d' Ibilin): Իսկ պայմանքն էին, որ Հե-
ռամ տայ իր դուստրը (notre filie damoiselle
Fémie) առ Յովհան, և օժտի հարսը 25000
սառակինեան-բիզանդ ասկի՝ Ակքեայի կշռով
(xxv. m. besans sarrazinas au pois d'Acre),
որոց մէկն կ'արժէր չորս խաչականիք բիզանդ Հայոց
(quatre besans de nos staurat por un besant
sarrazinas): Ակա հայկական տուակը (սքաւրատ-
խաչականիք) Թուի Թէ մանրիկ ասկի մ'էր, իսկ
սառակինեան բիզանդն 10-12 Ֆրանգ մը կ'արժէր
ըստ ոմանց դրամագիտաց. որով Ֆիմեայ օժիան
300000 Ֆրանգի մօտ կ'ըլլայ [1]. որուն երրորդ
մասն՝ որ է 8000 բիզանդ (96000 Ֆր.), գոհարե-
ղէն, մարգարիտ, և ոսկւոյ ու արծաթի զարդեր
պիտի տար Հայրն, իր օրիորդը խաւարած առեն.
իսկ ճնացեալ 17000ն այլ զուտ տուակով պիտի
վճարէր, պատկը կատարելէն ետև: Հարանածուք
այլ պիտի պարտաւորէին այն կանխիկ արուած
օժիտը՝ յորում հարսին պահել կամ գարձընել
'ի կալուածս. և ամենևին ազատ Թողուլ զքամ-
բիչը ուզած առելը կենալու կամ երթալու, հետը
ուրիշ մարդ չդնելով՝ բայց երեք ձիաւոր: Եւ 'ի
հատատուելիեն բանիս՝ Յովհան և Մարգարիտ,
իրենց ազգականքն և պատուաւոր մարդիկ՝ պիտի
ստորագրէին, և իրենց կապարէ կնքովը կնքէին

1 Լևոն Ա. Թագաւորն՝ իր Եօդեֆիմ կամ Սոեֆանի
դուստրը՝ Երուսաղեմի (Յովհան) Թագաւորին կին տալու
առեն՝ անոր հարսանեաց պատրաստութեան համար միայն
'ի Հիւրընկալ ասպետաց 30000 սառակինեան բիզանդ ոս-
կի փոխ կամ փոխնորդ առեր էր: — Ըստ ոմանց սառա-
կինեան ոսկին կ'արժէր Ֆր. 9, 50: Սոր աժէքովն էր
գրեթէ Բիւզանդացի ոսկին այլ. կայր և Բիւզանդ կո-
չուած արծաթ ուտակ՝ ոչ փոքր կոչուած. և կըրնայ ըլլալ
Թէ Հեթմոյ խաչականիք Բիւզանդն ալ արծաթ ըլլայ, Թէ
և այդ մեծութեամբ արծաթ դեռ չէ գտուած:

պայմանագիրը: Այս ընելէն եառ ոխակ կատա-
րուէր Հարանունքն՝՝ի ածնի Խաչվերացին, ՚ի սեպ-
տեմբերի, կամ անկէ եառ:

Թէրևս դիտեցիր, Հայկակ, որ փեսային մայրն
կոչ յիշուի, եակ հարսին՝ ոչ: Մինչդեռ իր նախնի
դատերայ առաջին հարանուէթեան խոսք կ՚ըլլար,
մայրն՝ Զատիկ դշխոյն՝ փոխադրեցաւ յերկինսին
առաքսան, վախճանելով՚ի սկիզբն 1252 տարւոյ,
որուն վերջերը կատարեցան հարսանիքն Ֆի-
լեայ [1]: Այդեօք ասկայ առաջին հարուած մը
չէր օրիորդին, և պատճառ մը արտօնութեան սըր-
ուին, ազգ և հարանութեան պատմուճանները
յինրայ չփոթելով:... Սակայն Թոզուանք որ հայրն
և հարազատքն սրբեն աչուըները, և «քաջալե-
րեաց քոյր մեր» ըսելով՝ յուզմունքեն փառօք իր
տիկնութեան տեղը. մենք այլ մօտենանք այս տե-
ւոյս ծանօթանալու:

Գ

Հիմակուան Աստրւոց երկրին մեծ և բանուկ
նաւահանգըստաքն (Պէյրութ) իբրև 45 մղոն մը
վար դէպ՚ի հարաւ՝ ծովեզերքը ալոի հրուանդ-
դանի պէս երկընցած երկրին վրայ՝ չինուած և ծա-
նօթ է Սայդէ քաղաքն, որ վերոյիշեալ պայմա-
նագրին մէջ Սայէդ կոչուի: Հին Աստրիք և Եբրայե-
ցիք Ծայդան կոչէին, ինչպէս մեր Ս. Գրոց մէջ
այլ գրուած կայ, Ծուր և Ծայդան, որք ըստ Յու-
նաց և Լատինաց Տիւրոս և Սիդոն կ՚ըսուին, և
առեալ յիշուին՚ի հին և՚ի նոր կտակարանս, և
Ջանաչուին իբրև երկու հարազատ քոյրք և տիկ-
նայք բովանդակ Միջերկրականին արևելեան ծով-

1 Աստ վկայէ և վիճակեցի ժամանակագիրն Սա-
նուտոյ:

ափանց: Տիբրա՝ Թէպէա և աւելի նշանաւոր և մեծ էր և Թագուհի Ծովուց կոչուէր՝ ի հին ժամանակս, ասկայն գտաւոր էր Սիդոնի, որ շատ գարեր մինակ ծովեզէ վերջը ծնաւ զՏիբրա. և ինքն մայրն ծովային քաղաքաց Փիւնիկիոյ՝ աշխարհիս հնագոյն վաճառական քաղաքաց մէկն էր. վասն զի նոյ նահապետին Թառան՝ Քանանու՝ անդրանիկն Սիդոն՝ չինեց զայն և իր անունը գրաւ, որ նշանակէ ձուկն կամ ձկնորս: Եթէ ի սկզբան՝ վէնեաիոյ պէս ձկնորաց ապաստանարան մ՚էր, քիչ առենէն վաճառականութեան մայրաքաղաք եղաւ. և երբ իր գտաւորն՝ Տիբրա՝ գերազանցեց այլ յայտ մասին, գեռ ինքն մայրն Սիդոն ծովեզերը: Ոչ միայն վաճառականութեամբ՝ այլ և ճարտարապետական արուեստով անուանի էր, մօտ ունենալով Լիբանանու հին և անապատ մայրինները. որոցմէ կարածը և կարող ու կոկոզ կու իաւրէր ինչուան առ Սողոմոն, Աստուծոյ տաճար, և իրեն պալատ շինելու համար: Նաև Տիբրոսի մէջ աւրէր հարստութեամբ. «Եւ իջ
» իանք քո (Տիբրոսի) բնակիչք Սիդոնիացւոց»[1]: Սիդոն կրնար ինքզինքը պաշտպանել այլ. ոչ միայն այլ և ճարտարապետական արուեստով անուանի էր, մօտ ունենալով Լիբանանու հին և անապատ մայրինները. որոցմէ կարածը և կարող ու կոկոզ կու իաւրէր ինչուան առ Սողոմոն, Աստուծոյ տաճար, և իրեն պալատ շինելու համար: Նաև Տիբրոսի մէջ աւրէր հարստութեամբ. «Եւ իջ
» իանք քո (Տիբրոսի) բնակիչք Սիդոնիացւոց»[1]: Սիդոն կրնար ինքզինքը պաշտպանել այլ. ոչ միայն ի ծովէ ամբար բերդով և գոգովը, այլ և ի ցամաքէ. և ինչուան Աստուծոյ ժողովրդեան՝ Իսրայելացւոց՝ ձեռքէն այլ ձողայրեց զինքը. «Եւ
» Ասէր ոչ եւս ... զինակիւնն Սիդոնի»[2]. վասն զի Յեսու Նաւեայ այս (Ասերայ) ցեղին վիճակեր էր զՍիդոն, զոր Մէնճ[3] անուանէին այն ատեն այլ. և իրմէ շատ առաջ՝ Յակոբնահապետին իր Ղեւտացւոյն որդւոյն սահմանները ինչուան հոն կ՚ընդարձակէր. «Ղեւտացւոյն յեզերս ծովու բնա-

1 Եզեկիէլ, իէ:
2 Դատաւ. Ա. 31:
3 Յեսու ժթ. 28:

10477396

» կեացէ... և ձգեսցի մինչև 'ի Սիդոն »[1]: Հրեայք միշտ պատկառանքով և նախանձով կու նայէին անոր գոռոզութեանը ու զօրութեանը վրայ և կու ապառնային մարգարէից բերնով (Եզեկիէլ և Եսայի). և ինչուան ջնջուին՝ որուն առաջին իշխողն եղաւ՝ իրեն դէմ կ'ուզէին գրգռել. « Յամօթ » լեր, Սիդոն, ասէ ծով »[2]: Այսպէս ծովն քաղաքին, քաղաքն ծովուն սասեելով և իշխելով, Սիդոն կրցաւ հազարով տարիներ պերճաբար կանգնիլ իր բարձրաւանդակին վրայ, լցուիլ ծովու և ցամաքի վաճառօք, և անոնց արդասեօքը յոլհանալ և շինանալ, նման ուրիշ մեծահարուստ շահատան քաղաքաց, որոց նման այլ զեղծման և անիծից տեղ մը գարձաւ: Մինչև ինքնին Տէրն ծովու և ցամաքի և Աստուածն մեր, իր մարգիոներն անօրէնութեան առեն՝ ոտքով կոխելով անոր սահմանները, և վարդապետութեանը մէջ ուրիշ գոռոզ քաղաքներ խրատեելով կ'ըսէր. « Եթէ 'ի » Տիւրոս և 'ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն » որ 'ի ձեզ եղեն՝ վաղուց ևս արդեօք խորգով և » մոխրով ապաշխարեալ էր »[3]: Բայց Թէոդա նոյն երկրպագելի ոտքերն էին՝ որ ապատեցին զՍիդոն հնամեայ մէջ ծածկուելէն:

Արդարև նախախնամեալ քաղաքաց և տեղեացն մէկն կ'երևի ինծի Սիդոն, և (ոչ միայն Փիլեայ, այլ) սորա համար է որ չեմ կրնար շա-

1 Մնուանդք խթ, 13: — Կ'ըսեն թէ այս Զաբուղոն նահապետս՝ և Սոփոնիա մարգարէն՝ Թաղուած են 'ի Սիդոն: Քաղքին մօտ քարաբլուր մը կայ շատ գերեզմաններ փորուած են, որոց մէկը հին փիւնիկեցի Թագաւորի մը՝ յամին 1855 բերին 'ի Բարիզ:

2 Եսայի, իգ:

3 Մատթ. ժԱ, 21:

10477396

ասվ հեռանալ անկէ. զոր ոչ Թոռունք Յակոբայ, ոչ Յեսու և ոչ Թագաւորք Հրէից կրցան նուաճել. Նաբուքոդոնոսոր 13 տարի աշխատեալով երբ չկրցաւ տիրել Տիւրոսի, անոր հետ Թողուց Մինդոն այլ. մեծն Ալէքսանդր՝ քառապոյն քան զԲեելցւոց քառատոյն՝ առաւ քանդեց ամայացուց զԾուր, բայց չդպաւ Ծայդանի. գոռոզ դուռտրը՝ ասպի և աչեաց մէջ խղդեց, զմայրը չսեց չինեց, դարձընելով անոր իր հրաժարած և մշակ դարձած Թագաւորը (Աբդոլոնիմ): Իրմէ եալքը Յունաց, Հռովմայեցւոց, Արաբացւոց և Թուրքաց ձեռքէն անցնելով՝ խաչակրաց աստն այլ դեռ չէն քակած ի՛ր, եղեւնափայտէ պալատներով. և երբ ատոնց ձեռքն ընկաւ՝ (յամին 1111) եւ ստիքիոս Կառնիէ անուամբ Փռանկ ասպետ մը տրուեցաւ, ուսկից անցաւ Իպլինեան տոհմին, ինչպէս առաջ ըսի. և Թէ ատոնց ատեն և Թէ վերջը, Թէ և շատ փոփոխութիւն կրեց, բայց միշտ բաւական քանուկ մնաց. ինչպէս ինչուան հիմայ այլ՝ Դամասկոսի հետ վաճառականութեամբ բաւական չէն ու բազմամարդ է:

Դ

Ահա այս քաղաքիս և անոր երկրին սկիզբն եկաւ Յիմի. որոյ գալուան Թէ և՛ ի սկզբան շնորհաւոր եղաւ, բայց քիչ ատենէն Սիգան իր սկզնակ այլ բազմաց այլ սպառնալ եղաւ: Շատ տարի չէր (1250) որ այլազգիք կոխեր և աւերեր էին զանիկա, երբ Յիմէայ գալուն սկսաւ նոր ոգի առնուլ և ծաղկիլ. վասն զի մէկ կողմէն ատոր հայրն՝ Թագաւորն Հայոց Հեթում՝ անոր պաշտպան կենար և գանձերովը կու Ճոխացընէր. ուրիշ կողմէ՝ անոնկոսալ բարեբաղդութեամբ՝ աւելի մեծ տղայ մեծ Թագաւոր մը եկաւ օգնական Սիգանի,

10477396

և աշնուսպէս պատուազիր անոր սիկնոջը. գե-
րազոյն և սիրելագոյն Թագաւորաց Փռանկաց
Սուբէն Լուդվիկ, որ նախ՝ի Կիպրոս եղած աւեն
(1248-9), ծանօթացեր էր ընդ Հեթմոյ: — Ան
աւենուան Թագակրաց մէջ չկայ մէկն քան զՀե-
թում՝ նմանապոյն Լուդվիկի՝ զգօնութեամբ, քա-
ջութեամբ և առաքինութեամբ վարուց: Լուդվիկ
յետ արշաւանացն յԵգիպտոս և պատերազմին
և գերութեանն և ազատելոն, դառնալով Սո-
րոյ կողմերը՝ Ֆիմիի հան եկած տարին (1252),
և յաջորդ տարին այլ անգործ չկենալով, սկսաւ
այն երկրին բոլոր ծովեզերեայ քաղքները նո-
րոգել և ամրացընել. այսպէս կ'ընէր և Սիդոնի
այլ. որոյ տէրն՝ Ցուլիան իր ուրիշ նշխանակցաց
նման՝ պատիւ կու սեպէր անանկ մեծ Թագաւորէ
մը օգնութիւն և պաշտպանութիւն գտնելը: Հոս
անտարակոյս իր նորահարսն սիկին այլ՝ Ֆիմի՝
պատուեց զՍուրբ Թագաւորն Փռանկաց և անոր
զգեստն՝ որ իր սկեսրին անուամբ Մարգարիտա
կոչուէր: Երկու տարի անոր այցելութեամբը՝
գտաւ իրեն նոր հայր մը. կրցաւ քննել ու գնահել
այն աքանչելի անձին վրայ՝ ինչ որ իր հօրը և մօր
Չատելի վրայ քիչ կամ շատ տեսեր էր՝ ի տղայու-
թեանն. և ինքն դեռ դալար և կակուղ հասակաւ
և սրտով՝ կու տպաւորէր ի հոգին՝ անոր ընաւոր
ընաւոր առաքինութեանց կերպարանքը. և ան-
շուշտ անոր իմաստութենէն սեբլի կու զարմա-
նար բարեպաշտութեանը վրայ, որ ուր այլ ըզ-
լար՝ անխափան իր աւօթքները և կանոնական
ժամերը կատարէր: Թերևս տեսաւ այլ Սուրբ
Թագաւորին ձեռքը սալմանիկ մը, որ Յեգիպտո-
սի քանտին մէջ՝ բոլոր տառապանքներէն և գրքե-
րէն մեկհատիկ տառապանք միայեր էր, և անով
իր գերութիւնը կու մխիթարէր. Թերևս անկէ
շարժեալ և ինքն դիւրազգած սիկին Ֆիմի՝ երբ

10477396

արամուԹեան հալուածներն առաւ՝ նոյնպիսի վախԹատրանք մը ինդրեց, և ընկալաւ իր Բաղիայէն՝ Էչմէծ Յեսէին իր հօրեղբօրը: Ո՞վ գիտէ, քանի՞ քանի՞ անգամ Սիդոնի ապարանից եկեղեցւոյն կամ մատրան մէջ՝ առաջը ծիրանաւոր ալքայլին հետ ծիրանածին աւկինն Ֆիմի՝ ի ծունկ եկած՝ Աստուծոյ երկրին վրայ կատարած ամենէն ահեղ ողհրաշ խորհրդեան (պատարագի) առջև, հրաՀեւաալ արտեղնին կու բարձրացընէին յերկինից յերկինս:...

Փափագելի էր մեզի այլ հինայ հեռուանց այսպիսի հանդիսից մէջ գտուիլ յերկար. բայց առաջը և բարի Թագաւորն՝ յերկար չէր կենար մէկ տեղ մը. անդադար մէկ մը հոս, մէկ մ՚ի Տիւրոս կու փուԹար, անկէ յԱքքեա և՛ի Յոպպէ: Այս եաքի քալաքս եղած առեներ՝ յամին 1253, գոյժ հասաւ իրեն, Թէ Թշնամիք կու ապառնան Սիդոնի. Սիդոն պաշարուեր է, Սիդոն առնուեր է. արիւն և կրակ կու լափեն զՍիդոն:... Արդեօք ինչ եղաւ մատուցաւ բամբիշն. ոչ վհատաւ, ոչ ամրացաւ Ֆիմի. և եԹէ առաջ և հոգի չհասան այլ իրեն, հապա վախն ու գուԹն ինչքիր չեն հասցըներ: — ՓուԹա՛, վազէ, առաջը Թագաւոր, գուչէ հանդիսաւ ու հալածեա այն անօրէնները՝ որ քու խակ դեռ նոր դրած շինուԹեան քարերդ կու քանդեն... Թո՛ղ հինայ անոր հօրաքրոջը ապարանքը (Յոպպէի կոմսուհւոյն), և փուԹա՛ զինքն ազատելու. անոր Թշնամիքն՝ քու այլ Թշնամիքդ են. և Թերևս աւելի քուկդ՝ քան Թէ անոր. կարծեմ Թէ քու վրէժդ կ՚ուզեն անկէ առնուլ. և վախանակ քայ հաւուդ՝ ակար վաւեկի մը հետ կու զարնուին:

Յիրաւի Թշնամեաց այս արշաւանքս կերպով մը Ս. Լուդվիկի համար էր. և կերպով մը Լուդվիկ պարտական էր պաշտպանուԹեան Սիդոնի և

10477396

անոր ախրոջ ոբ ակինոջը (Ֆիլեայ)։ Վասն զի պէտք է գիտնաս, Հայկակ, որ երբ Ս. Թագաւորն պերսուԹենէն դարձաւ՝ հաշտուԹեան գաղինք գնելով զինքը գերոյ Եգիպտոսի սուլտանին հետ, (որ արևելեան քրիստոնէից ամենէն մեծ և ահաւոր Թշնամին էր), ուրիշ այլազգի իշխանք և սուլտանն Հալէպի և Դամասկոսի՝ նախ ամբեցան. վերջը այս եսքինա՝ սկսաւ գաղտուկ դրդել զՀուդվիկ՝ որ միաբանի իրեն և քրիստոնեայ իշխանաց հետ, ոբ Եգիպտոսի սուլտանին դէմ ելլեն։ Ս. Թագաւորն՝ Թէ և չիպտուերազմիր՝ բայց քրիստոնէից երկիրները կ'ամրացընէ. իսկ ուրիշ և իրեն աւելի մօտիկ կողմեն՝ Թագաւորն Հայոց՝ ԹաԹարաց հետ բանագնաց կ'ըլլայ. արդէն անոր եղբայրն Ս. Թադէոս գունդատապել դարձեր էր մեծ զանին քովէն, և հիմայ ինքն Հեթում կոչ պատրաստուեր էրԹալու, և իրեն ոբ քրիստոնէից օգնական բերելու ԹաԹարաց անդիմանալի զօրուԹիւնը, որոյ առաջին հարուածը՝ այն քրիստոնէից մօտ տեղուանքը՝ ինքն Հալէպի սուլտանն պիտի առնուր։

Արդ երբ յուսահատեցաւ նա Ս. Թագաւորը հրապուրելէն՝ ոխացաւ անոր, և ինչպէս ամեն վատ կ'ընէ՝ դարձաւ իր հրապուրածին դէմ, ոբ գայթընէլ չանայ զԵգիպտոսի սուլտանն այլ, որոյ դէմ կ'ուզէր ինքն էրԹալ։ Երկոբ անիրաւքն այլ գան զիրար. բայց Մէլէք-էլ-Աշրաֆ-Մուսա

(Մարայ ստելտանն) աւելի խոստապահ կամ ա-
ւելի խորամանկ էր, տեղէն չշարժեցաւ, սակայն
պատրաստակ հաւանութիւն տուաւ ընկերին. այն
առեն նայար ձայն տուաւ իր սահմանաց մէջ և
մօտերը բնակող Թիւրքմէնից. ու երբև իր երկու
Թշնամի բարեպաշտ Թագաւորաց վրէժը մեկէն
առնուլ ուզելով՝ յանկարծակի վազեց Սիդոնի
վրայ, որ Դամասկոսէ (Շամ) հազիւ մէկ երկու
աւուր ճամբայ հեռու է, իսկ 'ի Յոպպէէ (Եա-
ֆա), յԱնտիոքայ և 'ի Սոյ, ուր զօրաւոր էշ-
խանքն քրիստոնէից՝ Լուդվիկ, Հենթում և Պե-
մունդ գտուէին՝ շատ աւելի հեռու:

Անակնկալ և ահաւոր եղաւ ասպատակն ու
աւերսին. Սիդոն դեռ բաւական ամրութիւն չու-
նէր. կոխան եղաւ Թշնամեաց, որք անոր ցամա-
քային բերդն այլ առին աւրեցին. վազեցին նաև
ծովային բերդին վրայ, ուր անշուշտ ապաւիներ
էր և տիկինն Ֆիմի. բայց հոս՝ ծովէն ամբջաւ և
ջամբջուց պՍիդոն, հապա մանուանդ յիշեց և
կատարեց իր հին խօսքը. «Ո՞չ երկնեցի և ո՞չ ծնայ
» և ո՞չ անուցի երիտասարդս, և ո՞չ բարձրացուցի
» կուսանս»[1]. որոց մէջ հիմայ բարձրագոյն բազ-
մած դեռ կուսապէտ տիկինն Սիդոնի, ծովուն ա-
լիքներէն աւելի՝ աղօթիւքը կու պաշտպաններ բեր-
դին: Յետ քաշուեցան արիւնարբու և աւերա-
ծու Թշնամիքն, բայց չարաչար նշաններ Թողլով
իրենց գազանութեանը. 800 հոգի սրակոտոր ե-
ղած սփռած էին Սիդոնի մէջ և ձամբուն վրայ,
400 հոգի այլ երկաթի գարնուած և գերի վա-
րած[2], շատ շէնքեր այլ աւերած:

Առնց մէջ չեմ տարակուսիր որ Ֆիմի իրեն

1 Եսայի, ԻԳ:

2 Ըստ ոմանց 2000 գերի այլ Լարդեցին քշելու ա-
տեններին:

պալատէն աւելի կու սիրէր մատուռ մը՝ քալ-
քին արևելեան դրան քովերը՝ որ Եաման ձամ-
բուն վրայ կու նայի. մատուռ մը՝ զոր նախնի
քրիստոնէից բարեպաշտութենն կանգներ և գա-
րուց դար աւանդութեամբ պահէր ու պատուէր.
մատուռ մը՝ որ և հիմայ այլ կեցած պատուի,
Թէ և փոփոխեալ՝ ի մզկիթ, Նէպոլէ-Սէդոն կո-
չուած: Ահա չէնքս այն տեղն է շինուած՝ ուր 1200
տարի յառաջ քան զՔիմի՝ իրեն համաեռ փիւ-
նիկեցի մը, մայր մը, մեծ արտասուալ սիրտ մը՝ կե-
ցեր կու լար ու կանչէր, կ'ուզէր բժշկել իր արտին
սիրուն կտորը, բարեչար տանջուած ու լկտուած
աղջիկը. — շատերն լսեցին ձայնն ու լացը, և ոչ
ոք կրցաւ օգնել. և միայն կրցողն այլ չուզեց: Ա-
րարչին ամենեցուն՝ այն աւուն հոն մարդկօրէն
քալելով կ'անցնէր. լսեց ու չլսելու զարկաւ...
Բայց ո՛վ զօրութիւն հաւատոց, ո՛վ մեծութիւն
սիրոյ, դու գրեթէ աստուածային հնարից այլ
յաղթեցիր: Աստի կինն ձանչցաւ զԲրիսատոս. և
պահանջեց ինչ որ իր ցաւոց և անոր ապրումնե-
թեանը կու վայլէր. «Ողորմեայ ինձ, որդի Դաւ-
» Թի, դուստր իմ չարաչար այսահարի»[1]. Բրիս-
տոս լռութեամբ կ'երթար. կինն եռանդն աղջկան
ապաքանելով կ'արտբերար. Բրիսատոսի աշակերտ-
նեբն կ'ապաչէին, կինն առաջ անցնելով գետին
կ'ընկնար, «երկիր պապանէր նմա և ասէր. Տէր,
» օգնեա ինձ»: — Բրիսատոս կ'ըսէր Թէ ինչքն Հը-
րէից բժշկութեան համար զրկուած է, ոչ Ա-
ստուծոյ ընտրած որդիք սեպուած էին, և Թէ
որդւոց պատրաստուած հացը՝ չէր վայլեր շու-
ներուս տալ: — «Ա՛յո Տէր», խոստովանեցաւ
մեծահամբեր և մեծխնամ կինն, այո Տէր, բայց
«եւ շունք՝ ի փշրանաց սեղանոյ մանկանցն կե-

[1] Մատթ. ԺԵ:

10477396

» բակլին »: — Ո՛հ, նեւրէ մեզի այլ ըսելու, ով Տէր մեր, որ կարծեմ հոս քու գթութեանդ սաեւելն գժար եկաւ համբերելն, քան թէ այն առաքեալ կնկան՝ իր ցաւոցը. և այլ չէիր կրնար ուշանալ կանչելու, « Ո՛վ կին դու, մեծ են հա- » ւատք քո. եղիցի քեզ որպէս և կամիս: Եւ » բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու »: — Ահա այս գերապաքանչ գործովալի տեսարանին տէրն էր, ուր իսկապէս և մարմնապէս կեցաւ Աստուածն մեր Քրիստոս, և ուր կինն Փիւնիկ Աստրի՝ ընկաւ իր ոտքը. այս տեղս էր կանգնած այն մատուռն և հիմակու մզկիթն, ըստ բարեպաշտ և հաւանելի աւանդութեան. և ուր հաւատացեալոց հետ ատեպ այցելութեան և աղօթից կու գար՝ Փիւնիկին հաւատոց և ցուցց ժառանգն Յիմի. և հիմայ այլ անշուշտ իր քաղքին և ժողովրդեան կատարածոց վրայ կատրտուելով՝ մայրօրէն ցաւակցութեամբ սրտանց կ'աղաղակէր առ Քրիստն, « Տէր, օգնեա՛ ինձ »:

Ե

Հոս մարդասէր Տէրն մեր յօգնութիւն կամ 'ի միխթարութիւն հատուց զԼուդվիկ, որ գոնէ աւելի մեծ վտանգէ ազատեց զՍիդոն. անշուշտ իր գալատեանը կատկածով՝ փութացեր փախեր էին Թշնամիքն 'ի Պանէաս (կամ 'ի Կեսարիա Փիլիպպեայ, ըստ աւետարանին). ուր գոնդ մը քաջաց իւսերեց հալածեց զանոնք և քաղաքը առաւ: Իսկ ինքն կու շտապէր գալ 'ի Սիդոն. որոյ հարուածէն եռև քանի մ'օր անցեր էր, և դեռ անթաղ մնացեր էին սպանեալքն. և արդէն սկսեր էին գերեզմանի մէջ առնելու կերպարանքին փոխուիլ: Զկրցաւ սուրբ Թագաւորն արտասուքը զանել. և նախ իր հետն եղող Ս. Պատին նախ-

բանկին՝ գերեզմանի երկիր մը օրհնել տուաւ, վերջը գարձաւ իրեններուն՝ հրամեց որ Թագլեն։ Ան՝ որ աւելի Թշնամի ջարդել փափագէին քան Թէ ընտանի Թագել, և իրենց առաջնորդին սիրը որ չունէին, պժգացին զղուեցան, երեանին յետ գարձուցին. վասք քան զՄարթա՝ ըսելով, Թէ «Հոտեալ էցէ, քանզի չորեքօրեայ է»։ Ան ատեն Լուդվիկ իր սիրոյ և արբունեան պատանէին գործոց մէկն հոս ցուցուց. ձիէն վար ցատքեց և առջի հանգիպած դիակը վերուց շալկեց Թագաւորական Թիկանոցը վրայ, և իբրև խուրձ մը գեղնած ցորենոյ պարկին մէջ դնելով՝ տարաւ ինչուան գերեզմանոցը, իրմէ փոսին մէջ, Թագլեց, ծածկեց, կնքեց կաթիլ մ՝արտասուք։ Հինգ օր այսպէս աշխատեցաւ մեռելակրութեան. ոչ միայն առանց գանգատի, այլ նահատակաց մարմին սիրելով՝ կրելու առեն ծոմ կուպահէր և յարգութեամբ կ՝ինչեցներ զանոնք իրենց քնարանը։ Այս օրինակէս զարնուած զօրքն և վարձկանք՝ հեռացան իրենց սիրոջը։ Ծուխծին Սիդոնի բարձրացեալ երիտասարդքն և կուսանքն՝ վերջապէս հանդչեցան՝ ի հայրենի հող մահուն։

Ուրիշ գեղեցիկ և համանման գործ մ՝այլ ըրաւ այն մեծ և եղբայրասէր Թագաւորն՝ ի Սիդոն. առնելով որ իր նորոգութիւններն նորէն աւերուեր են, քաջալերեցաւ աւելի ամուր շինելու. և հոս այլ իրեններուն օրինակ տալով ժրաջանութեան՝ հասարակ մշակի պէս սկսաւ կիր ու ծեփ շաղուել և քարերը կրել, պատերը հիւսել։

Ան ձմեռուան (1253-4) գրեթէ մեծ մասն հոս՝ ի Սիդոն անցուց Լուդվիկ. և գեռ կ՝ուզէր կենալ և շինքերը պատել, երբ իրեն այլ յանկարծ հասաւ արտմագին հարուած մը։ Որ մը յանկարծ Յորդոյ երեք բարեկամները պէս եկան իրեն՝ իր հաստատանդային, Պատին նուիրեալ

10477396

և Տիւրոսի արքեպիսկոպոսն. իմացուցին զմահն իւր մօրը, Պլանշ դչխոյի, զոր և Թագաւորութեան նը առեալ դրեր էր, ամվրայանէ աւելն կոտ սիրէր և յարգէր: Խիստ սաստիկ ցաւ զգաց, բայց արքունեամբը ծածկեց. և մէկէն ընկաւ իր մարդոցը մէջ՝ ուր լսեց այս գոյժը, գոհացաւ զԱստուծոյ՝ որ այնքան առեն իրեն պարգևեր էր այնպիսի մայր մը. և հանգստեան պաշտօն ընել տալէն եառ՝ փութացաւ ժողովել մարդիկը, և ուրիշ առենի Թողլով տուրք Երկրին ազատութեան հոգը, տուաւ վերջի ոլջոյնը իր տանջական ու տիկնոջ, և ամենայն քրիստոնեայ եչխանաց և բազմութեան հաւատացեալոց. որք եւէն գացին մինչև Ա.քքեա, և մեծ արտմութեամբ յուղարկեցին նաւով՝ ի Կիպրոս, ուսկից նաւեց գարձաւ՝ ի Գալղիա:

Ա յս դիպուածս համառօտիւ յիշէ մեր ժամանակագիրն (Մաղաքիա) զբ. (1253-4) «Ի ս ա ֆրանցն (Լայզ կամ Լուիզ) վերատին չինեաց ըվ» Սայատայ և գնաց յաշխարհ իւր». ինչպէս յառաջ այլ Յոպպէի համար յիշէ. «զա (1252-3). «Ի ս ֆրանցն չինեաց զձաֆն»:—Հիմակուան Սայատյի քարձրագոյն մասին վրայ կիսաւեր մեծ աշտարակ մը կայ. ճնացորդ չինուածոց կամ նոթութեանց Ս. Լուդվիկի:

Պէտք չէ տարակուսիլ՝ որ Լուդվիկի երթալուն վրայ ամենէն աւելի ցաւոլաց մէկն եղաւ Ֆիմի, որոյ գլուխը սրտին այս այլ կակուղ հարուած մ'էր. և այնչափ աւելի էր հոգն ու վախն՝ որչափ որ նոյն տարին իր հայրն Հեթում թագաւոր այլ եւս գնաց երկար Համբով՝ ի Թաթարստան. ուսկից ինչուան որ իր տեղը գարձաւ դարձեալ՝ տարիներ անցան: Բայց այն քանի մը տարիները, (և մինչև՝ ի 1260 տարին) անվտանգ կ'երեւին. վասն զի՝ ի Հայս կառավար և պահա-

պան կեցեր էր Ֆիմիի պատն, մեծախեղք Թագաւորայրն Կոստանդին, իր մեկայլ կարիճ որդւօքն. ուրիշ կողմանէ այլ Թաթարաց գալուն վախն կու զսպէր զայլազգիս՝ որ քրիստոնէից աւելի մեծ չհասցընեն, որպէս զի իրենք այլ աւելի մեծ չկրեն:

Զ

Ա յս տարիներուս մէջ ծլեցաւ ծաղկեցաւ Ֆիմի իր զաւակօքը, որ երեք միայն յիշուին. երկու մանչ, զորս Յուլիան իր հօր և հօրեղբօր անուամբ կոչեց, և մէկ աղջիկ՝ զոր իր մօրն անուամբը: Անոց անուանքն այլ իրենց մօրը հետ վայելչաբար և փառաքշաբար նշանակուած կու գանեմ արքայեղբօր Յովհաննու ձեռօք, իր ընծայած նախայիշեալ գրքին մէջ. ահաւասիկ.

« Զիմաստութեամբ լցեալն և զամենայն գարեձևու-
» Թեամբ զարդարեալն, զսիրողն Աստուծոյ և զսպասա-
» ւորն ամենայն ծառայից նորա, զարքածին լամբրիշն Ֆի-
» մի, և զաստուածապարգև զաւական նորին՝ զՊօլիտն
» և զՃոան և զՀեզանազն Մարկրոն[1], յիշեցէք ի Քրիս-
» տոս Աստուած ». և այլն:

Մարկրուն հեզանազ դատրիկն Ֆիմեայ՝ հարս գընաց Կոստանդնի կամ Կիայ՝ Ժիպլէի տէրոջ, որ էր հինն Գէբաղ Ս. գրոց կամ Բիբլոս Յունաց, հիմայ Ճէպիլէ կամ Ճէպայիլ կոչուած [2], որ այն առեն Իպ-

1 Մանուն Մարգարիտ անուան փաղաքշականն է:

2 Պերութէն վեց եօթն ժամ հեռու դէպ ի հիւսիս, ծովեզերքը: — Այս կի՝ Մարկրուն էրիկն՝ յամին 1282 հրամանաւ Տաճարականաց կարգապետին փորձեց առնուլ զՏրիպօլիս քաղաքը, և անոնց մատնութեամբը չկըրցաւ առնուլ. և գրեց այս դիպուածին պատմութիւնը՝ որ կու պահուի ինչհաւան հիմա:

10477396

լինայ պէս փուանկ տէրութիւն մ՚էր. այն տեղացանց մէկուն դուստրը կին առաւ Պալիան՝ անդրանիկն Ֆիմիի, և երկու աղջիկ ունեցաւ. որոց մէկն անուանեց իր սիրելի մօրն անուամբ Ֆէմէ, որ յետոյ եղաւ կին Հէրմոյ Մարսելացւոյ. (սա էր Թոռն Հեթմոյ՝ եղբօր Ս. Ներսիսի Լամբրոնացւոյ):

Աւելորդ է ինձի խօսքով խորհրդածելն՝ որ Ֆիմի իրեն մեծ հոգ ըրեր էր իր զաւակաց (Թերևս և Թոռանց) կրթութիւնը, և կու ջանար զանոնք այլ իրեն պէս զարդարել ազնուական բարէյաղութեամբ. իրեն պէս ընել սիրուղս Աստուծոյ և ծառայից նորա: Այս բաներս Թէ և հօրեղբօր մը բերնով և ձեռքով գրուած են իրեն համար, սակայն գրողին սուրբ և բարձր աստիճանն և վարքն վկայ՝ որ Ճշմարտութեամբ պատշաճած են անոր. և կու յայտնեն՝ որ այն առենուան բազմաթիւ մանր տէրութեանց տիկնայց մէջ առաջինները մէկն էր (և մեզի ծանօթից մէջ առաջինն) Ֆիմի, իմաստութեամբ և բարեպաշտութեամբ արդարև լցեալ և զարդարեալ: Եւ ասոնք էին մեծ գէնք և դեղք հարուածոց և տրտմութեան դիւրազգած և վթաստեր սրտին. իր ծնողաց և Ս. Լուդվիկի օրինակներն՝ իրեն կենդանի հայելի մ՚էին նմանուելու. և Թերևս անոնց այլ՝ ամեն բանէ աւելի՝ հանդիպած փորձանքներն և վիշտերն եղան մեծ առիթք բարեպաշտութեան և սրբութեան: Ա. մենուն, բայց աւելի իշխանազանց և մեծատանց համար հարկաւոր կու ձանչնայ մեր սուրբ կրօնքըն՝ այսպիսի հարուածներ, որ գիրենք ցնցելով՝ քակեն աշխարհիս ունայնութեանց և պաճուճանացն կպչուն փափկութիւններէն, և լաւագոյն կենաց և աշխարհի ատյգ և անանց բարեացը փափաքեցընեն: Գուցէ նուազ կ՚ըլլար ի Զապէլ, ի Հեթում, ի Լուդվիկ և ի մերս Ֆիմի՝ այս սուրբ

փափագս, եթէ վշտերնին այլ պակաս ըլլային: Ուրեմն անվախ բնտրեցէք քննեցէք թէ ուրիշ ինչ փորձանք ու ցաւեր եկան ատոր. մանաւանդ թէ Թոլուենք որ գան, և այլ աւելի փորեն խորցընեն, բարակցընեն և զարդարեն այն ազնիւ սիրտը:

Է

Ֆիմի քանի մը տարի հանգստեան միջոցը՝ մեծաժեծ քաղաքական դիպուածք եղան յարևելս. հայրն՝ Հեթում՝ գարձաւ 'ի Թաթարաց. մեծ (Մանգու) խաքանին եղբայրը՝ ահաւոր Հուլաղու զանը՝ բիւրաւոր զօրօք եառնէն բերելով, որ քանի մը տարուան մէջ՝ քրիստոնէից նեղուելուն տուող բանաւորները և տէրութիւնները ջնջեց. նախ Հաշիշի կամ Աւծազակաց ըսուած բանաւորը. յետոյ Պաղտատու հին և մեծ ամիրապետութիւնը (1258). վերջը (1259-60) Սիդոնը աւեր և արիւն գարձընուլ Հալպայ և Շամայ տէրտանը (Մէլէք-էլ-Նասըր), բռնեց և գերի ղրկեց 'ի Պարսկաստան. ու անկէ նուաճած երկիրները գարձուց տուաւ Հեթումի և ատոր փեսային՝ Անտիոքայ իշխանին: Մնաց միայն Եգիպտոսի զօրաւոր սուլտանն. ատոր վրայ այլ կու պատրաստէր յարձակելու՝ Հայոց և Լատինաց օգնականութեամբ, երբ հասաւ իր եղբօր (Մանգու զանի) մահուան լուրն, ու փութացաւ Հուլաղու դառնալ յարևելս մեծ զանին ընտրութեան համար. — արևմտեան կոլմերուն (Ատրուց երկիրը) պահապան թողլով զօրօք՝ Քիթբուղա կամ Քէթուպուղա-նոյին զօրավարը: Ատոր համար մեր Հեթում Պատմիչն կ'ըսէ թէ, Քրիստոսի երկրպագութեան եկով մոգուց ցեղէն էր. և բարի ու քրիստոնէական սէր ըլլալով՝ սկսաւ խաղաղութեամբ կառավա-

ըեւ իրեն յանձնուած կոչմերը [1]։ Դժբաղդաբար քրիստոնէից կոչմէն եղած անխոհեմութիւն մը՝ մեծ շփոթութեան եւ վնասու պատճառ եղաւ, եւ նոր ցաւոց՝ մեր Սիգոնի տիկնոջ։ Վասն զի այս առաքութեան երկրին մէկ մասն՝ որ ինչպէս առաջ յիշեցի, Պէլֆորդ կ'ըսուէր [2], Շամայ երկրին սահմանակից էր, և բնակչաց մէկ մասն այլ թուրք էին, որք հիմայ զապուած 'ի թաթարաց՝ առնց տուրք կու տային. և անշուշտ ուր տարի առաջ Սիգոնի վրայ ասպատակողաց ընկեր էին։ Հիմայ Սիգոնացի և Պէլֆորդեցի տաքգլուխ մարդկանց՝ մէ ոմանք՝ կամ հին վրէժն առնելու համար, կամ նոր առիթ մը գտնելով՝ այս թուրքաց գեղերն ու արտերը կոխեցին, աւրեցին, ոչ առանց ապտակութեան երեսաց, որոց մէկ մասն այլ իրենց տուածով և անասունը գերի քաշեցին։ Մօտերը Հիսարը թաթարաց պզտիկ գունդ մը կար Քիլըճ-Ալի-Օղլուի քեհոլդուոյն կամ եղբօրորդուոյն հրամանին տակ. մէկէն վազեց այս կարիճս Սիգոնացոց եաւէն, պատուիրելով որ գերին և աւարը թողուն. անոնք իրենց անշահ յաղթութեան և աւարներուն վայելմամբ տաքցած և գինովցած, աւելի մեծ յանդգնութեամբ և կուրութեամբ թաթարաց այլ դէմ գարձան, և քանի մը հոգի սպաննեցին. անոնց հետ մէկտեղ կարիճ առաջ նորդնին այլ։

Դեռ թաթարաց բարկութեան և վրէժխնդրութեան փորձն առած չէին քրիստոնեայք. Քիլըճ-Ալի՝ հոս ոչ անարդար իրաւամբք քալեց կո-

1 Քէրայիդ թաթարաց ցեղէն էր, որոց մէջ շատոնց մեծ էր քրիստոնէութիւն։ — Տ'Ոհսոն։

2 Յանուն բերդաւանին, որ հիմայ Թուխ Քի-լըճ-է-ը ըէ-փէյֆ, Լիբանան լերանց հարաւային ստորոտը, Նահր-էլ-Լիտանի (Լէոնդ) գետոյն եզերքը։

խեց աբրեց Սիդոնացւոց սահմաններըը, և նոյն
ևսկ քաղաքն այլ առաւ. նորաշէն պարսպաց մեծ
մասը քակեց, ցամաքին բերդը վերաց, դէպ ՚ի ծո-
վային բերդը դիմողներէն մեկ քանին այլ սպան-
նեց. բայց այս բերդս ծովով շրջապատած և պաշտ-
պանած բլլալով՝ չկրցաւ առնուլ: Հոն գարձեալ
ապաստանած սիկիլին Ֆիմի՝ որ արդէն փախած և
ծառին բարձրագոյն ճղերուն մէջ պահուըտած
Թագնոյ պէս կու սպրտէր սպրտափէր. և Թերևս
աղատելու հնարք չէր տեսներ, Թէ որ անակն-
կալ դիպուածք մը չհետացներ զնկեց զԹաղԹայս:

Հուդայոլուի հետանալը և Թոլած ԹաղԹարաց
քիչուորութիւնը լսելով Եգիպտոսի սուլտանն
Քուդդուզ՝ յարձակեցաւ ՚ի Պաղեստին. Քութ-
բուղա՝ ցրուած զօրքերը ժողվելով՝ դէմն ելաւ.
հասան իրարու՝ Նապլուսայ (Սամարիոյ) մօտ
Ային-Ճալուդ (Գղբիւր Գողիադայ) ըսուած տե-
ղը. սաստիկ ելաւ պատերազմին. Քութբուզա մեծ
քաջութեամբ կռուեցաւ և սակի մեծ կարճու-
թեամբ մեռաւ: ԹաղԹարնեբն՝ որ առաջի անգամ
էր որ կու յաղԹուէին, հալածեցան Սաորաց
երկրէն դուրս, որուն սիրեցին Եգիպտացիք, բաց
՚ի քանի մը ծովեզերեայ քաղաքներէ, որոց մէկն
այլ էր կիսաւեր դԺբալդ Սիդոն:

Ասոր սէրն Յուլիան՝ որ տասն տարի չափած՝
երկու երեք անգամ սեղոյն սահիլը տեսաւ,
հինայ այլ երկու կողմէն մեծ վտանգի մէջ գտաւ-
լով՝ Թէ յԵգիպտացւոց և Թէ ՚ի ԹաղԹարաց, և
նորէն ոչ Ս. Լուդվիկի մօտաւոր գաղտեան յոյս
ունենալով, և ոչ աներոյքը (Հեթմոյ), առանց ա-
սոր խորհուրդ հարցնելոյ՝ յուսահատական հր-
նարք մը մտածեց, որուշեց, կատարեց: Սիդոնն
այլ Պէլֆորդն այլ իրենց սահմաններովը ծախեց
Տաճարական ասպետաց. «Ձուլիան Սայտայու,
» սէրն՝ ծախեաց Դամփլուն զՍայիտէն և զՊիա-

» Ֆորդն », կ'ըսէ մեր ժամանակագիրն : Այս քա-
նիս վրայ շատ դժարեցաւ Թագաւորն Հեթում՝
թէ Յուլիանոս և թէ անոր երկիրը գնող ատպե-
ատց, ոչք կերպով մը իր գաւեր իրաւանց այլ
կ'անիրաւէին : Անշուշտ Հեթում իրաւունք ու-
նէր, քայց Յուլիան այլ իր գլխին Հարը հոգալու
կու ատխպաւէր. մանաւանդ որ ուրիշ իրեն նման-
ներէն այլ կային նոյնպէս մոտածոլք : Իրմէ քիչ
մը վերջը (1261) իր ազգակից Պալեան՝ աէրն
Սրատուֆայ (որ նոյն Փիւնիկիոյ եզերքը եաֆայէ
մօտ ուրիշ ամուր քաղաք մ'է) իր երկիրը ծա-
խեց Հիւրընկալ (Հոսպիտալի) ատպետաց : Քա-
նի մը տարի ետև (1268) Պիպարս Փնտուխտար
սուլտանն Եգիպտոսի առաջ զՊէլֆորդ բերդա-
քաղաքը. նոյն տարին առաջ և զԱնթիոք այլ, ո-
րոյ տիկինն էր քոյրն Ֆիլեայ :

Այս ամեն դիպուածքս մէկմէկ հարուածք և
տուիք էին տրամուԹեան իր սրտին. և մինա-
նդ երկու տարի առաջ (1266) հանդիպած
կակծալին, իր եղբօր՝ Թորոսի՝ սպանուիլն Յե-
դիպտացւոց՝ պատերազմի մէջ, և միւս եղբօր
Լեւոնի (գ) գերուԹիւնը, ու հօրը մեծ տառա-
պանքը՝ ինչուան որ ազատեց զնա : Այս ցաւալի
տարիներուն մէջ՝ Ֆիլի անշուշտ ապաստանած էր
իր հօր ԹագաւորուԹեան երկրին մէջ, և անոր
պահից կ'ըլլար, հետզհետէ կրեալով և լմնանալով
ինչ որ « սեփական է մարդկան, նժգեհուԹիւն և
» պանդխտուԹիւն և փորձանք » : Թէպէտև քիչ
մը վերջը Ծոլոր Կիլիկիոյ և իր արքունի ընտա-
նեաց հետ ուրախացաւ՝ ազատուԹեամբ Լեւոնի
(1268), քայց եղբայրը գանելով՝ գրեԹէ հայրը
կոտւս. վասն զի Հեթում զորդին Թագաւորեցը-
նելով՝ ինքն հրաժարեցաւ ի Թագէ և յաշխար-
հէ, և կրօնաւորելով քինչ առնէ մեռաւ, (28
հոկտեմբ. 1270): Նոյն օրերը հատաւ և Ս. Լուդվի-

կի մաՀաւան լուրն, որ երկու ամսով յառաջ վախ-
ճաներ էր (25 օգոստ.): Ախտէս պրեթէ երկու
Հօր սուգ ու ցաւ մէկտեղ կրեց Ֆիմի: Անոնցմէ
առաջ վախճաներ էին իր Հօրեղբարց մէկ քանին,
և աւելի առաջ (1262) անոնց նահապետական
Հայրն՝ Կոստանդին:

Բայց իր սրտին մերձագոյն և մանուկից անձն,
իր ամուսինն՝ Սիդոնը ծախեէրէն 15 տարի եաև
«Մեռաւ Ճուվլեան, Սայտայոյ տէրն» (1275)
քան ժամանակագրին. այն տարին՝ որ Կիւվլիկիոյ
մէջ սաստիկ սով և մարդամահ այլ եղաւ [1]: Ցու-
վլեան իր տեսած և կրած փորձանքներէն և գուցէ
իր կնոջ և աներոջ բարեպաշտութենէն յորդո-
րեալ՝ կամաւ Թողեր էր իր աշխարհային փա-
քը. նախ Տաճարական առաքելոց կարգը մտնե-
լով, յետոյ Երրորդութեան ըսուած կրօնական
կարգը, յորում և մեռաւ Աքքեա քաղքին մէջ,
իր այրուն սրտին մեծագոյն վէրք և տրտմու-
թեան սաստիկ Թոյլով:

Ը

Ախ վիթ նուաճել կակիծ եղած էր անոր մայ-
րենի սրտին՝ կորուսած իր կրաեր և կայտառ որդե-
կին. ինչ լայն և խոր պատառուածք բացաւ այն
սպնիւ սրտին մէջ՝ տարաժամ և տարադէպ լուր
մը, Թէ քու չաչուռ ու ճօճուն Ճուանդ չկայ...
մարեցաւ անոր լուսաւոր արևսին: Արտարև
ջուլք մարեցին, ընկղմեցին, խեղդեցին զՃուան.
— անոնց մէջ լուացուելուն կամ լողալուն առեն,
Թէ անոնց վրայէն անցնելուն: — Գիտցածնիս այս
է, որ օր մը Ֆիմեայ առջև բերուեցաւ փառեցաւ
Ճուան երկայն Հասակաւը, գեղէն Հանած լու-

1 Պատմագ:

ջանաց շալակի մը պես. — Լութերն՝ որ իր այնքան շնորհքը քաղեր կլլեր էին, անշուշտ մէկ կակուղ և խանաւ շնորհք մ'այլ դեռ Թողեր կամ տուեր էին կերպարանացը. զոր փոխանակ կէս ծածկելու՝ բոլորովին բաց Թողուին գագաթէն վար կախուած քամուած ու մէկ փունջ եղած խարտեաշ գիսակներուն... դեռ ամեն բան լման և նոյն կուտեանքը Ֆիլմի՝ իր ճուանին վրայ. միայն չջարժեէն և իր վիզը չպլլուեէն հաւատաց մայրն՝ որ որդին անշնչացեր... մեռեր է. « Եւ եգել զաղիս նորա »:...

Թողունք այս ժիգալի տեսարանը, որ եթէ արտակարգ է ամեն հանդիսատուի, բնչ պիտի ըլլայ մօր մը արտին և Ֆիլմին պէս մօր մը:... Հապէ ուրեմն կուլանք, շրթունքնիս կուփակենք. հոս՝ արդարև միայն միխիթարանք ու անդորր կըգտնայ ան՝ Ով ամենահնարն է: Իջնէր արդ հիմայ, ան քարի հօրեղբայրը, իջնէր քու Բարձրեբերդիտուրը դիտանոցէդ, և բեր քու Թոռնէիդ այդ Ամենահնարին նեղչնչեալ տուրը պատգամները, բեր քու ձեռագիծ գրքոյկդ, և փորձով Յոլովոլին ու փորձանօքն Յոբայ՝ ափսոսիէ այդ երեսացի արտասուալ սիրտը: Ահաւասիկ մէկ յիշատակարան մ'այլ արքայական Յովհաննու աս Ֆիլմի, նոյն գրոց մէջ, տասնեւաւոր չափով[1]..

Յաստուածային սէրըն հարեալ
Սա՝ որ հըրով նորին վառեալ,
Որ եւ ըզատուս այս ըստացեալ
Բամբիշըն մեծ՝ Ֆիլմի կոչեալ.
Հնթմոյ քաջն նա պատասըր լեալ,
Որ էր ալեաց Հայոց օծեալ.

[1] Որպ անապըսխ տառերն կապեն Յոհաննէսու տէր:

Անցաւոր կայս ծանուցեալ,
Անանց Թագին այն բաղձացեալ.
Նուաքեւտուր տվաւ պըճնեալ
Ի լապտերօք ընդառաջեալ.
Նոր փեսային և հարսնացեալ,
Մըտից դրախտին արժանանալ:
Եղիեզիա տվաւ Թախծեալ
Եղկամիք մատանցս ըզսա տանալ.
Սակս որոյ ի մի գործ սկըսեալ
Փոքր ինչ յայլոց օժանդակեալ:
Սատացուիք վերջոյ եւ ոչք օգտեալ՝
Հայցեմք բարի մասըն մեզ տալ. և այլն:

Ահն տարին որ Ֆիմի այրեցաւ՝ իր աւելի բարձրիչեան քոյրն այլ՝ Զաալեան՝ այրի մնաց մահուամբ քրնձին Անտիոքու՝ ջ Պեմունդի, (1275, մայիս 11), որոյ ալահասակ որդւոյն (ի Պեմունդի) ննամակալ եղաւ ինքն մայրն. և հաւանօրէն 14 տարի եռքը տեսաւ իր և անոր տէրութեան բոլորովին վերջանալը, երբ Կէլաուն կամ Գալիլ Աշրաֆ սուլտանն Եգիպտոսի՝ առաւ զԱնտիոք ու վերուց անկէ քրիստոնէից 200 տարուան պայազատութիւնը: — Իրեք տարի վերջը (1291) մէկայլ Զաալեան այլ (իրենց եղբօր՝ գ Լևոնին գուսարն) տիկնին Տիւրոսի՝ զրկեցաւ իր տիկնոջ Թեռնէն. վասն զի երբ Եգիպտացիք առին զԱքքա՝ քրիստոնէից ամենէն ամուր ապաստանարանը, անոր պաշտպան տապետքն փախան տապանին մէջ Ֆիմեայ հին տապանը, ի ծովային բերդն Սիդոնի. բայց երբ Թշնամիք նաւերով մտեցան անոր, անկէց այլ փախան գնացին ի Կիպրոս: Այս բաներուս ականատես Պատմիչն Հեթում՝ կ'ըսէ. «Աշրաֆ էառ զԱքքա ի քրիստոնէից ձեռաց ի Ռամադան ամսոյ ՌՀԴ (1291) թուականին, ի Մարտի ԻԵ (15) օրն, ի հինգշաբթի օր, ի ժամ երեկոյին, ի ժամ զՄատուտ (Տիւրոս), զՄայեմ (Սիդոն), զՊե-

» բաւԹ. և յայսմ ամի ջնջեցաւ քրիստոնէութիւնն » 'ի Սէհլէն [1]»: Ուրեմն Յուլիանոս և Ֆիմեայ Թողլէն 31 տարի եաև այլ՝ դեռ տապետաց ձեռքն էր Սիգոնի ծովափատ ամրոցն. և այս տարի յետ ուրիշ քալաքաց և բերդից՝ մատնեցաւ այլազգեաց ձեռքը. Թէպէտ և անոր պայազատքն իրենց օտարութեան մէջ այլ պահէին իրենց կորուսած տէրութեան անունը. և ինչուան գրեթէ հարիւր տարի վերջ այլ՝ (1368) կու յիշուի Փիլիպ Իպլենեան տէր Սիգոնի, որ 'ի Կիպրոս բնակէր, և հաւանօրէն Յուլիանոս և Ֆիմեայ տոհմէն էր:

Թշնամիք՝ որ շատ անգամ յարձակեր և վնասուեր էին 'ի Սայատյէ, հիմայ պարապ և անպահպան գտնելով՝ քարերէն և աշտարակները լեցին աւեր վրէժխնդիր, փլցընելով և Թափելով՝ երբեմն զանոնք ծիծաղելով և երբեմն ծեծելով ծովուն ծոցը. որ և մահաձայն մեղմամբ մաս մը ծածկեց, մաս մը ալիքներէն դուրս Թողուց մինչև այսօր, 'ի տեսիլ նաւորդաց յափրանս Փիւնիկիոյ: — Սայատյէ եղաւ վախճան տէրութեան առաջին և հնագոյն ծովամայր քաղաքին, որոյ վերջին գահանիստ տիկինն եղեր էր Ֆիմի:...

Թ

Արդեօք հասաւ իր ակընկալին այն արտաքին պարտադից փլչելուն դիրդմունքն, և աչէկածեալ ծովուն խոխոջալն այն աւերակաց մէջ. արդեօք իր խորացեալ տրտմէն հնչէց արձագանգ մը 'ի պատասխանի ծիւրեալ և ծորեալ Մայդանին ձիւնացը՝ այն անծերանալի ծովուն կոհակացը մէջ: — Եթէ ոչ մնացած և կոծուած ծովուն և Մայ-

1 Սայինքն 'ի ծովեզերեայքն, որ արաբերէն «Հէլ կ'ըսուի:

գանայ՝ ամէն անշուշտ եպածին համբաւն հա-
սաւ հնչեց ու ընկաւ Ֆիմիի ընտրած նոր և յե-
սին ապաստանարանի մը ամրագոյն պարսպաց
ուն:

Այս ապաստանարանս էր զոր շատ թափուր
և անթափք ընտրեցին իրենք մէկ հատիկ ամրոց
մոտ և հոգւոյ՝ ընդդէմ ամէնայն մրրկաց, խուռ-
վութեանց և աշխատութեանց աշխարհի. ուր ոչ
շատ տարի առաջ՝ նոյն ինքն իր Հայրն Հեթում
այլ, յետ 45 տարւոյ երկար և բազմապիսուած
թափառութեանն՝ եկեր էր իր մեծ և յոգնած
մտին յետին ինութիւնը և հանգիստը
գտնելու: — Այս ապաստանարանս էր հաւա-
տարոյց վանք մը՝ զոր բնտռեց, գտաւ և մը-
տաւ Ֆիմի այլ, յետ իր այնքան նժդեհութեանն,
պանդխտութեանն և ֆոլչանոցն. և ոչ այնքան տրրա-
մութեամբ տուաւ իր ծովակոծ Մայդանի ապա-
րանից՝ որչափ ուրախութեամբ տուաւ բոլոր աշ-
խարհիս ծովածուփ կեանց՝ ձեռք բարձոլը, ըսե-
լով. «Ամէնայն վտօսանք ձեր և ալիք ձեր անցին
» 'ի վերայ իմ». և քաշուեցաւ 'ի խորչն խաղա-
ղութեան, լռիկ մրրիկ ապատել ամէնէն վերչի և
ամեն բան վերջացնող դիպուածին. մինչև որ
Ճգնոզական վարուքն « Հանգեաւ 'ի Քրիստոս ան-
» կինն Ֆիմի, կրօնաւորն, քոյրն Լևոն Թագաւո-
» րն »: ինչպէս կ'ըսեն արքունական Տայտա-
ւուրք. 'ի մէջ բազմաթիւ անկնայց Ֆիմեաց՝ ա-
վանելով ատոր՝ կրծնաւոր կոչումը:...

Հանգեաւ...: Ո՜հ, արքան խոր է այս հնչումն, և
արքան քաղցր իր ազդեցութեամբն այնպիսի ատե
մը, որ յերկար ալեկոծուած 'ի ծովու կեանց
ոյս՝ եկեր նստեր է մէկ կրօնական առանձնու-
թեան մը մէջ՝ իր մնացեալ օրերուն հանգիստը
բնաբանելու, և աւելի մեծ և անվերջ հանդստեան
մը վտհատրութեանը:... Հանգեաւ. ոչինչն այն քա-

10477396

նրբազգած սրտիկդ, ով աիկին Սիդոնի, որոյ փափկութեանը՝ շատ խիստ և փշոտ էր աշխարհքս և անոր վայելքն. արդարև մեծոգի ես եղեր դու, իմաստութեամբ լցեալ, սիրող Աստուծոյ և տպատասուր նորա. երանի՛ քեզ: — Ո՛հ. ինչո՞ւ դու այլ չեաւեցար այս քու հօրքրոջդ՝ ով աիկին Տիբոսի՝ գուռզդ Չապլուն, և յետ նրեն ալէս գահդ կորսընցընելու՝ ուրիշ գահից և բարձից եաւէ ընկնալով, ոչ թէ միայն այսպիսի խաղալ և երջանիկ հանգիստ մը չգտար, այլ և անանկ կատարած մ՝ ունեցար՝ զոր յիշելն իսկ պժգալի է[1]:

Բայց ետրը, և ո՞ր հանգեաւ, և ո՞ր արդ հանգչի մեռա Ֆիմի:... Պատմութիւնն ձայն չի տար: Բայց ինձ հաւանական կ՝երևի՝ թէ իր պարկեշտ նշխարքն այլ՝ իր բարեպաշտ ծնողացը քով (Չապելի և Հելմոյ՝) խաղաղեցան՝ ի դամբանս Դրազարկ վանց. ուր՝ ինչպէս իրմէ առաջ՝ դեռ վերջն այլ եկան ընկան հանգչեցան Թագով ու տաղաւարաւ յօգնած գլուխք: Ախտա, որ ժամանակն և Թշնամութիւնն կամ ջնջեց կամ ծածկեց զանունք. Փէօլէմինք և Գարամանք ռանակոս երին և զատպանատուէնն Թագաւորաց և վարդապետաց Հայոց՝ զԴրազարկ:

[1] Չապլուն անդրանիկ դուստր Գ Լեւոնի՝ եղբօր Ֆիմեայ՝ հարանացաւ Ամաւրեայ Լուսինեան, որ իր եղբօր (Հենրի) Թագաւորութիւնը (Կիպրոսի) յափշտակեց. բայց քիչ առնէն սպանուեցաւ. Չապլուն իր զաւակօքը ղրկուեցաւ՝ ի Հայս, առ եղբայր իւր Օշին Թագաւոր. բայց ժառանգութեան համար շատ վէճերու և հակառակութեանց պատճառ եղաւ երկու Թագաւորութեանց մէջ: Երբ Օշին մեռաւ և իր տղայ որդին Լեւոն Ե Թագաւորեց, իր խնամակալն Օշին Պայլ բանտեց զՉապլուն իր անդրանկաւն (Հիւկ), և սպաննեց (1323) բռնութեամբ կամ նենգութեամբ: Չապլունի որդիք են նաև Ճուան և Կի (Գոտիան) Թագաւորք մեր, և Պեմոնդ, ամենքն ալ սպանմամբ մեռած (1343. 1343):

10477396

Ո՛հ. արդեօք դեռ հիմայ այլ այն մեր յեան հայրենի երկիրն վրայ՝ այնչափ պատկով նազուլ գլխոց հետ, քարեղէն բարձի մը վրայ՝ 600 տա- րուան քունով՝ կու հանգչի քու Թանկագին զլ- լուխդ այլ, Ֆիմի: — Արդեօք կանձնլուած կոչե- րով Կուկլիայ կաղնին [1], կամ մշանջենաւոր եղե- րամօր պէս երկրամածեալ հոլմատանջ եղևին Տաւրոսի՝ այնքան աւերակաց մէջ միայն անաւել ահեղով, դեռ կու պաշտպանէն քու Նչխարդդ ծածկոյ տապանաքարը. — և այն քարին վրայ՝ արդեօք արտաս լուանին իր գոլգոլուն ձառա- գայթներովը կրնայ դեռ կարդալ մամռապատ ար- ձանագիր մը, օրինակ նմին.

Ի կափարուտ խաչապահակ փոքուս վիմի
Կայ մեծոգի եւ հեզ աւիկն Սայաս՝ Ֆիմի:

— Եւ արդեօք այն լուռ քնարանին վրայ տարուէ տարի Թափած աւերակաց նման, դեռ ցամքած Թաղանթ մը մնացե՞ր է՝ այն կակուղ և կարմրուկ արտին, զոր այնչափ անուշ արտօրհնիւք բա- րակ ձայնեաներ ով փորեցին ու խորեցին, և երկ- նաւար վիճակաւորութիւնք՝ լայնեցին ու լցուցին. — այն արտին, զոր եթէ փորձանք երկրի՝ խլուցին 'ի պահէ և 'ի փառաց, երկինք՝ բարձրացուցին մօտ իր արբանեաց ծնօղացը և Ս. Լուդվիկ. — այն արտին, որ իր արեւնակցաց և անուանակցաց մէջ՝ ամենէն մաքուր և սիրուն յիշատակ մը Թողլով, պատրաստական կ'ընէ զհայ հայրենիս՝ իր գործունէից մէջ անմոռաց պահելու և զլեառն աւիկին Սիոն- նի՝ Զատկածնին Ֆիմի:

[1] Կոս և բերդ մօտ 'ի պահակն կամ 'ի լեռնանցս կի- լիկիոյ, որ հիմայ կոչի կէօք-ղէյ-պօղազը:

10477396

10477396

ԼԳ.

ՎԵՐՋԱԲԱՆ

Ա. ՈՒ ՀԱՅԿԱԿ

Ահա վերջին խարույկն է որ կու մնայ մեր հայրենական հանճանց վառարանին անկիւնը, ուվ Հայկակ. և այս ձանձռոտ ու վառվռուն մախրկաբ՝ վալը առաջ պիտի գառնի ցուրտ մռնկրք. և այնպէս մնան, մինչև որ սարսուն երեք եղանակ. ներն ալ գառնան լրանան, և նորէն գայ ջերմորդն: Եւ երբ նորէն գառնայ գայ այս եղանակս, արդեօք մենք ալ նորէն պիտի գանեինք զկրակ՝ մեր վառարանին քով:...

Ահա գարնանաբեր լուսնին նորածագ ձաղ և ձիծաղն լուսնակս, մինչ երկրիս ուրիշ կողմեր ալ չէն թափուած թաղիքուած մշուշեան մէջ: Մինչ երկիրս քրտի՝ ծխածաւալ ծուխն ծուխ

ծուխ ծոցերուն մէջ՝ էկաւն ալէկոծ նաւեր՝ որ անդունդէ անդունդ սահելով՝ գոնէ ինկնելու վը-հին յոյսը աեանելու համար՝ աստղիկ մը լո-սիկ մը կու մուրան վերէն, և չեն աեաներ:...

Ա յսպէս է կեանց ընթացքն. երբեմն լոյս և երբեմն մութ. և միշտ հարկ է երթալ, ինչուան որ հանինք արարչադիր կէտը: — Սակայն ով որ ջերմեռ յոյսակ մը կու ճանչնայ այն տաճարին՝ որոյ վերնայարկն է երկինն, միշտ անխռով կ'եր-թայ, խաղաղ կ'ապրի:

Քանի որ արտի սիւնակն չիտակ է, և հոգւոյն կարմիր կանթեղն վառ է, յաչող է մարդուս:

Մեր խարոյկն կու մարի. լուսնակն ալ կու ծածկի կու մայնի: Սիրալիր սիրտն անապատ է: Անմահութեան ակնկալու հոգին՝ երջանիկ է:

Հաւատարիմն Աստուծոյ և իր անձին՝ հաւա-տարիմ է և հայրենեաց: Անհաւատարիմն հայ-րենեաց՝ չէ հաւատարիմ և իր հոգւոյն և ոչ եր-կնից: — Անձնէն աւելը և ազնիւ գործ և աշխա-տանք երկրիս վրայ՝ երկնից և հայրենեաց համար եղածնեըն են: Թէպէտ և զանազան են հասակք և վիճակք, այլ ամենքն ալ ըստ չափու և ըստ վիճակի իւրեանց՝ պարտական են երկնից և հայ-րենեաց:...

Ահա կու հնչէ հասարակ գիշերուան պահն:... Մեր միայնախօսութեանց ժամերն անցան. կու ակին ժամք գործոց և աշխատութեանց: Վայն, նոր օր, նոր գարուն, 'ի նոր կեանս կու հրաւիրէ զքեզ, Հայկակ:

Նորաբողբոջ բնութեան մէջ բացուած՝ նոր կոկոն մարդկութեան, ծաղիկ Հայութեան, ա-ւազ հասակաւ ձևացեալ, արդ կու վայլէ որ ձևա-նա քաղաքական կենօք. վիճակ մը ընտրելով, և գործ մը կատարելով յերկրի, յօգուտ ընտա-նեաց և հայրենեաց, և հաճոյ երկնից:

Հարկ է որ ձեռս բարով ըսեինք իրարու, անմոռաց պահելով մեր հայրենեաց Յուշիկքը: Անոնցմէ ես իմ հասակիս ցուպը, և ինձմէ ըլլես վար. առնուս դու ալ հասակիդ չարմար աշխատութեան գործիդ, օրհնել ատս երկնից, և ելնես դէպ 'ի վեր, 'ի բլուրն կենաց: — Արդ ատոր հոգիք նախնեաց մերոց՝ քեզ բարեխօս և պաշտպան. հայրենեաց շաւղէն՝ անշեղ ըլլայ քու վիճակիդ ճամբան. բայց՝ յերկրէս յերկինք հասնիս անխափան:

Սակայն ինչ ալ որ ըլլայ քու վիճակդ կամ գործդ, յիշէ Հայկակ, որ գործն՝ իրմով չէ ազնիւ կամ վեծ, այլ ընողն է որ ի'ազնուացընէ կու ազնուացընէ զգործը: — Առանց գործողի՝ գործք մեռեալ ատակ անուն մ'են. մարդս՝ զանուանը բան ի'ընէ, բանը գործ, գործը՝ կենդանութիւն, և զկենդանութիւնն՝ անմահութիւն:

Յաջողութիւնն շատ հեղ երկնից ընծայ է. բայց առանց երկրիս վրայ աշխատելոյ՝ վերէն յաջողութիւն չիջնեը: Մանաւանդ թէ յաջողութիւնն պատրաստ է իւրաւ զարև և զանձրև. բայց եթէ ագարակն սերմանուած չէ՝ ինչ բուսցընեն երկնից շուն ու ցօղն:

Մարդս փոքրիկ արարած մ'է, բայց ոտքերն երկրիս ամեն կողմն ալ կըրնան կոխել. երկու ձեռքովը կըրնայ ծայրէ'ն ծայր աշխարհակալել. սրտին՝ ազգիկ կու գայ տիեզերաց տահմանն. միտքն՝ անսահմանութեան մէջ ճամբայ կու բանայ. հոգին՝ կու տիրէ երկնից. սէրն՝ կու հասնի Արարչին առջև, և կ'ըսէ. Անհատանիկ եմ:

Փոքրիկ արարածն այն մարդ՝ մեծ աշխարհք մ'ալ է ինքնին. վասն զի Աստուծոյ դասատակերտ է, Աստուծոյ պատկեր է, թէ և ապականեալ. և ունի ակզբնատրոյն զօրութիւնը:

Արարչագործ մատանոյ բարձրագոյն կերտուածդ

քըն՝ չեն Ալրարատեան կատարքն կամ պագաշին եմաւոնի, այլ ուսերուդ վերև կանգնած իմաստնի տաճար՝ գլուխդ է. քարձր և բարակ քառնուած։ Զկայ ծալիկ արժանաւոր այդոր պատկելու. ոչ ոսկին և արծաթ՝ որ հոգէ կ'ելնեն, ոչ ծիրանի ծովերէ խպտած բուստ և մարգարիտք։ Ո՛հ. գեղեցիկք են մայեսի առաւօտուն ցօղակաթ վարդակարմիր փնջիկքն այլ՝ գալար ճակատի մը բոլորած. սակայն շատ աւելի պայծառ է առաքինութեամբ խայծեալ երեսն. և աւելի ազնիւ՝ անոր վրայ շարուած աշխատութեան կայլակները։

Կեանց կարևոր և վայելուչ սիմայքը լեցնել էն աւելորդ երկրաւոր շահք և վաստակք՝ առարգ և անկրաւ են այնպիսի գլխոյ մը, որ երկնից և հայրենեաց մաքուր իմաստներովը լցուած է։

Եթէ քաղաքական կեանք օրինաւոր են՝ ի վերոյ երկրի, անհրաժեշտ պարտք են և հայրենեաց ջանքն։...

Խալով կու ծնանիմք, խալով կու մեծնամք. աշխատութեամբ պէտք է մարդ ըլլանք. մեկ ձեռքով մեզի, մեկ ձեռքով մեզի նմանեաց օգնեմք. սիրով կենակցինք, պատուով ապրինք, յուսով ծերանամք, զոհութեամբ մեռնինք. արքութեամբ աւանդենք փչողին՝ մեր շունչը. Թաղուինք օրհնութեամբ. մնամք՝ի հայրենիս՝ հայրենեաց չափ, և յերկինս՝ Աստուծոյ չափ։...

Ահա ազգք և ազինք, մեկի մօտ և հեռի, Հայկակ, ամենքն զբաղած են իրենց հայրենի ապարակը շէնցընելու. և անդրանիկն ազգաց՝ մեր ազգն կըլնայ ըլլալ յեսաննաց։.. Մարդ, սիրտ ունող մարդ՝ չի կըլնար լսել զայս՝ առանց սոսկալու, Թող թէ Հայ մարդ։

Ա՛ռ և դու ուրեմն, ով Հայկակ, քու վիճակիդ յարմար աշխատութեան գործիդ, վերցուր

յերկինք, օրհնել տուր. և աշխատէ: Աշխատէ յերկրի, մինչդ յերկինս, սիրտդ հայրենեացդ վայ:

Առանց երկնից օրհնութեան՝ չի յաջողիր գործ հայրենեաց 'ի վերայ երկրի: Զոր երկինք չօրհներ, 'ի զուր օրհնեն և հայրենիք. և զոր չեն օրհներ հայրենիք՝ նա չօրհնուիր և յերկնից:

Կու բռնանի և սերմն առելութեան, կու ծածկէ դաշտեր. սպասէ, և կու տեանես փուշ և տասատակ:

Սիրոյ սերմինն՝ թէ և կորպացեալ երկրի մ'առանդուի, անհանջ և ամուր արօրին տակ, քրտնաջան մշակին համբերութեամբ, վերջապէս կու ծլի, ծաղկի, պտղաբերէ և անուշանէ:

Եւ մշակն մշակաց, որուն տպարանին է բոլոր աշխարհս, պատուիրեց մտաւակալին [1], չիտակ գծել ու քշել, և եաև չնայիլ. երթալ յառաջ, և չիտակ երթալ: Ո՛հ. երթալ և լալով, եւթէ հարկ է, երթալ և ցանել. կու հանի օրն ալ իրնաալով հնձելու, որաներով չալկած, ծաղկինեերով պսակուած դառնալու [2]:

Ճշմարիտ հայրենասիրութիւնն չէ տառապ կամ փայլակ մը յանկարծ երևցող և անցնող. ոչ հուր մոլի և թափառիկ, և ոչ կայծակն անկուշտ սրտոլ լափող. այլ հանդարտ ջերմութիւն մը, յաստակ լուսով, անսպիտա խլճով:...

Ո՛վ անձնուրաց ոգի, բարեխնդիր հայրենասիրութիւն. դու պատրաստէ, վառէ սրբէ զսիրտ Հայկակայ: Ջեզմով վառուած սիրտն՝ անխայթ և անմուխ լոյս կ'արձակէ. և եթէ խարկի մըրկի սիրտն, և անցնի երկնաւոր մաամէն, երկնուռնակ ման՝ մնայ 'ի վերայ հայրենեաց, որպէս հոտ մըշկի և կնդրկի:

1 Ղուկաս, թ. 62: 2 Սաղմոս ձիս. 6:

Եւ շատ սեզաններ, շատ տապաններ, շատ քա-
րեր ու հողեր կան ի Հայաստան, ուսկից դարէ
դար և անդադար կու ծխէ հոտն անուշութեան,
հոտն հայրենեաց. զոր չեն կրնար ջնջել ոչ զէնք
և ոչ քէնք:

Վասն զի մեր առաքինի և ճշմարիտ, ընկերա-
սէր, ազգասէր, օրդեսէր և հայրասէր նախնիքն,
այն երկրին վրայ իրենց պարկեշտ նշխարքը թող-
լով, անմահութեան ընծայով վերէն անոր վրայ միշտ
կու ընծեն և կու ըընծյեն:

Ընծեցէք ով ընծեք մատաղաց, սրտարծարծք,
հոգեվառք. ընծեցէք հոգիք Գրիգորեանց, Ներսէ-
սեանց, Սահակեանց, Մովսէսեանց, Ղեւոն-
դեանց, Վարդանանց, Վահանանց, Սմբատաց,
Աշոտաց, Լեւոնեանց և Հեթումեանց. սրբբ թա-
գաւորք, հայրապետք, վարիչք և վարդապետք
Հայոց, ընծեցէք յերկինից յերկիր: Խառնուի ձեր
երկնաւոր ընծան՝ յերկրաւոր ընծէ Հայկակայ.
որ երբ հանի աւանդելու իր վերջին ընծան ալ՝
եթէ հանդարտ ու հեզիկ, և եթէ հրաման ու
հառաչանաձայն, հաւասարապէս խառնուի ձերի-
ներուն հետ:

Եւ երբ իր օրական և տարեկան ընծաններուն
պէս՝ երկիրս իր բազմադարեան ընծան ալ աւար-
տելով՝ գադրի և կոտրի, և նոր երկրի մը հրաւէ-
րակ փողն հնչէ, այս հին լուծեալ և ընթեալ երկ-
րիս վերջին արձագանգաց միջէն՝ վերջնագոյն ար-
ձագանգ մ'ալ ըլլայ քուկդ, սուրբ սէր հայրե-
նեաց:...

Եւ, ահ, թէ այն խորին և լռին արձագանգաց՝
նուազ վանդիւն մ'ըլլայր այս իմ քեզի նուիրածս,
Հայկակ, ՑՈՒՇԻԿՍ ՀԱՑՐԵՆԵԱՑ ՀԱՑՈՑ:

10477396

Ց Ա Ն Կ

ԺԸ. Խօսանքն եկեղ. յանապատս Հայոց . 5
ԺԹ. Աղգային վիպասանութիւն . . . 103
Ի. Վահան Գոլճնացի 129
ԻԱ. Ատաւիկեան մեղս՝ ի լերինս Հայոց . 201
ԻԲ. Նէարքոս և Պօլիքարպոս 237
ԻԳ. Սարկաւագ Սոփեսոէս 279
ԻԴ. Յիզնաբուզիա 309
ԻԵ. Երազ վարդան կայսեր 333
ԻԶ. Բ վարդան կայսր 351
ԻԷ. Նեստոլք՝ ի Հայս 377
ԻԸ. Առաջին ապաստակ Նեստոլից՝ ի Հայս 415
ԻԹ. Խուլ Խաչիկ 433
Լ. Երզնկա, և Յովհան Երզնկացի . . 457
ԼԱ. Լեռան վերջին 495
ԼԲ. Ֆիմի 533
ԼԳ. Վերջաբան առ Հայկակ 567

10477396

10477396

ՈՒՂՂԱԳՐԵԼԻՔ

Է.Ջ	ՏՈՂ		
165	5	մուտցուլ	մուտծուլ·
303	24	հաձելով	ուհաձելով
438	28	պահուէին	պահէին
514	8	օժիտ	վարձանք
516	27–8	մխիթարուէր	մխիթարուէին
571	31	երկնաւոր	երկրաւոր

